

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԾՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

2009-2010

ՀԱՏՈՐ IV

**ԵՐԵՎԱՆ
ԱՍԱՐԱՍ
2011**

ՀՏԳ 342.5 (479.25):347(479.25)
ԳՄԳ 67.99 (2Հ)
Հ 247

Հ 247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քաղաքացիական և վարչական գործերով որոշումների
ընտրանի (2009-2010) -Եր.: Ամարաս, 2011, Հ. 4.-724 էջ:

ՀՏԳ 342.5 (479.25):347(479.25)
ԳՄԳ 67.99 (2Հ)

ISBN 978-99930-1-136-1

© ՀՀ Վճռաբեկ դատարան, 2011 թ.
© Նորա Կարապետյան, 2011 թ.
© Էմիլ Ամիրխանյան, 2011 թ.
© Նարինե Մանասյան, 2011 թ.
© Գոռ Թորոսյան, 2011 թ.

Council of Europe
European Commission



Conseil de l'Europe
Commission européenne

**Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագիր
Աջակցություն Հայաստանում արդարադատության մատչելիությանը**

Կազմող՝

Նորա Կարապետյան

ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ,
ԳՆԽ քարտուղար, իրավագիտության թեկնածու

Էմիլ Ամիրխանյան

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
իրավագիտության թեկնածու

Նարինե Մանասյան

ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպախրավական
վարչության ավագ մասնագետ

Գոռ Թորոսյան

ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպախրավական
վարչության ավագ մասնագետ

**Հրատարակությունն իրականացվում է Եվրոպական Միության
և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի աջակցությամբ
Ժողովածուի հետագա վերահրատարակումը կարող է իրականացվել միայն
Եվրոպայի խորհրդի համաձայնությամբ**



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 4 2009-2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	8
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	11
Քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ	11
Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ	12
Գործարքներ, ներկայացուցչություն, ժամկետներ և հայցային վաղեմություն	16
Պայմանագրերից ծագող պարտավորություններ	17
Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար	18
Վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորություններ	19
Ժառանգական իրավունք	20
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	22
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	23
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	27
Ընդհանուր դրույթներ	27
Դատավորի ինքնաբացարկ	28
Ապացույցներ	28
Դատական ծանուցումներ	29
Վարույթը վերաքննիչ դատարանում	29
Դատական ակտերի կատարողական վարույթ	30

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	31
Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ	31
Վարչական իրավախախտումներ	35
Ստուգումներ	37
Հարկային իրավունք	40
Մաքսային իրավունք	45
Պետական տուրք	47
Լիցենզավորում	48
Պարտադիր սոցիալական ապահովագրություն	49
Սոցիալական ապահովության իրավունք	51
Այլ վարչական գործեր	51
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	53
Վարչական դատավարության սկզբունքները	53
Գործերի ընդդատությունը, գործի վարույթը կարճելը	53
Գործ հարուցելու հիմքը	56
Գործը դատաքննության նախապատրաստելու կարգը	57
Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը	57
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ	58
1. ԵՇԳ/0101/02/08	11
2. ՎԳ/4342/05/09	11
3. ՀՅԲԳ-4/0139/02/08	12
4. ԵԱՆԳ/0758/02/08	12
5. ՎԳ-3 /0092/05/10	12
6. ԵԲԳ/0126/02/08	13
7. 3-58 (ՎԳ)	14
8. ԵԲԳ/0256/02/08	14
9. ԵԱԲԳ/1272/02/08	15
10. ՎԳ/1041/05/10	15
11. 3-93(ՎԳ)	15
12. ԵԲԳ/0724/02/08	16
13. ԿԳ/0197/02/08	16
14. ԵԷԳ/0723/02/09	17
15. ԵԲԳ/0318/02/08	17
16. ԱՎԳ/4/0145/02/08	18
17. ԵԲԳ/0595/04/08	18
18. ՀԲԳ 3/0016/02/08	19
19. ԵԲԳ/0036/02/08	19
20. ԵԱԲԳ/0455/02/09	20
21. ԵԱԲԳ/1516/02/08	20

22. ԵԷԴ/0272/02/08	.20
23. ՎԴ/5904/05/08	.21
24. ԵԱԲԴ/1095/02/08/	.22
25. ԵԱԽԴ/2177/02/08	.22
26. ԵԷԴ/1325/02/09	.22
27. ՎԴ/1468/05/09	.23
28. ԵԿԴ/3613/02/08	.23
29. ԵԱԲԴ/2378/02/08	.23
30. ԵԱԲԴ/0605/02/08	.24
31. ԵԿԴ/2894/02/08	.24
32. ԼԴ/1071/02/09	.25
33. ԵԿԴ/0349/02/09	.25
34. ԵԿԴ/3516/02/08	.26
35. ԱԲԴ/0062/02/09	.27
36. ԵԱԲԴ/1522/02/08	.27
37. ԵԱԲԴ/1137/02/08	.28
38. ԵԱԽԴ/2177/02/08	.28
39. ԵԿԴ/3065/02/08	.28
40. ԵԱԲԴ/1424/02/09	.29
41. 3-96(ՎԴ)	.29
42. ԵԿԴ/3468/02/08	.30
43. ՀԲԴ/0024/04/08	.30
44. ԳԴ/0171/02/09	.31
45. ՎԴ/5557/05/08	.32
46. ՎԴ/2434/05/08	.32
47. ՎԴ3/0283/05/09	.33
48. ՎԴ/0562/05/09	.33
49. ՎԴ/7157/05/08	.33
50. ՎԴ/2523/05/09	.34
51. ՎԴ3/0027/05/08	.35
52. ՎԴ/7722/05/08	.35
53. ՎԴ/0735/05/10	.35
54. ՎԴ/2522/05/09	.36
55. ՎԴ/0496/05/09	.36
56. ՎԴ/4129/05/08	.37
57. ՎԴ3/0294/05/08	.37
58. ՎԴ/2982/05/09	.38
59. ՎԴ/0068/05/09	.39
60. ՎԴ1/0069/05/09	.39
61. ՎԴ/2414/05/08	.40

62. ՎՂ/0222/05/09	40
63. ՎՂ/0567/05/09	41
64. ՎՂ/0291/05/10	41
65. ՎՂ/3112/05/08	41
66. ՎՂ/5547/05/08	42
67. ՎՂ/5004/05/08	43
68. ՎՂ/0123/05/09	43
69. ՎՂ/2575/05/09	44
70. ՎՂ/4786/05/09	44
71. ՎՂ/0961/05/09	45
72. ՎՂ/2521/05/08	45
73. ՎՂ/7505/05/08	45
74. ԵԿՂ/0710/02/10	46
75. ՎՂ3/0385/05/09	47
76. ՎՂ/4118/05/09	47
77. ՎՂ/3464/05/09	47
78. ՎՂ/3608/05/08	48
79. ՎՂ4/0031/05/09	48
80. ՎՂ/0054/05/09	48
81. ՎՂ/4439/05/09	49
82. ՎՂ/7059/05/08	50
83. ՎՂ/4892/05/09	51
84. ՎՂ/5086/05/09	51
85. ՎՂ/2008/05/08	51
86. ՎՂ/0249/05/09	51
87. ՎՂ/5525/05/08	53
88. ԵԱԶՂ /1369/02/09	53
89. ՎՂ/0277/05/09	54
90. ՎՂ/1041/05/10	54
91. ՎՂ/4118/05/09	55
92. ՎՂ4/0074/05/09	55
93. ՎՂ5/0176/05/10	55
94. ԵԶՂ/0363/05/08	56
95. ՎՂ/2514/05/09	56
96. ՎՂ/2568/05/08	57
97. ՎՂ6/0407/05/08	57
98. ՎՂ3/0627/03/09	57
99. ՎՂ4/0104/05/09	58

Նախարան

Ժամանակակից քաղաքակիրթ պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նկատվում է դատական պրակտիկայի ողջ ներուժն օրենսդրության կատարելագործման, դրանում առկա թերությունների վերացման համար օգտագործելու միտում, թերևս դա է պատճառը, որ ներկայումս աստիճանաբար ավելի ու ավելի մեծ տեղ և կարևորություն է տրվում դատարանների գործունեության արդյունքում ձևավորված դատական պրակտիկային:

Հայաստանի Հանրապետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վավերացմամբ Կոնվենցիայի դրույթները դարձան Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, այն էլ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող, քանի որ, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն, եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Դրանից բխող մեկ այլ հետևանք. Հայաստանի Հանրապետությունն ընդունեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասությունը (յուրիսդիկցիան) Հայաստանի Հանրապետության նկատմամբ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Արդյունքում Վճռաբեկ դատարանը դարձավ վերջին դատական ատյանը, որով սպառվում են դատական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները:

Այսպես, սահմանադրահրավական բարեփոխումների արդյունքում Վճռաբեկ դատարանը ստանձնեց նոր առաքելություն, այն է՝ օրենքների միատեսակ կիրառման ապահովումն ամբողջ երկրում: Հանդես գալով որպես Հայաստանի Հանրապետության դատական եռաստիճան համակարգի բարձրագույն ատյան՝ Վճռաբեկ դատարանի դերը հատկապես կարևորվեց նշված բարեփոխումների արդյունքում, որով սահմանվեց, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, տարանջատված լինելով սահմանադրական արդարադատությունից, կոչված է լինելու օրենքի միատեսակ կիրառման երաշխավորը, ինչպես նաև «դատական նախադեպի» ձևավորողը: Այսինքն՝ սկսեց ձևավորվել դատական նոր ավանդույթ, որի առաքելությունը դրվեց Վճռաբեկ դատարանի վրա:

Եթե նախկինում Վճռաբեկ դատարանը հերթական դատական ատյան էր և նրան էր վերագրվում «դատական սխալն» ուղղելու վերջնական ատյանի դերը, ապա այսօր ՀՀ Սահմանադրությունը հստակորեն ամրագրել է Վճռաբեկ դատարանի առաքելությունը՝ որպես օրենքների միատեսակ կիրառություն ապահովող ատ-

յանի: Որպեսզի Վճռաբեկ դատարանը կարողանա ապահովել դատական համակարգում օրենքների միատեսակ կիրառությունը, նրա որոշումները պետք է նախադեպային ուժ ունենան: Այսինքն՝ ապագայում նմանատիպ գործեր քննելիս ստորադաս դատարանները պետք է գործին տան այն լուծումը, որը թելադրված է վճռաբեկ դատարանի նմանատիպ գործերով նախկինում ընդունված որոշումով:

Օրենքների միատեսակ կիրառությունն ինքնանպատակ չէ, այն իր հերթին կոչված է մարդու իրավական պաշտպանվածության բարձրացմանը, մասնավորապես՝ կոչված է նպաստելու դատարանի և օրենքի առջև բոլորի հավասարությանը: Եթե օրենքը որոշակի ձևով կիրառվել է մի անձի նկատմամբ, ապա հասարակության մնացած անդամները նմանատիպ գործերով կարող են դատարանից պահանջել, որպեսզի նույն օրենքն իրենց նկատմամբ էլ նույն կերպ կիրառվի: Դրանով հնարավոր կլինի ապահովել իրավական որոշակիությունը և իրավական կանխատեսելիությունը:

Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների նպատակը հենց դատավարության բոլոր մասնակիցների համար կանխատեսելի արդարադատության ապահովումն է:

Կանխատեսելի արդարադատության իրականացումն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը պետք է հետևի, որ ստորադաս դատական ատյանների դատական ակտերը լինեն ոչ միայն օրինական, այլ նաև իրավական, համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, Վճռաբեկ դատարանի նախադեպերին և իրենց գործունեությամբ նպաստեն իրավունքի զարգացմանը:

Այս կարևոր սկզբունքի ամրագրումն արդեն իսկ հսկայական քայլ է առաջ և թույլ կտա առաջիկայում օրենսդրորեն առավել հստակ ամրագրել այն երաշխիքները, որոնք կապահովեն դատական համակարգի միասնականությունը և բարձրագույն դատական ատյանի դերն այս հարցում:

Օրենքի միատեսակ կիրառման համար կարևոր է այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի որոշումներն ավելի մատչելի լինեն հասարակության համար, որի արդյունքում կբարձրանա նաև հասարակական վստահության մակարդակն արդարադատության նկատմամբ:

Սույն ժողովածուն կոչված է նպաստելու հասարակության իրավագիտակցության, դատական իշխանություն կրողների պատասխանատվության զգացումը բարձրացնելուն, այն կօգնի դատավորներին, փաստաբաններին ծանոթանալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին և հետևել դրանց:

Կարևոր է ժողովածուի դերը ոչ միայն իրավակիրառ պրակտիկայի միատեսակությունն ապահովելու գործում, այլև արդարադատության թափանցիկության գործում:

Սույն ընտրանին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների արդեն չորրորդ ժողովածուն է և ներառում է գրքում ընդգրկված դատական ակտերի համառոտագրերը:

Սույն հատորի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այն պարունակում է որոշումների առարկայական դասակարգման առավել զարգացած գործիք, որում որոշումները ներկայացվում են ըստ որոշմամբ լուծում տված խնդրի ճյուղային պատկանելության, ինչը հնարավորություն է տալիս առավել հեշտությամբ գտնել կոնկրետ որոնվող դատական ակտը:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որի վրա նույնությամբ ձայնագրված են այն նույն դատական ակտերը, որոնք ներառված են գրքում, ինչը ևս մեկ հնարավորություն է հեշտացնելու ժողովածուից օգտվողների աշխատանքը:

Վճռաբեկ դատարանի որոշումների սույն ընտրանին հնարավոր է դարձել հրատարակել Եվրոպայի խորհրդի հետ արդյունավետ համագործակցության և ֆինանսական աջակցության շնորհիվ:

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի նախագահ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ

1. Քաղաքացու գործունակություն, քաղաքացու անգործունակության հարցի քննում նրա մահից հետո.

ԵՇԳ/0101/02/08, 2009 թվականի սեպտեմբերի 18

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի կանոններին համապատասխան կարող է քննության առնվել միայն նրա կենդանության ժամանակ: Հետևաբար, մահացածին մինչև նրա մահը ընկած ժամանակահատվածում անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարանում քննության ենթակա չէ:

2. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի նախապատվության իրավունք, ընկերության նախապատվության իրավունք մեկ մասնակցի դեպքում.

ՎԳ/4342/05/09, 2010 թվականի հոկտեմբերի 29

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն ընկերությանն իրավունք է վերապահել օգտվելու ընկերության մասնակցի բաժնեմասը գնելու իր նախապատվության իրավունքից միայն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը գնելու իրենց նախապատվության իրավունքը: Այսինքն՝ ընկերության նախապատվության իրավունքը՝ գնելու ընկերության մասնակցի բաժնեմասը, իրականացվում է այն դեպքում, երբ ընկերությունն ունի մեկից ավելի մասնակից: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք ընդունեց նաև այն հանգամանքը, որ ընկերության մասնակցին պատկանող բաժնեմասն ընկերությանն անցնելուց հետո այն մեկ տարվա ընթացքում ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ պետք է բաշխվի ընկերության բոլոր մասնակիցների միջև: Հետևաբար, եթե ընկերության մասնակիցը մեկն է, ապա ընկերությանը պատկանող ընկերության մասնակցի բաժնեմասը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով հնարավոր չի լինի բաշխել ընկերության բոլոր մասնակիցների միջև Ընկերության այլ մասնակից չունենալու պատճառով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտավ, որ ընկերության մասնակցի բաժնեմասի գնման նախապատվության իրավունքն

օրենսդրի կողմից սահմանելն ինքնանպատակ չէ, այլ այն կոչված է ապահովելու և նպաստելու ընկերության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանությանը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկվող վարչական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող պայմանագիրն անվավեր ճանաչված չլինելու պայմաններում վարչական ակտերը չեն կարող անվավեր ճանաչվել պայմանագրի վիճարկման համար նախատեսված հիմքով, այն է՝ նախապատվության իրավունքի խախտման հիմքով:

3. Բաժնետիրական ընկերության խորհրդի կողմից գույքի շուկայական արժեքի որոշում.

ՀՅԲԳ/4/0139/02/08, 2010 թվականի մարտի 12

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի շուկայական արժեքը որոշվում է ընկերության խորհրդի կողմից՝ ելնելով ընկերության շահերից: Ընդ որում, այն որոշելիս պետք է հիմք ընդունվեն մի շարք չափանիշներ, մասնավորապես՝ որքան է վաճառքի պահին տվյալ անշարժ գույքի շուկայական արժեքը և արդյո՞ք այդ պայմաններում տվյալ գույքը վաճառելու պարտավորություն չունեցող անձը կհամաձայնվեր այն վաճառել, իսկ գնելու պարտավորություն չունեցող անձը կհամաձայնվեր այն ձեռք բերել:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտավ, որ Ընկերությանը պատճառված վնասի բռնագանձման պահանջի մասին հայցի առկայության պայմաններում խորհրդի որոշման վիճարկված լինելու կամ չլինելու հանգամանքը տվյալ գործի համար էական նշանակություն չունի:

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ

4. Համատեղ սեփականության գույքի տնօրինման ժամանակ նախապատվության իրավունք.

ԵԱՆԳ/0758/02/08, 2009 թվականի դեկտեմբերի 04

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համատեղ սեփականության վաճառքի հետ կապված հարաբերություններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր սեփականության իրավունքում վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունքի նորմերը կիրառելի չեն:

5. Գրավի առարկայի բռնագանձումը առանց դատարան դիմելու, բռնագանձման ծանուցում.

ՎԳ-3 /0092/05/10, 2010 թվականի դեկտեմբերի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է գրավատուի այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Մասնավորապես, նույն հոդվածով սահմանվում է, որ գրավատուն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու նույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար: Ծանուցման վերոնշյալ պահանջը կոչված է ապահովելու գրավատուի մեկ այլ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252-րդ հոդվածով սահմանված իրավունքը: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավատուն իրավունք ունի, մինչև գրավի առարկան վաճառելը, ցանկացած ժամանակ դադարեցնել դրա վրա բռնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է: Այդ իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետը պետք է կիրառվի՝ վերոնշյալ նորմերով նախատեսված գրավատուի իրավունքների ապահովման համատեքստում, հակառակ դեպքում օրենսդրությամբ գրավատուին ընձեռված բռնագանձման օրինականությունը վիճարկելու կամ բռնագանձումը դադարեցնելու իրավունքների իրականացումն արդյունավետ չի լինի:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի տեղեկանալու իրավունքը և գրավառուի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավառուի իրավունքների ապահովման հետ: Այդ իրավունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գրավատուին ընձեռված է առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկանալու հնարավորություն: Այդ իսկ պատճառով գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի իրազեկումը գրավառուի պարտականությունն է, որի չպահպանման դեպքում վերջինս չի կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը:

6. Գրավի առարկայի օտարում առանց գրավառուի համաձայնության, օտարման հետևանքներ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդված.

ԵԲԳ/0126/02/08, 2010 թվականի հոկտեմբերի 01

Առանց գրավառուի համաձայնության գրավի առարկայի օտարումը ՀՀ քա-

դաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության խախտում է: Գրավի առարկայի օտարման հետևանքներ կիրառելիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածը մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշված հոդվածը վերաբերում է ոչ թե գրավ դրված գույքի օտարմանը, այլ այն դեպքերին, երբ գրավի առարկան **փոխարինվել, ոչնչացվել, վնասվել** կամ դրա նկատմամբ **սեփականության իրավունքը դադարել է օրենքով սահմանված հիմքերով**, այնինչ՝ տվյալ դեպքում տեղի է ունեցել ոչ թե գրավի առարկայի փոխարինում, ոչնչացում, վնասում կամ սեփականության իրավունքի դադարում, այլ առանց գրավառուի գրավոր համաձայնության գրավ դրված գույքն օտարվել է: Նշվածը հիմք է օտարման պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու համար:

7. Համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք, ամուսինների միջև այլ բան նախատեսող պայմանագիր.

3-58 (ՎԳ), 2009 թվականի մայիսի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

1. Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի վերաբերյալ կանոնները կիրառվում են, եթե ընդհանուր սեփականության իրավունքի այլ իրավական ռեժիմ (տվյալ դեպքում՝ ընդհանուր բաժնային սեփականություն) պայմանագրով սահմանված չէ:

2. Սահմանափակ պատասխանատվությանը ընկերության հիմնադիր պայմանագիրը, որով ամուսինները որոշել են ընկերությունում իրենց բաժնեմասերը դրանով իսկ որոշելով ընդհանուր սեփականության՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավական ռեժիմը, կարող է համարվել ամուսինների միջև այլ բան նախատեսող պայմանագիր: Հետևաբար, ընկերությունում ամուսիններից մեկի բաժնեմասի վրա մյուս ամուսնու պարտավորությունների համար բռնագանձում տարածվել չի կարող:

8. Համատեղ սեփականության գույքի տնօրինում, համաձայնության առկայության կանխավարկած, նվիրատվություն.

ԵԲԳ/0256/02/08, 2009 թվականի ապրիլի 17

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, հաշվի առնելով ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ծագման հիմքը՝ ամուսնական հարաբերությունները և օրենքով նախատեսված այլ դեպքերը, ըստ էության ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր համատեղ սեփականության գույքի նվիրատվության դեպքում գործում են որոշ առանձնահատկություններ, մասնավորապես համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի՝ նվիրատվության ձևով տնօրինման համար պարտադիր կերպով անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի համաձայնությունը և չի սահմանվել բացառություն:

9. Ձեռքբերման վաղեմություն, գույքի տիրապետում

ԵԱԸԳ/1272/02/08, 2009 թվականի հուլիսի 24

Վճռաբեկ դատարանը գտել է, որ բնակելի տան տիրապետումը կարող է դրսևորվել ոչ միայն այնտեղ փաստացի բնակվելով, այլև դրա կառավարմանն ուղղված այնպիսի գործողություններ կատարելով, ինչպիսիք են գույքի պահպանմանն ուղղված միջոցներ ձեռնարկելը, գույքի պահպանման ծախսերը հոգալը, ինչպես նաև այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պահպանելը, որոնք ակնհայտորեն վկայում են գույքը որպես իր սեփականն ընդունելու հանգամանքը:

10. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց կողմից անշարժ գույքի սահմանների փոփոխություն («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված).

ՎԳ/1041/05/10, 2010 թվականի դեկտեմբերի 03

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմը վերաբերում է այն դեպքերին, երբ տեղի է ունենում երկու կամ ավելի անձանց պատկանող անշարժ գույքի սահմանների փոփոխում պայմանագրի հիման վրա, կամ երբ որևէ դատական ակտով նախատեսվում է որևէ անձին անշարժ գույքի փոփոխություն: Այսինքն՝ համապատասխան պայմանագրի կամ դատական ակտի առկայության դեպքում օրենքով նախատեսվել է դրանց ներկայացման պարտավորություն, որն էլ պետք է իրավական հիմք հանդիսանա տվյալ անշարժ գույքի միավորման համար: Մինչդեռ, այն դեպքում, երբ խոսքը նույն անձին պատկանող հարևանությամբ գտնվող հողամասերի միավորման մասին է, նման իրավական փաստաթղթերի առկայություն չի պահանջվում: Նման դեպքերում բավարար է միայն հողամասերի սեփականատիրոջ՝ դրանք միավորելու կամահայտնությունը:

11. Գույքը փաստացի տիրապետող ժառանգի իրավունքը՝ այն հետ պահանջելու բարեխիղճ ձեռքբերողից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդված).

3-93(ՎԳ), 2009 թվականի հոկտեմբերի 16

Վճռաբեկ դատարանը նշված գործով անդրադարձավ այն իրավիճակին, երբ

անձը փաստացի տիրապետմամբ որպես ժառանգ գույքի նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք, սակայն այդ իրավունքը չի գրանցվել, այլ գրանցված է եղել այլ անձի անվամբ, որը գույքը օտարել է երրորդ անձի՝ բարեխիղճ ձեռքբերողին: Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ նման դեպքերում անձը թեև վեճի առարկա գույքն օտարելիս դրա նկատմամբ ունեցել է գրանցված իրավունք, սակայն այդ գույքը փաստացի տիրապետելու ուժով դրա նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել ժառանգը: Հետևաբար, ժառանգի գույքը նրա տիրապետումից դուրս է եկել իր կամքից անկախ պատճառներով, ուստի վերջինս, որպես գույքը փաստացի տիրապետող ժառանգ, իրավունք ունի այն հետ պահանջելու ցանկացած բարեխիղճ տիրապետողից:

Գործարքներ, ներկայացուցչություն, ժամկետներ, հայցային վաղեմություն

12. Էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարք.

ԵԲԳ/0724/02/08, 2009 թվականի սեպտեմբերի 18

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ էական նշանակություն ունեցող մոլորությունն առկա է, երբ կնքված գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, չի կարող հանգեցնել այն իրավական հետևանքներին, որոնք նրանք ի նկատի են ունեցել գործարքի կնքման պահին: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի, մասնավորապես՝ գործարքի էության, դրա հետևանքների, կողմերի հարաբերությունների բովանդակության վերաբերյալ մոլորությունը: Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը նշանակում է, որ կողմերը կամ նրանցից մեկը նկատի է ունեցել ոչ այն առարկան, որին վերաբերում է կնքված գործարքը, այլ իր հատկանիշներով տարբերվող մեկ այլ առարկա:

13. Ավարտված հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հնարավորություն, հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը պահանջի իրավունքը այլ անձի փոխանցելիս.

ԿԳ/0197/02/08, 2009 թվականի մարտի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո պարտքը ճանաչող գործողությունը հիմք չէ հայցային վաղեմության ժամկետի ընդհատման համար, քանի որ արդեն իսկ ավարտված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող ընդհատվել: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի բովանդակությունից:

Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով պարտավորության մեջ անձանց փոփոխվելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները, արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը կատարելու համար պետք է հաշվի առնել պարտավորության խախտման պահը՝ պարտավորության ծագման փաստի հիման վրա, այլ ոչ թե դրանից հետո տեղի ունեցած պահանջի իրավունքի փոխանցման գործարքի օրը:

14. Հայցային վաղեմության ժամկետի ընդհատում, հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելը.

ԵԷԴ/0723/02/09, 2010 թվականի ապրիլի 02

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքի պահանջներին համապատասխան հայց չհարուցվելու պայմաններում դատարան դիմում ներկայացնելու փաստը չի կարող դիտվել որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի կանոններին համապատասխան հայց հարուցելու միջոցով հայցային վաղեմության ժամկետի ընդհատում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը դատարանին հնարավորություն է ընձեռել հարգելի ճանաչել հայցային վաղեմության ժամկետի բացթողումը բացառիկ դեպքերում: Ընդ որում, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության միայն այն հանգամանքների պայմաններում, երբ բացառիկ դեպքը կապված է հայցվորի անձի հետ, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն: Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դիմում ներկայացնելու փաստը հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք չէ:

Պայմանագրերից ծագող պարտավորություններ

15. Պայմանագիր և օրենք (մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը կնքված նվիրատվության պայմանագրի նկատմամբ նույն օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառելիությունը (նվիրատվությունը վերացնելու նվիրատուի իրավունքը)).

ԵԲԴ/0318/02/08, 2009 թվականի ապրիլի 17

Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ օրենսդրի կողմից ըստ էության ամրագրվել է այն մոտեցումը, որ նախկինում կնքված պայմանագիրն իր պայմաններով **գերակա է** նոր ընդունված այն օրենքի նկատմամբ, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ: Դա իր հերթին որոշակի երաշխիք է ստեղծում պայմանագրի կողմերի համար և բացառում նրանց կամքից անկախ՝ նոր ընդունված

օրենքով, պայմանագրի պայմանների փոփոխումը, որոնք գործել են պայմանագիրը կնքելու պահին և դրանց պահպանումը պարտադիր էր պայմանագիրը կնքող կողմերի համար: Միաժամանակ, ընդհանուր կանոնից օրենսդիրը բացառություն է սահմանել, այն դեպքը, երբ օրենքում ուղղակիորեն սահմանված է դրա գործողության տարածումը նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված օրենսդրական եզրույթը սահմանում է նվիրատվության պայմանագիրը դատական կարգով վերացնելու նվիրատուի իրավունքը, հետևաբար, այն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով նոր օրենքով կողմերի համար սահմանված պարտադիր այլ կանոն չէ, այլ միայն նվիրատուի՝ օրենքով երաշխավորված իրավունք:

Վճռաբեկ դատարանը եզրակացրեց, որ մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը կնքված նվիրատվության պայմանագրի հետ կապված նվիրատուի՝ նվիրատվությունը վերացնելու իրավունքը ծագել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելուց հետո, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-ր մասը սույն գործով կիրառելի է:

16. Վարկային պայմանագրով տույժերի սահմանման իրավաչափություն, փոխառության պայմանագրի նորմերի կիրառում վարկային պայմանագրի նկատմամբ.

ԱՎԳ/4/0145/02/08, 2009 թվականի հուլիսի 24

Վճռաբեկ դատարանը գտավ, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Հետևաբար, փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ պայմանի առոչինչ լինելու վերաբերյալ դրույթը վարկային պայմանագրի նկատմամբ կիրառելի չէ:

Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար

17. Պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելը կամ անպատշաճ կատարելը, իրավունքի չարաչափում, անհաղթահարելի ուժ.

ԵՔԳ/0595/04/08, 2009 թվականի ապրիլի 17

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատիրոջ կողմից պարտավորության ծագման պահին կամ անմիջապես հետո դատարան չդիմելը չի կարող որակվել որպես պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելուն կամ անպատշաճ կատարելուն նպաստող հանգամանք: Հայցային վաղեմության ժամկետի ընթացքում դատարան դիմելը պետք է դիտել որպես պարտավորությունների կատարումն ապահովելուն ուղղված ողջամիտ գործողություն, և դա չի կարող ինքնին որևէ բացասական հետևանքներ առաջացնել պարտատիրոջ համար:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու պայմաններում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն անհաղթահարելի ուժի առկայության դեպքում (անկախ մեղքի բացակայության հանգամանքից):

Վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորություններ

18. Վնասի հատուցման պարտադիր պայմաններ.

ՀՔԳ- 3/0016/02/08, 2009 թվականի փետրվարի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում, վնասն ենթակա չէ հատուցման:

19. Վնասի հատուցման գործերով ապացուցման բեռ, վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկած.

ԵՔԳ/0036/02/08, 2009 թվականի մարտի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է

հայցվոր կողմը, իսկ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով, կրում է պատասխանող կողմը:

20. Անհիմն հարստացում, սեփական կամքով գումարի փոխանցում.

ԵԱԲԳ/0455/02/09, 2009 թվականի փետրվարի 13

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն իրավիճակին, երբ կողմերը գտնվել են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ, վարել են համատեղ տնտեսություն և ընդհանուր միջոցների հաշվին կատարել են ծախսեր, և գործում առկա նյութերով չի հիմնավորվում փոխանցված գումարները պատասխանողի կողմից առանց օրենքով, այլ իրավական ակտով կամ գործարքով սահմանված հիմքի ձեռք բերելու փաստը, եզրակացրեց, որ գումարների փոխանցումը կատարվել է օրինական հիմքով, այն է՝ գումար փոխանցողի կամքով և ցանկությամբ: Հետևաբար, կողմերից մեկի կողմից մյուսի հաշվին փոխանցված գումարներն անհիմն հարստացում համարվել չեն կարող, քանի որ բացակայում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածով սահմանված անհիմն հարստացման պարտադիր հատկանիշները:

Ժառանգական իրավունք

21. Համահայր կամ համամայր քույրերի և եղբայրների իրավական կարգավիճակը ժառանգական իրավահարաբերություններում.

ԵԱԲԳ/1516/02/08, 2009 թվականի հուլիսի 24

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի հարազատ եղբայրներին և քույրերին հավասարեցված են նաև ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը և եղբայրները:

Սահմանադրական դատարանի 18.09.2010 թվականի թիվ ՄԳՈ-917 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլուխն այն մասով, որով բացառում է համահայր կամ համամայր քույրերի և եղբայրների՝ ժառանգատուի հետ իրենց ազգակցական փոխկապվածության աստիճանին համարժեք ժառանգման իրավունքը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին և 14.1-րդ հոդվածի երկրորդ մասին հակասող և անվավեր: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածում կատարվեց փոփոխություն, որի արդյունքում երկրորդ հերթի ժառանգների թվին են դասվել նաև համահայր կամ համամայր քույրերը և եղբայրները:

22. Ժառանգության ընդունում ժառանգության ընդունման ժամկետը բաց թողած ժառանգի կողմից.

ԵԷԴ/0272/02/08, 2010 թվականի մարտի 12

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության ընդունման ժամկետը բաց թողած ժառանգը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է դիմի դատարան՝ ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու պահանջով, ապա՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում կարող է դիմել նուտարական գրասենյակ՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար:

23. Կարգավիճակը չորոշված կառույցների առկայությունը ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա սեփականության իրավունքով ժառանգատուին պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքը գրանցելիս.

ՎԳ/5904/05/08, 2009 թվականի հոկտեմբերի 16

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը կադաստրին ներկայացրելը բավարար հիմք է ժառանգատուին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքը գրանցելու համար, իսկ նույն տարածքում կարգավիճակը չորոշված կառույցների առկայությունը բավարար հիմք չէ այն մերժելու համար:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

24. Երեխայի հոր ծնողական իրավունքը սահմանափակելը.
ԵԱԶԳ/1095/02/08, 2009 թվականի դեկտեմբերի 04

Վճռաբեկ դատարանը գտել է, որ երեխայի հոր ծնողական իրավունքները չեն կարող սահմանափակվել այլ անձի՝ նույնիսկ եղբոր կատարած հանցանքի համար, քանի որ եղբոր հանցանքը որևէ կերպ կապված չէ երեխայի հոր անձի հետ, ուստի դրա առկայությունը չի կարող որակվել որպես ՀՀ ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծանր հանցամասնք:

25. Երեխայի սերման փաստի հաստատում.
ԵԱՆԳ/2177/02/08, 2009 թվականի մայիսի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը ծնողների և երեխաների միջև իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմք է դիտում օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստը՝ սահմանելով որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստի (հայրության) որոշման դատական կարգ: Ընդ որում, այդ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի անձից:

26. Երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստի հաստատում հոր մահից հետո.
ԵԷԳ/1325/02/09, 2010 թվականի հոկտեմբերի 01

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը ծնողների և երեխաների միջև իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմք է դիտում օրենքով սահմանված կարգով կենդանության օրոք որպես երեխայի հայր հանդես գալու փաստը՝ սահմանելով երեխայի հայրության որոշման դատական կարգ: Ընդ որում, այդ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ իր կենդանության ժամանակ հոր կողմից ընդունվել է երեխայի հայրության ճանաչման փաստը:

Որպես այդպիսի փաստեր կարող են համարվել նաև՝ երեխայի ծնվելուց առաջ երեխայի մոր և տվյալ անձի համատեղ բնակությունը, ընդհանուր տնտեսություն վարելը, երեխային միասին դաստիարակելը և խնամելը, բարեկամների, հարևանների և այլ անձանց մոտ այդ անձանց հանդես գալը որպես ամուսիններ, մահացած անձի ներկայանալը որպես երեխայի հայր, այսինքն այնպիսի գործողություններ, որոնք հիմք են տալիս արձանագրելու, որ մահացած անձը փաստացի երեխայի նկատմամբ ճանաչել է հայրություն:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

27. Աշխատանքում վերականգնելը հաստիքի կրճատում չլինելու, սակայն այդ պաշտոնում այլ անձ աշխատանքի ընդունված լինելու պայմաններում (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մաս)

ՎԳ/1468/05/09, 2009 թվականի դեկտեմբերի 04

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե հաստիքի կրճատում տեղի չի ունեցել, իսկ աշխատողի զբաղեցրած պաշտոնում այլ անձ է ընդունվել է աշխատանքի, այդ փաստը հիմք չէ վերոնշյալ հոդվածի կիրառման և աշխատանքում վերականգնելու հայցի մերժման համար:

28. Աշխատանքային պայմանագրի լուծման իրավաչափությունը արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված, եթե այդ հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատման (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ).

ԵԿԳ/3613/02/08, 2009 թվականի դեկտեմբերի 04

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործատուի մոտ միայն արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությունը ինքնին բավարար չէ աշխատողի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը:

29. Աշխատողի հաստիքը կրճատելիս նրան համապատասխան աշխատանքի տեղավորելու գործատուի պարտականությունը, «մասնագիտական պատրաստվածություն», «որակավորում».

ԵԱԲԳ/2378/02/08, 2009 թվականի դեկտեմբերի 04

Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունները չպետք է մեկնաբանվեն միայն որպես տվյալ անձին տրված որակավորումը հավաստող վկայականով հավաստվող մասնագիտությանը համապատասխանող աշխատանք, այլ վերոնշյալ հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առ-

նելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք ընդունեց այն հանգամանքը, որ օրենքի վերոնշյալ հոդվածը նպատակ է հետապնդում պաշտպանության տակ առնելու աշխատողներին այն բոլոր դեպքերում, երբ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) նախկինում կատարած աշխատանքին համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք:

30. Հարկադիր պարապորդի դիմաց վճարելը.
ԵԱԲԳ/0605/02/08, 2009 թվականի նոյեմբերի 06

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործատուն պարտավոր է աշխատողին վճարել հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար այն դեպքում, երբ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը **լուծվում է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմանով**: Հետևաբար, Ընկերության կողմից հայցվորների աշխատանքային պայմանագրերն օրինական հիմքերով և **օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանմամբ լուծվելու պայմաններում** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ:

31. «Արձակուրդ» ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի իմաստով, ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարություն.

ԵԿԳ/2894/02/08, 2009 թվականի հունիսի 26

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի իմաստով «ողջամիտ ինքնավարություն» օրենսդրական եզրույթը, ինքնըստիմքյան պարտավորեցնում է բարձրագույն ուսումնական հաստատություններին իրենց ինքնավարությունը՝ տվյալ դեպքում աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացների ապահովմանն ուղղված գործընթացները իրականացնելիս պահպանել օրենսդրությամբ նախատեսված յուրաքանչյուրի իրավունքները՝ դրանով երաշխավորելով դրանց լիարժեք իրականացումը:

Վճռաբեկ դատարանը գտավ նաև, որ ուսումնական արձակուրդ է նաև աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման համար աշխատողներին տրվող արձակուրդը:

32. Աշխատանքային հարաբերություններում հայցային վաղեմություն, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդված (իրավահարաբերության ժամանակ գործող խմբագրությամբ).

ԼԳ/1071/02/09, 2010 թվականի դեկտեմբերի 03

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը չի կարգավորում մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում հայցվորի իրավունքների պաշտպանության հարցը, սակայն հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դրանով սահմանված ժամկետն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար, այդ ժամկետն իր բնույթով համապատասխանում է հայցային վաղեմության ժամկետին: Հաշվի առնելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի պարունակում հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ որևէ դրույթ, աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված դատարան դիմելու մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքերում վեճերի լուծման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատարաններում գործի քննության ժամանակահատվածում ձևավորված իրավակիրառական պրակտիկան հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գործի վարույթը կարճելու վերաբերյալ պատասխանողի միջնորդությունը դիտեց որպես հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն, որը տրվել է մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը:

33. Աշխատանքային պայմանագրի լուծում աշխատողի նախաձեռնությամբ. ԵԿԳ/0349/02/09, 2010 թվականի փետրվարի 5

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու համար օրենսդիրը սահմանել է նախապայման, այն է՝ աշխատանքից ազատվելու մասին առնվազն տասնչորս օր առաջ գործատուին ծանուցելը, իսկ գործատուի համար՝ **աշխատանքային պայմանագրի լուծման օրը** վերջնահաշվարկ կատարելու պարտավորություն:

Եթե աշխատողը դիմումով, նշելով կոնկրետ օր, խնդրել է ազատել աշխատանքից՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, որի հիման վրա Ընկերության տնօրենի հրամանով աշխատողի կողմից դիմումում նշված օրն ազատվել է աշխատանքից, գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը կարող էր լուծվել և վերջնահաշվարկ կատարվել հենց նույն օրը:

34. Չօգտագործված ամենամսյա արձակուրդի դրամական փոխհատուցումը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի հետադարձ ուժը, «Հայաստանի Հանրապե-

տության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված.

ԵԿԳ/3516/02/08, 2010 թվականի փետրվարի 5

1. Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ գործող ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերին հետադարձ ուժ տալը պայմանավորված է միայն մեկ պայմանով, այն է՝ եթե դա սահմանված է թվարկված իրավական ակտերում, նշեց, որ չօգտագործված ամենամյա արձակուրդի դրամական փոխհատուցման հարաբերությունների նկատմամբ նախկին աշխատանքային օրենսգրքի գործողության ժամանակ տևած աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ, քանի որ ոչ մի իրավական ակտում նախատեսված չէ տվյալ նորմի հետադարձ ուժը:

2. Անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի մեկնաբանությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածով ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերին հետադարձ ուժ չի տրվում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշեց, որ օրենսդիրը աշխատանքային հարաբերությունները տարանջատել է երկու մասի, այն է՝ աշխատանքային հարաբերություններ, որոնք **ծագել են մինչև գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի ուժի մեջ մտնելը** և ուժի մեջ մտնելուց հետո ծագած աշխատանքային հարաբերություններ: Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով օրենսդիրն ընդունել և օրենսգրքի կարգավորման դաշտ է բերել նաև մինչև օրենսգիրքը գործողության մեջ դնելը ծագած աշխատանքային հարաբերությունները: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածը որևէ առնչություն չունի ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերի հետադարձ ուժի հետ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

35. *Իրավական որոշակիության սկզբունք, Վճռաբեկ դատարանի որոշման անտեսումը որպես իրավական որոշակիության սկզբունքի խախտում.*

ԱՐԴ/0062/02/09, 2009 թվականի փետրվարի 13

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից նույն հարցով արդեն մեկ անգամ արտահայտված դիրքորոշումը պարտադիր է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, իսկ այդ դիրքորոշման անտեսմամբ հայցի բավարարումը **իրավական որոշակիության սկզբունքի** խախտում է:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով տրված **իրավական որոշակիության սկզբունքի** բնորոշումը (Ռաշն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2005 թվականի հունվարի 13-ի, Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով 28.10.1999 թվականի, Բուրցևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2005 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռները):

36. *Դատարանի վճռով ճանաչված, սակայն դեռ չգրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների դատական պաշտպանություն, «պահանջը» որպես «սեփականություն».*

ԵԱԶԴ/1522/02/08, 2009 թվականի մարտի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դատական պաշտպանության ենթակա իրավունքների ծավալը ավելի լայն է, քան միայն պետական գրանցման ենթարկված իրավունքներն են: ՀՀ Սահմանադրության 18-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածների իմաստով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով անձի իրավունքը ճանաչված լինելու և դրա կատարման համար համապատասխան կատարողական թերթ տրված լինելու պարագայում այդ իրավունքը

ենթակա է դատական պաշտպանության:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ «պահանջը» Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի իմաստով կարող է հասկացվել որպես «սեփականություն» այն դեպքում, եթե բավարար չափով հաստատված է, որ այն կարող է իրավաբանորեն իրականացվել (*տե՛ս Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 02.05.2002 թվականին կայացված որոշման 40-րդ կետը*):

Դատավորի ինքնաբացարկը

37. Վերաքննիչ դատարանում նախկինում նույն գործի քննությանը դատավորների մասնակցությունը որպես դատավորի ինքնաբացարկի հիմք.

ԵԱԲԳ/1137/02/08, 2009 թվականի մարտի 13

Վճռաբեկ դատարանը գտավ, որ Վերաքննիչ դատարանում նախկինում նույն գործի քննությանը դատավորների մասնակցությունը հիմք չէ նրանց աշառությունը հաստատված համարելու համար:

Ապացույցներ

38. Կրկնակի փորձաքննության միջնորդություն, դատարանում կրկնակի փորձաքննություն նշանակելու միջնորդության մերժումը որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմք:

ԵԱՆԳ/2177/02/08, 2009 թվականի մայիսի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի դատարանում կողմի կրկնակի փորձաքննության միջնորդություն ներկայացված լինելու դեպքում կարող է կիրառվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը, եթե միջնորդությունն ուղղված էր գործի քննության համար էական նշանակություն ունեցող նոր ապացույց ձեռք բերելուն, որն առաջին ատյանի դատարանում բողոք բերողը հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իրենից անկախ պատճառներով, այն է՝ առաջին ատյանի դատարանում միջնորդությունը մերժվելու հետևանքով:

39. Բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում, «շրջանառու տեղեկանք»-ը որպես բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման դիմաց բաժանորդի վճարային պարտավորության առկայությունը հիմնավորող ապացույց.

ԵԿԳ/3065/02/08 2009, թվականի սեպտեմբերի 18

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «շրջանառու տեղեկանք»-ը բավարար չէ բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման դիմաց բաժանորդի վճարային պարտավորության առկայության չափը հիմնավորելու համար: Մասնավորապես՝ վերոնշյալ տեղեկանքում միայն նշված է բաժանորդի կողմից յուրաքանչյուր ամսվա համար ծառայություններից օգտվելու դիմաց վճարվելիք պարտքի չափը: Նման գործերով Վճռաբեկ դատարանը կարևորել է համապատասխան գումարի գույացման հիմքը հիմնավորող ապացույցի առկայությունը:

Դատական ծանուցումներ

40. Իրավաբանական անձի պատշաճ ծանուցում, հետադարձ ծանուցման թերթիկի ստորագրված լինելու պայմաններում փոստային ծառայության կողմից փոստային առաքումը հասցեատիրոջը չհանձնելու կամ ոչ պատշաճ անձի հանձնելու հանգամանքի ապացուցում.

ԵԱԶԳ/1424/02/09, 2010 թվականի հոկտեմբերի 01

1. Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ իրավաբանական անձի գտնվելու վայր է համարվում իրավաբանական անձի կանոնադրությամբ նշված և պետական գրանցման համար որպես պարտադիր տվյալ ներկայացված նրա մշտական գործող մարմնի հասցեն, նշեց, որ գործով ծանուցագրերը ընկերության գտնվելու վայրի հասցեով ուղարկված լինելու պայմաններում, Ընկերությունը համարվում է պատշաճ ծանուցված:

2. Վճռաբեկ դատարանը նշեց, որ ընկերությունը չի հիմնավորել փոստային ծառայության կողմից փոստային առաքումը հասցեատիրոջը չհանձնելու կամ ոչ պատշաճ անձի հանձնելու հանգամանքը: Այս փաստի ապացուցման բեռը կրում է ընկերությունը, քանի որ հետադարձ ծանուցման թերթիկի ստորագրված լինելու պայմաններում վերջինս է պարտավոր ապացուցել այն ստորագրող և ստացող անձի՝ այդ իրավասությունը չունենալու հանգամանքը: Դատարանները պետք է ելնեն կանխավարկածից, որ փոստային կապի ազգային օպերատորի կողմից իր պայմանագրային և օրենքով նախատեսված պարտականությունները կատարվել են պատշաճ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

Վարույթը վերաքննիչ դատարանում

41. Օրենքի հիման վրա ստեղծված դատարան, Վերաքննիչ դատարանի կողմից նույն դատարանի որոշման վերանայման իրավաչափությունը.

3-96(ՎԳ), 2009 թվականի հուլիսի 24

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենքի հիման վրա ստեղծված ան-

կախույթն ու անաչառ դատարանի կողմից դատաքննության իրավունքի երաշխավորման համար անհրաժեշտ են մի շարք պահանջներ, որոնց պետք է բավարարի վեճը քննող դատական մարմինը: Այդ պահանջներից մեկն էլ այն է, որ դատարանը պետք է ստեղծված լինի օրենքի հիման վրա: Նշված պահանջը սերտորեն կապված է ինչպես դատարանի կազմավորման ընթացակարգի հետ, որը պետք է համապատասխանի օրենքին, այնպես էլ օրենքով դատարանին պետք է վերապահվեն գործը վերանայելու համապատասխան լիազորություններ: Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ ո՛չ ՀՀ Սահմանադրությամբ և ո՛չ էլ օրենքով Վերաքննիչ դատարանը լիազորված չէ վերանայել իր իսկ կայացրած դատական ակտը:

42. Վերաքննիչ դատարանի որոշման պարզաբանում.

ԵԿԳ/3468/02/08, 2010 թվականի ապրիլի 02

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում միջանկյալ դատական ակտերը վերանայող դատարան է, իսկ վճիռը պարզաբանելու իրավասությունը վերապահված է բացառապես վճիռը կայացրած առաջին ատյանի դատարանին:

Դատական ակտերի կատարողական վարույթ

43. Դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու իրավական հետևանքներ.

ՀԲԳ/0024/04/08, 2009 թվականի սեպտեմբերի 18

Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ այն դեպքերում, երբ գումար պահանջելու և հետագայում նաև սնանկ ճանաչելու անձի իրավունքը ծագել է օրինական ուժի մեջ մտած վճռով, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չի ներկայացվել, տվյալ անձը գրկվել է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվել է նույն վճռով սահմանված պարտավորությունից:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ

44. Ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք, «օրինական սպասելիք».

ԳԳ/0171/02/09, 2009 թվականի փետրվարի 13

Վճռաբեկ դատարանը, գտնելով, որ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ, այնուամենայնիվ, այն անվավեր չճանաչեց, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անձի սեփականության իրավունքը ճանաչվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով, հետևաբար, անձն ուներ օրինաչափ սպասելիք այդ ակտերի իրավաչափության վերաբերյալ և բավականաչափ իրավական հիմք՝ կարծելու այդ ակտերի հնարավոր հետևանքների առաջացման, այն է՝ դրանց կատարման հնարավորության վերաբերյալ:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որ անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (*տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը: 07.05.2002 թվական*): Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (Պրեստոսն Կոմպանիա Նավիեռան ՍԱ ընդդեմ Բելգիայի, 20.11.1995թ. թիվ 17849/91): «Օրինական սպասելիքը» առկա է այն բոլոր դեպ-

քերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերվում են սեփականության իրավունքի (Կոպեկին ընդդեմ Սլոկանիայի, 28.09.2004թ. թիվ 44912/98):

45. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի կիրառման սահմանները, շինարարական թույլտվության իրավունքի ճանաչման պահանջի քննությունը դատարանին ենթակա լինելը.

ՎԳ/5557/05/08, 2009 թվականի ապրիլի 17

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած ակտի ընդունված լինելը հաստատող նորմ: Հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի հիման վրա, չխախտեն այլոց իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար, նշված նորմի բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շինարարության թույլտվության իրավունքը ճանաչելու պահանջը ենթակա չէ դատարանում քննության, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ճանաչման հայց կարող է ներկայացվել այն դեպքում, երբ պարտավորեցման հայց ներկայացնել հնարավոր չէ, և չի բացառվում քաղաքապետարանին համապատասխան վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու հայցի հարուցման հնարավորությունը:

46. *Սեփականության իրավունքից զրկող վարչական ակտի իրավաչափությունը*
ՎԳ/2434/05/08, 2009 թվականի ապրիլի 30

Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ սեփականության իրավունքից միայն դատական կարգով զրկելու հնարավորությունը, սահմանադրական դրույթին հակասող է գնահատել վարչական ակտի հիման վրա անձին սեփականության իրավունքից զրկումը նույնիսկ այն դեպքերի համար, երբ այդ իրավունքն անձի մոտ ծագել է նույն մարմնի այլ վարչական ակտի ուժով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է անձին սեփականության իրավունքից միայն դատական կարգով զրկելու սահմանադրական դրույթին:

47. Վարչական ակտը որպես անհատական իրավական ակտ, համայնքի բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման՝ նորմատիվ իրավական ակտ լինելը.

ՎԳ-3/0283/05/09, 2010 թվականի հունիսի 25

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի կարևոր չափանիշներից մեկը դրա անհատական իրավական ակտ հանդիսանալու հանգամանքն է:

Սիւստանանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ համայնքի բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշումն իր մեջ իրավական նորմեր պարունակելու ուժով հանդիսանում է նորմատիվ իրավական ակտ:

48. Վարչական ակտի առոչինչ լինելը, ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք.

ՎԳ/0562/05/09, 2010 թվականի մարտի 12

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի առոչինչ լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն** դնելը, կամ անձին **ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք** տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի **ակնհայտ ոչ իրավաչափ**: Հետևաբար, վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը, կամ անձին «ոչ իրավաչափ իրավունք» տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առոչինչ դիտելու համար: Այսինքն՝ վարչական ակտի առոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը, կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչինչ:

49. Հարկային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն կիրառելու ժամկետն անցնելու պայմաններում («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 301-րդ հոդված) պատասխանատվություն սահմանող վարչական ակտի առոչինչ լինելը.

ՎԳ/7157/05/08, 2010 թվականի մարտի 12

Վճռաբեկ դատարանը նշեց, որ հարկային պարտավորության դադարեցման՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպք է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 301-րդ հոդվածը, որի պայմաններում հարկային օրենսդրության խախտում հայտնաբերելու դեպքում այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո հարկային պարտավորությունը համարվում է դադարած, ուստի

անձը ազատվում է համապատասխան հարկային պատասխանատվությունից: Վճռաբեկ դատարանը գտավ, որ հարկային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն կիրառելու ժամկետն անցնելու ուժով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ, «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 43-րդ և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածներով պատասխանատվություն սահմանող վարչական ակտում արդեն իսկ առկա է վարչական ակտի առոչինչ լինելու հիմքը՝ ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը:

50. Վարչական վարույթի իրականացման մասին ծանուցում.
ՎԳ/2523/05/09, 2010 թվականի հուլիսի 30

Վճռաբեկ դատարանն, անդրադառնալով այն հարցին, թե վարչական վարույթի օրը անձի կողմից ծանուցումն ստանալը կարող է համարվել պատշաճ ծանուցում, արձանագրել է, որ վարչական մարմնի՝ անձին ծանուցելու լիազորությունն այդ դեպքում իրականացվում է ոչ պատշաճ, քանի որ այդ դեպքում վարչական վարույթի մասին ծանուցումը նույն օրը ստանալով, անձը չի կարող ողջամտորեն ներկա գտնվել նշանակված վարչական վարույթին, ինչի արդյունքում չի ապահովվի նրա՝ լսված լինելու իրավունքը, որի արդյունքում վերջինս կգրկվի վարչական վարույթի մասնակցին լիարժեք իրականացնելու իր իրավունքերի ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածով երաշխավորված՝ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (տես՝ Իվանով և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի որոշումը): Հետևաբար, վարչական մարմնի՝ ծանուցման ձևն ընտրելու հայեցողությունը պետք է իրականացվի այնպես, որ իրագործվի ՀՀ մաքսային օրենսգրքի 226-րդ հոդվածով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով հետապնդված նպատակը, այն է՝ անձի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը նրան պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին:

Վարչական իրավախախտումներ

51. Վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչի հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով հանդես գալու իրավունքը.

ՎԳ-3/0027/05/08, 2010 թվականի մարտի 12

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական վարույթի մասնակցի ներկայացուցիչ կարող է լինել հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով հանդես եկող ցանկացած անձ:

52. Պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդված, ապրանքների ցուցադրում՝ հաճախորդներին տեսանելի վայրում.

ՎԳ/7722/05/08, 2010 թվականի մայիսի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանված զանցանքը դրսևորվում է ինչպես պիտանիության ժամկետն անցած ապրանքներն ուղղակի վաճառելով, այնպես էլ այդ ապրանքները վաճառարահի հատուկ կահավորված վայրերում վաճառելու համար՝ հաճախորդներին տեսանելի վայրերում ցուցադրելով: Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վարչական տուգանքը՝ որպես վարչական պատասխանատվության միջոց, ծագում է նաև պիտանիության ժամկետն անցած ապրանքը վաճառելու նպատակով՝ հաճախորդների համար տեսանելի վայրում ցուցադրված լինելու հանգամանքի առկայության դեպքում:

53. Տրանսպորտային միջոցի տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար պատասխանատվություն (նույն արարքի համար կրկնակի պատասխանատվություն), տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելիս հաշվառման համարանիշները հանելու պետական մարմնի պարտականության չկատարման հետևանքները.

ՎԳ/0735/05/10, 2010 թվականի դեկտեմբերի 03

Անդրադառնալով այն իրավիճակին, երբ անձը տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար երկու անգամ ենթարկվում է պատասխանատվության (20 օր անց), Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ դեպքում բացակայում է նույն արարքի համար անձին կրկնակի վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վարչական պատասխանատվության ենթարկելը և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահով-

ման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվառման համարանիշները հանելու ընթացակարգը միմյանցից տարբեր գործընթացներ են: Տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելիս ժամանակավոր համարանիշ չտրամադրելու դեպքում անձը չի գրկվում 10 օրվա ընթացքում տրանսպորտային միջոցը տեխնիկական զննություն անցկացնելու կամ գործարանային տեսքի բերելու կամ վերասարքավորումն օրինականացնելու իրավունքից, քանի որ ժամանակավոր համարանիշ տրամադրելը համապատասխան պետական մարմնի պարտականությունն է, և վարորդը չի կարող կրել դրա չկատարման բացասական հետևանքները: Այսինքն՝ մնան դեպքերում անձը կարող է ունենալ օրինական սպասելիք, որ իրեն պատասխանատվության ենթարկելու դեպքում նա ունի 10-օրյա ժամկետ այդ խախտման պատճառները վերացնելու համար: Մինչդեռ այն դեպքում, երբ անձն օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության չի ներկայացրել և հետագայում պատասխանատվության է ենթարկվել արդեն քսան օր անց նոր իրավախախտում կատարելու համար, Ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշները չհանելը և ժամանակավոր համարանիշներ չտրամադրելը որևէ ձևով չի հանգեցրել անձի կողմից նոր իրավախախտում կատարելուն:

54. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթեր. ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն որոշման (ՀՀ կառավարության 23.06.2005 թվականի թիվ 898-Ն որոշմամբ կատարված փոփոխություն) ստանդարտացման նորմատիվ փաստաթուղթ լինելը.

ՎԳ/2522/05/09, 2010 թվականի մարտի 12

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստանդարտացման նորմատիվ փաստաթուղթը իրավասու մարմնի կողմից ընդունված այն փաստաթուղթն է, որում սահմանվում են ստանդարտացման գործընթացի մասնակիցների համար պարտադիր կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր, որոնց համապատասխան պետք է արտադրվի այս կամ այն ապրանքը, իրականացվի համապատասխան աշխատանքը և մատուցվի ծառայությունը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն և 23.06.2005 թվականի թիվ 898-Ն որոշումները ստանդարտացման նորմատիվ փաստաթղթեր չեն:

55. Վարչական իրավախախտման առկայության պայմաններում (Ճանապարհային երթևեկության կանոնների 94-րդ հոդվածով նախատեսված խախտման առկայության պայմաններում) պատահարի մյուս մասնակցի գործողությունների նշանակությունը վարչական ակտի իրավաչափությունը վիճարկելիս:

ՎԳ/0496/05/09, 2010 թվականի սեպտեմբերի 10

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտման առկայության պայմաններում պատահարի մյուս մասնակցի գործողությունների իրավաչափությունը չունի որևէ նշանակություն, քանի որ տվյալ գործով վիճարկվել է վարչական ակտ, որի կայացման համար բավարար է եղել ճանապարհային երթևեկության կանոնների 94-րդ հոդվածի խախտումը, այն է՝ վարորդը պետք է ճանապարհը զիջի խաչմերուկի անցումը և երթևեկելի մասի հատումը դեռևս չավարտած հետիոտներին և տրանսպորտային միջոցներին, եթե անգամ արդեն միացել է լուսացույցի թույլատրող ազդանշանը: Հետևաբար պատահարի երկրորդ մասնակցի գործողությունները, վերջինիս՝ պատահարը կանխելու համար տեխնիկական միջոցներ ունենալու, նրա գործողությունների և ընդհարման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը որևէ նշանակություն չի կարող ունենալ Ոստիկանության որոշման (որի հիմքում դրվել է ճանապարհային երթևեկության կանոնների 94-րդ հոդվածի խախտումը) անվավերության հարցի քննարկման համար:

Ստուգումներ

56. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նկատմամբ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառելիությունը.

ՎՂ/4129/05/08, 2009 թվականի փետրվարի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման և անցկացման հետ կապված հարաբերությունները դուրս են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից:

57. Սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանոնների և նորմերի, հակահամաճարակային ռեժիմի պահանջների ստուգման առանձնահատկություններ, իրավունքների սահմանափակումներ և պարտականություններ.

ՎՂ-3/0294/05/08, 2009 թվականի ապրիլի 17

1. Ստուգման հանձնարարագրում ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանի մասին նշման բացակայության իրավական հետևանքները.

Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով ստուգման առանձնահատկությունները, արձանագրել է, որ ՀՀ առողջապահության նախարարի «Գեղեցկության սրահ-

ներին ներկայացվող N 2-III-2.2.3 սանիտարական կանոնները հաստատելու մասին» 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանի 3.1. կետի պահանջների կատարման ստուգումը կարող է իրականացվել միայն ստուգման պահի դրությամբ: Նման ստուգման նպատակն է արձանագրել վերոհիշյալ կանոնների ու նորմերի պահպանման վիճակը ստուգման պահին, հետևաբար, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը համընկնում է ստուգման պահին:

2. *ՀՀ առողջապահության նախարարի՝ սանիտարական կանոններ հաստատելու իրավասությունը և դրա համապատասխանությունը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի պահանջներին.*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ առողջապահության նախարարի «Գեղեցկության սրահներին ներկայացվող N 2-III-2.2.3 սանիտարական կանոնները հաստատելու մասին» 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանն, ըստ էության, սահմանում է Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջները պահպանելու պարտականությանն ուղղված կանոնակարգող կանոններ, իսկ սանիտարական նորմերի և կանոնների կատարման պարտականությունը, ինչպես նաև նման նորմերն ու կանոններն իրավական այլ ակտերով նախատեսելու հնարավորությունն ուղակիորեն սահմանված են օրենքով: Հետևաբար, սանիտարական կանոնները հաստատվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի պահանջների պահպանմամբ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ առողջապահության նախարարն ի պաշտոնե պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության ղեկավարն է և «Գեղեցկության սրահներին ներկայացվող N 2-III-2.2.3 սանիտարական կանոնները հաստատելու մասին» 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանը տալու նրա իրավունքը բխում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15.08.2002 թվականի թիվ 1316-Ն որոշման պահանջներից:

58. *Ստուգման կազմակերպման և անցկացման վարույթի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի պարտականությունները, ստուգում իրականացնող անձի՝ ստուգման ակտը ստորագրությամբ առձեռն հանձնելու պարտականությունը:*

ՎԳ/2982/05/09, 2010 թվականի մայիսի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստուգման կազմակերպման և անցկացման վարույթի ընթացքում պարտականություններ են դրված ոչ միայն ստուգում իրականացնող անձի, այլ նաև՝ տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի վրա, քանի որ վերջինս պարտավոր է անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգում

իրականացնող անձանց համար, այդ թվում՝ բացակայության դեպքում ապահովել փոխարինող պաշտոնատար անձի ներկայությունը: Առանց այդ պայմանի ապահովման ստուգում իրականացնող անձը չի կարող կատարել ստուգման ակտը ստորագրությամբ առձեռն հանձնելու պարտականությունը:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ անկախ այն հանգամանքից, թե այն անձը, ում առձեռն հանձնվել է վիճարկվող ակտը, ստուգման պահին հանդիսացել է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին փոխարինող պաշտոնատար անձ, թե՛ ոչ, եթե տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կողմից ստուգում իրականացնող անձանց համար չեն ստեղծվել անհրաժեշտ պայմաններ, ինչի հետևանքով անհնար է դարձել վիճարկվող ակտը ստորագրությամբ առձեռն հանձնելը, ապա ստուգում իրականացնող անձանց կողմից վիճարկվող ակտը պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ հանձնելու եղանակը իրավաչափ է:

59. Վարչական ակտում համապատասխան փաստաթղթերին հղում կատարելու պարտավորության սահմանումը («Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս).

ՎՂ/0068/05/09, 2010 թվականի փետրվարի 5

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտում համապատասխան փաստաթղթերին հղում կատարելու պարտավորության սահմանումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, քանի որ **օրենքի այդ պահանջը պահպանված լինելու պարագայում միայն հնարավոր կլինի պարզել, ստուգել և հաստատված համարել խախտումների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև դրանք բավարար հիմքերի առկայությամբ արձանագրված լինելու հանգամանքը**, ինչը ստուգումն իրականացրած անձանց հնարավորություն կտա (ակտը վիճարկելու դեպքում) ապացուցելու, որ ուսումնասիրված փաստաթղթերում առկա տվյալները բավարար են եղել այս կամ այն եզրահանգման գալու և խախտում արձանագրելու համար, եթե նույնիսկ տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչները պնդեն, որ այդ փաստաթղթերը ստուգման պահին չեն ուսումնասիրվել:

60. Ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ստուգումը փաստացի սկսելու օրվա մասին տեղեկությունը ստուգման մատյանում գրառելու պարտավորության չկատարման հետևանքները ստուգման հանձնարարագիրը ստանալու և ստուգումը սկսելու ամսաթվի մասին սուգվող անձի իրազեկվածության պայմաններում.

ՎՂ-1/0069/05/09, 2010 թվականի դեկտեմբերի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց համար սահմանել է պարտավորություն, այն է՝ ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կա-

տարելը: Սակայն, հանձնարարագիրը ստանալու և ստուգումը սկսելու ամսաթվի մասին ստուգվող անձի իրազեկվածության պայմաններում նման ընթացակարգային խախտումը չի կարող հիմք հանդիսանալ ստուգման արդյունքում կազմված ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջների խախտման դեպքում տուգանքի նշանակման լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հարցին:

Հարկային իրավունք

61. ԱԱՀ-ի գումարից հաշվանց կատարելու իրավունքը.

ՎՌ/2414/05/08, 2009 թվականի մարտի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ ԱԱՀ վճարող անձինք ԱԱՀ-ի գումարից կարող են հաշվանցում (պակասեցում) կատարել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1/ հաշվետու ժամանակաշրջանում պետք է իրականացրած լինեն հարկվող գործարքներ (գործառնություններ),

2/ հարկվող շրջանառության նկատմամբ պետք է հաշվարկած լինեն ԱԱՀ-ի գումար:

62. Արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցում (հաշվառում) անմիջական ցուցադրության և վաճառքի վայր ունենալու դեպքում.

ՎՌ/0222/05/09, 2009 թվականի դեկտեմբերի 25

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ վաճառող կազմակերպությունները, որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր, հաշվապահական հաշվառման գործող կարգին զուգընթաց, առևտրի իրականացման վայրում պարտավոր են վարել արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գիրք, որտեղ պարտավոր են գրանցել ձեռք բերված բոլոր ապրանքները՝ դրանք ստանալուց կամ ընդունելուց անմիջապես հետո, մինչև վաճառքի հանելը, բայց ոչ ուշ, քան մինչև ապրանքներն ստանալու օրվա ավարտը:

63. Լուծարային ստուգման մասին դիմում ներկայացնելը որպես «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված անհատ ձեռնարկատիրոջ կողմից գործունեությունը դադարեցնելու վերա-

բերյալ դիմում ներկայացնելու պարտավորության պատշաճ կատարում.

ՎԳ/0567/05/09, 2009 թվականի հոկտեմբերի 16

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պարտավորությունը նախատեսված էր «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 15.12.2005 թվականին, իսկ բողոք բերած անձը լուծարային ստուգման մասին դիմում է ներկայացրել մինչև այդ օրենքի ուժի մեջ մտնելը՝ 18.03.2005 թվականին, Վճռաբեկ դատարանը գտել է, որ լուծարային ստուգման մասին դիմում ներկայացնելու նպատակը հենց գործունեության դադարեցումն է: Հետևաբար, այլ բան հաստատված չլինելու պարագայում լուծարային ստուգման մասին դիմումի առկայությունը բավարար է անհատ ձեռնարկատիրոջ կողմից գործունեության դադարեցման մասին դիմում ներկայացնելու փաստն ապացուցված համարելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության օրենսդրությունների տեսանկյունից օրենքով չնախատեսված պարտականություն է համարվում նաև օրենքով նախատեսված որևէ արտոնությունից օգտվող անձին այդպիսի արտոնության անտեսմամբ պարտավորություններով ծանրաբեռնելը:

64. Ֆիզիկական անձից շահումով խաղերից ստացած եկամտի համար եկամտահարկ գանձելը

ՎԳ/0291/05/10, 2010 թվականի դեկտեմբերի 03-ին

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով տրված ընդհանուր կանոնակարգման համաձայն՝ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս, հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Միաժամանակ, նշված կանոնակարգումից սահմանված են որոշակի բացառություններ, այդ թվում՝ այն դեպքի համար, երբ ֆիզիկական անձին վճարվում են խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները): Այսինքն՝ նման դեպքում հարկային գործակալը հարկի պահում (գանձում) չի իրականացնում, հետևաբար, վարչական ակտով նման պարտավորություն չի կարող դրվել:

65. ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելը շենք-շինությունների օտարման դեպքում.

ՎԳ/3112/05/08, 2009 թվականի փետրվարի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի սեփականատեր հարկատուն կաշկանդված չէ գույքն իր հայեցողությամբ որոշված գնով օտարելու

հարցում, այդ թվում նաև իրական արժեքից էականորեն ցածր գնով: Սակայն, հարկային պարտավորությունը հաշվարկելիս, հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս, որպես նվազագույն արժեք առնվազն պետք է ընդունվի տվյալ շինության կադաստրային արժեքը:

66. Եկամտի ստացման համար անհրաժեշտ ծախս, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսեր.

ՎԳ/5547/05/08, 2009 թվականի հուլիսի 24

1. Ապահովագրվող անձի բժշկական զննության հետ կապված ապահովագրողի կատարած ծախսերը որպես ապահովագրող ընկերության անհրաժեշտ ծախսեր («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված).

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առողջության ապահովագրության պայմանագրեր կնքելու և ապահովագրական ռիսկը կառավարելու համար ապահովագրման ենթակա անձանց նախնական բժշկական զննության հետ կապված ծախսերն անհրաժեշտ են, քանի որ դրանով ապահովագրական ընկերությունը հստակ պատկերացում է կազմում ստանձնած ապահովագրական ռիսկի էության մասին և, հիմնվելով բժշկական զննության արդյունքների վրա՝ տրամադրում համապատասխան ապահովագրական ծածկույթ և ապահովագրական սակագին, կիրառում բացառություններ, ինչի արդյունքում էլ կնքվում է ապահովագրության պայմանագիրը: Ընդ որում, բժշկական զննությամբ հնարավոր է դառնում պայմանագիր կնքելիս ճշտել ապահովագրվող անձի առողջական վիճակը, առողջության հետագա վատթարացման հնարավորությունը, իսկ պարզելու միակ միջոցն էլ բժշկական զննությունն է, որն էլ քննարկվող դեպքում պատվիրվել է ապահովագրական ընկերության կողմից, և Ընկերությունն էլ վճարել է մատուցված ծառայությունների դիմաց՝ որպես իր պայմանագրային պարտավորությունների կատարում: Այսպիսով, եթե տվյալ ծախսն անհրաժեշտ է պայմանագրի պայմանները որոշելու համար, այսինքն՝ պայմանագիր կնքելու համար, քանի որ անվիճելի է, որ պայմանագրի կնքմամբ է ապահովվում Ընկերության եկամուտը՝ ապահովագրական վճարը, ուստի պայմանագրի կնքմանը նախորդող՝ ապահովագրվող անձի բժշկական զննության հետ կապված՝ ապահովագրողի կատարած ծախսերը համարվում են եկամտի ստացման համար անհրաժեշտ ծախս:

2. Ընկերության կողմից աշխատակիցների բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման վարձի վճարումը որպես կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսեր.

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ քննարկվող դեպքում ընկերության աշխատակիցների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման վարձի վճարումը չի կարող որակվել որպես կադրերի պատրաստման ծախս, որն իր էությամբ կապված է Ընկերության եկամտի ստացման հետ և անհրաժեշտ է Ընկերության եկամտի ստացման համար:

67. ՀՀ պետական բյուջեից գերավճարը վերադարձնելը.

ՎԳ/5004/05/08, 2009 թվականի հոկտեմբերի 16

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ պետական բյուջե որևէ հարկային պարտավորության համար ավել վճարված, տնտեսվարող սուբյեկտի անձնական հաշվի քարտեղում առկա գումարները միայն այն դեպքում կարող են ճանաչվել գերավճար և դրանց նկատմամբ ծագել տնտեսվարող սուբյեկտի՝ գերավճար ունենալով պայմանավորված գույքային իրավունքը, ինչպես նաև նրանց նկատմամբ տարածվել գերավճարների վերադարձմանը վերաբերող իրավական ռեժիմը, երբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան ուսումնասիրության արձանագրության կամ ստուգման ակտի հիման վրա կազմվել է եզրակացություն:

68. Պետական կառավարչական հիմնարկի պատասխանատվությունը որպես հարկային գործակալ.

ՎԳ/0123/05/09, 2009 թվականի դեկտեմբերի 04

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ հարկային և ՀՀ սոցիալական վճարների մասին օրենսդրություններով պետական կառավարչական հիմնարկը համարվում է հարկային գործակալ ու ապահովադիր և վերջինիս համար այլ հարկային գործակալների կամ ապահովադիրների համեմատ որևէ առանձնահատկություն սահմանված չէ: Հետևաբար պետական կառավարչական հիմնարկի վրա, այլ հարկային գործակալների և ապահովադիրների հետ համահավասար, դրված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հարկի պահում (գանձում), ինչպես նաև սոցիալական վճարումներ կատարելու պարտավորություններ, որոնց չկատարման դեպքում նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածով նախատեսված պարտապանի և պարտատիրոջ համընկնմամբ պարտավորության դադարման վերաբերյալ նորմերը, քանի որ տվյալ դեպքում առաջանում են վարչական իրավահարաբերություններ:

69. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ժամանակ անձի՝ շահութահարկի վճարելու պարտականության առկայությունը.

ՎԳ/2575/05/09, 2010 թվականի մայիսի 27

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ժամանակ սեփականատիրոջ գույքը ոչ թե վաճառվում է նրա ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում՝ անձնական շահերից ելնելով, այլ իրացվում է պետության և հասարակության կարիքների դիմաց, վճարվելով փոխհատուցում, որը ոչ թե սեփականատիրոջ եկամուտն է, այլ գույքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքի դադարեցման դիմաց տրվող համարժեք փոխարինում: Հետևաբար, հիմք ընդունելով նաև «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, գույքի տերը փոխհատուցման գումարից շահութահարկ չպետք է վճարի:

Նշված գործով Վճռաբեկ դատարանը հղում կատարեց նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Սինասյանը և Մեմերջյանը ընդդեմ Հայաստանի 23.06.2009 թվականի թիվ 22651/05 վճռի 67-րդ կետին, որտեղ Եվրոպական դատարանը նշել էր, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «օրենքով նախատեսված պայմաններով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է մատչելի և բավականաչափ հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն, և երկրորդ՝ Պետության կողմից այդ իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի առկա ներպետական իրավական նորմին համապատասխան:

70. Պարտավորությունների ներումը որպես եկամուտ («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված).

ՎԳ/4786/05/09, 2010 թվականի հուլիսի 30

Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ պարտավորությունների ներումը, որը հանգեցնում է հաշվետու տարվա ընթացքում հարկատուի պարտավորությունների նվազմանը, որն էլ իր հերթին հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը, որակվում է որպես եկամուտ: Ընդ որում, նման բնույթի եկամտի առկայության համար անհրաժեշտ են հետևյալ հանգամանքները՝ 1. հարկատուի պարտավորության առկայությունը երրորդ անձի (պարտատիրոջ) հանդեպ, 2. հարկատուի կողմից պարտավորության կատարված չլինելը, 3. հարկատուի պարտավորության ներումը պարտատիրոջ կողմից:

71. Գործուղման ծախսերը որպես համախառն եկամտից նվազեցվող գումար, 26.12.2008 թվականին ընդունված «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փո-

փոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի հետադարձ ուժ.

ՎԳ/0961/05/09, 2010 թվականի փետրվարի 5

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործուղման վճարները, այդ թվում՝ օրապահիկը, գիշերավարձը, աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայրեր մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսը (և այլն) փոխհատուցման վճար են և ենթակա են նվազեցման համախառն եկամտից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը **Ֆիզիկական անձանց դրույթունն այլ կերպ բարելավող է**, դրանում սահմանվող դրույթների հետադարձ ուժի արգելման մասին որևէ դրույթ չի պարունակում: Հետևաբար, օրենքում կատարված փոփոխությունները տարածվում են նաև մինչև նշված փոփոխությունների ընդունումը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

72. *Ռուսաստանի Դաշնության՝ ի դեմս Ռուսաստանի Դաշնության դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության, որպես շահաբաժին ստացող անձ հարկման ենթակա լինելը.*

ՎԳ/2521/05/08, 2010 թվականի մարտի 12

Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև եկամտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու» համաձայնագրի կիրառելիությունը **առաջին հերթին** պայմանավորված է այն վավերացված Պետություններից մեկի կամ երկուսի **ռեզիդենտ լինելու հանգամանքով**: Ընդ որում, Պայմանավորվող Պետության **ռեզիդենտ է այդ պետության իշխանության մարմինը**: Նմանատիպ դեպքերում **գործի լուծման համար էական նշանակություն ունի** Ռուսաստանի Դաշնության դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության **«Պայմանավորվող պետության ռեզիդենտ»** լինելու հանգամանքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում տեղ գտած **«որն այդ Պետության օրենսդրությամբ այդտեղ ենթակա է հարկման»** եզրույթը վերաբերում է «այլ անձանց» և չի կարող վերաբերել պետական իշխանության մարմնին, քանի որ վերջինս նույն համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հարկեր վճարող չէ:

Մաքսային իրավունք

73. *Ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում ապրանքների ծագման երկրի մասին տեղեկության ճշգրիտ նշման կարևորությունը.*

ՎԳ/7505/05/08, 2009 թվականի դեկտեմբերի 25

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքի ծագման երկրի մասին տեղեկության ճշգրիտ նշումը ձևական պահանջ չէ, այլ այն որոշվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ սակագնային և ոչ սակագնային կարգավորման, մաքսային վիճակագրության վարման և ծագման երկրի վկայականների և (կամ) հավաստագրերի տրամադրման նպատակով:

74. Ավտոմեքենայի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու պահանջով գործի քննությանը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտոտների կոմիտեին մասնակից դարձնելը (ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր).

Ավտոմեքենայի մաքսային ձևակերպումը, այն որպես Հայաստանի Հանրապետությունում ազատ շրջանառության մեջ դնելու նախապայման.

ԵԿԳ/0710/02/10, 2010 թվականի դեկտեմբերի 27

1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ավտոմեքենայի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու պահանջով գործի քննությանը Կոմիտեն չպետք է մասնակից դարձվի, քանի որ Կոմիտեն մաքսային ձևակերպում իրականացնող մարմին է, որն իրականացնում է հայտարարագրի գրանցման եղանակով, իսկ սույն գործով քննվում է ավտոմեքենայի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու մասին հայցը, որի բավարարումը զուտ կարող է հիմք հանդիսանալ տվյալ անձի մոտ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հայտարարագիր ներկայացնելու իրավունքի ծագման համար: Այսինքն՝ սույն գործի քննությունը չի առնչվում Կոմիտեի իրավունքներին և պարտականություններին, այլև զուտ կարող է հիմք հանդիսանալ անձի կողմից հայտարարագիր ներկայացնելու համար, որի դեպքում առաջանում է Կոմիտեի՝ որպես մաքսային ձևակերպումների կազմակերպում իրականացնող հանրապետական գործադիր մարմնի, օրենքով և կանոնադրությամբ վերապահված գործառույթներն իրականացնելու պարտականություն: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի վճռով Կոմիտեի որևէ իրավունք չի խախտվել, և վերջինս չի ծանրաբեռնվել լրացուցիչ պարտականություններով:

2. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցն ազատ շրջանառության մեջ դնելու համար նախ և առաջ պետք է իրականացվի ապրանքի մաքսային ձևակերպում՝ համապատասխան հայտարարագրման տեսքով, որը և հիմք է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետավտոտեսչության վարչության համապատասխան ստորաբաժանումների համար՝ ավտոտրանսպորտային միջոցները գրանցելու և հաշվառելու համար:

Պետական տուրք

75. Շահումով խաղերի կազմակերպման բնագավառում պետական տուրք հաշվարկելու և գանձելու իրավասությունը.

ՎԳ-3/0385/05/09, 2010 թվականի հուլիսի 30

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունն է կրում շահումով խաղերի կազմակերպման բնագավառում պետական տուրքը ճիշտ հաշվարկելու և ժամանակին գանձելու համար պատասխանատվությունը, ուստիև Նախարարությունը շահումով խաղերի բնագավառում պետական տուրք հաշվարկելու և գանձելու, այդ թվում նաև՝ դատական կարգով, իրավասություն ունեցող մարմին է:

76. Պետական մարմնի պատասխանատվությունը բարենպաստ վարչական ակտ ընդունելիս օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով պետական տուրքի գումարները չհաշվարկելու և չգանձելու դեպքում.

ՎԳ/4118/05/09 2010, թվականի հոկտեմբերի 29

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լիազոր մարմնի ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պետական տուրքի գումարներն օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով չհաշվարկելու և չգանձելու պայմաններում ծառայությունների մատուցումը պատասխանատվություն է առաջացնում պետական մարմնի պաշտոնատար անձի, այլ ոչ թե Ընկերության համար:

77. Երևանի քաղաքապետարանի, որպես պետական կառավարման մարմնի ապօրինի գործողություններով (անգործությամբ) անձին հասցված վնասը հատուցելու գործով քաղաքապետարանի կողմից դատական ծախսերը հատուցելու պարտավորությունը.

Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության՝ հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական տուրքի բռնագանձման քացառումը.

ՎԳ/3464/05/09, 2010 թվականի հոկտեմբերի 29

1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ պատասխանող են Երևանի քաղաքապետարանը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, և ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ որպես պետական մարմին, սակայն գործով վիճարկվել է քաղաքապետարանի՝ որպես պետական կառավարման մարմնի կողմից դրսևորած գործողությունը, քաղաքապետարանի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու հետևանքով հայցվորի օգտին Հայաստանի Հանրապե-

տությունից վնասների հատուցման գումար բռնագանձվելու պայմաններում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ուժով պետական տուրքը նույնպես ենթակա է բռնագանձման ՀՀ ֆինանսների նախարարությունից, որպես Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող համապատասխան ֆինանսական մարմին:

2. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ պետական տուրքը ենթակա է բռնագանձման Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության, պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

78. Պետական մարմնի պաշտոնատար անձի պատասխանատվությունը անձի կողմից տարեկան պետական տուրքի գումարներն օրենսդրությամբ սահմանված ժամկետում չվճարելու պարտավորության խախտման համար.

ՎՂ/3608/05/08, 2009 թվականի մարտի 13

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ իրավախախտման հիմքում դրվել է ոչ թե **տարեկան պետական տուրքի գումարներն** օրենսդրությամբ սահմանված ժամկետում չգանձելու պարտավորության խախտման փաստը, այլ՝ **տարեկան պետական տուրքի գումարներն** օրենսդրությամբ սահմանված ժամկետում **չվճարելու** պարտավորության խախտման փաստը, ապա լիազոր պետական մարմնի պաշտոնատար անձը պատասխանատվություն չի կրում **պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարների չափով:**

Լիցենզավորում

79. Լիցենզիայի գործողության դադարեցումը արտադատարանական կարգով.

ՎՂ-4/0031/05/09, 2010 թվականի փետրվարի 5

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լիցենզիայի գործողությունը՝ լիազոր մարմնի դիմումի հիման վրա, դադարեցվում է դատական կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝ լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձը լուծարվել է, դադարեցվել է անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը կամ մահացել է ֆիզիկական անձը, լիցենզավորված անձը դիմել է այն դադարեցնելու խնդրանքով:

80. Ինտերնետ սկումբրի կողմից ինտերնետային հասանելիության ծառայության մատուցումը որպես լիցենզավորման ենթակա գործունեություն.

ՎՂ/0054/05/09, 2009 թվականի հուլիսի 24

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինտերնետը հազարավոր տարաբնույթ ցանցերի համակցություն է, որի գործունեությունն ապահովվում է ինտերնետ արձանագրությունների միջոցով: Իսկ լիցենզավորման ենթակա է ինտերնետային հասանելիության ծառայություն մատուցող ցանկացած անձի գործունեությունը: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ինտերնետ ակումբը միայն ինտերնետ հասանելիության ծառայություններ ստացող է, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն համարեց, քանի որ վերջինս ինտերնետային հասանելիության ծառայություններ է առաջարկում երրորդ անձանց, այն է՝ մատուցում է ինտերնետային հասանելիության ծառայություն:

Պարտադիր սոցիալական ապահովագրություն

81. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, ապահովագրական նպաստի իրավունք ձեռք չբերելը որպես պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ (նվազագույն սոցիալական վճար, ինչպես նաև տարվա համար հաշվարկված սոցիալական վճարներ) օրենքով սահմանված չափով և կարգով չվճարելու հետևանք.

ՎԳ/4439/05/09, 2010 թվականի հոկտեմբերի 01

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձն ապահովագրական նպաստի իրավունք է ձեռք բերում «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանների բավարարման և սոցիալական վճարներ կատարած լինելու դեպքում: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի ուժով սոցիալական վճարները սահմանված պարբերականությամբ և դրույքաչափերով վճարելու պարտականությունը դրված է ապահովադիրների վրա, և վերջիններս դրա չկատարման դեպքում կրում են բացասական հետևանքներ, որոնք արտահայտվում են նաև ապահովագրական նպաստի իրավունք ձեռք չբերելու ձևով: ՀՀ Սահմանադրության և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի իմաստից հետևում է, որ անձը կարող է համարվել սոցիալական վճարների վճարման իր պարտավորությունը կատարած, միայն նշված օրենքով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարներ վճարելու դեպքում: Այսինքն՝ անձը չի կարող վճարել միայն նվազագույն սոցիալական վճարները՝ չկատարելով տարվա համար հաշվարկված սոցիալական վճարները և նույն օրենքի իմաստով համարվել սոցիալական վճարներ կատարած: Հետևաբար, անձը կարող է համարվել սոցիալական վճարների վճարման իր պարտավորությունը կատարած,

միայն օրենքով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարներ վճարելու դեպքում, իսկ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով անհատ ձեռնարկատերերի համար սահմանված է ոչ միայն յուրաքանչյուր ամսվա համար նվազագույն սոցիալական վճար, այլ նաև տարվա համար հաշվարկված սոցիալական վճարներ վճարելու պարտավորություն:

82. Պետական կառավարչական հիմնարկի կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարում, պարտապանի և պարտատիրոջ համընկնում.

ՎԳ-7059/05/08, 2009 թվականի դեկտեմբերի 04

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պետական կառավարչական հիմնարկն ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը պետական մարմինների վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն է և քաղաքացիական իրավահարաբերություններին վերջիններիս մասնակցության ապահովումը: Պետական կառավարչական հիմնարկի իրավական կարգավիճակից ելնելով՝ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ վերջինիս պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը: Միաժամանակ, ՀՀ սոցիալական վճարների մասին օրենսդրությամբ, պետական կառավարչական հիմնարկը համարվում է ապահովադիր, և վերջինիս համար այլ ապահովադիրների համեմատ որևէ առանձնահատկություն սահմանված չէ: Հետևաբար, պետական կառավարչական հիմնարկի վրա, այլ ապահովադիրների հետ համահավասար, դրված է նույն օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով սոցիալական վճարումներ կատարելու պարտավորություն, որի չկատարման հետևանքով նախատեսված է վարչական պատասխանատվություն: Նմանատիպ գործերով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածը (պարտապանի և պարտատիրոջ համընկնում) կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է քաղաքացիաիրավական պարտավորության դադարմանը, իսկ տվյալ դեպքում Տեսչության և Հիմնարկի միջև իրավահարաբերություններն առաջանում են վերջինիս կողմից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարումներ չկատարելու հետևանքով, այսինքն՝ Տեսչության և Հիմնարկի միջև առաջացել են վարչաիրավական հարաբերություններ, որտեղ մի կողմում վարչական մարմինն է՝ Տեսչությունը, իսկ մյուս կողմում՝ ապահովադիրը՝ Հիմնարկը: Հետևաբար պարտապանի և պարտատիրոջ համընկնմամբ պարտավորության դադարման վերաբերյալ Դատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների բովանդակությունից և էությունից:

Սոցիալական ապահովության իրավունք

83. «Ձինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման հետադարձ ուժը, Ձինվորական ծառայության ստաժի հաշվարկման ժամանակ օրենսդրության կիրառումը.

ՎԳ/4892/05/09, 2010 թվականի հոկտեմբերի 29

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման կարգը, որը ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգի համեմատությամբ նախատեսում է գինժառայողի իրավունքը սահմանափակող նորմ, հետադարձ ուժով տարածվում է նաև այդ ակտի ընդունումից առաջ ծագած հարաբերությունների վրա, ինչը ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի տեսանկյունից անթույլատրելի է և ենթակա չէ կիրառման:

84. Կենսաթոշակի դադարեցում միայն դատական կարգով.

ՎԳ/5086/05/09, 2010 թվականի դեկտեմբերի 03

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պետական մարմնին տրված է միայն կենսաթոշակ նշանակելու իրավասություն, սակայն որևէ օրենքում չկա պետական մարմնի կամ պաշտոնատար անձի համար սահմանված իրավասություն՝ դադարեցնելու կենսաթոշակի վճարումը: Օրենքով նախատեսված դեպքերում և դրանց հիմքերի առկայության պայմաններում յուրաքանչյուր անձի կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել միայն դատական կարգով:

Այլ վարչական գործեր

85. Փախստականի կարգավիճակ տրամադրելիս ծնողների բռնագաղթած լինելու փաստի կարևորումը.

ՎԳ/2008/05/08, 2009 թվականի մարտի 13

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ծնողների բռնագաղթված լինելու հիմքով հայցվորին փախստականի կարգավիճակ չի կարող տրվել, եթե տվյալ անձը ծնվել է Հայաստանի Հանրապետությունում:

86. Քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման հիմքով բնակարանների հատկացումը, բնակարանի սենյակների թիվ և չափ.

ՎԳ/0249/05/09, 2010 թվականի հունիսի 25

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կառավարության որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ հաշվառված և փաստացի բնակվող վարձակալներին, փախստականներին, սեփականատերերին, անձնագրային հաշվառում ունեցող և փաստացի բնակվող բնակիչներին բնակելի տարածության ապահովման հիմքում դրվել է նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվի և չափի համապատասխանության սկզբունքը: Սա նշանակում է, որ սենյակների թիվ ասելով պետք է հասկանալ նախկինում զբաղեցրած սենյակների քանակը, իսկ չափ ասելով պետք է հասկանալ նախկինում զբաղեցրած բնակարանի փաստացի մակերեսը: Ուստի, քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման հիմքով բնակարանների հատկացումը ելնում է նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվի և չափի սկզբունքից, այլ ոչ թե անձերի քանակից:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչական դատավարության սկզբունքները

87. *Գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունք.*

ՎԳ/5525/05/08, 2009 թվականի ապրիլի 17,

ՎԳ-5/0316/05/08, 2009 թվականի դեկտեմբերի 04

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Դատարանի իրավունքն է, սակայն, Դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու Դատարանի պարտականությանը և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից:

Գործերի ընդդատությունը, գործի վարույթը կարճելը

88. *Հանրային իրավահարաբերություններ, կենսաթոշակի վճարումը դադարեցնելու պահանջը որպես հանրային իրավահարաբերությունից ծագող վեճ.*

ԵԱԸԳ /1369/02/09, 2010 թվականի դեկտեմբերի 03

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող:

Հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սահմանադրորեն երաշխավորված յուրա-

քանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը՝ որպես սոցիալական պետության բաղկացուցիչ տարր, իրականացվում է օրենքով սահմանված կենսաթոշակային ապահովության և կենսաթոշակային ապահովագրության բնագավառում պետական քաղաքականությամբ: Ընդ որում, կենսաթոշակային համակարգի պետական միասնական քաղաքականության իրականացումն ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ կենսաթոշակների վճարումը իրականացնելով ՀՀ պետական բյուջեի՝ այդ նպատակով առանձնացված միջոցներից: Այսինքն, յուրաքանչյուր անձի կենսաթոշակի վճարման հարցն անմիջականորեն կապված է կենսաթոշակային ապահովության բնագավառում պետական քաղաքականությամբ, այն ծագում է պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության արդյունքում: Հետևաբար, կենսաթոշակի վճարումը դադարեցնելու պահանջը բխում է հանրային իրավահարաբերությունների բնույթից:

89. Վարչական մարմնի կողմից պատճառված վնասի հատուցման պահանջի ընդդատությունը վարչական դատարանին.

ՎԳ/0277/05/09, 2010 թվականի դեկտեմբերի 03

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձը վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացնի վնասը պատճառած պետական մարմնին, իսկ այն հատուցելու մերժում ստանալու կամ դիմումը չքննարկելու դեպքում՝ համապատասխան վարչական ակտը կամ անգործությունը վիճարկելու պահանջով հայցը ներկայացնի դատարան: Հետևաբար, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժով վնասի հատուցման պահանջն ընդդատյա չէ վարչական դատարանին:

90. Հողամասերի միավորման ճանաչման պահանջի ընդդատությունը վարչական դատարանին.

ՎԳ/1041/05/10, 2010 թվականի դեկտեմբերի 03

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հողամասերի միավորումը ճանաչելու հայցապահանջի դեպքում, երբ ինքնին բացակայում են որևէ իրավունքի խախտման, կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով նախատեսված՝ դատարան դիմելու մյուս հիմքերը, որոնք կարող են դատարանի կողմից քննության առարկա դառնալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներկայացված հայցը վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակների թվին չի դասվում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հողամասերի միավորման ճանաչման հայցն ընդդատյա չէ վարչական դատարանին:

91. Բարենպաստ վարչական ակտի վիճարկման հնարավորությունը, ընդդատությունը վարչական դատարանին.

ՎԳ/4118/05/09, 2010 թվականի հոկտեմբերի 29

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում բարենպաստ վարչական ակտը վիճարկելու հնարավորություն, այդ վեճը ընդդատյա չէ վարչական դատարանին, հետևաբար՝ գործի վարույթը ենթակա է կարճման:

92. Տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների ընդդատությունը վարչական դատարանին.

ՎԳ/4/0074/05/09, 2010 թվականի ապրիլի 22

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առկա է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ինչպես գործողությունները, այնպես էլ անգործությունը դատական կարգով վիճարկելու՝ ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորություն: Օրենսդիրը, սահմանելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը վարչական դատարանում, դրանով ամրագրել է նաև տվյալ դատարանում այդ իրավունքի իրականացման ձևը՝ հայց հարուցելը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, ընդգծելու համար վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վիճարկելու հնարավորության կարևորությունը, արձանագրել է, որ վարչարարության ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) վարչարարությունը դրսևորվում է ինչպես որոշակի գործողությունների կատարմամբ, այնպես էլ՝ անգործությամբ: Ընդ որում, վարչական մարմնի անգործության հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն գործողությունը կամ անգործությունը օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում:

93. Հարկային պարտավորության բացակայության փաստը հաստատելու պահանջի ընդդատությունը վարչական դատարանին.

ՎԳ-5/0176/05/10, 2010 թվականի հոկտեմբերի 29

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային պարտավորության բացակայության փաստի հաստատումը չի մտնում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի տեսակներից որևէ մեկի մեջ: Հետևաբար, նշված հայցը չի համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-

րդ հողվածների, իսկ գործով կայացված դատական ակտը՝ նույն օրենսգրքի 114-րդ հոդվածի պահանջներին:

94. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառելիությունը (գործի վարույթի կարճում) Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների խորհրդի պետական կառավարման մարմինների, մասնավորապես՝ քաղաքային խորհուրդների և դրանց գործադիր մարմինների լուծարման դեպքում.

ԵԲԳ/0363/05/08, 2009 թվականի հուլիսի 24

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժողովրդական պատգամավորների խորհրդի պետական կառավարման մարմինների լուծարման դեպքում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի լուծարումից հետո վերջինիս կողմից ընդունված և իրենց իրավական ուժը պահպանած ակտերից բխող իրավունքների և պարտավորությունների կրողը պետությունն է՝ Հայաստանի Հանրապետությունը, ուստի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը տվյալ դեպքերում կիրառելի չէ: Հետևաբար, դատարանը չի կարող կարճել գործի վարույթն այն հիմքով, որ, ՀՀ վարչապետի որոշման համաձայն, Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն լուծարվել է և իրավահաջորդ, նույն կամ այլ որոշմամբ, չի ճանաչվել:

Գործ հարուցելու հիմքը

95. Գործի քննություն հայցի շրջանակներից դուրս, վարչական ակտն առաջինչ ճանաչելու հայցապահանջ ներկայացված լինելու պայմաններում դատարանի կողմից դրա անվավերության հարցի (վիճարկման հայց) քննության հնարավորությունը.

ՎԳ/2514/05/09, 2010 թվականի ապրիլի 02

ՀՀ վարչական դատարանը գործը հարուցում, քննում և լուծում է միայն հայցի հիման վրա և միմիայն հայցի շրջանակներում: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հստակ տարանջատում է վիճարկման և ճանաչման հայցերի տեսակները: Հետևաբար, այդ հայցերից որևէ մեկի ներկայացման դեպքում ՀՀ վարչական դատարանը պարտավոր է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը որոշել դրա շրջանակներում: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ ներկայացվում է վարչական ակտն առաջինչ ճանաչելու (ճանաչման հայց) վերաբերյալ հայցադիմում, ՀՀ վարչական դատարանն իրավասու է վճիռ կայացնել վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն առաջինչ լինելու մասին, կամ մերժել

այդպիսի հայցադիմումը և իրավասու չէ իր հայեցողությամբ փոփոխել հայցապահանջը՝ վարչական ակտը ճանաչելով անվավեր (վիճարկման հայց):

Գործը դատաքննության նախապատրաստելու կարգը

96. Գործի քննությունն առանց գործը դատաքննության նշանակելու որոշում կայացնելու և այն կողմերին ուղարկելու.

ՎԳ./2568/05/08, 2009 թվականի հոկտեմբերի 16

Վճռաբեկ դատարանը նախնական դատական նիստի նշանակումը, նույն օրը գործի քննությունն ավարտելը և վճռի հրապարակման օր նշանակելը գնահատել է որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի խախտում, քանի որ այդ դեպքում դատարանը չի իրականացնում գործով ըստ էության քննություն՝ զրկելով կողմին իր դատական պաշտպանության իրավունքը լիարժեք իրականացնելու, հայցապահանջը հիմնավորող լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից՝ արդյունքում խախտելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքը:

97. Ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելը

ՎԳ-6/0407/05/08, 2010 թվականի հունիսի 25

Հայցադիմումը ներկայացվել է ընդդեմ Ընկերության գործադիր տնօրենի, սակայն հայցապահանջն ուղղվել է իրավաբանական անձին՝ Ընկերությանը, որը և, ըստ հայցի, պետք է պատասխաներ:

Սինչդեռ Դատարանը, առանց ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող ներգրավելու մասին որոշում կայացնելու, սույն գործը քննել և լուծել է՝ գործի քննության ընթացքում և վճռով որպես պատասխանող դիտելով Ընկերությանը: Այսինքն՝ Ընկերությունը սույն գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով չի ներգրավվել որպես պատասխանող, վերջինիս համար չի ապահովվել համապատասխան դատավարական կարգավիճակ, սակայն նրա նկատմամբ կայացվել է վճիռ:

Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը

98. Վճարման կարգադրություն արձակելու վարույթ, վճարման կարգադրության արձակման մասին պատասխանողին պատշաճ ծանուցելու պարտականությունը.

ՎԳ-3/0627/03/09, 2010 թվականի ապրիլի 02

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճարման կարգադրություն արձակելու վարույթը, գտնվելով ընդհանուր դատավարական ձևի շրջանակներից դուրս, միաժամանակ դատավարական ինքնուրույն, հատուկ և պարզեցված տեսակ է, որը հարուցվում է հայցադիմումի հիման վրա: Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի ընթացակարգում միայն հակընդդեմ հայցն է, որ արգելակում է վճարման կարգադրության օրինական ուժ ստանալը և հարկադիր կատարումը, այն է՝ պատասխանողը վարչական ակտի վիճարկման իր իրավունքը կարող է իրականացնել միայն հակընդդեմ հայց ներկայացնելու եղանակով: Հետևաբար, վճարման կարգադրության արձակման մասին պատասխանողին ոչ պատշաճ ծանուցելը խոչընդոտում է պատասխանողի՝ վարչական ակտը վիճարկելու իրավունքի իրականացմանը:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ

99. *Կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը*
ՎՂ-4/0104/05/09, 2010 թվականի ապրիլի 02

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված ընդհանուր ժամկետից բացի որևէ այլ ժամկետի բացակայության պայմաններում կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար նույնպես պետք է հիմք ընդունվի վերոհիշյալ մեկ տարվա ժամկետը, քանի որ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական առանձնահատկության: Հետևաբար, տվյալ դեպքում նույնպես կատարողական թերթը պետք է կատարման ներկայացվի մեկ տարվա ընթացքում: Ուստի, նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված, ինչն էլ հիմք է այն անվավեր ճանաչելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԳ/0101/02/08**
դատարանի որոշում **2009թ.**
Քաղաքացիական գործ
թիվ ԵՇԳ/0101/02/08
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Ա. Սկրտչյան
Ն. Բարսեղյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2009 թվականի սեպտեմբերի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ադուլֆ Շահվերդյանի օրինական ներկայացուցիչ Նաիրա Շահվերդյանի և նրա ներկայացուցիչ Նելլի Ավետիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.07.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Լիլիթ Հակոբյանի ընդդեմ Ադուլֆ Շահվերդյանի՝ Ռոզա Ղազարյանին 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում անգործունակ ճանաչելու, Ռոզա Ղազարյանի կողմից 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում կնքված (կատարված) գործարքները, այդ թվում 14.07.2006 թվականին կատարված Շենգավիթի նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացված կտակի կարգադրությունը (գրանցված սեղանամատյանում՝ թիվ 4327), դրանից բխող ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն առոչինչ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Լիլիթ Հակոբյանը պահանջել է 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում Ռոզա Ղազարյանին ճանաչել անգործունակ, 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածի ընթացքում Ռոզա Ղազարյանի կողմից 14.07.2006 թվականին կատարված և Շենգավիթ նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացված կտակի կարգադրությունը, դրա հիման վրա ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը ճանաչել առոչինչ:

Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 02.06.2008 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.11.2008 թվականի որոշմամբ Դատարանի 02.06.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Դատարանի 02.04.2009 թվականի վճռով Լիլիթ Հակոբյանի դիմումը՝ 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում Ռոզա Ղազարյանին անգործունակ ճանաչելու և 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածի ընթացքում Ռոզա Ղազարյանի կողմից 14.07.2006 թվականին կատարված և Շենգավիթ նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացված կտակի կարգադրությունն անվավեր ճանաչելու մասով, մերժվել է, իսկ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.07.2009 թվականի որոշմամբ Լիլիթ Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Դատարանի 02.04.2009 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Ռոզա Ղազարյանը ճանաչվել է անգործունակ 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում: Լիլիթ Հակոբյանի պահանջը Ռոզա Ղազարյանի կողմից 14.07.2006 թվականին կատարված և Շենգավիթ նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացված կտակի կարգադրությունը և դրա հիմքով տրված ժառանգության իրավունքի վկայագիրն առոչինչ ճանաչելու մասով, մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ադուլֆ Շահվերդյանի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Լիլիթ Հակոբյանի ներկայացուցիչ Աշոտ Ոսկանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ, 51-րդ, 52-րդ, 132-րդ, 170-րդ և 172-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ, 1193-րդ հոդվածները, «Հոգեբուժության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 40-րդ և 56-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել այն փաստը, որ Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված է համարվել այն փաստը, որ Նոտարը ծանոթացել է կտակարարի հիվանդության պատմությանը, գրուցել է նրա հետ և համոզվել, որ վերջինս գործունակ է և նրա գործունակությունը որևէ կասկած չի առաջացրել: Նոտարը կտակը կազմելիս պահպանել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 40-րդ և 56-րդ հոդվածները և վավերացրել է գործունակ անձի կտակը: Ընդ որում, կտակը կազմվել է նաև վկա Լյուդմիլա Սաֆարյանի մասնակցությամբ, որը դատաքննության ընթացքում տվել է բացատրություն: Հաշվի չի առնվել ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի 15.10.2007 թվականի թիվ 01/10 գրությունը: Վերաքննիչ դատարանը, գնահատելով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 11.04.2008 թվականի թիվ 07-1081 եզրակացությունը, հանգել է սխալ եզրահանգման:

Ռոզա Ղազարյանը իր կենդանության օրոք երբևիցե հոգեկան խանգարման հիվանդությամբ չի տառապել, նրան անգործունակ ճանաչելու վերաբերյալ երբևէ դատարանում գործ չի քննվել, և այդ հարցի վերաբերյալ առկա չէ դատարանի վճիռ, ընդհակառակը, Ռոզա Ղազարյանը մինչև իր մահը եղել է գիտակից վիճակում և մշտապես հասկացել է իր գործողությունների նշանակությունը:

Հետևաբար, Ռոզա Ղազարյանին մահից հետո անգործունակ ճանաչելու վերաբերյալ Լիլիթ Հակոբյանի պահանջը անհիմն է, քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ քաղաքացին միայն իր կենդանության օրոք կարող է հոգեկան խանգարման հետևանքով և դատարանի վճռով անգործունակ ճանաչվել, որի հիմքը կարող է հանդիսանալ միայն կենդանի քաղաքացու նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննության նշանակումը, որից հետո նրա նկատմամբ դատարանի անգործունակ ճանաչելու վճռի հիման վրա խնամակալության և հոգեբարձության մարմինը նշանակում է խնամակալ, այսինքն՝ մահացած մարդու նկատմամբ խնամակալ չի կարող նշանակվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 10.07.2009 թվականի որոշման՝ Ռ.Ղազարյանին 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում անգործունակ ճանաչելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ Դատարանի վճռին:

2.1 Վճռարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Քաղաքացուն անգործունակ ճանաչելու գործերի վարույթի մյուս մասերը կան

այլ իրավական ակտերը չեն պարունակում մահացած անձին անգործունակ ճանաչելու պահանջ ներկայացնելն արգելող նորմեր: ՀՀ վճռաբեկ դատարանը 28.09.2006 թվականի քաղ. գործ թիվ 3-1816 (Ա) որոշմամբ որպես հիմնավոր ապացույց է ճանաչել դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի տված հետմահու բժշկական եզրակացությունը:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ռոզա Ղազարյանը տառապել է աջ գագաթային բլբի ուռուցքով (ֆիբրոզ մենինգիոմա անապլազիայի տեղամասերով), ինչի կապակցությամբ 13.04.2006 թվականին ենթարկվել է վիրահատության՝ ռեզեկցիոն տրեպանացիա՝ ուռուցքի հեռացումով (գ.թ. 9):

2) Ռոզա Ղազարյանը Երևանի Մանթաշյան փողոցի 8-րդ շենքի թիվ 1 բնակարանը 14.07.2006 թվականին կտակել է թոռանը՝ Ադոլֆ Շահվերդյանին (հատոր առաջին գ. թ 38):

3) Ռոզա Ղազարյանը մահացել է 04.09.2006 թվականին (հատոր առաջին գ. թ 14):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու իրավունակությունը, քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն)՝ բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի համա-

ձայն՝ քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը, նրա հոգեկան վիճակը պարզելու համար, նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն: Դատահոգեբուժական փորձաքննության անցկացումից այն անձի ակնհայտ խուսափելու դեպքում, որի նկատմամբ անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործ է հարուցվել, դատարանը որոշում է կայացնում քաղաքացուն հարկադիր կարգով դատահոգեբուժական փորձաքննություն ուղարկելու մասին:

Նույն օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը:

Նույն օրենսգրքի 172-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացուն անգործունակ ճանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա խնամակալության և հոգաբարձության մարմինը նշանակում է խնամակալ:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի կանոններին համապատասխան կարող է քննության առնվել միայն նրա կենդանության ժամանակ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռոզա Ղազարյանը մահացել է 04.09.2006 թվականին, մինչդեռ հայցվորի կողմից վիճարկվում է հանգուցյալ Ռոզա Ղազարյանի գործունակությունը 13.04.2006 թվականից մինչև նրա մահը՝ 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ռոզա Ղազարյանին 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում անգործունակ ճանաչելու վերաբերյալ հայցը դատարանում քննության ենթակա չէ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի առաջին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում վկայակոչված Վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի թիվ 3-1816(Ա) որոշմանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ գործը որևէ առնչություն չունի սույն վեճի հետ: Նշված գործով վճռի վերանայման համար հիմք էին դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի բժշկական եզրակացությունը և օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով անվավեր էր ճանաչվել լիազորագիրը:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 10.07.2009 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով՝ գործի վարույթը կարճելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.07.2009 թվականի որոշման՝ Ռոզա Ղազարյանին 13.04.2006 թվականից մինչև 04.09.2006 թվականն ընկած ժամանակահատվածում անգործունակ ճանաչելու մասը և այդ մասով սույն քաղաքացիական գործով վարույթը կարճել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.07.2009 թվականի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/4342/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Գազարյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4342/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ստիխտինգ Ադմինիստրատեկանտոր Ֆայնենշլ Փերֆորմանս Հոլդինգս հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ), «Լուքսթոնա Լիմիթեդ» ընկերության, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերության և «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊ ընկերության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 10.08.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Հիմնադրամի, «Լուքսթոնա Լիմիթեդ» ընկերության, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերության և «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊ-ի հայցի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժնի (այսուհետ՝ Պետական ռեգիստր), երրորդ անձ «Նեֆտեմնայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի՝ վարչական ակտերն առոչինչ ճանաչելու և միջամտող վարչական ակտերը վերացնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Հիմնադրամը, «Լուսսթոնա Լիմիթիդ» ընկերությունը, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը, «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ն պահանջել են՝

1) առաջին ճանաչել Պետական ռեգիստրի հետևյալ վարչական ակտերը՝ ա/ 31.07.2009 թվականի «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ գրանցումը, որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր.

բ/ 06.08.2009 թվականի գրանցումը՝ Արմեն Միքայելյանի փոխարեն Նիկիտա Տոլստիկովի ն որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի տնօրեն նշանակելու մասին.

2) կամ այն դեպքում, եթե դատարանը բավարար չհամարի վերոհիշյալ միջամտող վարչական ակտերն առաջին համարելու հիմքերը, ամբողջությամբ վերացնել դրանք որպես ոչ իրավաչափ ակտեր:

3) Վերոհիշյալ պահանջներից որևէ մեկը բավարարելու դեպքում վերացնել դրանց բոլոր անբարենպաստ հետևանքները, այդ թվում նաև Նիկիտա Տոլստիկովի և /կամ/ նրա կողմից լիազորված անձանց կամ նրանց իրավահաջորդների կողմից «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի անունից կատարված բոլոր գործողությունները, ներառյալ /բայց չսահամանափակելով/ հետևյալները՝

ա/ պարտավորեցնել Նիկիտա Տոլստիկովին /նրա իրավահաջորդին/ վերադարձնել «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կնիքը՝ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Միքայելյանին.

բ/ անվավեր ճանաչել «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Միքայելյանի կողմից նախկինում տրված լիազորագրերի՝ այդ թվում Ա. Դիլանյանին և Կ. Պետրոսյանին տրված լիազորագրերի հետ կանչելը.

գ/ անվավեր ճանաչել «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Միքայելյանի /նրա կողմից լիազորված անձանց/ կողմից «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի անունից պետական մարմիններ և դատական ատյաններ նախկինում ներկայացված տարբեր բողոքների, հայցերի և դիմումների հետ կանչելը /ետ վերցնելը/, այդ թվում նաև՝

- ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԳ/6136/05/08 վարչական գործով հայցի ապահովման միջոցները վերացնելու մասին 27.07.2009 թվականի որոշման դեմ 03.08.2009 թվականի բողոքը.

- Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԶԳ/0002/02/09 քաղաքացիական գործով 09.07.2009 թվականի վճռի դեմ 06.08.2009 թվականին բերված վերաքննիչ բողոքը.

- ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԳ/6136/05/08 վարչական գործով 04.08.2009 թվականի վճռի դեմ 06.08.2009 թվականին բերված վճռաբեկ բողոքը.

- 31.07.2009 թվականին «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի՝ որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր, գրանցումն անվավեր ճանաչելու մասին 07.08.2009 թվականի հայցադիմումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.08.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հիմնադրամը, «Լուքսթոնա Լիմիթեդ» ընկերությունը, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը և «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ն:

Հիմնադրամը, «Լուքսթոնա Լիմիթեդ» ընկերությունը, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը և «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ն վճռաբեկ դատարանում գործի քննության հետաձգման մասին միջնորդություն են ներկայացրել վճռաբեկ բողոքի պատասխանի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու նպատակով, որը Վճռաբեկ դատարանի կողմից մերժվել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանը, հանդիսանալով իրավունքի դատարան, գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, միաժամանակ հնարավորություն ընձեռելով գործին մասնակցող անձանց ներկայացնելու միայն վճռաբեկ բողոքի պատասխան:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, սխալ է մեկնաբանել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետը, 449-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ կառավարության 14.08.2003 թվականի թիվ 1396-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 1-ին կետի 1-ին պարբերությունը, որոնք պետք է կիրառել, կիրառել է ՀՀ կառավարության 14.08.2003 թվականի թիվ 1396-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 1-ին կետի 3-րդ պարբերությունը, որը չպետք է կիրառել:

Բողոք բերած անձինք նշված պնդումները պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Դատարանը նշել է, որ հայցվորներից որևէ մեկը չի ներկայացրել որևէ հիմնավորում կամ փաստարկ, որ վիճարկվող վարչական ակտերով անմիջականորեն խախտվել կամ կարող են խախտվել իրենց՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված որևէ իրավունք կամ ազատություն, կամ որի խախտումը կարող է վերացվել կամ կանխվել՝

վիճարկվող վարչական ակտերն առոչինչ կամ անվավեր ճանաչելով:

Մինչդեռ, Դատարանը հաշվի չի առել, որ հայցվորների կողմից բերված փաստարկներն ու գործի քննության ընթացքում ներկայացված ապացույցները վկայում են, որ վիճարկվող վարչական ակտերն ուղղակիորեն առնչվում են հայցվորների իրավունքներին և օրինական շահերին:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա բոլոր ապացույցները, հաշվի չի առել, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով նոր մասնակցի ընդունումը ոչ միշտ է ընդունելի մնացած մասնակիցների կողմից, այնուամենայնիվ, այն հնարավոր է մնացած մասնակիցների ցանկությամբ, այսինքն՝ նրանց կողմից նախապատվության իրավունքից չօգտվելու դեպքում:

Այս առումով Դատարանն արձանագրել է, որ օտարվող բաժնեմասը ձեռք բերելու ընկերության իրավունքը կիրառելի չէ մեկ մասնակից ունեցող ընկերությունների նկատմամբ, քանի որ ընկերության ձեռքբերման նախապատվության իրավունքը ինքնանպատակ չէ, այլ կոչված է պաշտպանելու ընկերության մնացած մասնակիցների իրավունքները:

Տվյալ դեպքում Դատարանը հաշվի չի առել, որ նման կարգավորումը նպատակ ունի պաշտպանելու նաև ընկերության միակ մասնակցի օրինական շահերը, առավել ևս այն դեպքում, երբ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կանոնադրությամբ նույնպես նախատեսված է ընկերության՝ բաժնեմասի ձեռքբերման նախապատվության իրավունքը: Բնականաբար, մեկ մասնակից ունեցող ընկերության կանոնադրությամբ նման կարգավորման նախատեսումը ևս ինքնանպատակ չէ, այլ այն նպատակ ունի պաշտպանելու ընկերության միակ օրինական մասնակցին՝ երրորդ անձանց կողմից ընկերության կանոնադրական կապիտալում 100 տոկոս բաժնեմասի ապօրինի ձեռքբերումից:

Բացի այդ Դատարանը հաշվի չի առել, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասի նկատմամբ այն ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է միմիայն վերջինիս ընկերության մասնակիցների գրանցամատյանում, որպես այդպիսին գրանցելու պահից:

2) Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Գործը քննվել է ոչ անաչառ Դատարանի կողմից, քանի որ Դատարանը նույն դատավորի կազմով սկզբում մերժել է «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի սեփականատեր «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի գրանցման անօրինականության մասին հայցը այն հիմքով, որ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ն կարող է վիճարկել գրանցումը միայն բուն գրանցումից հետո:

Այնուհետև, անօրինական գրանցումից հետո, Դատարանը՝ նույն դատավորի կազմով հրաժարվեց ընդունել գրանցման անօրինականության վերաբերյալ «Յուկոս ՄՆԳ- Ինվեստմենթ» ՍՊԸ-ի հայցը այն հիմքով, որ նոր սեփականատիրոջ գրանցումից հետո ընկերության տնօրենը նման հայց ներկայացնելու իրավունք չունի:

Հետագայում, այն բանից հետո, երբ Վճռաբեկ դատարանը բեկանեց վերոհիշյալ որոշումը, Դատարանը հրաժարվեց հայցվորների կողմից վկայակոչվող բոլոր հիմքերն ըստ էության քննության առնելուց՝ նշելով, որ «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի գրանցումը չի խախտում հայցվորների իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Դատարանի 10.08.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 20-րդ հոդվածներից բխում է, որ իր բաժնեմասը ձեռք բերելու ընկերության նախապատվության իրավունքը ծագում է միայն հետևյալ երկու նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, երբ՝ 1. ընկերության կանոնադրությամբ նախատեսված է նման իրավունքը և 2. մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը /դրա մասը/ գնելու իրենց նախապատվության իրավունքը:

Բացի այդ, եթե ընկերությունն իր 100 տոկոս բաժնեմասերի սեփականատեր լինելը, ընկերության ընդհանուր ժողով, որպես այդպիսին, գոյություն ունենալ չէր կարող, քանի որ ընկերությանը պատկանող բաժնեմասերը հաշվի չեն առնվում ընդհանուր ժողովի կողմից որոշումների ընդունման ժամանակ քվեարկության արդյունքները որոշելիս: Հետևաբար, ընկերության մասնակցին պատկանող 100 տոկոս բաժնեմասն ընկերությանն անցնելուց հետո, ընկերությունն ուղղակի կզրկվեր իր կառավարման բարձրագույն մարմնից և հնարավորություն չէր ունենա որոշում կայացնելու բաժնեմասերի բաշխման մասին:

Այսպիսով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 20-րդ հոդվածները միանշանակ են և այլընտրանքային մեկնաբանություն ուղղակի հնարավոր չէ: Դրանք ընկերության նախապատվության իրավունքի ծագման հիմքն ուղղակիորեն պայմանավորում են ընկերության մյուս մասնակիցների՝ բաժնեմասի ձեռքբերման նախապատվության իրավունքը չօգտագործելու փաստով, որը բացակայում է:

Ինչ վերաբերում է վիճարկվող վարչական ակտերով բողոք բերած անձանց իրավունքների խախտմանը, ապա հայցվորներից ոչ ոք չի ապացուցել, որ վիճարկվող վարչական ակտերով խախտվել են իրենց իրավունքները, ինչպես նաև չի ապացուցել, որ ունի օրենքով սահմանված որևէ իրավունք, որը կարող էր խախտվել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանի 04.08.2006 թվականի թիվ Ա40-11836/06-88-35 «Բ» որոշման համաձայն՝ «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ն ճանաչվել է սնանկ, սահմանվել է մրցութային վարույթ՝ երկու տարի ժամկետով և մրցութային կառավարիչ է նշանակվել Էդուարդ Կոնստանտինի Ռեբզունը:

2) 13.08.2007 թվականին մրցութային դատավարության շրջանակներում «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի և «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ի մրցութային կառավարիչ Է.Կ.Ռեբզունի միջև կնքվել է թիվ ԿՌԻ/ԿՊ/18/0001107/2683 գույքի առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ կանոնադրական կապիտալում «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ին պատկանող 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ին:

3) «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի կողմից 31.07.2009 թվականին դիմում է ներկայացվել Պետական ռեգիստր 13.08.2007 թվականի թիվ ԿՌԻ/ԿՊ/18/0001107/2683 պայմանագրի հիման վրա «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ին որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասով մասնակից գրանցելու համար: Պետական ռեգիստրի կողմից 31.07.2009 թվականին կատարվել է Ընկերության մասնակցի փոփոխության պետական գրանցում:

4) Պետական ռեգիստրի 06.08.2009 թվականի փոփոխությունների պետական գրանցմամբ՝ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում պարտադիր գրառվող տեղեկությունների փոփոխություն է կատարվել, որով «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ նախկին տնօրեն Արմեն Սիքայեյլյանի փոխարեն գրառվել են նոր տնօրեն Նիկիտա Տոլստիկովի վերաբերյալ տեղեկություններ:

5) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 09.07.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով մերժվել է «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի՝ 13.08.2007 թվականի «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ և «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ի մրցութային կառավարիչ Է.Կ.Ռեբզունի միջև կնքված թիվ ԿՌԻ/ԿՊ/18/0001107/2683 գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

6) «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ն «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի միակ մասնակիցն էր:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ՝

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառա-

վարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը նշված հոդվածից հետևում է, որ անձն իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանություն կարող է հայցել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն խախտվել կամ կարող են խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը: Նշվածից հետևում է նաև, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա՝ շահագրգիռ անձ լինելու դեպքում, այն է՝ եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության մասնակից են համարվում ընկերության պետական գրանցման պահից ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից այն գնով, որն առաջարկվել է երրորդ անձանց: Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձին, պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել ընկերությանը՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայ-

մանները: Ընկերությունն այդ մասին ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով հայտնում է ընկերության մասնակիցներին:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենքով նախատեսված՝ գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնեմասի վաճառքի դեպքում ընկերության ցանկացած մասնակից և (կամ) ընկերությունը, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է ընկերության նախապատվության իրավունքը, իրավունք ունի 6 ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել անվավեր ճանաչելու այդ գործարքը սկսած այն պահից, երբ նրանք իմացել են կամ պարտավոր էին իմանալ խախտման մասին:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ ընկերության մասնակցին է պատկանում մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքը: Ընդ որում, գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնեմասի վաճառքի դեպքում օրենսդիրը դատական կարգով դրանք անվավեր ճանաչելու պահանջը վերապահել է ընկերությանը կամ ընկերության մասնակցին:

Սույն վարչական գործով Հիմնադրամը՝ որպես վարչական արդարադատություն հայցող շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանք, նշել է «ՆԿ Յուկոս» ԲԲԸ-ի գույքը ռուսական պետության և նրա վերահսկողության ներքո գտնվող անձանց պետականացնելու անթույլատրելիությունը, որպեսզի այդ գույքը բաշխվի նրա օրինական կրեդիտորներին ու նախկին բաժնետերերին:

«Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը որպես վարչական արդարադատություն հայցելու շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանք, վկայակոչել է միջազգային արբիտրաժային դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ հաստատված պարտքի վերադարձման իրավունքի խախտումը, այն՝ որ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ կանոնադրական կապիտալում 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի սեփականության իրավունքի անօրինական գրանցումը հանգեցնում է այդ գույքի կորստին՝ հօգուտ Ռուսաստանի Դաշնության /նրա կողմից վերահսկվող անձի/:

«Լուքսոնա Լիմիթեդ» ընկերությունը՝ որպես վարչական արդարադատություն հայցելու շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանք, նշել է՝ «ՆԿ Յուկոս» ԲԲԸ-ն լուծարվելու դեպքում նրա գույքից բաժին ստանալու իրավունքի խախտումը, ինչպես նաև այն, որ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի սեփականության իրավունքի անօրինական գրանցումը հանգեցնում է այդ գույքի կորստին՝ հօգուտ Ռուսաստանի Դաշնության /նրա կողմից վերահսկվող անձի/:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միակ մասնակիցը՝ 100% բաժնեմասի սեփականատեր «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ն էր: Սույն վարչական գործով հայցվորների հայցի առարկան է՝ Պետական ռեգիստրի 31.07.2009 թվականի «Նեֆտեննայա կոմպանիա Ռոս-

նեֆտ» ԲԲԸ-ի գրանցումը որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և 06.08.2009 թվականի գրանցումը՝ Արմեն Միքայելյանի փոխարեն Նիկիտա Տոլստիկովին՝ որպես «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի տնօրեն նշանակելու մասին, անվավեր ճանաչելն է և այդ վարչական ակտերի հետևանքով բոլոր անբարենպաստ հետևանքների վերացնելն է, իսկ հայցի հիմքը օտարվող բաժնեմասը ձեռք բերելու Ընկերության նախապատվության իրավունքը խախտված լինելու հանգամանքն է: Բացի այդ, Պետական ռեգիստրի կողմից 31.07.2009 թվականի և 06.08.2009 թվականի գրանցումների հիմքում ընկած է «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի և «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ի մրցութային կառավարիչ Է.Կ.Ռեբզունի միջև 13.08.2007 թվականին կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրը, ըստ որի՝ Ընկերության կանոնադրական կապիտալում «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ին պատկանող 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ին:

Հիմք ընդունելով վերը նշվածը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով հայցվորներ Հիմնադրամը, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը՝ որպես նախկին «ՆԿ Յուկոս» ԲԲԸ-ի պարտատեր, «Լուքսբոնա Լիմիթեդ» ընկերությունը՝ որպես «Նեֆտեննայա կոմպանիա Յուկոս» ԲԲԸ նախկին բաժնետեր, Ընկերության մասնակիցներ չեն, հետևաբար չեն օգտվում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված՝ Ընկերության մասնակցի բաժնեմասը գնելու նախատվության իրավունքից:

Բողոք բերած անձանց պնդումներն այն մասին, որ իրենց իրավունքներն ըստ էության խախտվել են բաժնեմասերի սեփականության իրավունքի փոփոխման փաստով, այսինքն՝ գույքի առուվաճառքի պայմանագրով, ապա նույնիսկ վիճարկվող վարչական ակտերի առջին կամ անվավեր ճանաչումը որևէ կերպ չի կարող հիմք հանդիսանալ նրանց իրավունքների ենթադրյալ խախտումները վերականգնելու համար:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող ակտերի գրանցմամբ հայցվորների որևէ իրավունք և օրինական շահ չի խախտվել:

Ինչ վերաբերում է «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի այն փաստարկին, որ վիճարկվող ակտերով խախտվել է ընկերության մասնակցի բաժնեմասի ձեռքբերման՝ ընկերության նախապատվության իրավունքը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկայակոչված փաստարկը հիմք չէ վեճի առարկա վարչական ակտերը վերացնելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով վիճարկվող վարչական ակտերի ընդունման համար հիմք է հանդիսացել 13.08.2007 թվականի «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի և «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ի մրցութային կառավարիչ Է.Կ.Ռեբզունի միջև կնքված թիվ ԿՈՒԿՊ/18/0001107/2683 գույքի առուվաճառքի պայմանագիրը, որը չի կորցրել իրավական ուժը: Դեռ ավելին, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների

ընդհանուր իրավասության դատարանի՝ 09.07.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով մերժվել է «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի՝ 13.08.2007 թվականի «Նեֆտեննայա կոմպանիա Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի և «ՆԿ «Յուկոս»» ԲԲԸ-ի մրցութային կառավարիչ Է.Կ.Ռեբզունի միջև կնքված թիվ ԿՌԻ/ԿՊ/18/0001107/2683 գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Նշված գործով հայցվորը որպես վերոնշյալ պայմանագրի անվավերության հիմք նույնպես նշել էր բաժնեմասի գնման նախապատվության իրավունքի խախտումը, որը դատարանի կողմից մերժվել էր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող վարչական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող պայմանագիրն անվավեր ճանաչված չէ, հետևաբար՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ վարչական ակտերը չեն կարող անվավեր ճանաչվել պայմանագրի վիճարկման համար նախատեսված հիմքով, այն է՝ նախապատվության իրավունքի խախտման հիմքով:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ընկերության մասնակցի բաժնեմասի ձեռքբերման՝ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի նախապատվության իրավունքի խախտման վերաբերյալ փաստարկին:

Մասնավորապես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել ընկերության մասնակցի բաժնեմասի (դրա մասի) ձեռքբերման՝ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ ընկերության նախապատվության իրավունքն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերությանը պատկանող բաժնեմասերը հաշվի չեն առնվում ընդհանուր ժողովի կողմից որոշումների ընդունման ժամանակ քվեարկության արդյունքները որոշելիս, ինչպես նաև ընկերության լուծարման դեպքում գույքը բաշխելիս, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության մասնակցին պատկանող բաժնեմասն ընկերությանն անցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ պետք է բաշխվի ընկերության բոլոր մասնակիցների միջև՝ նրանց բաժնեմասերին համապատասխան կամ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ, եթե դա արգելված չէ ընկերության կանոնադրությամբ՝ երրորդ անձանց, և ամբողջությամբ վճարվի: Բաժնեմասի չբաշխված մասը պետք է մարվի ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրն Ընկերությանն իրավունք է վերապահել օգտվելու ընկերության մասնակցի բաժնեմասը գնելու իր նախապատվության իրավունքից միայն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնա-

կիցները չեն օգտագործել բաժնեմասը գնելու իրենց նախապատվության իրավունքը: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության նախապատվության իրավունքը՝ գնելու ընկերության մասնակցի բաժնեմասը, իրականացվում է այն դեպքում, երբ Ընկերությունն ունի մեկից ավելի մասնակից:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ ընկերության մասնակցին պատկանող բաժնեմասն ընկերությանն անցնելուց հետո այն, մեկ տարվա ընթացքում ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ, պետք է բաշխվի ընկերության բոլոր մասնակիցների միջև: Հետևաբար, եթե Ընկերության մասնակիցը մեկն է, ապա Ընկերությանը պատկանող ընկերության մասնակցի բաժնեմասը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով հնարավոր չի լինի բաշխել ընկերության բոլոր մասնակիցների միջև՝ Ընկերության այլ մասնակից չունենալու պատճառով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Գատարանի այն պատճառաբանությունը, որ ընկերության մասնակցի բաժնեմասի գնման նախապատվության իրավունքն օրենսդրի կողմից սահմանելն ինքնապատակ չէ, այլ այն կոչված է ապահովելու և նպաստելու ընկերության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանությանը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ն միակ մասնակից ունենալու պայմաններում չի օգտվում «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի մասնակցի բաժնեմասը ձեռք բերելու նախապատվության իրավունքից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն իրավացի է գնահատում Գատարանի եզրահանգումն առ այն, որ հայցվորիների որևէ իրավունք խախտված չէ, ուստի անհրաժեշտ չի համարել քննարկման առարկա դարձնել հայցվորների կողմից մատնանշված հայցի հիմք հանդիսացող այլ հանգամանքները և դրանք հիմնավորող փաստարկները և ապացույցները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի սույն հիմքի մյուս փաստարկներին չի անդրադառնում, դրանք վերը շարադրված դիրքորոշման պարագայում սույն գործի համար էական նշանակություն չունենալու պատճառով:

2) Բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլոց, այն դեպքերը, երբ՝ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, իսկ նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանն ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի լիարժեք իրականացումը, սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել: Այդ հիմքերն են՝

1) երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, կամ

2) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքը արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ օրինական կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը՝ սուբյեկտիվ մոտեցումն է, որը փորձում է պարզել տվյալ դատավորի անձնական համոզմունքները քննվող գործի կապակցությամբ և երկրորդը՝ օբյեկտիվ մոտեցումը, որը սահմանում է, թե արդյոք դատավորի կողմից առաջարկվող երաշ-

խիքները բավարար են այդ կապակցությամբ առաջացած ցանկացած օրինաչափ կասկած բացառելու համար (տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը «Պյերասակն ընդդեմ Բելգիայի» գործով 01.10.1982թ., կետ 30):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ այդ իրավական նորմերի ընդհանրական մոտեցումը դատարանի կամ դատավորի անաչառության կանխավարկածն է, որը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ նրա աչառությունն ապացուցված չէ (տես՝ ըստ դիմումի Կարինե Հարությունյանի՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը վերանայելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵԱԶԳ/1137/02/08 որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից հայցվորների հայցադիմումի ընդունման մերժումը, իսկ հետագայում Վճռաբեկ դատարանի որոշման հիման վրա այն վարույթ ընդունելն ինքնին բավարար չէ սույն գործով Դատարանի աչառու լինելու հանգամանքը հաստատված համարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական դատարանի 10.08.2010 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ **ՀՅԶԴ/0139/02/08**
դատարանի որոշում **2010թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ՀՅԶԴ/0139/02/08

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ն. Տավարացյան
Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հմայակ Չոհրաբյանի և Արայիկ Նավասարդյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հմայակ Չոհրաբյանի, Արայիկ Նավասարդյանի ընդդեմ Արամ և Վահագն Սիմոնյանների՝ «Կեչառք» ԲԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) պատճառված վնասի գումարը բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Հմայակ Չոհրաբյանը և Արայիկ Նավասարդյանը պա-

հանջել են բռնագանձել Արամ և Վահագն Սիմոնյաններից 28.914.900 ՀՀ դրամ՝ որպես Ընկերությանը պատճառված վնասի գումար:

ՀՀ հյուսիսային քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.02.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.07.2009 թվականի որոշմամբ Դատարանի 27.02.2009 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հմայակ Զոհրաբյանը և Արայիկ Նավասարդյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Արամ և Վահագն Սիմոնյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերության խորհրդի՝ գույքի արժեքի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքից չի բխում, որ նրա կողմից որոշված ցանկացած արժեք նույնական է շուկայականին: Խորհրդի կողմից գույքի սահմանված արժեքը կարող է ինչպես նույնական լինել գույքի շուկայական արժեքին, այնպես էլ՝ նշված արժեքից բարձր կամ ցածր լինել:

Տվյալ պարագայում հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Դատարանն անտեսելով, որ Ընկերության խորհրդի (տվյալ դեպքում՝ Խորհրդի 10.06.2008թ. որոշմամբ սահմանված գույքի շուկայական արժեքը) բացառիկ իրավասությունն է որոշել գույքի շուկայական արժեքը, վիճելի գույքի շուկայական արժեք է ընդունել հայցվորների ներկայացրած անկախ գնահատող «Արթին Էնթրփրայզ» ՍՊԸ-ի եզրակացությունը:

Ավելին, դա չի նշանակում որ գործի քննության ընթացքում Դատարանն իրավունք չունի ընդունել, գնահատել և վճռի հիմքում դնել համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպության հաշվետվությունը:

2) *Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի, 210-րդ հոդվածի 5-րդ կետի, 219-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները:*

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը, ընդունելով «Ի հավելումն վերաքննիչ բողոքին» կից ներկայացված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 06.04.2009 թվականի գրությունը և այն էական համարելով սույն գործի լուծման համար, չի պատճառաբանել, թե վերաքննիչ բողոք բերած անձինք իրենցից անկախ ինչ պատճառներով չեն ներկայացրել տվյալ ապացույցը առաջին ատյանի դատարանում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արամ և Վահագն Սիմոնյանները վերաքննիչ բողոք են ներկայացրել 25.03.2009 թվականին, որով պահանջել են բեկանել դատական ակտը և այն փոփոխել՝ հայցը մերժել, իսկ 11.06.2009 թվականին «Ի հավելումն վերաքննիչ բողոքին» փաստաթղթով փոխել են 25.03.2009 թվականին բերված բողոքի պահանջը և պահանջել են դատական ակտը բեկանել և գործն ուղարկել ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 08.07.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.02.2009 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ «Արթին Էնթերփրայս» ՍՊԸ-ի եզրակացությունն անհիմն է, և որ Դատարանը սխալ է մեկնաբանել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը, հիմնավոր է, քանի որ Ընկերությունն իրավասու է որոշել իր սեփականության ներքո գտնվող գույքի արժեքը և որոշված գնով այն վաճառել: Որևէ իրավական ակտով սահմանված չէ, որ Ընկերության խորհուրդը պարտավոր է ապացուցել բաժնետերերին վաճառվող գույքի արժեքը: Դրան հակառակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը սահմանել է, թե երբ և որ դեպքերում է պարտադիր անկախ գնահատողի ծառայությունից օգտվելը:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձանց այն պնդմանը, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 06.04.2009 թվականի գրությունը կարող էր ներկայացվել Դատարանում գործի քննության ժամանակ, հիմնավոր չէ, քանի որ Վահագն և Արամ Սիմոնյանները գրված են եղել Դատարանին լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության խորհուրդը, 10.06.2008 թվականին քննարկելով Ընկերության ֆինանսական վիճակը, որոշել է թույլատրել Աղավնաձորում գտնվող մեկ հեկտար հողատարածքն օտարել՝ 1քմ հողամասի համար սահմանելով 1.400 ՀՀ դրամ վա-

ճառքի գին (գ.թ. 15):

2. 19.06.2008 թվականի թիվ 1 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Ընկերությունը վաճառել է, իսկ Ջարուհի Բաղդասարյանը 14.000.000 ՀՀ դրամով գնել է ՀՀ Կոտայքի մարզ գյուղ Աղավնաձոր հասցեում գտնվող 1,01 հա մակերեսով հողատարածքը (գ.թ. 16, հ. 1-ին):

3. «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի գնահատման գործակալության 26.01.2009 թվականին կազմված հաշվետվության համաձայն՝ Կոտայքի մարզ, գ. Աղավնաձոր ճամբարում գտնվող «Կեչառք» ԲԲԸ-ին պատկանող հողամասի շուկայական արժեքը (առանց կադաստրային արժեքի) հունիս 2008 թվականի դրությամբ կազմում է 62.460.000 դրամ (գ.թ. 127, հ. 1-ին):

4. Արամ և Վահագն Սիմոնյանների կողմից 11.06.2009 թվականի «Ի հավելումն վերաքննիչ բողոքին» կից ներկայացված՝ Ընկերության խորհրդի նախագահ Վ. Սիմոնյանին հասցեագրված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 06.04.2009 թվականի թիվ ՀՀ-4/1321 գրությամբ նշվել է.« Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի կողմից իրականացված գնահատման հաշվետվությունում տեղ են գտել որոշակի թերություններ, սխալ հաշվարկներ, և արդյունքում ձևավորվել է գերազնահատված արժեք: Կոմիտեի մասնագետների տրված եզրակացության հիման վրա ընկերության կողմից ուղղվել և կոմիտե է ներկայացվել գնահատման հաշվետվությունը, որի արդյունքում Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղում գտնվող «Կեչառք» ԲԲԸ-ին պատկանող անշարժ գույքի շուկայական արժեքը կազմել է 30.164.000 ՀՀ դրամ» (գ.թ. 44, հ. 2-րդ):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1. Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի համաձայն՝ խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում **գույքի շուկայական արժեքի** որոշումը՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի շուկայական արժեք է համարվում, ներառյալ՝ ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը, **այն գինը**, որով գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ գույքը ձեռք բերել:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 1-ին

մասի համաձայն՝ **խորհրդի անդամները**, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ կազմակերպությունը և կառավարիչն **իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով:**

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ բաժնետիրական ընկերության սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի շուկայական արժեքը որոշվում է Ընկերության խորհրդի կողմից՝ ելնելով Ընկերության շահերից: Ընդ որում, այն որոշելիս պետք է հիմք ընդունվեն մի շարք չափանիշներ, մասնավորապես՝ որքան է վաճառքի պահին տվյալ անշարժ գույքի շուկայական արժեքը և արդյո՞ք այդ պայմաններում տվյալ գույքը վաճառելու պարտավորություն չունեցող անձը կհամաձայնվեր այն վաճառել, իսկ գնելու պարտավորություն չունեցող անձը կհամաձայնվեր այն ձեռք բերել:

Վերաքննիչ դատարանը դատական ակտի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում գույքի շուկայական արժեքի որոշումը, հետևաբար անկախ գնահատողի կողմից տրված եզրակացությունը հիմք չէ շուկայական արժեքի որոշման համար:

Մինչդեռ, հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության խորհրդի կողմից 10.06.2008 թվականին որոշված Կոտայքի մարզ գյուղ Աղավնաձոր հասցեում գտնվող 1,01 հա մակերեսով հողատարածքի՝ 1 քմ հողամասի համար սահմանված շուկայական արժեքը, այն է՝ 1.400 ՀՀ դրամ վաճառքի գինը, **էականորեն տարբերվում է** ոչ միայն գործում առկա «Արթին Էնթրփրայզ» ՍՊԸ-ի գնահատման գործակալության 26.01.2009 թվականի հաշվետվությամբ սահմանված՝ հողամասի շուկայական արժեքից, այն է (առանց կադաստրային արժեքի)՝ 2008 թվականի հունիս ամսվա դրությամբ՝ 62.460.000 դրամ, այլ, նույնիսկ, Արամ և Վահագն Սիմոնյանների կողմից 11.06.2009 թվականին «Ի հավելումն վերաքննիչ բողոքին» կից ներկայացված՝ Ընկերության խորհրդի նախագահ Վ. Սիմոնյանին հասցեագրված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 06.04.2009 թվականի թիվ ՀՀ-4/1321 գրությամբ նշված 30.164.000 ՀՀ դրամ արժեքից:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Ընկերության խորհրդի 10.06.2008 թվականի **որոշումը չի վիճարկվել**, հետևաբար՝ այդ որոշումն առաջացրել է իրավական հետևանքներ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խորհրդի 10.06.2008 թվականի որոշման վիճարկված լինելու կամ չլինելու հանգամանքը սույն գործի համար էական նշանակություն չունի՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **խորհրդի անդամները**, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրեն-

նր), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն ու օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև **պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝** Օրենսգրքով, սույն օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը կամ **Ընկերության այն բաժնետերը** (բաժնետերերը), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսը, **իրավունք ունի (ունեն) խորհրդի անդամների,** տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարիչի **դեմ հայցով դիմել դատարան՝ Ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ սույն գործով Ընկերությանը պատճառված վնասի բռնագանձման պահանջի մասին հայցի առկայության պայմաններում, Ընկերության խորհրդի 10.06.2008 թվականի որոշման վիճարկված լինելու հանգամանքը էական չէ:

2.Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտի բեկանման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ բողոք բերած անձանց կողմից «Ի հավելումն վերաքննիչ բողոքին» կից ներկայացված 06.04.2009 թվականի թիվ ՀՀ-4/1321 գրությունը էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար:

Սինչդեռ՝ Վերաքննիչ դատարանը որոշման մեջ չի նշել, թե վերաքննիչ բողոք ներկայացրած անձինք, իրենցից անկախ ինչ պատճառներով չեն ներկայացրել

տվյալ ապացույցը առաջին ատյանի դատարանում:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (*տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը*): Ուստի, սույն որոշմամբ կրկին չի անդրադառնում տվյալ հարցին:

Ինչ վերաբերում է բողոքի սույն հիմքում նշված նյութ փաստարկներին, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի խախտման պայմաններում Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում:

Վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԳ/0758/02/08**
դատարանի որոշում **2009թ.**
Քաղաքացիական գործ
թիվ ԵԱՆԳ/0758/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Կ. Չիլինգարյան
Կ. Հակոբյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Էլիշկա Չաքարովայի, Ֆենյա, Վարդան, Ալվարդ, Գառնիկ Նիկողոսյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Էլիշկա Չաքարովայի ընդդեմ Ֆենյա, Արթուր, Ռոբերտ, Վարդան, Ռուզաննա, Արշակ, Անդրանիկ, Ալվարդ, Գառնիկ, Մարինե, Մերինե, Կարեն, Գոռ Նիկողոսյանների և Կարինե Հովսեփյանի՝ առուվաճառքի գործարքը վավեր ճանաչելու պահանջի մասին, Կարինե Հովսեփյանի, Արթուր Նիկողոսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Էլիշկա Չաքարովայի և Լարիսա Գասպարյանի՝ ապօրինի զբաղեցրած բնակարանից վտարելու պահանջի մասին, Ռուզաննա Նիկողոսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Էլիշկա Չաքարովայի և Լարիսա Գասպարյանի՝ բնակարանից վտարելու և գործարքն անվավեր ճանաչելու պահանջների մասին և Արթուր, Կարեն, Գոռ Նիկողոսյանների և Կա-

րինն Հովսեփյանի հակընդդեմ հայցի՝ ընդդեմ Ֆենյա, Ռուզաննա, Արշակ, Մարինե, Անդրանիկ, Վարդան, Ալվարդ, Գառնիկ Նիկողոսյանների, երրորդ անձինք Էլիշկա Չաքարովայի և Լարիսա Գասպարյանի՝ գնելու նախապատվության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով Գատարան՝ Էլիշկա Չաքարովան պահանջել է վավեր ճանաչել 02.03.2006 թվականի Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 հասցեի բնակարանի առուվաճառքի պայմանագիրը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կարինե Հովսեփյանը և Արթուր Նիկողոսյանը պահանջել են Էլիշկա Չաքարովային և Լարիսա Գասպարյանին վտարել Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ռուզաննա Նիկողոսյանը պահանջել է Էլիշկա Չաքարովային և Լարիսա Գասպարյանին վտարել Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանից և անվավեր ճանաչել 02.03.2006 թվականի Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 հասցեի բնակարանի առուվաճառքի պայմանագիրը:

Էլիշկա Չաքարովան, փոփոխելով հայցապահանջը, հրաժարվել է առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջից և պահանջել է բռնագանձել 74040 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Էլիշկա Չաքարովան, փոփոխելով հայցի պահանջը, հրաժարվել է 74040 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելու պահանջից և պահանջել է վավեր ճանաչել առուվաճառքի պայմանագիրը:

Երևանի Ավան և Նոր-Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.03.2008 թվականի վճռով Էլիշկա Չաքարովայի հայցը բավարարվել է մասնակիորեն, վճռվել է հոգուտ Էլիշկա Չաքարովայի բռնագանձել 20970 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ռուզաննա Նիկողոսյանի, Կարինե Հովսեփյանի և Արթուր Նիկողոսյանի հակընդդեմ հայցերը բավարարվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.06.2008 թվականի որոշմամբ բեկանվել է Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.03.2008 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արթուր, Կարեն, Գոռ Նիկողոսյանները և Կարինե Հովսեփյանը պահանջել են Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի նկատմամբ ճանաչել իրենց գնելու նախապատվության իրավունքը:

Երևանի քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Գատարան) 24.02.2009 թվականի վճռով Էլիշկա Չաքարովայի հայցը բավարարվել է: Վճռվել է վավեր ճանաչել Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 հասցեում գտնվող բնակարանի

առուվաճառքի գործարքը՝ Էլիշկա Չաքարովային թույլատրելով Կարինե Հովսեփյանին, Արթուր, Կարեն և Գոռ Նիկողոսյաններին վճարելու 3517 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ռուզաննա Նիկողոսյանի, Կարինե Հովսեփյանի և Արթուր Նիկողոսյանի, ինչպես նաև Արթուր, Կարեն, Գոռ Նիկողոսյանների և Կարինե Հովսեփյանի հակընդդեմ հայցերը մերժվել են: Ֆենյա, Արթուր, Ռոբերտ, Վարդան, Ռուզաննա, Արշակ, Անդրանիկ, Ալվարդ, Գառնիկ, Մարինե, Մերինե, Կարեն, Գոռ Նիկողոսյաններից, Կարինե Հովսեփյանից համապարտության կարգով հոգուտ Էլիշկա Չաքարովայի 74040 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.06.2009 թվականի որոշմամբ Դատարանի 24.02.2009 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Էլիշկա Չաքարովան, Ֆենյա, Վարդան, Ալվարդ և Գառնիկ Նիկողոսյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Արթուր, Կարեն, Գոռ Նիկողոսյանները և Կարինե Հովսեփյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածը, 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 217-րդ հոդվածի 4-րդ մասը, 219-րդ հոդվածը, 220-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, 53-րդ հոդվածի 1-ին մասը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արթուր Նիկողոսյանը 26.05.2006 թվականի լիազորագրով լիազորել է Կարինե Հովսեփյանին վաճառելու Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանը, և Կարինե Հովսեփյանը Էլիշկա Չաքարովայից ստացել է 3000 ԱՄՆ դոլար և տվել ստացական, որ ստացել է բնակարանի վաճառքի գումարի մի մասը:

Բացի այդ, Կարեն և Գոռ Նիկողոսյանները գործարքի կնքման պահին եղել են անչափահասներ, որոնց անունից հանդես է եկել նրանց օրինական ներկայացուցիչը՝ Կարինե Հովսեփյանը: Էլիշկա Չաքարովան, բացառությամբ Արթուր, Կարեն, Գոռ Նիկողոսյաններին և Կարինե Հովսեփյանին վճարվելիք 3517 ԱՄՆ դոլար գումարի, ամբողջությամբ վճարել է Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի՝ պայմանագրով նախատեսված գումարը, որի մասին են վկայում գործում առկա ստացականները, որոնք նույնպես չեն գնահատվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 04.06.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Գատարանի 24.02.2009 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և գնահատման հիման վրա:

Համասեփականատերերի կողմից պարտավորությունները գրելու պահին Արթուր Նիկողոսյանը գտնվել է Ռ-Ղ-ում, իսկ նրա ընտանիքը, գտնվելով Երևանում, անգամ տեղյակ չի եղել նյութ համասեփականատերերի կողմից բնակարանը վաճառելու մտադրության մասին: Էլիչկա Ջաքարովան ոչ միայն խուսափել է գումարներ տալուց, այլև շարունակել է անօրինական համագործակցությունը Ֆենյա, Ռոբերտ և Վարդան Նիկողոսյանների հետ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 20.10.2003 թվականին տրված սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Գայի 29 շենքի թիվ 40 բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գառնիկ, Ֆենյա, Արթուր, Վարդան, Ռուզաննա, Ալվարդ և Անդրանիկ Նիկողոսյաններին (հ.1-ին գ.թ.18):

Բնակելի ֆոնդի հաշվառման, կառավարման համատիրության աշխատանքների համակարգման բաժնի պետի 02.06.2006 թվականի գրության համաձայն՝ Երևանի քաղաքապետի 12.09.1997 թվականի թիվ 1075 որոշմամբ Գայի 29 շենքի թիվ 40 բնակարանի սեփականաշնորհմանը մասնակցել են 15 անձինք՝ Նիկողոսյան Գառնիկ /վարձ./, Նիկողոսյան Ֆենյա /կինը/, Նիկողոսյան Արթուր /տղան/, Նիկողոսյան Ռոբերտ /տղան/, Նիկողոսյան Վարդան /տղան/, Նիկողոսյան Ռուզաննա /հարսը/, Նիկողոսյան Արշակ /թոռը/, Նիկողոսյան Անդրանիկ /թոռը/, Սարգսյան Ալվարդ /հարսը/, Նիկողոսյան Գառնիկ /թոռը/, Նիկողոսյան Մարինե /թոռը/, Նիկողոսյան Մերինե /թոռը/, Հովսեփյան Կարինե /հարսը/, Նիկողոսյան Գոռ /թոռը/, Նիկողոսյան Կարեն /թոռը/ (հ. 1-ին գ. թ. 17):

2. 25.05.2006 թվականին վաճառողներ Ֆենյա, Ռոբերտ, Վարդան, Ալվարդ, Արշակ Նիկողոսյանների և գնորդ Էլիչկա Ջաքարովայի միջև կնքվել է Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքի պայմանագիրը (հ. 1-ին գ. թ. 9):

3. 30.05.2006 թվականի հայտարարության և 11.05.2006 թվականի պարտավորագրի համաձայն՝ Ռոբերտ և Վարդան Նիկողոսյանները Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքից Էլիչկա Ջաքարովայից ստացել են 1520 և 1491 ԱՄՆ դոլար (հ. 1-ին գ. թ. 18, 222):

4. 07.06.2006 թվականի ստացականի համաձայն՝ **Կարինե Հովսեփյանը** Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքից Էլիշկա Ջաքարովայից ստացել է 3000 ԱՄՆ դոլար (հ. 1-ին գ. թ. 12):

5. 05.06.2006 թվականի ստացականի համաձայն՝ Ռուզաննա Նիկողոսյանը Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքից Էլիշկա Ջաքարովայից ստացել է իրեն հասանելիք մասնաբաժինը և ոչ մի պարտք ու պահանջ չունի (հ. 1-ին գ. թ. 13):

6. 05.06.2006 թվականի ստացականի համաձայն՝ Վարդան, Ալվարդ և Ռուզաննա Նիկողոսյանները Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքից Էլիշկա Ջաքարովայից ստացել են 2000 ԱՄՆ դոլար (հ. 1-ին գ. թ. 13):

7. 05.06.2006 թվականի, 13.06.2006 թվականի և 07.06.2006 թվականի ստացականների համաձայն՝ Վարդան և Ալվարդ Նիկողոսյանները Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքից Էլիշկա Ջաքարովայից ստացել են 100 ԱՄՆ դոլար, 530 ԱՄՆ դոլար և 27.000 ՀՀ դրամ և 200 ԱՄՆ դոլար (հ. 1-ին գ. թ. 14, 15, 227ա):

8. 07.07.2006 թվականի Վարդան Նիկողոսյանի հայտարարության համաձայն՝ Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի կոմունալ ծախսերը մարելու, փաստաթղթերը կարգավորելու համար Էլիշկա Ջաքարովան կատարել է վճարումներ (հ. 1-ին գ. թ. 16):

9. 03.05.2006 թվականի հայտարարության համաձայն՝ Ռոբերտ, Ռուզաննա, Անդրանիկ, Արշակ, Սերինե և Մարինե Նիկողոսյանները Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքից Էլիշկա Ջաքարովայից ստացել են 3060 ԱՄՆ դոլար (հ. 1-ին գ. թ. 218):

10. 05.06.2006 թվականի հայտարարության համաձայն՝ Ռոբերտ և Ռուզաննա Նիկողոսյանները Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքից Էլիշկա Ջաքարովայից ստացել են իրենց և իրենց երեխաների մասնաբաժինը ամբողջությամբ և ոչ մի պարտք ու պահանջ չունեն (հ. 1-ին գ. թ. 219):

11. 15.06.2006 թվականի ստացականի համաձայն՝ Ռոբերտ Նիկողոսյանը Էլիշկա Ջաքարովայից Արշակ Նիկողոսյանի փոխարեն ստացել է 1533 ԱՄՆ դոլար՝ որպես Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանի առուվաճառքի հասանելիք մասնաբաժինը (հ. 1-ին գ. թ. 225):

12. Արթուր Նիկողոսյանի կողմից տրված 26.05.2006 թվականի լիազորագրի համաձայն՝ Կարինե Հովսեփյանը լիազորվել է ցանկացած գնով և պայմաններով վաճառել Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանը (հ. 1-ին գ. թ. 204):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով համասեփականատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի տնօրինելու համատեղ գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Ընդ որում, ընդհանուր սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը մնացած մասնակիցների պահանջով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ գործարք կնքած անձի լիազորությունների բացակայության մասին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության գույքը տնօրինելու դեպքում գործում է համասեփականատերերի **համաձայնության և դրա տնօրինման իրավունքի առկայության կանխավարկածը** (*տես՝ Անուշ Արտաշեսյանի հայցն ընդդեմ Արմենուհի Ստեփանյանի, ՀՀ Երևանի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, Լյուդվիկ Հովհաննիսյանի՝ բնակարանի առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին. Վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի թիվ ԵԱԲԴ/0275/02/08 գործով որոշումը*):

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելիս, իսկ հակընդդեմ հայցերը մերժելիս հաստատված է համարել, որ Էլիշկա Չաքարովան մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, Կարինե Հովսեփյանի և նրա ընտանիքի անդամների կողմից տրվել է համաձայնություն գործարքն իրականացնելու համար, իսկ գնելու նախապատվության իրավունքը ճանաչվում է միայն քաժնային սեփականության մասնակիցների միջև եղած հարաբերություններում:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելիս հիմք է ընդունել այն

հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որ բնակարանն օտարելու համար համասեփականատերեր Կարինե Հովսեփյանը, Արթուր, Կարեն և Գոռ Նիկողոսյանները տվել են իրենց համաձայնությունը, և հաստատված է համարել, որ Կարինե Հովսեփյանը, Արթուր, Կարեն և Գոռ Նիկողոսյանները բնակարանի ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներից վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով չի ապացուցվել այն փաստը, որ վեճի առարկա գործարքը կնքելու ժամանակ Ֆենյա, Ռոբերտ, Վարդան, Ալվարդ, Արշակ Նիկողոսյանների մոտ բացակայել է վեճի առարկա գույքը վաճառելու լիազորությունը և դրա մասին գործարքի մյուս կողմը՝ գնորդ Էլիշկա Չաքարովան իմացել է կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորություն է ունեցել:

Մասնավորապես, սույն գործի փաստերի համաձայն՝ Գայի 29 շենքի թիվ 40 բնակարանի համասեփականատերեր են Ֆենյա, Վարդան, Ալվարդ և Գառնիկ Նիկողոսյանները, ինչպես նաև Կարինե Հովսեփյանը, Արթուր, Կարեն և Գոռ Նիկողոսյանները, 25.05.2006 թվականին կնքված պայմանագրով Ֆենյա, Ռոբերտ, Վարդան, Ալվարդ, Արշակ Նիկողոսյանները Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանը վաճառել են Էլիշկա Չաքարովային, գործում առկա ստացականների համաձայն՝ Էլիշկա Չաքարովան Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանը գնելու համար մասնակի կատարել է Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 հասցեում գտնվող բնակարանի առուվաճառքի գործարքը, վճարել է բնակարանի բոլոր համասեփականատերերին, այդ թվում՝ Կարինե Հովսեփյանին: Կարինե Հովսեփյանին, Արթուր, Կարեն և Գոռ Նիկողոսյաններին պակաս է վճարել 3517 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Բացի այդ, Արթուր Նիկողոսյանի կողմից տրված 26.05.2006 թվականի լիազորագրի համաձայն՝ Կարինե Հովսեփյանը լիազորվել է ցանկացած գնով և պայմաններով վաճառել Երևանի Գայի պողոտա 29 շենքի թիվ 40 բնակարանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ֆենյա, Ռոբերտ, Վարդան, Ալվարդ և Արշակ Նիկողոսյանները համասեփականության իրավունքով իրենց պատկանող Գայի 29 շենքի թիվ 40 բնակարանը վաճառելիս ունեցել են այդ գույքը տնօրինելու իրավունք, իսկ տան մյուս համասեփականատերեր Կարինե Հովսեփյանը, Արթուր, Կարեն և Գոռ Նիկողոսյանները տեղյակ են եղել այդ պայմանագրի մասին և նույնիսկ Կարինե Հովսեփյանը Էլիշկա Չաքարովայից ստացել է տան առուվաճառքի դիմաց վճարված գումարի մասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի գործարքը կատարած կողմի պահանջով այն վավեր ճանաչել:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ գործարքը կատարած կողմի պահանջով գործարքը կարող է վավեր ճանաչվել այն պարագայում, երբ այդ կողմը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Էլիչկա Չախարովան մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Գատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածը, հիմնավոր չէ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ Կարինե Հովսեփյանը, Արթուր, Կարեն և Գոռ Նիկողոսյանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի ուժով սեփականության մյուս մասնակիցներից վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի իր բաժինը վաճառել՝ պահպանելով նույն օրենսգրքի 195-րդ հոդվածում նախատեսված կանոնները:

Նույն օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները, վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով, վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի:

Նշված հոդվածներից հետևում է, որ բաժնային սեփականության մասնակիցները բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինելու, այդ թվում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու իրավունք ունեն: Ընդ որում, եթե **բաժնային սեփականության մասնակիցն** իր բաժինը վաճառում է երրորդ անձի, ապա **բաժնային սեփականության մնացած մասնակիցները**, վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով, **վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն:**

Սինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ վեճի առարկա բնակարանը ընդհանուր համատեղ սեփականություն է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընդհանուր համատեղ սեփականության վաճառքի հետ կապված հարաբերություններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածը կիրառելի չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Սիաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդ-

վածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի քաղաքացիական դատարանի 24.02.2009 վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-3/0092/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ-3/0092/05/10
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 27-ին

դմբաց դատական նիստում, քննելով Սպարտակ Խաչատրյանի և Լաուրա Գասպարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 18.05.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Վարդան Պետրոսյանի ընդդեմ «Արարատ» նոտարական տարածքի նոտար Ալվարդ Հովհաննիսյանի, երրորդ անձինք Սպարտակ Խաչատրյանի և Լաուրա Գասպարյանի՝ գործարքը վավերացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վարդան Պետրոսյանը պահանջել է պարտավորեցնել «Արարատ» նոտարական տարածքի նոտար Ալվարդ Հովհաննիսյանին վավերացնել գրավառու Վարդան Պետրոսյանի կողմից գրավի առարկան՝ ՀՀ Արարատի

մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեում գտնվող 0,0283 հա հասարակական կառուցապատման հողամասը և 14,60քմ մակերեսով շինությունը գրավատուի անունից օտարելու գործարքը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 18.05.2010 թվականի վճռով հայրը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Սպարտակ Խաչատրյանը և Լատրա Գասպարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 4-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը, 8-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր լիներ ապացուցել, որ Սպարտակ Խաչատրյանը գրավի առարկայի բռնագանձման մասին գրավոր իրազեկվել և տեղեկացվել է, այնինչ 29.01.2010 թվականի ուղարկված փոստային առաքանին նամակատարը հանձնել է ոչ թե հասցեատիրոջը, այլ վերջինիս կնոջը՝ Լատրա Գասպարյանին, իսկ վերջինս էլ իրաժարվել է այն ստանալուց այն դեպքում, երբ առաքանին ուղարկվել է առանց ծանուցագրի /ձև CN7/: Ինչ վերաբերում է մյուս երկու փոստային առաքանիներին, ապա 04.02.2010 թվականի առաքանին ստացել է ոչ թե հասցեատերը, այլ նրա կինը, իսկ 25.03.2010 թվականի առաքանու դեպքում ակնհայտ է, որ Սպարտակ Խաչատրյանը պարզապես չէր կարող ստանալ առաքանին, քանի որ 14.02.2010 թվականից մինչև 09.04.2010 թվականը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Դատարանի 18.05.2010 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 22.12.2006 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 03004-4-15 մատյանի 000130 համարի տակ Սպարտակ Սողոմոնի Խաչատրյանի անվամբ գրանցվել է սեփականության իրավունք՝ ՀՀ

Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեում գտնվող 0,0283հա հասարակական կառուցապատման հողամասի և 14,60քմ մակերեսով շինության նկատմամբ, և տրվել է թիվ 2218689 վկայականը (գ.թ. 12-14):

2) 15.04.2008 թվականին Սպարտակ Խաչատրյանի և Վարդան Պետրոսյանի միջև ստորագրվել և նոտարական կարգով վավերացվել է գրավի պայմանագիր, որի 2-րդ կետի համաձայն՝ փոխառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում գրավառուն իր պահանջները բավարարում է սույն պայմանագրում նշված գույքով: Համաձայն նույն պայմանագրի 3.1-րդ կետի՝ գրավի առարկան իրենից ներկայացնում է շինություն, որի ընդհանուր մակերեսն է 14,6քմ, որը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեում՝ 0,0283 հեկտար հողատարածքի վրա (գ.թ. 9-10):

3) 15.04.2008 թվականին Լաուրա Գասպարյանի կողմից տրվել է համաձայնություն, որ իր ամուսին Սպարտակ Խաչատրյանը գրավ դնի իրենց պատկանող՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեում գտնվող 0,0283հա հասարակական կառուցապատման հողամասը և 14,60քմ մակերեսով շինությունը (գ.թ. 15):

4) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վեդու տարածքային ստորաբաժանման կողմից 09.04.2010 թվականին տրված թիվ 0212029 միասնական տեղեկանքի համաձայն՝ թիվ 937 գրավի պայմանագրի հիման վրա գրանցված է Վարդան Պետրոսյանի գրավի իրավունքը ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 73/5 հասցեում գտնվող 0,0283հա հասարակական կառուցապատման հողամասի և 14,60քմ մակերեսով շինության նկատմամբ (գ.թ. 11):

5) Վարդան Պետրոսյանի կողմից փոստային ծառայության միջոցով 27.01.2010, 01.02.2010 և 24.03.2010 թվականներին Սպարտակ Խաչատրյանին ուղարկվել են գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցագրեր (գ.թ. 19-24):

6) «Արարատ» նոտարական տարածքի նոտար Ալվարդ Հովհաննիսյանի 10.04.2010 թվականի գրության համաձայն՝ Վարդան Պետրոսյանի կողմից Սպարտակ Խաչատրյանին ուղարկված ծանուցագիրն ստացվել է 25.03.2010 թվականին, իսկ մյուս նամակներն ուղարկվել են առանց ծանուցագրի, և հնարավոր է, որ Սպարտակ Խաչատրյանի ընտանիքի անդամները ստացած լինեն և չտեղեկացնեն նրան (գ.թ. 16):

7) Գործում առկա չէ Սպարտակ Խաչատրյանի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցագրերն ստանալու փաստը հավաստող որևէ ապացույց:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբե-

րության համաձայն՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է գրավատուի այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Մասնավորապես, նույն հոդվածով սահմանվում է, որ գրավատուն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու նույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ծանուցման վերոնշյալ պահանջը կոչված է ապահովելու գրավատուի մեկ այլ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252-րդ հոդվածով սահմանված իրավունքը: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավատուն իրավունք ունի, մինչև գրավի առարկան վաճառելը, ցանկացած ժամանակ դադարեցնել դրավրա բռնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է: Այդ իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետը պետք է կիրառվի՝ վերոնշյալ նորմերով նախատեսված գրավատուի իրավունքների ապահովման համատեքստում, հակառակ դեպքում օրենսդրությամբ գրավատուին ընձեռված բռնագանձման օրինականությունը վիճարկելու կամ բռնագանձումը դադարեցնելու իրավունքների իրականացումն արդյունավետ չի լինի:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը ենթադրում է գրավառուի կողմից գրավատուին՝ վերջինիս կողմից գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին իրագեկելու (ծանուցելու) կապակցությամբ գրավառուի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն պատշաճ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի տեղեկանալու իրավունքը և գրավառուի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն

կապված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գրավառուի իրավունքների ապահովման հետ: Այդ իրավունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գրավառուին ընձեռված է առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկանալու հնարավորություն: Այդ իսկ պատճառով գրավի առարկայի բռնագանձման մասին գրավառուի իրազեկումը գրավառուի պարտականությունն է, որի չպահպանման դեպքում վերջինս չի կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարդան Պետրոսյանի կողմից փոստային ծառայության միջոցով 27.01.2010, 01.02.2010 և 24.03.2010 թվականներին Սպարտակ Խաչատրյանին ուղարկվել են գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցագրեր: «Արարատ» նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանը 10.04.2010 թվականի գրությամբ Վարդան Պետրոսյանին հայտնել է, որ վերջինիս կողմից Սպարտակ Խաչատրյանին ուղարկված ծանուցագիրը ստացվել է 25.03.2010 թվականին, իսկ մյուս նամակներն ուղարկվել են առանց ծանուցագրի և հնարավոր է, որ Սպարտակ Խաչատրյանի ընտանիքի անդամները ստացած լինեն և չտեղեկացնեն նրան:

Սույն գործով Դատարանը, բավարարելով հայցը, պատճառաբանել է, որ տվյալ պարագայում գրավառու Վարդան Պետրոսյանը գրավառու Սպարտակ Խաչատրյանին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով գրավի առարկայի բռնագանձման մասին գրավոր իրազեկելու իր իրավունքն իրացրել է պատշաճ:

Մինչդեռ սույն գործի փաստերից հետևում է, որ Վարդան Պետրոսյանի կողմից փոստային ծառայության միջոցով 27.01.2010, 01.02.2010 և 24.03.2010 թվականներին գրավի առարկայի բռնագանձման մասին Սպարտակ Խաչատրյանին ուղարկված ծանուցումները վերջինս չի ստացել: Այսինքն՝ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Սպարտակ Խաչատրյանն ստացել է վերոհիշյալ բռնագանձման ծանուցումներից որևէ մեկը:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 28.10.2010 թվականի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Մ Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 18.05.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. Վարդան Պետրոսյանի հայցը մերժել:
2. Վարդան Պետրոսյանից հօգուտ Սպարտակ Խաչատրյանի և Լաուրա Գասպարյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարը:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵՔԳ/0126/02/08**
դատարանի որոշում **2010թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ԵՔԳ/0126/02/08

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 01-ին

դրնբաց դատական նիստում, քննելով «Անելիք բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի, Սամսոն Գարիբյանի, Գայանե Օհանյանի և ՀՀ ճանապարհային ոստիկանության Երևանի թիվ 3 գրանցման քննական բաժանմունքի (այսուհետ՝ Բաժանմունք)՝ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, ավտոմեքենայի ժամանակավոր հաշվառման վկայագիրն ավտոտրանսպորտային միջոցի թիվ SD 035794 գրանցման վկայագրով փոխարինելն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է անվավեր ճանաչել Սամսոն Գա-

րիբյանի և Գայանե Օհանյանի միջև 26.07.2006 թվականին կնքված Մերսեդես Բենց S-200 մակնիշի 01 SO 611 պետհամարանիշի թիվ 2177 սեղանամատյանում գրանցված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը, ավտոմեքենայի ժամանակավոր հաշվառման վկայագիրն ավտոտրանսպորտային միջոցի թիվ SD 035794 գրանցման վկայագրով փոխարինելը, ինչպես նաև կիրառել անվավերության հետևանքներ:

Երևանի քաղաքացիական դատարանի 16.07.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.10.2008 թվականի որոշմամբ Երևանի քաղաքացիական դատարանի 16.07.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 16.07.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2009 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.07.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ, 275-րդ և 305-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 52-րդ, 53-րդ և 54-րդ հոդվածների պահանջները:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, մասնավորապես այն, որ 09.08.2005 թվականին Սամսոն Ղարիբյանի և Բանկի միջև կնքվել է 4.732.000 ՀՀ դրամի չափով վարկային պայմանագիր, ինչի դիմաց նույն օրը, ի ապահովում Բանկի հանդեպ ունեցած դրամական պարտավորության, Սամսոն Ղարիբյանի և Բանկի միջև կնքվել է գրավի պայմանագիր, որով Սամսոն Ղարիբյանին պատկանող Մերսեդես Բենց S-200 մակնիշի 01 SO 611 պետհամարանիշի ավտոմեքենան գրավադրվել է Բանկին: Սամսոն Ղարիբյանը, կեղծելով գրավ դրված ավտոմեքենայի ժամանակավոր տեխանձնագիրը, ստացել է տրանսպորտային միջոցների գրանցման վկայագիր և նոտարական գրասենյակում տալով հայտարարություն այն մասին, որ ավտոմեքենան այլ անձի չի վաճառվել, գրավ չի դրվել, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, 26.07.2006 թվականի առուվաճառքի պայմանագրով գրավ դրված ավտոմեքենան, առանց Բանկին տեղյակ պահելու, վաճառել է Գայանե Օհանյանին: Հետագայում Երևանի քրեական դատարանի 10.04.2008 թվականի

դատավճռով Սամսոն Ղարիբջանը տրանսպորտային միջոցի ժամանակավոր տեխնիկական անձնագիրը կեղծելու և այն օգտագործելու համար դատապարտվել է:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Սամսոն Ղարիբջանի և Գայանե Օհանյանի միջև 26.07.2006 թվականին կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը գուրկ է իրավական հիմքերից, քանի որ այն կնքվել է կեղծ փաստաթղթերի և նոտարական գրասենյակում արված սուտ հայտարարությունների հիման վրա, այսինքն՝ գրավ դրված ավտոմեքենան Գայանե Օհանյանը գնել է այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձ Սամսոն Ղարիբջանից, ինչը՝ նշանակում է, որ 26.07.2006 թվականին կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը որպես այդպիսին անվավեր է, քանի որ այն կնքվել է 09.08.2005 թվականի գրավի պայմանագրի էական պայմանների խախտումներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 03.12.2009 թվականի որոշումը՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 09.08.2005 թվականին Սամսոն Ղարիբջանի և Բանկի միջև կնքվել է 4.732.000 ՀՀ դրամի չափով վարկային պայմանագիր (հատոր 1-ին, գ.թ. 6):

2. 09.08.2005 թվականին Սամսոն Ղարիբջանի և Բանկի միջև կնքվել է գրավի պայմանագիր (հատոր 1-ին, գ.թ. 9):

3. 26.07.2006 թվականին Սամսոն Ղարիբջանի և Գայանե Օհանյանի միջև կնքվել է (գրավ դրված) ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր (հատոր 1-ին, գ.թ. 12):

4. Երևանի քրեական դատարանի 10.04.2008 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով Սամսոն Ղարիբջանը տրանսպորտային միջոցի ժամանակավոր տեխնիկական անձնագիրը կեղծելու և այն օգտագործելու համար դատապարտվել է (հատոր 5-րդ, գ.թ. 135):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման

տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկման առարկա պետք է դարձնել հետևյալ հարցադրումը.

1. Արդյո՞ք գրավատուի կողմից գրավի առարկայի օտարումը կարող է համարվել օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարք, եթե գրավ դրված գույքի օտարումը պայմանագրով արգելված է եղել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար: Գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սամսոն Ղարիբյանի և Բանկի միջև կնքվել է 4.732.000 ՀՀ դրամի չափով վարկային պայմանագիր և որպես դրամական պարտավորության կատարման ապահովման միջոց 09.08.2005 թվականին Սամսոն Ղարիբյանի և Բանկի միջև կնքվել է գրավի պայմանագիր, որով Մերսեդես Բենց S-200 մակնիշի 01 SO 611 պետհամարանիշի ավտոմեքենան գրավադրվել է Բանկին, այսինքն՝ առաջացել է ակցեսոր պարտավորություն Բանկի հանդեպ հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Սամսոն Ղարիբյանը, կեղծելով գրավ դրված ավտոմեքենայի ժամանակավոր տեխանձնագիրը, ստացել է տրանսպորտային միջոցների գրանցման վկայագիր և 26.07.2006 թվականին նոտարական գրասենյակում տալով կեղծ հայտարարություններ այն մասին, որ ավտոմեքենան այլ անձի չի վաճառվել, գրավ չի դրվել, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, գրավ դրված ավտոմեքենան վաճառել է Գայանե Օհանյանին: Հետագայում Երևանի քրեական դատարանի 10.04.2008 թվականի դատավճռով Սամսոն Ղարիբյանը տրանսպորտային միջոցի ժամանակավոր տեխնիկական անձնագիրը կեղծելու և այն օգտագործելու համար դատապարտվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ գրավատուն իրավունք ունի գրավի առարկան օտարելու, այն տրամադրելու վարձակալության կամ անհատույց օգտագործման, կամ տնօրինելու այլ կերպ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Տվյալ դեպքում Սամսոն Ղարիբյանի և Բանկի միջև կնքված 09.08.2005 թվականի գրավի պայմանագրի 3.14-րդ և 3.15-րդ կետերով Սամսոն Ղարիբյանին արգելվել է առանց Բանկի (գրավառու) գրավոր համաձայնության գրավի գույքը (ավտոմեքենան) օտարել, հանձնել վարձակալության, ենթավարձակալության, անհատույց օգտագործման կամ տնօրինել այլ կերպ, ինչպես նաև գրավառուն պարտավորվել է գրավի առարկա գույքի նկատմամբ որևէ փոփոխություն կատարելու

դեպքում նախապես հայտնել Բանկին: Սամսոն Ղարիբյանը, խախտելով 09.08.2005 թվականին կնքված գրավի պայմանագրի 3.14-րդ և 3.15-րդ կետերը, առանց Բանկի գրավոր համաձայնության օտարել է գրավի առարկա ավտոմեքենան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ **պարտավորությունները** պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում այլ հետևանքներ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սամսոն Ղարիբյանի կողմից գրավ դրված ավտոմեքենայի օտարումը կատարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության խախտումով, քանի որ օտարվել է այն գույքը, որը ենթակա չէր օտարման առանց Բանկի գրավոր համաձայնության: Նշված հանգամանքը հիմնավորվել է նաև Երևանի քրեական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 10.04.2008 թվականի դատավճռով:

Մինչդեռ՝ Վերաքննիչ դատարանը Բանկի հայցը մերժելիս պատճառաբանել է, որ «առուվաճառքի պայմանագիրն օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով անվավեր ճանաչվել չի կարող, քանի որ առանց գրավառուի համաձայնության գրավ դրված գույքն **օտարելու հետևանքները** սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240 հոդվածով և գրավի պայմանագրով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ գրավի առարկայի փոխարինում թույլատրվում է գրավառուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե գրավի առարկան ոչնչացել կամ վնասվել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավույթը դադարել է օրենքով սահմանված հիմքերով, ապա գրավատուն պարտավոր է ողջամիտ ժամկետում վերականգնել գրավի առարկան կամ այն փոխարինել այլ հավասարարժեք գույքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Այսպես, Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել այն, քանի որ նշված հոդվածը վերաբերում է ոչ թե գրավ դրված գույքի օտարմանը, այլ այն դեպքերին, երբ գրավի առարկան **փոխարինվել, ոչնչացվել, վնասվել** կամ դրա նկատմամբ **սեփականության իրավունքը դադարել է օրենքով սահմանված հիմքերով**, այնինչ՝ տվյալ դեպքում տեղի է ունեցել ոչ թե գրավի առարկայի փոխարինում, ոչնչացում, վնասում կամ սեփակա-

նության իրավունքի դադարում, այլ, առանց գրավառուի գրավոր համաձայնության, գրավ դրված գույքն օտարվել է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ Սամսոն Գարիբյանը գրավի առարկան օտարելիս դրա նկատմամբ ունեցել է գրանցված սեփականության իրավունք, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության համաձայն **այն օտարելու իրավունք չի ունեցել:**

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գալիս է եզրահանգման, որ 26.07.2006 թվականին Սամսոն Գարիբյանի և Գայանե Օհանյանի միջև կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը կնքվել է օրենքի խախտումներով, ուստի այն պետք է անվավեր ճանաչել և կիրառել անվավերության հետևանքներ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ստյանանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-58 (ՎԳ)**
2009թ.

Քաղաքացիական գործ թիվ 08-2000

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ս. Միքայելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի մայիսի 27-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Քնարիկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Քնարիկ Հարությունյանի ընդդեմ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Շիրակի մարզի բաժնի, Սաղաթել Էլոյանի, Սանասար Մարգարյանի, Բաբկեն Տեր-Ավագյանի, Գևորգ Եղիկյանի, Հովսեփ Հովհաննիսյանի, Ալբերտ Մելոյանի՝ գույքն արգելանքից հանելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Քնարիկ Հարությունյանը պահանջել է արգելանքից հանել «Երաշխիք» ՍՊԸ-ում ունեցած 30% բաժնեմասի 50%-ը:

Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 06.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.01.2009 թվականի որոշմամբ Դատարանի 06.11.2007 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քնարիկ Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սանասար Մարգարյանը, Բարկեն Տեր-Ավագյանը, Գևորգ Եղիկյանը, Հովսեփ Հովհաննիսյանը և Ալբերտ Մելոյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը ճիշտ չի գնահատել ամուսիններ Քնարիկ Հարությունյանի և Աշոտ Հովհաննիսյանի միջև «Երաշխիք» ՍՊԸ-ում իրենց բաժնեմասերը որոշելու վերաբերյալ պայմանագրի առկայությունը հավաստող ապացույցները: «Երաշխիք» ՍՊԸ-ն հիմնադրելիս Քնարիկ Հարությունյանը և Աշոտ Հովհաննիսյանը կնքել են պայմանագիր, որի համաձայն՝ ընկերությունում իրենցից յուրաքանչյուրի բաժնեմասը կազմում է 30%: Տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված «եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով» դրույթի պայմանն առկա է, այն է՝ հիմնադիր պայմանագրով կողմերը որոշել են իրենց բաժնեմասի չափը, հետևաբար՝ վիճելի 30% բաժնեմասը Քնարիկ Հարությունյանի միանձնյա սեփականությունն է: Բացի այդ, Աշոտ Հովհաննիսյանն իրեն պատկանող 30% բաժնեմասն օտարել է, որի համար չի պահանջվել Քնարիկ Հարությունյանի համաձայնությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.01.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ որոշումը փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Սույն գործով հաստատված է, որ «Երաշխիք» ՍՊԸ-ում Աշոտ Հովհաննիսյանի բաժնի վրա արգելանք է դրվել ոչ թե հարկադիր կատարողի նախաձեռնությամբ, այլ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ընկերության բաժնեմասը համատեղ ամուսնական գույք է, որի վրա օրինական կարգով արգելանք է դրված: Քնարիկ Հարությունյանն ամուսնուն համատեղ ամուսնական գույքից զրկելու կամ

բաժնեմասերի չափը որոշելու հայց կամ վճիռ չունի, իսկ սույն հայցն ուղղված է դատավճռի դեմ, ինչի բավարարումը նշանակում է դատավճռի փոփոխում: «Երաշխիք» ՍՊԸ-ի դեմ դատարաններում առկա են նաև այլ քաղաքացիական գործեր, ուստի գույքն արգելանքից հանելը կիրառվող դատական ակտի կատարմանը: Բացի այդ, նշված գործերից մեկով արգելանք է դրվել ընկերության գույքի վրա, ուստի այդ առումով ևս աննպատակ է վճռաբեկ բողոքը բավարարելը:

Բողոք բերող անձի սկզբնական հայցապահանջն ընդհանուր գույքն արգելանքից հանելու պահանջն է, իսկ վճռաբեկ բողոքում բողոք բերած անձը փորձել է դատարանին ապակողմնորոշելու համար հայցապահանջը սխալ ներկայացնել՝ նշելով, թե իբր նա պահանջել է «Երաշխիք» ՍՊԸ-ում իր 30% բաժնեմասի կեսն արգելանքից հանել: Դրանով իսկ բողոք բերող անձն ընդունում է և դատավճռի օրինականությունը և իր բաժնեմասի կեսն ամուսնուն պատկանելու փաստը: Հետևաբար, բողոք բերած անձը վճռաբեկ բողոքով փոխել է հայցի առարկան, ինչն անթույլատրելի է:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Քնարիկ Հարությունյանը և Աշոտ Հովհաննիսյանն ամուսիններ են:

2) Սույն գործով Քնարիկ Հարությունյանը բացատրություն է տվել այն մասին, որ Աշոտ Հովհաննիսյանի և Սաղաթել Էլոյանի հետ «Երաշխիք» ապահովագրական ՍՊԸ-ն հիմնադրելիս որոշել են իրենց բաժնեմասերը՝ համապատասխանաբար Քնարիկ Հարությունյան՝ 30%, Աշոտ Հովհաննիսյան՝ 30% և Սաղաթել Էլոյան՝ 40%, և այդ փաստը չի վիճարկվել:

3) 28.06.2003 թվականի պայմանագրի համաձայն՝ Աշոտ Հովհաննիսյանը «Երաշխիք» ՍՊԸ-ի՝ իրեն պատկանող 30% բաժնեմասն, առանց Քնարիկ Հարությունյանի համաձայնության, վաճառել է Մամիկոն Միմոնյանին (գ.թ. 19):

4) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) Գյումրու տարածքային բաժնի 04.05.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ «Երաշխիք» ՍՊԸ-ի բաժնետերերը երեքն են հետևյալ բաժնեմասերով. Քնարիկ Հարությունյան-30%, Սաղաթել Էլոյան-40%, Մամիկոն Միմոնյան-30% (գ.թ. 20):

5) Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 09.10.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով որոշվել է Աշոտ Հովհաննիսյանից հոգուտ Սաղաթել Էլոյանի, Մանասար Մարգարյանի, Բաբկեն Տեր-Ավագյանի, Գևորգ Եղիկյանի, Հովսեփ Հովհաննիսյանի, Ալբերտ Մելոյանի և «Երաշխիք» ՍՊԸ-ի բռնագանձել 37.007.997 ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով ինչպես Աշոտ Հովհաննիսյանի անձնական գույքի վրա, այնպես էլ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված, նրա կնոջ՝ Քնարիկ Արշալույսի Հարությունյանի անվամբ եղած սեփականության՝ Աշոտ Հովհաննիսյանին օրենքով պատկանող մասի վրա, որպես քաղաքացիական հայցի ապահովման միջոց կալանք դնելով այդ գույքի վրա (գ.թ. 6-11):

6) ՀՀ ԱՆ ԳԱՀԿ ծառայության Շիրակի մարզի բաժնի 13.08.2007 թվականի որոշմամբ բռնագանձում է տարածվել «Երաշխիք» ՍՊԸ-ում Քնարիկ Հարությունյանին պատկանող 30% բաժնեմասից Աշոտ Հովհաննիսյանին պատկանող 50%-ի վրա (գ.թ. 18):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքը կարող է ընդհանուր սեփականությանը պատկանել սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն), իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը համարվում է բաժնային, եթե օրենքով դրա նկատմամբ սահմանված չէ համատեղ սեփականություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով ընդհանուր սեփականության իրավունքը, այն տարանջատել է երկու տարբեր իրավական ռեժիմներով: Առաջինը՝ ընդհանուր բաժնային սեփականության, երբ ընդհանուր սեփականությունում սեփականատերերի բաժինները որոշված են, և ընդհանուր համատեղ սեփականության՝ առանց այդ բաժինները որոշելու: Ընդ որում, **ամուսինների միջև այլ բան նախատեսող պայմանագրի բացակայության** պայմաններում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը դիտվում է ամուսինների համատեղ սեփականությունը և ամուսիններից մեկի պարտավորությունների համար բռնագանձումը տարածվում է ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի վերաբերյալ կանոնները կիրառվում են, եթե ընդհանուր սեփականության իրավունքի այլ իրավական ռեժիմ (տվյալ դեպքում՝ ընդհանուր բաժնային սեփականություն) պայմանագրով սահմանված չէ:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, առաջին ատյանի դատարանի դատական ակտը բողոքելով օրինական ուժի մեջ, հանգել է այն հետևության, որ վճիռ կայացնելիս Գատարանն ամբողջ ծավալով պարզել է գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները՝ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ Քնարիկ Հարությունյանը, Աշոտ Հովհաննիսյանը և Սաղաթել Էլոյանը 1999 թվականին հիմնադրել են «Երաշխիք» ապահովագրական ՍՊԸ-ն՝ համապատասխանաբար 30%, 30% և 40% բաժնեմասերով, իսկ 28.06.2003 թվականի պայմանագրով Աշոտ Հովհաննիսյանը «Երաշխիք» ՍՊԸ-ի՝ իրեն պատկանող 30% բաժնեմասը վաճառել է Մամիկոն Սիմոնյանին:

Գործակալության 04.05.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ «Երաշխիք» ՍՊԸ-ի բաժնետերերը երեքն են հետևյալ բաժնեմասերով. Քնարիկ Հարությունյան-30%, Սաղաթել Էլոյան-40%, Մամիկոն Սիմոնյան-30%:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Քնարիկ Հարությունյանը, Աշոտ Հովհաննիսյանը և Սաղաթել Էլոյանը «Երաշխիք» ՍՊԸ-ն հիմնադրելիս կնքել են հիմնադիր պայմանագիր, որով որոշել են Ընկերությունում իրենց բաժնեմասերը, դրանով իսկ որոշելով ընդհանուր սեփականության՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավական ռեժիմը, հետևաբար, Ընկերությունում առկա 30% բաժնեմասի սեփականատերը Քնարիկ Հարությունյանն է, մեկ այլ՝ 30% բաժնեմասի սեփականատերը՝ Աշոտ Հովհաննիսյանը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունում 30% բաժնեմասը սեփականության իրավունքով պատկանում է միայն Քնարիկ Հարությունյանին, ուստի Աշոտ Հովհաննիսյանի պարտավորությունների համար այդ գույքի վրա բռնագանձում չի կարող տարածվել:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում բերված այն փաստարկին, որ Ընկերությունում Քնարիկ Հարությունյանի ունեցած 30% բաժնեմասի վրա արգելանքը դրվել է օրինական ուժի մեջ մտած 09.10.2006 թվականի դատավճռով, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ նշված դատավճռում առկա «ամուսնության ընթացքում ձեռք բերված նրա կնոջ՝ Քնարիկ Արշալույսի Հարությունյանի անվամբ եղած սեփականության Աշոտ Հովհաննիսյանին օրենքով պատկանող մասի» եզրույթից հետևում է, որ բռնագանձումը պետք է տարածվի ամուսիններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Քնարիկ Հարությունյանի հայցը բավարարել. «Երաշխիք» ապահովագրական ՍՊԸ-ում Քնարիկ Հարությունյանի ունեցած 30% բաժնեմասի 50%-ն արգելանքից հանել:

2. Սաղաթել Էլոյանից, Սանասար Մարգարյանից, Բաբկեն Տեր-Ավագյանից, Գևորգ Եղիկյանից, Հովսեփ Հովհաննիսյանից և Ալբերտ Մելոյանից հօգուտ պետական բյուջեի համապարտության կարգով բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ ԵՔԳ/0256/02/08
դատարանի որոշում 2009թ.

Ֆաղաքացիական գործ
թիվ ԵՔԳ/0256/02/08

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Է. Մուրադյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հրաչ-Ներսես Կապրիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Նաբինե Նալբանդյանի հայցի ընդդեմ «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետեր Հրաչ-Ներսես Կապրիելյանի, Արագած Ախոյանի՝ ուրիշի տիրապետումից գույքը հետ պահանջելու և համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Նաբինե Նալբանդյանը պահանջել է Հրաչ-Ներսես Կա-

պիրելյանին պարտավորեցնել վերադարձնել Ընկերության 20 % կազմող 20 հատ բաժնետոմսերը և դրանց նկատմամբ ճանաչել համատեղ սեփականության իրավունքը:

Երևանի քաղաքացիական դատարանի (այսուհետ Դատարան) 10.06.2008 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.12.2008 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը բեկանվել է և այն փոփոխվել. Նարինե Նալբանդյանի հայրը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հրաչ-Ներսես Կապիրելյանը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 2-րդ մասը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Համատեղ կյանքի ընթացքում Արագած Ախոյանի կինը՝ Նարինե Նալբանդյանը, իր իրավունքը չի գրանցել բաժնետերերի ռեեստրում: Ուստի հնարավոր անբարենպաստ հետևանքների ռիսկը պետք է կրի Նարինե Նալբանդյանը, քանի որ Հրաչ Կապիրելյանը, հիմք ընդունելով ռեեստրի տվյալները և օբյեկտիվորեն բաժնետոմսերի սեփականատեր համարելով Արագած Ախոյանին, նվիրատվության պայմանագրով որպես նվեր ընդունել է Արագած Ախոյանին պատկանող բաժնետոմսերը՝ չիմանալով բաժնետոմսերի նկատմամբ այլ համասեփականատիրոջ առկայության, հետևաբար նաև վերջինիս համաձայնության բացակայության մասին:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, չի ընդունել այն հանգամանքը, որ Հրաչ Կապիրելյանը չգիտեր և չէր էլ կարող իմանալ նվիրատվության պայմանագրի կնքման հարցում Նարինե Նալբանդյանի անհամաձայնության մասին:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 2-րդ մասով կարգավորվում են այն դեպքերը, երբ գույքը ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից: Սույն գործով Հրաչ Կապիրելյանը բաժնետոմսերը ձեռք է բերել դրանք օտարելու իրավունք ունեցող անձից՝ Արագած Ախոյանից, հետևաբար, սեփականատերը դրանք բոլոր դեպքերում պահանջելու իրավունք չունի, այլ կարող է հետ պահանջել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում:

2. *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Չնայած այն հանգամանքին, որ սույն գործի և Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի թիվ 3-459 (ՏԳ) գործով որոշման միջև առկա են փաստական հանգամանքների որոշ տարբերություններ, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի, 198-րդ հոդվածի 3-րդ մասի, 319-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները սերտորեն փոխկապակցված են, և իրավակիրառական պրակտիկայում դրանցից յուրաքանչյուրը պետք է մեկնաբանվի մյուսների բովանդակության և տրամաբանության ներքո: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ համատեղ սեփականության մասնակիցների ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի տեղեկացված լինելու փաստը բավարար չէ համատեղ սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար, այլ անհրաժեշտ է համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության և գործարքի մյուս կողմի՝ այդ մասին իմանալու կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության հանգամանքների միաժամանակյա առկայությունը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով վերը նշված երկու պայմաններն առկա չեն:

3. *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 219-րդ հոդվածի 1-ին մասի և 132-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 136-րդ, 197-րդ հոդվածները, 199-րդ հոդվածի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը, 68-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը Ընկերության 20%-ը կազմող 20 հատ բաժնետոմսերը դիտելով անբաժանելի գույք, հաշվի չի առել, որ իր կողմից վկայակոչված «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբաժանելի գույք է մեկ բաժնետոմսը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի սահմաններից և բաժնետոմսերի բաժնի առանձնացման պահանջի բացակայության պայմաններում անդրադարձել է այդ պահանջին՝ ըստ էության հաստատված համարելով այնպիսի փաստ, որը որևէ կապ չունի սույն գործի հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության

կամ մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և փոփոխել, կամ մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 10.06.2008 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Թիվ III258766 ամուսնության վկայականի համաձայն՝ Նարինե Նալբանդյանը և Արագած Ախոյանը 04.05.1985 թվականից ամուսիններ են (գ.թ. 5):

2. 13.06.2005 թվականի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Արագած Ախոյանը Ընկերության 20 հատ (20 %) բաժնետոմսերը նվիրել է նույն ընկերության բաժնետեր Հրաչ-Ներսես Կապրիելյանին, իսկ Հրաչ-Ներսես Կապրիելյանը ընդունել է այն (գ.թ. 12):

3. Ընկերության 20 հատ (20 %) բաժնետոմսերը Նարինե Նալբանդյանի և Արագած Ախոյանի ընդհանուր համատեղ սեփականությունն է:

4. Գործում առկա չէ 13.06.2005 թվականի նվիրատվության պայմանագիրը կնքելու համար Նարինե Նալբանդյանի համաձայնություն տալու փաստը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա **բողոք մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցերից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի **կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ**, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, հաշվի առնելով, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ծագման հիմքը՝

ամուսնական հարաբերությունները և օրենքով նախատեսված այլ դեպքերը, ըստ էության ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը:

Սույն գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության գույքը տնօրինելու ժամանակ մասնակիցների **համաձայնության առկայության կանխավարկածը** սույն գործի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ համատեղ սեփականության գույքի նվիրատվության դեպքում օրենսդիրը նախատեսել է սահմանափակումներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 599-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող **գույքի նվիրատվությունը քույրատվում է համատեղ սեփականության բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝** նույն օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված կանոնների պահպանմամբ:

Վերը նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի՝ նվիրատվության ձևով տնօրինման համար պարտադիր կերպով անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի համաձայնությունը և չի սահմանվել բացառություն:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, **որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող)**, ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **եթե գույքն անհատույց է ձեռք բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից, ապա սեփականատերը բոլոր դեպքերում իրավունք ունի հետ պահանջելու այդ գույքը:**

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջելու անվերապահ պայման այն դեպքում, երբ բարեխիղճ ձեռք բերողը գույքը ձեռք է բերել **անհատույց և այն օտարելու իրավունք չունեցող անձից:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նարինե Նալբանդյանը և Արագած Ախոյանը 04.05.1985 թվականից ամուսիններ են, Ընկերության 20 հատ (20 %) բաժնետոմսերը Նարինե Նալբանդյանի և Արագած Ախոյանի ընդհանուր համատեղ սեփականությունն է, 13.06.2005 թվականի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Արագած Ախոյանը Ընկերության 20 հատ (20 %) բաժնետոմսերը նվիրել է Հրաչ-Ներսես Կապրիելյանին, իսկ Հրաչ-Ներսես Կապրիելյանը ընդունել է այն, գործում առկա չէ 13.06.2005 թվականի նվիրատվության պայմանագիրը կնքելու

համար Նարինե Նալբանդյանի համաձայնություն տալու փաստը հավաստող որևէ ապացույց:

Վերը նշվածը հիմք ընդունելով և համադրելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նարինե Նալբանդյանի համաձայնության բացակայության պայմաններում Արագած Ախոյանն իրավունք չի ունեցել նվիրելու Ընկերության 20 հատ 20 (%) բաժնետոմսերը Հրաչ-Ներսես Կապրիելյանին, իսկ Հրաչ Կապրիելյանի՝ բաժնետոմսերի նկատմամբ համասեփականատիրոջ համաձայնության բացակայության մասին չիմանալու հանգամանքը սույն գործի համար էական նշանակություն չունի:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հրաչ-Ներսես Կապրիելյանն Ընկերության 20 հատ 20 % բաժնետոմսերը Արագած Ախոյանից ձեռք է բերել անհատույց՝ օրենքի պահանջների խախտմամբ կնքված 13.06.2005 թվականի նվիրատվության պայմանագրի հիման վրա և այն օտարելու իրավունք չունեցող անձից, ուստի այն ենթակա է վերադարձման:

2) Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Գատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է և Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի **էական նշանակություն ունեցող փաստերը**: Այսինքն, դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը (Տես «Արաբկիր Ալո

Լիկյոր-Օղու գործարան» ՍՊԸ-ն ընդդեմ Սոս Բաղդասարյանի՝ բնակարանի 1/7 մասի սեփականատեր ճանաչելու և բնակարանի մասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին թիվ 3-480(ՎԳ) գործով Վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի թիվ 3-459(ՏԳ) գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Թագուշ Պետրոսյանը «Բիզնես կենտրոն» ԲԲԸ-ի բաժնետոմսերը ժամնա Ղազարյանին օտարել էր 16.08.2004 թվականի կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա, այսինքն՝ հատուցմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի և Վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-459 (ՏԳ) գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները նույնական չեն:

Մասնավորապես, սույն քաղաքացիական գործով Հրաչ-Ներսես Կապրիելյանը Ընկերության 20 հատ 20 % բաժնետոմսերը Արագած Ախոյանից **ձեռք է բերել անհատույց**՝ 13.06.2005 թվականի նվիրատվության պայմանագրի հիման վրա, մինչդեռ Վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-459 (ՏԳ) գործի փաստական հանգամանքներով ժամնա Ղազարյանը «Բիզնես կենտրոն» ԲԲԸ-ի բաժնետոմսերը Թագուշ Պետրոսյանից **ձեռք էր բերել հատուցմամբ**՝ 16.08.2004 թվականի առուվաճառքի պայմանագրի հիման վրա: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ վճռաբեկ բողոքում վկայակոչված այն փաստարկը, որ սույն գործի էական նշանակություն ունեցող փաստերը նույնական են Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի թիվ 3-459(ՏԳ) գործի փաստերի հետ:

3) Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բաժնետոմսերի բաժանման պահանջ չի ներկայացվել և քննարկման առարկա չի դարձվել Արագած Ախոյանի և Նարինե Նալբանդյանի բաժնի չափի որոշման հարցը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր համարելով բողոքի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել գործի քննության սահմաններից, վերը նշված պատճառաբանությամբ չի անդարադառնում նշված պահանջին:

Վճռաբեկ դատարանը չի անդարադառնում նաև բողոքի մյուս հիմնավորումներին, քանի որ դրանք նույնպես կապված են բաժնետոմսերի բաժանման պահանջի հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2008 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ դատարանի որոշում Բաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/1272/02/08
Բաղաքացիական գործ 2009թ.
թիվ ԵԱԲԳ/1272/02/08
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան
Դատավորներ՝ Ա.Խառատյան
Կ.Զիլինգարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

<i>նախագահությամբ՝</i>	Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ Մ. ԴՐՍԵՅԱՆԻ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի հուլիսի 24-ին

դմբաց դատական նիստում, քննելով Սամվել Մարդոյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2009 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Սամվել, Վերոնիկա, Սիմոն և Լուսիկ Մարդոյանների ընդդեմ Գրետա
Հարությունյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը
ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սամվել, Վերոնիկա, Սիմոն և Լուսիկ Մարդոյանները
պահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իրենց սեփականության
իրավունքը:

Երևանի Արաբկիր և Բանաբեռ-Չեյթուն համայնքների ընդհանուր իրավասու-

թյան դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.09.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.02.2009 թվականի որոշմամբ Սամվել, Վերոնիկա, Սիմոն և Լուսիկ Մարդոյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Դատարանի 30.09.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Մույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Մարդոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ, 280-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 19-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բնակելի տան նախկին սեփականատիրոջ իրավանախորդ Նոյեմգար Հարությունյանը համապատասխան փոխհատուցմամբ առուվաճառքի պայմանագրով բնակելի տան մասը վաճառել է քննվող քաղաքացիական գործով հայցվորներին: Տվյալ հանգամանքը վկայում է վիճելի անշարժ գույքը բարեխիղճ տիրապետելու մասին:

Տիրապետման անընդմեջ լինելը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Մարդոյանների կողմից բնակելի տունը մի քանի անգամ ենթարկվել է հիմնանորոգման, ստեղծվել են կոմունալ և օժանդակ հարմարություններ, առանձնացվել են էլեկտրական հոսանքը, ջուրը, որոնց համար վճարումները նույն ժամանակվանից կատարվում են Սամվել Մարդոյանի կողմից: Այսինքն՝ վիճելի անշարժ գույքը, 1966 թվականից սկսված, շուրջ 43 տարի անընդմեջ տիրապետվել է Սամվել Մարդոյանի կողմից:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հաշվի չի առել վերոնշյալ հանգամանքը, ինչպես նաև այն, որ Սամվել Մարդոյանի գույքը և իրերը մինչև 2008 թվականը գտնվել են բնակելի տան վիճելի մասում, երբ Գրետա Հարությունյանը, որին նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքով տրամադրվել է վիճելի անշարժ գույքը, ապօրինաբար մուտք է գործել Սամվել Մարդոյանին պատկանող սենյակ, տեղափոխել իրերը և փոխել փականը, ինչի վերաբերյալ Սամվել Մարդոյանի դուստր Լուսիկ Մարդոյանը դիմել է Ոստիկանություն:

Ինչ վերաբերում է տիրապետման բացահայտությանը, ապա այն հիմնավորվում է տիրապետման մասին բոլորի, այդ թվում՝ բնակելի տան սկզբնական սեփականատիրոջ իրազեկվածությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 05.02.2009 թվականի որոշումը՝ հայրը Սամվել Մարդյանի մատով բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 12.09.1966 թվականին Նոյեմզար Հարությունյանը Երևանի Բաֆֆու փողոցի թիվ 97 տան հյուսիսային մասում գտնվող մեկ սենյակը՝ 21քմ բնակելի մակերեսով և 12քմ պատշգամբով, ներքին առուծախի պայմանագրով վաճառել է Սամվել Մարդյանին (հատոր 1-ին, գ.թ. 22):

2. 03.03.1998 թվականին Հեղուշ Հարությունյանի և Գրետա Հարությունյանի միջև կնքվել է Երևանի Բաֆֆու փողոցի թիվ 97 բնակելի տան նվիրատվության պայմանագիր՝ վավերացված նոտարական կարգով, որից ծագող սեփականության իրավունքը գրանցվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանումում (հատոր 1-ին, գ.թ. 21, 82):

3. Սամվել Մարդյանը, նրա կինը՝ Վերոնիկա Մարդյանը, այնուհետև նրանց երեխաներ Սիմոն և Լուսիկ Մարդյանները բնակվել են Երևանի Բաֆֆու փողոցի թիվ 97 տան նշված մասում, իրականացրել են վերանորոգման աշխատանքներ, հոգացել գույքի պահպանման ծախսերը:

4. 1987 թվականին Սամվել Մարդյանը, այնուհետև Վերոնիկա Մարդյանը մեկնել են Ռուսաստանի Դաշնություն: 1990 թվականից ամուսնության կապակցությամբ նշված հասցեում այլևս չի բնակվել Լուսիկ Մարդյանը: Սիմոն Մարդյանը 1994 թվականին իր ընտանիքի հետ միասին նույնպես մեկնել է ՌԴ:

5. Վիճելի հասցեի և այնտեղ մինչև 2008 թվականը գտնվող Մարդյաններին պատկանող գույքի մասին հոգ է տարել Լուսիկ Մարդյանը, ում վստահված է եղել վիճելի բնակելի տան բանալին: Վերջինս, Գրետա Հարությունյանի կողմից վիճելի բնակելի տան փականի փոխված լինելու պատճառով չկարողանալով մուտք գործել տուն, 23.05.2008 թվականին դիմել է ՀՀ ոստիկանության Երևանի վարչության Արաբկիրի բաժին (հատոր 1-ին, գ.թ. 69):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատ-

մասը որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. տիրապետումը պետք է լինի տասը տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (*տե՛ս օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր*

ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԳ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

«ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 187-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ գույքի տիրապետումն սկսվել է 1999 թվականի հունվարի 1-ից առաջ և շարունակվում է օրենսգիրքը գործողության մեջ դնելու պահից:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մարդոյանները 1994 թվականից չեն բնակվում վիճելի հասցեում, եկել է այն եզրահանգման, որ թեև վիճելի գույքի տիրապետումը սկսվել է 1999 թվականի հունվարի 1-ից առաջ, սակայն դա չի շարունակվել օրենսգիրքը գործողության մեջ դնելու պահին: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածի գործողությունը չի տարածվում նշված դեպքի վրա:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակելի տան տիրապետումը կարող է դրսևորվել ոչ միայն այնտեղ փաստացի բնակվելով, այլև դրա կառավարմանն ուղղված այնպիսի գործողություններ կատարելով, ինչպիսիք են գույքի պահպանմանն ուղղված միջոցներ ձեռնարկելը, գույքի պահպանման ծախսերը հոգալը, ինչպես նաև այն երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պահպանելը, որոնք ակնհայտորեն վկայում են գույքը որպես իր սեփականն ընդունելու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Գատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի իրականացրել սույն որոշման 3-րդ մասի 1-ին և 5-րդ կետերում հիշատակվող, քննվող քաղաքացիական գործում առկա ապացույցների պատշաճ գնահատում, որոնք վկայում են այն մասին, որ Մամվել Մարդոյանը 10 տարի անընդմեջ տիրապետել է վիճելի բնակելի տունը. մասնակցել է գույքի կառավարմանը՝ 1966 թվականից բնակվել է այնտեղ, իրականացրել է վերանորոգման աշխատանքներ, հոգացել է գույքի պահպանման ծախսերը, այնուհետև 1994-2008 թվականները գույքի պահպանման հոգսը հոգացել է իր դստեր միջոցով, ում վստահել է վիճելի տան բանալին: Բարեխիղճ տիրապետման մասին է վկայում այն հանգամանքը, որ տիրապետումը հիմնված է եղել վիճելի գույքի նուտարական վավերացում չստացած առուվաճառքի պայմանագրի վրա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և

228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2009 թվականի որոշումը Սամվել Մարդոյանի մասով բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2009 թվականի որոշման՝ Սամվել Մարդոյանի մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին առյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/1041/05/10
Նախագահող դատավոր՝ Ռ.Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/1041/05/10
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ.ԴՐՍԵՅԱՆԻ
Գ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե.ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 03-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արամայիս Բիլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 22.06.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Արամայիս Բիլյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1409776, թիվ 1409777 և թիվ 1117852 վկայականներով Արամայիս Բիլյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2հա, 0,00935հա և 0,053հա հողամասերի միավորումը ճանաչելու և գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասերի միավորման և շինությունների նկատմամբ իրավունքները գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Արամայիս Բիլյանը պահանջել է հաստատել ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1409776, թիվ 1409777, թիվ 1117852 վկայականներով 0,2հա, 0,00935հա, 0,053հա արտադրական նշանակության հողամասերի միավորումը և ըստ նախագծի կառուցված շինությունները ճանաչել օրինական:

Արամայիս Բիլյանը, փոխելով հայցի հիմքը և առարկան, պահանջել է ճանաչել ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1409776, թիվ 1409777, թիվ 1117852 վկայականներով սեփականության իրավունքով Արամայիս Բիլյանին պատկանող 0,2հա, 0,00935հա, 0,053հա հողամասերի միավորումը և պարտավորեցնել Կադաստրին կատարելու գլխավոր հատակագծի համաձայն հողամասերի միավորման և շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի 22.06.2010 թվականի (այսուհետ՝ Դատարան) վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արամայիս Բիլյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 24-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը, 172-րդ հոդվածի 1-ին մասը, 173-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը, 68-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր, ինչպես նաև սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառարանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել համակցության մեջ և անտեսել է այն հանգամանքը, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սեփականատիրոջը հնարավորություն է ընձեռվել փոփոխել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի սահմանները, միավորել դրանք, ինչպես նաև բաժանել մի քանի մասերի, ընդ որում, փոփոխությունները կատարվում են պայմանագրի, դատարանի որոշման, վճռի առկայության դեպքում, որոնց հիման վրա կատարվում են փոփոխություններ գրանցման մատյանի՝ տվյալ անշարժ գույ-

քի միավորի գրանցման թերթիկում (գրանցման նախկին թերթիկը փակելու և նորը բացելու միջոցով) և կադաստրային քարտեզներում:

Գատարանը տվյալ դեպքում անտեսել է նաև այն հանգամանքը, որ Արամայիս Բիլյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կառուցված գույքի նկատմամբ ծագող իրավունքները կարող են գրանցվել հողամասերի միավորման արդյունքում, որը հնարավոր է իրականացնել միայն դատական պաշտպանության միջոցով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ վարչական դատարանի 22.06.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 05.08.2004 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1409776 վկայականի համաձայն՝ Կոտայքի մարզի Ջովունի գյուղում գտնվող 0,2հա հողամասի սեփականատերն Արամայիս Բիլյանն է (գ.թ. 11-13):

2. 05.08.2004 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1409777 վկայականի համաձայն՝ Կոտայքի մարզի Ջովունի գյուղում գտնվող 0,00935հա հողամասի սեփականատերն Արամայիս Բիլյանն է (գ.թ. 14-16):

3. 13.10.2004 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1117852 վկայականի համաձայն՝ Կոտայքի մարզի Ջովունի գյուղում գտնվող 0,053հա հողամասի սեփականատերն Արամայիս Բիլյանն է (գ.թ. 17-19):

4. 29.09.2006 թվականի թիվ 23 շինարարական թույլտվության համաձայն՝ Ջովունու համայնքը թույլատրել է Արամայիս Բիլյանին Կոտայքի մարզի Ջովունու համայնքում սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա իրականացնել սննդի օբյեկտի և քարե պարսպի շինարարություն (գ.թ. 22):

5. 11.02.2010 թվականի դիմումով Արամայիս Բիլյանը Կադաստրին խնդրել է կատարել միավորում և պետական գրանցում Ջովունի գյուղում գտնվող շինությունների և հողամասի նկատմամբ՝ դիմումին կից ներկայացնելով սեփականության իրավունքի գրանցման թիվ 1117852, թիվ 1409776 և թիվ 1409777 վկայականները (գ.թ. 46):

6. Արամայիս Բիլյանին հասցեագրված Կադաստրի 15.02.2010 թվականի թիվ 598 գրությամբ նշվել է. «Ի պատասխան Ձեր 11.02.2010թ. թիվ 395 դիմումի՝ հայտնում ենք, որ Ձեր դիմումը մերժվում է՝ քանի որ նախագծով և շին. թույլտվությամբ շինությունները կառուցված են 2 տարբեր միավորների վրա, անհրաժեշտ է 2 հողերը միավորել, ապա նոր նախագծել: Չափազրմամբ պարզվել է, որ շինությունը կառուցված է մեկ միավորի սահմաններից դուրս» (գ.թ.10):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք կարող են փոփոխել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի սահմանները, միավորել դրանք, ինչպես նաև բաժանել մի քանի մասերի: Փոփոխությունները կատարվում են պայմանագրի, դատարանի որոշման, վճռի առկայության դեպքում, որոնց հիման վրա կատարվում են փոփոխություններ գրանցման մատյանի՝ տվյալ անշարժ գույքի միավորի գրանցման թերթիկում (գրանցման նախկին թերթիկը փակելու և նորը բացելու միջոցով) և կադաստրային քարտեզներում:

Սույն վարչական գործի փաստերի համաձայն՝ սեփականության իրավունքի գրանցման թիվ 1409776, թիվ 1409777 և թիվ 1117852 վկայականներում ամրագրված Կոտայքի մարզի Չովունի գյուղում գտնվող 0,2հա, 0,00935հա և 0,053հա հողամասերի սեփականատերն Արամայիս Բիլյանն է, ով օրենքով սահմանված կարգով համապատասխան շինարարական թույլտվության հիման վրա՝ նշված հողամասերի վրա կառուցել է շինություն, որից ծագող իրավունքները կարող են ենթարկվել պետական գրանցման միայն հողամասերի միավորման արդյունքում:

Դատարանը հայցի մերժման պատճառաբանության հիմքում դրել է այն հանգամանքը, որ Արամայիս Բիլյանի 11.02.2010 թվականի դիմումում նշված հողամասերի միավորման, շինությունների և հողամասերի նկատմամբ պետական գրանցում կատարելու համար պարտադիր պայման է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող պայմանագրի, դատարանի որոշման կամ վճռի առկայությունը: Մինչդեռ, այդ փաստաթղթերից որևէ մեկը հայցվորը չի ներկայացրել Կադաստր, որպիսի պայմաններում վերջինս իրավացիորեն մերժել է բարենպաստ վարչական ակտ ընդունելու հայցվորի դիմումը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմը վերաբերում է այն դեպքերին, երբ տեղի է ունենում երկու կամ ավելի անձանց պատկանող անշարժ գույքի սահմանների փոփոխում պայմանագրի հիման վրա, կամ երբ որևէ դատական ակտով նախատեսվում է որևէ անձի անշարժ գույքի փոփոխություն: Այսինքն՝ համապատասխան պայմանագրի կամ դատական ակտի առկայության դեպքում օրենքով նախատեսվել է դրանց ներկայացման պարտավորություն, որն էլ պետք է իրավական հիմք հանդիսանա տվյալ անշարժ գույքի միավորման համար: Մինչդեռ, այն դեպքում, երբ խոսքը նույն անձին պատկանող, հարևանությամբ գտնվող հողամասերի միավորման մասին է,

նման իրավական փաստաթղթերի առկայություն չի պահանջվում: Նման դեպքերում բավարար է միայն հողամասերի սեփականատիրոջ՝ դրանք միավորելու կամահայտնությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Գատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչի հիման վրա անհիմն մերժել է հողամասերի միավորումը գրանցելուն պարտավորեցնելու մասին հայցապահանջը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1409776, թիվ 1409777 և թիվ 1117852 վկայականներով Արամայիս Բիլյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2հա, 0,00935հա և 0,053հա հողամասերի միավորումը ճանաչելու պահանջի մասով անհրաժեշտ է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական

ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայցներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու վարչական ակտն առոչինչ լինելը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով ներկայացված՝ հողամասերի միավորումը ճանաչելու հայցապահանջի դեպքում ինքնին բացակայում է որևէ իրավունքի խախտման, կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով նախատեսված դատարան դիմելու մյուս հիմքերը, որոնք կարող են դատարանի կողմից քննության առարկա դառնալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներկայացված հայցը վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակների թվին չի դասվում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հողամասերի միավորման ճանաչման հայցն ընդդատյա չէ վարչական դատարանին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով Դատարանի վճիռը հիշյալ մասով բեկանելու և սույն վարչական գործի վարույթը տվյալ մասով կարճելու համար:

Ինչ վերաբերում է շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջին, ապա տվյալ պահանջը ենթակա է մերժման: Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել: Մինչդեռ, տվյալ դեպքում սույն վարչական գործով հայցվորին վարչական մարմինը չի մերժել շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, հետևաբար, տվյալ պահանջը ենթակա է մերժման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Գատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գատարանի ակտը փոփոխելիս, վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 22.06.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. Արամայիս Բիլյանի հայցը բավարարել մասնակիորեն՝ պարտավորեցնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանմանը գրանցելու անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1409776, թիվ 1409777 և թիվ 1117852 վկայականներով Արամայիս Բիլյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2հա, 0,00935հա և 0,053հա հողամասերի միավորումը գլխավոր հատակագծի համաձայն:

Շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով Արամայիս Բիլյանի հայցը մերժել:

Վարչական գործի վարույթը Արամայիս Բիլյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2հա, 0,00935հա և 0,053հա հողամասերի միավորումը ճանաչելու պահանջի մասով կարճել:

2. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանումից հոգուտ Արամայիս Բիլյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրքի գումար և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-93(ՎԳ)**
2009թ.

Քաղաքացիական գործ թիվ 08-443

Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան

Դատավորներ՝ Ա.Սկրտչյան
Վ.Ավանեսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի հոկտեմբերի 16-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սվետլանա Բալյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.12.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Սվետլանա Բալյանի հայցի ընդդեմ առաջին նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի, Անժելա Ամալյանի, Աիդա Գուլոյանի, Կարինե Սկրտչյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնի, Էրեբունի և Նուբարաշեն համայնքների նոտար Գոհար Մոլվախյանի՝ տան և հողամասի ժառանգության վկայագիրը, առուվաճառքի պայմանագրերը և սեփականության իրավունքի վկայականներն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Գիմնելով դատարան՝ Սվետլանա Բալյանը պահանջել է անվավեր ճանաչել

Անժելա Ամալյանի անվամբ Երևանի առաջին նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի կողմից 04.12.1997 թվականին տրված ժառանգության վկայագիրը, ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության տարածքային մարմնի կողմից 01.06.1998 թվականին Անժելա Ամալյանի անվամբ տրված թիվ 002564 սեփականության վկայականը, 02.06.1998 թվականի Երևանի Լոմոնոսովի փողոցի 21 տան առուվաճառքի պայմանագիրը, Աիդա Գուլոյանի անվամբ 09.06.1998 թվականին տրված թիվ 006009 սեփականության վկայականը, 17.12.2003 թվականի Երևանի Լոմոնոսովի փողոցի 21 տան առուվաճառքի պայմանագիրը, Կարինե Սկրոչյանի անվամբ 30.12.2003 թվականին տրված թիվ 1647891 սեփականության վկայականը և իրեն ճանաչել մոր՝ Մոնյա Բալյանի օրինական ժառանգ, ինչպես նաև պարտավորեցնել Կարինե Սկրոչյանին վերականգնելու տան նախնական վիճակը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 07.09.2004 թվականի վճռով Սվետլանա Բալյանի հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.12.2008 թվականի որոշմամբ Դատարանի 07.09.2004 թվականի վճիռը մասնակիորեն՝ «ըստ օրենքի ժառանգության իրավունքի» վկայագիրն անվավեր ճանաչելու և փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու մասերով, բեկանվել և փոփոխվել է. անվավեր է ճանաչվել 04.12.1997 թվականի «ըստ օրենքի ժառանգության իրավունքի» վկայագիրը: Սվետլանա Բալյանը ճանաչվել է Երևանի Լոմոնոսովի փողոցի թիվ 21 հասցեում գտնվող գույքի նկատմամբ փաստացի տիրապետող ժառանգ: Վճռի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սվետլանա Բալյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով ժառանգության իրավունքի վկայագիրը, չի կիրառել անվավեր գործարքների հետևանքները՝ պատճառաբանելով, որ ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա կնքված գործարքներն անվավեր ճանաչելը կհանգեցնի պատասխանողների իրավունքների խախտման: Մինչդեռ, վերաքննիչ դատարանը չի հիմնավորել իր այդ եզրահանգումը:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, ըստ որի՝ սեփականատերն իրավունք ունի բարեխիղճ ձեռք բերողից գույքը ետ պահանջել, երբ գույքը հափշտակվել է, կամ նրա տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով, անկախ նրա կամքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 30.12.2008 թվականի որոշումը, կիրառել անվավեր գործարքի հետևանքները՝ անվավեր ճանաչել Անժելա Ամալյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը, Անժելա Ամալյանի և Աիդա Գուլոյանի միջև 02.06.1998 թվականին կնքված Երևանի Լոմոնոսովի փողոցի 21 տան վերաբերյալ առուվաճառքի պայմանագիրը, Աիդա Գուլոյանի անվամբ պետական գրանցումը, Աիդա Գուլոյանի և Կարինե Սկրտչյանի միջև կնքված նույն գույքի առուվաճառքի պայմանագիրը և Կարինե Սկրտչյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Թիվ 009609 սեփականության վկայագրի համաձայն՝ Լոմոնոսովի փողոցի 21 տունը սեփականության իրավունքով պատկանել է Սոնյա Բալյանին (հատոր 1-ին, գ.թ. 14):

2. Նոտարի կողմից 05.04.1981 թվականին վավերացված կտակի համաձայն՝ Սոնյա Բալյանը Երևանի Լոմոնոսովի փողոցի թիվ 21 տան երկու սենյակը (10,5 քմ, 13,0 քմ բնակելի մակերեսով և 8,9 քմ օժանդակ ընդհանուր օգտագործման) կտակել է Անժելա Ամալյանին (հատոր 1-ին, գ.թ. 70):

3. Սոնյա Բալյանը մահացել է 08.11.1981 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 12):

4. 01.06.1998 թվականին տրված թիվ 002564 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Անժելա Ամալյանը Սոնյա Բալյանի 05.04.1981 թվականի կտակում նշված գույքի նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք (հատոր 1-ին, գ.թ. 60):

5. Անժելա Ամալյանը 02.06.1998 թվականին վեճի առարկա բնակելի տունը վաճառել է Աիդա Գուլոյանին: 09.06.1998 թվականի թիվ 006009 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ նշված գույքի նկատմամբ գրանցվել է Աիդա Գուլոյանի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 15, 62):

6. Աիդա Գուլոյանը 17.12.2003 թվականին վերոնշյալ գույքը վաճառել է Կարինե Սկրտչյանին: 30.12.2003 թվականի սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ նշված գույքի նկատմամբ գրանցվել է Կարինե Սկրտչյանի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 16, 64):

7. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ օրինական ուժի մեջ է թողնվել Երևանի Էրեբունի և

Նուբարաշեն համայնքների առաջին աստիճանի դատարանի 26.11.2007 թվականի վճիռը, որի համաձայն՝ անվավեր է ճանաչվել Անժելա Ամալյանի անվամբ 05.04.1981 թվականին կազմված կտակը (հատոր 2-րդ, գ.թ. 3-6):

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առջին չգործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝

1. գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից,
2. ձեռք բերողը չի իմացել կամ չէր կարող իմանալ դրա մասին,
3. սեփականատերը կամ գույքը տիրապետողը կորցրել են գույքը, կամ այն

նրանցից հափշտակվել է, կամ դուրս է եկել նրանց տիրապետումից այլ ճանապարհով՝ **անկախ նրանց կամքից**:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջելու իրավական հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի պահանջներից հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով պաշտպանված չէ սեփականատիրոջ՝ գույքը վերադարձնելու պահանջից, եթե գույքը վերջինիս տիրապետումից դուրս է եկել անկախ նրա կամքից (*իրավական հիմնավորումները տես՝ ըստ հայցի Լատուրա Ամիրյանի ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի, Գոհար Պողոսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ-սեփականատեր ճանաչելու պահանջի մասին, ըստ հայցի Վիլեն Գաբրիելյանի ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի և Գոհար Պողոսյանի՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին, ըստ հայցի Եղիսաբեթ Ալավերդյանի ընդդեմ Լատուրա Ամիրյանի, Վիլեն Գաբրիելյանի, Լիլիթ Սևոյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Չեյթուն տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կադաստրի միասնական մատյանում կատարված գրանցումը և սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1311 (ՎԳ) որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ օրինական ուժի մեջ է թողնվել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 26.11.2007 թվականի վճիռը, որի համաձայն՝ անվավեր է ճանաչվել Անժելա Ամալյանի անվամբ 05.04.1981 թվականին կազմված կտակը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2008 թվականի որոշումը, որպես անվավեր ճանաչված կտակի հետևանք՝ անվավեր է ճանաչել նաև դրա հիման վրա տրված 04.12.1997 թվականի «ըստ օրենքի ժառանգության իրավունքի» վկայագիրը, սակայն չի կիրառել հայցապահանջի հիմքում ընկած անվավերության այլ հետևանքները, այն է՝ անվավեր չի ճանաչել առուվաճառքի պայմանագրերը և դրանցից բխող իրավունքների պետական գրանցումները: Վերաքննիչ դատարանն իր այս դիրքորոշումը պատճառաբանել է նրանով, որ վերոնշյալ գործարքները կնքվել են պայմանագրերի կնքման պահին գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ և որ գույքը հատուցմամբ ձեռքբերողները պայմանագրերի կնքման ժամանակ համոզված են եղել, որ այն ձեռք են բերել այդ գույքն օտարելու իրավունք ունեցող անձից, հետևաբար, նրանք համարվում են բարեխիղճ ձեռքբերողներ, ուստի սույն

իրավահարաբերության նկատմամբ վերը նշված առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անժելա Ամալյանը թեև վիճելի գույքն օտարելիս դրա նկատմամբ ունեցել է գրանցված իրավունք, սակայն վիճելի գույքը փաստացի տիրապետելու ուժով դրա նկատմամբ Սվետլանա Բալյանը ձեռք է բերել սեփականության իրավունք: Հետևաբար, Սվետլանա Բալյանի գույքը նրա տիրապետումից դուրս է եկել իր կամքից անկախ պատճառներով, ուստի վերջինս, որպես գույքը փաստացի տիրապետող ժառանգ, իրավունք ունի այն հետ պահանջելու ցանկացած բարեխիղճ տիրապետողից:

Բացի այդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածով սահմանված սեփականության անձեռնմխելիության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.12.2008 թվականի որոշման՝ հայցը մերժելու մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշման մնացած մասը բողոքն օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵՔԴ/0724/02/08**
դատարանի որոշում **2009թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ԵՔԴ/0724/02/08

Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Վ. Ավանեսյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2009 թվականի սեպտեմբերի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Վարազդատ Եղոյանի վճռաբեկ բո-
ղոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2009 թվականի որոշման
դեմ՝ ըստ հայցի Գևորգ Չուրումյանի ընդդեմ Դավիթ Քիթապազյանի, Վարազդատ
Եղոյանի՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված
պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գևորգ Չուրումյանը պահանջել է անվավեր ճանաչել
27.12.2007 թվականի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը և Վարազդատ
Եղոյանին պարտավորեցնել վերադարձնելու ավտոմեքենան կամ դրա արժեքը:

Երևանի քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.11.2008
թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.04.2009 թվականի որոշմամբ Դատարանի 10.11.2008 թվականի վճիռը բողոքվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարազդատ Եղոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր համարելով Դավիթ Քիթապազյանի կողմից 28.12.2008 թվականին Գևորգ Չուրունյանին տրված ստացականը, վերջինիս և բողոք բերած անձի միջև 27.12.2007 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև Դավիթ Քիթապազյանի կողմից բողոք բերած անձին 20.12.2008 թվականին տրված ստացականը, այդ փաստերը որևէ կերպ չի համեմատել հայցադիմումի հետ, որում Գևորգ Չուրունյանն ուղղակի նշել է, որ ավտոմեքենայի արժեքը ստանալու է տարածամկետ վճարմամբ: Գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության դեպքում Վերաքննիչ դատարանը պետք է հանգեր այն համոզման, որ Գևորգ Չուրունյանն իմացել է պայմանագրի գնի տարածամկետ վճարման մասին, համաձայնել է այդ պայմանին, գիտակցաբար է կնքել պայմանագիրը և գործարքի բնույթի վերաբերյալ մոլորություն չի ունեցել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.04.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գևորգ Չուրունյանի և Վարազդատ Եղոյանի միջև 27.12.2007 թվականին կնքված, նոտարական կարգով վավերացված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Գևորգ Չուրունյանը վաճառել, իսկ Վարազդատ Եղոյանը գնել է «ԲՄՎ-318» մակնիշի 06 ՍՕ 675 պետհամարանիշի ավտոմեքենան: Պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ նշված ավտոմեքենան վաճառվել է երկու միլիոն ՀՀ դրամով, որը վաճառողն ամբողջությամբ ստացել է գնորդից (գ.թ. 22):

2) 20.12.2007 թվականի ստացականի համաձայն՝ Դավիթ Քիթապազյանը, հանդիսանալով միջնորդ, ԲՄՎ մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերման համար Վարազդատ Եղոյանից ստացել է 6.200 ԱՄՆ դոլար, իսկ նշված գումարի դիմաց Վարազդատ Եղոյանին տվել է «ԲՄՎ-318» մակնիշի կանաչ մետալիկ մեքենան (գ.թ. 60):

3) 28.12.2007 թվականի ստացականի համաձայն՝ Դավիթ Քիթապազյանը պարտավորվել է մինչև 2007 թվականի դեկտեմբերի 29-ը Գևորգ Ջուրունյանին վերադարձնել վերջինիս ավտոմեքենան գնելու համար պարտք 6.200 ԱՄՆ դոլարից 1.000 ԱՄՆ դոլարը, իսկ 5.200 ԱՄՆ դոլարը պարտավորվել է վերադարձնել մինչև 2008 թվականի հունվարի 20-ը (գ.թ. 21):

4) Գևորգ Ջուրունյանի 17.07.2008 թվականի հայցադիմումի համաձայն՝ Դավիթ Քիթապազյանն առաջարկել է ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր կնքել, որի կապակցությամբ խոստացել է տալ ստացական, որով կպարտավորվի 1.000 ԱՄՆ դոլարը տալ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 29-ը, մնացած գումարը՝ մինչև 2008 թվականի հունվարի 20-ը: Դավիթ Քիթապազյանը հավաստիացրել է, որ հետագայում ֆինանսական որևէ խնդիր չի ծագելու, և գումարը տալու են ըստ պայմանավորվածության՝ ստացականի համաձայն (գ.թ. 3-5):

4. Վճարել նատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել նատարանը գտնում է, որ *վճարել բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բողոք ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը նատարանով կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով:

Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները: Գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն չունի:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ էական նշանակություն ունեցող մոլորությունն առկա է, երբ կնքված գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, չի կարող հանգեցնել այն իրավական հետևանքներին, որոնք նրանք ի նկատի են ունեցել գործարքի կնքման պահին: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի, մասնավորապես՝ գործարքի էության, դրա հետևանքների, կողմերի հարաբերությունների բովանդակության վերաբերյալ մոլորությունը: Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը նշանակում է, որ

կողմերը կամ նրանցից մեկը նկատի է ունեցել ոչ այն առարկան, որին վերաբերում է կնքված գործարքը, այլ իր հատկանիշներով տարբերվող մեկ այլ առարկա:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, Գատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, հանգել է այն հետևության, որ Գևորգ Չուրունյանը գտնվել է էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ՝ կապված գործարքի բնույթի հետ, քանի որ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրով ընդունել է գնորդից պայմանագրով նախատեսված գումարն ստանալու հանգամանքը, սակայն դատարան ներկայացված ստացականներով նախատեսվել է գումարը վճարել մինչև 20.01.2008 թվականը:

Մինչդեռ հայցադիմումով Գևորգ Չուրունյանն ընդունել է, որ Գավիթ Քիթապսզյանն իրեն առաջարկել է ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր կնքել, որի կապակցությամբ խոստացել է տալ ստացական, որով կպարտավորվի 1.000 ԱՄՆ դոլարը տալ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 29-ը, իսկ մնացած գումարը՝ մինչև 2008 թվականի հունվարի 20-ը: Գավիթ Քիթապսզյանը հավաստիացրել է, որ գումարը տրվելու է ըստ պայմանավորվածության՝ ստացականի համաձայն, իսկ նշված բովանդակությամբ 28.12.2007 թվագրված ստացականն առկա է սույն գործում:

Այսպիսով, սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Գևորգ Չուրունյանի և Վարազդատ Եղոյանի միջև 27.12.2007 թվականին կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի 4-րդ կետով սահմանվել է, որ վաճառողը գնորդից ամբողջությամբ ստացել է պայմանագրի գնի գումարը, սակայն իրականում նախատեսվել է պայմանագրի գնի տարածամկետ վճարում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 27.12.2007 թվականի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի կնքման պահին Գևորգ Չուրունյանը գործարքի բնույթի կամ դրա առարկայի հատկանիշների վերաբերյալ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ չի գտնվել, քանի որ հստակ գիտակցել է, որ կնքում է տարածամկետ վճարմամբ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր: Այսինքն՝ կնքված գործարքն արտահայտել է Գևորգ Չուրունյանի իրական կամքը, հանգեցրել է այն իրավական հետևանքներին, որոնք նա ի նկատի է ունեցել գործարքի կնքման պահին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի

դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Գևորգ Զուրումյանի հայցը մերժել:

2. Գևորգ Զուրումյանից հոգուտ Վարազդատ Եղոյանի բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0197/02/08
դատարանի որոշում 2009թ.
Քաղաքացիական գործ
թիվ ԿԴ/0197/02/08
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Կ. Հակոբյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի մարտի 13-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հրազդանի ջերմատնային տնտեսություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ «Դվին Կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Կազմակերպության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է բռնագանձել Կազմակերպությունից 1.116.000 ՀՀ դրամ:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.07.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.11.2008 թվականի որոշմամբ Դատարանի 01.07.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի, 53-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի հետևանքով չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին կետը, 399-րդ հոդվածը, 335-րդ հոդվածի 2-րդ կետը, 338-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր և կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ընկերության կողմից վկայակոչված փաստերի ապացուցման բեռը դրված է միմիայն դրանց վրա: Այդ փաստերն են՝ 1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության նկատմամբ 1.216.000 ՀՀ դրամի չափով Կազմակերպության պարտքը փոխանցվել է «Հայգազարդ» ՓԲ ընկերությանը, 2) պարտավորության սկիզբը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության մասնավորեցման օրվան (31.10.2002թ.-ին) հաջորդող օրն է:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ Ընկերությունը սույն փաստերի ապացուցման հիմքում դրել է միայն 28.06.2005 թվականի պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագիրը, 24.02.2006 թվականի համաձայնագիրը, պարտապանների ցանկը, ՀՀ կառավարության որոշումները, որոնցով չի ապացուցվում վերը նշված փաստը:

Դատարանը, հաստատված համարելով, որ Ընկերության և Կազմակերպության միջև պահանջի իրավունքի զիջման հիմքով առկա է պարտավորություն, առաջին հերթին պարտավոր էր պարզել, թե այդ պարտավորությունն ի սկզբանե երբ և ինչ ծավալով է ծագել, այնուհետև փոխանցվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից «Հայգազարդ» ՓԲԸ-ին, իսկ դրանից հետո՝ Ընկերությանը:

06.05.2008 թվականին Կազմակերպությունը դիմում է ներկայացրել և խնդրել է կիրառել հայցալին վաղեմություն:

Եթե Կազմակերպության «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության նկատմամբ ունեցած պարտքի գումարը պահանջի զիջման իրավունքի պայմանագրի հիման վրա անցել է «Հայգազարդ» ՓԲ ընկերությանը, այնուհետև՝ Ընկե-

րությանը, ապա գործարք կնքելը Կառավարության որոշմամբ սահմանված պահանջ է, իսկ այդ որոշումը պարտքերի փոխանցման (ակնհայտ է, որ գոյություն ունեցող պարտքի) մասին է: Հետևաբար, պահանջի զիջման պայմանագրի առարկա կարող էր լինել գոնե Կառավարության որոշման ընդունման պահին (22.08.2002թ.-ին) առկա պարտքը: Դատարանը պարտավոր էր արձանագրել, որ Ընկերությունը բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը:

Վերաքննիչ դատարանը հայցային վաղեմություն կիրառելու մասին Կազմակերպության դիմումի մերժման և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի կիրառման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Տվյալ դեպքում պարտքի վճարման պարտավորությունը ծագել է 17.10.2002 թվականին, «Հրազդանի ջերմատնային տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից 11.10.2005 թվականին 100.000 ՀՀ դրամի չափով պարտքը վճարվել է, այսինքն՝ վերջինս ընդունել է իր պարտավորությունը և մասամբ կատարել է այն, իսկ ընդհատված վաղեմության ժամկետի ընթացքը նորից սկսվել է 11.10.2005 թվականին»: Մինչդեռ, Կազմակերպության կողմից 11.10.2005 թվականին կատարված վճարումը չի կարող դիտվել որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատում, քանի որ այդ գումարի վճարման ժամկետը լրացել էր 22.08.2005 թվականին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.11.2008 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստաթղթերը.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կերպով քննարկել է ներկայացված ապացույցները և գործող օրենսդրությանը համապատասխան կայացրել է որոշում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ««Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի դեբիտորական և կրեդիտորական պարտքերը փոխանցելու մասին» ՀՀ կառավարության 22.08.2002 թվականի թիվ 1318-Ա որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության մասնավորեցման օրվա դրությամբ բոլոր տեսակի դեբիտորական պարտքերը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածին համապատասխան, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության և «Հայգազարդ» ՓԲ ընկերության միջև կնքվող պահանջի իրավունքի զիջման պայմանագրով փոխանցվում են «Հայգազարդ» ՓԲ ընկերությանը:

2) «Հայգազարդ» ՓԲԸ-ի կողմից հաստատված ակտի համաձայն՝ Կազմակերպության 1.216.000 ՀՀ դրամ պարտքն առաջացել է էլեկտրաէներգիայի սպառումից, որը կատարվել է մինչև 2002 թվականի փետրվար ամիսը:

3) «Հայգազարդ» ՓԲԸ-ի՝ որպես ցեղենտի, և «Դ-վին Կոնցեռն» ՓԲԸ-ի՝ որպես ցեսիոնարի միջև կնքված «Պահանջի իրավունքի զիջման մասին» 28.01.2005 թվականի պայմանագրով (պայմանագրի անբաժանելի մաս համարվող թիվ 1 հավելվածով) և «Պահանջի իրավունքի զիջման պայմանագրի փոփոխման մասին» 24.02.2006 թվականի համաձայնագրով ամրագրվել է, որ Կազմակերպության նկատմամբ 1.216.000 ՀՀ դրամ պահանջի իրավունքը փոխանցվել է Ընկերությանը: Նշված պայմանագրում որևէ նշում չկա այն մասին, թե Կազմակերպության պարտքն երբ է առաջացել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության նկատմամբ:

4) Սույն գործում որևէ վերաբերելի և թույլատրելի ասպացույց առկա չէ ի հիմնավորումն այն հանգամանքի, որ Կազմակերպության պարտքը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության նկատմամբ ծագել է ոչ թե 22.08.2002թ.-ից առաջ, այլ՝ 31.10.2002թ.-ին հաջորդող օրը, այն է՝ 01.11.2002թ.-ին:

5) Էլեկտրոնային վճարման 11.10.2005 թվականի թիվ 004-64-64 հանձնարարագրի համաձայն՝ էլեկտրաէներգիայի պարտքի դիմաց Կազմակերպությունը 11.10.2005 թվականին Ընկերությանն է փոխանցել 100.000 ՀՀ դրամ գումար:

6) Գատարանում Կազմակերպությունը 07.05.2008 թվականին ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում:

4.Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա: Նույն օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն՝ սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ պարտավորական հարաբերություններում պարտատիրոջ փոփոխվելու դեպքում զիջվող իրավունքները նոր պարտատիրոջն են անցնում (փոխանցվում) որոշակի՝ անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով:

Սույն գործի փաստերից հետևում է, որ «Հայգազարդ» ՓԲ ընկերությունը 28.01.2005 թվականի կնքված «Պահանջի իրավունքի զիջման մասին» պայմանագրով (պայմանագրի անբաժանելի մաս համարվող թիվ 1 հավելվածով) «Դ-վին Կոնցեռն» ՓԲ ընկերությանն է զիջել «Հրազդանի ջերմատնային տնտեսություն» ՓԲ ընկերության նկատմամբ ունեցած 1.216.000 ՀՀ դրամի չափով պահանջի իրա-

վունքը: Նշված գումարի պահանջի իրավունքն իր հերթին «Հայգազարդ» ՓԲ ընկերությանն էր փոխանցվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության դեբիտորական և կրեդիտորական պարտքերը փոխանցելու մասին» ՀՀ կառավարության 22.08.2002 թվականի թիվ 1318-Ա որոշման հիմքով կնքված պայմանագրի ուժով, իսկ Կազմակերպության 1.216.000 ՀՀ դրամ պարտքն առաջացել էր մինչև 2002 թվականի փետրվար ամիսը կատարված էլեկտրաէներգիայի սպառումից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-333-րդ հոդվածների համաձայն՝ իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը, այն է՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետն երեք տարի է, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանվել են հատուկ ժամկետներ: Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Նույն օրենսգրքի 338-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա, և հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Կազմակերպությունը 07.05.2008 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում: Նշված դիմումն ստորադաս դատարանի կողմից մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Կազմակերպության վճարման պարտավորությունը ծագել է 17.10.2002 թվականին, սակայն 11.10.2005 թվականին վերջինս 100.000 ՀՀ դրամի չափով պարտքը վճարել է, որով և հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվել է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ տվյալ դեպքում պարտքի վճարման պարտավորությունը ծագել է 17.10.2002 թվականին, պատշաճ գնահատականի չի արժանացրել այն հանգամանքները, որ Կազմակերպության պարտքը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության նկատմամբ առաջացել է մինչև 2002 թվականի փետրվար ամիսը կատարված էլեկտրաէներգիայի սպառումից ու այդ պարտքի վճարման պարտավորությունը ծագել է մինչև ՀՀ կառավարության 22.08.2002 թվականի թիվ 1318-Ա որոշման կայացումը, քանի որ պարտավորության կատարման ժամկետի մասին Ընկերության կողմից այլ բան ապացուցված չլինելու պարագայում պահանջի զիջման պայմանագրի առարկա կարող էր լինել գոնե ՀՀ

կառավարության նշված որոշման ընդունման պահին (22.08.2002թ.-ին) առկա, եթե ոչ ավելի շուտ ծագած պարտքը: Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը կատարելու համար ստորադաս դատարանը պարտավոր էր հաշվի առնել Կազմակերպության պարտավորության խախտման պահը՝ պարտավորության ծագման փաստի հիման վրա, այլ ոչ թե դրանից հետո տեղի ունեցած պահանջի իրավունքի փոխանցման գործարքի օրը:

Նշված փաստերի հաշվառմամբ ստորադաս դատարանը պարտավոր էր արձանագրել, որ Ընկերությունը բաց է թողել հայցային վաղեմության ժամկետն այն լրանալու պատճառով, քանի որ այդ ժամկետը սկսել է հոսել 22.08.2002 թվականից ոչ ուշ և լրացել է 22.08.2005 թվականից ոչ ուշ, այնինչ՝ Ընկերության կողմից հայցադիմում ներկայացվել է 14.04.2008 թվականին:

Վերաքննիչ դատարանի այն հիմնավորումը, թե Կազմակերպության կողմից 11.10.2005 թվականին էլեկտրոնային վճարային թիվ 004-64-64 հանձնարարագրով Ընկերությանը 100.000 ՀՀ դրամ փոխանցելու ուժով կատարվել է պարտքը ճանաչող գործողություն, որն էլ հիմք է հայցային վաղեմության ժամկետի ընդհատման համար, անհիմն է, քանի որ վերոնշյալ փաստական հանգամանքներից բխում է, որ Կազմակերպության կողմից վճարումը կատարվել է հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո, ուստի նման վճարումը չի կարող դիտվել որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման հիմք, քանի որ արդեն իսկ ավարտված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող ընդհատվել: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի բովանդակությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է

արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2008 թվականի որոշումը, և այն փոփոխել. «Դ-վին Կոնցեռն» ՓԲ ընկերության հայցը մերժել:

2. «Դ-վին Կոնցեռն» ՓԲԸ-ից հօգուտ «Հրազդանի ջերմատնային տնտեսություն» ՓԲԸ-ի բռնագանձել 66.960 ՀՀ դրամ՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումարները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0723/02/09
2010թ.
Քաղաքացիական գործ
թիվ ԵԷԴ/0723/02/09
Նախագահող դատավոր՝ Ն.Տավարացյան
Դատավորներ՝ Ս.Սիբայելյան
Գ.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ.ԳՐՍԵՅԱՆԻ
	Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
	Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի ապրիլի 02-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Դանիել Ղասաբողյանի վճռաբեկ բո-
ղոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2009 թվականի որոշման
դեմ՝ ըստ Ռ-ազմիկ Դարբինյանի հայցի ընդդեմ Դանիել Ղասաբողյանի՝ 95.000
ԱՄՆ դոլարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ռ-ազմիկ Դարբինյանը պահանջել է բռնագանձել
Դանիել Ղասաբողյանից 80.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և ՀՀ քաղաքա-

ցիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Ուազմիկ Դարբինյանը, ավելացնելով հայցային պահանջի չափը, պահանջել է բռնագանձել Դանիել Ղասաբողյանից 95.000 ԱՄՆ դոլար և 26.05.2006 թվականից մինչև գումարի փաստացի վերադարձման օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, ինչպես նաև բռնագանձումը տարածել Դանիել Ղասաբողյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արին-Բերդ փողոցի թիվ 40 հասցեում գտնվող անշարժ գույքի, այլ հասցեներում գտնվող անշարժ գույքի, շարժական գույքի և դրամական միջոցների վրա:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.08.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2009 թվականի որոշմամբ Դանիել Ղասաբողյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.08.2009 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դանիել Ղասաբողյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր և սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 28-րդ, 39-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ և 131-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն հաստատված է համարել այն հանգամանքը, որ հայցվորը դատարան է դիմել հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո՝ 02.07.2009 թվականին՝ մեկ ամիս յոթ օր ուշացումով: Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, «բացառիկ դեպք» է դիտել հայցվորի կողմից հայցային վաղեմության ընթացքում դատարան դիմում ներկայացնելը, որը դատարանի կողմից հետ է վերադարձվել հայցադիմումի ձևական պահանջները պահպանված չլինելու պատճառով: Վերաքննիչ դատարանը հոդվածի նման մեկնաբանությունը հիմնավորել է այն փաստարկով, որ հայցվորի կողմից նման դիմում դատարան ներկայացնելը վերջինիս մոտ համոզմունք է ձևավորել այն մասին, որ ինքն այդ գործողությամբ ընդհատել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը:

Սինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված նորմի նման մեկնաբանությունը դուրս է դրա բովանդակու-

թյունից, քանի որ համահունչ չէ նշված հողվածում թվարկված մի շարք բացառիկ դեպքերին, այն է՝ ծանր հիվանդությանը, անօգնական վիճակին, անգրագիտությանը:

Քննվող քաղաքացիական գործում առկա չէ որևէ թույլատրելի ապացույց, որով կարող է հաստատվել այն հանգամանքը, որ պատասխանողը հայցվորից փոխառության կարգով վերցրել է 80.000 ԱՄՆ դոլար: Գործում գտնվող ստացականի պատճենն չի կարող սույն գործով թույլատրելի ապացույց համարվել, քանի որ չի պահանջվել և հետազոտվել տվյալ փաստաթղթի բնօրինակը: Վկա Անդրանիկ Ղուկասյանի ցուցմունքը նույնպես չի կարող թույլատրելի ապացույց հանդիսանալ, քանի որ դրա արձեթը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ և 298-րդ հոդվածների առաջին մասերով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.12.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը:

1. 26.05.2005 թվականի ստացականով Ռ-ազմիկ Դ-արքինյանը Դ-անիել Դ-ասաբողյանին տրամադրել է 80.000 ԱՄՆ դոլար՝ մեկ տարվա ընթացքում վերադարձնելու պայմանով (հատոր 1-ին, գ.թ.4):

2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2008 թվականի որոշմամբ վերադարձվել է Ռ-ազմիկ Դ-արքինյանի դիմումն ընդդեմ Դ-անիել Դ-ասաբողյանի՝ 95.000 ԱՄՆ դոլար և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձելու պահանջի մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ և 92-րդ հոդվածների պահանջներին չհամապատասխանելու հիմքով (հատոր 1-ին, գ.թ.10, 27):

3. 02.07.2009 թվականին Ռ-ազմիկ Դ-արքինյանը դիմել է դատարան:

4. 13.07.2009 թվականին դատարանին հասցեագրված դիմումով Դ-անիել Դ-ասաբողյանը խնդրել է կիրառել հայցային վաղեմություն և կայացնել վճիռ հայցը մերժելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 22-23):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ 26.05.2005 թվականի ստացականով տրամադրված գումարը Դանիել Դասաբողյանը Ռ-ազմիկ Դարբինյանին պետք է վերադարձներ մեկ տարվա ընթացքում, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվել է 26.05.2006 թվականից և այդ պահից Ռ-ազմիկ Դարբինյանն իմացել է իր իրավունքի խախտման փաստի մասին, սակայն դատարան է դիմել 02.07.2009 թվականին: Ինչ վերաբերում է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան 23.01.2008 թվականին դիմում ներկայացնելու փաստը որպես հայցային վաղեմության ժամկետի ընդհատում դիտելուն, սպա Վերաքննիչ դատարանը ևս իրավացիորեն գտել է, որ նշված դիմումը օրենքով սահմանված կարգով չի համապատասխանել հայցադիմումի ձևին և բովանդակությանը, այն վերադարձվել է դատարանի կողմից, հետևաբար, նշված դիմումը չէր կարող համարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի կանոններին համապատասխան հայց հարուցելու միջոցով հայցային վաղեմության ժամկետի ընդհատում:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Ռ-ազմիկ Դարբինյանի կողմից հայցային վաղեմության ժամկետի ընթացքում Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան 23.01.2008 թվականին դիմում ներկայացնելը դասվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերի թվին, այն իմաստով, որ Ռ-ազմիկ Դարբինյանի մոտ ներքին համոզմունք է ձևավորվել, որ ինքն այդ գործողությամբ ընդհատել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ տվյալ դեպքում առկա է Ռ-ազմիկ Դարբինյանի իրական իրավունքը (պահանջի իրավունք), որն ապացուցվում է գործում առկա ստացականով: Բացի այդ, հայցային վաղեմության ժամկետը խախտվել է ընդհամենը մոտ մեկ ամսով, որպիսի պայմաններում չի կարող ի չիք դարձվել անձի իրավունքի պաշտպանությունը:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ դեպ-

քերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Օրենսդիրը սույն դրույթով դատարանին հնարավորություն է ընձեռել հարգելի ճանաչել հայցային վաղեմության ժամկետի բացթողումը բացառիկ դեպքերում: Ընդ որում, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության միայն այն հանգամանքների պայմաններում, երբ բացառիկ դեպքը կապված է հայցվորի անձի հետ, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն: Ավելին, հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե բացթողման պատճառները տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա վաղեմության ժամկետի ընթացքում:

Տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ առկա չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված բացառիկ դեպքը, որը հիմք է հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար:

Այսինքն՝ առկա չէ հայցվորի անձի հետ կապված այն հանգամանքը, որի պայմաններում խախտված իրավունքը ենթակա լինի պաշտպանության:

Ավելին, Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան 23.01.2008 թվականին դիմում ներկայացնելու փաստը հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք չէ, քանի որ, ինչպես նշվեց, օրենքի պահանջներին համապատասխան հայց չի հարուցվել, հետևաբար՝ դրա հետևանքները չեն կարող համարվել հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հայցվորի հետ կապված հանգամանքներով պայմանավորված բացառիկ դեպքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, որի պայմաններում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2. Ռազմիկ Դարբինյանից բռնագանձել ՀՀ պետական բյուջե 1.600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի դատարանի համար սահմանված պետական տուրք, 2.400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրք և 2.400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, բայց ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԶԳ/0318/02/08**
դատարանի որոշում **2009թ.**
Քաղաքացիական գործ
թիվ **ԵԶԳ/0318/02/08**
Նախագահող դատավոր՝ **Ն.Հովսեփյան**
Դատավորներ՝ **Է.Մուրադյան**
Ա.Սկրտչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը
(այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ **Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ՝ **Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 17-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Նորայր Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.11.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մարիետա Դուկասյանի ընդդեմ Նորայր Վարդանյանի՝ նվիրատվությունը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Մարիետա Դուկասյանը պահանջել է վերացնել Երևանի

Վ.Սուրենյան փողոցի թիվ 11 տան 1/4 մասի (15.2 քմ) նկատմամբ 17.08.1992 թվականին Նորայր Վարդանյանին կատարված նվիրատվությունը:

Երևանի քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.06.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.11.2008 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը բողոքվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նորայր Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարիետա Ղուկասյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքո-հիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը, 53-րդ հոդվածը:*

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է Դատարանի 25.06.2007 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված այն հանգամանքը, որ 1992 թվականին Մարիետա Ղուկասյանը Երևանի Վ.Սուրենյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 15,2 քմ մակերեսով սենյակի նվիրատվության պայմանագիրը կնքելուց և օրենքով սահմանված կարգով Նորայր Վարդանյանի կողմից այն պետական գրանցում կատարելուց հետո, նվերը **հանձնել է Նորայր Վարդանյանին, իսկ նվիրառուն ընդունել է այն:**

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերը նշված դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է նաև, որ Նորայր Վարդանյանը իր ընտանիքի անդամների հետ միասին բնակվել է վիճելի սենյակում մինչև 1999 թվականը, որից հետո մեկնել է Մոսկվա և այնտեղ գտնվել մինչև 2004 թվականը:

2) *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառեր, որի արդյունքում խախտել է 438-րդ հոդվածը:*

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրվել է միայն 1999 թվականին, մինչդեռ 1992 թվականին, երբ կնքվել է նվիրատվության պայմանագիրը, գործել է 04.06.1964 թվականին ընդունված ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգիրքը:

Վերոգրյալի հիման վրա բողոքը բերած անձը պահանջել է բեկանել Վերա-

քննիչ դատարանի 21.11.2008 թվականի որոշումը և կարճել գործի վարույթն ամբողջությամբ:

2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները.

Անհիմն է Նորայր Վարդանյանի այն պատճառաբանությունը, որ Մարիետա Դուկասյանը հանձնել է, իսկ Նորայր Վարդանյանն ընդունել է վիճելի գույքը և իր ընտանիքի անդամների հետ միասին բնակվել վիճելի սենյակում:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի 25.06.2007 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռում նշված այն հանգամանքը, որ Նորայր Վարդանյանը 1999 թվականին սեկցիայի է Մոսկվա, դեռևս չի նշանակում, որ նա մինչև 1999 թվականը բնակվել է վիճելի սենյակում:

Ինչ վերաբերում է վճարել բողոքում բարձրացված այն փաստարկին, որ առկա է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 25.06.2007 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռ, ապա տվյալ վճռով գործը քննվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի և 601-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, իսկ Երևանի քաղաքացիական դատարանը գործը քննել է այլ հիմքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 603-րդ հոդվածի 3-րդ մասով:

3.Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բնակելի տան մասի 17.08.1992 թվականի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Մարիետա Դուկասյանը Նորայր Վարդանյանին է նվիրել Երևանի Սուրենյան փողոցի 11 հասցեում գտնվող բնակելի տան 1/4 մասը (գ.թ. 10-11):

2) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 25.06.2007 թվականի թիվ 2-310 վճռով Մարիետա Դուկասյանի հայցն ընդդեմ Նորայր Վարդանյանի՝ Երևան քաղաքի Վ.Սուրենյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 15,2 քմ բնակելի սենյակի նկատմամբ ձեռք բերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու և 17.08.1992 թվականին բնակելի տան մասի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին մերժվել է, իսկ Նորայր Վարդանյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Մարիետա Դուկասյանի՝ իր իրավունքների խախտումը վերացնելու պահանջի մասին՝ բավարարվել(գ.թ. 42-45):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 25.06.2007 թվականի թիվ 2-310 վճռով Մարիետա Դուկասյանի և Նորայր Վարդանյանի միջև ծագած վեճի հիմքում դրվել են՝ Երևան քաղաքի Վ.Սուրենյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 15,2 քմ բնակելի սենյակի նկատմամբ ձեռք բերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելը և բնակելի տան մասի 17.08.1992 թվականի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելը (գ.թ. 42-45):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 25.06.2007 թվականի վճռով հաստատվել է բնակելի տան մասի 1992 թվականի նվիրատվության պայմանագրով վիճելի գույքը Մարիետա Դուկասյանի կողմից Նորայր Վարդանյանին հանձնելու և այն Նորայր Վարդանյանի կողմից ընդունելու փաստը, մինչև 1999 թվականը վիճելի սենյակում Նորայր Վարդանյանի բնակվելու փաստը ընտանիքի անդամների հետ: Տվյալ վճռով հաստատվել է նաև, որ Մարիետա Դուկասյանը 2004 թվականից ապօրինի տիրապետել է Երևանի Սուրենյան փողոցի 11 հասցեում գտնվող բնակելի տան 1/4 մասը և խոչընդոտել Նորայր Վարդանյանին բնակվելու վիճելի սենյակում: (գ.թ. 42-45):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52 հոդվածով նախատեսված դեպքերի:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց պետք է գնահատի գործում եղած բոլոր ապացույցների հետ միասին բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, դատարանի համար որևէ հանգամանք նախապես հաստատված ապացույցի ուժ չունի, բացառությամբ **նույն անձանց միջև** նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նվիրատուն իրավունք ունի դատական կարգով պահանջել վերադարձնելու նվիրատվությունը, եթե **նվիրատուի վերաբերմունքը** նրան նվիրված գույքի նկատմամբ, որը նվիրատուի համար իրենից ոչ գույքային մեծ արժեք է ներկայացնում, դրա անդառնալի կորստի սպառնալիք է ստեղծում:

Նշված հոդվածից հետևում է, որ նվիրատվությունը վերադարձնելու համար **էական նշանակություն ունի նվիրատուի (նվեր ստացած անձի) վերաբերմունքը** նրան նվիրված գույքի նկատմամբ: Ընդ որում, նվերը պետք է **նվիրատուի (նվեր**

տված անձի) համար իրենից ոչ գույքային մեծ արժեք ներկայացնի և նվիրատուի վերաբերմունքի հետևանքով դրա անդամնալի կորստի սպառնալիք ստեղծի:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը նվիրատվությունը վերադարձնելու պահանջի բավարարման հիմքում դրել է վիճելի գույքը Մարիետա Գուկասյանի հոր հիշատակը լինելու փաստը, Նորայր Վարդանյանի կողմից սենյակը չպահպանելու, չխնամելու, սենյակի քանդված պատերը, տանիքը չվերանորոգելու հանգամանքը, ինչպես նաև 1992 թվականից Վ.Սուրենյան փողոցի թիվ 11 տանը Նորայր Վարդանյանի չբնակվելու փաստը:

Մինչդեռ, գործում **առկա նույն անձանց միջև նախկինում քննված** Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 25.06.2007 թվականի վճռի ուսումնասիրման արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ վճռով հաստատվել են վիճելի գույքը Մարիետա Գուկասյանի կողմից Նորայր Վարդանյանին հանձնելու և այն Նորայր Վարդանյանի կողմից ընդունելու փաստը, մինչև 1999 թվականը վիճելի սենյակում Նորայր Վարդանյանի բնակվելու փաստը, ինչպես նաև 2004 թվականից Երևանի Սուրենյան փողոցի 11 հասցեում գտնվող բնակելի տան 1/4 մասը Մարիետա Գուկասյանի կողմից ապօրինի տիրապետելու և վիճելի սենյակում Նորայր Վարդանյանին բնակվելը խոչընդոտելու փաստերը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած 25.06.2007 թվականի վճռով հաստատված հանգամանքները սույն գործով ապացուցման կարիք չունեն, հետևաբար, սույն գործով հաստատված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Նորայր Վարդանյանի՝ վիճելի սենյակի անդամնալի կորստի սպառնալիք ստեղծող վարքագծի դրսևորման փաստը:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոնների (իմպերատիվ նորմերին), իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը սահմանում է կողմերի համար **պարտադիր այլ կանոններ**, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված **պայմանագրի պայմանները** պահպանում են իրենց ուժը, բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Տվյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պայմանագիրը կնքելուց հետո **նոր օրենք** ընդունվելու դեպքում կնքված **պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը**, եթե ընդունված օրենքում ամրագրված չէ կողմերի համար սահմանված պարտադիր այլ կանոնների անմիջական կիրառումը նախկինում

կնքված պայմանագրերի վրա:

Այսպիսով, օրենսդրի կողմից ըստ էության ամրագրվել է այն մոտեցումը, որ նախկինում կնքված պայմանագիրն իր պայմաններով **գերակա է** նոր ընդունված այն օրենքի նկատմամբ, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ: Դա իր հերթին որոշակի երաշխիք է ստեղծում պայմանագրի կողմերի համար և բացառում նրանց կամքից անկախ՝ նոր ընդունված օրենքով, պայմանագրի պայմանների փոփոխումը, որոնք գործել են պայմանագիրը կնքելու պահին և դրանց պահպանումը պարտադիր էր պայմանագիրը կնքող կողմերի համար:

Միաժամանակ, ընդհանուր կանոնից օրենսդիրը բացառություն է սահմանել այն դեպքը, երբ օրենքում ուղղակիորեն սահմանված է դրա գործողության տարածումը նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված օրենսդրական եզրույթը սահմանում է **նվիրատվության պայմանագիրը դատական կարգով վերացնելու նվիրատուի իրավունքը**, հետևաբար, այն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով նոր օրենքով կողմերի համար սահմանված պարտադիր այլ կանոն չէ, այլ միայն նվիրատուի՝ օրենքով երաշխավորված իրավունք:

Բացի այդ, սույն իրավահարաբերության նկատմամբ կիրառելի 17.06.1998 թվականի «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգիրքը կիրառվում է քաղաքացիական այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են օրենսգիրքը գործողության մեջ դրվելուց հետո՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Մինչև 1999 թվականի հունվարի 1-ը ծագած պայմանագրային և այլ քաղաքացիական իրավահարաբերությունների նկատմամբ օրենսգիրքը կիրառվում է այն **իրավունքների և պարտականությունների** մասով, որոնք կծագեն օրենսգիրքը գործողության մեջ դրվելուց հետո:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ մինչև 1999 թվականի հունվարի 1-ը ծագած պայմանագրային և այլ քաղաքացիական իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքների և պարտականությունների մասով 1999 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները կիրառվում են **միայն այն իրավունքների և պարտականությունների մասով, որոնք ծագել են օրենսգիրքը ուժի մեջ դնելուց հետո:**

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակելի տան մասի 17.08.1992 թվականի նվիրատվության պայմանագրի հետ կապված՝ նվիրատու Մարիետա Ղազարյանի նվիրատվությունը վերացնելու իրավունքը ծագել է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելուց հետո, հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 3-ր մասը սույն գործով կիրառելի է:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում վկայակոչված գործի վարույթի կարճման փաստարկին, ապա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն նույնպես անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և **կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը** կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ սույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 25.06.2007 թվականի թիվ 2-310 վճռով Մարիետա Ղուկասյանի և Նորայր Վարդանյանի միջև ծագած վեճի հիմքում դրվել են՝ Երևան քաղաքի Վ.Սուրենյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 15,2 քմ բնակելի սենյակի նկատմամբ ձեռք բերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և բնակելի տան մասի 17.08.1992 թվականի **նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու** հանգամանքները:

Մինչդեռ, սույն գործով Մարիետա Ղուկասյանի և Նորայր Վարդանյանի միջև ծագած վեճի հիմքում դրված է Վ.Սուրենյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 15,2 քմ բնակելի սենյակի 17.08.1992 թվականին արված **նվիրատվությունը վերացնելը**:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով գործի վարույթը կարճելու հիմքը բացակայում է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ

ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.11.2008 թվականի որոշումը և այն փոփոխել: Մարիետա Դուկասյանի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ ԱՎԳ/4/0145/02/08
դատարանի որոշում 2009թ.

Քաղաքացիական գործ
թիվ ԱՎԳ/4/0145/02/08

Նախագահող դատավոր՝ Է. Մուրադյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Հովսեփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի հուլիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Եղեգնաձորի մասնաճյուղի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ Արթուր Սարգսյանի, Արտակ Հարությունյանի և երրորդ անձինք Արտաշ Արտաշյանի, Սուսաննա Ստեփանյանի և Նելլի Արտաշյանի՝ 2.417.218.7 ՀՀ դրամ վարկի ընդհանուր պարտքի և 48.400 ՀՀ դրամ վճարված պետական տուրքի գումարների բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Բանկը պահանջել է բռնագանձել Արթուր Սարգսյանից և Արտակ Հարությունյանից 2.417.218,7 ՀՀ դրամ՝ որպես վարկի ընդհանուր պարտքի գումար, և 48.400 ՀՀ դրամ՝ որպես նախապես մուծված պետական տուրքի գումար, ինչպես նաև վարկի մնացորդի նկատմամբ տոկոսների հաշվարկը 19.05.2008 թվականից մինչև դրա փաստացի մարումը շարունակել 28%-ով, իսկ ժամկետանց տոկոսի նկատմամբ տույժերի հաշվարկը 0.2%-ով:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.08.2008 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է Արթուր Սարգսյանից և Արտակ Հարությունյանից համապարտության կարգով բռնագանձել 2.417.218,7 ՀՀ դրամ՝ որպես վարկի ընդհանուր պարտքի գումար, և 48.400 ՀՀ դրամ՝ որպես նախապես մուծված պետական տուրքի գումար, իսկ տոկոսի և տույժի մնացած մասով պահանջը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.12.2008 թվականի որոշմամբ Դատարանի 04.08.2008 թվականի վճիռը բողոքվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46-րդ և 47-րդ գլուխները, 887-րդ հոդվածի 2-րդ մասը և 411-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն առաջին է համարել Պայմանագրի 4.3-րդ կետը՝ պատճառաբանելով, որ այն հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասին: Մինչդեռ կողմերը, տվյալ կետը սահմանելիս, ղեկավարվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածով, որը հնարավորություն է տալիս վարկի տրամադրման պայմանները սահմանել վարկային պայմանագրով: Վերոնշյալի հաշվառմամբ Պայմանագրի 4.4-րդ կետով սահմանվել է նաև յուրաքանչյուր ուշացած օրվա համար ժամկետանց տոկոսագումարների 0.2%-ի չափով տույժ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 16.12.2008 թվականի որոշումը՝ հայցն ամբողջությամբ բավարարել, ինչպես նաև պատասխանողից բռնագանձել 145.050 ՀՀ դրամ՝ որպես

վերաքննիչ և վճարել բողոքներ բերելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 03.07.2007 թվականին Բանկի և Արթուր Սարգսյանի միջև կնքված թիվ 564 վարկային պայմանագրի 1.1-րդ, 1.3-րդ և 1.6-րդ կետերի հիման վրա Բանկը վարկառուին տրամադրել է 2.000.000 ՀՀ դրամի չափով վարկ՝ տարեկան 20% տոկոսադրույքով մինչև 03.07.2009 թվականը մարման վերջնական ժամկետով (հատոր 1-ին, գ.թ. 5):

2) Պայմանագրի 4.3-րդ և 4.4-րդ կետերի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկը և/կամ հաշվարկված տոկոսագումարները չմարելու դեպքում ժամկետանց վարկի նկատմամբ դադարում է գործել Պայմանագրի 1.6-րդ կետով նախատեսված տոկոսադրույքը և մինչև ժամկետանց վարկի փաստացի մարումը դրա մնացորդի նկատմամբ սահմանվում է տարեկան 28% տոկոսադրույք, իսկ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ սահմանվում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար ժամկետանց տոկոսագումարի 0.2% չափով (հատոր 1-ին, գ.թ. 9):

3) 03.07.2007 թվականին Բանկի, Արտակ Հարությունյանի (երաշխավոր) և Արթուր Սարգսյանի միջև կնքված թիվ 564/2 երաշխավորության պայմանագրի համաձայն՝ Արտակ Հարությունյանը երաշխավորել է Արթուր Սարգսյանի կողմից Պայմանագրով Բանկից ստացած 2.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկի վերադարձը ամբողջ ծավալով /վարկի գումար, տոկոս, տույժ, տուգանք/ (հատոր 1-ին, գ.թ. 15):

4) Բանկի կառավարչի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արթուր Սարգսյանի պարտքն առ 19.05.2008 թվականը կազմում է 2.417.218,7 ՀՀ դրամ, այդ թվում՝ 2.000.000 ՀՀ դրամ վարկի գումար (որից ժամկետանց գումար՝ 500.000 ՀՀ դրամ), 364.164,4 ՀՀ դրամ վարկի դիմաց հաշվարկված տոկոսների գումար (որից ժամկետանց տոկոս՝ 199.452,1 ՀՀ դրամ), 53.054,3 ՀՀ դրամ ժամկետանց տոկոսի դիմաց հաշվարկված տույժի գումար (հատոր 1-ին, գ.թ. 17):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս:

Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է սույն օրենսգրքով, օրենքով կամ կանոնադրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է **պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով** դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, **եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:**

Նշված իրավանորմերից հետևում է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, **եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով**, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Ընդ որում՝ օրենսդիրը, ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված՝ պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ սույն գործով կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի պահանջները, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի նորմերն են նորմ չի պարունակում վարկային պայմանագիրը կետանցելու դեպքում այլ տոկոսներ հաշվարկելու հնարավորության, կարգի և չափի վերաբերյալ:

Սինչդեռ, սույն գործով կողմերը Պայմանագրի 4-րդ կետով նախատեսել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար պատաս-

խանատվության պայմաններ, մասնավորապես՝ ժամկետանց վարկի նկատմամբ դադարում է գործել Պայմանագրի 1.6-րդ կետով նախատեսված տոկոսադրույքը (20%) և մինչև ժամկետանց վարկի փաստացի մարումը դրա մնացորդի նկատմամբ սահմանվում է տարեկան 28% տոկոսադրույք, իսկ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ սահմանվում է տույժ յուրաքանչյուր ուշացած օրվա համար ժամկետանց տոկոսագումարի 0.2% չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար պատասխանատվության պայմանները կողմերը նախատեսել են 03.07.2007 թվականին կնքված վարկային պայմանագրով, հետևաբար, այն իրավաչափ է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2008 թվականի որոշման՝ տոկոսի և տույժի բռնագանձումը մերժելու մասը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2008 թվականի որոշման՝ տոկոսի և տույժի բռնագանձումը մերժելու մասը և գործն այդ մասով ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումարի բռնագանձման հարցին անդրադառնալ գործի ըստ էության քննության ժամանակ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում և քաղաքացիական գործ թիվ ԵԶԴ/0595/04/08 2009թ.

Քաղաքացիական գործ
թիվ ԵԶԴ/0595/04/08

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Էդ. Մուրադյան
Դ. Խաչատրյան
Ն. Տավարացյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Լանդրաս» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2008 թվականի որոշման դեմ՝ քաղաքացիական գործով ըստ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) դիմումի ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) պարտապանին սնանկ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:
Երևանի քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.07.2008

թվականի վճռով դիմումը բավարարվել է՝ Ընկերությունը ճանաչվել է սնանկ:

Ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանի կողմից ներկայացվել են առարկություններ Բանկի կողմից ներկայացված գումարային պահանջի չափի դեմ:

Ընկերության պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին Դատարանի 23.09.2008 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանի կողմից ներկայացված առարկությունները մերժվել են, և հաստատվել է Ընկերության պարտատերերի պահանջների վերջնական ցուցակն ըստ հետևյալ առաջնահերթության.

«1. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ՝ 374.132,68 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 34.875.030,80 ՀՀ դրամ՝ ապահովված - ա հերթ,

2. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ (դատական ծախսեր)՝ 500.000 ՀՀ դրամ՝ չապահովված - դ հերթ,

3. ՀՀ ԿԱ ՀՊԾ Արաբիի-1 հարկային տեսչություն՝ 220.465 ՀՀ դրամ՝ չապահովված -է հերթ»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.12.2008 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Դատարանի 23.09.2008 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ և 420-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման մասին տեղեկություններ ստանալուց և նրա կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելուց հետո Բանկը կարող էր առանց դատարան դիմելու իրացնել գրավադրված գույքը՝ հիմք ընդունելով վարկային և գրավի պայմանագրերով Բանկին նման իրավունք վերապահված լինելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը Բանկի կողմից իր իրավունքից չօգտվելը պետք է գնահատեր որպես իրավունքի չարաշահում և պարտապանի կողմից պարտավորության չկատարման հետևանքով պատճառված վնասի չափի ավելացմանն ուղղված դիտավորյալ գործողություններ:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 3-րդ կետը և 417-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Կողմերի միջև կնքված վարկային պայմանագրերով նշված չեն անհաղթահարելի ուժի պայմաններում պատասխանատվության ենթարկվելու մասին դրույթներ, սակայն դրանցով նախատեսվել է, որ վարկը ժամանակին չվերադարձնելու դեպքում վարկառուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և կնքված վարկային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների խախտման համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանված է անհաղթահարելի ուժի հասկացությունը: Հետևաբար, եթե պայմանագրում որևէ դրույթ (անհաղթահարելի ուժ) նշված չէ, ապա վեճ առաջանալու դեպքում կիրառվում է օրենքը: 2007 թվականին աֆրիկյան ժանտախտ հիվանդության բռնկման պատճառով ՀՀ տարածքում արձանագրվել է խոզերի ոչնչացում, և այդ ժանտախտի պատճառով Ընկերության 3.000 գլուխ խոզերը ոչնչացվել են, որի հետևանքով Ընկերությունը ծանր դրության մեջ է հայտնվել և ի վիճակի չի եղել վճարել վարկի գումարները: Նշված հանգամանքն անհաղթահարելի ուժ է, որի առկայության պայմաններում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2008 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ»:

2.1. Վճռարեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածում նշված է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գրավառուի իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը, որն էլ իրականացվել է դատական կարգով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ: Ուստի, տվյալ դեպքում կիրառելի չեն նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի դրույթները, քանի որ գործում առկա չէ որևէ ապացույց, որը կվկայակոչի Բանկի կողմից Ընկերությանը վնաս պատճառելու նպատակով իրավունքի չարաշահում թույլ տալու մասին:

Ընկերության կողմից բերված փաստարկներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-3-րդ կետերը, 369-րդ հոդվածի 3-րդ կետը, անհիմն են, քանի որ բոլոր 5 վարկային պայմանագրերի 4-րդ բաժիններով նախատեսված է, որ վարկառուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, նույնիսկ եթե դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով՝ մեղքի բացակայության պայմաններում:

Վարկային պայմանագրերով նախատեսված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից պատշաճ կատարվել են, իսկ Ընկերության կողմից դրանք չեն կատարվել, հետևաբար՝ երկու կողմերի մեղքով պարտավորությունը չկատարելու մասին պատասխանողի պատճառաբանություններն անհիմն են:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 22.12.2004 թվականին, 24.12.2004 թվականին, 29.09.2006 թվականին և 28.03.2007 թվականին Բանկի և Ընկերության միջև կնքվել են համապատասխանաբար թիվ 129, 131, 78-06, 11-07 և 11-07ա գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվող վարկային պայմանագրեր, որոնց համաձայն՝ Բանկն Ընկերությանը տրամադրել է վարկ համապատասխանաբար 80.000 ԱՄՆ դոլար՝ 12,5 տոկոս դրույքաչափով, չորս տարի մարման ժամկետով, 20.000 ԱՄՆ դոլար՝ 12,5 տոկոս դրույքաչափով, չորս տարի մարման ժամկետով, 200.000 ԱՄՆ դոլար՝ 18 տոկոս դրույքաչափով, երեք տարի մարման ժամկետով, 75.000 ԱՄՆ դոլար՝ 17 տոկոս դրույքաչափով, երեք տարի մարման ժամկետով, 27.000.000 ՀՀ դրամ՝ 17 տոկոս դրույքաչափով, երեք տարի մարման ժամկետով:

Թիվ 129 և 131 վարկային պայմանագրերի 4-րդ բաժինների (պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն) 14-րդ կետով կողմերը սահմանել են, որ «Վարկառուն» պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն)»: Պայմանագրերի 15-րդ կետի համաձայն՝ տոկոսի վճարման ժամկետները խախտելու դեպքում «Վարկառուն» «Բանկ»-ի պահանջով վերջինիս վճարում է տույժ (հաշվարկը կատարվում է մինչև 271 օր)՝ չվճարված տոկոսի 0,1 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, իսկ պայմանագրերի 16-րդ կետի համաձայն՝ վարկը վերադարձնելու ժամկետը «Վարկառու»-ի կողմից խախտելու դեպքում տոկոսը դադարում է, իսկ ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 28,8 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 16x1,8 գործակցի արտադրյալին:

Թիվ 78-06 վարկային պայմանագրի 4-րդ բաժնի (պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն) 17-րդ կետով կողմերը սահմանել են, որ «Վարկառուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն)»: Պայմանագրի 18-րդ կետի համաձայն՝ տոկոսի վճարման ժամկետները խախտելու դեպքում Վարկառուն Բանկի պահանջով վերջինիս վճարում է տույժ (հաշվարկը կատարվում է մինչև 271 օր)՝ չվճարված տոկոսի 0,5 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, իսկ պայմանագրի 19-րդ կետի համաձայն՝ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկառուի կողմից խախտելու դեպքում տոկոսը դադարում է, իսկ ժամկետին չվճարված վարկին վճարվում են

տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 42 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 14x3 գործակցի արտադրյալին:

Թիվ 11-07 և 11-07ա վարկային պայմանագրերի 4-րդ բաժնի (պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն) 17-րդ կետով կողմերը սահմանել են, որ «Վարկառուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն)»: Պայմանագրերի 18-րդ կետի համաձայն՝ տոկոսի վճարման ժամկետները խախտելու դեպքում Վարկառուն Բանկի պահանջով վերջինիս վճարում է տույժ (հաշվարկը կատարվում է մինչև 271 օր)՝ չվճարված տոկոսի 0,5 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, իսկ պայմանագրերի 19-րդ կետի համաձայն՝ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկառուի կողմից խախտելու դեպքում տոկոսը դադարում է, իսկ ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 39 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 13x3 գործակցի արտադրյալին:

2. Ի ապահովումն վերը նշված վարկային պայմանագրերի՝ կողմերի միջև կնքվել են հետևյալ գրավի պայմանագրերը՝

- 22.12.2004 թվականին Բանկի, Ընկերության և գրավատուներ Աշոտ ու Քնարիկ Հովհաննիսյանների միջև կնքվել է Հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 129 պայմանագիրը: Նույն օրը Բանկի և Ընկերության միջև կնքվել է Հիմնական միջոցների գրավի (հիփոթեքի) թիվ 129Ա պայմանագիրը:

- 24.12.2004 թվականին Բանկի, Ընկերության և գրավատու Արթուր Հովհաննիսյանի միջև կնքվել է Հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 131 պայմանագիրը:

- 29.09.2006 թվականին Բանկի, Ընկերության և գրավատուներ Աշոտ ու Քնարիկ Հովհաննիսյանների միջև կնքվել է Երրորդ անձի անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 78-06 Ա պայմանագիրը: Նույն օրը Բանկի, Ընկերության և Արթուր Հովհաննիսյանի միջև կնքվել է Երրորդ անձի անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 78-06 Բ պայմանագիրը, իսկ Բանկի և Ընկերության միջև կնքվել է Անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 78-06 Գ պայմանագիրը:

- 28.03.2007 թվականին Բանկի, Ընկերության և գրավատուներ Աշոտ ու Քնարիկ Հովհաննիսյանների միջև կնքվել է Երրորդ անձի անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 11-07 Ա պայմանագիրը: Նույն օրը Բանկի, Ընկերության և Արթուր Հովհաննիսյանի միջև կնքվել է Երրորդ անձի անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 11-07 Բ պայմանագիրը, իսկ Բանկի և Ընկերության միջև կնքվել է Անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 11-07 Գ պայմանագիրը:

Հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 129 պայմանագրի, Հիմնական միջոցների

գրավի (հիփոթեքի) թիվ 129 Ա պայմանագրի և Հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 131 պայմանագրի 3-րդ բաժիններով սահմանվել է՝ «Գ-րավադրված գույքի հաշվին «Գ-րավառուի» պահանջները բավարարվում են դատարանի վճռով կամ առանց դատարան դիմելու՝ Գ-րավադրված գույքի իրացման հաշվին, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, որի դեպքում «Կողմերի» միջև կնքվում և նոտարական կարգով վավերացվում են առանց դատարանի վճռի Գ-րավադրված գույքի իրացման մասին համաձայնություն, իսկ իրացումն իրականացվում է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոններով»:

Երրորդ անձի անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 78-06 Ա և 78-06 Բ պայմանագրերի, Երրորդ անձի անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 11-07 Ա և 11-07 Բ պայմանագրերի, Անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ 11-07 Գ պայմանագրի 4-րդ բաժինների 19-րդ կետով սահմանվել է, որ «Վարկային պարտավորության ցանկացած խախտման դեպքում Գ-րավառուն իր պահանջի բավարարման նպատակով առանց դատարան դիմելու Գ-րավի առարկայի վրա բռնագանձում է տարածում և իրացնում է այն, այդ թվում՝ Գ-րավի առարկան Վարկային պարտավորության համապատասխան չափի դիմաց սեփականության իրավունքով ընդունում կամ երրորդ անձին ի սեփականություն է հանձնում»:

3. 08.01.2008 թվականին Բանկին հասցեագրված գրությամբ Ընկերությունը, հայտնելով, որ 2007 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում աֆրիկյան ժանտախտ հիվանդության պատճառով Ընկերությունում ոչնչացվել են ավելի քան 3.000 գլուխ խոզեր, խնդրել է դադարեցնել տոկոսադրույքների հաշվարկումը՝ մինչև համապատասխան մարմինների կողմից հարցի վերջնական լուծումը: Ի պատասխան նշված գրության՝ Բանկը 16.01.2008 թվականի թիվ 08/1-0039 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ տոկոսների հաշվարկի դադարեցումը վարկային պայմանագրով նախատեսված չէ, ուստի Բանկը չի կարող տոկոսների հաշվարկը դադարեցնել:

4. Նշված պայմանագրերով Ընկերության պարտքը Բանկի հանդեպ 10.06.2008 թվականի դրությամբ կազմում է 346.148,15 ԱՄՆ դոլար և 32.971.896,32 ՀՀ դրամ:

5. 08.02.2008 թվականին Բանկը ծանուցել է Ընկերությանը՝ առանց դատարան դիմելու գրավի առարկաների բռնագանձման մասին:

6. 12.06.2008 թվականին Բանկը դիմել է Երևանի քաղաքացիական դատարան ընդդեմ Ընկերության՝ սնանկ ճանաչելու պահանջով:

7. Երևանի քաղաքացիական դատարանի 16.06.2008 թվականի որոշմամբ Բանկի դիմումն ընդդեմ Ընկերության՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ: Երևանի քաղաքացիական դատարանի 28.07.2008 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ:

8. 08.08.2008 թվականին Բանկը Երևանի քաղաքացիական դատարան է ներկայացրել պահանջ, որով խնդրել է գրանցել Բանկի պահանջը՝ 500.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարի չափով, ինչպես նաև 374.132,80 ԱՄՆ դոլար և 34.875.030,80 ՀՀ դրամ չկատարված վարկային պարտավորության

գումարի չափով, որից թիվ 129 պայմանագրով՝ 43.177,79 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 36.800 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 5.903,26 ԱՄՆ դոլար՝ տույժ, 474,53 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 131 պայմանագրով՝ 10.794,43 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 9.200 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 1.475,81 ԱՄՆ դոլար՝ տույժ, 118,62 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 78-06 պայմանագրով՝ 216.673,73 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 163.636 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 36.233,63 ԱՄՆ դոլար՝ տույժ, 16.803,14 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 11-07 պայմանագրով՝ 103.487,31 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 75.000 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 23.093,32 ԱՄՆ դոլար՝ տույժ, 5.393,99 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 11-07ա պայմանագրով՝ 34.875.030,80 ՀՀ դրամ, այդ թվում՝ 27.000.000 ՀՀ դրամ՝ վարկի մնացորդ, 5.298.000,30 ՀՀ դրամ՝ տույժ, 2.577.030,50 ՀՀ դրամ՝ տուգանք:

9. ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 84-Ա որոշման համաձայն՝ ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանողի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու անհրաժեշտությունը, որոշել է նշված սեփականատերերին տրամադրվող օժանդակության գումարի չափը:

10. ՀՀ գյուղատնտեսության նախարարության 10.07.2008 թվականի գրության համաձայն՝ Ընկերությանը հայտնվել է, որ Հայաստանի Հանրապետությունում աֆրիկյան ժանտախտ հիվանդությունից անկած և հարկադիր սպանողի ենթարկված խոզերի սեփականատերերին (որոնց կրած վնասի դիմաց դեռևս օժանդակություն չի տրամադրվել) օժանդակություն տրամադրելու հարցը, այդ թվում՝ Ընկերությանն օժանդակություն տրամադրելու հարցը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի 20.06.2008 թվականի թիվ 04-ԱԳ-14-1687 գրություն-առաջարկությամբ ներկայացվել է անասնահամաճարակների հետևանքով անկած և հարկադիր սպանողի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման ազգային հանձնաժողովի քննարկմանը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

Բողոքի սույն հիմքում փաստարկվում է պարտավորության խախտման հետևանքով վնասների չափի մեծացմանը պարտատիրոջ կողմից դիտավորյալ նպաստելը և դրանց նվազեցման համար ողջամիտ միջոցներ չձեռնարկելը՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ և 420-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջների կիրառման հիմք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քա-

ղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ 1-ին կետով նախատեսված պահանջները չպահպանելու դեպքում դատարանը կարող է մերժել անձին նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Գատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությունը 08.01.2008 թվականին Բանկին է ուղարկել գրություն՝ տոկոսադրույքների հաշվարկումը դադարեցնելու խնդրանքով, և ի պատասխան դրա՝ Բանկը 16.01.2008 թվականի թիվ 08/1-0039 գրությամբ տեղեկացրել է, որ մտադիր է դատական կարգով լուծել վարկի և տոկոսների վերադարձի հետ կապված հարցերը: Այնուհետև, 08.02.2008 թվականին Բանկն Ընկերությանը ծանուցել է վարկային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների խախտման համար առանց դատարան դիմելու գրավի առարկաների բռնագանձման մասին՝ միաժամանակ տեղեկացնելով, որ դրանք ստանալու պահից սկսած՝ պարտապանն ունի երկու ամիս ժամանակ՝ վարկային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու համար, կամ գրավատուների կողմից գրավի առարկաներն այդ ժամկետից հետո պետք է ազատվեն և հանձնվեն Բանկին: Գործում առկա թիվ 2457-2465 փոստային անդորրագրից հետևում է, որ նշված ծանուցագրերը 08.02.2008 թվականին հանձնվել են փոստին, ուստի Բանկի՝ գրավադրված գույքի իրացման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ սահմանված իրավունքը չէր կարող 08.04.2008 թվականից առավել վաղ ծագել: Բանկն Ընկերությանը սնանկ ճանաչելու դիմում դատարանին ներկայացրել է 16.06.2008 թվականին:

Վերոշարադրյալ փաստերի հիմքով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքը չիրականացնելու հանգամանքը՝ որպես վնասների չափի մեծացման բավարար հիմք որակելու, ինչպես նաև Բանկի դիտավորության առկայությունը հիմնավորելու համար սույն գործում որևէ ապացույց առկա չէ:

Վերոգրյալից հետևում է, որ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը նպաստելու վերաբերյալ բողոք բերած անձի պնդումն անհիմն է, և տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածը կիրառման ենթակա չէ:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը նախա-

տեսում է գրավառուի՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ: Քննարկվող դեպքում առանց դատարան դիմելու գրավադրված գույքն իրացնելը Բանկի հայեցողական իրավունքն է, այլ ոչ պարտականությունը: Ուստի, տվյալ դեպքում կիրառելի չեն մաս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի դրույթները, քանի որ բացի բողոք բերողի պնդումից, գործում առկա որևէ ապացույց չի վկայում Բանկի կողմից Ընկերությանը վնաս պատճառելու նպատակով իրավունքի չարաշահում թույլ տալու մասին:

Վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ դատական պաշտպանության դիմելն իրավունքները խախտված անձի իրավունքն է և ոչ թե պարտականությունը (տե՛ս Աշոտ Թորգոմյանն ընդդեմ Գ-ագիկ Գ-րիգորյանի՝ պարտավորության մայր գումարն ու հաշվարկված տոկոսները բռնագանձելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-2334 (ՎԳ) գործով 21.12.2006 թվականի որոշումը): Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատիրոջ կողմից պարտավորության ծագման պահին կամ անմիջապես հետո դատարան չդիմելը չի կարող որակվել որպես պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելուն կամ անպատշաճ կատարելուն նպաստող հանգամանք, քանի որ պարտապանն ինքն է պարտավոր անհրաժեշտ հոգածություն և շրջահայացություն ցուցաբերել պարտավորության՝ ժամանակին և պատշաճ կատարելու համար: Հայցային վաղեմության ժամկետի ընթացքում դատարան դիմելը պետք է դիտել որպես պարտավորությունների կատարումն ապահովելուն ուղղված ողջամիտ գործողություն, և դա չի կարող ինքնին որևէ բացասական հետևանքներ առաջացնել պարտատիրոջ համար:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պարտատերն իրավունք չունի պահանջել վճարելու տուժանք, եթե պարտապանը պատասխանատվություն չի կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորու-

թյունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չսպացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման, սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե սպացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Ընկերության միջև կնքվել են վարկային պայմանագրեր, որոնցով սահմանվել է, որ «վարկառուն պատասխանատվություն է կրում չ՛ օրենսդրությամբ և սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն)», սակայն նշված պայմանագրերով կողմերը չեն սահմանել անհաղթահարելի ուժի պարագայում պատասխանատվություն չկրելու հանգամանքը բացառող դրույթներ:

Նման պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու իրավիճակում անհաղթահարելի ուժի առկայության դեպքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը չ՛ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ենթակա չէ պատասխանատվության:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից վարկային պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով, այն է՝ 2007 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված՝ խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով Ընկերության 3.000 գլուխ խոզերի ոչնչացման պատճառով: Վերոնշյալ հանգամանքները հաստատվում են չ՛ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 84-Ա որոշմամբ, Ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանին հասցեագրված՝ չ՛ գյուղատնտեսության նախարարության 10.07.2008 թվականի գրությամբ, Բանկին հասցեագրված՝ Ընկերության 08.01.2008 թվականի գրությամբ:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ գնահատման առարկա չեն դարձվել Բանկի և Ընկերության միջև 22.12.2004 թվականին, 24.12.2004 թվականին, 29.09.2006 թվականին և 28.03.2007 թվականին կնքված համապատասխանաբար թիվ 129, 131, 78-06, 11-07 և 11-07ա գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվող վարկային պայմանագրերը (մասնավորապես, դրանց 4-րդ բաժինները), ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 84-Ա որոշումը, Ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանին հասցեագրված՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության 10.07.2008 թվականի գրությունը, Բանկին հասցեագրված Ընկերության 08.01.2008 թվականի գրությունը, որոնց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման դեպքում Վերաքննիչ դատարանը կհանգեք հետևության այն մասին, որ Ընկերության կողմից վարկային պարտավորությունների պատշաճ կատարումն անհնարին է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով, որպիսի պարագայում Ընկերությունը չի կարող պատասխանատվություն կրել, ուստի և պարտատիրոջը վճարել վարկային պայմանագրի հիմքով հաշվարկված տուժանքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2008 թվականի որոշման՝ «Լանդրաս» ՍՊ ընկերության նկատմամբ հաշվարկված տույժերի և տուգանքների մասին «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի պահանջը վերջնական ցուցակում հաստատելու մասը, և գործն այդ մասով ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ՀՔԴ 3/0016/02/08**
դատարանի որոշում **2009թ.**
քաղաքացիական գործ
թիվ ՀՔԴ 3/0016/02/08
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 13-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Վարդան Հայրապետյանի վճռաբեկ
բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.09.2008 թվականի որոշման
դեմ՝ ըստ հայցի Նատալյա Հակոբյանի ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի
հատուցման պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Նատալյա Հակոբյանը պահանջել է բռնագանձել Վար-

դան Հայրապետյանից 22.997.000 ՀՀ դրամ՝ որպես վնասի հատուցում:

Հարավային քաղաքացիական դատարանի 05.05.2008 թվականի վճռով հայ-ցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.09.2008 թվականի որոշմամբ Հարավային քաղաքացիական դատարանի 05.05.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդան Հայրապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի երկրորդ կետը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ, 409-րդ հոդվածները, 411-րդ հոդվածի 3-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն առանց որևէ հիմքի հաստատված է համարել, որ հայցվորին բաց թողնված օգուտի տեսքով պատճառվել է վնաս և այդ վնասը կազմում է 22.997.000 դրամ, այնինչ բաց թողնված օգուտի պարագայում պետք է հիմնավորվի պարտատիրոջ իրավունքների խախտման հանգամանքը և այն, թե որքան եկամուտ կստանար անձը քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե իրավունքը չխախտվեր: Նշված հանգամանքները պետք է ապացուցվեն այն անձի կողմից, որը նշում է, որ վնասներ է կրել:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը սահմանում է պարտավորության խախտման հասկացությունը, որի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը, իսկ նույն օրենսգրքի 409-րդ հոդվածի երրորդ կետի համաձայն՝ բաց թողնված օգուտը որոշելիս հաշվի են առնվում այն ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները: Վերը նշված հոդվածները կարգավորում են պարտավորությունների խախտման հետևանքով պատճառված վնասը, այնինչ՝ տվյալ պարագայում կողմերի միջև պարտավորական հարաբերություններ առկա չեն եղել, ուստի այդ հոդվածները կիրառելի չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերա-
քննիչ քաղաքացիական դատարանի 04.09.2008 թվականի որոշումը և օրինական
ուժ տալ Հարավային քաղաքացիական դատարանի 05.05.2008 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ
փաստերը՝

1. 10.03.2003 թվականին Նատալյա Հակոբյանի և Վարդան Հայրապետյանի
միջև կնքվել է պայմանագիր, որի համաձայն Վարդան Հայրապետյանը վաճառել է
Նատալյա Հակոբյանին Պտղոմեք գյուղում գտնվող 11.500 քմ հողամասը՝ 5.000
ԱՄՆ դոլար գումարով: Նշված պայմանագիրը նոտարական վավերացում չի ստա-
ցել և պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ
մտած 20.11.2007 թվականի վճռի համաձայն՝ դատարանը, քննելով քաղաքացիա-
կան գործն ըստ հայցի Նատալյա Հակոբյանի ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝
գումարի բռնագանձման պահանջի մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ
կողմերի միջև կնքված գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցրել է գոր-
ծարքի առոչնչության, կիրառել է անվավերության հետևանքներ և վճռել է Վարդան
Հայրապետյանից հօգուտ Նատալյա Հակոբյանի բռնագանձել 2.964.250 դրամ՝ որ-
պես անվավեր պայմանագրով ստացած գումար, 1.333.912 դրամ՝ որպես 2.964.250
դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով
հաշվարկված 2004-2007թ.թ. համար բանկային տոկոսների գումար: Միաժա-
մանակ, դատարանը վճռել է «10.03.2007 թվականից մինչև գումարի վերադարձը
5.000 ԱՄՆ դոլարին համարժեք 2.964.250 դրամ գումարի նկատմամբ հաշվարկել
համապատասխան ժամանակահատվածներում ՀՀ կենտրոնական բանկի սահմա-
նած բանկային տոկոսները և այդ գումարը ևս պատասխանող Վարդան Հայրա-
պետյանից բռնագանձել հօգուտ հայցվոր Նատալյա Հակոբյանի»:

3. 2007 թվականի դեկտեմբերի 27-ին Նատալյա Հակոբյանի կողմից Վաղար-
շապատի տարածքային նոտարական գրասենյակում տրված հայտարարության
համաձայն՝ Նատալյա Հակոբյանը հայտարարություն է տվել այն մասին, որ Արմա-
վիրի մարզի առաջին ատյանի դատարանի 20.11.2007 թվականի թիվ 2-864 վճռով
բռնագանձված 4.298.162 ՀՀ դրամն ամբողջությամբ ստացել է և նշված վճռով Վար-
դան Հայրապետյանից պարտք ու պահանջ չունի:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

*Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դա-
տարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանու-
թյամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձն,
ուն իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ

հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ սույն օրենքով կամ պայմանագրով:

Նույն օրենագրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենագրքի 1058-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշմամբ հաստատված է համարվել պատասխանողի անօրինական գործողության արդյունքում հայցվորին պատճառված վնասի առկայությունը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի հատուցման հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ բաց թողած օգուտի առկայությունը, այսինքն՝ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամուտի ստացման իրական հնարավորությունը որոշելը, յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձնահատկությունները:

Ընդ որում, բաց թողած օգուտի առկայությունը որոշելու համար նախ և առաջ պետք է հաշվի առնվի մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը, (մասնավորապես, սույն քաղաքացիական գործով այդպիսին կարող է լինել իրավունքի ենթադրյալ խախտման պահին, այսինքն՝ 5000 ԱՄՆ դոլար գումարը պահանջելու պահին այլ անձի հետ Նատալյա Հակոբյանի կողմից մեկ այլ հողամասի վերաբերյալ այլ պայմանագիր կնքած լինելը) կամ սեփականատիրոջ իրական մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունն այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ (այդպիսին կարող է լինել, օրինակ՝ իրավունքը խախտված անձի կողմից այլ անձանց ուղարկված համապատասխան օֆերտան) (*տես՝ Ջուլիետա Պետրոսյան, Կարեն Դավթյան և Արման Դավթյան ընդդեմ Թևոս Սաֆարյանի՝ պատճառված վնասների հատուցման պահանջի մասին, թիվ 3-691(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանի 30.07.2007թ. որոշումը*):

Մինչդեռ, սույն գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել բաց թողած օգուտի առկայությունը՝ առանց վերը նշված հանգամանքները հաշվի առնելու:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ապացուցված չէ Նատայա Հակոբյանի մոտ բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի առկայությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի փաստի բացակայության պայմաններում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ, 409-րդ հոդվածների, 411-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները սույն գործով կիրառելի չեն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Հարավային քաղաքացիական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.09.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Հարավային քաղաքացիական դատարանի 05.05.2008 թվականի վճռին:

2. Նատալյա Հակոբյանից բռնագանձել 1.379.820 ՀՀ դրամ, որից 689.910 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա, իսկ 689.910 ՀՀ դրամ՝ վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0036/02/08
դատարանի որոշում **2009թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ԵՔԴ /0036/02/08

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Էդ. Մուրադյան
Ա. Սկրտչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի մարտի 13-ին

դրնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ «Էքստր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ բաց թողնված օգուտը հատուցելու և գումար բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմնելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է բռնագանձել Կազմակեր-

պոթյունից 45.000.000 ՀՀ դրամ որպես բաց թողնված օգուտի հատուցում:

Երևանի քաղաքացիական դատարանի 16.06.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.12.2008 թվականի որոշմամբ Երևանի քաղաքացիական դատարանի 16.06.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի, 49-րդ հոդվածի 1-ին կետի, 51-րդ հոդվածի, 53-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ կետը:

Նշված պնդումը պատճառաբանվում է հետևյալ փաստարկներով.

Սույն գործով ենթակա էր պարզման, թե հայցվորի կողմից հիմնավորվել են այն հանգամանքները, թե առկա է, արդյոք, Կազմակերպության մեղքը, արդյոք Կազմակերպության կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ (մեղավորությամբ) իրավական ակտերի պահանջները խախտվելու արդյունքում Ընկերությունը պատճառվել է վնաս (պատճառահետևանքային կապ), արդյո՞ք Ընկերությունը կրել է վնաս, թե դատարանին ներկայացված հաշվարկները կրում են տեսական բնույթ:

Վերոնշյալ հանգամանքները պարզելու նպատակով դատարանը պետք է կիրառեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կանոնները, ինչը նրան հնարավորություն կտար հիմնավորելու այն հանգամանքը՝ արդյո՞ք Ընկերությունը կրել է վնաս, թե՛ ոչ: Ընկերության «կամայական» հաշվարկները կամ հարկային հաշվետվությունները քննարկվող պարագայում թույլատրելի և վերաբերելի ապացույցներ չեն կարող համարվել, քանի որ դրանք վերաբերում են Ընկերության 2003 թվականի շահույթին, ընդ որում՝ չի հիմնավորվում, որ դրանք ստացել է Կազմակերպության կողմից տրամադրված Ե 1 կապուղիների (վարձակալած գծերի) շահագործման հետևանքով:

Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածին տվել է տարածական մեկնաբանություն: Ընկերությունը չէր կարող կրել վնաս այնքանով, որքանով վերջինիս կողմից չեն ներկայացվել այն հիմնավորող պատշաճ ապացույցներ:

Ներկայացված հաշվարկներում Ընկերությունն ըստ էության առաջնորդվել է

բաց թողնված օգուտ հաշվարկելու տեսական մոտեցումներով, ելնելով այն նկատառումներից, որ եթե 2002 թվականի նոյեմբերի 11-ից սկսած առաջին երեք ամիսների ընթացքում նոր բաժանորդագրությունների թիվն ամսական կտրվածքով կազմել է 306,67 բաժանորդ, ապա նույնքան բաժանորդ Ընկերությունը կարող էր ունենալ նաև իր գործունեությունը Կազմակերպության ենթադրյալ կետանցը թույլ տալու ժամանակահատվածում սկսելու դեպքում, իսկ այնուհետ պահանջը հիմնավորել է բացառապես հարկային հաշվետվություններով:

Երևանի քաղաքացիական դատարանը, նկատի ունենալով վերոնշյալ փաստական հանգամանքները, օբյեկտիվորեն հանգել է այն հետևության, որ պատասխանողի կողմից հայցվորին ծառայություններ փաստացի մատուցելու օրվանից հետո ընկած ժամանակահատվածում Ընկերությունը Կազմակերպության մեղքով որևէ կերպ չէր կարող բաց թողնել օգուտ, իսկ Կազմակերպությունը չէր կարող խախտել Ընկերության իրավունքը, քանի որ Կազմակերպության կողմից այդ ժամանակահատվածում ծառայությունն արդեն իսկ մատուցվում էր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.12.2008 թվականի որոշումը և Ընկերության հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 25.06.2002 թվականին Ընկերությունը հայտ է ներկայացրել Կազմակերպությանը Ե1 կապուղիներ տրամադրելու վերաբերյալ:

2. Հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման թիվ 653 պայմանագիրը կողմերի միջև կնքվել է 26.09.2002 թվականին:

3. ՀՀ տնտեսական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 16.06.2005 թվականի թիվ S-1696 վճռով հաստատվել է այն հանգամանքը, որ Կազմակերպությունը լիցենզիայով վերագրված պարտավորությունը՝ կապված Ընկերության 25.06.2002 թվականի հայտի հիման վրա ծառայություններ մատուցելու հետ, կատարել է անպատշաճ՝ ողջամիտ ժամկետի ակնհայտ խախտմամբ. ողջամիտ է ճանաչվել 45-օրյա ժամկետը: Նշված դատական ակտով Կազմակերպությունից ամբողջությամբ բռնագանձվել է Ընկերությանը պատճառված իրական վնասի գումարը՝ 22.395.767 ՀՀ դրամի չափով:

4. Կազմակերպությունը փաստացի մատուցել է ծառայություններ Ընկերությանը 24.10.2002 թվականից:

5. Ընկերության ներկայացրած հաշվարկի համաձայն՝ հայցագինն իր մեջ չի ներառում հայտ ներկայացնելու օրվանից մինչև 11.11.2002 թվականը (Ընկերության գործունեության փաստացի սկսելու օրը) ընկած ժամանակահատվածում բաց թողնված օգուտը, այլ ներառում է այդ օրվանից հետո ընկած ժամանակահատվածը: Ընդ որում, բաց թողնված օգուտի հաշվարկը կատարվել է 36 ամսվա

համար՝ հիմք ընդունելով մեկ ամսվա ընթացքում մեկ բաժանորդագրության միջին օգուտը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ սույն օրենքով կամ պայմանագրով:

Սույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*տես՝ Նատայյա Հակոբյանի ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին, թիվ ՀՔԳ-3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009թ.-ի որոշումը*):

Ընդ որում, քննարկվող պարագայում օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը, իսկ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով, կրում է պատասխանող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը

սահմանում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատված ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի՝ համաձայն նույն հոդվածի 2-րդ կետի: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի հատուցման հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ բաց թողնված օգուտի առկայությունը, այսինքն՝ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամտի ստացման իրական հնարավորությունը որոշելը, յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձնահատկությունները:

Ընդ որում, բաց թողնված օգուտի առկայությունը որոշելու համար նախևառաջ պետք է հաշվի առնվի մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը, կամ սեփականատիրոջ իրական մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունն այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ (*տես՝ Ջուլիետա Պետրոսյանը, Կարեն Դավթյանը և Արման Դավթյանն ընդդեմ Թևոս Մաֆարյանի՝ պատճառված վնասների հատուցման պահանջի մասին, թիվ 3-691(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանի 30.07.2007թ. որոշումը*): Մասնավորապես, սույն գործով այդպիսիք կարող են համարվել Ընկերության և բաժանորդների միջև ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրերը, Ընկերության և երրորդ անձանց միջև կնքված նախնական պայմանագրերը, մտադրությունների վերաբերյալ արձանագրությունները, գրագրությունը պայմանագիր կնքելու վերաբերյալ և այլ պայմանավորվածություններ:

Սույն գործով Ընկերությունը հայցադիմում է ներկայացրել այն հիմքով, որ Կազմակերպության կողմից ողջամիտ ժամկետում կապուղիներ չտրամադրելու պատճառով Ընկերությունը կապուղիների տրամադրումից հետո կրել է բաց թողնված օգուտի տեսքով վնաս 45.000.000 ՀՀ դրամի չափով, որպիսի վնասի հաշվարկն էլ կատարվել է 36 ամսվա համար՝ հիմք ընդունելով մեկ ամսվա ընթացքում մեկ բաժանորդագրության միջին օգուտը:

Երևանի քաղաքացիական դատարանն Ընկերության հայցը մերժելիս պատճառաբանել է, որ Ընկերության ներկայացված ապացույցներով չի կարող հաստատվել այն փաստը, որ Կազմակերպության կողմից իր պարտավորությունները ողջամիտ ժամկետում չկատարելու հետևանքով Ընկերությունը պատասխա-

նողի կողմից ծառայություններ փաստացի մատուցելու օրվանից հետո կրել է բաց թողնված օգուտի տեսքով վնաս:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել բաց թողնված օգուտի առկայությունն առանց բավարար ապացույցների առկայության, քանի որ գործում առկա և դատարանի կողմից հետազոտված ապացույցներով կարող է հաստատվել միայն Կազմակերպության կողմից ոչ օրինաչափ վարքագիծ դրսևորելու հանգամանքը, որի առկայությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է վնասի գումարի բռնագանձման համար: Սույն գործով հայցվորի կողմից որևէ կերպ չեն ապացուցվել բաց թողնված օգուտի տեսքով վնասի առկայության, ենթադրյալ վնասի ու վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Երևանի քաղաքացիական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի քաղաքացիական դատարանի 16.06.2008 թվականի վճռին:

2. «Էքսոլթ» ՍՊԸ-ից հօգուտ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/0455/02/09
դատարանի որոշում 2008թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/0455/02/08
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան
Դատավորներ՝ Ա.Խառատյան
Կ.Չիլինգարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 13-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Ջելիմ Սիմոնյանի վճռաբեկ բողոքը
Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.11.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ
Անժեղիկա Գասպարյանի հայցի ընդդեմ Ջելիմ Սիմոնյանի՝ գումար բռնագանձելու
պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմնելով դատարան, Անժեղիկա Գասպարյանը պահանջել է բռնագանձել Ջե-

լին Սիմոնյանից 1.367.485 ՀՀ դրամ որպես անհիմն հարստացում:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 07.07.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.11.2008 թվականի որոշմամբ Դատարանի 07.07.2008 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Զելիմ Սիմոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ և 1099-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա այն ապացույցները, որոնցով հիմնավորվում են կողմերի փաստական փոխհարաբերությունները, նրանց կողմից ընդհանուր նյութական և այլ կարիքները բավարարելու նպատակով ներդրած միջոցների վերաբերյալ ապացույցները: Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը, քանի որ կողմերի նման փաստական հարաբերությունների պայմաններում, երբ երկուստեք առանց որևէ պարտավորության և հետ ստանալու ակնկալիքի, կամավոր, միջոցներ են ներդրվել ընդհանուր կարիքները հոգալու համար, չի կարող որակվել որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածով նախատեսված ուրիշի հաշվին գույքի ձեռք բերում կամ խնայում: Այնուհետև, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Զ. Սիմոնյանը չի ապացուցել այն հանգամանքը, որ հայցվոր Ա.Գ.ասպարյանը գիտեր պարտավորության բացակայության մասին, կամ գույքը տրամադրել է բարեգործական նպատակներով», վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ նշվածը հիմք է Դատարանի վճիռը բեկանելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.11.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 07.07.2008 թվականի վճիռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Հայցվորի կողմից պատասխանողին դրամական գումար փոխանցելու հա-

մար առկա չէ որևէ իրավական հիմք, հետևաբար ակնհայտ է, որ սույն գործի շրջանակներում անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորություններն առկա են:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Անժեյիկա Գասպարյանը և Ջելիմ Սիմոնյանը 2006 թվականից վարել են համատեղ կյանք, առանց ամուսնության գրանցման: Կողմերը «Էյշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի աշխատակիցներ են:

2. «Էյշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ 27.02.2008թ. տեղեկանքի համաձայն՝ 02.02.2005թ. բանկի կողմից Ջ.Սիմոնյանին տրամադրվել է 23.850 ԱՄՆ դոլարի բնակարանային վարկ, որն ամբողջությամբ մարվել է 25.10.2007թ., իսկ 16.03.2006թ. տրամադրվել է 8.000 ԱՄՆ դոլար վարկ, որն ամբողջությամբ մարվել է 20.02.2007թ. (հատոր 1, գ.թ.28):

3. «Էյշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ 05.03.2008թ. տեղեկանքի համաձայն՝ Ա.Գասպարյանի անվամբ սպասարկվող դրամական հաշվից 20.10.2005 թվականից մինչև 21.08.2006 թվականը թվով 9 անգամ գումարներ է փոխանցել նույն բանկում Ջ.Սիմոնյանի անվամբ սպասարկվող դոլարային հաշվին, ընդհանուրը 1.367.485 ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, նշվել է, որ գումարների փոխանցման հանձնարարականներում նշված չէ որևէ վարկի մարում կատարելու գործարքի նպատակ (հատոր 1, գ.թ. 15):

4. «Արմենիա թրավել+Մ» ՍՊԸ գլխավոր տնօրենի 27.02.2008թ. տեղեկանքի համաձայն՝ 27.06.2006 թվականին Ջ.Սիմոնյանն ընկերությունից ձեռք է բերել 2 ավիատոմս և վճարել դրանց գումարը (հատոր 1, գ.թ. 19, 20):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք Անժեյիկա Գասպարյանի կողմից Ջելիմ Սիմոնյանի բանկային հաշվին կատարված գումարային փոխանցումների արդյունքում վերջինս անհիմն հարստացել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն

հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացում անօրինական ձևով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն հարստացման առկայության փաստի ապացուցման բեռը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, դրված էր հայցվորի՝ Ա.Գ.ասպարյանի վրա: Մինչդեռ, դատաքննության ընթացքում Ա. Գ.ասպարյանի կողմից չի հիմնավորվել ներկայացված պահանջը, ինչը հաստատվում է սույն գործում առկա ապացույցներով և ստորև ներկայացված հիմնավորմամբ:

Մասնավորապես, գործի նյութերից հետևում է, որ կողմերը 2006 թվականից գտնվել են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ, վարել են համատեղ տնտեսություն և ընդհանուր միջոցների հաշվին կատարել են ծախսեր: Գործում առկա նյութերով չի հիմնավորվում փոխանցված գումարները Չ. Սիմոնյանի կողմից առանց օրենքով, այլ իրավական ակտով կամ գործարքով սահմանված հիմքի ձեռք բերելու փաստը: Այսինքն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գումարների փոխանցումը կատարվել է օրինական հիմքով, այն է՝ Ա. Գ.ասպարյանի կամքով և ցանկությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա. Գ.ասպարյանի կողմից Չ.Սիմոնյանի հաշվին փոխանցված գումարներն անհիմն հարստացում համարվել չեն կարող, քանի որ բացակայում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածով սահմանված անհիմն հարստացման պարտադիր հատկանիշները:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածին, ապա դրանում սահմանված են անհիմն հարստացման չվերադարձման դեպքերը, մինչդեռ, անհիմն հարստացման բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից նշված հոդվածի պահանջները կիրառվել չէին կարող:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով՝ Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով սմրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով, Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.11.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2008 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1516/02/08
դատարանի որոշում 2009թ.
Քաղաքացիական գործ
թիվ ԵԱԲԴ/1516/02/08
Նախագահող դատավոր՝ Վ. Ավանեսյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
	Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի հուլիսի 24-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Լալագե Հակոբյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2009 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Սվետա Հարությունյանի, Գալուբսիկ Սողոմոնյանի ընդդեմ Լալագե
Հակոբյանի՝ ապօրինի գբաղեցրած բնակարանից վտարելու, ունեցվածքի գույքա-
գրումով բնակարանի և ամառանոցի մուտքերի դռները կնքելու, բանալիներն իրենց
ի պահ հանձնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սվետա Հարությունյանը և Գալուբսիկ Սողոմոնյանը

պահանջել են վտարել Լալազե Հակոբյանին իրենց հանգուցյալ եղբոր միակ ժառանգի՝ հանգուցյալ Անանիա Սողոմոնյանի՝ Երևան քաղաքի Ազատության նրբանցք 2-րդ շենք թիվ 65 բնակարանից, և իրենց ներկայությամբ ունեցվածքի գույքագրումով կնքել նշված հասցեում գտնվող բնակարանի և Չորաղբյուրում գտնվող ամառանոցի մուտքերի դռները, իսկ բանալիները հանձնել իրենց՝ ի պահ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.09.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.02.2009 թվականի որոշմամբ Դատարանի 12.09.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լալազե Հակոբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սվետա Հարությունյանը և Գալուբսիկ Սողոմոնյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 2-րդ կետը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ, 1217-րդ, 1219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ Գալուբսիկ Սողոմոնյանին և Սվետա Հարությունյանին համարել է ժառանգությունն ընդունած ժառանգներ՝ անտեսելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում առկա է երկրորդ հերթի ժառանգ:

Վերաքննիչ դատարանը անտեսել է այն փաստը, որ հանգուցյալ Անանիա Սողոմոնյանի քույրը՝ Լալազե Հակոբյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի համաձայն, համարվելով երկրորդ հերթի ժառանգ, օրենքով սահմանված կարգով ընդունել է ժառանգությունը և ստացել ըստ օրենքի ժառանգության վկայական:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել էական սխալ, ըստ օրենքի երկրորդ հերթի ժառանգի առկայության պայմաններում ըստ օրենքի չորրորդ հերթի ժառանգներին ճանաչել է ժառանգությունն ընդունած ժառանգներ, շեղվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածների պահանջներից՝ թույլ տալով նյութական իրավունքի նորմի խախտում:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 217-րդ և 220-րդ հոդվածների պահանջները:

Վերաքննիչ դատարանը անտեսելով այն հանգամանքը, որ Լալազե Հակոբ-

յանն օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետի պահպանմամբ ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան, իր որոշման մեջ նշել է, որ վերաքննիչ բողոքի դեմ պատասխան չի ներկայացվել:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել առանց վերաքննիչ բողոքի պատասխանում նշված համապատասխան փաստական հանգամանքների և իրավական հիմնավորումների լիարժեք ուսումնասիրության՝ դրանով իսկ խախտելով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի պահանջը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.02.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 12.09.2008 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Լալագե Հակոբյանը որևէ հերթի ժառանգների թվին չի պատկանում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ երկրորդ հերթի ժառանգներ են ժառանգատուի հարազատ եղբայրները և քույրերը: Այսինքն, տարանջատվել են «համահայր կամ համամայր երբայրներ ու քույրեր» և «խորթ եղբայրներ ու քույրեր» հասկացությունները:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ռ-ազմիկ Սողոմոնյանը և Սոնա Հակոբյանը ամուսիններ են, որոնք ամուսնալուծվել են 06.10.1994 թվականին (գ.թ.9 հ.1-ին):

2. Անանիա Սողոմոնյանի մայրը Սոնա Հակոբյանն է, իսկ հայրը՝ Ռ-ազմիկ Սողոմոնյանը (գ.թ. 15, հ. 1-ին):

3. Լալագե Հակոբյանի մայրը՝ Սոնա Հակոբյանն է, իսկ հոր մասին ծննդյան վկայականում որևէ նշում առկա չէ (գ.թ. 5, հ. 1-ին):

4. Սոնա Հակոբյանը մահացել է 02.07.2006 թվականին, իսկ Ռ-ազմիկ Սողոմոնյանը՝ 20.07.2006 թվականին (գ.թ.7,10 հ.1-ին):

5. Անանիա Սողոմոնյանը մահացել է 09.10.2007 թվականին (գ.թ. 6, հ.1-ին):

6. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 09.06.2008 թվականի թիվ 5648 վկայագրի համաձայն՝ Անանիա Սողոմոնյանի գույքի նկատմամբ ժառանգ է ճանաչվել Լալագե Հակոբյանը (գ.թ. 56, հ.1-ին):

7. Գալուբսիկ Սողոմոնյանը և Սվետա Հարությունյանը հանգուցյալ Ռ-ազմիկ Սողոմոնյանի հարազատ քույրերն են (գ.թ.11,13,14, հ.1-ին):

8. Գալուբսիկ Սողոմոնյանը և Սվետա Հարությունյանը Կենտրոն նոտարական տարածքի նոտարական գրասենյակ 25.03.2008 թվականին հայտարարություն են տվել 09.10.2007 թվականին մահացած Անանիա Սողոմոնյանի ժառանգական

գույքը ընդունելու վերաբերյալ (գ.թ.18, հ.1-ին):

9. Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Է. Շաբոյանը 09.06.2008 թվականի գրությամբ խնդրել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Չեյթուն տարածքային ստրաբաժանմանը 09.06.2008 թվականին տրված թիվ 5648 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը չգրանցել, չտալ պետական գրանցում և սեփականության իրավունքի վկայական, իսկ 10.06.2008 թվականին գրությամբ հայտնել է, որ 09.06.2008 թվականին տրված թիվ 5648 ժառանգության իրավունքի վկայագիրը համարել է չեղյալ (գ.թ. 16-17, հ.1-ին):

10. Սույն գործում առկա է Լալազե Հակոբյանի 24.11.2008 թվականի վերաբնիչ բողոքի պատասխանը (գ.թ. 49, հ.1-ին):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի համաձայն՝ երկրորդ հերթի ժառանգներ են ժառանգատուի հարազատ եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1219-րդ հոդվածի համաձայն՝ չորրորդ հերթի ժառանգներ են ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրերը, քեռիները, մորաքույրերը): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրերի ու քեռիների և մորաքույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր հաջորդ հերթի ժառանգները ժառանգության իրավունք են ձեռք բերում նախորդ հերթի ժառանգների բացակայության, նրանց ժառանգությունից մեկուսացնելու, նրանց կողմից ժառանգությունը չընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու դեպքերում:

Սույն գործով առաջին ատյանի դատարանը հայցը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Անանիա Սողոմոնյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգ է ճանաչվել նրա միակ համամայր քույր Լալազե Հակոբյանը, իսկ Սվետա Հարությունյանի և Գալուբսիկ Սողոմոնյանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ ժառանգական գույքն ընդունելու հանգամանքը հաստատելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը բեկանելով, հաստատված է համարել, որ Սվետա Հարությունյանը և Գալուբսիկ Սողոմոնյանն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգությունն ընդունելու մասին դիմում են ներկայացրել ժառանգության բացման վայրի նոտարին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված հարցին

պատասխանելու համար, սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցին.

Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով համահայր կամ համամայր քույրերը կամ եղբայրները երկրորդ հերթի ժառանգներ են:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ արգելվում է ամուսնություն կնքել մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և **համահայր կամ համամայր** եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև:

Ամուսնական իրավահարաբերություններում, կարևորելով գենետիկական ներդաշնակության առաջնայնությունը, օրենսդիրը տարանջատել է «հարազատ եղբայրներ ու քույրեր» և «համահայր կամ համամայր եղբայրներ ու քույրեր» հասկացությունները՝ ամուսնության արգելք սահմանելով նաև համահայր կամ համամայր եղբայրների և քույրերի միջև, ինչը կապված է այս հարաբերությունների խիստ անձնական-ֆիզիոլոգական բնույթի հետ:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Ժառանգական իրավունք» բաժնում զետեղված նորմերում որևէ տարանջատում սահմանված չէ «հարազատ քույրեր և եղբայրներ» և «համահայր կամ համամայր քույրեր և եղբայրներ» հասկացությունների միջև, քանի որ այս հարաբերությունները գույքային բնույթի հարաբերություններ են:

Այսինքն, ժառանգական իրավահարաբերություններում անձի ժառանգական իրավունքները սահմանափակված չեն ժառանգատուի հետ համահայր կամ համամայր եղբայր կամ քույր լինելու հանգամանքով: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով ժառանգատուի «հարազատ քույրեր և եղբայրներ» հասկացությունն իր մեջ ներառում է նաև համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի հարազատ եղբայրներին և քույրերին հավասարեցված են նաև ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը և եղբայրները:

Այսինքն՝ անձն երկրորդ հերթի ժառանգ է նաև այն դեպքում, երբ ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույր կամ եղբայր է *(տես՝ Արտավազդ Հովեյանն ընդդեմ Լարիսա Հովեյանի, երրորդ անձ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաթոյանի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԱՆՂ/1823/02/09 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լալազե Հակոբյանը Անանիա Սողոմոնյանի երկրորդ հերթի ժառանգն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լալազե

Հակոբյանը օրենքով սահմանված ժամկետում ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու համար դիմել է նոտարական գրասենյակ, հետևաբար, ընդունել է ժառանգությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Գ-ալուբսիկ Սողոմոնյանը և Սվետա Հարությունյանը, որպես ըստ օրենքի չորրորդ հերթի ժառանգներ, Լալագե Հակոբյանի կողմից ժառանգությունն ընդունելու պայմաններում ժառանգության իրավունք ձեռք չեն բերել:

2) *Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը, վերաքննիչ բողոքի պատճենն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, **իրավունք ունի պատասխան ուղարկելու վերաքննիչ դատարան** և գործին մասնակցող այլ անձանց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում զեկուցող դատավորը շարադրում է վերաքննիչ բողոքի և **վերաքննիչ բողոքի դեմ ներկայացված պատասխանի փաստարկները**: Դատական կազմում ընդգրկված դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին, գործին մասնակցող անձանց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջը, վերաքննիչ բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ **պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները**:

Նշված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով գործին մասնակցող անձանց վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքը, ամրագրել է գործի քննության ընթացքում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի իրականացումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գործերի քննության ընթացքում պետք է պահպանվեն մրցակցային դատավարության սկզբունքները:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝

ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (տես՝ Անկերլ ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լալագե Հակոբյանի կողմից 24.11.2008 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը իր 05.02.2009 թվականի որոշման մեջ նշել է, որ սույն գործով վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով Լալագե Հակոբյանի վերաքննիչ բողոքի պատասխանին և չնշելով պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, 217-րդ հոդվածի 4-րդ կետը, 220 -րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 12.09.2008 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ
թիվ ԵԷԴ/0272/02/08
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0272/02/08**
2009թ.

Տ. Սահակյան
Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Հարությունյանի վճռաբեկ քողորդ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանի հայցի ընդդեմ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների, Կենտրոն նոտարական տարածքի նոտարի՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին 07.12.2007 թվականին տրված թիվ 9038 ըստ կտակի ու Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 07.12.2007 թվականին տրված թիվ 9039 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, Հրիտա Հակոբյանին փաստացի տիրապետման ուժով Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգությունն ըն-

դունած ժառանգ ճանաչելու և Հասմիկ Հարությունյանին կտակով ու փաստացի տիրապետման ուժով Հրիտա Հակոբյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին, ինչպես նաև ըստ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Հասմիկ Հարությունյանի՝ Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու և օրենքի ուժով Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Հրիտա Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին 07.12.2007 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, ինչպես նաև Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 07.12.2007 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանը, ավելացնելով հայցային պահանջի չափը, պահանջել է Հրիտա Հակոբյանին ճանաչել Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքը փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ, իսկ Հասմիկ Հարությունյանին ճանաչել Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքն ըստ կտակի և փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշմամբ Հենրիկ Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.11.2008 թվականի որոշմամբ բեկանվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշումը, և գործն ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Հակընդդեմ հայցով Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները պահանջել են անվավեր ճանաչել Հասմիկ Հարությունյանի անվամբ կատարված սեփականության իրավունքների պետական գրանցումները, ճանաչել Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ և որոշել ժառանգական բաժինը, ինչպես նաև հարգելի ճանաչել ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.04.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է ամբողջությամբ:

Վճռվել է «Մասնակի անվավեր ճանաչել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 07.12.2007 թվականին Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին և Սյուզաննա Հարությունյանին տրված և հմ. 9039 սեղանամատյանում գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության ու փաստացի տիրապետման հիմքով 12.01.2006թ. մահացած Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքի՝ Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի 3/4-րդ բաժնի, «ՎԱԶ-210630» մակնիշի, 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի /թողարկված 1984թ., շարժիչ-7637452, թափք-E1127416, տեխանձնագիր AY652531 տրված 15.09.1984թ. Երևանի պետավտոտեսչության կողմից/ 3/4-րդ բաժնի և Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում պահվող ավանդի, հասանելիք տոկոսների և փոխհատուցումների 3/4-րդ բաժնի նկատմամբ Հրիտա Գարսևանի Հակոբյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ: Հասմիկ Համազասպի Հարությունյանին ճանաչել 25.12.2007 թվականին մահացած Հրիտա Հակոբյանի ժառանգած՝ Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի 3/4-րդ բաժնի, «ՎԱԶ-210630» մակնիշի, 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի /թողարկված 1984թ., շարժիչ-7637452, թափք-E1127416, տեխանձնագիր AY652531 տրված 15.09.1984թ. Երևանի պետավտոտեսչության կողմից/ 3/4-րդ բաժնի և Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում պահվող ավանդի, հասանելիք տոկոսների և փոխհատուցումների 3/4-րդ բաժնի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ: Անվավեր ճանաչել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 07.12.2007 թվականին Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին տրված և հմ. 9038 սեղանամատյանում գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող ամբողջ անշարժ գույքի նկատմամբ, ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ժառանգ ճանաչել Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին: Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանին ճանաչել 12.01.2006 թվականին մահացած Հենրիկ Համազասպի Հարությունյանի գույքի՝ այն է Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/4-րդ բաժնի, «ՎԱԶ-210630» մակնիշի, 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի /թողարկված 1984թ., շարժիչ-7637452, թափք-E1127416, տեխանձնագիր AY652531 տրված 15.09.1984թ. Երևանի պետավտոտեսչության կողմից/ 1/4-րդ բաժնի և Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում պահվող ավանդի, հասանելիք տոկոսների և փոխհատուցումների 1/4-րդ բաժնի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժա-

ռանգներ: Անվավեր ճանաչել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից Հասմիկ Հենրիկի Հարությունյանի անվամբ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեի նկատմամբ 24.07.2008 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հմ. 2341469 վկայականը և Հասմիկ Հենրիկի Հարությունյանի անվամբ Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեի նկատմամբ 28.07.2008 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հմ. 2333345 վկայականը»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.08.2009 թվականի որոշմամբ Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասը, 1228-րդ հոդվածի 2-րդ մասը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1210-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները ժառանգատու Հենրիկ Համազասպի Հարությունյանի մահից հետո փաստացի չեն տիրապետել ու կառավարել ժառանգական գույքը, իսկ ժառանգությունն ընդունելու համար նոտարին են դիմել ժառանգության բացումից 13 ամիս անց՝ բաց թողնելով ժառանգությունն ընդունելու համար սահմանված 6-ամսյա ժամկետը: Բացի այդ, ժառանգի կողմից ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետը բաց թողնվելու դեպքում նախ պետք է ժամկետի բացթողումը հարգելի ճանաչվի, ապա նոր ճանաչվի ժառանգությունն ընդունած: Բացի այդ, Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները չեն ներկայացրել ժառանգական գույքը տիրապետելու կամ կառավարելու վերաբերյալ որևէ ապացույց:

Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը պապի՝ Հենրիկ Համազասպի Հարու-

թյունյանի կազմած կտակի մասին իմացել է վեջինիս մահվանից առաջ, ուստի ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու հիմքեր չկան:

Ի տարբերություն Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանների՝ Հրիտա Հակոբյանը փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառանգատու Հենրիկ Համագասպի Հարությունյանի ժառանգությունը:

Հրիտա Հակոբյանը մահացել է 25.12.2007 թվականին: Մինչ մահը Հրիտա Հակոբյանն իր ամբողջ գույքը կտակել է դստերը՝ Հասմիկ Հարությունյանին: Հրիտա Հակոբյանի մահվանից հետո նրա ժառանգությունը փաստացի տիրապետման ուժով ընդունել է դուստրը՝ Հասմիկ Հարությունյանը: Հասմիկ Հարությունյանը Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքն ընդունելու վերաբերյալ 12.02.2008 թվականին գրավոր հայտարարություն է տվել Երևան քաղաքի Շենգավիթ նոտարական գրասենյակ:

Ինչպես հոր՝ Հենրիկ Հարությունյանի, այնպես էլ մոր՝ Հրիտա Հակոբյանի մահվանից հետո Հասմիկ Հարությունյանը փաստացի տիրապետել և կառավարել է ժառանգատուների թողած ժառանգական գույքը, կատարել է դրանց համար սահմանված պետական վճարումները, հոգացել է դրանց պահպանման խնդիրները, ինչի վերաբերյալ դատարանին են ներկայացվել բազմաթիվ գրավոր հայտարարություններ և վճարման անդորրագրեր:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել սույն քաղաքացիական գործում առկա Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանների կողմից տրված գրավոր համաձայնությանը, որով Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանները հրաժարվել են ժառանգությամբ իրենց անցած «ՎԱՁ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայից հոգուտ Հասմիկ Հարությունյանի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.08.2009 թվականի որոշումը և փոփոխել: Այն է՝ «Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանի հայցն ընդեմ Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանների, Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից Հենրիկ Հարությունյանի անվամբ տրված 07.12.2007թ. թիվ 9038 ըստ կտակի և Հենրիկ ու Սյուզաննա Հարությունյաններին տրված 07.12.2007թ. թիվ 9039 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին բավարարել: Հայցվոր Հրիտա Հակոբյանին ճանաչել 62.0քմ բնակելի տան ընդհանուր համատեղ սեփականատեր և նրա իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանին որպես հանցուցյալ Հրիտա Հակոբյանի առաջին հերթի ժառանգի, ժառանգման իրավունքով ճանաչել ժառանգ»:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր

ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա:

Բողոք բերած անձն անտեսել է այն հանգամանքը, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանի կողմից ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը հարգելի են համարել այն հիմքով, որ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը կտակի մասին տեղեկացվել է պապի մահվան մեկ տարվա արարողության ժամանակ, որից հետո Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանն անմիջապես դիմել է նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար: Բացի այդ, Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները պապի մահից հետո փաստացի տիրապետման և կառավարման միջոցով ներկայացման իրավունքով ժառանգել են ժառանգական գույքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ամուսնությունը ԶԿԱԳ մարմնում գրանցվել է 15.02.1964 թվականին (հատոր 1-ին, գ.թ.20): Հասմիկ Հարությունյանը Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի դուստրն է, իսկ Հովհաննես Հարությունյանը՝ որդին: Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները Հովհաննես Հարությունյանի զավակներն են (հատոր 1-ին, գ.թ.64,66,101):

2. 21.01.1996 թվականի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան և հողամասի սեփականատերը Հենրիկ Համազասպի Հարությունյանն է (հիմք՝ 15.12.1995 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 1-3624 վկայագիր) (հատոր 1-ին, գ.թ.27):

3. 25.02.1997 թվականի կտակի համաձայն՝ Հենրիկ Համազասպի Հարությունյանը Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տունն ամբողջությամբ կտակել է թոռանը՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին (հատոր 1-ին, գ.թ.28):

4. Հրիտա Հակոբյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 հասցեում գտնվող տունը և հողամասը (հիմք՝ 27.08.2003 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1416071 վկայականը/ (հատոր 1-ին, գ.թ.25-26), ինչպես նաև Հենրիկ Համազասպի Հարությունյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենան /հիմք՝ 1984 թվականի թիվ 652531 ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր/ (հատոր 1-ին, գ.թ.34) և Երևանի Հայխնայրանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդը (հատոր 1-ին, գ.թ.33) ձեռք է բերվել Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ամուսնության ընթացքում:

5. Հովհաննես Հարությունյանը մահացել է 05.10.2000 թվականին (հատոր 1-

ին, գ.թ.63), Հենրիկ Համազասպի Հարությունյանը՝ 12.01.2006 թվականին (հատոր 1-ին, գ.թ.21), Հրիտա Հակոբյանը՝ 25.12.2007 թվականին (հատոր 1-ին, գ.թ.95):

6. 07.12.2007 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 9038 վկայագրի համաձայն՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը ճանաչվել է ժառանգ Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքի՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան 5/6-րդ բաժնի նկատմամբ (հատոր 1-ին, գ.թ.24):

7. 07.12.2007 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 9039 վկայագրի համաձայն՝ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները ճանաչվել են ժառանգ Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքի՝ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 տան, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի 1/6-րդ բաժնի նկատմամբ (հատոր 1-ին, գ.թ.23):

8. 24.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2341469 վկայականի համաձայն՝ Էրեբունի համայնքում գտնվող Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան և հողամասի նկատմամբ գրանցվել է Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը (հիմք՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշումը, ՀՀ ԱՆ ԳԱՀԿ ծառայության որոշակի գործողություններ կատարելու մասին 10.07.2008 թվականի որոշումը) (հատոր 2-րդ, գ.թ.32-34):

9. 28.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2333345 վկայականի համաձայն՝ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ գրանցվել է Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը (հիմք՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշումը) (հատոր 2-րդ, գ.թ.29-31):

10. Նոտարական կարգով վավերացված «ՀԱՄԱԶԱՍՅՆՈՒԹՅՈՒՆ» վերնագրված փաստաթղթով Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները 07.12.2007 թվականին համաձայնվել են, որպեսզի «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ գրանցվի Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ.83):

11. 21.12.2007 թվականի կտակի համաձայն՝ Հրիտա Հակոբյանն իրեն պատկանող գույքը կտակել է Հասմիկ Հարությունյանին (հատոր 1-ին, գ.թ.96), որը 12.02.2008 թվականին դիմել է Շենգավիթի նոտարական գրասենյակ ժառանգությունն ընդունելու համար (հատոր 1-ին, գ.թ.97):

12. 15.05.2008 թվականին Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները դիմել են Կենտրոն նոտարական գրասենյակ Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու համար (հատոր 3-ին, գ.թ.37):

13. Երևանի Լիսինյան փողոցի հասցեում բնակվող հարևանների հայտարարությունների համաձայն՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը պապի՝ Հենրիկ Համազասպի Հարությունյանի մահից հետո հաճախակի գիշերել է պապի տանը և խնամել տատին (հատոր 3-րդ, գ.թ.78, 81-82, 87):

14. Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի 4-րդ փակուղու հասցեում գտնվող հարևանների հայտարարությունների համաձայն՝ նշված հասցեի թիվ 4 տունը կառուցվել է Հրիտա Հակոբյանի որդու՝ Հովհաննես Հարությունյանի միջոցներով, իսկ Հենրիկ Համազասպի Հարությունյանի թոռանը՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին հաճախակի տեսել են նշված տան հողամասում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս և խնջույքներ կազմակերպելիս (հատոր 3-րդ, գ.թ. 83, 84, 86):

15. Մարտին Մալխասյանը ցուցմունքով Գատարանին հայտնել է, որ հորեղբոր՝ Հենրիկ Համազասպի Հարությունյանի մահից հետո թոռանը՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին հաճախակի տեսել է Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 տանը, իսկ Հասմիկ Հարությունյանը «վերջերս է գալիս գնում» (հատոր 3-րդ, գ.թ.167):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և չէր կարող իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան: Գատարանը, ժառանգին ճանաչելով ժառանգությունն ընդունած, լուծում է դրանից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը, ինչպես նաև անվավեր է ճանաչում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը: Այս դեպքում չի պահանջվում տալ ժառանգության իրավունքի նոր վկայագիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով կտակարար Հենրիկ Համազասպի Հարությունյանը մահացել է 12.01.2006 թվականին: Հենրիկ Հովհան-

նեսի Հարությունյանը 22.02.2007 թվականին դիմել է նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար: Այսինքն՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պայմաններում դիմել է նոտարական գրասենյակ: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է դիմեր դատարան՝ ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու պահանջով, ապա՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում դիմեր նոտարական գրասենյակ՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը Հենրիկ Համագասպի Հարությունյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չի ընդունել:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքը պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 3-րդ մասի համաձայն, եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ունեցություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը

հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տես՝ Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օենագրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (տես, օրինակ՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Սերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով (տես՝ Գառնիկ Նազարյանն հայցի ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125(ՎԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը, ինչպես նաև Սիշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Սկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳ-Կ ՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման: Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Սիշա Վարդանյանին

ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով սույն գործում առկա հարևանների հայտարարությունները և վկաների ցուցմունքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ընդունել են կինը՝ Հրիտա Հակոբյանը, ինչպես նաև Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տունը և հողամասը Հենրիկ Համազասպի Հարությունյանի անձնական սեփականությունն էր, հետևաբար, դրա նկատմամբ պետք է ճանաչել Հրիտա Հակոբյանին 1/2 բաժնով և Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 1/2 բաժնով, իսկ Կոտայքի մարզի գյուղ Թեղեմիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայխնայքանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի նկատմամբ պետք է ճանաչել Հրիտա Հակոբյանին 3/4 (1/2+1/2:2) բաժնով և Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 1/4 (1/2:2) բաժնով ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Բացի այդ, սույն գործի փաստերի համաձայն՝ 12.02.2008 թվականին Հասմիկ Հարությունյանը Շենգավիթի նոտարական գրասենյակում հայտարարություն է տվել մոր ժառանգությունն ըստ կտակի ընդունելու մասին: Տվյալ դեպքում Շենգավիթի նոտարական գրասենյակին ժառանգությունն ընդունելու վերաբերյալ Հասմիկ Հարությունյանի դիմումի հանձնելն ինքնին հիմք չէ վերջինիս այդ եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար, քանի որ Հրիտա Հակոբյանի ժառանգության բացման վայրը Էրեբունու նոտարական գրասենյակն է: Այսինքն՝ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվեր Էրեբունու տարածքի նոտարին: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հասմիկ Հարությունյանը ժառանգությունն ընդունելու համար Շենգավիթի նոտարական գրասենյակում հայտարարություն տալով կատարել է ժառանգատուի գույքի փաստացի տիրապետմանը և կառավարմանն ուղղված կոնկլյուզենտ գործողություններ՝ կոնկրետ նպատակ ունենալով իր տիրապետման տակ վերցնել ժառանգական գույքը:

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու

հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տես՝ Կիմա Սարգսյանի ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հասմիկ Հարությունյանը Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չի ընդունել, այլ ընդունել է փաստացի տիրապետման հիմքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ պետք է ճանաչել Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների 1/4 (1/2:2) բաժնով, Հասմիկ Հարությունյանին՝ 1/4 (1/2:2) բաժնով, իսկ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի նկատմամբ Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների՝ 3/8 (3/4:2) բաժնով, Հասմիկ Հարությունյանին՝ 3/8 (3/4:2) բաժնով ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների ժառանգական բաժինը կկազմի 3/4 (1/2+1/4), Հասմիկ Հարությունյանինը՝ 1/4, իսկ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների ժառանգական բաժինը՝ 5/8 (3/8+1/4), Հասմիկ Հարությունյանինը՝ 3/8:

Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի նկատմամբ համապատասխան բաժիններով պետք է ճանաչել Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների և Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը:

Ինչ վերաբերում է Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների կողմից ժառանգական գույքի՝ «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամա-

րանիշի ավտոմեքենայի նկատմամբ ժառանգությունից հրաժարվելու փաստը ստորադաս դատարանների կողմից անտեսվելու մասին բողոք բերած անձի պատճառաբանությանը, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

Փաստորեն նշված դրույթով ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Մինչդեռ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները «ՎԱՁ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ հրաժարվել են ժառանգությունից 07.12.2007 թվականին, Հենրիկ Համազասպի Հարությունյանի մահից շուրջ մեկ տարի հետո:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Գատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2009 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ հայցը և հակընդդեմ հայցը բավարարել մասնակիորեն:

2. Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տան և հողամասի, 3/4 բաժնի նկատմամբ ճանաչել Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների, 1/4 բաժնի նկատմամբ՝ Հասմիկ Հարությունյանի, իսկ ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի 5/8 բաժնի նկատմամբ՝ Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների, 3/8 բաժնի նկատմամբ՝ Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը:

3. Անվավեր ճանաչել Հասմիկ Հարությունյանի անվամբ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան և հողամասի նկատմամբ 24.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցումը 3/4 բաժնի մասով, իսկ ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ 28.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցումը 5/8 բաժնի մասով:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-5904/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5904/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի հոկտեմբերի 16-ին
դմբաց դատական նիստում, քննելով Անահիտ Սկրտչյանի, Նարինե, Հեղինե
և Հերմինե Պետրոսյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի
30.04.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Անահիտ Սկրտչյանի, Նարինե, Հեղինե և Հեր-
մինե Պետրոսյանների հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույ-
քի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման
(այսուհետ՝ Կադաստր)՝ 22.08.2008 թվականի թիվ ԿԴ-4998 գրությունն անվավեր
ճանաչելու և սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն պար-
տավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Անահիտ Սկրտչյանը, Նարինե, Հեղինե և Հերմինե Պետ-

րոսյանները պահանջել են անվավեր ճանաչել Կադաստրի 22.08.2008 թվականի թիվ ԿՂ-4998 գրությունը և պարտավորեցնել Կադաստրին կատարել սեփականության իրավունքի պետական գրանցում:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.04.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Անահիտ Մկրտչյանը, Նարինե, Հեղինե և Հերմինե Պետրոսյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 22-րդ, 34-րդ, 36-րդ, 43-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Դատարանը, ընդունելով այն փաստը, որ բողոք բերած անձինք զրկվել են ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրին համապատասխան սեփականության իրավունքը գրանցելու հնարավորությունից, հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ բողոք բերած անձինք «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված կարգով չեն ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը, մասնավորապես, հողամասի սահմանների փոփոխման, միավորման և բաժանման մասին պայմանագրերը: Մինչդեռ, Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ բողոք բերած անձինք լարված հարաբերությունների մեջ են Ռ-իտա և Ռ-ազմիկ Պետրոսյանների ընտանիքների հետ, հետևաբար կողմերը չեն կարող համաձայնության գալ վիճելի տան սահմանների բաժանման հարցում:

Բացի այդ, Դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Կադաստրին ներկայացվել են օրենքի պահանջներին համապատասխան փաստաթղթեր՝ 17.04.2006 թվականին տրված թիվ 859 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որտեղ կոնկրետ նշված է բողոք բերած անձանց պատկանող ժառանգական գույքի բաժինը, ինչպես նաև Երևանի Մաշտոցի շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանի 30.05.1996 թվականի վճիռը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Դատարանի 30.04.2009 թվականի վճիռը և այն փոփոխել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Մաշտոցի շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանի 30.05.1996 թվականի վճռով ժառանգական գույք հանդիսացող Երևանի Վշտունու փողոցի թիվ 52ա տան 1,6 սենյակը 15.7քմ մակերեսով հատկացվել է Ռիտա Պետրոսյանին, իսկ 1,5 սենյակը 19.4քմ բնակելի մակերեսով թողնվել է Ռաֆիկ և Ռազմիկ Պետրոսյաններին: Կոմունալ և օժանդակ հարմարությունները թողնվել են ընդհանուր օգտագործման (գ.թ. 20-21):

2) ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի 17.04.2006 թվականին տված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ 17.04.2003 թվականին մահացած Ռաֆիկ Պետրոսյանի գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են հանդիսանում կինը՝ Անահիտ Սկրտչյանը, դուստրերը՝ Հեղինե Պետրոսյանը, Հերմինե և Նարինե Պետրոսյանները: Ժառանգական գույքը, որի համար տրված է նույն վկայագիրը, բաղկացած է Երևանի Ա. Վշտունու փողոցի թիվ 52ա հասցեում գտնվող անշարժ գույքի՝ Ռաֆիկ Պետրոսյանին պատկանող բաժնից, որի պատկանելիությունը ժառանգատուին հաստատված է Երևանի Մաշտոցի շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանի 30.05.1996 թվականի թիվ 2-405 վճռով (գ.թ. 18):

3) Կադաստրի 22.08.2008 թվականի թիվ ԿԴ-4998 գրությամբ Անահիտ Սկրտչյանին հայտնվել է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ իրավունքների պետական գրանցումը չի իրականացվում գրանցման համար ներկայացված փաստաթղթերը ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու պատճառով, այն է՝ անհրաժեշտ է ներկայացնել ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված ինքնակամ շինությունների, ինչպես նաև կից օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող 26.9քմ և 20.8քմ կարգավիճակը չորոշված հողատարածքների իրավահաստատող փաստաթղթեր (գ.թ. 19):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի

իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունը յուրաքանչյուրին երաշխավորում է իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Ծանաչելով և պաշտպանելով անձի սեփականության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության անուղից հանդես եկող բոլոր պետական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք իրենց գործողություններում սահմանափակված են անձի այդ իրավունքով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պետությունը կամ որևէ այլ անձ, համաձայն օրենքի, դատարանի որոշման, վճռի, դատավճռի կամ անշարժ գույքի ձեռքբերման այլ փաստաթղթի, անշարժ գույքի միավորի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք են ձեռք բերում, ապա շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա, անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում, պետությունը կամ կոնկրետ անձն անշարժ գույքի պետական գրանցման միասնական մատյանի տվյալ անշարժ գույքի միավորի գրանցման թերթիկում գրանցվում է որպես սեփականատեր կամ օգտագործող:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ պետական գրանցումը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, այսինքն՝ չեն համապատասխանում օրենսդրությանը, կամ դրանցով խախտվել են օրենսդրության պահանջները, կազմված են օրենքով սահմանված կարգին ոչ համապատասխան, իսկ վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է այլ պատճառներով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժումը, այդ թվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ տվյալ դեպքում Կադաստրը միայն ծագած իրավունքների պետական գրանցում իրականացնող պետական մարմին է, որը ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասով իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով և ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի ուժով չի կարող անձանց ծանրաբեռնել այնպիսի պարտականություններով, որոնք սահմանված չեն օրենքով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր համատեղ և բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օբյեկտի առանձին միավորների նկատմամբ իրավունքները գրանցվում են դատարանի որոշման, վճռի, դատավճռի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործի քննության ընթացքում բողոք բերած անձինք չեն ներկայացրել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված որևէ փաստաթուղթ, հետևաբար իրավաչափ է վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման մերժումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ բողոք բերած անձինք իրենց սեփականության իրավունքը գրանցելու համար Կադաստրին ներկայացրել են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով պահանջվող փաստաթուղթը, այն է՝ 17.04.2006 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Ինչ վերաբերում է Կադաստրի 22.08.2008 թվականի թիվ ԿԳ-4998 գրությանը, որով մերժվել է վեճի առարկա գույքի նկատմամբ իրավունքի գրանցումն այն հիմքով, որ անհրաժեշտ է ներկայացնել ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված ինքնակամ շինությունների, ինչպես նաև կից օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող 26.9քմ և 20.8քմ կարգավիճակը չորոշված հողատարածքների իրավահաստատող փաստաթղթեր, ապա այն նույնպես անհիմն է, քանի որ սույն գործով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիմքով, հայցվում է միայն Ռ-աֆիլ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 30.04.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Բաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/1095/02/08
2009թ.

Բաղաքացիական գործ
թիվ ԵԱԲԳ/1095/02/08

Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ս. Նազարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռազմիկ Հարությունյանի վճռաբեկ քողորդ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի, Մանե Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի, Ամալյա Ստեփանյանի՝ երեխայի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգ սահմանելու պահանջների մասին, և ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի՝ երեխայի նկատմամբ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա Ավետիսյանին և Մերուժան Ավետիսյանին հանձնելու պահանջների մասին,

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյանները պահանջել են սահմանել երեխայի՝ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգ:

Դիմելով դատարան՝ Սոֆյա և Մերուժան Ավետիսյանները պահանջել են սահմանափակել երեխայի՝ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանի նկատմամբ Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը և երեխայի խնամքն ու դաստիարակությունը հանձնել Սոֆյա և Մերուժան Ավետիսյաններին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.03.2008 թվականի վճռով Սոֆյա և Մերուժան Ավետիսյանների հայցը՝ երեխայի նկատմամբ Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա և Մերուժան Ավետիսյաններին հանձնելու պահանջների մասին, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.06.2008 թվականի որոշմամբ Սոֆյա և Մերուժան Ավետիսյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է բեկանել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.03.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 28.07.2008 թվականի որոշմամբ նշված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.12.2008 թվականի վճռով հայցերը բավարարվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.05.2009 թվականի որոշմամբ Ռ-ազմիկ Հարությունյանի և Ամալյա Ստեփանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Դատարանի 11.12.2008 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռ-ազմիկ Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը, 51-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեն, կիրառել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեն, խախտել է ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Գատարանը սույն գործով ծանր հանգամանք է համարել Ռ-ազմիկ Հարությունյանի եղբոր կողմից Ռ-ազմիկ Հարությունյանի առաջին կնոջ՝ անչափահաս Լուիզա Հարությունյանի մոր սպանությունը: Մինչդեռ, նշված իրավիճակը ոչ մի դեպքում չի կարող դիտարկվել որպես ծանրացնող հանգամանք, քանի որ խոսքը միանգամայն տարբեր անձանց մասին է: ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքներից է անձնական պատասխանատվության սկզբունքը, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ իր կատարած արարքի համար: Ռ-ազմիկ Հարությունյանը, թեև Գրիգոր Հարությունյանի եղբայրն է, պատասխանատու չէ վերջինիս արարքների համար: Ավելին, Ռ-ազմիկ Հարությունյանը ևս տուժել է Գրիգոր Հարությունյանի արարքներից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Գատարանի կայացրած վճռով Ռ-ազմիկ Հարությունյանը կորցնում է երեխային անձամբ դաստիարակելու իրավունքը: Գատարանի վճիռը խախտում է նաև անչափահաս Լուիզա Հարությունյանի իրավունքները, քանի որ վերջինիս ընտանիքն իր հայրն է, որի խնամքից երեխային զրկելը ոչնչով արդարացված չէ, ՀՀ ոչ մի օրենսդրական ակտով նշված չէ հոր ծնողական իրավունքների սահմանափակման նման հնարավորություն: Բացի այդ, Գատարանը հաստատված է համարել այն փաստը, որ Ռ-ազմիկ Հարությունյանը, լինելով օրինավոր հայր, կատարում է բոլոր պարտականությունները, հետևաբար չկա ոչ մի փաստ, որը կվկայեր Ռ-ազմիկ Հարությունյանի իրավունքների սահմանափակման անհրաժեշտության մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը և այն Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակման և վերջինիս շփումը Լուիզա Հարությունյանի հետ երեխայի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայությամբ թույլատրելու մասով փոփոխել՝ հայցը մերժել, իսկ մնացած մասով գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Ինչպես Գատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել են, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածը, որը սահմանում է, որ ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք, ինքնին չի բացառում այլ անձանց կողմից երեխային դաստիարակելու հնարավորությունը: Այդ պնդումը հաստատվում է նաև նույն օրենսգրքի 63-րդ հոդվածով, որի բովանդակությունից ավելի քան հստակ է, որ ծնողներից մեկի կամ երկուսի ծնողական իրավունքներն էլ դատական կարգով

կարող են սահմանափակվել:

Հետևաբար, հիմնավոր չեն բողոքի փաստարկներն այն մասին, թե Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, և որ կիրառել է նույն օրենսգրքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, թե Վերաքննիչ դատարանը, երեխայի մոր սպանության փաստը գնահատելով որպես ծանր հանցանք, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, ապա այն ակնհայտ անհիմն է, քանի որ երեխայի հայրը՝ Ռազմիկ Հարությունյանը, քաջատեղյակ լինելով իր եղբոր թմրամոլ և հոգեկան հիվանդ լինելու մասին, որևէ միջոց չի ձեռնարկել իր ընտանիքը նրա ոսնձգություններից զերծ պահելու ուղղությամբ: Ավելին, Ռազմիկ Հարությունյանի եղբայրը Ֆրանսիայի իշխանությունների կողմից քրեական պատասխանատվության չի ենթարկվել, վերջինս տեղավորվել է հարկադիր բուժման, այսինքն՝ չկա որևէ երաշխիք, որ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքները չսահմանափակվելու դեպքում նա չի շարունակի շփումները եղբոր հետ, իսկ այնուհետև երեխային մասնակից չի դարձնի այդ շփումներին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սոֆյա և Սերուժան Ավետիսյանները Լիաննա Ավետիսյանի ծնողներն են: Լիաննա Ավետիսյանը 2004 թվականին ամուսնացել է Ռազմիկ Հարությունյանի հետ, և նրանք բնակություն են հաստատել Ֆրանսիայում: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում վերջիններս ունեցել են մեկ երեխա՝ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանին: Լիաննա Ավետիսյանի և Ռազմիկ Հարությունյանի հետ Ֆրանսիայում բնակվել է նաև Ռազմիկ Հարությունյանի եղբայրը՝ Գրիգոր Հարությունյանը: Վերջինս սպանել է Լիաննա Ավետիսյանին՝ մարմնական վնասվածքներ հասցնելով նաև Ռազմիկ Հարությունյանին: Գրիգոր Հարությունյանի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ Լիաննա Հարությունյանի սպանության և Ռազմիկ Հարությունյանի նկատմամբ սպանության փորձ կատարելու համար: Գործով նշանակվել են դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննություններ, որոնց արդյունքում պարզվել է, որ Գրիգոր Հարությունյանը տառապում է քրոնիկ փսիխոզով՝ արտահայտված մտավոր և հոգեկան խանգարումներով: Վերջինիս կատարած հանցագործությունը պայմանավորված էր այդ խանգարումներով, և նա ենթակա չէ քրեական պատժի և պետք է բուժվի մասնագիտացված հոգեբուժական հաստատությունում: Նշված դեպքից հետո Ֆրանսիայի սոցիալական ծառայությունը վերցրել է Լուիզա Հարությունյանին իր հովանավորության տակ՝ ժամանակավորապես տեղավորելով մանկատանը:

2) Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզի վերաքննիչ դատարանի 20.02.2006 թվականի դատտիրակչական աջակցության դատավճռի (տեղավոր-

ման դադարեցում) համաձայն՝ «դադարեցվել է Լուսիա Արությունյանի տեղավորումը Օտ Գարոնի «Սոցիալական օգնություն մանկությանը» ծառայությունում»: Նույն դատավճռով նշվել է, որ «պարոն Արությունյանն ընդունել է պայմանագրային կարգով դաստիարակչական աջակցությունը» (հատ. 1, գ.թ. 27):

3) ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 06.06.2007 թվականի դատավճռով Սոֆյա Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ (երեխային առանց ծնողների համաձայնության նրանցից բաժանելը) և դատապարտվել է ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամանակով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 1 տարի ժամկետով (հատ. 1, գ.թ. 132-134):

4) ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 05.12.2007 թվականի թիվ 323/07 բժշկական եզրակացության համաձայն՝ Ռ-ազմիկ Հարությունյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և չի տառապում: Նույն եզրակացության համաձայն՝ Ռ-ազմիկ Հարությունյանը որևէ նարկոլոգիական հիվանդությամբ չի տառապում (հատ. 2, գ.թ. 117-120):

5) Երևանի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարը 21.11.2008 թվականի «Անչափահաս Լուիզա Հարությունյանի խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու և Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքները սահմանափակելու մասին» թիվ 157 որոշմամբ, հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից կատարված երեխայի կյանքի պայմանների հետազոտության ակտը, ելնելով վերոնշյալ հանգամանքներից, անչափահասի շահերից, ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 56-րդ, 57-րդ հոդվածների պահանջներով և ՀՀ կառավարության 22.06.2006 թվականի թիվ 922-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Համայնքի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 14.11.2008 թվականի թիվ 46 որոշումը, նպատակահարմար է գտել և թույլատրել է Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյաններին մասնակցելու անչափահաս Լուիզա Հարությունյանի խնամքին ու դաստիարակությանը հետևյալ կարգով՝ յուրաքանչյուր երկուշաբթի և չորեքշաբթի օրերին՝ ժամը 16:00-ից մինչև 20:00-ն և ուրբաթ օրը ժամը 17:00-ից մինչև շաբաթ օրը ժամը 17:00-ն՝ առանց որևէ անձի միջամտության: Նույն որոշմամբ առաջարկվել է Դատարանին արգելել Լուիզա Հարությունյանին Հայաստանի Հանրապետությունից դուրս հանել որևէ այլ երկիր մինչև նրա 10 տարին լրանալը: Նշված որոշմամբ նշվել է նաև, որ Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքները սահմանափակելու նպատակահարմարության մասին Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը եզրակացություն տալ չի կարող՝ նրա արտերկրում գտնվելու պատճառով (հատ. 2, գ.թ. 252):

6) Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզի՝ երեխաների գործերով դատարանի փոխնախագահ Էրիկ Լ'Ելզուլաշի՝ Լուսիա Արությունյանի դրությանը վերա-

բերող գրութեամբ նշվել է, որ «2006թ. հունվարի 15-ի որոշմամբ Լուսիան հրատապ կարգով տեղավորվել է Երեխաների սոցիալական օգնության բաժին՝ հաշվի առնելով մոր մահը և հոր հոսպիտալացումը, որը ծանր վիրավորվել էր և չէր կարող զբաղվել երեխայով այդ ժամանակահատվածում: Ուժեղ ցնցված այդ սպանութեամբ՝ պարոն Արությունյանը չի ցանկացել այլևս մնալ համատեղ բնակության վայրում, որտեղ տեղի է ունեցել սպանությունը: Հենց որ նա «Լե Գիտ դը Լեքսլյուդ» միության միջոցով ստացել է նոր բնակարան, ես հրահանգել եմ փոխել բնակարանը 2006թ. փետրվարի 20-ի վճռով, որպեսզի զբաղվի իր աղջկանով: Նա համաձայնվել է իրականացնել դաստիարակչական հսկողություն որոշակի ժամանակահատվածում՝ իր վրա վերցնելով իր դստեր հարմարվելը: Ես ճշտում եմ, որ սա բացառապես չի նշանակում, որ նա ի վիճակի չէր նրան դաստիարակել բավարար ձևով, այլ խոսքը գնում է ծանր ժամանակահատվածում սովորական օգնության մասին կապված իր կնոջ ծանր մահվան հետ: Բացի այդ, եթե ես համաձայնվել եմ արագ կերպով աղջկան հանձնել նրան, ապա նա ուներ բոլոր երաշխիքները նրանով զբաղվելու համար» (հատ. 3, գ.թ. 74):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկվում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Նշված կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու (որքան դա հնարավոր է), իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացա-

ռությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել նրա շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

Նշված օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ելնելով երեխայի շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու, իսկ վերոգրյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն): Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար

անհրաժեշտ հոգատարությամբ: Հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը և նրան երաշխավորված իրավունքների գերակայությունը՝ օրենսդիրը սահմանել է ծնողական իրավունքների սահմանափակման հնարավորություն, որը կարող է կիրառել միայն դատարանը՝ ելնելով երեխայի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից: Մասնավորապես, ծնողական իրավունքները թույլատրվում է սահմանափակել, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդությունը, ծանր հանգամանքների առկայությունը և այլն: Ծնողական իրավունքները թույլատրվում է սահմանափակել նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքները, որ Դատարանը, կատարելով գործի փաստական հանգամանքների բազմակողմանի քննություն, համադրելով գործով ձեռք բերված բոլոր ապացույցները, իրավացիորեն հանգել է այն հետևության, որ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանի խնամքն ու դաստիարակությունն ավելի պատշաճ կիրականացվի հարազատ պապի և տատի կողմից: Դատարանի նման դիրքորոշումը հիմնավորված է բավարար ապացույցներով, մասնավորապես, Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ երեխայի հոր՝ Ռազմիկ Հարությունյանի կարգավիճակը Ֆրանսիայի Հանրապետությունում դեռևս պարզ չէ, վերջինս չունի մշտական աշխատանք, ուսանող է, ապրում է պետությունից ստացվող թոշակով, ունի նոր ընտանիք, նրա խնամքին են գտնվում կինը և երկրորդ ամուսնությունից ծնված անչափահաս երեխան: Դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ երեխայի մայրը սպանվել է Ռազմիկ Հարությունյանի եղբոր կողմից, որը մշտապես բնակվել է իրենց հետ: Երեխայի հորեղբայրը տառապում է հոգեկան հիվանդությամբ, և չկա ոչ մի երաշխիք նրա կողմից այլ նոր հանցավոր արարքների չկատարման: Դատարանի նման դիրքորոշումը միանգամայն օրինաչափ է և միանշանակ բխում է երեխայի շահերից: Անվիճելի փաստ է, որ երեխայի հորեղբայրը տառապում է հոգեկան հիվանդությամբ: Վերջինս Լուիզա Հարությունյանի մոր սպանության համար չի ենթարկվել քրեական պատասխանատվության, այլ ուղարկվել է հարկադիր բուժման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոգեկան հիվանդության պատճառով չի հասկացել իր գործողությունները և դրանց հետևանքները: Անվիճելի փաստ է նաև այն, որ Գրիգոր Հարությունյանը Ֆրանսիայի Հանրապետությունում չունի այլ հարազատներ, բացի եղբորից՝ Ռազմիկ Հարությունյանից:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանություններն անհիմն են, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգել է չհիմնավորված և սխալ հետևության, քանի որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակ-

ման համար առկա չէ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված որևէ հիմք, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը խախտել է ինչպես անչափահաս Լուիզա Հարությունյանի՝ ծնողի հետ համատեղ ապրելու և դաստիարակվելու, ծնողի հոգատարությանն արժանանալու և ծնողից դաստիարակություն ստանալու իրավունքները, այնպես էլ Ռ-ազմիկ Հարությունյանի՝ այլ անձանց հանդեպ երեխային դաստիարակելու նախապատվության, երեխայի դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար հոգ տանելու իրավունքները և պարտականությունները: Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է միայն, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից, որը դրսևորվում է հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդությամբ, ծանր հանգամանքների առկայությամբ և այլ հանգամանքներով, որոնք պետք է հաշվի առնի դատարանը՝ ելնելով կոնկրետ գործի ողջ փաստական տվյալներից, իսկ տվյալ դեպքում այդպիսի հանգամանքներ առկա չեն: Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար, իսկ տվյալ դեպքում առկա չէ որևէ ապացույց, որը կհավաստեր, որ Լուիզա Հարությունյանին Ռ-ազմիկ Հարությունյանի մոտ թողնելը վերջինիս վարքագծի հետևանքով կարող է վտանգավոր լինել երեխայի համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը Ռ-ազմիկ Հարությունյանի եղբոր կողմից Ռ-ազմիկ Հարությունյանի առաջին կնոջ՝ Լուիզա Հարությունյանի մոր սպանությունը դիտել է ծանր հանգամանքի առկայություն: Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ Լիաննա Ավետիսյանին սպանել է Գ-րիգոր Հարությունյանը՝ Ռ-ազմիկ Հարությունյանի եղբայրը, հետևաբար, վերջինիս ծնողական իրավունքները չեն կարող սահմանափակվել այլ անձի՝ նույնիսկ եղբոր կատարած հանցանքի համար, քանի որ Գ-րիգոր Հարությունյանի հանցանքը որևէ կերպ կապված չէ Ռ-ազմիկ Հարությունյանի անձի հետ, ավելին, վերջինս նույնպես տուժել է այդ հանցագործությունից՝ ստացել է մարմնական վնասվածքներ, ուստի այն չի կարող դիտվել որպես ծանր հանգամանքի առկայություն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ Դատարանը հաշվի է առել այն հանգամանքները, որ երեխայի հոր՝ Ռ-ազմիկ Հարությունյանի կարգավիճակը Ֆրանսիայի Հանրապետությունում դեռևս պարզ չէ, վերջինս չունի մշտական աշխատանք, ուսանող է, ապրում է պետությունից ստացվող թոշակով, ունի նոր ընտանիք, նրա խնամքին են գտնվում կինը և անչափահաս երեխան, ապա նշված հանգամանքները նույնպես չեն կարող հիմք հանդիսանալ Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակման համար, քանի որ Ռ-ազմիկ Հարությունյանը պետությունից ստանում է թոշակ, հետևաբար, վերջինս զրկված չէ իր երեխայի բարեկեցության ապահովման համար անհրաժեշտ

հոգատարություն ապահովելու հնարավորությունից, իսկ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհավաստեր, որ Ռ-ազմիկ Հարությունյանը չի կարող հոգ տանել Լուիզա Հարությունյանի դաստիարակության, առողջության, լիարժեք և ներդաշնակ գարգացման և կրթության մասին, ինչպես նաև ապահովել երեխայի լավագույն շահերը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել նաև գործում առկա Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզի երեխաների գործերով դատարանի փոխնախագահ Էրիկ Լ'Ելգուլաշի՝ Լուսիա Արությունյանի դրությանը վերաբերող գրությանը, որով հաստատվում է, որ նույն գրությամբ նշվածը բացառապես չի նշանակում, որ Ռ-ազմիկ Հարությունյանն ի վիճակի չէր Լուիզա Հարությունյանին դաստիարակել բավարար ձևով, այլ խոսքը ծանր ժամանակահատվածում սովորական օգնության մասին է՝ կապված Ռ-ազմիկ Հարությունյանի կնոջ մահվան հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են Լուիզա Հարությունյանի և Ռ-ազմիկ Հարությունյանի երաշխավորված իրավունքները, քանի որ առանց օրենքով սահմանված հիմքի առկայության սահմանափակվել է վերջինիս ծնողական իրավունքները, ինչի հետևանքով երեխան գրկվել է ծնողի հետ համատեղ ապրելու և դաստիարակվելու, ծնողի հոգատարությանն արժանանալու և իր ծնողից դաստիարակություն ստանալու իրավունքներից:

Միաժամանակ, հաշվի առնելով Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակման վերացման հետևանքները, մասնավորապես, Ռ-ազմիկ Հարությունյանի համար Լուիզա Հարությունյանի հետ առանց որևէ սահմանափակման տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու հնարավորությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Դատարանի վճռով Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյաններին թույլատրվել է մասնակցելու Լուիզա Հարությունյանի խնամքին և դաստիարակությանը, ու սահմանվել է տեսակցության և խնամքի կարգ, որը Դատարանի սահմանած ձևով կարող է խոչընդոտել Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների լիարժեք իրականացմանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մասերով գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը

փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ, 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2009 թվականի որոշումը և այն փոփոխել. Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի հայցը՝ երեխայի նկատմամբ Ռ-ազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա Ավետիսյանին և Մերուժան Ավետիսյանին հանձնելու պահանջների մասին, մերժել, իսկ Լուիզա Հարությունյանի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգի մասով գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սոֆյա և Մերուժան Ավետիսյաններից հօգուտ Ռ-ազմիկ Հարությունյանի բռնագանձել 5.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություն*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԳ/2177/02/08**
դատարանի որոշում **2009թ.**

Ֆաղաքացիական գործ
թիվ ԵԱՆԳ/2177/02/08

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ա. Խառատյան
Վ. Ավանեսյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գավիթ Ծաղիկյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2009 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Գավիթ Ծաղիկյանի ընդդեմ Գայանե Եսոյանի, երրորդ անձ Նոր Նորքի
թաղային համայնքի խնամակալության և հոգեբարձության մարմնի՝ հայրության
ճանաչման և երեխայի տեսակցություն սահմանելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գավիթ Ծաղիկյանը պահանջել է ճանաչել իր հայրու-

թյունը Լև Գավիթի Ետյանի (ծնված 08.05.2006 թվականին) նկատմամբ, ինչպես նաև սահմանել տեսակցության օրեր:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Գատարան) 12.11.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.02.2009 թվականի որոշմամբ Գատարանի 12.11.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գավիթ Ծաղիկյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գայանե Ետյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 36-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բողոքը մերժելիս հիմք է ընդունել ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացությունը: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ նշված եզրակացության որոշ կետեր էականորեն հակասում են մեկը մյուսին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի և օբյեկտիվ չի գնահատել նաև երեխայի ծննդյան վկայականում հոր տվյալների տակ գրանցված իր անուն՝ ազգանունը, որը գրանցվել է Գայանե Ետյանի դիմումի հիման վրա, ըստ որի՝ երեխայի հոր անուն՝ հայրանունն է «Գավիթ Վազգենի»: Այսպիսով, ակնհայտ է, որ ինքն է երեխայի հայրը: Երեխայի հայրությունը հաստատվում է նաև Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 06.11.2006 թվականի թիվ 2-4309 քաղաքացիական գործով կայացրած վճռով, որտեղ Գայանե Ետյանը հայտարարել է, որ իրենց փաստական ամուսնական հարաբերությունների ընթացքում ծնվել է Լև Ետյանը, և այդ վճիռն էլ անհրաժեշտ է Գայանե Ետյանին իրեն որպես Լև Ետյանի հայր ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը իր միջնորդությունը՝ կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, անհիմն կերպով մերժել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է րեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել համատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը իրավացիորեն հիմք է ընդունել ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացությունն այն մասին, որ «Դավիթ Ծաղիկյանի հայրությունը Լև Ետյանի նկատմամբ բացառվում է»: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե ընդհանրապես այլևեր չլինելու, այլ դրանց անհամապատասխանության մասին է, որ արդեն իսկ բացառում է ենթադրյալ հոր հայրությունը:

Ծնողների և երեխաների իրավունքներն և պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա: Իսկ վճճի դեպքում նշված փաստը կարող է հաստատվել միայն համապատասխան դատագենետիկական փորձաքննության միջոցով, որը և սույն գործով իրականացվել է Դավիթ Ծաղիկյանի միջնորդությամբ:

Գայանե Ետյանի ցուցումով երեխայի հոր անունն ու հայրանունը Դավիթ Ծաղիկյանի անվան և հայրանվան հետ համընկնելու փաստը, սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ երեխայի սերման փաստը պարզելու համար, վերաբերելի չէ, քանի որ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 06.11.2006 թվականի թիվ 2-4309 վճճի նկարագրական մասում նշված հանգամանքը չի կարող դիտվել որպես ստույգ հաստատում, որ Լև Ետյանը սերվել է Դավիթ Ծաղիկյանից, քանի որ նշված վճճով դիմումը վերաբերել է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելուն:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Շենգավիթի տարածքային բաժնի կողմից տրված Լև Դավիթ Ետյանի (ծնված 08.05.2006 թվականին) 11.05.2006 թվականի թիվ 674 ծննդյան վերաբերյալ ակտի գրանցման համաձայն՝ երեխայի հոր մասին տեղեկություններ սյունակում նշված է՝ անուն՝ Դավիթ, հայրանուն՝ Վազգեն (գ.թ. 7, հ. 1-ին):

2. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 06.11.2006 թվականի թիվ 2-4309 օրինական ուժի մեջ մտած վճճի նկարագրական մասում նշվել է, որ 2005 թվականից Գայանե Ետյանը փաստական ամուսնական հարաբերությունների մեջ է գտնվում Դավիթ Ծաղիկյանի հետ և նրա հետ, համատեղ կյանքում ունեցել են մեկ երեխա՝ Լև Դավիթի Ետյան՝ ծնված 08.05.2006 թվականին (գ.թ. 13, հ.1-ին):

3. ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական

բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացության համաձայն՝ Դավիթ Ծաղիկյանի հայրությունը Լև Ետյանի նկատմամբ բացառվում է (գ.թ. 98-100, հ.1-ին):

4. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի տեսուչ Կ. Սարգսյանի 21.05.2008 թվականի և 12.06.2008 թվականի եզրակացությունների համաձայն՝ 2005 թվականի օգոստոս ամսից քաղաքացի Գայանե Ետյանը փաստացի ամուսնացել է Դավիթ Ծաղիկյանի հետ, և մոտ 6 ամիս հետո իրենց հարաբերությունները սրվել են, որից հետո բաժանվել են: Դավիթ Ծաղիկյանը պարբերաբար գալիս է Գայանե Ետյանի տուն՝ պատճառաբանելով, որ ուզում է տեսնել իր երեխային(գ.թ.57-58 հ.1-ին):

5. Գործում առկա դատական նիստի արձանագրության համաձայն՝ Դավիթ Վազգենի Ծաղիկյանը փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ կասկածներ առաջանալու պատճառաբանությամբ դատարանում միջնորդել է կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, որը դատարանի կողմից մերժվել է:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ծնողների և երեխաների միջև իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմք է դիտում օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստը՝ սահմանելով որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստի (հայրության) որոշման դատական կարգ: Ընդ որում, **այդ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի անձից:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով

ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառնիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր ապացույցները, **փորձագետների եզրակացությունները**, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, ապա դատարանը միևնույն հարցի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը բողոքի մերժման հիմքում դրել է ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի՝ Դավիթ Ծաղիկյանի հայրությունը Լև Եսոյանի նկատմամբ բացառվում է:

Սույն գործում առկա են նաև 11.05.2006 թվականին կատարված Լև Եսոյանի ծննդյան վերաբերյալ ակտի թիվ 674 գրանցումը, համաձայն որի՝ երեխայի հոր մասին տեղեկություններ սյունակում նշված է՝ անուն՝ Դավիթ, հայրանուն՝ Վազգեն, ՀՀ ոստիկանության 21.05.2008 թվականի և 12.06.2008 թվականի եզրակացությունները, համաձայն որոնց՝ 2005 թվականի օգոստոս ամսից քաղաքացի Գայանե Եսոյանը փաստացի ամուսնացել է Դավիթ Ծաղիկյանի հետ, և մոտ 6 ամիս հետո իրենց հարաբերությունները սրվել են, որից հետո բաժանվել են: Դավիթ Ծաղիկյանը պարբերաբար այցելել է Գայանե Եսոյանի տուն՝ պատճառաբանելով, որ ուզում է տեսնել իր երեխային: Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 06.11.2006 թվականի թիվ 2-4309 օրինական ուժի մեջ մտած վճիռը, որի նկարագրական մասում նշվել է, որ 2005 թվականից Գայանե Եսոյանը փաստական ամուսնական հարաբերությունների մեջ է գտնվում Դավիթ Ծաղիկյանի հետ, և նրա

հետ համատեղ կյանքում ունեցել են մեկ երեխա՝ Լև Գավիթի Ետյան՝ ծնված 08.05.2006 թվականին: Սույն գործի քննության ընթացքում Գավիթ Վազգենի Ծաղիկյանը փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ կասկածներ առաջանալու պատճառաբանությամբ դատարանում միջնորդել է կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, որը դատարանի կողմից մերժվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և համադրելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում առկա վերը նշված փաստերը բողոք բերած անձի մոտ փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ կասկածներ առաջացնող բավարար հանգամանքներ են, հետևաբար Գավիթ Ծաղիկյանը «Կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին» միջնորդություն ներկայացնելով, ըստ էության օգտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասով և 49-րդ հոդվածի 2-րդ մասով, 62-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված ապացույց ներկայացնելու իր դատարավարական իրավունքից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նոր ապացույց ընդունելու Վերաքննիչ դատարանի իրավասությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գործին մասնակցող յուրաքանչյուր անձն է կրում իր վկայակոչված փաստերի ապացուցման պարտականությունը: Անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերելու հնարավորություն չունենալու դեպքում գործին մասնակցող անձինք իրավունք ունեն տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան:

Նույն օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա Վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին» բողոք բերած անձի միջնորդությունը ուղղված էր սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող նոր ապացույց ձեռք բերելուն, որն առաջին ատյանի դատարանում Գավիթ Ծաղիկյանը հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իրենից անկախ պատճառներով, այն է՝ առաջին ատյանի դատարանում միջնորդությունը մերժվելու հետևանքով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1325/02/09
դատարանի որոշում 2010թ.
Քաղաքացիական գործ
թիվ ԵԷԴ/1325/02/09
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Լ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վարդուհի Ոսկանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.03.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարդուհի Ոսկանյանի ընդդեմ Քրիստինե, Նարինե և Վարդան Մանուկյանների՝ Աշոտ Մանուկյանի կողմից կենդանության օրոք Մարինա Ոսկանյանի նկատմամբ հայրությունը ճանաչելու փաստը հաստատելու և այդ փաստը հաստատելու հիմքով Աշոտ Մանուկյանի ժառանգական գույքի 1/4 բաժնի նկատմամբ Մարինա Ոսկանյանի կողմից ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վարդուհի Ոսկանյանը պահանջել է հաստատել Աշոտ

Մանուկյանի կողմից կենդանության օրոք Մարինա Ոսկանյանի նկատմամբ հայրությունը ճանաչելու փաստը և այդ փաստը հաստատելու հիմքով Աշոտ Մանուկյանի ժառանգական գույքի 1/4 բաժնի նկատմամբ Մարինա Ոսկանյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.12.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.03.2010 թվականի որոշմամբ Դատարանի 14.12.2009 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդուհի Ոսկանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Քրիստինե, Նարինե և Վարդան Մանուկյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 36-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 37-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա մի շարք ապացույցներ, մասնավորապես այն, որ Աշոտ Մանուկյանը Երևանի Էրեբունու շրջանի ժողդատարանի 06.06.1996 թվականի վճռի հիման վրա ամուսնալուծվել է նախկին կնոջից: 1996 թվականից Աշոտ Մանուկյանը գտնվել է քաղաքացիական ամուսնական հարաբերությունների մեջ Վարդուհի Ոսկանյանի հետ: 18.05.1998 թվականին ծնվել է նրանց դուստր Մարինա Ոսկանյանը, որի խնամքով և դաստիարակությամբ զբաղվել է Աշոտ Մանուկյանը, ինչը հաստատվում է մի շարք ապացույցներով:

Սակայն, Վերաքննիչ դատարանը «երեխայի հայր ճանաչելու համար միակ վերաբերելի ապացույց է համարել երեխայի հոր գրավոր հայտարարությունը», մինչդեռ սույն պարագայում պետք է հաշվի առնել անձի սուբյեկտիվ վերաբերմունքը երեխայի նկատմամբ, որը կարող էր դրսևորվել ոչ միայն գրավոր նամակներով և հայտարարություններով, այլ նաև օրենքով սահմանված այլ ապացույցներով, ինչպես նաև անձի որոշակի գործողություններով, որոնք հիմք են տալիս հստակորեն ասելու /հիմնավորելու/, որ տվյալ անձը հանդիսանում է երեխայի հայրը և իրեն ընդունում է որպես երեխայի հայր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.03.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.12.2009 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն, գործում առկա յուրաքանչյուր ապացույց գնահատել է գործի բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, պարզել է վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը, որի արդյունքում կայացրել է հիմնավորված որոշում: Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Մարինա Ոսկանյանի առողջական վիճակով և դատախարակության հարցերով, համապատասխանաբար, պոլիլիմնիկա ու դպրոց հաճախելու և հետաքրքրվելու, ընդանրապես այդ երեխայի նկատմամբ հոգատար ու հայրական վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ մյուս փաստաթղթերը, հայցվորի կողմից հարցաքննված վկաների հայտարարություններն ու ցուցմունքները վկայում են միայն Աշոտ Մանուկյանի մարդկային պահվածքի և երեխայի նկատմամբ ուշադիր վերաբերմունքի մասին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Էրեբունու շրջանի ժողդատարանի 06.06.1996 թվականի վճռի հիման վրա Արուսյակ Հակոբյանը և Աշոտ Մանուկյանն ամուսնալուծվել են (1-ին հատոր, գ.թ.105):

2) Արարատյան հայրապետական թեմի հոգևոր հովվի տեղեկանքի համաձայն՝ Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը 07.07.1996 թվականին պսակադրվել են Քանաքեռի սուրբ Հակոբ եկեղեցում (հատոր 1-ին, գ.թ. 19):

3) Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի բնակ-կոմունալ բաժնի լիազոր ներկայացուցչի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ 1996 թվականից Երևանի Քանաքեռ 10-րդ փողոցի թիվ 4/6 տանը Վարդուհի Ոսկանյանի հետ համատեղ բնակվել են նրա ամուսին Աշոտ Մանուկյանը և 1998 թվականին ծնված նրանց դուստր Մարինա Ոսկանյանը (հատոր 1-ին, գ.թ. 10):

4) Մարինա Աշոտի Ոսկանյանը ծնվել է 18.05.1998 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 7):

5) Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի ՓԲ ընկերության տեղամասի մանկաբույժի 22.07.2008 թվականին տրված թիվ 86 տեղեկանքի համաձայն՝ Մարինա Ոսկանյանը 11 տարի գտնվել է բժշկական հսկողության տակ և որպես երեխայի ծնողներ ճանաչել է Աշոտ Մանուկյանին և Վարդուհի Ոսկանյանին (հատոր 1-ին, գ.թ. 21):

6) Երևանի Կոստան Չարյանի անվան թիվ 117 միջնակարգ դպրոցի տնօրենի տեղեկանքի համաձայն՝ Մարինա Աշոտի Ոսկանյանը սովորում է նույն դպրոցի 7-րդ դասարանում, դպրոցի տնօրինությունն Աշոտ Մանուկյանին ճանաչել և ընդունել է որպես երեխայի հայր, Աշոտ Մանուկյանը «պարբերաբար ներկայացել է դպրոց, հետաքրքրվել երեխայի ուսման առաջադիմությամբ, երկարօրյա պարապմունքներից հետո տարել տուն: Հայրը հաճախ էր հպարտանում, հիանում իր դուստր Մարինայով, ուրախանում նրա հաջողություններով» (հատոր 1-ին, գ.թ. 20):

7) Հարևանների և բարեկամների կողմից տրված 28.07.2009 և 17.09.2009 թվականների հայտարարությունների համաձայն՝ Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը 1996 թվականից համատեղ բնակվել են Քանաքեռ թիվ 10 փողոց 4/6 տանը (հատոր 1-ին, գ.թ.12-17, 59-64):

8) Առկա են լուսանկարներ, որտեղ Աշոտ Մանուկյանը պատկերված է Մարինա Ոսկանյանի, Վարդուհի Ոսկանյանի, բարեկամների և ընկերների հետ, ընտանեկան միջավայրում (հատոր 1-ին, գ.թ 73-74):

9) Աշոտ Մանուկյանը մահացել է 04.07.2009 թվականին (հատոր 2-րդ, գ.թ 5):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս՝ որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով քաղաքացիական դատավարության օրենսդրու-

թյամբ սահմանված նորմերով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը ծնողների և երեխաների միջև իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմք է դիտում օրենքով սահմանված կարգով կենդանության օրոք որպես երեխայի հայր հանդես գալու փաստը՝ սահմանելով երեխայի հայրության որոշման դատական կարգ: Ընդ որում, այդ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ իր կենդանության ժամանակ հոր կողմից ընդունվել է երեխայի հայրության **ճանաչման փաստը**:

Դատարանը Վարդուհի Ոսկանյանի հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ 1996 թվականից Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը գտնվել են ամուսնական փոխհարաբերությունների մեջ և բնակվել են Վարդուհի Ոսկանյանի տանը, համատեղ բնակվելու և ընդհանուր տնտեսություն վարելու ժամանակ 1998 թվականին ծնվել է Մարինա Աշոտի Ոսկանյանը, ում խնամքով և դաստիարակությամբ զբաղվել է Աշոտ Մանուկյանը, ինչը հաստատվում է գործով ձեռք բերված մի շարք ապացույցներով:

Վերաքննիչ դատարանը Քրիստինե, Նարինե, Վարդան Մանուկյանների վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ Աշոտ Մանուկյանն իր կենդանության օրոք չի ընդունել երեխայի հայրությունը, և գործով ներկայացված ապացույցները «տույն վեճի լուծման համար էական նշանակություն ունենալ չեն կարող, քանի որ ստույգ չեն ապացուցում, որ հանգուցյալ Աշոտ Մանուկյանը կենդանության օրոք իրեն ճանաչել է Մարինա Ոսկանյանի հայրը, թե ոչ»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի,

այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տես՝ Ռ-ագմիկ Մարտությանի հայցն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարտությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարտությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԳ) որոշումը):*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված չեն Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռի հիմքում դրված փաստերի թույլատրելիության և վերաբերելիության տեսանկյունից էական նշանակություն չունենալու հանգամանքը և չեն տրվել դրանց հիմնավորումները, անտեսվել են վկաների կողմից տրված վկայությունները, միևնույն ժամանակ, հիմնվելով գործով ներկայացված նույն ապացույցների և փաստերի վրա՝ կատարել է այլ եզրահանգումներ: Ուսումնասիրության առարկա են դարձել գործում ներկայացված ոչ բոլոր փաստերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ երեխայի ծնվելուց առաջ Վարդուհի Ոսկանյանը և Աշոտ Մանուկյանը բնակվել են համատեղ (դեռևս 1996 թվականից) և վարել են ընդհանուր տնտեսություն, միասին դաստիարակել և խնամել են երեխային: Բարեկամների, հարևանների և այլ անձանց մոտ Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը հանդես են եկել որպես ամուսիններ, իսկ Աշոտ Մանուկյանը՝ որպես Մարինա Ոսկանյանի հայր (հատոր 1-ին, գ.թ.12-17, գ.թ. 20, 59-64, 73-74):

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Աշոտ Մանուկյանն իր բոլոր գործողություններով՝ հարևանների, բարեկամների մոտ, դպրոցում և բուժհաստատություններում բացահայտ ներկայացել է որպես Մարինա Ոսկանյանի հայր, կատարել է այնպիսի գործողություններ, որոնք հիմք են տալիս արձանագրելու, որ Աշոտ Մանուկյանը փաստացի Մարինա Ոսկանյանի նկատմամբ ճանաչել է հայրություն:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.03.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.12.2009 թվականի վճիին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ

Վարչական գործ թիվ ՎԴ/1468/05/09

Վարչական գործ թիվ ՎԴ/1468/05/09

2009թ.

Նախագահող դատավոր՝

Ա.Առաքելյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռ-աշիդ Մելիքսեթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 09.06.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ռ-աշիդ Մելիքսեթյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ (այսուհետ՝ Կոմիտե) 23.02.2009 թվականի թիվ 1/120 հրամանը վերացնելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդը վճարելու պահանջների մասին.

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ռ-աշիդ Մելիքսեթյանը պահանջել է վերացնել Կոմիտեի 23.02.2009 թվականի թիվ 1/120 հրամանը, վերականգնել Կոտայքի տարածքային

հարկային տեսչության պետի տեղակալի պաշտոնում՝ վճարելով հարկադիր պարապուրդի համար:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.06.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն, այն է՝ վերացվել է Կոմիտեի 23.02.2009 թվականի թիվ 1/120 հրամանը: Կոմիտեից, հոգուտ Ռ-աշխ Մելիքսեթյանի բռնագանձվել է նրա միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 23.02.2009 թվականից մինչև սույն վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Պաշտոնում վերականգնելու մասով պահանջը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռ-աշխ Մելիքսեթյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, 23.02.2009 թվականի ազատման հրամանն անվավեր ճանաչելով և հաստատված համարելով փաստ, որ պետի տեղակալի հաստիքի կրճատում տեղի չի ունեցել, չէր կարող կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, այլ պարտավոր էր հայցվորին վերականգնել նախկին աշխատանքում:

Ավելին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառելիության հարցը դատաքննության առարկա չի դարձվել, և հայցվորը հնարավորություն չի ունեցել դրա վերաբերյալ ներկայացնելու իր դիրքորոշումը: Դատարանը չի գնահատել այն հանգամանքը, որ 09.02.2009 թվականին Կոտայքի տարածքային հարկային տեսչությունում ավելացել է ևս մեկ պետի տեղակալի հաստիք:

Դատարանը, հանգելով ճիշտ եզրահանգման այն մասին, որ իրականում հաստիքների կրճատում տեղի չի ունեցել. 23.02.2009 թվականի հրամանն անվավեր է ճանաչել, սակայն չի վերականգնել նախկին աշխատանքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 09.06.2009 թվականի վճռի՝ աշխատանքի վերականգնելու մասը և այն փոփոխել՝ վերականգնել նախկին աշխատանքում:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 14.05.2005 թվականի թիվ 02/537-Ա հրամանի համաձայն՝ Ռ-աշիդ Մելիքսեթյանը նշանակվել է Կոտայքի տարածքային հարկային տեսչության պետի տեղակալի պաշտոնում (գ. թ 36):

2) Կոմիտեի նախագահի 22.12.2008 թվականի թիվ Ն9637/7 ծանուցմամբ Ռ-աշիդ Մելիքսեթյանը ծանուցվել է Կոմիտեի աշխատանքային կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև աշխատանքային անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման պատճառով 23.02.2009 թվականից զբաղեցված պաշտոնից ազատվելու մասին: Միաժամանակ, տեղեկացվել է, որ հնարավորությունների սահմաններում, մինչև աշխատանքից ազատելը, կառաջարկվի այլ աշխատանք(գ. թ. 10):

3) Կոմիտեի նախագահի 09.02.2009 թվականի թիվ 1/18 հրամանի համաձայն՝ հաստատվել է Կոտայքի տարածքային հարկային տեսչության հաստիքացուցակը, համաձայն որի՝ պետի տեղակալի հաստիքն ավելացել է ևս մեկով՝ սահմանելով պետի երկու տեղակալ (գ. թ 29-31, 34):

4) Կոմիտեի նախագահի 23.02.2009 թվականի թիվ 1/120 հրամանի համաձայն՝ Ռ-աշիդ Մելիքսեթյանն ազատվել է հարկային տեսչության պետի տեղակալի պաշտոնից (գ. թ. 12):

5) Կոմիտեի նախագահի 06.02.2009 թվականի թիվ Հ-02/74-Ա հրամանի համաձայն՝ Արմեն Գրիգորյանը նշանակվել է Կոտայքի տարածքային հարկային տեսչության պետի տեղակալի պաշտոնին (գ.թ 11):

6) Կոմիտեի նախագահի 09.02.2009 թվականի թիվ 1/18 հրամանի Հավելված 23-ի՝ հաստիքացուցակի համաձայն՝ Կոտայքի տարածքային հարկային տեսչությունն ունի պետի երկու տեղակալ՝ Ալթունյան Վալերիկ և Գրիգորյան Արմեն (գ.թ 32-35):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան հրամանը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները կարող են վերականգնվել: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն

ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարելու հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Դատարանը հաստատված համարելով այն հանգամանքը, որ Ռ-աշխ Մելիքսեթյանն օրենքի խախտմամբ է ազատվել աշխատանքից, միաժամանակ, նախկին աշխատանքում վերականգնման հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ներկայումս Կոմիտեի Կոտայքի տարածքային հարկային տեսչության պետի տեղակալների պաշտոններում աշխատում են այլ անձինք՝ կիրառելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի Կոտայքի տարածքային հարկային տեսչությունում աշխատողների թվաքանակի կրճատում տեղի չի ունեցել, այլև՝ Կոմիտեի Կոտայքի տարածքային հարկային տեսչությունում ոչ միայն պահպանվել է Ռ-աշխ Մելիքսեթյանի զբաղեցրած հաստիքը. 09.02.2009 թվականի դրությամբ ավելացվել է պետի տեղակալի ևս մեկ հաստիք:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը հիմնավոր կերպով վերացրել է պատահանողի՝ 23.02.2009 թվականի թիվ 1/120 հրամանը, սակայն աշխատանքում վերականգնելու պահանջը մերժել է՝ հիմնվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմով, որը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ, ինչպես նշվեց, հաստիքների կրճատում տեղի չի ունեցել, իսկ Ռ-աշխ Մելիքսեթյանի զբաղեցրած պաշտոնում այլ անձի աշխատանքի ընդունելու փաստը հիմք չէ վերոնշյալ հոդվածի կիրառման և աշխատանքում վերականգնելու հայցի մերժման համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը քավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 09.06.2009 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3613/02/08**
դատարանի որոշում **2009թ.**
Քաղաքացիական գործ
թիվ **ԵԿԴ/3613/02/08**
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Գ. Խաչատրյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ԳՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գաֆեւճեան քանգարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտակ Մուրադյանի, Հովհաննես Դերձակյանի, Սրբուհի Հարությունյանի, Սուրեն Թադևոսյանի, Եվգենիա Մանուկյանի ընդդեմ Հիմնադրամի՝ հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արտակ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը, Սուրեն Թադևոսյանը, Եվգենիա Մանուկյանը պահանջել են անվավեր ճանաչել Հիմնադրամի թիվ 07.11.2008-Ա5, 07.11.2008-Ա4, 07.11.2008-Ա3, 07.11.2008-Ա2, 07.11.2008-Ա1 հրամանները, Արտակ Մուրադյանին, Հովհաննես Դերձակյանին, Սրբուհի Հարությունյանին, Սուրեն Թադևոսյանին և Եվգենիա Մանուկյանին վերականգնել նախկին աշխատանքում և վճարել հարկադիր պարապուրդի գումարը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.02.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.05.2009 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հիմնադրամը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացել Արտակ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը և Սուրեն Թադևոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերլուծության արդյունքում հանգել է այն հետևության, որ նշված հոդվածով սահմանվում են գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման երկու հիմք՝ 1. արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը. 2. արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատումը:

Այսինքն՝ գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում, որն առկա է սույն գործում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.05.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.02.2009 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը, առաջնորդվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 5-րդ պարբերության պահանջներով, ճիշտ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Հիմնադրամի կողմից ներկայացված մեկնաբանությունը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածին և փոփոխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 17.08.2007 թվականի Հիմնադրամի և Արտակ Մուրադյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Արտակ Մուրադյանը նշանակվել է ֆինանսական տնօրեն (հ. 1-ին, գ. թ. 25-29):

2. 30.11.2007 թվականի Հիմնադրամի և Հովհաննես Դերձակյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Հովհաննես Դերձակյանը նշանակվել է շինարարական աշխատանքների հաշվապահ (հ. 1-ին, գ. թ. 30-34):

3. 01.11.2005 թվականի Հիմնադրամի և Սրբուհի Հարությունյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Սրբուհի Հարությունյանը նշանակվել է հաշվապահ (հ. 1-ին, գ. թ. 35-39):

4. 01.06.2005 թվականի Հիմնադրամի և Սուրեն Թադևոսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Սուրեն Թադևոսյանը նշանակվել է գանձապահ (հ. 1-ին, գ. թ. 40-44):

5. 30.11.2007 թվականի Հիմնադրամի և Եվգենիա Մանուկյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Եվգենիա Մանուկյանը նշանակվել է աշխատավարձի գծով հաշվապահ (հ. 1-ին, գ. թ. 45-48):

6. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 07.11.2008 թվականի թիվ 002 որոշմամբ որոշվել է հաշվապահական հաշվառման վարումը հանձնարարել մասնագիտական կազմակերպությանը և դրանով պայմանավորված՝ հաստատվել է հիմնադրամի նոր կառուցվածքը, ինչպես նաև նոր հաստիքացուցակը (հ. 1-ին, գ. թ. 131):

7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 07.11.2008 թվականի թիվ 002 որոշմանը կից նոր հաստիքացուցակում Արտակ Մուրադյանի, Հովհաննես Դերձակյանի, Սրբուհի Հարությունյանի, Սուրեն Թադևոսյանի, Եվգենիա Մանուկյանի գրադեցրած հաստիքները՝ համապատասխանաբար՝ ֆինանսական տնօրենի, շինարարական աշխատանքների հաշվապահի, հաշվապահի, գանձապահի, աշխատավարձի գծով հաշվապահի հաստիքները բացակայում են (հ. 1-ին, գ. թ. 140-142):

8. 07.11.2008 թվականին Արտակ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը, Սուրեն Թադևոսյանը, Եվգենիա Մանուկյանը գրավոր ձևով ծանուցվել են այն մասին, որ իրենց հետ կնքված աշխատանքային պայմանա-

գրերը լուծվելու են 2008 թվականի նոյեմբերի 11-ից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով: Միաժամանակ, հայտնվել է, որ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 002 որոշմամբ հաստատվել և 2008 թվականի նոյեմբերի 7-ից գործողության մեջ է դրվել հիմնադրամի կառուցվածքը և հաստիքացուցակը, որով աշխատանքի պայմանների փոփոխման հետևանքով աշխատողների թվաքանակը, այդ թվում նաև իրենց պաշտոնը կրճատվել է (հ. 1-ին, գ. թ. 50-54):

9. Հիմնադրամի թիվ 07.11.2008-Ա5, 07.11.2008-Ա4, 07.11.2008-Ա3, 07.11.2008-Ա2, 07.11.2008-Ա1 հրամաններով աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հետևանքով աշխատողների թվաքանակի կրճատման արդյունքում լուծվել են Արտակ Մուրադյանի, Հովհաննես Դերձակյանի, Սրբուհի Հարությունյանի, Մուրեն Թադևոսյանի, Եվգենիա Մանուկյանի և Հիմնադրամի միջև կնքված աշխատանքային պայմանագրերը (հ. 1-ին, գ. թ. 20-24):

10. 01.05.2008 թվականի լիազորագրի համաձայն՝ Հիմնադրամի գործադիր տնօրեն Ջոն-Ջոսեֆ Վատերսը լիազորել է Մայքլ Դե Մարշին Հիմնադրամի անունից հանդես գալ Հիմնադրամի գործունեության հետ կապված բոլոր հարցերով, այդ թվում կառավարել աշխատակազմը, աշխատանքի ընդունել և ազատել աշխատողներին, բանակցել և ստորագրել պայմանագրեր (հ. 1-ին, գ. թ. 164):

11. 25.12.2008 թվականի Մայքլ Դե Մարշի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հիմնադրամը հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին որևէ անձի հետ չի կնքել աշխատանքային պայմանագիր և ոչ ոքի չի ընդունել աշխատանքի (հ. 1-ին, գ. թ. 143):

12. Սույն գործով չի վիճարկվել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 07.11.2008 թվականի թիվ 002 որոշումը (հ. 1-ին, գ. թ. 9):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճարել դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար Վճարել դատարանը վճարել բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցադրումը.

Արդյո՞ք հայցվորների հետ անորոշ ժամկետով կնքված պայմանագիրը լուծվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի պահանջների պահպանմամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմա-

կերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով գործատուն աշխատանքային պայմանագիրը կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: **Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:**

Վերոնշյալից հետևում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուն իր նախաձեռնությամբ իրավունք ունի լուծել, եթե աշխատողների թվաքանակի կրճատումը պայմանավորված է՝

1. արտադրության ծավալների փոփոխման անհրաժեշտությամբ,
2. տնտեսական պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ,
3. տեխնոլոգիական պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ,
4. աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ,
5. արտադրական անհրաժեշտությամբ:

Ընդ որում, օրենսդրի կողմից սահմանվել է, որ վերը նշված հիմքերի առկայության դեպքում գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պարտավոր է աշխատողին այլ աշխատանք առաջարկել նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին, իսկ նման հնարավորությունների բացակայության դեպքում լուծել աշխատանքային պայմանագիրը աշխատողի հետ՝ առանց այլ աշխատանք առաջարկելու:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գործատուի մոտ **միայն** արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, **աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև** արտադրական անհրաժեշտությունը **ինքնին բավարար չէ աշխատողի հետ** անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը:

Սույն գործով Գատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Արտակ Մուրադյանի, Հովհաննես Դերձակյանի, Սրբուհի Հարությունյանի, Սուրեն Թադևոսյանի, Եվգենիա Մանուկյանի՝ աշխատանքից ազատման համար հիմք

է հանդիսացել արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատումը և հանգել է այն հետևության, որ վերջիններս աշխատանքից ազատվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների պահպանմամբ:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը բեկանելով՝ հիմք է ընդունել այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է աշխատանքային պայմանագրի լուծման երկու առանձին պայմաններ՝ 1. արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը և 2. արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատում և հաստատված համարելով, որ Արտակ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը, Սուրեն Թադևոսյանը, Եվգենիա Մանուկյանը աշխատանքից ազատվել են աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հետևանքով աշխատողների թվաքանակի կրճատման արդյունքում, հանգել է այն հետևության, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի նախատեսում աշխատողների թվաքանակի կրճատում աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հիմքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը (*տես՝ Ռ-ազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի*

ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԳ) որոշումը):

Մինչդեռ՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կարգավորումը, հանգել է անհիմն եզրակացության այն մասին, որ օրենքը աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հիմքով աշխատողների թվաքանակի կրճատման հնարավորություն չի նախատեսում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2009 թվականի որոշումը և այն փոփոխել. Արտակ Մուրադյանի, Հովհաննես Դերձակյանի, Սրբուհի Հարությունյանի, Սուրեն Թադևոսյանի և Եվգենիա Մանուկյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/2378/02/08
դատարանի որոշում 2009թ.
Քաղաքացիական գործ
թիվ ԵԱԲԳ/2378/02/08
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ս. Սահակյան
Ս. Նազարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին

դրնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.06.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գ-այանե Գ-անիլովայի ընդդեմ Ընկերության՝ աշխատանքի վերականգնման և հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով գումարի բռնագանձման պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գայանե Դանիլովան պահանջել է վերականգնել աշխատանքում Ընկերության համապատասխան գործառույթներ իրականացնող բաժնում և Ընկերությունից բռնագանձել հարկադիր պարապուրդի գումար ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.02.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.06.2009 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գայանե Դանիլովան:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ, 131-րդ, 132-րդ և 219-րդ հոդվածները, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը:

Դատարանն Ընկերությանը պարտավորեցրել է Գայանե Դանիլովայի հետ կնքել պայմանագիր և նրան նշանակել աշխատանքի համապատասխան գործառույթների իրականացնող բաժնում, այլ ոչ թե նախկին պաշտոնում, որը ինքնին անօրինական է:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունը Գայանե Դանիլովայի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ 10.09.2008 թվականին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ Գայանե Դանիլովան հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.06.2009 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Գայանե Դանիլովային առաջարկվել է աշխատանք, որը չի համապատասխանում նրա մասնագիտական ունակություններին: Ընկերությունում Գայանե Դանիլովայի կողմից նախկինում զբաղեցրած պաշտոնը «Գործառնությունների տնօրինությունից» տեղափոխվել է «Վաճառքի տնօրինություն», ուստի նշված ստորաբաժանումը չի վերացել, այլ ընդամենը տեղափոխվել է և ընդգրկվել է մեկ այլ տնօրինության կազմի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Գայանե Դանիլովայի միջև 14.04.2008 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագիր, և Գայանե Դանիլովան նշանակվել է աշխատանքի գործառնությունների տնօրինությունում միջազգային օպերատորների հետ համագործակցության ավագ մասնագետի պաշտոնում (գ. թ. 5-8):

2) Ընկերության տնօրենների խորհրդի 08.08.2008 թվականի թիվ 05/08 որոշմամբ հաստատվել է Ընկերության նոր կազմակերպական կառուցվածքը, որում բացակայում է գործառնությունների տնօրինության ֆիքսված կապի բիզնեսի տեխնիկական տնօրինության միջօպերատորական համագործակցության և ինտերնետ ռեսուրսների ծառայության միջազգային օպերատորների հետ համագործակցության բաժինը (գ. թ. 78-87):

3) Ընկերությունը 10.09.2008 թվականի ծանուցմամբ Գայանե Դանիլովային հայտնել է, որ 28.08.2008 թվականից Ընկերությունում գործողության մեջ է դրվել նոր կազմակերպական կառուցվածքը, որում բացակայում է «Գործառնությունների տնօրինության ֆիքսված կապի բիզնեսի տեխնիկական տնօրինության միջօպերատորական համագործակցության» բաժինը: Միաժամանակ առաջարկվել է շարունակել աշխատանքային հարաբերությունները «Վաճառքի տնօրինության» «Վաճառքի աջակցման» բաժնի «Վաճառքի որակի վերահսկման» խմբում Վաճառքի որակի վերահսկման ավագ մասնագետի պաշտոնում (գ. թ. 9):

4) Գայանե Դանիլովան 14.09.2008 թվականի դիմումով հրաժարվել է Ընկերության առաջարկած վաճառքի որակի վերահսկման ավագ մասնագետի պաշտոնից (գ. թ. 11):

5) Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 07.10.2008 թվականի թիվ Կ-4112 հրամանով լուծվել է Ընկերության և Գայանե Դանիլովայի միջև կնքված թիվ 2127 աշխատանքային պայմանագիրը (գ. թ. 52):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմ-

քերով գործատուն աշխատանքային պայմանագիրը կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա **մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը**, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք, այլ պարտադիր պայման է համարվում, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի **մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը**, առողջական վիճակին: Միայն աշխատողի կողմից մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան առաջարկված աշխատանքից հրաժարումը կարող է հանգեցնել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծմանը:

Սույն գործով Գ-ատարանի կողմից հայցի բավարարման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ հայցվորն ունի բարձրագույն տեխնիկական կրթություն՝ էլեկտրոնային տեխնիկական ինժեների որակավորմամբ, իսկ պատասխանողը որևէ ապացույցով չի հիմնավորել, որ առաջարկված աշխատանքը համապատասխանում է հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը կամ որակավորմանը:

Սույն քաղաքացիական գործի համար էական նշանակություն ունի այն իրավական հարցի պատասխանը, թե ՀՀ աշխատանքային օրենսգրքի «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունները պետք է մեկնաբանվեն միայն որպես տվյալ անձին տրված որակավորումը հավաստող վկայականով հավաստվող մասնագիտությանը համապատասխանող աշխատանք, թե դրանք պետք է ավելի լայն մեկնաբանվեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ-ատարանի նման եզրահանգումն հիմնված է «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունների սահմանափակ մեկնաբանության հիման վրա, առանց հաշվի առնելու օրենքի իմաստը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ օրենքի վերոնշյալ հոդվածը նպատակ է հետապնդում պաշտպանության տակ առնելու աշխատողներին այն բոլոր դեպքերում, երբ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) **նախկինում կատարած աշխատանքին** համարժեք որակավորում և

մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության տնօրենների խորհրդի 08.08.2008 թվականի թիվ 05/08 որոշմամբ հաստատվել է Ընկերության նոր կազմակերպական կառուցվածքը, որում բացակայում է գործառնությունների տնօրինության ֆիքսված կապի բիզնեսի տեխնիկական տնօրինության միջօպերատորական համագործակցության և ինտերնետ ռեսուրսների ծառայության միջազգային օպերատորների հետ համագործակցության բաժինը, այսինքն՝ հաստիքը, որտեղ աշխատել է Գայանե Դանիլովան, աշխատանքների կազմակերպման փոփոխության արդյունքում այլևս գոյություն չունի, և Գայանե Դանիլովայի նախկին հաստիքի ստեղծումն անհնար է: Փաստորեն, Գայանե Դանիլովայի հետ աշխատանքային պայմանագրի լուծումը պայմանավորված է աշխատանքային պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ, և նրան առաջարկվել է վաճառքի որակի վերահսկման ավագ մասնագետի պաշտոնը, որից նա հրաժարվել է:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է քննության առարկա դարձվի այն հարցը, թե արդյոք Գայանե Դանիլովային առաջարկված աշխատանքը **նախկինում կատարած աշխատանքին** համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող աշխատանք է:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 05.06.2009 թվականի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.06.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԳ/0605/02/08**
դատարանի որոշում **2009թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ԵԱԲԳ/0605/02/08

Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Վ. Ավանեսյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի նոյեմբերի 06-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկե-
րություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2009
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անաստաս Գիշյանի, Նորայր Եղիկյանի ընդդեմ
Ընկերության՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար
բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Անաստաս Գիշյանը և Նորայր Եղիկյանը պահանջել են
վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել Ընկերությունից հարկադիր
պարապուրդի գումարը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 16.04.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.09.2008 թվականի որոշմամբ Դատարանի 16.04.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Դատարանի 10.12.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ դատարանի 30.04.2009 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Անաստաս Գիշյանը և Նոբայր Եղիկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ հոդվածների պահանջները, սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը, չի կիրառել նույն օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն փաստը, որ Ընկերությունում բացակայում է հայցվորների զբաղեցրած պաշտոնի անհրաժեշտությունը:

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը, հանգել է այն հետևության, որ Ընկերությունը ցանկացած պահի, ընդհուպ՝ գործի դատական քննության ընթացքում, կրում է նշված նորմով սահմանված՝ հայցվորներին այլ պաշտոն առաջարկելու պարտավորությունը և նշել, որ դատարանի վճիռն անփոփոխ թողնելով՝ չի ակնկալում հայցվորների վերականգնում գոյություն չունեցող պաշտոնում, այլ «աշխատանքային հարաբերություններ» արտահայտությամբ նկատի է ունենում կողմերի միջև այնպիսի իրավիճակի վերականգնում, որպիսին առկա կլիներ, եթե Ընկերությունը հայցվորներին առաջարկեր վերը նշված նորմով սահմանված այլ աշխատանք:

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հիմք է ընդունել Ընկերության թվով 6 նախկին աշխատակիցների՝ նոտարական կարգով վավերացված հայտարարությունը, 12 համայնքների ղեկավարների տեղեկանքները, ինչպես նաև բանալիների հանձնման-ընդունման գրասենյակային գիրքն այն դեպքում, երբ նոտարական կարգով վավերացված հայտարարությունը ձեռք է բերվել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտմամբ, տեղեկանքները տրվել են Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն

տրամադրելու իրավունք և լիազորություն չունեցող տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից, իսկ հանձնման-ընդունման գիրքն ընդհանրապես նշանակություն և կարևորություն չունի Ընկերության գործավարության, աշխատանքի կազմակերպման կամ գույքի անվտանգության պահպանման տեսանկյունից, հակառակ դեպքում՝ այն հաստատված և կնքված կլիներ Ընկերության կողմից ու հայցվորների ձեռքում հայտնվելու փոխարեն կգտնվեր Ընկերությունում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.04.2009 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Սույն գործում բացակայում են Ընկերության աշխատողների քանակը և պաշտոնների անվանումները սահմանող համապատասխան թույլատրելի ապացույցները, մասնավորապես՝ Ընկերությունում հայցվորների մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանք չլինելու մասին փաստաթուղթը: Այդպիսի ապացույցներ ներկայացնելն Ընկերության անուղղակի պարտականությունն էր, քանի որ հայցվորները նման ապացույցներ կառող էին ձեռք բերել բացառապես Ընկերությունից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Անաստաս Գիշյանի միջև 13.11.2006 թվականին անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Անաստաս Գիշյանն Ընկերությունում նշանակվել է աշխատանքի տեխնիկի պաշտոնում և իր պարտականություններն ու առաջադրանքներն իրականացնելու է Հեռահաղորդակցության Համակարգի Գլխավոր Տնօրինությունում (գ.թ. 7-10, հ. 1):

2) Ընկերության և Նորայր Եղիկյանի միջև 13.11.2006 թվականին անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Նորայր Եղիկյանն Ընկերությունում նշանակվել է աշխատանքի ավագ ճարտարագետի պաշտոնում և իր պարտականություններն ու առաջադրանքներն իրականացնելու է Հեռահաղորդակցության Համակարգի Գլխավոր Տնօրինությունում (գ.թ. 11-15, հ. 1):

3) Ընկերության գլխավոր տնօրենի «Անալոգ ԱՀԿ-ների շահագործումից դուրս հանման վերաբերյալ» 21.12.2007 թվականի թիվ 1189 հրամանի համաձայն՝ շահագործումից հանվել է Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի և Բագրատաշեն գյուղի անալոգ կայանը: Մարդկային ռեսուրսների գլխավոր տնօրինությանը հանձնարարվել է կազմակերպել վերը նշված ԱՀԿ-ների շահագործումից դուրս գալու հետևանքով աշխատողների թվաքանակի կրճատման պատճառով աշխատանքից ազատման ներկայացվող աշխատակիցների հետ պայմանագրերի դադարեցման աշխատանքները (գ.թ. 47, հ. 1):

4) Անաստաս Գիշյանին 14.01.2008 թվականին հասցեագրված ծանուցման համաձայն՝ Ընկերությունը հայտնել է Ընկերությունում տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխությամբ պայմանավորված՝ Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագիրը 17.01.2008 թվականից լուծելու մասին, իսկ Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի նույն օրվա թիվ 052-Կ հրամանի համաձայն՝ Անաստաս Գիշյանի հետ 13.11.2006 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 115-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով 17.01.2008 թվականից համարվել է լուծված (գ.թ. 5, հ. 1):

5) Նորայր Եղիկյանին 14.01.2008 թվականին հասցեագրված ծանուցման համաձայն՝ Ընկերությունը հայտնել է Ընկերությունում տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխությամբ պայմանավորված՝ Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագիրը 22.01.2008 թվականից լուծելու մասին, իսկ Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի նույն օրվա թիվ 050-Կ հրամանի համաձայն՝ Նորայր Եղիկյանի հետ 13.11.2006 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 115-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով 22.01.2008 թվականից համարվել է լուծված (գ.թ. 6, հ. 1):

6) Ընկերության 14.03.2008 թվականի տեղեկանքների համաձայն՝ Անաստաս Գիշյանը և Նորայր Եղիկյանն աշխատանքից ազատվել են Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի և Բագրատաշեն գյուղի անալոգ կայանը շահագործումից հանելու կապակցությամբ: Հիմք՝ Ընկերության 21.12.2007 թվականի թիվ 1189 հրամանը: Ընկերությունում առկա չէ նրանց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը համապատասխան այլ աշխատանք (գ.թ. 57-58, հ. 1):

7) Ընկերության՝ Նոյեմբերյանի բիզնես միավորի պետի 06.05.2008 թվականի տեղեկանքի համաձայն՝ Նոյեմբերյանի ԱԿՀ-ն և Բագրատաշենի ԱՀԿ-ն թվայնացնելուց հետո Նոյեմբերյանի տարածքում մնացել է 12 անալոգային ԱՀԿ, որոնցից 5-ում կան աշխատողներ, իսկ մնացածում կայանային աշխատողներ չկան: Նշված չսպասարկվող կայանները **կարիքն առաջանալու դեպքում սպասարկվում են կայանային խմբի ղեկավարի և ճարտարագետի կողմից:** Նշված կայաններում փոխարինվել են ակումուլյատորային մարտկոցները, որոնք չսպասարկվող են: Եռամսյակը մեկ անգամ կայանային խմբի ղեկավարի կողմից կազմված ճարտարագետների խմբով կատարվել են գյուղական ԱՀԿ-ների ստուգայցեր, որի մեջ ժամանակ առ ժամանակ ընդգրկվել է Նոյեմբերյանի ԱՀԿ-ի ճարտարագետ Նորայր Եղիկյանը: Անաստաս Գիշյանը սպասարկել է Նոյեմբերյան քաղաքի ԱՀԿ-ի էլեկտրասնուցման համակարգը, **որի կարիքը թվայնացնելուց հետո չկա:** Նշված 12 գյուղական անալոգային ԱՀԿ-ների սպասարկումն իրականացնելու հարցում **նախկին աշխատողների անհրաժեշտությունը չկա** (գ.թ. 11, հ. 2):

8) Ընկերության՝ Տավուշի տարածքային կենտրոնի պետի 07.05.2008 թվականի տեղեկանքի համաձայն՝ Նոյեմբերյանի բիզնես միավորումում գործում են

մեկ թվային կայան Նոյեմբերյան քաղաքում և 12 գյուղական անալոգային կոորդինատային կայաններ: Բոլոր գյուղական ԱՀԿ-ները, խտացնող սարքավորումները և էլ. սնուցման համակարգերը 2007 թվականին մոդեռնիզացվել և համակցվել են Նոյեմբերյան քաղաքի թվային կայանին, դրանց համար սպասարկող անձնակազմ չի պահանջվում: Թվայնացվել են երկու կայան և շահագործումից հանվել են, համապատասխանաբար, երկու կայան: Հայցվորները գյուղական կայանների սպասարկմամբ չեն զբաղվել, սակայն ճարտարագետների խմբի կազմում ժամանակ առ ժամանակ (ոչ մշտական) կատարել են ստուգայցեր գյուղական կայաններ (ոչ բոլոր): **Գործող գյուղական մոդեռնիզացված ԱՀԿ-ների սպասարկման համար նախկին աշխատակիցների անհրաժեշտությունը չկա** (գ.թ. 12, հ. 2):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.

Արդյո՞ք Դատարանը պետք է վերականգնի աշխատողին նախկին աշխատանքում այն դեպքում, երբ գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է աշխատողը և առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով գործատուն աշխատանքային պայմանագիրը կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ և ընդունելով հայցվորների նախկին պաշտոնի գոյու-

թյուն չունենալու փաստը, հանգել է այն հետևության, որ կողմերի միջև հետագա աշխատանքային հարաբերությունները վերականգնելու անհնարինությունն ապացուցելու փոխարեն պատասխանողը սահմանափակվել է միայն հայցվորների նախկին աշխատանքի գոյություն չունենալու փաստի ապացուցմամբ և չի կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ հայցվորներին այլ աշխատանք առաջարկելու վերաբերյալ, ինչպես նաև չի ապացուցել այդ պահանջի կատարման անհնարինությունը:

Մինչդեռ, սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքում աշխատողներ Անաստաս Գիշյանի և Նորայր Եղիկյանի նախկին հաստիքային միավորը գոյություն չունի, իսկ **գործող գյուղական մոդեռնիզացված** անալոգային կողողինատային կայանների **սպասարկման համար նախկին աշխատակիցների անհրաժեշտությունը չլինելու, ինչպես նաև չսպասարկվող կայանները կարիքն առաջանալու դեպքում կայանային խմբի ղեկավարի և ճարտարագետի կողմից սպասարկվելու պայմաններում**, գործատուի մոտ **բացակայում են նաև նրանց** մասնագիտական պատրաստվածությունը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանքներ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման մեջ վկայակոչված վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերին՝ Ընկերության թվով 6 նախկին աշխատակիցների՝ նոտարական կարգով վավերացված հայտարարությանը, Տավուշի մարզի 12 համայնքների ղեկավարների տեղեկանքներին, ինչպես նաև բանալիների հանձնման-ընդունման գրասենյակային գրքին, ապա այդ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք միայն տեղեկություններ են պարունակում մինչև հայցվորներին աշխատանքից ազատելը Ընկերության Նոյեմբերյանի տարածաշրջանի ԱՀԿ-ներում նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ և չեն կարող հիմնավորել այդ աշխատանքի հետագա անհրաժեշտությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորները չեն ապացուցել Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքում իրենց նախկին հաստիքային միավորի գոյություն ունենալու, ինչպես նաև Ընկերությունում իրենց մասնագիտական պատրաստվածությունը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք լինելու փաստերը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցվորների հետ աշխատանքային պայմանագրերը լուծվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի պահանջների պահպանմամբ:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշ-

խատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան հրամանը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, **աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները կարող են վերականգնվել:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարելու հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Վերոնշյալ հոդվածով նախատեսվում է գործատուի պարտավորությունը աշխատողին վճարելու հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար այն դեպքում, երբ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը **լուծվում է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով:** Հետևաբար, Ընկերության կողմից Անաստաս Գ-իշյանի և Նորայր Եղիկյանի աշխատանքային պայմանագրերն օրինական հիմքերով և **օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանմամբ լուծվելու պայմաններում** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ:

Վճարել բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճարել բողոքում նշված հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճարել դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք

ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Անաստաս Գիշյանի և Նորայր Եղիկյանի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Բաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2894/02/08
դատարանի որոշում 2009թ.
Բաղաքացիական գործ
թիվ ԵԿԴ/2894/02/08
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի հունիսի 26-ին

դմբաց դատական նիստում, քննելով Սիրանուշ Բեգիրզանյանի վճռաբեկ քողորդ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սիրանուշ Բեգիրզանյանի ընդդեմ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան)՝ աշխատանքից ազատելու հրամանը վերացնելու, աշխատանքում վերականգնելու, միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սիրանուշ Բեգիրզանյանը պահանջել է վերացնել աշխատանքից ազատելու 25.08.2008 թվականի թիվ Հ117/ԿԲ հրամանը, վերականգնել նախկին աշխատանքում և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել միջին աշխատավարձը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 19.11.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.02.2009 թվականի որոշմամբ Դատարանի 19.11.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սիրանուշ Բեգիրզանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը.

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պատասխանողը, անհատական իրավական ակտով թույլ տալով իրեն բացակայել աշխատանքից, պահպանելով իր աշխատավարձը, իրեն տրամադրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված *այլ արձակուրդ*, որը չպետք է նույնացնել ամենամյա արձակուրդի հետ և ոչ էլ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով կանոնակարգվող լրացուցիչ արձակուրդի հետ, և որի ընթացքում աշխատողին աշխատանքից ազատելը որակվում է որպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը.

Վերաքննիչ բողոքում պատասխանողի կողմից վիճարկվել են հետևյալ փաստերը՝ հայցվորը բաց է թողել իր խախտված իրավունքների համար դատական պաշտպանության դիմելու օրենքով սահմանված ժամկետը, հայցվորը ճապոնիայում կազմակերպված միջոցառմանը մասնակցել է սեփական նախաձեռնությամբ, այլ ոչ թե որպես համալսարանի ներկայացուցիչ:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի շրջանակներից և խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասը, բավականին ընդարձակ անդրադարձ է կատարել պատասխանողի կողմից ամբիոնի վերակառուցման և այդ կապակցությամբ հաստիքների՝ դրա հիման վրա աշխատողների թվաքանակի կրճատման, աշխատատեղերի համարման ընթացակարգերին, ինչի մասին վերաքննիչ բողոքում չի խոսվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.02.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.11.2008 թվականի վճռին:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 01.12.1998 թվականին Սիրանուշ Բեգիրզանյանը պայմանագրային կարգով ընդունվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական և կենսաբանական ֆիզիկայի ինֆորմատիկայի և բժշկական սարքավորումների ամբիոնի ասպիրանտ՝ համատեղությամբ, 0,25 դրույքով: 01.11.2002 թվականին անցել է նույն ամբիոնում հիմնական աշխատանքի՝ 0,5 դրույքով, իսկ 17.03.2005 թվականին մրցույթով ընդունվել է դոցենտի պաշտոնակատար նույն ամբիոնում՝ 0,5 դրույքով (գ.թ. 13):

2. 09.06.2008 թվականի թիվ 53 գ հրամանի պարագրաֆ 3-ի համաձայն՝ բժշկական և կենսաբանական ֆիզիկայի, ինֆորմատիկայի և բժշկական սարքավորումների ամբիոնի դոցենտ Սիրանուշ Բեգիրզանյանին թույլատրվել է 2008 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2008 թվականի սեպտեմբերի 2-ը մեկնել ք. Օսակա, Ճապոնիա՝ կոնգրեսին մասնակցելու համար՝ աշխատավարձի պահպանմամբ (գ.թ. 9):

3. 23.06.2008 թվականի ծանուցման համաձայն՝ Սիրանուշ Բեգիրզանյանը ծանուցվել է այն մասին, որ հիմք ընդունելով համալսարանի ռեկտորի 06.06.2008 թվականի հրամանը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Սիրանուշ Բեգիրզանյանի հաստիքը կրճատվում է, և նույն թվականի օգոստոսի 25-ից աշխատանքային պայմանագիրը լուծվելու է (գ.թ. 31):

4. 25.08.2008 թվականի թիվ Հ 117/ԿԲ հրամանի պարագրաֆ 22-ի համաձայն՝ բժշկական և կենսաբանական ֆիզիկայի ինֆորմատիկայի և բժշկական սարքավորումների ամբիոնի 0,5 դրույքով դոցենտ Սիրանուշ Բեգիրզանյանը ազատվել է աշխատանքից՝ ամբիոնի վերակառուցման՝ լուծարման և հաստիքի կրճատման կապակցությամբ (գ.թ. 11):

5. 17.12.2008 թվականի վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի, 10-րդ հոդվածի և 265-րդ հոդվածի խախտման հիմքերով (գ.թ. 77, 194):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ աշխատանքից ազատման անվերապահ արգելք է աշխատողի արձակուրդում գտնվելը:

Նույն օրենսգրքի 171-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նպատակային է համարվում ուսումնական արձակուրդը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 174-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին ուսումնական հաստատության միջնորդությամբ տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝ ընթացիկ քննություններին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր քննության համար՝ երեք օր, ստուգարքներին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր ստուգարքի համար՝ երկու օր, լաբորատոր աշխատանքների կատարման համար՝ ուսումնական պլանով նախատեսված օրերի քանակով, դիպլոմային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության համար՝ երեսուն օր, պետական (ավարտական) յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար՝ վեց օր:

Սույն գործով առաջին ատյանի դատարանը, հայցի բավարարման հիմքում դնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված օրենքի անալոգիան:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելիս գտել է, որ առաջին ատյանի դատարանի կողմից հայցվորի՝ Ճապոնիայի Օսակա քաղաքում մասնագիտական կոնգրեսի մասնակցելու ժամանակահատվածն արձակուրդ որակելը և դրա նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթն անալոգիայի կարգով կիրառելը ընդունելի չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ հարցադրումը.

Արդյո՞ք Միրանուշ Բեգիրզանյանի կողմից գործատուի թույլտվությամբ գիտական կոնգրեսին մասնակցելու ժամանակահատվածը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի իմաստով որակվում է որպես «արձակուրդում գտնվելու ժամանակահատված»:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համա-

ծայն՝ կրթություն՝ անձի, հասարակության և պետության շահերից ելնող **ուսուցման** և դաստիարակության **գործընթաց**, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝ ուսումնական հաստատությունների **ողջամիտ ինքնավարությունը**:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **ուսումնական հաստատությունն ապահովում է աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացները**:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ «ողջամիտ ինքնավարություն» օրենսդրական եզրույթը, ինքնըստինքյան պարտավորեցնում է բարձրագույն ուսումնական հաստատություններին իրենց ինքնավարությունը՝ տվյալ դեպքում **աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացների ապահովմանն ուղղված գործընթացները** իրականացնելիս պահպանել օրենսդրությամբ նախատեսված յուրաքանչյուրի իրավունքները՝ դրանով երաշխավորելով դրանց լիարժեք իրականացումը: Ընդ որում, օրենսդիրը կրթություն է դիտում **անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման գործընթացը**:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով **աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացն ըստ էության ուսուցման գործընթաց է, որի ապահովումը** բխում է անձի, հասարակության և պետության շահերից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած ՀՀ աշխատանքային օրենսգրքի 174-րդ հոդվածը հստակ չի սահմանում **աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման կապակցությամբ ուսումնական արձակուրդ տրամադրելը, այնուհանդերձ** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 50-րդ հոդվածների ուժով **ուսումնական արձակուրդ է մաս աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման համար աշխատողներին տրվող արձակուրդը**:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մասնագիտական վերապատրաստում անցնող աշխատողների համար գործատուն պետք է ապահովի աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով նախատեսված երաշխիքներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սիրանուշ Բեգիրզադյանը 01.12.1998 թվականից պայմանագրային կարգով աշխատել է Համալսարանի բժշկական և կենսաբանական ֆիզիկայի ինֆորմատիկայի և բժշկական սարքավորումների

ամբիոնի ասպիրանտ՝ համատեղությամբ՝ 0,25 դրույքով, 01.11.2002 թվականին անցել է նույն ամբիոնում հիմնական աշխատանքի՝ 0,5 դրույքով, իսկ 17.03.2005 թվականին մրցույթով ընդունվել է դոցենտի պաշտոնակատար նույն ամբիոնում՝ 0,5 դրույքով: Համալսարանի ռեկտորի 09.06.2008 թվականի թիվ 53 գ հրամանով Սիրանուշ Բեգիրզանյանին **թույլատրվել է 2008 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2008 թվականի սեպտեմբերի 2-ը մեկնել ք. Օսակա, Ճապոնիա՝ գիտական կոնգրեսին մասնակցելու համար՝ աշխատավարձի պահպանմամբ:** 23.06.2008 թվականին Սիրանուշ Բեգիրզանյանը ծանուցվել է հաստիքը կրճատվելու և նույն թվականի օգոստոսի 25-ից աշխատանքային պայմանագիրը լուծվելու մասին, 25.08.2008 թվականի թիվ Հ 117/ԿԲ հրամանով Սիրանուշ Բեգիրզանյանը ազատվել է աշխատանքից՝ ամբիոնի վերակառուցման՝ լուծարման և հաստիքի կրճատման կապակցությամբ:

Հիմք ընդունելով վերը նշվածը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործատուն, Սիրանուշ Բեգիրզանյանին **թույլատրելով աշխատավարձի պահպանմամբ 2008 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2008 թվականի սեպտեմբերի 2-ը մեկնել ք.Օսակա, Ճապոնիա՝ գիտական կոնգրեսին մասնակցելու համար,** նրան տրամադրել է **ուսումնական արձակուրդ:** Հետևաբար, Սիրանուշ Բեգիրզանյանը աշխատանքից ազատվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների խախտմամբ:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Սույն գործով 17.12.2008 թվականի վերաքննիչ բողոքի հիմքում դրվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի, 10-րդ հոդվածի և 265-րդ հոդվածի խախտումները:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Համալսարանի կողմից ամբիոնի վերակառուցմանը և այդ կապակցությամբ հաստիքների՝ դրանց հիման վրա աշխատողների թվաքանակի կրճատմանը, հետագայում թափուր աշխատատեղերն ատեստացիայի միջոցով համալրմանը, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի պահանջները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի վերը նշված հիմքերի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով սմրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.11.2008 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ ԼԳ/2894/02/08
դատարանի որոշում 2010թ.

Քաղաքացիական գործ
թիվ ԼԳ/1071/02/09

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ա. Պետրոսյան
Ա. Խառատյան
Ն. Տավարացյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԴՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 03-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթավոլիի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Մարզադպրոց) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ադիկ Արդարյանի ընդդեմ Մարզադպրոցի՝ նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին,

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ադիկ Արդարյանը պահանջել է վերականգնել նախկին աշխատանքում՝ որպես Մարզադպրոցի մարզիչ-մանկավարժ և Մարզադպրոցի քոնսպանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի գումարը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 18.11.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.04.2010 թվականի որոշմամբ Մարզադպրոցի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.11.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարզադպրոցը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ադիկ Արդարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ կարգով չի գնահատել Ադիկ Արդարյանի կողմից ներկայացված ազատման հրամանի քաղվածքը և դատարան դիմելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը: Այսպես՝ Ադիկ Արդարյանը հայցադիմումին կից ներկայացրել է ազատման հրամանի քաղվածքը (այդ քաղվածքն ազատման օրը պատրաստվել և հանձնվել է միայն նրան և որևէ այլ անձի չի տրամադրվել), որը միանշանակորեն և ուղղակիորեն ապացուցում է ազատման հրամանն Ադիկ Արդարյանի կողմից ստացված լինելու փաստը:

Բացի այդ, Ադիկ Արդարյանն ինքն է Դատարանին միջնորդել վերականգնել դատարան դիմելու բաց թողնված ժամկետը, որը ևս մեկ ուղղակի ապացույց է ազատման հրամանը վերջինիս կողմից ստացված լինելու վերաբերյալ: Հակառակ դեպքում Ադիկ Արդարյանը նման միջնորդությամբ չէր դիմի Դատարան և չէր ներկայացնի դրա վերաբերյալ պատճառաբանություններ: Այսպիսով, ակնհայտ է այն հանգամանքը, որ Ադիկ Արդարյանն ստացել է աշխատանքից ազատման հրամանը, սակայն դատարան է դիմել իր իրավունքի իրականացման մեկամսյա ժամկետից հետո: Հետևաբար, սույն գործի վարույթը ենթակա էր կարճման՝ որպես դատարանի քննությանը ոչ ենթակա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.04.2010 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Մարզադպրոցի վկայակոչած դրույթների պահանջների խախտման վերաբերյալ փաստարկներն անհիմն են, իսկ վճռաբեկ բողոքում չեն հիմնավորվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի պահանջները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Մարզադպրոցի և Ադիկ Արդարյանի միջև 02.05.2006 թվականին կնքված թիվ 6 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Ադիկ Արդարյանը Մարզադպրոցում ընդունվել է աշխատանքի որպես մարզիչ-մանկավարժ (հ. 1, գ.թ. 8):

2) Մարզադպրոցի տնօրենի 13.06.2007 թվականի թիվ 19 հրամանի քաղվածքի համաձայն՝ Ադիկ Արդարյանն ազատվել է աշխատանքից (հ. 1, գ.թ. 51):

3) Ադիկ Արդարյանն իր իրավունքների պաշտպանության համար դատարան ներկայացված 11.09.2009 թվականի հայցադիմումում նշել է, որ հայցադիմումին կից ներկայացնում է աշխատանքից ազատելու մասին հրամանը (հ. 1, գ.թ. 3-4):

4) Հայցադիմումին կից դատարան ներկայացված միջնորդության համաձայն՝ Ադիկ Արդարյանը խնդրել է դատարան դիմելու մեկամսյա ժամկետի բաց թողնելու պատճառները համարել հարգելի և ժամկետը վերականգնել՝ պատճառաբանելով, որ աշխատանքից ազատելու մասին 13.06.2007 թվականի թիվ 19 հրամանի պատճենը իրեն չի հանձնվել: Միաժամանակ, միջնորդության մեջ նշվել է. «նախկին աշխատանքում վերականգնվելու մասին ինչպես ես, այնպես էլ իմ մարզիկների ծնողները, իրավասու պաշտոնատար անձինք շարունակ դիմումներ ենք գրել ՀՀ Նախագահին, Վարչապետին, Վանաձորի քաղաքապետին և այլ մարմինների: Վանաձորի քաղաքապետարանից և պատասխանողից ստացվել են հուսադրող պատասխաններ, բայց չեն կատարվել, որի պատճառով ես հուսախաբ եմ եղել և սպասելով բաց եմ թողել դատարան դիմելու մեկամսյա ժամկետը» (հ. 1, գ.թ. 10):

5) Վանաձոր քաղաքի ավագանուն ուղղված Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի 28.06.2007 թվականի գրության համաձայն՝ «Հանրապետության աթլետիկայի մասնագետների և երկրպագուների զայրույթն է առաջացրել տնօրենի հրամանը՝ ՀՀ վաստակավոր մարզիչ, վաստակավոր աշխատող, դպրոցի հիմնադիր Ադիկ Արդարյանի... աշխատանքից ազատելը» (հ. 1, գ.թ. 13-14):

6) Վանաձորի քաղաքապետին հասցեագրված Ադիկ Արդարյանի 09.06.2009 թվականի գրության համաձայն՝ Ադիկ Արդարյանը հայտնել է հետևյալը. «2007 թվականի հունիսից ազատված եմ աշխատանքից, կենսաթոշակային տարիքի պատճառով» (հ. 1, գ.թ. 17):

7) Գործի քննության ընթացքում Մարգարայրոցը մինչև վճիռ կայացնելը վկայակոչել և Դատարան է ներկայացրել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում գործի վարույթը կարճելու անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 30.03.2007 թվականի թիվ 3-608 (ՎԳ) որոշումը և միջնորդել է սույն գործի վարույթը կարճել՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով (հ. 1, գ.թ. 92-100):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան հրամանը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմությունը իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պահանջների որոշ տեսակների համար օրենքներով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետներ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի հայցային վաղեմության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել աշխատանքային հարաբերությունների նկատմամբ՝ աշխատանքային օրենսդրությամբ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթների բացակայության դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը չի կարգավորում մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում հայցվորի իրավունքների պաշտպանության հարցը, սակայն հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դրանով սահմանված ժամկետն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել

խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար, այդ ժամկետն իր բնույթով համապատասխանում է հայցային վաղեմության ժամկետին:

Հաշվի առնելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի պարունակում հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ որևէ դրույթ, ուստի աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Սույն գործով Դատարանը, հաստատված համարելով, որ Ադիկ Արդարյանն աշխատանքից ազատելու մասին 13.06.2007 թվականի թիվ 19 հրամանը չի ստացել, գտել է, որ նրա կողմից դատարան դիմելու մեկամսյա ժամկետը բաց չի թողնվել, և այն վերականգնելու անհրաժեշտություն չկա:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դատարանն իրավացիորեն հաստատված է համարել աշխատանքից ազատելու մասին հրամանը ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով Ադիկ Արդարյանին հանձնված չլինելու փաստը:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ Մարգարյանի տնօրենի 13.06.2007 թվականի թիվ 19 հրամանով Ադիկ Արդարյանն ազատվել է աշխատանքից և իր իրավունքների պաշտպանության համար դատարան է դիմել 11.09.2009 թվականին: Հայցադիմումում Ադիկ Արդարյանը նշել է, որ կից ներկայացնում է աշխատանքից ազատելու մասին հրամանը, իսկ հայցադիմումին կից դատարան ներկայացված միջնորդությամբ խնդրել է դատարան դիմելու մեկամսյա ժամկետի բաց թողնելու պատճառները համարել հարգելի և ժամկետը վերականգնել:

Ավելին, Վանաձոր քաղաքի ավագանուն ուղղված Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի 28.06.2007 թվականի գրության համաձայն՝ «Հանրապետության աթլետիկայի մասնագետների և երկրպագուների զայրույթն է առաջացրել տնօրենի հրամանը՝ ՀՀ վաստակավոր մարզիչ, վաստակավոր աշխատող, դպրոցի հիմնադիր Ադիկ Արդարյանի... աշխատանքից ազատելը», իսկ Վանաձորի քաղաքապետին հասցեագրված Ադիկ Արդարյանի 09.06.2009 թվականի գրության համաձայն՝ Ադիկ Արդարյանը հայտնել է հետևյալը. «2007 թվականի հունիսից ազատված եմ աշխատանքից, կենսաթոշակային տարիքի պատճառով»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարան դիմելու մեկամսյա ժամկետի բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու միջնորդություն

ներկայացնելով՝ Ադիլ Արդարյանն ուղղակիորեն ընդունել է Մարզադպրոցի տնօրենի 13.06.2007 թվականի թիվ 19 հրամանը ստացած լինելու հանգամանքը և հաստատապես համոզված է եղել դատարան դիմելու մեկամսյա ժամկետը բաց թողնելու հարցում: Հետևաբար, սույն գործի փաստերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Մարզադպրոցի այն պատճառաբանությունը, որ աշխատանքից ազատման հրամանը տրամադրվել է Ադիլ Արդարյանին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ադիլ Արդարյանն իր իրավունքների պաշտպանության համար դատարան է դիմել 11.09.2009 թվականին, այսինքն՝ բաց է թողել դատարան դիմելու՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետը:

Սույն գործի քննության ընթացքում Մարզադպրոցը մինչև վճիռ կայացնելը վկայակոչել և Դատարան է ներկայացրել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում գործի վարույթը կարճելու անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 30.03.2007 թվականի թիվ 3-608 (ՎԳ) որոշումը և միջնորդել է սույն գործի վարույթը կարճել՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված դատարան դիմելու մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքերում վեճերի լուծման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատարաններում գործի քննության ժամանակահատվածում ձևավորված իրավակիրառական պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանը գործի վարույթը կարճելու վերաբերյալ Մարզադպրոցի միջնորդությունը դիտում է որպես հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն, որը տրվել է մինչև Դատարանի կողմից վճիռ կայացնելը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի լրանալը և Մարզադպրոցի կողմից հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն ներկայացնելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի ուժով հիմք էր Դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատա-

կան ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ադիկ Արդարյանի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0349/02/09
դատարանի որոշում **2010թ.**
Քաղաքացիական գործ
թիվ ԵԿԴ/0349/02/09
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի փետրվարի 5-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գերենիկ Հայրապետյանի ընդդեմ «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ վերջնահաշվարկ կատարելու և վճարելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակաշրջանի համար հատուցելու, աշխատանքային գրքույկը և աշխատանքից ազատման հրամանը հանձնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Դերենիկ Հայրապետյանը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակաշրջանի համար հատուցում միջին աշխատավարձի չափով, աշխատավարձի վճարումն ուշացնելու համար վնասի հատուցում աշխատավարձի 0.15 տոկոսի չափով՝ մինչև դատարանի վճռի կատարումը, կատարել վերջնահաշվարկ, ինչպես նաև հանձնել աշխատանքային գրքույկը և աշխատանքից ազատման հրամանը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 06.04.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է պարտավորեցնել Ընկերությանն անհապաղ կատարել Դերենիկ Հայրապետյանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների վերջնահաշվարկը՝ 28.09.2008 թվականի դրությամբ և կատարել վճարումը, ինչպես նաև Դերենիկ Հայրապետյանին անհապաղ հանձնել աշխատանքային գրքույկը և աշխատանքից ազատման հրամանը: Հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.07.2009 թվականի որոշմամբ Դատարանի 06.04.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի առաջին մասը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 373-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածից հետևում է, որ աշխատողն իր ազատվելու ցանկությունը պետք է դրսևորի գրավոր ծանուցմամբ՝ պահպանելով ծանուցման 14-օրյա ժամկետը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դերենիկ Հայրապետյանը, չպահպանելով աշխատանքային պայմանագրի լուծման մասին գործատուին ծանուցելու 14-օրյա ժամկետը, խնդրել է հաջորդ օրվանից ազատել աշխատանքից: Հետևաբար, Ընկերությունը, հիմք ընդունելով աշխատողի դիմումը, նրան ազատել է աշխատանքից 13.09.2008 թվականին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ վերջնահաշ-

վարկ կատարելու Ընկերության պարտավորությունը նույնպես ծագում է 13.09.2008 թվականին:

Բացի այդ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 22.04.2009 թվականին Դերենիկ Հայրապետյանն ընդունել է Ընկերության հերթական գրավոր առաջարկը և Ընկերության գրասենյակում ստացել է աշխատանքային գրքույքը: Ուստի, նշված հարցի կապակցությամբ կողմերի միջև բացակայում է վեճը, և այս մասով գործի վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.07.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության հետ 01.12.2006 թվականին կնքված թիվ 6-14 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Դերենիկ Հայրապետյանն ընդունվել է աշխատանքի, որպես գլխավոր ֆինանսիստ (գ.թ. 5-19):

2. Ընկերությանը հասցեագրված 12.09.2008 դիմումով Դերենիկ Հայրապետյանը խնդրել է այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ 13.09.2008 թվականին ազատել աշխատանքից (գ.թ. 105):

3. Ընկերության տնօրենի 13.09.2008 թվականի թիվ 155-Կ հրամանով Դերենիկ Հայրապետյանն ազատվել է աշխատանքից (գ.թ. 125):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝ կողմերի համաձայնությամբ, պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում, **աշխատողի նախաձեռնությամբ**, գործատուի նախաձեռնությամբ, սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ այդ մասին առնվազն տասնչորս օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին: Ծանուցման ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը և աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին

ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել **լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը**, եթե սույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ: Գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, սահմանված կարգով լրացնել աշխատողի աշխատանքային գրքույկն ու հանձնել նրան:

Նշված նորմերից հետևում է, որ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու համար օրենսդիրը սահմանել է նախապայման, այն է՝ աշխատանքից ազատվելու մասին առնվազն տասնչորս օր առաջ գործատուին ծանուցելը, իսկ գործատուի համար՝ **աշխատանքային պայմանագրի լուծման օրը** վերջնահաշվարկ կատարելու պարտավորություն:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Դերենիկ Հայրապետյանի կողմից ներկայացվել է դիմում-ծանուցագիր, հետևաբար գործատուն աշխատանքային պայմանագրի լուծումը պարտավոր էր ձևակերպել և վերջնահաշվարկ կատարել միայն ծանուցման ժամկետը լրանալուց հետո՝ 14 օր անց:

Մինչդեռ, սույն գործով Դերենիկ Հայրապետյանը 12.09.2008 թվականի դիմումով խնդրել է 13.09.2008 թվականից ազատել աշխատանքից՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, որի հիման վրա Ընկերության տնօրենի 13.09.2008 թվականի թիվ 155-Կ հրամանով ազատվել է աշխատանքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը կարող էր լուծվել և վերջնահաշվարկ կատարվել հենց 13.09.2008 թվականին:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ 22.04.2009 թվականին Դերենիկ Հայրապետյանը ստացել է իր աշխատանքային գրքույկը, հետևաբար կողմերի միջև վեճի բացակայության պայմաններում գործի վարույթը ենթակա է կարճման, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ վերոնշյալ հանգամանքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի ուժով կարճման հիմք չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի մասնակիորեն հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2009 թվականի որոշման՝ հայցը բավարարելու մասը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշման՝ հայցը մերժելու մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում *Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3516/02/08*
2010թ.

Քաղաքացիական գործ
թիվ ԵԿԴ/3516/02/08

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Կ.Չիլինգարյան
Ա.Խառատյան
Ա.Պետրոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի փետրվարի 5-ին

դրնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և Աշոտիկ Եղոյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտիկ Եղոյանի ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության՝ չօգտագործված ամենամյա արձակուրդների համար դրամական փոխհատուցման պահանջի մասին,

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Աշոտիկ Եղոյանը պահանջել է բռնագանձել ՀՀ գլխավոր դատախազությունից 1.386.000 ՀՀ դրամ՝ որպես 1994-2003 թվականներին չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.12.2008 թվականի վճռով Աշոտիկ Եղոյանի հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է ՀՀ գլխավոր դատախազությունից հօգուտ Աշոտիկ Եղոյանի բռնագանձել 418.213 ՀՀ դրամ՝ որպես չօգտագործված ամենամյա արձակուրդների համար դրամական հատուցման գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.07.2009 թվականի որոշմամբ Աշոտիկ Եղոյանի և ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 29.12.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Աշոտիկ Եղոյանը և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Աշոտիկ Եղոյանը:

Աշոտիկ Եղոյանի վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Աշոտիկ Եղոյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 169-րդ և 170-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 169-րդ, 170-րդ հոդվածների և ՀՀ գլխավոր դատախազի 31.05.2007 թվականի թիվ 21 հրամանով հաստատված՝ «Դատախազներին ամենամյա հերթական արձակուրդ տրամադրելու կարգը սահմանելու մասին» կարգի ընդհանուր դրույթների 4-րդ, 5-րդ և 9.2-րդ կետերի բովանդակությունից հետևում է, որ Դատարանը հաշվարկի հիմքում պետք է դնել իր միջին աշխատավարձի այն չափը և տրամադրվող արձակուրդի այն տևողությունը, որոնք սահմանված էին զբաղեցրած պաշտոնից իր ազատվելու ժամանակ, այսինքն՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու պահին: Այնինչ, Դատարանը հիմք է ընդունել ՀՀ գլխավոր դատախազության ֆինանսատնտեսական վարչության 17.12.2008 թվականի տեղեկանքը, համաձայն որի՝ վճարվելիք գումարի հաշվարկը կատարվել է 1994-2003 թվականների ընթացքում իր միջին օրական աշխատավար-

ձի գումարը տվյալ ժամանակահատվածում տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով, ինչը չի բխում օրենքի պահանջներից:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաբնիչ դատարանի 02.07.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1 ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Դատարանը կիրառել է «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու» մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեն, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12-րդ հոդվածը, որը պետք է կիրառեն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

«ՀՀ աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու» մասին ՀՀ օրենքի 2-րդ և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ ՀՀ աշխատանքային օրենսդրության հետադարձ ուժ ունենալու հանգամանքը կախվածության մեջ է դրված ՀՀ աշխատանքային օրենսգրքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերից: Տվյալ դեպքում գործող աշխատանքային օրենսգիրքը գործատու համարվող ՀՀ դատախազության համար իրավունքները սահմանափակող, պարտականություններ սահմանող, ինչպես նաև իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտ է, քանի որ չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում վճարելու հետևանքով գործատուի մոտ ծագում է լրացուցիչ պարտավորություն: Հետևաբար, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Նախկին ՀՀ աշխատանքային օրենսգրքի 246.1-րդ հոդվածից հետևում է, որ այն գործատուների համար սահմանում է չօգտագործած արձակուրդների դիմաց դրամական փոխհատուցում վճարելու պարտականություն՝ միայն երկու տարվա համար, իսկ գործող աշխատանքային օրենսդրությունը սահմանում է պարտականությունների ավելի լայն ծավալ՝ պարտականությունների խստացումով, հետևաբար պետք է կիրառվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաբնիչ դատարանի 02.07.2009 թվականի որոշման հայցը բավարարելու մասը և այն փոփոխել՝ Աշոտիկ Եղոյանի հայցը մերժել:

2.2 Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները.

Գործող աշխատանքային օրենսգիրքը ՀՀ գլխավոր դատախազության համար ոչ մի նոր պարտավորություն չի սահմանել, որը կվատթարացնի նրա իրավական վիճակը, քանի որ չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում վճարելն օրենքով նախատեսված պարտավորությունն է: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճարելի բողոքում չի նշել, թե ինչ նոր պարտավորություններ են սահմանվել ՀՀ գլխավոր դատախազության համար, որոնք նախկին աշխատանքային օրենսգրքով սահմանված չեն եղել, կամ ինչով է սահմանափակել իր իրավունքները, որի հետ կապված հետադարձ ուժ չի կարող ունենալ:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Աշոտիկ Եղոյանը 07.09.1994 թվականից մինչև 27.11.2007 թվականն աշխատել է ՀՀ դատախազության համակարգում (գ.թ. 5):

2. ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի 27.11.2007 թվականի թիվ 659 հրամանով երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ Աշոտիկ Եղոյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից (գ.թ. 6):

4. ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետի 18.11.2008 թվականի թիվ 10/21-261-08 գրությամբ մերժվել է չօգտագործված արձակուրդների համար փոխհատուցում ստանալու մասին Աշոտիկ Եղոյանի դիմումը: Նույն գրության համաձայն՝ Աշոտիկ Եղոյանը ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ընթացքում ամենամյա հերթական արձակուրդից օգտվել է 2004, 2005, 2006 և 2007 թվականներին (գ.թ. 7):

6. ՀՀ գլխավոր դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետի 17.12.2008 թվականի թիվ 10/21-293-08 տեղականքի համաձայն՝ 1994-2003 թվականների արձակուրդներից օգտվելու դեպքում կհաշվարկվեր արձակուրդային գումարներ, համապատասխանաբար՝ 2183 ՀՀ դրամ, 3280 ՀՀ դրամ, 10.500 ՀՀ դրամ, 12.000 ՀՀ դրամ, 24.095 ՀՀ դրամ, 31.231 ՀՀ դրամ, 32.662 ՀՀ դրամ, 32.662 ՀՀ դրամ, 127.600 ՀՀ դրամ և 142.000 ՀՀ դրամ (գ.թ. 25):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի, ինչպես նաև Աշոտիկ Եղոյանի վճարելի բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքը հիմնավոր է մասնակիորեն, իսկ Աշոտիկ Եղոյանի վճարելի բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով բարձրացված պահանջի քննության համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք գործող աշխատանքային օրենսգրքի ամենամյա վճարովի արձակուրդի չօգտագործված մասի համար փոխհատուցում ստանալու մասին նորմերը պետք է կիրառվեն նաև նախկին աշխատանքային օրենսգրքի գործողության ժա-

մանակ առկա իրավահարաբերությունների նկատմամբ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ և կիրառելով «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, հանգել է այն հետևության, որ տվյալ հոդվածն արտոնում է մինչև օրենսգրքը գործողության մեջ դնելը ծագած աշխատանքային հարաբերությունների շարունակումը՝ դրանց նկատմամբ օրենսգրքի դրույթների կիրառմամբ, ուստի չվճարված արձակուրդային գումարները ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ենթակա են բռնագանձման ամբողջ ժամանակահատվածի համար:

21.06.2005 թվականին ուժը կորցրած ՀՀ աշխատանքային օրենսգրքի 246.1-րդ հոդվածի համաձայն՝ դրամական պահանջների հարցերով, բացի հարկադրական պարապուրդի ժամանակամիջոցի համար աշխատողին միջին աշխատավարձը կամ ցածր վարձատրվող աշխատանք կատարելու ժամանակամիջոցի համար աշխատավարձի տարբերությունը վճարելու պահանջներից (սույն օրենսգրքի 240 հոդված և 246 հոդվածի երկրորդ մաս), աշխատանքային վեճերը քննելիս, վեճը քննող մարմինն իրավունք ունի վճիռ կայացնել վճարելու աշխատողին նրան հասանելիք գումարները ոչ ավելի, քան մեկ տարվա համար, իսկ արձակման դեպքում՝ չօգտագործած արձակուրդի դիմաց դրամական փոխհատուցման հարցերով, **ոչ ավելի, քան երկու աշխատանքային տարվա համար:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (ընդունվել է 09.11.2004 թվականին և ուժի մեջ է մտել է 21.06.2005 թվականին) 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս՝ անկախ դրա գործողության ժամկետից: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: **Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:**

Նույն օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը** տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ **ունի հետադարձ ուժ միայն սույն օրենսգրքով, այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ նորմատիվ իրավական ակտով նախատեսված դեպքերում:** Հետադարձ ուժ չի կարող տրվել գործատուների կամ քաղաքացիների իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգը սահմանող կամ խստացնող, գործատուների կամ քաղաքացիների գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ գործող ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերին հետադարձ ուժ տալը պայմանավորված է միայն մեկ

պայմանով, այն է՝ եթե դա սահմանված է թվարկված իրավական ակտերում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով նախկին աշխատանքային օրենսգրքի գործողության ժամանակ տևած աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ գործող աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ, քանի որ ոչ մի իրավական ակտում նախատեսված չէ տվյալ նորմի հետադարձ ուժը:

Ինչ վերաբերում է Դատարանի եզրահանգմանն այն մասին, որ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերին հետադարձ ուժ է տրվում, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մինչև օրենսգիրքը գործողության մեջ դնելը ծագած աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, և դրանց նկատմամբ կիրառվում են օրենսգրքի դրույթները:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը աշխատանքային հարաբերությունները տարանջատել է երկու մասի, այն է՝ աշխատանքային հարաբերություններ, որոնք **ծագել են մինչև գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի ուժի մեջ մտնելը** և ուժի մեջ մտնելուց հետո ծագած աշխատանքային հարաբերություններ: Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով օրենդիրն ընդունել և օրենսգրքի կարգավորման դաշտ է բերել նաև մինչև օրենսգիրքը գործողության մեջ դնելը ծագած աշխատանքային հարաբերությունները: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածը որևէ առնչություն չունի ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերի հետադարձ ուժի հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չօգտագործված ամենամյա արձակուրդի դրամական փոխհատուցումն անհամարժեք է հաշվարկվի երկու տարվա՝ 2002-2003 թվականների համար, իսկ փոխհատուցման չափը պետք է որոշվի համապատասխան ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չափով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն:

Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետի 17.12.2008 թվականի թիվ 10/21-293-08 տեղեկանքի համաձայն՝ 2002-2003 թվականների արձակուրդներից օգտվելու դեպքում կհաշվարկվեր արձակուրդային գումարներ, համապատասխանաբար՝ 127.600 ՀՀ դրամ և 142.000 ՀՀ դրամ: Հետևաբար, Աշոտիկ Եղոյանի հայցը պետք է բավարարվի մասնակիորեն՝ 269.600 ՀՀ դրամի չափով:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Աշոտիկ Եղոյանի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Գատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2009 թվականի որոշման՝ հայցը բավարարելու մասը և այն փոփոխել՝ Աշոտիկ Եղոյանի հայցը բավարարել մասնակիորեն՝ ՀՀ գլխավոր դատախազությունից հոգուտ Աշոտիկ Եղոյանի բռնագանձել 269.600 ՀՀ դրամ՝ որպես 2002-2003 թվականների ամենամյա չօգտագործված արձակուրդների համար դրամական փոխհատուցում: Հայցը մնացած մասով մերժել:

2. Աշոտիկ Եղոյանի վճռաբեկ բողոքը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԳ/0062/02/09
2009թ.

Քաղաքացիական գործ
թիվ ԱՐԳ/0062/02/08

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ն.Տավարացյան
Ս.Սիբալեյան
Դ.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 13-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վարդան Վարդանյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.07.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Գայանե Վարդանյանի հայցի ընդդեմ Վարդան և Սիշա Վարդանյանների, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Սկրտչյանի, երրորդ անձիք Ջենմա և Սիմա Վարդանյանների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման՝ Ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունած ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գայանե Վարդանյանը պահանջել է 1/3 մասով անվավեր ճանաչել Վարդան Վարդանյանին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը, այդ մասով անվավեր ճանաչել Արմավիրի Հանրապետության փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 23 տան և տնամերձ հողամասի նկատմամբ Վարդան և Միշա Վարդանյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը և ժառանգական գույքի նկատմամբ 1/3 մասով ճանաչել ժառանգությունն ընդունած:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.01.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.07.2008 թվականի որոշմամբ Դատարանի 17.01.2008 թվականի վճիռը բողոքվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդան Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառարանում է հետևյալ փաստարկներով.

Վճռաբեկ դատարանը 01.06.2007 թվականի որոշմամբ բեկանել է Վերաքննիչ դատարանի 14.02.2007 թվականի վճիռը և փոփոխել այն՝ վեճի առարկա ժառանգական գույքի 1/2 մասով անվավեր է ճանաչել Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և Միշա Վարդանյանին ճանաչել ժառանգական գույքի 1/2 մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ: Նման որոշման կայացման համար Վճռաբեկ դատարանի համար նշանակություն է ունեցել այն հանգամանքը, որ ժառանգական գույքը փաստացի տիրապետվել է Վարդան Վարդանյանի և Միշա Վարդանյանի կողմից: Գայանե Վարդանյանի հայցի բավարարմամբ անտեսվել է Վճռաբեկ դատարանի հիշատակված դատական ակտը: Արդյունքում, Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշմամբ հստակեցված Վարդան Վարդանյանի սեփականության բաժինը 1/2-ից նվազեցվել է 1/3-ի: Նման պայմաններում ակնհայտ է, որ բողոքարկվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշմանը: Խախտվել է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատություն-

ների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի գլխավոր չափանիշներից մեկը, որն իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի կոնտեքստում դատական ակտի վերջնականությունն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.07.2008 թվականի որոշումը, փոփոխել այն՝ Գայանե Վարդանյանի հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշմամբ արձանագրվել է, որ «...վեճի առարկա ժառանգական գույքի նկատմամբ փաստացի տիրապետման իրավունքով ժառանգությունը ընդունել են Վարդան և Միշա Վարդանյանները»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, և կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:

Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքն ենթադրում է *res judicata*

սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Այսինքն, հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումներն ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած, դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի, արդարադատության սխալ իրականացման ուղղման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար:

Իրավական որոշակիության դրույթներին լիարժեք չափով չհամապատասխանող դատավարության փուլերի առկայությունը բերում է գործի քննության ժամկետների ավելացմանը, ինչն ակնհայտորեն հետապնդվում է գործերի քանակի աճով, ինչում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տեսնում է ողջամիտ ժամկետներում դատական վեճերի քննության սկզբունքի խախտում (տես՝ Ռաշն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2005 թվականի հունվարի 13-ի, Բուրցեվն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2005 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռները):

Վճռաբեկ դատարանը 01.06.2007 թվականի որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իր դիրքորոշումը սույն գործով վեճի առարկա ժառանգական գույքի կապակցությամբ, արձանագրելով, որ այդ գույքի նկատմամբ փաստացի տիրապետման իրավունքով ժառանգությունն ընդունել են **Վարդան և Միշա Վարդանյանները:**

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գայանե Վարդանյանի հայցի բավարարմամբ լիովին անտեսվել է նախկինում նույն ժառանգական գույքի վերաբերյալ կայացված Վճռաբեկ դատարանի որոշումը, որը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Այսինքն, խախտվել է իրավական որոշակիության սկզբունքը, որը հանգեցնում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտմանը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն իրենից ներկայացնում է նույն կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր գույքից անարգել օգտվելու անձի իրավունքի խախտում: Մասնավորապես, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել սեփական գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով, Վճռաբեկ դատարանն այն դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.07.2008 թվականի որոշումը և այն փոփոխել: Գայանե Վարդանյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/1522/02/08**
դատարանի որոշում **2009թ.**
Քաղաքացիական գործ
թիվ **ԵԱԲԴ/1522/02/08**
Նախագահող դատավոր՝ **Ս.Սիքայեյան**
Դատավորներ՝ **Ն.Տավարացյան**
Դ.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ.ԴՐՍԵՅԱՆԻ
	Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
	Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Ա.ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
	Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի մարտի 13-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Ավետիս Սորսումատյանի վճռաբեկ
բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2008 թվականի որոշման
դեմ՝ ըստ հայցի Վարդուհի Հովսեփյանի ընդդեմ Ռ-իմա Կարապետյանի՝ գումարի
բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վարդուհի Հովսեփյանը պահանջել է բռնագանձել Ռ-ի-

մա Կարապետյանից 14.000 ԱՄՆ դոլար փոխառության գումարը՝ բռնագանձումը տարածելով Ռ-իմա Կարապետյանի գույքի վրա:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 19.08.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել գործին մասնակից չդարձված անձ Ավետիս Սորսումատյանը:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.12.2008 թվականի որոշմամբ վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ավետիս Սորսումատյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ներկայացնելով վերաքննիչ բողոք՝ Ավետիս Սորսումատյանը հայտնել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշմամբ օրինական ուժ է տրվել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 14.12.2007 թվականի վճռին, որով վավեր է ճանաչվել Ավետիս Սորսումատյանի և Ռ-իմա Կարապետյանի ու Վալերի Հովսեփյանի միջև Երևանի Սարկավագի փողոցի 147/1 շենքի թիվ 12 բնակարանի (այսուհետ՝ Բնակարան) առուվաճառքի վերաբերյալ կնքված գործարքը:

Վճռի կատարման համար դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը ներկայացվել է կատարողական թերթ, ինչպես նաև հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին վճարվել է բնակարանի արժեքի մնացած 17.000 ԱՄՆ դոլարը:

Սակայն, Դատարանի վճռով այդ բնակարանի վրա 14.000 ԱՄՆ դոլարի բռնագանձումը տարածելու պայմաններում Ավետիս Սորսումատյանի իրավունքների գրանցումը կասեցվել է:

Նման պայմաններում ակնհայտ է, որ 14.000 ԱՄՆ դոլարի բռնագանձումը վիճելի բնակարանի վրա տարածելու մասով Դատարանի 19.08.2008 թվականի վճիռը վերաբերում է Ավետիս Սորսումատյանի իրավունքներին: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը նշված հանգամանքները հաշվի չի առել, ինչի արդյունքում եզրահանգել է, որ Դատարանի վճիռը Ավետիս Սորսումատյանի իրավունքների ծավալի վրա չի ազդում:

Վերոգրյալի հիման վրա՝ վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.12.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշմամբ բեկանվել է Վերաքննիչ դատարանի 19.03.2008թ. որոշումը և օրինական ուժ է տրվել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 14.12.2007 թվականի վճռին, որով վավեր է ճանաչվել Ավետիս Սորսումատյանի և Ռիմա Կարապետյանի ու Վալերի Հովսեփյանի միջև Երևանի Սարկավագի փողոցի 147/1 շենքի թիվ 12 բնակարանի առուվաճառքի վերաբերյալ կնքված գործարքը:

2. Նշված վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործով ներկայացված վճռաբեկ բողոքում բարձրացված իրավական խնդրի լուծման համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրմանը. *արդյո՞ք դատարանի վճռով վավեր ճանաչված պայմանագրից և օրինական ուժի մեջ մտած տվյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթից բխող իրավունքները ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասի իմաստով դատական պաշտպանության ենթակա են, թե՛ ոչ:*

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ Երևանի Սարկավագի փողոցի 147/1 շենքի թիվ 12 բնակարանի նկատմամբ Ավետիս Սորսումատյանի սեփականության իրավունքը գրանցված լինելու վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել, եզրահանգել է, որ Դատարանի 19.08.2008 թվականի վճիռը Ավետիս Սորսումատյանի իրավունքների ծավալի վրա չի ազդում:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դատական պաշտպանության ենթակա իրավունքների ծավալը ավելի լայն է, քան միայն պետական գրանցման ենթարկված իրավունքներն են:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և Կոնվեն-

ցիայի 6-րդ հոդվածների իմաստով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով անձի իրավունքը ճանաչված լինելու և դրա կատարման համար համապատասխան կատարողական թերթ տրված լինելու պարագայում այդ իրավունքը ենթակա է դատական պաշտպանության:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ «պահանջը» Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի իմաստով կարող է հասկացվել որպես «սեփականություն» այն դեպքում, եթե բավարար չափով հաստատված է, որ այն կարող է իրավաբանորեն իրականացվել (*տե՛ս Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 02.05.2002 թվականին կայացված որոշման 40-րդ կետը*):

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկվող դատական ակտը կայացվելու պահին բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու Ավետիս Սորսումատյանի «պահանջի» իրավունքը հաստատված էր և կարող էր իրավաբանորեն իրականացվել, հետևաբար, նաև ենթակա է դատական պաշտպանության:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 14.000 ԱՄՆ դոլարի բռնագանձումը Երևանի Սարկավազի փողոցի 147/1 շենքի թիվ 12 բնակարանի վրա տարածելու մասով Դատարանի 19.08.2008 թվականի վճիռը վերաբերում է Ավետիս Սորսումատյանի իրավունքներին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2008 թվականի որոշումը՝ 14.000 ԱՄՆ դոլարի բռնագանձումը Երևանի Սարկավազի փողոցի 147/1 շենքի թիվ 12 բնակարանի վրա տարածելու մասով և գործն այդ մասով ուղարկել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԳ/1137/02/08**
դատարանի որոշում **2009թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ԵԱԲԳ/1137/02/08

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Վ. Ավանեսյան
Ա. Խառատյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի մարտի 13-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարինե Հարությունյանի վճռաբեկ
բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.10.2008 թվականի որոշման
դեմ՝ ըստ դիմումի Կարինե Հարությունյանի՝ նոր երևան եկած հանգամանքների
հիմքով դատական ակտը վերանայելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կարինե Հարությունյանը պահանջել է նոր երևան եկած

հանգամանքների հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 06.07.2007 թվականի թիվ 3-141/ՎԳ/ որոշումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.06.2008 թվականի որոշմամբ դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.10.2008 թվականի որոշմամբ բեկանվել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.06.2008 թվականի որոշումը և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204¹¹ հոդվածը և խախտել է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի պահանջները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Հետաքննություն կատարելու ընթացքում Վասյա Գերաշենկոն զոջացել է իր կողմից կատարված արարքի համար և դիմել է հետաքննության մարմնին իր նկատմամբ համաներման ակտ կիրառելու համար: Հետաքննության մարմինը՝ կիրառելով «ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 07.07.2006 թվականի ՀՀ ԱԺ որոշման 6-րդ հոդվածը՝ մերժել է քրեական գործի հարուցումը: Վասյա Գերաշենկոն իրեն մեղավոր է ճանաչել ու խնդրել է իր նկատմամբ կիրառել համաներման ակտը: Այսինքն, քրեական գործ չի հարուցվել Վասյա Գերաշենկոյի կողմից մեղքի ընդունման պատճառով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել վերը նշված հանգամանքները և որոշման պատճառաբանական մասում նշելով, որ Վասյա Գերաշենկոյի արարքում հանցակազմի առկայությունը կարող է հաստատվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, հանգել է ոչ ճիշտ եզրահանգման:

Վերաքննիչ դատարանը, որպես նոր երևան եկած հանգամանք չի դիտել նաև ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն բաժնի անձնագրային բաժանմունքի 24.03.2008 թվականի գրությունը, որով հիմնավորվել է, որ Չարեհ Երիցյանը 1978 թվականից մինչև 2006 թվականը Ազատության նրբ., 2-րդ շենքի թիվ 58 բնակարանում գրանցված չի եղել, իսկ 1984 թվականից այդ հասցեում չի բնակվել և, հետևաբար, ժառանգությունը փաստացի չի ընդունել:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության*

մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատա-
քննության իրավունքը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաս-
տարկներով.

01.11.2004 թվականի թիվ 04-2916 գործով ՀՀ քաղաքացիական գործերով
վերաքննիչ դատարանի կազմում ընդգրկվել են նաև այն դատավորները, որոնք
մասնակցել են 23.10.2008 թվականի գործի քննությանը: Նշվածից հետևում է, որ
վերաքննիչ վարույթում գործի քննությանը մասնակցած դատավորները 23.10.2008
թվականի գործի նկատմամբ կողմնակալ վերաբերմունք են ունեցել և արդար քննու-
թյուն չեն կատարել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերա-
քննիչ դատարանի 23.10.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Արաբկիր և
Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի
27.06.2008 թվականի որոշմանը:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ
փաստերը.

1) Վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի թիվ 3-141(ՎԳ-) որոշմամբ
ճանաչվել է Ջարեհ Երիցյանի սեփականության իրավունքը Երևանի Ազատության
նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 երկու սենյականոց բնակարանի 1/2 մասի նկատմամբ
(գ.թ. 17-23):

2) Ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն բաժնի անձնագրային բաժանմունքի
24.03.2008թ. գրության համաձայն՝ Ջարեհ Երիցյանը Ազատության նրբ. 2-րդ շենք
թիվ 58 բնակարանում գրանցվել է հետևյալ ժամանակահատվածներում՝ 20.06.1978
թվականից մինչև 08.12.1982 թվականը, 08.12.1982 թվականից մինչև 1984 թվականը,
30.01.1985 թվականից մինչև 11.03.1986 թվականը: 02.03.2000 թվականից մինչև
02.03.2003 թվականը Ջարեհ Երիցյանը ժամանակավոր գրանցվել է Ազատության
նրբ. 2-րդ շենք թիվ 28 բնակարանում և 17.11.2006 թվականից կրկին գրանցվել
Ազատության նրբ. 2-րդ շենք թիվ 58 բնակարանում (գ.թ. 7):

3) Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննիչի «Նյութերով քրեական
գործի հարուցումը մերժելու մասին» 10.09.2007 թվականի որոշմամբ Վասյա
Գերաշենկոյի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ համաներման
ակտ ընդունելու հիմքով: Նշված որոշմամբ հաստատվել է, որ Վասյա Գերաշենկոն
2004 թվականին առաջին ատյանի դատարանում հանդես գալով որպես վկա,
հայտնել է սուտ տեղեկություն ժառանգատուի իրերը տանից դուրս բերելու հարցում
Ջարեհ Երիցյանին օգնելու կապակցությամբ: Հետաքննությամբ պարզվել է, որ
Վասյա Գերաշենկոյի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվա-
ծի 1-ին մասի հատկանիշներ, սակայն նկատի ունենալով իրավահարաբերության

պահին ընդունված համաներման ակտը, քրեական գործի հարուցումը մերժվել է (գ.թ. 9):

4) Վճռաբեկ դատարանի 27.11.2007 թվականի թիվ 3-1896 (ՎԳ) որոշմամբ Վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի թիվ 3-141(ՎԳ) որոշումը նոր երևան եկած նույն հանգամանքներով վերանայելու հիմքով Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204¹-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝ բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայվում է, եթե՝

1. այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ

2. այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և

3. այդ հանգամանքները էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար՝ նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն արդյո՞ք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա, թե՛ ոչ:

Սույն գործով բողոք բերած անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանք ներկայացվել է Չարեհ Երիցյանի՝ վիճելի բնակարանում հաշվառված չլինելու հանգամանքը, ինչպես նաև ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննիչի «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 10.09.2007 թվականի որոշումը, որով հաստատվել է, որ Վասյա Գերաշենյկոն 2004 թվականին առաջին ատյանի դատարանում հանդես գալով որպես վկա հայտնել է սուտ տեղեկություն:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի թիվ 3-141(ՎԳ) որոշման ուսումնասիրման արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Չարեհ Երիցյանի սեփականության իրավունքը Երևանի Ազատության նրբանցքի

2-րդ շենքի թիվ 58 երկու սենյականոց բնակարանի 1/2 մասի նկատմամբ ճանաչելու հիմքում չեն դրվել ոչ վկա Վասյա Գերաշենկոյի տրված ցուցմունքները և ոչ էլ Ջաբեհ Երիցյանի՝ վիճելի բնակարանում հաշվառված լինելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն բաժնի անձնագրային բաժանմունքի 24.03.2008թ. գրությունը և Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննիչի 10.09.2007 թվականի «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշումը սույն գործի լուծման համար էական նշանակություն չունեն:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բողոք բերած անձի կողմից նշված վերոնշյալ նոր երևան եկած հանգամանքները Վճռաբեկ դատարանի 27.11.2007 թվականի թիվ 3-1896 (ՎԳ) որոշմամբ արդեն իսկ քննարկվել են, և Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

2) Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառարանությամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91 հոդվածով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլոց, այն դեպքերը, երբ՝ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, իսկ նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ամրագրելով յուրքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության

իրավունքի լիարժեք իրականացումը, սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատավորը պարտավոր է ինքնաբազարկ հայտնել:

Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի ուժով այդ հիմքերն են, երբ

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, կամ

2) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր:

Սույն բողոքի հիմքում բարձրացրած իրավական հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է պարզել հետևյալ իրավական հարցադրումը՝

Արդյո՞ք նույն դատարանում նույն գործի քննությանը դատավորների մասնակցությունը հիմք է արձանագրելու համար փաստն այն մասին, որ նա ունի անկանխակալ վերաբերմունք որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Սահմանդրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքը, արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ օրինական կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը՝ սուբյեկտիվ մոտեցումն է, որը փորձում է պարզել տվյալ դատավորի անձնական համոզմունքները քննվող գործի կապակցությամբ և երկրորդը՝ օբյեկտիվ մոտեցումը, որը սահմանում է, թե արդյո՞ք դատավորի կողմից առաջարկվող երաշխիքները բավարար են այդ կապակցությամբ առաջացած ցանկացած օրինաչափ կասկած բացառելու համար (տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը «Պյերսակն ընդդեմ Բելգիայի» գործով 01.10.1982թ., կետ 30):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21 հոդվածի վերլուծությունից հետևում է, որ այդ իրավական նորմերի ընդհանրական մոտեցումը դատարանի կամ դատավորի անաչառության կանխավարկածն է, որը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ նրա աչառությունն ապացուցված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և համադրելով սույն գործի փաստերը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանում դատարանի կազմի մեջ ընդգրկված դատավորները չեն մասնակցել նույն գործի քննությանն առաջին ատ-

յանի դատարանում, իսկ վերաքննիչ դատարանում նույն գործի քննությանը դատավորների մասնակցությունը հիմք չէ նրանց աշառությունը հաստատված համարելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204⁹-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է Վերաքննիչ դատարանը, իսկ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը՝ գործին մասնակցող անձանց բողոքների հիման վրա: Իսկ նույն օրենսգրքի 20418-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 20411-րդ հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում դատարանը որոշում է կայացնում դիմումը մերժելու մասին:

Հիմք ընդունելով սույն որոշման պատճառաբանությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 06.07.2007 թվականի թիվ 3-141/ՎԳ/ որոշումը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու մասին Կարինե Հարությունյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.10.2008 թվականի որոշումը և այն փոփոխել. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 06.07.2007 թվականի թիվ 3-141/ՎԳ/ որոշումը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու մասին Կարինե Հարությունյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3065/02/08**
դատարանի որոշում **2009թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ԵԿԴ/3065/02/08

Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան
Դատավորներ՝ Կ.Չիլինգարյան
Վ.Ավանեսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2009 թվականի սեպտեմբերի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկե-
րություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2009
թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Սվետլանա Շահազիզ-
յանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է բռնագանձել Սվետլանա
Շահազիզյանից 1.276.177 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար և 25.523.5 ՀՀ դրամ՝
որպես պետական տուրքի գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության

դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.12.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2009 թվականի որոշմամբ Դատարանի 08.12.2008 թվականի վճիռը բողոքվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 54-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 777-րդ, 778-րդ և 779-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գործում առկա «շրջանառու տեղեկանքը» պատշաճ ապացույց չի համարել՝ պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում օրենքի պահանջներին, քանի որ բացակայում է տեղեկանքը ստորագրած անձի պաշտոնը, անունը, ազգանունը: Մինդեռ նշված տեղեկանքը հայցադիմումին կից ներկայացված գումարային պահանջի հաշվարկ է, հետևաբար՝ այդ փաստաթղթին մնան պահանջներ չի կարող առաջադրվել:

Բացի այդ, վերոնշյալ փաստը հաստատվում է նաև մեկ այլ փաստաթղթով՝ «վերծանումներով», որը, «Բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) 6.1.4-րդ կետի համաձայն, համարվում է գաղտնի և կարող է տրամադրվել բաժանորդի խնդրանքով կամ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի որոշմամբ: Պատասխանողի դիմումի հիման վրա նրան տրվել են վերծանումները և շրջանառու տեղեկանքը, որը, սակայն, նրա կողմից գործի քննության ժամանակ դատարան չի ներկայացվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.03.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

6. 14.11.2005 թվականին Ընկերության և Սվետլանա Շահազիզյանի միջև կնքվել է բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագիր (գ.թ. 7):

7. Ընկերության կողմից ներկայացված «շրջանառու տեղեկանքի» համաձայն՝ բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման համար Սվետ-

լանա Շահագիզյանի պարտքը 14.11.2005-28.02.2006 թվականների համար կազմում է 1.276.177 ՀՀ դրամ (գ.թ. 5, 9-11):

8. Ընկերության 20.11.2008 թվականի գրության համաձայն՝ հեռախոսակապի ծառայությունների մատուցման դիմաց վճարումներ չկատարելու պատճառով հեռախոսահամարը 17.01.2006 թվականին անջատվել է, իսկ դրա հետևանքով գոյացած 1.276.177 ՀՀ դրամ պարտքի վերաբերյալ հեռախոսահամարի ելքային զանգերի վերձանումները և «շրջանառու տեղեկանքը» ներկայացվել է Սվետլանա Շահագիզյանին (գ.թ. 51):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նշված հոդվածը վկայում է, որ յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը հայցադիմումին կից ներկայացրել է հայցապահանջը հիմնավորող հետևյալ փաստաթղթերը՝ Պայմանագիրը, որով հավաստվում է Ընկերության կողմից բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման և Սվետլանա Շահագիզյանի կողմից դրա դիմաց վճարելու պարտականությունը, «շրջանառու տեղեկանք» կոչվող փաստաթուղթը, որն արտահայտում է բաժանորդի կողմից յուրաքանչյուր ամսվա համար նշված ծառայություններից օգտվելու դիմաց վճարվելիք պարտքի չափը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հաստատվել սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստն այն մասին, որ Պայմանագրից բխող պարտավորությունը չկատարելու հետևանքով Սվետլանա Շահագիզյանի պարտքը կազմում է 1.276.177 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնավոր է, քանի որ «շրջանառու տեղեկանք»-ը բավարար չէ հայցվող գումարի

չափը հիմնավորելու համար: Մասնավորապես՝ վերոնշյալ տեղեկանքում միայն նշված է բաժանորդի կողմից յուրաքանչյուր ամսվա համար ծառայություններից օգտվելու դիմաց վճարվելիք պարտքի չափը, իսկ այդ գումարի գոյացման հիմքը հիմնավորող ապացույց դատարան չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2009 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԶԳ/1424/02/09**
դատարանի որոշում **2010թ.**

Քաղաքացիական գործ
թիվ ԵԱԶԳ/1424/02/09

Նախագահող դատավոր՝ Կ.Չիլինգարյան
Դատավորներ՝ Ա.Խառատյան
Ա.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 01-ին
դրնբաց դատական նիստում, քննելով «ԲՏԱ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝
Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2010
թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ «Մաղդայնոնդ» ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն) և «Ս.Ա.Գ.» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման, բռնա-
գանձումը գրավի առարկայի և պատասխանողի գույքի վրա տարածելու պահանջ-
ների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությունից բռնագանձել
336.714.460,57 ՀՀ դրամ՝ որպես չմարված վարկային պարտավորության, հաշվարկ-

ված տոկոսների և տույժերի գումար, 6.740.000 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար. բռնագանձումը տարածել Ընկերության վարկային պարտավորությունների ապահովման համար գրավադրված, «Ս.Ա.Գ.» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արաբկիր համայնքի Հ. Հակոբյան 3 հասցեի 1.220,2 քմ մակերեսով արտադրա-վարչական տարածքների, 21,0 քմ մակերեսով ավտոտնակի և 0,17139 հա մակերեսով հողի, ինչպես նաև Ընկերության այլ գույքի և դրամական միջոցների վրա:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 03.12.2009 թվականի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2010 թվականի որոշմամբ Դատարանի 03.12.2009 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է Դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ընկերությունը և «Ս.Ա.Գ.» ՍՊԸ-ն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն օբյեկտիվորեն չի հետազոտել գործում առկա բոլոր ապացույցները և գտել է, որ Ընկերությունը պատշաճ չի ծանուցվել դատական նիստի վայրի և ժամանակի մասին, քանի որ պետական գրանցման վկայականում, պայմանագրերում և կանոնադրության մեջ նշված վերջինիս հասցեն ունի տարիների վաղեմություն և հնարավոր է, որ այն փոխված լիներ, քանի որ կոմունալ ծառայությունների մատուցման պայմանագրերից երևում է, որ Ընկերությունը գտնվում է այլ հասցեում: Սակայն Ընկերությունը պարտավոր էր ապացուցել ոչ թե այլ հասցեում իր այս կամ այն հետաքրքրությունները, այլ այն, որ նա որևէ առնչություն չունի «ք. Երևան, Արաբկիր, Հակոբյան 3» հասցեի հետ: Միևնույն իրավաբանական անձը կարող է գործունեություն իրականացնել մի քանի հասցեներում, սակայն նրա իրավաբանական հասցեն համարվում է պետական ռեգիստրում նշված հասցեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.03.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.12.2009 թվականի վճռին:

2.1. Վճարել քողոքի պատասխանի հիմնավորումները

Սույն գործով էական նշանակություն ունի ոչ թե ծանուցագրերի՝ պետական գրանցման վկայականում նշված հասցեով ուղարկվելու հանգամանքը, այլ այն, թե արդյո՞ք դրանք հասել են հասցեատիրոջը և արդյո՞ք Ընկերությունը ծանուցվել է: Նշվածի վերաբերյալ Դատարանն իրավացիորեն պատճառաբանել է, որ Ընկերության ծանուցված լինելու փաստը չի հաստատվում, քանի որ բոլոր ծանուցագրերն ուղարկվել են միևնույն հասցեով, որոնք ստորագրել և ստացել է մեկ անձ, մինչդեռ Ընկերության գտնվելու վայրի հասցեն է «ք. Երևան, Սուրենյան 7»:

3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 24.02.2006 թվականին Բանկի և Ընկերության միջև կնքվել է թիվ 009 ՀԳ/Վ վարկային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով Բանկը վարկառուին տրամադրել է 280.000.000 ՀՀ դրամ վարկ 5 ամիս մարման ժամկետով, տարեկան 18% դրույքաչափով: Պայմանագրում որպես Ընկերության գտնվելու վայրի հասցե նշվել է «ք. Երևան, Արաբկիր, Հակոբյան 3» (հատոր 1-ին, գ.թ. 18):

2. Ի ապահովումն Պայմանագրի՝ մի կողմից Բանկի և մյուս կողմից «Ս.Ա.Ղ.» ՍՊԸ-ի ու Ընկերության միջև 24.02.2006 թվականին կնքվել է անշարժ գույքի հաշորդող գրավի մասին (հիփոթեք) թիվ 009 Հ/Գ պայմանագիր, որով գրավ է դրվել «Ս.Ա.Ղ.» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արաբկիր համայնքի Հ. Հակոբյան 3 հասցեի 1.220,2 քմ մակերեսով արտադրա-վարչական տարածքները, 21,0 քմ մակերեսով ավտոտնակը և 0,17139 հա մակերեսով հողը (հատոր 1-ին, գ.թ. 21):

3. Ընկերության 23.08.1999 թվականի պետական գրանցման թիվ 001 վկայականում որպես Ընկերության գտնվելու վայրի հասցե նշված է «375033, Երևան, Հակոբյան 3» (հատոր 1-ին, գ.թ. 26):

4. «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին», «Հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին» որոշումները, 17.09.2009 թվականին, 09.10.2009 թվականին նշանակված գործի նախապատրաստական փուլի, ինչպես նաև 18.11.2009 թվականին նշանակված դատաքննության դատական նիստերի ժամանակի և վայրի մասին Ընկերությանն ուղղված ծանուցագրերն ուղարկվել են միևնույն՝ «ք. Երևան, Արաբկիր, Հակոբյան 3» հասցեով (հատոր 1-ին, գ.թ. 10, 11, 98, 101, 111, 114, 124, 125, 141, 142):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարել քողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

Վերոգրյալը ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն սույն հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (տես՝ «Հայկապ» բանկ ՓԲԸ-ի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի հայցն ընդդեմ Շահեն Բաբայանի՝ 10.748.853,30 ՀՀ դրամի պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի թիվ 2-2128(Ա) որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանվում են իրավաբանական անձի անվանումը, նրա գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, ինչպես նաև պարունակվում են համապատասխան տեսակի իրավաբանական անձանց համար՝ օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի գտնվելու վայրը նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձը, օրենքով սահմանված կարգով, ենթակա է պետական գրանցման: Պետական գրանցման համար տվյալները՝ ներառյալ առևտրային կազմակերպությունների ֆիրմային անվանումը, գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում, որը բաց է համընդհանուր ծանոթացման համար:

Վերոնշյալ իրավանորմների վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձի գտնվելու վայր է համարվում իրավաբանական անձի կանոնադրությամբ նշված և պետական գրանցման համար որպես պարտադիր տվյալ ներկայացված նրա մշտական գործող մարմնի հասցեն:

Սույն գործով Դատարանը «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին», «Հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին» որոշումները, 17.09.2009 թվականին, 09.10.2009 թվականին նշանակված գործի նախապատրաստական փուլի, ինչպես նաև 18.11.2009 թվականին նշանակված դատաքննության դատական նիստերի ժամանակի և վայրի մասին Ընկերությանն ուղղված ծանուցագրերն

ուղարկել է միևնույն՝ «Ք. Երևան, Արաբկիր, Հակոբյան 3» հասցեով:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Ընկերության հետ «Ք. Երևան, Սուրենյան փողոց 7» հասցեում կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերը, գտել է, որ ծանուցագրերն ուղարկվել են սխալ հասցեով, քանի որ Ընկերությունը գտնվում է «Ք. Երևան, Սուրենյան փողոց 7» հասցեում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության գտնվելու վայրի հասցեն, Ընկերության 23.08.1999 թվականի պետական գրանցման թիվ 001 վկայականում արված գրառման համաձայն, «Ք. Երևան, Արաբկիր, Հակոբյան 3» է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ծանուցագրերը Ընկերության գտնվելու վայրի հասցեով ուղարկված լինելու պայմաններում, Ընկերությունը համարվում է պատշաճ ծանուցված:

Բացի այդ, սույն գործով հաստատված փաստերից հետևում է, որ Ընկերության հասցեով դատարանի կողմից ուղարկվել է ծանուցագիր պատվիրված նամակով հետադարձ ծանուցմամբ: Հետադարձ ծանուցման թերթիկը ստորագրվել է և փոստային բաժանմունքի կողմից հետ է վերադարձվել դատարան: Տվյալ դեպքում վերաքննիչ բողոք բերած անձը չի հիմնավորել փոստային ծառայության կողմից փոստային առաքումը հասցեատիրոջը չհանձնելու կամ ոչ պատշաճ անձի հանձնելու հանգամանքը: Այս փաստի ապացուցման բեռը կրում է Ընկերությունը, քանի որ հետադարձ ծանուցման թերթիկի ստորագրված լինելու պայմաններում վերջինս է պարտավոր ապացուցել այն ստորագրող և ստացող անձի՝ այդ իրավասությունը չունենալու հանգամանքը: Ընկերության կողմից այս փաստի ապացուցումն էական նշանակություն ունի դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի խախտման փաստը հիմնավորելու համար:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը չի ելել այն կանխավարկածից, որ փոստային կապի ազգային օպերատորի կողմից իր պայմանագրային և օրենքով նախատեսված պարտականությունները կատարվել են պատշաճ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ենթակա է Վերաքննիչ դատարանում նոր քննության, քանի որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը և գործն ուղարկելով նոր քննության, քննության առարկա չի դարձրել վերաքննիչ բողոքում բարձացված նյութական իրավունքի նորմերի խախտման փաստարկներին՝ պատճառաբանելով, որ դրանք կհետազոտվեն Դատարանի կողմից գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը քավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ
թիվ 07-4071/09

Քաղաքացիական գործ թիվ **3-96(ՎԳ)**
2009թ.

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ս. Միքայելյան
Ն. Տավարացյան
Է. Մուրադյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի հուլիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Համլետ Հովակիմյանի վճռաբեկ քողորք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինժեքոբալ» ԲԲ ընկերության (այսուհետ՝ **Ընկերություն**) բաժնետեր Համլետ Հովակիմյանի ընդդեմ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ **ԴԱՀԿԱ ծառայություն**)՝ «Պարտապահին որոշակի գործողություններ կատարելն արգելելը մասնակի վերացնելու մասին» 2007 թվականի օգոստոսի 14-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Համլետ Հովակիմյանը պահանջել է անվավեր ճանաչել

ԳԱՀԿԱ ծառայության 14.08.2007 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելն արգելելը մասնակի վերացնելու մասին» որոշումը:

Երևան քաղաքի Աջափնյակ և Գավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 12.10.2007 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.12.2007 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Վերաքննիչ դատարանի 24.12.2007 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել Ընկերության բաժնետերեր Անժելա Գազարյանը, Ադվան Պարոնյանը, Մամիկոն Կարապետյանը:

Վերաքննիչ դատարանի 12.02.2009 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 24.12.2007 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համլետ Հովակիմյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ, 50-րդ հոդվածների դրույթները, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերաքննիչ դատարանը 12.02.2009 թվականի թիվ 07-4071/09 որոշմամբ ըստ էության վերանայել է Վերաքննիչ դատարանի 24.12.2007 թվականի վճիռը:

Վերաքննիչ դատարանը նման լիազորություն չունի: Վերաքննիչ դատարանը օրենքով իրավասու է վերանայել միայն ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, ինչպես նաև օրենքով սահմանված բացառիկ դեպքերում՝ միջանկյալ դատական ակտերը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Աջափնյակ և Գավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 12.10.2007 թվականի և Վերաքննիչ դա-

տարանի 24.12.2007 թվականի վճիռներով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերը չեն վերաբերում Ընկերության բաժնետերեր Անժելա Ղազարյանի, Աղվան Պարոնյանի, Մամիկոն Կարապետյանի իրավունքներին և պարտականություններին:

Տվյալ քաղաքացիական գործի հարուցման հիմք է Համլետ Հովակիմյանի դիմումը՝ ԳԱՀԿԱ ծառայության 14.08.2007 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հետևաբար, Համլետ Հովակիմյանի և ԳԱՀԿԱ ծառայության միջև վեճը, որպես հանրային իրավահարաբերություններից ծագող վեճ, չէր կարող վերաբերել վերաքննիչ բողոք ներկայացրած Ընկերության բաժնետերեր Անժելա Ղազարյանի, Աղվան Պարոնյանի, Մամիկոն Կարապետյանի ո՛չ իրավունքներին և ո՛չ էլ պարտականություններին:

Ավելին, որպես կատարողական վարույթի կողմ հանդես է եկել միայն Համլետ Հովակիմյանը, այլ ոչ թե վերաքննիչ բողոք բերած անձինք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2009 թվականի թիվ 07-4071/09 որոշումը և այն փոփոխել՝ բողոքը մերժել:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վերաքննիչ դատարանի 24.12.2007 թվականի վճռով բավարարվել է Համլետ Հովակիմյանի դիմումն ընդդեմ ԳԱՀԿԱ ծառայության՝ 14.08.2007 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին(գ. թ. 64-67):

2. Վերաքննիչ դատարանի 12.02.2009 թվականի թիվ 07-4071/09 որոշմամբ վերանայվել է Վերաքննիչ դատարանի 24.12.2007 թվականի թիվ 07-4071 վճիռը (գ. թ. 237-239):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է **ընդհանուր իրավասության դատարաններին**՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում միջանկյալ դատական ակտերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված **օրենքի հիման վրա ստեղծված** անկախ ու անաչառ դատարանի կողմից դատաքննության իրավունքի երաշխավորման համար անհրաժեշտ են մի շարք պահանջներ, որոնց պետք է բավարարի վեճը քննող դատական մարմինը: Այդ պահանջներից մեկն էլ այն է, որ դատարանը պետք է ստեղծված լինի օրենքի հիման վրա: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջը սերտորեն կապված է ինչպես դատարանի կազմավորման ընթացակարգի հետ, որը պետք է համապատասխանի օրենքին, այնպես էլ օրենքով դատարանին պետք է վերապահվեն գործը վերանայելու համապատասխան լիազորություններ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը 12.02.2009 թվականի որոշմամբ վերանայել է իր իսկ կայացրած 24.12.2007 թվականի վճիռը:

Մինչդեռ ո՛չ ՀՀ Սահմանադրությամբ և ո՛չ էլ օրենքով Վերաքննիչ դատարանը լիազորված չէ վերանայել իր իսկ կայացրած դատական ակտը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, որի պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս հիմքին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2009 թվականի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վճիռ քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3468/02/08 2010թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3468/02/08
Նախագահող դատավոր՝ Ա.Սկրտչյան
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան
Ն.Բարսեղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի ապրիլի 02-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Կարինե Խաչատուրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.11.2009 թվականի «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի թիվ 3468/02/08 որոշումը պարզաբանելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Բեգլարյանի լիազորված անձ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռ. Հարությունյանի ընդդեմ Կարինե Խաչատուրյանի՝ հասարակության և պետության կարիքների համար փոխհատուցմամբ սեփականությունն օտարելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Հայկ Բեգլարյանի լիազորված անձ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռ. Հարությունյանը պահանջել է պարտավորեցնել Կարինե Խաչատուրյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Բուզանդի փողոցի թիվ 85 հասցեում գտնվող 42.7 քմ մակերեսով բնակելի տունն օտարել անհատ ձեռնարկատեր Հայկ Բեգլարյանին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 22.04.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի որոշմամբ Հայկ Բեգլարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.04.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Դիմելով դատարան՝ Հայկ Բեգլարյանը պահանջել է պարզաբանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի որոշումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.11.2009 թվականի որոշմամբ դիմումը բավարարվել է՝ պարզաբանվել է, որ «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի որոշման եզրափակիչ մասում նշված «Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 22.04.2009 թվականի վճիռը, սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշմամբ, թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ» նշանակում է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 22.04.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ «4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» մասում նշված Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններով: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 22.04.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ միայն եզրափակիչ մասով և Դատարանի պատճառաբանություններն անհիմն են (ըստ որոշման առարկայագուրկ) համարվել Վերաքննիչ դատարանի 20.10.2009 թվականի որոշման «4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» մասում նշված պատճառաբանություններով»:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի 12.11.2009 թվականի «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի թիվ 3468/02/08 որոշումը պարզաբանելու մասին» որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Խաչատուրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայկ Բեգլարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ

հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 94-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարզաբանվել կարող է վճիռը, որպիսի իրավասությունը վերապահված է բացառապես վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանին, այսինքն՝ Վերաքննիչ դատարանն իրավասու չէ պարզաբանելու իր որոշումը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, որոշման պարզաբանմամբ նույնացնելով «առարկայագուրկ» և «անհիմն» եզրույթները, էապես փոխել է որոշումը: Մինչդեռ «առարկայագուրկ» եզրույթը նշանակում է, որ բացակայում է քննության ենթակա հայցի առարկան, և, հետևապես, դրա հիմնավոր կամ անհիմն լինելու վերաբերյալ դատարանի պատճառաբանությունները ևս առարկայագուրկ են, իսկ երբ խոսքը դատարանի պատճառաբանությունների «անհիմն» լինելու մասին է, ենթադրվում է, որ քննության առարկան գոյություն ունի, սակայն, ի հիմնավորումն կամ ի հերքումն դրա՝ դատարանի պատճառաբանություններն անհիմն են:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը չի նախատեսում վճիռը պարզաբանելու հարցը լուծելու համար դատական նիստի հրավիրում և դատավարության մասնակիցների ներկայության ապահովում, այդուհանդերձ՝ Կարինե Խաչատուրյանն իրավունք ուներ ներկայացնելու իր դիրքորոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, նախքան բողոքարկվող որոշումը կայացնելը, պետք է հնարավորություն տար վերջինիս ծանոթանալու որոշումը պարզաբանելու դիմումին և դրա վերաբերյալ հայտնելու իր դիրքորոշումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.11.2009 թվականի «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի թիվ 3468/02/08 որոշումը պարզաբանելու մասին» որոշումը և այն փոփոխել՝ դիմումը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածում օրենսդիրը «վճիռ» հասկացության տակ նկատի է ունեցել վերջնական դատական ակտերը, իսկ տվյալ դեպքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի որոշումը վերջնական դատական ակտ է և դրա պարզաբանման իրավունք ունի միայն այն կայացրած դատարանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը:

Վերաքննիչ դատարանը 12.11.2009 թվականի որոշմամբ պարզաբանել է նույն դատարանի 20.10.2009 թվականի որոշումը (հ. 3, գ.թ. 152):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցը, թե արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր դատական ակտը պարզաբանելու լիազորություն ունի, թե՛ ոչ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել վճիռը՝ չփոփոխելով վճռի բովանդակությունը և էությունը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարաններն իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Ընդ որում՝ օրենքով սահմանված է, որ Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում միջանկյալ դատական ակտերը վերանայող դատարան է, իսկ վճիռը պարզաբանելու իրավասությունը վերապահված է բացառապես վճիռը կայացրած առաջին ատյանի դատարանին:

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանը 12.11.2009 թվականի որոշմամբ պարզաբանել է նույն դատարանի 20.10.2009 թվականի որոշումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ

դատարանը դատական ակտը պարզաբանելու լիազորություն չունի: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների սահմաններից:

Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը պարզաբանելու լիազորություն չունենալու պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: Նույն օրենսգրքի 240-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը:

Հիմք ընդունելով սույն որոշման պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պարզաբանելու հարցը ենթակա չէ Վերաքննիչ դատարանում քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.11.2009 թվականի «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2009 թվականի թիվ 3468/02/08 որոշումը պարզաբանելու մասին» որոշումը և գործի վարույթը կարճել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՀՔԳ/0024/04/08
2009թ.
Քաղաքացիական գործ
թիվ ՀՔԳ/4/0024/04/08
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝
Ս. Նազարյան
Կ. Հակոբյան
Ս. Սահակյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2009 թվականի սեպտեմբերի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «Արդշինբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝
Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2009
թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի ընդդեմ «Արոր-Բագրատ» արտա-
դրական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ)՝ սնանկ ճանաչելու պահանջի
մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Կոոպերատիվին սնանկ ճանաչել

11.941,69 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով վարկային պարտավորությունները չկատարելու համար:

ՀՀ հարավային քաղաքացիական դատարանի 27.11.2008 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.03.2009 թվականի որոշմամբ Դատարանի 27.11.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոռպերատիվը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը և 52-րդ հոդվածի 2-րդ մասը, սխալ է մեկնաբանել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը և 25-րդ հոդվածի 2-րդ մասը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վճռով սահմանված և վճռից ծագած քաղաքացիական իրավունքների իրականացման համար որոշակի ժամկետ և ընթացակարգ է սահմանվում, և եթե պարտատերը, չպահպանելով վճռից ծագած քաղաքացիական իրավունքն իրականացնելու օրենքով սահմանված ժամկետն ու ընթացակարգը, զրկվել է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն էլ, համապատասխանաբար, ազատվել է վճռով սահմանված պարտականությունը կատարելու պարտավորությունից, հետևաբար՝ ընկերությունը չի կարող սնանկ ճանաչվել այն անձի հանդեպ պարտավորության չկատարման համար, որը բաց է թողել վճռից ծագող իրավունքի իրականացման օրենքով սահմանված ժամկետը և հնարավորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.03.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.11.2008 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

15.10.2002 թվականի Դատարանի վճիռը, մտնելով օրինական ուժի մեջ, դար-

ծել է պետական մարմնի ակտ, որը գործում է օրենքի նորմերի հիման վրա:

Բացի այդ, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի նկատմամբ երբևէ հայցալին վաղեմություն չի կարող կիրառվել, քանի որ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները չեն դադարում այդպիսին համարվել՝ անկախ նրանից, թե որքան ժամանակ է անցել վճռի կայացումից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

5. ՀՀ տնտեսական դատարանի՝ 15.10.2002 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ S-2669 վճռով հաստատվել է Բանկի և Կոոպերատիվի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որով Կոոպերատիվը պարտավորվել է սահմանված ժամկետում մարել վարկային պայմանագրով ստանձնած 9.560,058 ԱՄՆ դոլար ժամկետանց վարկային գումարը (գ. թ. 19, հ. 1-ին):

6. ՀՀ տնտեսական դատարանի՝ 15.10.2002 թվականի թիվ S-2669 օրինական ուժի մեջ մտած վճիռը կատարման ներկայացնելու համար ՀՀ տնտեսական դատարանը 30.12.2002 թվականին տվել է թիվ S-2669 կատարողական թերթը, որի հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվել (գ. թ. 21, հ. 1-ին):

7. ՀՀ տնտեսական դատարանի՝ 18.10.2004 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ մերժվել է Բանկի լուծարային կառավարչի 08.10.2004 թվականի՝ կատարողական թերթի կրկնօրինակ տալու մասին դիմումը: Որոշման հիմքում դրվել է Բանկի կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի բացթողումը և դրա ավարտը (գ. թ. 65, հ. 1-ին):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաձայն՝ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի **վճարային պարտավորությունների** 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել երկու պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

1. պարտապանը պետք է թույլ տված լինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող **անվիճելի վճարային պարտավորությունների** 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց,

2. վճռի կայացման պահին նշված կետանցը պետք է շարունակվի:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանելու համար այն հարցին, թե կարո՞ղ էր Կոոպերատիվը սնանկ ճանաչվել, անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք վերջինս ունի անվիճելի վճարային պարտավորություն:

Սույն գործով Դատարանը, հաստատված համարելով, որ մեկ տարվա ընթացքում կատարողական վարույթ չի հարուցվել, հանգել է այն հետևության, որ Բանկի հանդեպ Կոոպերատիվի ունեցած պարտավորությունները դադարել են:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի դատական ակտը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, պատճառաբանել է, որ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ տնտեսական դատարանի՝ 15.10.2002 թվականի թիվ Տ-2669 օրինական ուժի մեջ մտած վճիռը սահմանված ժամկետում կատարման չի ներկայացվել, սակայն դա որևէ կերպ չի ազդել դրա օրինական ուժ ունենալու և նախադատելի լինելու փաստի վրա, այսինքն՝ թեև դատարանի վճիռը չի կատարվել, սակայն պարտապանի պարտավորությունը դրանով չի դադարել:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականություններն ենթակա են իրականացման, թե՛ ոչ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթի կրկնօրինակ տալու մասին դիմումը պահանջատերը ներկայացնում է կատարողական թերթ տված դատարան: Դիմումը կարող է տրվել մինչև կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի ավարտը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ տնտեսական դատարանի՝ 15.10.2002 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ S-2669 վճռով հաստատվել է Կոոպերատիվի 9.560,058 ԱՄՆ դոլար գումարի վարկային պարտավորությունը Բանկի նկատմամբ: ՀՀ տնտեսական դատարանի կողմից 30.12.2002 թվականին տրված թիվ S-2669 կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվել, իսկ ՀՀ տնտեսական դատարանը, հիմք ընդունելով կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի ավարտը, իր՝ 18.10.2004 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ մերժել է Բանկի լուծարային կառավարչի 08.10.2004 թվականի՝ կատարողական թերթի կրկնօրինակ տալու մասին դիմումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ տնտեսական դատարանի՝ 15.10.2002 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ S-2669 վճռով Բանկի մոտ ծագել է վարկային պարտավորությամբ սահմանված գումարը պահանջելու իրավունք, իսկ Կոոպերատիվի մոտ՝ այն վճարելու պարտականություն: Կոոպերատիվի կողմից նշված պարտավորության չկատարման դեպքում Բանկն իրավունք ունի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին ուժով դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում այն ներկայացնել հարկադիր կատարման: Մինչդեռ Բանկը չի օգտվել օրենքով սահմանված իր իրավունքից և սահմանված ժամկետում կատարողական թերթը կատարման չի ներկայացրել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոոպերատիվից գումար պահանջելու և հետագայում նաև սնանկ ճանաչելու Բանկի իրավունքը ծագել է 15.10.2002 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չներկայացնելով՝ Բանկը զրկվել է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ Կոոպերատիվը՝ որպես պարտապան, ազատվել է նույն վճռով սահմանված պարտավորությունից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով բացակայում է Կոոպերատիվին սնանկ ճանաչելու իրավական հիմքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդ-

վածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով, Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ հարավային քաղաքացիական դատարանի 27.11.2008 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ
թիվ Գ-Դ/0171/02/08
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ Գ-Դ/0171/02/09
2008թ.

Ե. Խունդկարյան
Գ. Մատինյան
Լ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
նասնակցությամբ դատավորներ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՊՆՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 13-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ֆիրդուս Զաքարյանի և Ժիրայր Գալստյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ «Գլուխ» ՄՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) դիմումի ընդդեմ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության (այսուհետ՝ Դեպոզիտարիա), ՀՀ ԱՆ Գեղարքունիքի ԴԱՀԿ ծառայության Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձինք Գուրգեն Դարբինյանի, Տիգրան Դարբինյանի, Ֆիրդուս

Զաքարյանի և Ժիրայր Գալստյանի՝ պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 26.12.2006 թվականի որոշումը և որպես անվավերության հետևանք Գեպոզիտարիայի միջոցով Ֆիրդուս Զաքարյանի և Ժիրայր Գալստյանի անվամբ գրանցված բաժնետոմսերը վերագրանցել որպես Ընկերության սեփականություն:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.06.2008 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.10.2008 թվականի որոշմամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.06.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ֆիրդուս Զաքարյանը և Ժիրայր Գալստյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. *Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը 3-րդ մասը և 71-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վիճարկվող վարչական ակտով կատարվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 17.11.2006 թվականի վճիռը, որով «Գլուր» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Գաբրիելյանը պարտավորեցվել է Ֆիրդուս Զաքարյանի և Ժիրայր Գալստյանի անվամբ գրանցելու «Սիգմա» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 80 տոկոսից 40 տոկոսը՝ յուրաքանչյուրին 20 տոկոսի չափով: Ֆիրդուս Զաքարյանը և Ժիրայր Գալստյանը վստահել են այդ վարչական ակտին, քանի որ բաժնետոմսերը գրանցվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա, և այդ ակտով ստացածը վերադարձնելը վնաս կպատճառի նրանց:

Ավելին, 26.12.2006 թվականի վիճարկվող որոշման գործողության մեջ գտնվելը որևէ անձի, այդ թվում՝ «Գլուր» ՍՊԸ-ին, վնաս չի կարող պատճառել, քանի

որ բաժնետոմսերը նշված քանակով Ֆիրդուս Չաքարյանի և Ժիրայր Գալստյանի անվամբ գրանցելու «Գլուր» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Դարբինյանի և Գուրգեն Դարբինյանի պարտավորությունը որպես փաստ հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որն էլ հետագայում դրվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 17.11.2006 թվականի վճռի հիմքում:

Բացի այդ, դիմողը խախտել է վարչական ակտի բողոքարկման 6-ամսյա ժամկետը և չի դիմել բողոքարկման ժամկետը վերականգնելու համար: Վերաքննիչ դատարանը, չկիրառելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի դրույթները, քննության է առել տվյալ դեպքում անբողոքարկելի դարձած վարչական ակտը:

2. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկով.

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, գործն ըստ էության քննվել և վճիռ է կայացվել 17.06.2008 թվականին, սակայն գործի դատաքննությունը չի կատարվել վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: 10.10.2007 թվականին գործի քննությունը հետաձգվել էր և 01.01.2008 թվականից հետո վերսկսվելու դեպքում պետք է փոխանցվեր վարչական դատարան, որը չի կատարվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 17.11.2006 թվականի վճռով Տիգրան և Գուրգեն Դարբինյանները պարտավորեցվել են Ֆիրդուս Չաքարյանի և Ժիրայր Գալստյանի անվամբ գրանցելու «Սիզմա» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 40%-ը՝ յուրաքանչյուրին 20%-ի չափով (գ.թ. 17, հ.1, գ.թ. 25, հ. 2):

2. ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի «Թիվ 06-3581 քաղաքացիական գործով վճիռը պարզաբանելու մասին» օրինական ուժի մեջ մտած 21.12.2006 թվականի որոշմամբ պարզաբանվել է 17.11.2006 թվականի վճիռը հետևյալ ձևով՝ «դատարանը, նշելով «Սիզմա» ԲԲԸ-ի բաժնետոմսերը, նկատի է ունեցել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության հետ 2003 թվականի

հունվարի 16-ին թիվ 540-Ռ կնքված պայմանագրով ձեռք բերված «Գլուր» ՍՊԸ-ում ունեցած Մարտունու «Սիզմա» ԲԲԸ-ի բաժնետոմսերը, իսկ՝ պարտավորեցնել պատասխանողներ Տիգրան և Գուրգեն Դարբինյաններին, նկատի է ունեցել պարտավորեցնել «Գլուր» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Դարբինյանին» (գ.թ. 37, հ.1, գ.թ. 28, հ. 2):

3. ««ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնետոմսերը գրանցելու մասին» Ծառայության 26.12.2006 թվականի որոշմամբ Դեպոզիտարիան պարտավորեցվել է Մարտունու «Սիզմա» ԲԲԸ-ի կողմից թողարկված «Գլուր» ՍՊԸ-ին պատկանող բաժնետոմսերի համապատասխան մասը փոխանցել Ֆիրդուս Չաքարյանի, իսկ մյուս մասը՝ Ժիրայր Գալստյանի անձնական հաշիվներին (գ.թ. 38, հ. 1): Որոշումը կայացվել է առանց կատարողական թերթի տրման և փաստացի կատարվել է (գ.թ. 42, հ. 1):

4. 17.07.2008 թվականի վերաքննիչ բողոքում առկա չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի խախտման մասին սույն բողոքի հիմքերն ու հիմնավորումները (գ.թ. 5, հ. 2):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առաջին չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Նույն հոդվածի նույն մասի 2-րդ պարբերության համաձայն՝ վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Նշված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը սահմանելով ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր լինելու դեպքերը, միաժամանակ, սահմանել է երկու

պայման, որոնց միաժամանակյա առկայության դեպքում ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել: Դրանք են, երբ՝

1) ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և

2) ակտի գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի:

Սույն քաղաքացիական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք ոչ իրավաչափ է վիճարկվող վարչական ակտը և ոչ իրավաչափ լինելու դեպքում այն կարող է անվավեր ճանաչվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է:

Սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է դատարանի վճիռների, դատավճիռների, որոշումների և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 17.11.2006 թվականի վճռով և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի «Թիվ 06-3581 քաղաքացիական գործով վճիռը պարզաբանելու մասին» օրինական ուժի մեջ մտած 21.12.2006 թվականի որոշմամբ ճանաչվել է Ֆիրդուս Չաքարյանի և Ժիրայր Գալստյանի սեփականության իրավունքն Ընկերության համապատասխան բաժնետոմսերի նկատմամբ, այնուհետև առանց կատարողական թերթի Ծառայությունը 26.12.2006 թվականի որոշմամբ պարտավորեցրել է Դեպոզիտարիային Ընկերությանը պատկանող բաժնետոմսերի համապատասխան մասը գրանցել Ֆիրդուս Չաքարյանի և Ժիրայր Գալստյանի անվամբ: Ծառայության 26.12.2006 թվականի վիճարկվող որոշումը փաստացի կատարվել է:

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության 26.12.2006 թվականի որոշումն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտումներով, հետևաբար այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի ուժով ոչ իրավաչափ է:

Սակայն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության վիճարկվող որոշման ընդունումն ըստ էության ուղղված է օրինական ուժի մեջ մտած դատական

ակտի պարտադիր կատարմանը, որն արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որը անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (*տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսբին ընդդեմ Հունաստանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40*):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը:

Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (Պրեստոն Կոմպանիա Նավիեռան ՍԱ ընդդեմ Բելգիայի, 20.11.1995թ. թիվ 17849/91): *«Օրինական սպասելիքը» առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերվում են սեփականության իրավունքին (Կոպեկին ընդդեմ Սլովանիայի, 28.09.2004թ. թիվ 44912/98)*:

Սույն քաղաքացիական գործով Ֆիրդուս Չաբարյանի և Ժիրայր Գալստյանի սեփականության իրավունքը ճանաչվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 17.11.2006 թվականի վճռով և «Թիվ 06-3581 քաղաքացիական գործով վճիռը պարզաբանելու մասին» ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 21.12.2006 թվականի որոշմամբ, հետևաբար, նրանք ունեին օրինաչափ սպասելիք այդ ակտերի իրավաչափության վերաբերյալ և բավականաչափ իրավական հիմք՝ կարծելու այդ ակտերի հնարավոր հետևանքների առաջացման, այն է՝ դրանց կատարման հնարավորության վերաբերյալ:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարմանն ուղղված Ծառայության ոչ իրավաչափ

26.12.2006 թվականի վարչական ակտի գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի ,և ակտի հասցեատերեր Ֆիրդուս Չաքարյանը և Ժիրայր Գալստյանն իրավունք ունեն վստահելու այդ ակտի գոյությանը, որպիսի պայմաններում Ծառայության ոչ իրավաչափ 26.12.2006 թվականի որոշումն անվավեր չէ:

Ինչ վերաբերվում է բողոքի այն փաստարկին, որ դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 71-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ`

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն` **սույն օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա:**

Նույն օրենքի 70-րդ հոդվածի համաձայն` ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին: Եթե ակտը բողոքարկվել է ակտն ընդունած վարչական մարմին և (կամ) բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմին, ապա բողոքը ենթակա է քննարկման բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմնում: Այդ դեպքում բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնում բողոքի առնչությամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն` **վարչական բողոքը կարող է բերվել`** ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում, բ) վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում, գ) վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից 3 ամսվա ընթացքում, դ) գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում` վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն` սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի: Բողոքարկման ժամկետը կարող է վերականգնվել հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը չեն տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա, իսկ տվյալ օրենքի 71-րդ հոդվածը սահմանելով **վարչական բողոքի** բողոքարկման ժամկետները, ըստ էության, սահմանում է **վարչական ակտի բողոքարկումը վարչական կարգով`** ակտն ընդունած վարչական մարմնին կամ վարչական մարմնի վերադաս վարչական

մարմնին: Ընդ որում, վարչական բողոքի համար սահմանված ժամկետների բաց բողոմը վարչական ակտը դարձնում է անբողոքարկելի **միայն** վարչական կարգով:

2) *Վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի դատական ակտերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ վճռաբեկության կարգով բողոքարկված վերաքննիչ դատարանի դատական ակտերը Վճռաբեկ դատարանը վերանայում է վճռաբեկ բողոքի սահմաններում: Ընդ որում, անձը չի կարող վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոքարկել Վճռաբեկ դատարան այն հիմքերով, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել վերաքննիչ դատարան:

Սույն գործում առկա վերաքննիչ բողոքի ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձինք սույն բողոքի երկրորդ հիմքում նշված փաստարկները չեն բողոքարկել վերաքննիչ դատարան, որի արդյունքում դրանք վերաքննիչ դատարանի կողմից քննության առարկա չեն դարձվել:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը սույն հիմքով չի կարող բողոքարկվել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի մասնակիորեն հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը

հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2008 թվականի որոշումը և այն փոփոխել. «Գլուր» ՍՊԸ-ի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/5557/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Սիրգոյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5557/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 30.12.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Սերգեյ Գասպարյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ վարչական ակտն ամբողջությամբ վերացնելու, վարչական մարմնին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու և շինարարություն իրականացնելու իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սերգեյ Գասպարյանը պահանջել է հաստատել, որ Քա-

ղաքապետարանի գործողություններն իրավաչափ չեն, ինչպես նաև հաստատել ու ճանաչել հայցվորի իրավունքն առ այն, որ շինարարություն իրականացնելու նրա թույլտվությունն արդեն ուժի մեջ է օրենքի ուժով, և նա իրավունք ունի ձեռնամուխ լինել դրա իրականացմանն առանց Քաղաքապետարանից «ֆորմալ թույլտվություն ստանալու»:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.12.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է՝ Քաղաքապետարանի կողմից Սերգեյ Գասպարյանին պատկանող Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման շինարարության թույլտվություն տալու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտ չընդունելու գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ և ճանաչել Սերգեյ Գասպարյանի շինարարության թույլտվության իրավունքը Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման համար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 48-րդ հոդվածները, չի կիրառել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ հաստատված կարգը և «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.08.2002 թվականի թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված կարգը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը պատճառաբանել է, որ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ Սերգեյ Գասպարյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթին որպես երրորդ անձ չի ներգրավել նկուղային հարկի սեփականատիրոջը, սակայն պահանջել է նրա համաձայնությունը:

Մինչդեռ, տվյալ դեպքում, վարչական վարույթում ընդունվելիք ակտով կշռչափվեն նաև նկուղային հարկի սեփականատիրոջ իրավունքները և օրինական շահերը, ուստի վերջինիս համաձայնությունն անառարկելիորեն անհրաժեշտ է: Բացի այդ, Սերգեյ Գասպարյանի կողմից չէր ներկայացվել նաև նախատեսվող մուտքի էսքիզային առաջարկը:

Նշված հարաբերությունները կարգավորվում են նաև «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով, և ՀՀ կառավարության 02.02.2002 թվա-

կանի թիվ 91 որոշումը չէր կարող հիմք հանդիսանալ վեճի լուծման համար:

Գատարանը, ճանաչելով Սերգեյ Գասպարյանի շինարարության թույլտվության իրավունքը, չի պարզել այդ գործողությունների իրավաչափության հարցը, այն է՝ Երևանի քաղաքապետարանի կողմից առաջադրանք տրամադրելու դեպքում Սերգեյ Գասպարյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են, արդյոք, «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.08.2002 թվականի թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներին, Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպումը համապատասխանում է, արդյոք, քաղաքաշինական նորմերին, թե՛ ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 30.12.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 2008 թվականի հուլիս ամսին Սերգեյ Գասպարյանը դիմել է Քաղաքապետարան՝ Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարան հասցեում մուտքի կազմակերպման թույլտվություն ստանալու համար:

2) Քաղաքապետարանի 24.07.2008 թվականի թիվ 18-08/1-Գ-2126 գրությամբ Սերգեյ Գասպարյանին պատասխանվել է, որ հարցի քննարկման համար անհրաժեշտ է ներկայացնել նկուղային հարկի տարածքի սեփականատիրոջ համաձայնությունը և նախատեսվող մուտքի էսքիզային առաջարկը՝ կցելով վերջինիս զբաղեցրած հողատարածքի տեղագրական հանույթը (գ.թ. 10):

3) Կրկին դիմելով Քաղաքապետարան՝ Սերգեյ Գասպարյանը խնդրել է տեղեկացնել, թե ո՞ր իրավական ակտերի ո՞ր նորմերի համաձայն ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով ընթացք տալ և լուծել իր դիմումի կապակցությամբ հարուցված վարչական վարույթը (գ.թ. 12):

4) Քաղաքապետարանի 14.08.2008 թվականի թիվ 18-08/1-Գ-2298 գրությամբ Սերգեյ Գասպարյանին պատասխանվել է, որ «Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարան հասցեում մուտքի կազմակերպման ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու հայտը ոչ թե մերժվել է, այլ հարցի քննարկման և համապատասխան ընթացք տալու համար պահանջվել է ներկայացնել բնակարանի տակ գտնվող նկուղային հարկի սեփականատիրոջ համաձայնությունը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 222-րդ և 224-րդ հոդվածների, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածների, Կարգի և «Երևան քաղաքում շենքերի ճակատների պահպանման, վերանորոգման և նորոգման կարգը հաստատելու մասին» Երևանի քաղաքապետի

22.05.2007 թվականի թիվ 1290-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները» (գ.թ. 11):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» ենթակետի համաձայն՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքի վերոհիշյալ դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած ակտի ընդունված լինելը հաստատող նորմ: Հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի հիման վրա, չխախտեն այլոց իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար, նշված նորմի բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը:

Սույն գործով Դատարանը Քաղաքապետարանի կողմից վարչական ակտ չընդունելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և շինարարության թույլտվության իրավունքը ճանաչելու հայցի բավարարումը պատճառաբանել է, որ Սերգեյ Գասպարյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը երբևէ չի երկարաձգվել, վարչական վարույթը երբևէ չի կասեցվել, դիմումի վերաբերյալ Քաղաքապետարանի կողմից որևէ որոշում չի կայացվել, դիմումը չի մերժվել կամ բավարարվել, որի արդյունքում Դատարանը Քաղաքապետարանի կողմից Սերգեյ Գասպարյանին պատկանող Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման շինարարության թույլտվություն տալու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտ չընդունելու գործողությունները ճանաչել է ոչ իրավաչափ և ճանաչել է Սերգեյ Գասպարյանի շինարարության թույլտվության իրավունքը Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման համար:

Մինչդեռ, Դատարանը, հաստատված համարելով Քաղաքապետարանի անգործությունը, անտեսել է Քաղաքապետարանի 24.07.2008 թվականի թիվ 18-08/1-Գ-2126 գրությամբ և Քաղաքապետարանի 14.08.2008 թվականի թիվ 18-08/1-Գ-2298 գրությամբ Սերգեյ Գասպարյանին տրված պատասխանները, իսկ ճանաչելով հայցվող իրավունքը՝ գնահատման առարկա չի դարձրել դրա իրավաչափության

հարցը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կայացված դատական ակտն անհիմն է:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արդեն իսկ անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության իրավական խնդրին (տե՛ս, Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ԿԴ-03/0026/02/08), ուստի սույն որոշմամբ աննպատակահարմար է համարում կրկին անդրադառնալ տվյալ իրավական խնդրին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Սերգեյ Գասպարյանի շինարարության թույլտվության իրավունքը Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման համար ճանաչելու պահանջը ենթակա չէ դատարանում քննության հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել:

Այսպիսով, ինչպես կարելի է նկատել վերոհիշյալ երկու հոդվածների համեմատական վերլուծությունից, ճանաչման հայց կարող է ներկայացվել այն դեպքում, երբ պարտավորեցման հայց ներկայացնել հնարավոր չէ: Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ չի բացառվել Քաղաքապետարանին համապատասխան վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու հայցի հարուցման հնարավորությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնա-

կիրեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Վերոնշյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը՝ Քաղաքապետարանի կողմից Սերգեյ Գասպարյանին պատկանող Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման շինարարության թույլտվություն տալու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտ չընդունելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու մասով, ենթակա է մերժման, իսկ սույն վարչական գործի վարույթը՝ Սերգեյ Գասպարյանի շինարարության թույլտվության իրավունքը Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման համար ճանաչելու մասով ենթակա է կարճման՝ այն Դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիրեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 30.12.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման շինարարության թույլտվություն տալու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտ չընդունելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու հայցը մերժել, իսկ Սերգեյ Գասպարյանի շինարարության թույլտվության իրավունքը Երևանի Չարենցի փողոցի թիվ 1բ շենքի թիվ 23 բնակարանի մուտքի կազմակերպման համար ճանաչելու մասով՝ գործի վարույթը կարճել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/2434/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Սիրոբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2434/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետի վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական դատարանի 23.12.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Գ-ևորգ Գ-ևորգյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան): Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-204-Ա հրամանը և Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 25.08.2006 թվականի թիվ 1369-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գևորգ Գևորգյանը պահանջել է անվավեր ճանաչել Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-204-Ա հրամանը և Քաղաքապետի 25.08.2006 թվականի թիվ 1369-Ա որոշումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.12.2007 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2008 թվականի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.12.2007 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.12.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Կադաստրը և Քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել *«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին»* ՀՀ օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածները, *«Իրավական ակտերի մասին»* ՀՀ օրենքի 75-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել, կիրառել է *«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»* ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 8-րդ հոդվածներից հետևում է, որ օրինականացված շինությունների ու հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պարտադիր պայման է օրինականացված անշարժ գույքի համար համապատասխան վճարումների կատարումը, մինչդեռ, գործի քննությամբ չի հիմնավորվել, որ Գևորգ Գևորգյանը կատարել է այդ վճարումները:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 15.09.2006 թվականի վճռով Քաղաքապետարանի հայցի հիման վրա անվավեր է ճանաչվել Գևորգ Գևորգյանի անվամբ 08.12.2005 թվականին տրված թիվ 2095495 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը: ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի թիվ 3-1435-ՎԳ

որոշման ուժով սեփականության իրավունքի գրանցման վկայականը վիճարկելով, տվյալ դեպքում, ենթադրվել է, որ ըստ էության վիճարկվում է սեփականության իրավունքի պետական գրանցումը: Նշվածից հետևում է, որ Գ-ևորգ Գ-ևորգյանը սեփականությունից զրկվել է օրենքով սահմանված կարգով՝ սեփականության իրավունքի ծագման հիմք հանդիսացող սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչվելու հետևանքով: Հետևաբար, անհիմն է Դատարանի այն եզրահանգումը, թե Գ-ևորգ Գ-ևորգյանը սեփականությունից զրկվել է ոչ դատական կարգով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 15.09.2006 թվականի վճռով հաստատված հանգամանք է, որ ներկայացված անդորրագրերով վճարման ենթակա գումարներն իրականում Քաղաքապետարանի արտաբյուջետային և պետական բյուջեի համապատասխան հաշվին չեն մուտքագրվել, իսկ Գ-ևորգ Գ-ևորգյանն այդ հանգամանքը չի հերքել և հետագայում միջոցներ չի ձեռնարկել օրենքով նախատեսված վճարումները կատարելու ուղղությամբ: Հետևաբար, Քաղաքապետն իրավասու էր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի հիմքով անվավեր ճանաչել իր իսկ որոշումը՝ Գ-ևորգ Գ-ևորգյանի մասով:

Վերոգրյալի հիման վրա Կադաստրը պահանջել է բեկանել Դատարանի 23.12.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան նոր քննության, իսկ Քաղաքապետը պահանջել է վճիռը բեկանել և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների կարգավիճակի մասին» Քաղաքապետի 20.04.2005 թվականի հ. 839-Ա որոշման 1-ին հավելվածի 361-րդ կետով ճանաչվել է Գ-ևորգ Գ-ևորգյանի սեփականության իրավունքը Քանաքեռ ՀԷԿ-ի ձորում գտնվող 196քմ մակերեսով շինության նկատմամբ, ինչպես նաև 1221քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ հողի օտարման պայմանով (հ.1 գ.թ. 6):

2) 08.12.2005 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2095495 վկայականի համաձայն՝ գրանցվել է Գ-ևորգ Գ-ևորգյանի սեփականության իրավունքը Քանաքեռ ՀԷԿ-ի ձորում գտնվող 131,2 քմ մակերեսով շինության, ինչպես նաև 1221քմ մակերեսով հողամասի նկատմամբ (հ. 1, գ.թ. 7-9):

3) Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-240-Ա հրամանով անվավեր են ճանաչվել Գ-ևորգ Գ-ևորգյանի անվամբ 08.12.2005 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրամադրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2095495 վկայականը (հ. 1, գ.թ. 10-13):

4) Քաղաքապետի 25.08.2006 թվականի հ. 1369-Ա որոշմամբ չեղյալ է ճանաչ-

վել Քաղաքապետի 20.04.2005 թվականի հ. 839-Ա որոշման 1-ին հավելվածի՝ Գևորգ Գևորգյանին վերաբերող 361-րդ կետը (հ. 1, գ.թ. 68-69):

5) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 15.09.2006 թվականի վճռով անվավեր է ճանաչվել Գևորգ Գևորգյանի անվամբ 08.12.2005 թվականին տրված թիվ 2095495 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը:

Վճռով հաստատվել է, որ «...Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-240-Ա հրամանով անվավեր է ճանաչվել Կադաստրի Չեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից 08.12. 2005 թվականին Երևանի Քանաքեռ ՀԷԿ-ի ձոր հասցեի նկատմամբ Գևորգ Գևորգյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-012-4-44 մատյանի 000178 թերթիկում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման գրառումը և դրա հիման վրա 08.12.2005 թվականին տրամադրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2095495 վկայականը, սակայն օրենքով սահմանված կարգով գործարքը պետք է անվավեր ճանաչել դատական կարգով» (հ. 1, գ.թ. 14-15):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Սույն գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք ոչ իրավաչափ են վիճարկվող վարչական ակտերը:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) կից 11-րդ արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի

չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Սահմանադրությունը, հռչակելով սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, երաշխավորում է յուրաքանչյուրի՝ սեփականություն ունենալու բացարձակ իրավունքը, միաժամանակ, ամրագրելով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքից գրկելու հնարավորությունը միայն դատական կարգով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետի 20.04.2005 թվականի հ. 839-Ա որոշման 1-ին հավելվածի 361-րդ կետով ճանաչվել է Գևորգ Գևորգյանի սեփականության իրավունքը Քանաքեռ ՀԷԿ-ի ձորում գտնվող 196քմ մակերեսով շինության և 1221քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ հողի օտարման պայմանով, 08.12.2005 թվականին նրա սեփականության իրավունքը գրանցվել է, Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-240-Ա հրամանով անվավեր են ճանաչել Գևորգ Գևորգյանի անվամբ 08.12.2005 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2095495 վկայականը, իսկ Քաղաքապետի 25.08.2006 թվականի հ. 1369-Ա որոշմամբ չեղյալ է ճանաչել Գևորգ Գևորգյանին սեփականության իրավունք տրամադրելու վերաբերյալ իր իսկ 20.04.2005 թվականի հ. 839-Ա որոշման 1-ին հավելվածի 361-րդ կետը, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 15.09.2006 թվականի վճռով անվավեր է ճանաչվել Գևորգ Գևորգյանի անվամբ 08.12.2005 թվականին տրված թիվ 2095495 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-240-Ա հրամանը և Քաղաքապետի 25.08.2006 թվականի հ. 1369-Ա որոշումն ընդունվել են վերը նշված սահմանադրական նորմերի խախտմամբ, որի հետևանքով Գևորգ Գևորգյանը ոչ դատական կարգով գրկվել է սեփականության իրավունքից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-240-Ա հրամանը և Քաղաքապետի 25.08.2006 թվականի հ. 1369-Ա որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի ուժով ոչ իրավաչափ են:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած, դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Սույն գործում առկա Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 15.09.2006 թվականի վճռի ուսումնասիրման արդյունքում, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ տվյալ վճռով հաստատվել է Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-240-Ա

հրամանով Գևորգ Գևորգյանի Քանաքեռ ՀԷԿ-ի ձորում գտնվող 131,2 քմ մակերեսով շինության և 1221քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքից զրկման ոչ դատական կարգով լինելու փաստը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Դատարանի այն պատճառաբանությունը, որ վիճարկվող ակտերի գործողության արդյունքում Գևորգ Գևորգյանը զրկվել է պատշաճ ընթացակարգով ճանաչված և գրանցված սեփականությունից, ինչը տվյալ դեպքում կատարվել է ոչ դատական կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: ՀՀ վարչական դատարանի 23.12.2008 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-3/0283/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-3/0283/05/09**
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
	Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի հունիսի 25-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի վճռաբեկ քողոքը ՀՀ վարչական դատարանի 10.12.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) ընդդեմ ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղական համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավար Աշոտ Գալստյանի, Համայնքի ավագանու՝ Համայնքի ավագանու 08.01.2009 թվականի «2009 թվականի բյուջեի քննարկում և հաստատում» թիվ 1/2 և «Համայնքի ղեկավարի աշխատակազմի և նրա ենթակա կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը 01.01.2009 թվականից» թիվ 1/3 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Մարզպետարանը պահանջել է անվավեր ճանաչել Հա-

մայնքի ավագանու 08.01.2009 թվականի «2009 թվականի բյուջեի քննարկում և հաստատում» թիվ 1/2 և «Համայնքի ղեկավարի աշխատակազմի և նրա ենթակա կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը 01.01.2009 թվականից» թիվ 1/3 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.12.2009 թվականի վճռով վարչական գործի վարույթը կարճվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ Վայոց ձորի մարզպետը (այսուհետ՝ Մարզպետ):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի, 72-րդ հոդվածի 3-րդ մասի և 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը նախ գտել է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի պահանջներին և որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, այնուհետև վճիռ կայացնելիս գտել է, որ հայցադիմումը ներկայացված էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետների խախտմամբ և կարճել գործի վարույթը: Բացի այդ, Դատարանը պատշաճ ուշադրություն չի արժանացրել այն հանգամանքին, որ Մարզպետարանը հայցադիմումը ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, քանի որ դիմել է Համայնքի ղեկավարին՝ առաջարկելով քննարկել իր գրությունն ավագանու նիստում ու շտկելով որոշման մեջ տեղ գտած խախտումները: Տվյալ դեպքում հայցապահանջը վիճարկման հայց չէ, այն գործողության կատարման հայց է, քանի որ Համայնքի ղեկավարին ներկայացված պահանջն ուղղված է եղել որոշումներում տեղ գտած խախտումները շտկելուն: Մարզպետարանը դրա մասին տեղեկացված էր 23.01.2009 թվականին, երբ վիճելի որոշումները մուտքագրվել էին Մարզպետարան: Մարզպետարանը Համայնքի ավագանու որոշումների դեմ անհամաձայնության մասին հայտնել է 25.06.2009 թվականի թիվ 700 գրությամբ և միայն 20.08.2009 թվականի՝ ավագանու որոշումներն անփոփոխ թողնելու մասին գրությունը ստանալուց հետո Մարզպետարանը ձեռնամուխ է եղել վեճը դատական քննության առարկա դարձնելուն, ինչպես սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով և 5 օր անց հայցադիմումով դիմել է Դատարան: Այսինքն՝ Դատարանի այն պատճառ-

ռաբանությունը, որ Մարգարետարանը բաց է թողել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ժամկետները, հիմնավորված չէ:

2) Դատարանը չի կիրառել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ բյուջետային հիմնարկներից չորս պահակները, տեղափոխվելով Աղավնաձորի գյուղապետարանի աշխատակազմ, պետք է օրենքով սահմանված կարգով իրականացնեին այլ աշխատանքներ՝ ուղղված համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացմանը: Հաստիքները բյուջետային հիմնարկներում կրճատվել են, դրա փոխարեն Համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկվել են նոր հաստիքներ՝ դռնապաններ, որոնք պետք է աշխատանք կատարեն ոչ թե գյուղապետարանում, այլ համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներում: Փաստորեն, Համայնքի աշխատակազմում ընդգրկված չորս դռնապաններն իրենց աշխատանքները կատարելու էին բյուջետային հիմնարկներում՝ ընդգրկված լինելով Համայնքի ղեկավարի աշխատակազմում:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ բյուջեի նախագիծը կազմվում է համայնքային հիմնարկների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, սակայն քննարկվող դեպքում նախագիծը կազմվել է առանց հայտերի, ինչը ներկայացված է եղել հայցադիմումում և պատշաճ ուշադրության չի արժանացել Դատարանի կողմից: Համայնքի ղեկավարը մշակութային համայնքային հիմնարկի աշխատակցին հաշվառելով գյուղապետարանի հաստիքացուցակում, միաժամանակ չփոխելով նրա աշխատանքային վայրը, խախտել է օրենքի պահանջը, արհեստականորեն նվազեցրել է մշակութային և կրթական ուղղության ծախսերը և ավելացրել կառավարչական ծախսերը: Համայնքի ղեկավարի ներկայացրած որոշման նախագիծը և Համայնքի ավագանու հաստատած որոշումը, ըստ էության, կողմերին վնաս չի հասցրել, այն խեղաթյուրել է ծախսային վիճակագրությունը:

3) Դատարանը խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ և 56-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը եկել է այն համոզման, որ վիճարկվող որոշումները չեն հանդիսանում նորմատիվ իրավական ակտեր և դիտարկելով դրանք որպես անհատական իրավական ակտեր, գործը քննել է միանձնյա այն դեպքում, երբ վիճարկվող երկու որոշումներն էլ իրենց բնույթով նորմատիվ իրավական ակտեր են, թեև պահպանված չեն օրենքի պահանջները, այսինքն՝ նշված որոշումները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի համաձայն, պետք է ուղարկվեին փորձաքննության ՀՀ արդարադատության նախարարություն և պաշտոնապես հրապարակվեին: Մինչ-

դեռ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, վիճարկվող որոշումներն արդեն իսկ համարվում են անվավեր, բացի այդ, տվյալ որոշումները հանդիսանում են նորմատիվ ակտեր՝ ըստ ՀՀ արդարադատության մախարարության 03.07.2009 թվականի «ՀՀ համայնքների ավագանիներին ուղղված մեթոդական նամակի»:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 10.12.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Համայնքի ղեկավարի 23.01.2009 թվականի ուղեկցական գրությամբ Մարզպետին ներկայացվել է Համայնքի ավագանու 08.01.2009 թվականի թիվ 01 նիստի արձանագրությունը, որն ընդգրկել է նաև Համայնքի ավագանու 08.01.2009 թվականի թիվ 1/2 և 1/3 որոշումները (գ.թ. 8-14, 65, 105):

2. Համայնքի ղեկավարին հասցեագրված՝ Մարզպետի 25.06.2009 թվականի թիվ 700 գրության համաձայն՝ Մարզպետը, հայտնելով, որ «Ձեր կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացված 2009 թվականի տեղական բյուջեն ստուգվել է մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից և պարզվել է, որ նախորդ տարվա հաստիքացուցակների համեմատ համայնքային ենթակայության մանկապարտեզի, արվեստի դպրոցի և մշակույթի տան պահակների հաստիքները պակասեցվել են և ընդգրկվել համայնքի ղեկավարի աշխատակազմի 2009 թվականի հաստիքացուցակներում, նախատեսված ծախսերը նույնպես ընդգրկվել են գործադիր մարմնի (համայնքի աշխատակազմի) պահպանման ծախսերում: Նման պայմաններում Ձեր կողմից խախտվել է գործառնական դասակարգման ծախսերի պլանավորման սկզբունքը: Հաստիքացուցակներին համապատասխան, ծախսերը (աշխատավարձ և սոց. ապահովագրության վճարներ) պետք է նախատեսվեն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Նախադպրոցական դաստիարակություն», «Արտադպրոցական դաստիարակություն» և «Մշակութային ծառայություններ» հոդվածների համապատասխան տողերում: Բացի դրանից, Ձեր կողմից չի ընդունվել համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների բյուջետային ֆինանսավորման հայտերը, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները համապատասխան հիմնավորումներով: Նշված բյուջետային հիմնարկների պահակների հաստիքները և դրանց հետ կապված ծախսերը Ձեր կողմից կատարվել է պլանավորման խախտմամբ՝ ինքնուրույնաբար, անտեսելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի պահանջները», առաջարկել է առաջիկա ավագանու նիստում քննարկել ու շտկել նշված խախտումները, և ձեռնարկված միջոցառումների մասին ներկայացնել տեղեկատվություն (գ.թ. 18):

3. Համայնքի ղեկավարի 15.07.2009 թվականի թիվ 23 գրությամբ, որը Մարզպետարանում մուտքագրվել է 16.07.2009 թվականին, Մարզպետին հայտնվել է, որ առաջիկա ավագանու նիստում կքննարկվի 25.06.2009 թվականի թիվ 700 գրությունը և կներկայացվի համապատասխան տեղեկատվություն (գ.թ. 17):

4. Համայնքի ղեկավարի 20.08.2009 թվականի ուղեկցական գրությամբ, որը Մարզպետարանում մուտքագրվել է 27.08.2009 թվականին, Մարզպետին ներկայացվել է Համայնքի ավագանու 20.08.2009 թվականի թիվ 05 նիստի արձանագրությունը (գ.թ. 58-61):

5. Մարզպետի 25.06.2009 թվականի թիվ 700 գրության քննարկման արդյունքում ավագանին 20.08.2009 թվականին կայացրել է թիվ 4/3 որոշումը՝ ավագանու հաստատած հաստիքացուցակն անփոփոխ թողնելու մասին (գ.թ. 64):

6. Հայցադիմումը փոստային առաքման եղանակով Մարզպետը ներկայացրել է Դատարանին 25.08.2009 թվականին (գ.թ. 2-25):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո, երեք օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին: Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին՝ պահպանելով սույն օրենքով սահմանված բյուջեների ինքնուրույնության սկզբունքը, հաշվարկների համապատասխանությունը սահմանված մեթոդաբանությանը և բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է պետական լիազորված մարմնին ներկայացվող՝ մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Ամփոփ տեղեկանքի ձևը, նրա կազմման կարգը և ներկայացման ժամկետները սահմանում է պետական լիազորված մարմինը:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման առնչությամբ մարզպետի և համայնքի ղեկավարի միջև առաջացած տարաձայնությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.5-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանու՝ օրենսդրությանը հակասող որոշումները փոփոխելու համար մարզպետը համայնքի ղեկավարին առաջարկում է այդ հարցով եռօրյա ժամկետում հրավիրել ավագանու արտահերթ նիստ:

Մարզպետի պահանջով հրավիրվող նիստում որոշումը չփոփոխելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում մարզպետն իրավունք ունի որոշումը բողո-

քարկելու դատական կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի՝ օրենքին համապատասխանելու ստուգման լիազորությունը տրված է մարզպետին, որի պահանջով էլ համայնքի ավագանին պարտավոր է քննարկել օրենսդրությանը հակասող որոշումների փոփոխման հարցը, իսկ որոշումը չփոփոխելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում մարզպետն իրավունք ունի որոշումը բողոքարկել դատական կարգով: Իսկ համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման առնչությամբ մարզպետի և համայնքի ղեկավարի միջև առաջացած վեճերը ՀՀ վարչական դատարանի քննարկմանը ներկայացնելու դատավարական հնարավորությունն էլ բխում է հենց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի էությունից:

Սույն վարչական գործի կարճման համար Դատարանը հիմք է ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի և 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջն առ այն, որ վիճարկման հայցը դատարան կարող է ներկայացվել վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո, երկամսյա ժամկետում:

Նշված դատավարական իրավունքի նորմերի կիրառման իրավաչափությունը որոշելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ այն իրավական հարցի պարզաբանմանը, թե արդյոք համայնքի բյուջեն հաստատելու մասին ավագանու որոշումը վարչական ակտ է, թե՛ ոչ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները

մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի կարևոր չափանիշներից մեկը դրա անհատական իրավական ակտ հանդիսանալու հանգամանքն է:

Իրավական ակտի տեսակները և դրանց բնորոշումները սահմանված են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը: Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ: Իրավական նորմն օրենքով սահմանված դեպքերում և նույն օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած վարքագծի կանոնն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար և պարտադիր է անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական ակտ է նույն հոդվածի առաջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ համայնքային հիմնարկների համար: Անհատական իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը որոշումներ ընդունում են միայն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, ընդ որում՝ նշված մարմինները նորմատիվ որոշումներ ընդունում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով ուղղակի նախատեսված դեպքերում և սահմաններում: Համայնքի ավագանին և

համայնքի ղեկավարը կարող են ընդունել միայն նորմատիվ կամ անհատական որոշումներ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107-րդ հոդվածի համաձայն՝ համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով, որոնք օրենքով սահմանված կարգով ընտրվում են չորս տարի ժամկետով: Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, օրենքով սահմանված կարգով սահմանում տեղական հարկեր, տուրքեր և վճարներ, ընդունում է համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 26-րդ կետերի համաձայն՝ համայնքի ավագանին նույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև հաստատում է համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Վերը նշված հոդվածների բովանդակությունից ելնելով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ, 56-69-րդ հոդվածների կանոնակարգումներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համայնքի բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշումն իր մեջ իրավական նորմեր պարունակելու ուժով հանդիսանում է նորմատիվ իրավական ակտ:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորումը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի նորմերով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են Հայաստանի Հանրապետության Նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ որոշումների, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի նորմատիվ ակտով խախտվել են պետության կամ համայնքի

այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարելի է դիմել խախտումից հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ 3-րդ մասով նախատեսված դեպքում՝ առանց ժամկետային սահմանափակման:

Վերը նշված փաստերի, ինչպես նաև իրավական նորմերի դրույթների համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի ուժով սույն վարչական գործի կարճումն իրավաչափ չէ, քանի որ սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացող հայցադիմումի համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված դատավարական ժամկետները կիրառելի չեն, այլ կիրառելի է միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դատավարական ժամկետը, որի հաշվարկն էլ կարող է իրականացվել խախտման ժամանակի փաստը հաստատելուց հետո:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ինչ վերաբերում է նյութական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկներին, ապա գործի վարույթի կարճման և դրանք Դատարանի կողմից ըստ էության քննության առարկա չդարձվելու պայմաններում Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 10.12.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Գործի նոր քննության արդյունքում անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0562/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0562/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչության (այսու-
հետ՝ Տեսչություն) պետի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 27.10.2009
թվականի վճռի դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ «Նովոռուսինվեստ» ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն)՝ 1.269.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից
1.269.000 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.10.2009 թվականի
վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 24.400 ՀՀ դրամ պարտադիր սոցիա-

լական ապահովության վճարների գծով պարտավորության մասով, որից ապառք՝ 15.800 ՀՀ դրամ, տույժ՝ 8.600 ՀՀ դրամ: Մնացած մասով հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչության պետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք քերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված արտոնությունից օգտվելու համար հարկ վճարողը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» ենթակետին համապատասխան, պարտավոր է ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը: Տվյալ դեպքում Դատարանը հայրը մերժելիս պատճառաբանել է, որ շահութահարկի արտոնության տրամադրումը պայմանավորվում է կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրումը 500.000.000 ՀՀ դրամը գերազանցելու փաստով և չի կապվում հայտարարված կանոնադրական կապիտալի ամբողջական համալրման հետ: ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում դեռևս 10.11.2003 թվականին գրանցվել է Ընկերության կանոնադրության փոփոխությունը, որի համաձայն՝ Ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանվել է 5.843.799.000 ՀՀ դրամ, իսկ հետագայում այն նաև ավելացվել է, ուստի շահութահարկին վերաբերող մասով Ընկերության վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն: Մինչդեռ, Դատարանը սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի դրույթը:

ՀՀ Մահմանադրական դատարանը 22.09.2009 թվականի թիվ ՍԳՈ-832 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ հարկային արտոնությունների իրավունքը, ինչպես նաև առհասարակ հարկային պարտավորությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունն ամբողջությամբ բխում է հարկ մուծելու սահմանադրական պարտականությունից և ուղղված է այդ պարտականության բարեխիղճ կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» ենթակետը՝ որպես ընդհանուր օրենքի նորմ, չի կարող կիրառվել ինքնուրույն՝ առանց

առանձին հարկատեսակներին վերաբերող օրենքների և հարկային արտոնություններից օգտվելու կարգը կոնկրետացնող ենթաօրենսդրական նորմերի: Չի կարող ընդհանուր օրենքը բոլոր բնագավառների և բոլոր հարկատեսակների համար սահմանել այն փաստաթղթերի տեսակները և ցանկը, որոնք անհրաժեշտ է ներկայացնել, բավարար է, որ այն նախատեսում է նման պարտականություն, որը պետք է կատարվի այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգով:

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պետի 05.04.2006 թվականի ««Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված արտոնության հետ կապված հարկային մարմինների կողմից հսկողական աշխատանքների իրականացման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 1-06/174-Ա հրամանով կանոնակարգվում է նշված հոդվածով նախատեսված արտոնությունից օգտվելու համար, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» ենթակետին համապատասխան, հարկ վճարողի կողմից ներկայացվելիք հարկային արտոնության իր իրավունքը հաստատող փաստաթղթերի օրինակելի ցանկը: Տվյալ դեպքում, նշված փաստաթղթերն են Ընկերության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումը հաստատող սկզբնական վճարային փաստաթղթերը, հիմնադիր օտարերկրյա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների քաղվածքները, որոնք պետք է հավաստեին Ընկերության կանոնադրական կապիտալում փաստացի կատարված ներդրումները, այսինքն՝ գումարների ստացման նպատակը: Մինչդեռ, սույն գործով չի հիմնավորվել կանոնադրական կապիտալի հայտարարված չափը և որ անհնար էր պարզել, թե հայտարարված կանոնադրական կապիտալի որ մասի ներհոսքն է ապահովվել և որ մասինը չի ապահովվել:

Դատարանը, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածին համապատասխան, ընդհանրապես քննության չի առել հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդին հատկացված 194.800 ՀՀ դրամի համամասնական բաշխումը և այդ մասով հայցն ամբողջությամբ մերժել է: Մինչդեռ, նշված գումարից 72.000 ՀՀ դրամը չվիճարկվող և արդեն իսկ 90 տոկոսի չափով վճարված ավելացված արժեքի հարկից կատարված 10 տոկոս մասհանումն է, որն առանց որևէ պարզաբանման և որևէ իրավական նորմին հղում կատարելու՝ Դատարանը մերժել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 27.10.2009 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը և այդ մասով այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

- 1) Ծառայության պետի 11.06.2008 թվականի թիվ 1034021 հանձնարարագրի

հիման վրա ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմիններին վերապահված իրավասության սահմաններում Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության լուծարային ստուգում, որը Ծառայության պետի 07.08.2008 թվականի թիվ 1-07/985-Ա հրամանով փոխարինվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ (գ.թ. 11, 21):

2) Ստուգման արդյունքում կազմված, Տեսչության 04.09.2008 թվականի թիվ 1034021 ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ Ծառայության պետի տեղակալի 04.11.2004 թվականի թիվ տ-7646/2-2 գրությամբ Ընկերության արտոնությունը հավաստելու նպատակով առաջարկվել է ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ, ինչը, ըստ հարկային գործում առկա տեղեկության, չի ներկայացվել հարկային մարմնին: Ստուգման ընթացքում ընկերության կողմից ներկայացվել է նշված գրությամբ պահանջվող փաստաթղթերի մի մասը, սակայն չի ներկայացվել բանկային փոխանցմամբ Ընկերության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումը հաստատող՝ ա) սկզբնական վճարային փաստաթղթերը, բ) հիմնադիր օտարերկրյա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների քաղվածքները, որոնք պետք է հավաստելին Ընկերության կանոնադրական կապիտալում փաստացի կատարված ներդրումները: Փաստորեն, Ընկերությունը թերի է ներկայացրել շահութահարկի արտոնությունից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթերը: Արդյունքում, շահութահարկի գծով Ընկերությանն առաջադրվել է 1.105.500 ՀՀ դրամի պարտավորություն (գ.թ. 28-30, 35, 98):

3) Տեսչության հաշվարկների տեղեկանքի համաձայն՝ 08.12.2008 թվականի դրությամբ Ընկերության պարտավորությունները կազմում են 1.269.000 ՀՀ դրամ:

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետը սահմանում է, որ առաջինը է այն վարչական ակտը, որում առկա է, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալը. ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն**, կամ նրան տրամադրվում է **ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք**:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ անվավեր է առաջինը չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի առաջինը լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն** դնելը, կամ անձին **ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք** տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ տրամադրվող

իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի **ակնհայտ** ոչ իրավաչափ: Հետևաբար, վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը, կամ անձին «ոչ իրավաչափ իրավունք» տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առոչինչ դիտելու համար: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտի առոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը, կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչինչ:

Սույն գործով Դատարանը, վկայակոչելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը, հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Տեսչությունը դատաքննության ընթացքում չի մատնանշել ՀՀ օրենսդրության որևէ գործող դրույթ, որով կհիմնավորվեր Ծառայության պետի տեղակալի 04.11.2004 թվականի թիվ տ-7646/2-2 գրության մեջ և Տեսչության 04.09.2008 թվականի թիվ 1034021 ակտում նշված հիմնադիր երկու օտարերկրյա ընկերությունների սկզբնական վճարային փաստաթղթերը և ֆինանսական հաշվետվությունների քաղվածքները ներկայացնելու պահանջը: Տեսչության կողմից նշվել է միայն Ծառայության պետի 05.04.2006 թվականի «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված արտոնության հետ կապված հարկային մարմինների կողմից հսկողական աշխատանքների իրականացման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 1-06/174-Ա հրամանը, սակայն, ըստ Դատարանի, այն նորմատիվ իրավական ակտ չէ և կիրառելի չէ տվյալ իրավահարաբերության նկատմամբ:

Այսպիսով, Դատարանը օտարերկրյա ընկերությունների սկզբնական վճարային փաստաթղթերը և ֆինանսական հաշվետվությունների քաղվածքները ներկայացնելու պահանջը գնահատել է որպես ակնհայտ ոչ իրավաչափ և կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետը:

Ծառայության պետի 05.04.2006 թվականի վերոհիշյալ N1-06/174-Ա հրամանով սահմանվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված արտոնությունից օգտվելու համար պահանջվող փաստաթղթերի «օրինակելի ցանկ», որի 5-րդ կետով նախատեսվում են քաղվածքներ օտարերկրյա բաժնետեր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններից կամ այդ կազմակերպություններում իրականացված աուդիտորական եզրակացությունից, որոնք հավաստում են իրենց կողմից շահութահարկի արտոնությունից օգտվող ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրումը կատարելու մասին, իսկ 6-րդ կետով՝ օտարերկրյա ներդրողների կողմից

շահութահարկի արտոնությունից օգտվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում կատարված՝ փաստացի ներդրումը (բանկային փոխանցում, կանխիկ վճարում, հաշվանցում, այլ գույքային ներդրում) հաստատող փաստաթղթերի պատճենները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետը սույն գործով կիրառելի չէ, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի համաձայն՝ հարկ վճարողը պարտավոր է ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը: Հետևաբար, Ճառայության պետի 05.04.2006 թվականի ««Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված արտոնության հետ կապված հարկային մարմինների կողմից հսկողական աշխատանքների իրականացման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 1-06/174-Ա հրամանով սահմանված օտարերկրյա ընկերությունների սկզբնական վճարային փաստաթղթերը և ֆինանսական հաշվետվությունների քաղվածքները ներկայացնելու պահանջը չի կարող գնահատվել որպես **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն** սահմանող, քանի որ այդ պարտականությունը դրվել է՝ հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի դրույթները: Տեսչության կողմից Ընկերության վրա այդ հրամանի հավելվածով հաստատված ««Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված արտոնությունից օգտվելու համար պահանջվող փաստաթղթերի» օրինակելի ցանկում նշված որոշակի փաստաթղթեր ներկայացնելու պահանջ դրվելու պայմաններում իրավական հարցադրում կարող է առաջանալ միայն տվյալ արտոնության վերաբերյալ **օրենքի սխալ կիրառման**, այլ ոչ թե առոչինչ լինելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 04.09.2008 թվականի թիվ 1034021 ակտի 1-ին կետի չվիճարկման պայմաններում այն ենթակա է կատարման:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը հայցը մերժելու մասով դուրս է եկել հայցի շրջանակներից, քանի որ վարչական ակտի իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում անդրադարձել է վարչական ակտի իրավաչափության հարցին և բացառել է դրա իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությունը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նշված հոդվածից հետևում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ Տեսչության 04.09.2008 թվականի թիվ 1034021 ակտի 1-ին

կետն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վերջինիս լիազորությունների շրջանակում: Դ-րա հետևանքով պետք է եզրակացնել, որ նշված որոշումն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ որոշման իրավաչափությունը (տե՛ս, օրինակ՝ ըստ Երևանի քաղաքապետարանի հայցի ընդդեմ Հրաչյա Քարամյանի՝ ինքնակամ շինությունը քանդելուն պարտավորեցնելու և 200.000 ՀՀ դրամ վարչական տուգանքը բռնագանձելու պահանջների մասին, թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը):

Բացի այդ, Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Ծառայության պետի 05.04.2006 թվականի ««Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված արտոնության հետ կապված հարկային մարմինների կողմից հսկողական աշխատանքների իրականացման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 1-06/174-Ա հրամանը նորմատիվ իրավական ակտ չէ և տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չէ, Վճռաբեկ դատարանը համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն՝ հարկ վճարողը պարտավոր է ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ այն հարկ վճարողի վրա հարկային արտոնությունից օգտվելու համար այդ իրավունքը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն դնող ընդհանուր նորմ է, որը չի սահմանում կոնկրետ հարկային արտոնությունից օգտվելու համար անհրաժեշտ կոնկրետ փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ որևէ դրույթ: Հետևաբար, ինչպես վերը նշվել է, հիշյալ պահանջի կատարումը կարող է ապահովվել միայն տվյալ հարկային արտոնությունից օգտվելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող իրավական այլ ակտով:

ՀՀ Սահմանադրական դատարանը 22.09.2009 թվականի թիվ ՍԴՈ-832 որոշմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» ենթակետի վերաբերյալ նույնպես արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ նշված «իրավադրույթը որևէ հակասության մեջ չի մտնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի հետ, քանի որ այն որպես ընդհանուր օրենքի նորմ չի կարող կիրառվել ինքնուրույն՝ առանց առանձին հարկատեսակներին վերաբերող օրենքների և հարկային արտոնություններից օգտվելու կարգը կոնկրետացնող ենթաօրենսդրական նորմերի: Իսկ այդ ակտերի համատեքստում օրենքի այդ դրույթը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին: Չի կարող ընդհանուր օրենքը բոլոր բնագավառների և բոլոր հարաբերությունների համար սահմանել այն փաստաթղթերի տեսակները և ցանկը, որոնք անհրաժեշտ է ներկայացնել՝ բավարար է, որ այն նախատեսում է նման պարտականություն, որը

պետք է կատարվի այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգով»:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Տեսչության 04.09.2008 թվականի թիվ 1034021 ակտի 1-ին կետի չվիճարկման պայմաններում նշված փաստարկները սույն գործի լուծման համար չունեն որևէ իրավական նշանակություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս, Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 118-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 27.10.2009 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը և այն փոփոխել. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչության հայցը բավարարել՝ «Նովոսիևստ» ՍՊԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 1.244.600 ՀՀ դրամ:

2. «Նովոսիևստ» ՍՊԸ-ից հոգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչության բռնագանձել 24.892 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի և 37.338 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքեր:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/7157/05/08
Նախագահող դատավոր՝ Ա.Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/7157/05/08
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Տավրոս-66» ֆիրմա ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական դատարանի 07.09.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) և Նախարարության՝ Տեսչության 22.01.2008 թվականի թիվ 1035640 ստուգման ակտը մասնակի՝ շահութահարկի և ավելացված արժեքի հարկի մասով, առջինը՝ ճանաչելու և նույն ակտի հիման վրա Ընկերության կողմից վճարված 400.000 ՀՀ դրամը՝ որպես առջինը՝ վարչական ակտի հետևանք, և 700.000 ՀՀ դրամ գերավճարը վերադարձնել պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է մասնակի՝ շահութահարկի և ավելացված արժեքի հարկի մասով առաջին ճանաչել Տեսչության 22.01.2008 թվականի թիվ 1035640 ստուգման ակտը և պարտավորեցնել վերադարձնել նույն ակտի հիման վրա Ընկերության կողմից վճարված 400.000 ՀՀ դրամը՝ որպես առաջին վարչական ակտի հետևանք, և 700.000 ՀՀ դրամ գերավճարը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 07.09.2009 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն. Նախարարությունը պարտավորեցվել է ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը վերադարձնել 697.225 ՀՀ դրամ՝ որպես գերավճար, իսկ հայրը մնացած մասով մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ընկերությունը և Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2.1. Ընկերության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Ընկերության վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 42-րդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 30¹-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նշված նորմերը, ինչպես նաև խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը գտել է, որ 22.01.2008 թվականին կազմված թիվ 1035640 ստուգման ակտը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30¹-րդ հոդվածի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքը կարող է միայն հիմք հանդիսանալ այն անվավեր ճանաչելու համար, քանզի այն համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, այլ ոչ թե նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված դեպքին: Սակայն, ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի տրամաբանության, եթե օրենքի խախտման, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հարցը պետք է վիճահարույց լինի, ապա սույն պարագայում գործ

ունենք անվիճելի փաստի հետ, երբ անկախ դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելուց՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի ուժով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, քանի որ 2008 թվականի հունվարից ստուգումներ իրականացնելիս հարկային մարմինն իրավունք ուներ հարկային պարտավորություններ հաշվարկել միայն 2005 թվականից սկսած: Հետևաբար, հիշյալ ստուգման ակտն ընդունվել է առանց իրավական հիմքի, դրանով Ընկերության վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, ուստի այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի ուժով պետք է առաջին ճանաչվի:

Բացի այդ, Դատարանը վճռով չի անդրադարձել դատական ծախսերի բաշխման հարցին և հայցի բավարարված մասով պետական տուրքը չի բռնագանձել պատասխանողից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Դատարանի 07.09.2009 թվականի վճիռը և հայցը բավարարել:

2.2. Նախարարության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Նախարարության վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերությունները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին հավելվածով (այսուհետ՝ Հավելված) սահմանվում է, թե ինչ է գերավճարը, և ինչպես է իրականացվում հաշվանցումը այլ հարկատեսակներից ունեցած պարտավորությունների հաշվին կամ այն վերադարձվում: Հիմք ընդունելով Տեսչությանն ուղղված Ընկերության 11.02.2008 թվականի թիվ 02/09 գրությունը՝ որպես 22.01.2008 թվականի թիվ 1035640 ստուգման ակտով արձանագրված այլ պարտավորությունների դիմաց օրենքով սահմանված կարգով կատարվել է հաշվանցում, մանավանդ որ Դատարանի 07.09.2009 թվականի վճռով ստուգման ակտը համարվել է օրենքի սահմաններում կազմված և թողնվել է անփոփոխ, ինչի պարագայում գերավճար առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 07.09.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել, ինչպես նաև Ընկերությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես Նախարարության կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ-հետախուզության վարչության Մաշտոցի բաժնի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 13.12.2007 թվականի թիվ 1035640 հանձնարարագրի հիման վրա 28.12.2007թ.-22.01.2008թ. Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.01.2004-30.09.2007 թվականներն ընկած ժամանակաշրջանը (հատ. 2-րդ, գ.թ. 24):

2) 22.01.2008 թվականի թիվ 1035640 ակտով Ընկերությանն առաջադրվել է 907.700 ՀՀ դրամ շահութահարկի գումար, 400.300 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի գումար, 50.000 ՀՀ դրամ տուգանքի գումար (հիմք՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ, «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 43-րդ և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածներ): Ակտով արձանագրվել է, որ շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով հիշյալ խախտումները կատարվել են **2004 թվականին** (հատ. 2-րդ, գ.թ. 27-37):

3) Տեսչության 17.07.2007 թվականի թվով 3 եզրակացությունների համաձայն՝ Ընկերությունը 05.04.2005 թվականի դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով ունի 450.800 ՀՀ դրամի, 28.03.2005 թվականի դրությամբ շահութահարկի գծով՝ 63.885 ՀՀ դրամի, 19.10.2005 թվականի դրությամբ պարզեցված հարկի գծով՝ 182.540 ՀՀ դրամի չափով գերավճար (հատ. 2-րդ, գ.թ. 116-118):

4) Ընկերության տնօրենը 11.02.2008 թվականի թիվ 02/09 գրությամբ դիմել է Տեսչություն՝ խնդրելով 240.500 ՀՀ դրամ գերավճարը հաշվանցել 22.01.2008 թվականի թիվ 1035640 ակտով առաջադրված շահութահարկի տուգանքին, և 11.02.2008 թվականի դրությամբ Ընկերության գերավճարի գումարը նշված դիմումի հիման վրա հաշվանցվել է շահութահարկի հարկային պարտավորություններին (հատ. 2-րդ, գ.թ.70, 79):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Ընկերության վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետը սահմանում է, որ առոչինչ է այն վարչական ակտը, որում առկա է, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալը. ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն**, կամ նրան տրամադրվում է **ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ անվավեր է առաջինը չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի առաջինը լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն** դնելը, կամ անձին **ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք** տրամադրելը: Այսինքն, անձի վրա դրվող պարտականությունը կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի **ակնհայտ ոչ իրավաչափ**: Հետևաբար, վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը, կամ անձին «ոչ իրավաչափ իրավունք» տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առաջինը դիտելու համար: Այսինքն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտի առաջինը լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը, կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առաջինը, այլ այն կարող է ճանաչվել անվավեր:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը: Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև **հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում**, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Հարկային պարտավորության դադարեցման՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպք է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30¹-րդ հոդվածը, որի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրացնելուց հետո:

Վերոնշյալ նորմի իմաստից հետևում է, որ հարկային օրենսդրության խախտում հայտնաբերելու դեպքում այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո հարկային պարտավորությունը համարվում է դա-

դարած, ուստի անձը ազատվում է համապատասխան հարկային պատասխանատվությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 22.01.2008 թվականի թիվ 1035640 ակտով արձանագրվել է, որ Ընկերությունը շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով 2004 թվականին կատարել է խախտումներ, որի համար վերջինիս առաջադրվել է 907.700 ՀՀ դրամ՝ շահութահարկի գումարի, 400.300 ՀՀ դրամ՝ ավելացված արժեքի հարկի գումարի չափով հարկային պարտավորություն: Այսինքն՝ ակտով արձանագրված խախտումը հայտնաբերվել է 2008 թվականին, այն ժամանակ, երբ այն կատարելուց հետո արդեն անցել է երեք տարի:

Գատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ ստուգման ակտը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30¹-րդ հոդվածի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ այն անվավեր ճանաչելու համար, քանի որ համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, այլ ոչ թե նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված դեպքին:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հարկային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն կիրառելու ժամկետն անցնելու ուժով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ, «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 43-րդ և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածներով պատասխանատվություն սահմանող վարչական ակտում արդեն իսկ առկա է վարչական ակտի առոչինչ լինելու հիմքը՝ ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը:

2) *Նախարարության վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառարանությամբ:*

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հարկային տեսչության կողմից հաշվանցվում են հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում հաշվարկված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավել վճարված գումարները վերադարձվում են այն դեպքերում, եթե հարկ վճարողի կողմից կատարվել են սույն օրենքի 16 հոդվածում նշված հարկային պարտավորությունները:

Հավելվածի 9.1-րդ կետի համաձայն՝ գերավճարի մնացորդի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումն իրականացվում է հարկ վճարողի գրավոր դիմումով (այսուհետ՝ դիմում), իսկ սույն կարգով նախատեսված դեպքերում՝ նաև առանց դիմումի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 05.04.2005 թվականի դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով ունի 450.800 ՀՀ դրամի, 28.03.2005 թվականի դրությամբ շահութահարկի գծով՝ 63.885 ՀՀ դրամի, 19.10.2005 թվականի դրությամբ պարզեցված հարկի գծով՝ 182.540 ՀՀ դրամի չափով գերավճար: Ընկերության տնօրենը 11.02.2008 թվականի թիվ 02/09 գրությամբ դիմել է Տեսչություն՝ խնդրելով 240.500 ՀՀ դրամ գերավճարը հաշվանցել 22.01.2008 թվականի թիվ 1035640 ակտով առաջադրված շահութահարկի տուգանքին: Այսպիսով՝ 11.02.2008 թվականի դրությամբ Ընկերության գերավճարի գումարը նշված դիմումի հիման վրա հաշվանցվել է շահութահարկի հարկային պարտավորություններին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության գերավճարի գումարից վերջինիս այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը կատարվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով ստուգման ակտն առաջին ճանաչելու հետևանքով այլևս գոյություն չունի այդ ակտով առաջադրված հարկային պարտավորությունը, որի դիմաց կատարվել է Ընկերության գերավճարի հաշվանցումը, ուստի Ընկերության գերավճարը ենթակա է վերադարձման, իսկ Նախարարության վճռաբեկ բողոքը՝ մերժման:

Այսպիսով, Ընկերության վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Տավրոս-66» ֆիրմա ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 07.09.2009 թվականի վճռի՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ-հետախուզության վարչության Մաշտոցի բաժնի 22.01.2008 թվականի թիվ 1035640 ստուգման ակտի շահութահարկի և ավելացված արժեքի հարկի մասերը և այն փոփոխել՝ ակտն այդ մասով ճանաչել առաջին և որպես առաջին չվարչական ակտի հետևանք՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտավորեցնել վերադարձնելու «Տավրոս-66» ֆիրմա ՍՊԸ-ի կողմից վճարված 400.000 ՀՀ դրամը: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքը մերժել:

3. ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «Տավրոս-66» ֆիրմա ՍՊԸ-ի բռնագանձել 26.200 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի և 20.200 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/2523/05/09
Նախագահող դատավոր՝ Կ. Բաղդասարյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2523/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈԳՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վոլոդյա Այվազյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 04.02.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Վոլոդյա Այվազյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) Կոմիտեի հետաքննության վարչության պետի 14.04.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վոլոդյա Այվազյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 14.04.2009 թվականի «Վարչական

տույժ նշանակելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.02.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վոլոդյա Այվազյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքո-հիշյալ հիմնավորումներով.

Դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել նույն օրենքի 35-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վոլոդյա Այվազյանը վարչական մարմնի կողմից 14.04.2009 թվականի վարչական վարույթի մասին իրեն ոչ պատշաճ ծանուցելու փաստի կապակցությամբ Դատարանին ներկայացրել է համապատասխան ապացույց՝ փոստային բաժանմունքում պահվող պատվիրված նամակները հասցեատիրոջ կողմից ստանալու գրառում պարունակող մատյանի համապատասխան էջի պատճենը, որով հաստատվում է, որ Վոլոդյա Այվազյանը վարչական մարմնի կողմից ուղարկած ծանուցումը ստացել է 14.04.2009 թվականին: Մինչդեռ Դատարանը որևէ դիրքորոշում չի հայտնել գործի համար կարևոր նշանակություն ունեցող այդ ապացույցի վերաբերյալ և չի պարզել, թե արդյո՞ք վարչական պատասխանատվության ենթարկվող անձը պատշաճ կարգով ծանուցված է եղել մաքսային իրավախախտման մասին գործի քննության մասին:

Վոլոդյա Այվազյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթում առկա է ապացույց՝ փորձագետի եզրակացություն, որի գոյության մասին Վոլոդյա Այվազյանը տեղեկացել է վարչական տուգանք նշանակելու որոշումից: Այսինքն՝ որպես վարչական վարույթի մասնակից՝ Վոլոդյա Այվազյանը պատշաճ ծանուցվելու և վարչական վարույթին մասնակցելու հնարավորություն ունենալու դեպքում կժանոթանար փորձագետի եզրակացությանը, կներկայացներ իր ունեցած առարկությունները:

Վոլոդյա Այվազյանը Կոմիտեի ծանուցումը ստացել է 14.04.2009 թվականին: Նույն օրը ժամը 10:00-ին նշանակված վարչական գործի քննության արդյունքում Կոմիտեի հետաքննության վարչության պետը կայացրել է Վոլոդյա Այվազյանի նկատմամբ վարչական տուգանք նշանակելու որոշումը: Հաշվի առնելով, որ փոստային բաժանմունքի աշխատանքը սկսվում է ժամը 09:00-ին, ուստի ծանու-

ցագիրը Վոլոդյա Այվազյանին չէր կարող հասնել նույն օրվա ժամը 10:00-ից շուտ, որպեսզի նա էլ հնարավորություն և բավարար ժամանակ ունենար ներկայանալու վարչական վարույթն իրականացնելու վայրը: Վոլոդյա Այվազյանը ծանուցագիրը ստացել է 14.04.2009 թվականին՝ օրվա վերջում, փոստի բաժանմունքում՝ ստորագրելով փոստային բաժանմունքում պահվող մատյանում: Նշված փաստերով հաստատվում է, որ Կոմիտեն ծանուցելու իր հայեցողական իրավունքն իրականացրել է ոչ պատշաճ, քանի որ այդ պայմաններում Վոլոդյա Այվազյանը վարչական վարույթին ուղղակի չէր կարող ներկա գտնվել, հետևաբար՝ Կոմիտեի կողմից չի ապահովվել Վոլոդյա Այվազյանի լաված լինելու իրավունքը՝ գրկելով նրան լիարժեք իրականացնելու իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը:

Դատարանի վճիռն առերևույթ հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի թիվ ՎԴ/0016/05/08 որոշմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 04.02.2010 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Կոմիտեի հետաքննության վարչության 2-րդ բաժնի ավագ հետաքննիչ Ա. Խոնդկարյանի 08.04.2009 թվականի թիվ 165-ՀԲ ծանուցագրի համաձայն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով սկսված վարչական գործի վարույթին և քննությանը մասնակցելու համար «Էյ Դաբլյու Այ» ՍՊ ընկերության փոխտնօրեն Վոլոդյա Այվազյանը 14.04.2009 թվականին՝ ժամը 10:00-ին, հրավիրվել է Կոմիտեի հետաքննության վարչության 2-րդ բաժնի՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացի 3 հասցեով (գ.թ. 74):

2. Կոմիտեի հետաքննության վարչության 2-րդ բաժնի ավագ հետաքննիչ Ա. Խոնդկարյանի 14.04.2009 թվականի ժամը 10:00-ին նշանակված վարչական գործի վարույթին և քննությանը մասնակցելու մասին ծանուցումը՝ առաքված փոստային եղանակով, Վոլոդյա Այվազյանը ստացել է 14.04.2009 թվականին (գ.թ. 122):

Նշված հանգամանքները հաստատվում են նաև «Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Խաչատրյանի 30.04.2010 թվականի թիվ 2/3-1304 գրությամբ, թիվ 15 փոստային բաժանմունքի պետ Դավթյանի տեղեկանքով, թիվ 33 փոստային բաժանմունքի պետ Տ. Յուզբաշյանի 29.04.2010 թվականի տեղեկանքով (ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից): Նշված փաստաթղթերի համաձայն՝ Վոլոդյա Այվազյանին ք. Երևան, Էմինի փողոց 2/1 շենք, բնակարան 41 հասցեով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից առաքված թիվ 12462380 պատվիրված նամակը Երևանի թիվ 33 փոստային բաժանմունքի փոստատարի

կողմից ստորագրությամբ հանձնվել է Վոլոդյա Այվազյանին 14.04.2010 թվականին:

3. Կոմիտեի հետաքննության վարչության պետի «Վարչական տույժ նշանակելու մասին» 14.04.2009 թվականի որոշմամբ «Էյ Դաբլյու Այ» ՍՊ ընկերության փոխտնօրեն Վոլոդյա Այվազյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և տուգանվել ոչ իրենց անվանմամբ հայտարարագրված 550 հատ մեխանիկական ու 200 հատ էլեկտրամեխանիկական ժամացույցի մեխանիզմների, 351 հատ ժամացույցի սիլիկոնե գոտիների, չհայտարարագրված 18 հատ ժամացույցի պողպատե շրջանակի, 18 հատ ժամացույցի պողպատե կափարիչի, 27 հատ ժամացույցի պողպատե թվացույցի և 2 հատ արհեստական կաշվից գոտու մաքսային արժեքի չափով, այն է՝ 7.410.113 ՀՀ դրամի չափով (գ.թ. 26-27):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

Մաքսային կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու գործերի վարույթը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առանձին տեսակի վարչական վարույթ է, որը կարգավորվում է ՀՀ մաքսային օրենսգրքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության վարույթը կարգավորող նորմերով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է նույն գլխով /գլուխ 38/ և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի սույն գլխին չհակասող մասով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի մասնակցությամբ: Գործը կարող է քննվել նաև տվյալ անձի բացակայության դեպքում, եթե քննության տեղի ու ժամանակի մասին սահմանված կարգով նրան տեղյակ է պահվել, սակայն վերջինիս կողմից որևէ միջնորդություն չի հարուցվել, կամ եթե անձը բացակայում է, և հայտնի չէ նրա գտնվելու վայրը, կամ եթե նա գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Նույնաբովանդակ դրույթ է պարունակում նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածը, համաձայն որի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայու-

թյամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ, և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ սահմանում է պարտադիր կանոն, այն է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության իրականացում վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Նշված կանոնից բացառություն է կազմում միայն այն դեպքը, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ:

Այսպիսով, ՀՀ մաքսային օրենսգիրքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, սահմանելով վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության իրականացման պարտադիր պահանջ, միաժամանակ սահմանել է պետական մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը՝ վարչական իրավախախտման գործը քննության նախապատրաստելու ընթացքում լուծելու գործի քննության ժամանակի և տեղի մասին քննությանը մասնակցող անձին պատշաճ ծանուցելու հարցը:

Հետևաբար, սույն վարչական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք բողոք բերած անձը պատշաճ կարգով ծանուցվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությանը, և դրա հետ կապված արդյո՞ք տեղի է ունեցել վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների խախտում:

Ինչպես ՀՀ մաքսային օրենսգրքով, այնպես էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված չէ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու կարգը, հետևաբար՝ սույն իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից պակեի է:

Տվյալ դեպքում վարչական մարմինը (պետական եկամտունների կոմիտեն) ունի պատշաճ ծանուցման ձևի ընտրության հայեցողություն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կոմիտեի հայեցողությունը՝ ընտրելու ծանուցման ձևը, պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի

2-րդ մասի պահանջներին, որի համաձայն՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել պատասխանատվության ենթարկվող անձին լսելու հնարավորությունը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, ընտրվող պատշաճ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ անձին հնարավորություն ընձեռի ապահովել վերոհիշյալ պահանջները (Տես նաև՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչություն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի՝ պատասխանողին գործողություններ կատարելուն պարտավորեցնելու և պարտավոր անձի նկատմամբ տուգանք նշանակելու, և ըստ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի և նույն ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի հակընդդեմ հայցի ընդդեմ տեսչության՝ տեսչության 15.10.2007 թվականի թիվ 15-Ա որոշումն անվավեր ճանաչելու և այն վերացնելու պահանջների մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի թիվ ՎԳ/0016/05/08 որոշումը):

Սույն գործի փաստերից հետևում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով սկսված վարչական գործի վարույթին և քննությանը մասնակցելու համար Վոլոդյա Այվազյանը Կոմիտեի հետաքննության վարչության 2-րդ բաժնի ավագ հետաքննիչ Ա. Խոնդկարյանի 08.04.2009 թվականի թիվ 165-ՀԲ ծանուցմամբ հրավիրվել է Կոմիտեի հետաքննության վարչության 2-րդ բաժնի 14.04.2009 թվականին՝ ժամը 10:00-ին, որը Վոլոդյա Այվազյանը ստացել է հենց 14.04.2009 թվականին: Նշված օրը նշանակված վարչական գործի քննության արդյունքում Կոմիտեի հետաքննության վարչության պետը կայացրել է «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը, որով Վոլոդյա Այվազյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և տուգանվել 7.410.113 ՀՀ դրամի չափով:

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած Կոմիտեի հետաքննության վարչության 2-րդ բաժնի ավագ հետաքննիչը ծանուցել է Վոլոդյա Այվազյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով սկսված վարչական գործի վարույթին և քննությանը մասնակցելու մասին, սակայն ծանուցելու օրենքով սահմանված իր հայեցողությունն իրականացրել է ոչ պատշաճ, քանի որ Վոլոդյա Այվազյանը 14.04.2009 թվականին՝ ժամը 10:00-ին, նշանակված վարչական վարույթի մասին ծանուցումը ստանալով

նույն օրը՝ 14.04.2009 թվականին, չէր կարող ողջամտորեն ներկա գտնվել նշանակված վարչական վարույթին, ինչի արդյունքում չի ապահովվել նրա՝ լսված լինելու իրավունքը՝ գրկելով վարչական վարույթի մասնակցին լիարժեք իրականացնելու իր իրավունքերի ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածով երաշխավորված՝ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (տես՝ Իվանով և այլք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի որոշումը):

Հետևաբար, վարչական մարմնի՝ ծանուցման ձևն ընտրելու հայեցողությունը պետք է իրականացվի այնպես, որ իրագործվի ՀՀ մաքսային օրենսգրքի 226-րդ հոդվածով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով հետապնդված նպատակը, այն է՝ անձի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը նրան պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Դատարանի այն հետևությունը, որ Վոլոդյա Այվազյանը պատշաճ կերպով ծանուցվել է վարչական վարույթի իրականացման տեղի և ժամանակի մասին, և նա գրկված չի եղել իր՝ վարչական վարույթի քննությանը չներկայանալու պատճառների մասին վարչական մարմնին հայտնելու հնարավորությունից:

Սույն գործի փաստերի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի հետաքննության վարչության պետի «Վարչական տույժ նշանակելու մասին» 14.04.2009 թվականի որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ, քանի որ այն կայացնելիս չի ապահովվել Վոլոդյա Այվազյանի մասնակցությունը վարչական վարույթին, որի պայմաններում խախտվել է նրա՝ լսված լինելու իրավունքը և պետական մարմնի՝ Կոմիտեի հետաքննության վարչության առջև իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության միջոցների լիարժեք իրականացման իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի,

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 04.02.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Գործի նոր քննության արդյունքում անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ-3/0027/05/08
Գատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ ՎԳ-3/0027/05/08
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈԳՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին
դրնբաց դատական նիստում, քննելով ՀՀ առողջապահության նախարարու-
թյան պետական հիզիենիկ և հակահամաճարակային տեսչության (այսուհետ՝
Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 17.09.2009 թվականի
վճռի դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ անհատ ձեռնարկատեր Նադեմա Մանուկ-
յանի՝ 80.000 ՀՀ դրամ տուգանքի գումար բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Նադեմա
Մանուկյանից 28.09.2007 թվականի որոշմամբ սահմանված 80.000 ՀՀ դրամ վար-
չական տուգանքի գումարը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.09.2009 թվականի
վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթներով լիովին թույլատրելի է վարչական վարույթում փաստաբան չհանդիսացող անձին որպես ներկայացուցիչ ներգրավելը: Տվյալ դեպքում վարույթն իրականացնող վարչական մարմինը գործի քննությունն իրականացրել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայացուցչի մասնակցությամբ: Հետևաբար, ներկայացուցչի գործողությունները, այդ թվում՝ վարչական ակտը ստանալը, ունեն միևնույն իրավաբանական նշանակությունը, ինչ որ կարող էին ունենալ անձամբ պատասխանատվության ենթարկվող անձի գործողությունները:

Բացի այդ, Դատարանն անտեսել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն այն փաստաթուղթն է, որի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության համար լիազորված մարմինը /պաշտոնատար անձը/ իրականացնում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության նախապատրաստություն և գործի քննություն:

Անձին պատասխանատվության ենթարկելու գործերով վարչական վարույթի կենտրոնական փուլը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն է, որի ընթացքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել վարչական ակտի հասցեատիրոջ հնարավորությունը՝ առավելագույնս արդյունավետ կերպով պաշտպանելու սեփական իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 17.09.2009 թվականի վճիռը և այն փոփոխել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության 26.06.2007 թվականի թիվ 4683 ստուգման ակտի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Նադեմա Մանուկյանի գեղեցկության սրահը ստուգելիս արձանագրվել են գեղեցկության սրահներին ներկայացվող սանիտարական կա-

նոնների թվով տասը խախտումներ, որոնցից վեցի վերացման համար սահմանվել է մեկամսյա ժամկետ, իսկ մնացած չորս խախտումները հանձնարարվել է վերացնել անմիջապես և մշտապես (գ.թ. 34-35):

2) 05.09.2007 թվականի թիվ 4683-246/12 ուսումնասիրության հանձնարարագրի հիման վրա 13.09.2007 թվականից մինչև 20.09.2007 թվականն ընկած ժամանակահատվածում Նադեմա Մանուկյանի գեղեցկության սրահում անցկացվել է 26.06.2007 թվականի թիվ 4683 ստուգման ակտով տրված հանձնարարականների կատարման ուսումնասիրություն (գ.թ. 15):

3) Տեսչության 20.09.2007 թվականի թիվ 0143 ուսումնասիրության ակտի և սանիտարահիգիենիկ և սանիտարահամաճարակային կանոնների խախտման մասին թիվ 0139 արձանագրության համաձայն՝ 26.06.2007 թվականի թիվ 4683 ստուգման ակտով տրված հանձնարարականներից չորսը չեն կատարվել (գ.թ. 10-12):

4) Հասարակ գրավոր ձևով 17.07.2007 թվականին տրված լիազորագրի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Նադեմա Մանուկյանը լիազորել է Անահիտ Ստեփանյանին ստորագրելու, ինչպես նաև բոլոր պետական, իրավաբանական հիմնարկ-ձեռնարկություններում և կազմակերպություններում իր անունից հանդես գալու իրավունքով (գ.թ. 13):

5) Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության 28.09.2007 թվականի արձանագրության համաձայն՝ գործի քննությանը մասնակցել է Նադեմա Մանուկյանի լիազորված անձ Անահիտ Ստեփանյանը, որին բացատրվել են նրա իրավունքներն ու պարտականությունները (գ.թ. 7):

6) Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի թիվ 0140/76 որոշման համաձայն՝ Նադեմա Մանուկյանի նկատմամբ նշանակվել է տուգանք 80.000 ՀՀ դրամի չափով: Նշված որոշումն ստացել է Նադեմա Մանուկյանի լիազորված անձ Անահիտ Ստեփանյանը (գ.թ. 6):

7) Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի թիվ 0140/76 որոշումը Նադեմա Մանուկյանը չի վիճարկել, այն չի վերացվել, չի հաստատվել դրա առաջին լինելը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ գլուխը սահմանում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթին մասնակցող անձանց վերաբերող դրույթներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ գլխի դրույթներով չի սահմանվում վարչական վարույթում պատասխանատվության ենթարկվող անձի շահերը ներկայացնելու իրավունք ունեցող անձանց սպառիչ շրջանակը: Նշված գլխում ամրագրված 267-րդ հոդվածով կարգավորվում են վարչական պատասխանատվության ենթարկվող

անձի իրավունքներին ու պարտականություններին առնչվող հարցերը, իսկ 270-րդ հոդվածով սահմանված են փաստաբանի՝ որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթին մասնակցող անձի իրավունքներն ու պարտականությունները:

Վերոհիշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի են վարչական վարույթում ներկայացուցչության հարաբերությունները կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի համապատասխան դրույթները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լիազորված անձինք կամ օրինական ներկայացուցիչները վարչական մարմնի պահանջով պարտավոր են ներկայացնել լիազորագիր կամ օրինական ներկայացուցիչ լինելը հաստատող փաստաթուղթ: Լիազորագրի համար նուտարական վավերացում չի պահանջվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայանալու համար:

Վերը շարադրված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական վարույթի մասնակիցների ներկայացուցիչ կարող է լինել հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով հանդես եկող ցանկացած անձ:

Սույն գործով Դատարանը, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ գլխի դրույթներով, մասնավորապես՝ 267-րդ հոդվածի 1-ին մասով, 269-270-րդ հոդվածներով և պատճառաբանելով, որ օրենքի ուժով վարչական վարույթի ընթացքում ներկայացուցիչ կամ լիազորված անձ կարող է հանդիսանալ միայն փաստաբանը, իսկ տվյալ դեպքում անհատ ձեռնարկատեր Նադեմա Մանուկյանի շահերը ներկայացված են եղել օրենքով սահմանված լիազորություն չունեցող անձի կողմից, հանգել է այն հետևության, որ վարչական պատասխանատվության ենթարկվող անձը չի մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը և չի ստացել Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի որոշումը, ինչի հետևանքով որոշումը չի մտել օրինական ուժի մեջ, այսինքն՝ Նադեմա Մանուկյանի համար նշված որոշումն իրավական հետևանքներ չի կարող առաջացնել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ հասարակ գրավոր ձևով 17.07.2007 թվականին տրված լիազորագրով Նադեմա Մանուկյանը լիազորել է Անահիտ Ստեփանյանին իր անունից հանդես գալ բոլոր պետական, իրավաբանական հիմնարկ-

ձեռնարկություններում և կազմակերպություններում: Այդ լիազորագրի հիման վրա Անահիտ Ստեփանյանը մասնակցել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը և ստացել է Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի թիվ 0140/76 որոշումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթում Նադեմա Մանուկյանի շահերը ներկայացվել են օրենքով սահմանված լիազորություն ունեցող անձի կողմից, իսկ վերջինիս պատշաճ կերպով բացատրվել են իր իրավունքներն ու պարտականությունները, և հանձնվել է «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի որոշումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական գործի քննությունն իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Նադեմա Մանուկյանի իրավունքների պահպանմամբ, ինչի արդյունքում էլ կայացված «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի որոշումը հանձնվել է նրան: Այսինքն՝ Նադեմա Մանուկյանն ստացել է իր նկատմամբ վարչական պատասխանատվություն սահմանող վարչական ակտը, հետևաբար, այն մտել է ուժի մեջ և ենթակա է կատարման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Դատարանը հայցը մերժելիս դուրս է եկել հայցի շրջանակներից, քանի որ վարչական ակտի իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում անդրադարձել է նաև վարչական ակտի իրավաչափության հարցին և բացառել է դրա իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությունը այն դեպքում, երբ սույն գործով Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի թիվ 0140/76 որոշումը չի վիճարկվել, չի վերացվել, չի հաստատվել դրա առոչինչ լինելը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 28.09.2007 թվականի թիվ 0140/76 որոշումն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ նշված որոշումն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը չի կարող կասկածի տակ դնել այդ որոշման իրավաչափությունը (*տե՛ս ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի ընդդեմ Հրաչյա Քարամյանի՝ ինքնակառավարությունը քանդելուն պարտավորեցնելու և 200.000 ՀՀ դրամ վարչական տուգանքը բռնագանձելու պահանջների մասին թիվ ՎԳ/2068/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը*):

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանին

րանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 17.09.2009 թվականի վճիռը և այն փոփոխել. ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հայցը բավարարել՝ Նադեմա Մանուկյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքի գումարը:

2. Նադեմա Մանուկյանից հօգուտ ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության բռնագանձել 11.500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի և վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-7722/05/08
Դատավոր՝ Ա. Ղազարյան

Վարչական գործ թիվ ՎԴ-7722/05/08
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 27-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի Էրեբունի վարչական շրջանի
ներկայացուցիչ Գևորգ Գևորգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի
05.11.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Արմեն Աթանեսյանի ընդդեմ Երևանի
Էրեբունի համայնքի՝ 09.12.2008 թվականի թիվ 1-33/17 որոշումն անվավեր ճա-
նաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արմեն Աթանեսյանը պահանջել է անվավեր ճանաչել
Էրեբունի համայնքի ղեկավարի 09.12.2008 թվականի թիվ 1-33/17 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.12.2008 թվականի
վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ներկայացուցիչ Գևորգ Գևորգյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Աթանեսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն Արմեն Աթանեսյանի հայցը բավարարելու հիմքում դրել է պատճառաբանությունն այն մասին, որ «որպեսզի անձի համար վրա հասնի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիայի կիրառումը, պարտադիր պայման է հանդիսանում ժամկետանց ապրանք վաճառելը: «Աթանեսյանի Գնդապետ Կամո» ՍՊԸ-ում հսկողություն իրականացնող տեսուչները պարզապես պարտավոր էին արձանագրությունը կազմելիս, իսկ համայնքի ղեկավարն իր 2008 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1-33/17 որոշումը կայացնելիս հիմնավորել, որ հայտնաբերված ժամկետանց ապրանքներն իսկապես վաճառվել են, այլ ոչ թե պահվել են առաքվող ֆիրմային վերադարձնելու նպատակով»:

Վաճառել եզրույթը Դատարանի կողմից մեկնաբանվել է ոչ այլ կերպ, քան ապրանքը ձեռքից ձեռք փոխանցելու պահը: Այնինչ, վաճառել հասկացության տակ պետք է հասկանալ վաճառելու նպատակով ապրանքատեսականու ցուցադրում, ինչն էլ իրականացվել է Արմեն Աթանեսյանի կողմից, քանի որ վաճառատարի սառնարանը ցուցադրական է, այսինքն՝ ապակյա ցուցափեղկով, որտեղ վաճառքի համար ցուցադրված ապրանքատեսականու կողքին հայտնաբերվել են ժամկետանց ապրանքներ:

Դատարանն արդարադատություն իրականացնելու, ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգեցելու համար պետք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների կիրառմամբ գնահատեր գործում առկա ապացույցները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 05.11.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Դատարանը, կատարելով բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, կայացրել է օրինական վճիռ: Գործի հանգամանքները ցույց են տալիս, որ վիճարկվող որո-

շումը կայացվել է օրենքի պահանջների խախտմամբ: Այն ապրանքը, որի համար կայացվել է վիճարկվող որոշումը, գտնվել է սառնարանի պահեստային մասում, որը խանութ մտնող հաճախորդների համար տեսանելի չէ ու չի ցուցադրվել որպես վաճառվող ապրանք: Այսինքն՝ չի առաջարկվել գնորդներին և թողնվել է սառնարանի պահեստային մասում՝ մատակարարին վերադարձնելու համար:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Էրեբունի համայնքի ղեկավարի 25.11.2008 թվականի թիվ 13 հանձնարարագրի հիման վրա Էրեբունի համայնքի ղեկավարի աշխատակազմի առևտրի և սպասարկումների բաժնի մասնագետներ Ահարոն Մարգարյանին և Կարեն Վաղարշյանին հանձնարարվել է տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների սահմաններում «Աթանեսյանի Գնդապետ Կամո» ՍՊԸ-ում կատարել հսկողություն առևտրի և ծառայությունների ոլորտում, որի համար սահմանվել է ժամկետ 2008 թվականի նոյեմբերի 25-26-ը (գ.թ. 4):

2) Իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերված խախտման վերաբերյալ 26.11.2008 թվականի թիվ 12 արձանագրությամբ արձանագրվել է, որ առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի խախտում (գ.թ. 22):

3) Երևանի Էրեբունի համայնքի ղեկավարի 09.12.2008 թվականի թիվ 1-33/17 որոշմամբ Արմեն Աթանեսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության 100.000 ՀՀ դրամի չափով (գ.թ. 19):

4) Դատարանը 23.04.2009 թվականին նշանակված նախնական դատական նիստին ապացույցների բեռի բաշխման կանոնին համապատասխան պատասխանող Էրեբունու թաղապետարանի ներկայացուցչին հանձնարարել է ներկայացնել ապացույցներ, մասնավորապես՝ պատասխանողի կողմից վկայակոչած այն լուսանկարները, որոնք վկայում են այն մասին, որ ժամկետանց ապրանքը ստուգման ժամանակ գտնվել է հաճախորդների համար տեսանելի և մատչելի վայրում: Ընդ որում, պատասխանողի ներկայացուցչի կողմից Դատարանի հանձնարարության կատարումն ապահովելու համար որոշվել է հրավիրել ևս մեկ նախնական նիստ 12.09.2009 թվականին՝ ժամը 16.00-ին (գ.թ. 32):

5) 12.09.2009 թվականին նշանակված նախնական դատական նիստին Դատարանը պարզաբանել է նախորդ դատական նիստի հետաձգման շարժառիթները և պատասխանողի ներկայացուցչից ստացել պատասխան, որ Դատարանի կողմից պահանջված ապացույցները չեն պահպանվել (գ.թ. 41):

6) Վարչական գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհիմնավորվեր, որ ժամկետանց ապրանքները պահվել են վաճառքի համար նախատեսված վաճառարահի ցուցադրական և տեսանելի մասում:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը տալիս է վտանգավոր սննդամթերք հասկացության սահմանումը, համաձայն որի՝ սննդամթերք, որը պիտանի չէ մարդու կողմից սպառման համար և ըստ իր նշանակության պահվելու, պատրաստվելու, օգտագործվելու, մատուցվելու և սպառվելու դեպքում վնասակար է մարդու կյանքի և առողջության համար:

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վտանգավոր սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերը և վտանգավոր սննդային հավելումները ենթակա են առանձին հաշվառման ու պահման, շուկայից հեռկանչման և փորձաքննության:

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ արգելվում է պիտանիության ժամկետը լրացած սննդամթերքի վերափաթեթավորումը և իրացումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ պիտանիության ժամկետն անցած սննդամթերքը համարվում է վտանգավոր սննդամթերք, քանի որ դրա սպառումը վնասակար է մարդու կյանքին ու առողջությանը: Հետևաբար, պիտանիության ժամկետն անցած սննդամթերքը պետք է ենթարկվի առանձին հաշվառման և պահման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պիտանիության ժամկետն անցած ապրանքներ վաճառելն առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանված զանցանքը դրսևորվում է ինչպես պիտանիության ժամկետն անցած ապրանքներն ուղղակի վաճառելով, այնպես էլ՝ այդ ապրանքները վաճառասրահի հատուկ կահավորված վայրերում վաճառելու համար՝ հաճախորդներին տեսանելի վայրերում ցուցադրելով:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վարչական տուգանքը՝ որպես վարչական պատասխանատվության միջոց, ծագում է նաև պիտանիության ժամկետն անցած ապրանքը վաճառելու նպատակով՝ հաճախորդների համար տեսանելի վայրում ցուցադրված լինելու հանգամանքի առկայության դեպքում:

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիայի կիրառման համար պարտադիր պայման է հանդիսանում ժամկետանց ապրանքը վաճառելը, հաստատված է համարել, որ հսկողություն իրականացրած տեսուչները պարտավոր էին արձանագրությունը կազմելիս, իսկ Երևանի

Էրեբունի համայնքի ղեկավարն իր 09.12.2008 թվականի թիվ 1-33/17 որոշումը կայացնելիս հիմնավորել, որ հայտնաբերված ժամկետանց ապրանքներն իսկապես վաճառվել են և ոչ թե պահվել առաքող կազմակերպությանը վերադարձնելու նպատակով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, կարևորելով ժամկետանց ապրանքը վաճառելու պահը, սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գնում է, որ վերը նշված նյութական նորմի խախտումը հիմք չէ դատական ակտը բեկանելու համար, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի դատական ակտերի վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի և գործի վարույթի վրա (mutatis mutandis) տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի մնան համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի հա-

մաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով էական են վեճի լուծման համար և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե որն է սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, և որ կողմը պետք է կրի այդ փաստի ապացուցման դատավարական բեռը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ/ կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Սույն վարչական գործի փաստերի համադրության արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի պիտանիության ժամկետն անցած ապրանքը վաճառելու նպատակով՝ հաճախորդների համար տեսանելի վայրում ցուցադրված լինելու հանգամանքը, որը ապացուցելու պարտականությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ կետի ուժով դրված է վարչական մարմնի վրա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 23.04.2009 թվականին նշանակված նախնական դատական նիստին Դատարանն, ապացույցների բեռի բաշխման կանոնին համապատասխան, պատասխանողին հանձնարարել է ներկայացնել ապացույցներ, մասնավորապես՝ պատասխանողի կողմից վկայակոչված այն լուսանկարները, որոնք վկայում են, որ ժամկետանց ապրանքը ստուգման ժամանակ գտնվել է հաճախորդների համար տեսանելի և մատչելի վայրում: Նշված ապացույցը ներկայացնելու համար նախնական դատական նիստը հետաձգվել է և նշանակվել

12.09.2009 թվականին՝ ժամը 16.00-ին: Նշանակված նախնական դատական նիստին պատասխանողի կողմից պահանջված ապացույցը չի ներկայացվել՝ այն պահպանված չլինելու պատճառաբանությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գատարանն ի պաշտոնե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պարզել է սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ այն ապացուցելու պարտականությունն օրենքի ուժով պատասխանող կողմի վրա դնելով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գատարանն այդ փաստի պարզման համար ողջամիտ միջոցներ է ձեռնարկել և վարչական մարմնի կողմից գործի համար էական նշանակություն ունեցող փաստը չապացուցելու պայմաններում հաստատված համարել, որ այն բացակայում է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է վճռաբեկ բողոքի պատասխանում նշված այն փաստարկը, որ Գատարանը կատարել է բազմակողմանի և օբյեկտիվ քննություն և կայացրել գործող օրենսդրության պահանջներից, գործի նյութերից և հանգամանքներից բխող հիմնավոր վճիռ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Նույն օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել՝ ՀՀ վարչական դատարանի 05.11.2009 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0735/05/10
Դատավոր՝ Կ. Բաղդասարյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0735/05/10
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 03-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 13.07.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Արա Դադայանի ընդդեմ Ոստիկանության՝ 22.12.2009 թվականի թիվ ԱԲ 335934 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արա Դադայանը պահանջել է անվավեր ճանաչել Ոստիկանության 22.12.2009 թվականի թիվ ԱԲ 335934 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 13.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ոստիկանությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արա Դադայանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 8-րդ կետը, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18.2-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում բացակայում է նույն իրավախախտման փաստը, քանի որ Արա Դադայանը վիճարկվող որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության ոչ թե 02.12.2009 թվականին, այլ 22.12.2009 թվականին, տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է պատասխանատվություն ոչ թե տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության չներկայացնելու, այլ տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար:

Դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Արա Դադայանն առաջին և երկրորդ իրավախախտումների միջև ընկած ժամանակահատվածում զրկված չի եղել տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության ներկայացնելու հնարավորությունից, ավելին, նա, ըստ էության, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանված տասնօրյա ժամկետից ավելի երկար ժամանակ է ունեցել նշված պարտականությունը կատարելու համար, ինչը չի արել:

Բացի այդ, 02.12.2009 թվականին առաջին անգամ տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար Արա Դադայանին վարչական պատասխանատվության ենթարկելիս ժամանակավոր համարանիշ չտրամադրելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ 22.12.2009 թվականին կատարված իրավախախտումը չարձանագրելու և իրավախախտում կատարած անձին վարչական պատասխանատվության չենթարկելու համար: Այսինքն՝ վիճարկվող որոշումը կայացնելիս պահպանվել են ՀՀ օրենսդրության պահանջները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 13.07.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Դատարանը ճիշտ է կիրառել «Ճանապարհային երթևեկության անվտանգու-

թյան ապահովման մասին» ՀՀ օրենքի 18.2-րդ հոդվածը, քանի որ սահմանված ժամկետում տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու դեպքում Ոստիկանության ծառայողը պարտավոր է հանել տրանսպորտային միջոցի համարանիշները և տասնօրյա ժամկետով տալ ժամանակավոր համարանիշ:

Տվյալ դեպքում երկու անգամ էլ Արա Դադայանին տուգանել են նույն իրավախախտման, այն է՝ 2009 թվականի տեխզննությունը չանցած ավտոմեքենան վարելու համար:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ոստիկանության 02.12.2009 թվականի թիվ ԱԲ 299317 որոշման համաձայն՝ Արա Դադայանը տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել է 50.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (գ.թ. 4):

2) Գործում առկա չէ որևէ ապացույց Ոստիկանության 02.12.2009 թվականի թիվ ԱԲ 299317 որոշման կայացումից հետո տասնօրյա ժամկետում Արա Դադայանի կողմից տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության ենթարկելու վերաբերյալ:

3) Ոստիկանության 22.12.2009 թվականի թիվ ԱԲ 335934 որոշման համաձայն՝ տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար Արա Դադայանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել է 50.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (գ.թ. 5):

4) Ոստիկանության պետի 30.12.2009 թվականի որոշմամբ Արա Դադայանի դիմումը թողնվել է առանց բավարարման, իսկ Ոստիկանության 22.12.2009 թվականի թիվ ԱԲ 335934 որոշումը՝ անփոփոխ (գ.թ. 10-11):

5) ՀՀ ոստիկանության իրավական ապահովման վարչության 04.02.2010 թվականի որոշմամբ Ոստիկանության պետի 30.12.2009 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ դիմումը՝ առանց բավարարման (գ.թ. 8-9):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանված ժամկետում տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Նշված հոդվածից հետևում է, որ դրանում նկարագրված իրավախախտումը

(զանցանքը) դրսևորվում է՝ սահմանված ժամկետում տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելով:

Սույն գործով Դատարանը պատճառաբանել է, որ տվյալ դեպքում Արա Դադայանը նույն արարքի համար նախ՝ Ոստիկանության 02.12.2009 թվականի թիվ ԱԲ 299317 որոշմամբ, այնուհետև՝ 22.12.2009 թվականի թիվ ԱԲ 335934 որոշմամբ կրկին ենթարկվել է վարչական պատասխանատվության: Մինչդեռ Սահմանադրությամբ արգելված է միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվությունը, իսկ օրենսդիրն անհնարին է համարել նման դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի իրականացումը:

Բացի այդ, Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող որոշումը Ոստիկանության կողմից իր պարտականությունները չկատարելու, մասնավորապես՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 18.2-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգը չպահպանելու արդյունք է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ոստիկանության 02.12.2009 թվականի թիվ ԱԲ 299317 որոշմամբ Արա Դադայանը նույն օրը տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել է 50.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի: Ընդ որում, գործում առկա չէ որևէ ապացույց նշված որոշման կայացումից հետո տասնօրյա ժամկետում Արա Դադայանի կողմից տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության ենթարկելու վերաբերյալ, իսկ 22.12.2009 թվականի թիվ ԱԲ 335934 որոշմամբ Արա Դադայանը 50.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի է ենթարկվել այդ օրը տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում բացակայում է նույն արարքի համար անձին կրկնակի վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքը, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է պատասխանատվություն տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար. Արա Դադայանը 02.12.2009 թվականին վարչական պատասխանատվության է ենթարկվել այդ օրը տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար, իսկ վիճարկվող որոշմամբ՝ 22.12.2009 թվականին տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար:

Ինչ վերաբերում է Դատարանի այն պատճառաբանությանը, որ վիճարկվող որոշումը Ոստիկանության կողմից իր պարտականությունները չկատարելու արդյունք է, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի «ժա» կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելվում է, եթե տրանսպորտային միջոցն օրենքով սահ-

մանված ժամկետում չի անցել տեխնիկական զննություն:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18.2-րդ հոդվածի համաձայն՝

1. Նույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ժա», «ժբ» կետերով և երկրորդ մասով նախատեսված դեպքերում ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովող ոստիկանության ծառայողը պարտավոր է արձանագրել խախտումը և նույն հոդվածով սահմանված կարգով հանել տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշները...:

2. Նույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ժա» և «ժբ» կետերում նշված դեպքերում տրանսպորտային միջոցների համարանիշները հանելու դեպքում վարորդին տրվում է 10-օրյա ժամկետով ժամանակավոր համարանիշ՝ տրանսպորտային միջոցը տեխնիկական զննություն անցկացնելու կամ գործարանային տեսքի բերելու կամ վերասարքավորումն օրինականացնելու համար...:

3. Տրանսպորտային միջոցների շահագործումը՝ հաշվառման համարանիշները հանելով արգելելու և ժամանակավոր համարանիշ տալու դեպքում, իրավասու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ ոստիկանության ծառայողը պարտավոր է արձանագրել խախտումը և նույն հոդվածով սահմանված կարգով հանել տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշները, որի դեպքում վարորդին 10-օրյա ժամկետով տրվում է ժամանակավոր համարանիշ՝ տրանսպորտային միջոցը տեխնիկական զննություն անցկացնելու կամ գործարանային տեսքի բերելու կամ վերասարքավորումն օրինականացնելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելը և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվառման համարանիշները հանելու ընթացակարգը միմյանցից տարբեր գործընթացներ են:

Տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելիս ժամանակավոր համարանիշ չտրամադրելու դեպքում անձը չի զրկվում 10 օրվա ընթացքում տրանսպորտային միջոցը տեխնիկական զննություն անցկացնելու կամ գործարանային տեսքի բերելու կամ վերասարքավորումն օրինականացնելու իրավունքից, քանի որ ժամանակավոր համարանիշ տրամադրելը համապատասխան պետական մարմնի պարտականությունն է, և վարորդը չի կարող կրել դրա չկատարման բացասական հետևանքները: Այսինքն՝ նման դեպքերում անձը կարող է ունենալ օրինական սպասելիք, որ իրեն պատասխանատվության ենթարկելու դեպքում նա ունի 10-օրյա ժամկետ այդ խախտման պատճառները վերացնելու համար:

Մինչդեռ սույն գործով Արա Գաղայանն օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության չի ներկայացրել և հետագայում պատասխանատվության է ենթարկվել արդեն քսան օր անց նոր իրա-

վախախտում կատարելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշները չհանելը և ժամանակավոր համարանիշներ չտրամադրելը որևէ ձևով չի հանգեցրել Արա Դադայանի կողմից նոր իրավախախտում կատարելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ոստիկանության 22.12.2009 թվականի թիվ ԱԲ 335934 որոշումը կայացվել է օրենքի պահանջների պահպանմամբ, և բացակայում է այն անվավեր ճանաչելու՝ օրենքով նախատեսված որևէ հիմք:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Գատական ակտը փոփոխելիս, Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 13.07.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Արա Դադայանի հայցը մերժել:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/2522/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2522/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Արտյոմ Չաքմիշյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վարչական դատարանի 18.09.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Արտյոմ Չաք-
միշյանի հայցի ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության շուկայի և սպառողների
շահերի պաշտպանության պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ վար-
չական ակտը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արտյոմ Չաքմիշյանը պահանջել է վերացնել Տեսչու-
թյան ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համա-
պատասխանության հավաստման բնագավառներում գլխավոր պետական տեսուչի

16.04.2009 թվականի թիվ 35 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 18.09.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտյոմ Չաքմիշյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն որոշումը, կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հիմնավոր է համարել Տեսչության 08.04.2009 թվականի թիվ 097 ստուգման ակտում արձանագրված այն փաստը, որ «Տրիո Փրոջեքթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից իրացվող ապրանքների վրա հայերեն լեզվով տեղեկատվության բացակայության հետևանքով խախտվել են ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն և 23.06.2005 թվականի թիվ 898-Ն որոշումները, և գտել է, որ այդ հիմքով Ընկերության տնօրենին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելն իրավաչափ է: Մինչդեռ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածը կիրառվում է ոչ թե ցանկացած, այլ միայն ստանդարտացման ոլորտի նորմատիվ փաստաթղթերի պահանջները խախտելու դեպքում, որպիսիք ՀՀ կառավարության վերոնշյալ որոշումները չեն հանդիսանում:

2) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վաճառողի՝ հայերեն լեզվով սպառողին տեղեկություն տրամադրելու պարտավորությունն առաջանում է սպառողի, այսինքն՝ վերջնական գնորդի պահանջի դեպքում: Մինչդեռ Դատարանը չի պարզել, թե ստուգող տեսուչների կողմից արձանագրվել է սպառողի պահանջի դեպքում Ընկերության կողմից հայերեն լեզվով տեղեկություն տրամադրելը մերժելու դեպք: Ավելին, Ընկերության պահեստում պահվող ապրանքի վրա հայերեն լեզվով մակնշման բացակայությունն ինքնին չի նշանակում, որ խախտվել է սպառողի ճիշտ ընտրություն կատարելու իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 18.09.2009 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տեսչության 08.04.2009 թվականի թիվ 097 ստուգման ակտի համաձայն՝ Ընկերությունն իրականացնում է կոսմետիկական, մազերի, մաշկի խնամքի, հիգիենայի միջոցների ներմուծում և իրացում՝ առանց հայերեն լեզվով տեղեկատվության, որի արդյունքում չեն պահպանվում ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն և 23.06.2005 թվականի թիվ 898-Ն որոշումների պահանջները (գ.թ. 27-28):

2) Տեսչության ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համապատասխանության հավաստման բնագավառներում գլխավոր պետական տեսուչի 16.04.2009 թվականի թիվ 35 որոշմամբ Ընկերության տնօրեն Արտյոմ Չաքմիշյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ենթարկվել է վարչական տուգանքի՝ 100.000 ՀՀ դրամի չափով (գ.թ. 23-24):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջները խախտելը, բացի սույն օրենսգրքի 158 հոդվածով նախատեսված իրավախախտումներից, արտադրանքն իրացնելու (առաքելու), օգտագործելու (շահագործելու), պահելու, փոխադրելու, օգտահանելու ժամանակ, ինչպես նաև պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնելու համար արտադրանք, անհրաժեշտ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելուց խուսափելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 188-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է սահմանում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջները, պարտադիր սերտիֆիկացման կանոնները, չափումների միասնականության ապահովման նորմատիվ փաստաթղթերի պահանջները խախտելու համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով նախատեսված պատասխանատվությունը կիրառվում է ոչ թե ցանկացած, այլ միայն ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պահանջները խախտելու դեպքում:

«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ ստանդարտացումն իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ հանընդհանուր և բազմակի կիրառման դրույթների սահմանման

միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեություն է: Նույն հոդվածի «բ» կետի համաձայն՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով սահմանվում են կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր՝ գործունեության տարբեր ձևերի կամ դրանց արդյունքների վերաբերյալ, իսկ «դ» կետը ստանդարտը սահմանում է որպես իրավասու մարմնի կողմից ընդունված փաստաթուղթ, որով սահմանվում են համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ցուցումներ կամ արտադրանքի համար բնութագրեր կամ դրանց հետ կապված արտադրման գործընթացներ և մեթոդներ, որոնց համապատասխանությունը պարտադիր չէ: Այն կարող է ընդգրկել նաև տերմինաբանությանը, փաթեթավորմանը, պայմանանշաններին, արտադրանքի մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող պահանջներ:

Վերոնշյալ իրավանորմերից հետևում է, որ ստանդարտացման նորմատիվ փաստաթուղթը իրավասու մարմնի կողմից ընդունված այն փաստաթուղթն է, որում սահմանվում են ստանդարտացման գործընթացի մասնակիցների համար պարտադիր կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր, որոնց համապատասխան պետք է արտադրվի այս կամ այն ապրանքը, իրականացվի համապատասխան աշխատանքը և մատուցվի ծառայությունը:

Սույն գործով Դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Ընկերությունն իրականացնում է կոսմետիկական, մազերի, մաշկի խնամքի, հիգիենայի միջոցների ներմուծում և իրացում՝ առանց հայերեն լեզվով տեղեկատվության, և գտել է, որ արդյունքում խախտվել են ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն և 23.06.2005 թվականի թիվ 898-Ն որոշումների պահանջները, որպիսի պարագայում կիրառելի է համարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիան:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն որոշմամբ (վերոնշյալ ՀՀ կառավարության 23.06.2005 թվականի թիվ 898-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն որոշման մեջ) հաստատվել է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգը: Նշված տեղեկատվության բովանդակությունը սահմանված է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով, որը, ըստ էության, վերաբերում է արդեն իսկ պատրաստի արտադրանքի (կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների) հիմնական սպառողական հատկություններին, դրանց գնին և ձեռքբերման պայմաններին, երաշխիքային ժամկետին, արդյունավետ և անվտանգ օգտագործման կանոններին և պայմաններին, արտադրողի (կատարողի, վաճառողի) գտնվելու վայրին և այլ այնպիսի տվյալներին, **որոնցով օժտված են արդեն**

իսկ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կանոններին, ընդհանուր սկզբունքներին կամ բնութագրերին համապատասխան արտադրված ապրանքը, կատարվող աշխատանքը և մատուցվող ծառայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1923-Ն և 23.06.2005 թվականի թիվ 898-Ն որոշումները չեն համարվում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթեր, ուստի դրանց պահանջների խախտման դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող կիրառվել, քանի որ վերջինս վարչական պատասխանատվություն է սահմանում միայն **ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի** պահանջների խախտման համար:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողն իրավունք ունի պահանջել արտադրողի (կատարողի, վաճառողի), նրա աշխատանքային ռեժիմի և իրացվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որը արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է տրամադրել հայերեն լեզվով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությունը մատչելի ձևով ներկայացվում է սպառողներին ի գիտություն՝ առուվաճառքի պայմանագրերի միջոցով և սպառողների սպասարկման որոշակի ոլորտներում ընդունված ապրանքային պիտակների միջոցով և այլ եղանակներով, աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) պայմանագրերի կնքման ժամանակ:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը:

Վերոնշյալ իրավանորմների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ թեև սպառողն իր հերթին իրավունք ունի պահանջել արտադրողի (կատարողի, վաճառողի), նրա աշխատանքային ռեժիմի և իրացվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, այնուամենայնիվ, սպառողի՝ ճիշտ ընտրություն կատարելու հնարավորությունն ապահովվելու նպատակով «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը արտադրողին (կատարողին, վաճառողին) պարտավորեցնում է նշված տեղեկատվությունը սպառողին տրամադրել ժամանակին՝ նախքան ընտրություն կատարելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով Դատարանը հաստատված է համարել Ընկերության կողմից առանց հայերեն տեղեկատվության ապրանքների իրացման փաստը:

Մինչդեռ՝ գործում առկա փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց հայտնաբերված ապրանքների կարգավիճակի, այսինքն՝ **տվյալ պահին** իրացման (վաճառքի) ենթակա, հետևաբար նաև՝ այդ պահին սպառողներին հասանելի լինելու փաստի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով չի հաստատվել սպառողների կողմից ապրանքների ճիշտ ընտրության հնարավորությունը Ընկերության կողմից սահմանափակելու փաստը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 18.09.2009 թվականի վճիռը և այն փոփոխել. անվավեր ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համապատասխանության հավաստման բնագավառներում գլխավոր պետական տեսուչի 16.04.2009 թվականի թիվ 35 որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ-/0496/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Ա. Սարգսյան
Ա. Միրզոյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի սեպտեմբերի 10-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Աղվան Գրիգորյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վարչական դատարանի 09.02.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Արտակ Պետրոսյանի հայցի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն»
ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն), երրորդ անձ Աղվան Գրիգորյանի՝
Ոստիկանության 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշումը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատրավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արտակ Պետրոսյանը պահանջել է վերացնել Ոստիկանության 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշումը, վերապահել վթարի հետևանքով կրած վնասների հատուցման համար մեղավոր անձանց դեմ քաղաքա-

ցիական հայց ներկայացնելու իրավունք, ինչպես նաև՝ հիմք ընդունելով Արտակ Պետրոսյանի և Նվեր Բարսեղյանի միջև ստորագրված պայմանագիրը՝ փոխհատուցել կատարված դատական ծախսերը:

ՀՀ վարչական դատարանի 20.05.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ոստիկանության 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշումը ճանաչել անվավեր և վերացնել, դատական ծախսերը փոխհատուցելու պահանջի մասով հայցը մերժել, իսկ վթարի հետևանքով կրած վնասների հատուցման համար մեղավոր անձանց դեմ քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունք վերապահելու պահանջի մասով գործի վարույթը կարճել:

Վճռաբեկ դատարանի 16.10.2009 թվականի որոշմամբ Աղվան Գրիգորյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է բեկանել ՀՀ վարչական դատարանի 20.05.2009 թվականի վճռի՝ Ոստիկանության 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշումն անվավեր ճանաչելու և վերացնելու մասը, և այդ մասով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.02.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աղվան Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արտակ Պետրոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ հոդվածները, 16-րդ հոդվածի 7-րդ մասը, 24-րդ հոդվածը, 27-րդ հոդվածի 4-րդ մասը, 72-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 6-րդ կետերը, 86-րդ, 122-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, քննելով Ոստիկանության 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմումը, դուրս է եկել հայցի հիմքում դրված փաստարկներից, ըստ էության փոխել է դրա քննության հիմքը և Աղվան Գրիգորյանի համար ստեղծել է դատավարական անհավասար պայմաններ՝ չապահովելով գործի արդարության բոլոր պահանջներով քննությունը:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման չի ենթարկել Ոստիկանության 12.01.2009 թվականի թիվ 2-4234 եզրակացությունը, որից հետևում

է, որ վարչական վարույթի ընթացքում պարզվել է այն հանգամանքը, որ ընդհարման առաջացումը պայմանավորված էր միայն Արտակ Պետրոսյանի գործողություններով:

Դատարանը մերժել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ գործին մասնակցող անձանց միջնորդությունը: Մինչդեռ, Դատարանը չպետք է սահմանափակվեր կողմերի ներկայացրած ապացույցներով և պետք է նշանակեր դատաավտոտեխնիկական փորձաքննություն: Նշվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Աղվան Գրիգորյանն իր կամքից անկախ զրկված էր ՀՀ վարչական դատարանում գործի քննության ընթացքում ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից: Իսկ գործի նոր քննության կանոնակարգման համաձայն, ինչպես նշված է Դատարանի վճռում, կողմերը չեն կարող ներկայացնել ապացույցներ, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը մատնանշում է ապացուցման ենթակա նոր փաստ և պահանջում ներկայացնել դրա հետ կապված նոր ապացույցներ: Փաստորեն, սույն գործի դատաքննության ամբողջ ընթացքում Աղվան Գրիգորյանը հնարավորություն չի ունեցել ներկայացնել ապացույցներ: Այդ փաստի հաշվառմամբ նույնպես Դատարանը պարտավոր էր բավարարել դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ վերջինիս միջնորդությունը՝ հնարավորություն տալով ներկայացնել որևէ ապացույց, կամ իր ներքին համոզմամբ առաջնորդվելով՝ Դատարանն առնվազն պետք է մատնանշեր ապացուցման ենթակա նոր փաստ և պահանջեր ներկայացնել դրա հետ կապված նոր ապացույցներ, ինչը չի արել:

2) Դատարանը կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ, 252-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ՝ Ծանապարհային երթևեկության կանոններ) 67-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել Ծանապարհային երթևեկության կանոնների 94-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ վիճելի իրավահարաբերություններում բացակայում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ, 252-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի և Ծանապարհային երթևեկության կանոնների 67-րդ կետի կիրառման համար անհրաժեշտ փաստական հիմքերը, և նշված իրա-

վական նորմերի կիրառումը պայմանավորված է Դատարանի թույլ տված՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 09.02.2010 թվականի վճիռը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը.

Բողոք բերած անձը նշել է, որ Դատարանը դուրս է եկել հայցի հիմնավորումներից՝ դրանով իսկ բարենպաստ պայմաններ ստեղծելով Արտակ Պետրոսյանի համար: Սինչդեռ, բողոք բերած անձն անտեսել է այն փաստը, որ վարչական դատավարությունը տարբերվում է քաղաքացիական դատավարությունից այն առումով, որ ՀՀ վարչական դատարանը գործի փաստերը պարզում է ի պաշտոն:

Դատարանը դատաավտոտեխնիկական փորձաքննություն չնշանակելով վերաբերյալ ըստ էության տվել է այն մեկնաբանությունը, որ վարչական մարմինը գործը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու համար ինքն էր պարտավոր վարչական վարույթ իրականացնելիս նշանակել դատաավտոտեխնիկական փորձաքննություն: Այսինքն՝ Դատարանը, քննելով սույն գործը, բացահայտել է վարչական մարմնի գործողությունների ոչ իրավաչափ լինելը մինչև վիճարկվող որոշումը կայացնելը, այլ ոչ թե նշված որոշումը կայացնելուց հետո:

Բողոք բերած անձի այն պնդումը, որ Դատարանի վճռով խախտվել են իր իրավունքները, անհիմն է, քանի որ վճռում նշված չէ ոչ մի բան կամ արտահայտություն կամ միտք, որով շոշափվել են բողոք բերած անձի իրավունքները, այլ նշված է միայն, որ վարչական մարմինը պարտավոր էր պարզել Աղվան Գրիգորյանի կողմից խախտում կատարված լինելու կամ չլինելու փաստը, ինչը պարզված չէ:

Այսպիսով, Դատարանի վճիռն օրինական է, հիմնավորված և կայացվել է գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ոստիկանության 12.01.2009 թվականի եզրակացության համաձայն՝ Արտակ Պետրոսյանը թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների 94-րդ կետի պահանջի խախտում, ինչի հետևանքով առաջացել է վթար, և վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1246-րդ հոդվածի 1-ին մասով (հատ. 1, գ.թ. 17):

2) Ոստիկանության 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշման համա-

ձայն՝ Արտակ Պետրոսյանը խախտել է Ճանապարհային երթևեկության կանոնների 94-րդ կետի պահանջը, ինչի հետևանքով առաջացել է վթար: Նույն որոշմամբ վերջինս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1246-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է 20.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (հատ. 1, գ.թ. 19):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Գատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզումների ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վարչական դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է գործում առկա բոլոր ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն այդ պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Սույն գործով Գատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումները, որ վարչական վարույթի նյութերում, այդ թվում՝ Ոստիկանության 12.01.2009 թվականի եզրակացության և 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշման մեջ բացակայում է որևէ եզրահանգում այն մասին, որ Աղվան Գրիգորյանի գործողությունները համապատասխանել են Ճանապարհային երթևեկության կա-

նոնների պահանջներին և չեն պայմանավորել պատահարի առաջացումը: Մինչդեռ, պատահարի առաջացումը կարող էր պայմանավորված լինել ինչպես վարորդներից միայն մեկի, այնպես էլ երկուսի՝ Ճանապարհային երթևեկության կանոնների պահանջներին հակասող գործողություններով: Վարչական վարույթի արդյունքում չի հերքվել կամ չի հաստատվել նաև պատահարը կանխելու՝ Աղվան Գրիգորյանի տեխնիկական հնարավորությունն ու աղյախին ունենալու դեպքում վերջինիս գործողությունների և ընդհարման միջև պատճառահետևանքային կապը: Հետևաբար, վարչական վարույթի արդյունքում չի հիմնավորվել, որ ընդհարման առաջացումը պայմանավորված էր միայն Արտակ Պետրոսյանի գործողություններով: Նշվածից հետևում է, որ վարչական վարույթի ընթացքում խախտվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ և 252-րդ հոդվածները:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննության համար նշված հանգամանքների հետազոտությունը չունի որևէ նշանակություն, քանի որ սույն գործով վիճարկվել է վարչական ակտ, որի կայացման համար բավարար է եղել Ճանապարհային երթևեկության կանոնների 94-րդ հոդվածի խախտումը, այն է՝ վարորդը պետք է ճանապարհը զիջի խաչմերուկի անցումը և երթևեկելի մասի հատումը դեռևս չավարտած հետիոտներին և տրանսպորտային միջոցներին, եթե անգամ արդեն միացել է լուսացույցի թույլատրող ազդանշանը: Հետևաբար, պատահարի երկրորդ մասնակցի գործողությունները, վերջինիս՝ պատահարը կանխելու համար տեխնիկական միջոցներ ունենալու, նրա գործողությունների և ընդհարման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը որևէ նշանակություն չի կարող ունենալ Ոստիկանության 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշման անվավերության հարցի քննարկման համար:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Ոստիկանության 12.01.2009 թվականի եզրակացությունը և 13.01.2009 թվականի թիվ ԱՐ 617027 որոշումը, ինչի արդյունքում կայացրել է չհիմնավորված վճիռ:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի առաջին հիմքում բերված մյուս փաստարկներին և վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին չի անդրադառնում, քանի որ Դատարանի կողմից թույլ տրված նշված դատավարական իրավունքի նորմերի խախտումների պայմաններում դրանք սույն գործի լուծման համար չունեն որևէ իրավական նշանակություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 09.02.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ
վարչական գործ թիվ ՎԴ/4129/05/08
Դատավոր՝ Հ.Բեդկյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4129/05/08**
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 13-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 07.10.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ «Ձե-
ներալ Տրանստուրլդ Սենյուֆեքչրինգ Քամփնի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարի՝ ՀՀ ֆինանսների նախարարի
27.05.2008 թվականի թիվ 147-Ա հանձնարարագիրն անվավեր ճանաչելու պա-
հանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ ֆին-

անսների նախարարի 27.05.2008 թվականի թիվ 147-Ա հանձնարարագիրը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 07.10.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը, կիրառել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, 55-րդ, 57-րդ, 63-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ, 5.1-րդ մասերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնք պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նշված օրենքը չի կարգավորում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման և անցկացման հարաբերությունները: Հետևաբար, հիմնավոր չէ Դատարանի այն եզրահանգումը, թե նշված օրենքով են սահմանվում ստուգում իրականացնող և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգման արդյունքների ամփոփումը: Օրենքի սխալ մեկնաբանման հետևանքով Դատարանը հանգել է սխալ եզրահանգման այն մասին, որ Նախարարությունը պետք է ստուգման հետ կապված գործողություններն իրականացնել և համապատասխան ակտերն ընդունել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված կարգով, մինչդեռ, նշված օրենքի դրույթները քրեադատավարական հարաբերություններում կիրառելի չեն:

Միաժամանակ, Դատարանը ՀՀ ֆինանսների նախարարի 27.05.2008 թվականի թիվ 147-Ա հանձնարարագիրը դիտել է որպես վարչական ակտ և, կիրառելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 55-րդ և 57-րդ հոդվածները, որոնք վերաբերում են գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջներին, եկել է այն համոզման, որ հանձնարարագիրն ընդունվել է օրենքի խախտմամբ, ինչը նույն օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է այն անվավեր ճանաչելու համար:

Գատարանի այդ պնդումը հիմնավոր չէ, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ նշված օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա: Գատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հանձնարարագիրը տրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ ոստիկանության քննիչի կայացրած որոշման հիման վրա:

Քննիչն իրավասու է որոշմամբ Նախարարությունից պահանջել կատարելու ստուգում, իսկ Նախարարությունը պարտավոր է կատարել այդ որոշման պահանջները: Հետևաբար, 27.05.2008 թվականի թիվ 147-Ա հանձնարարագրի տրման ժամանակ Նախարարությունը կատարել է այնպիսի գործողություն, որի համար լիազորված էր ՀՀ օրենսդրությամբ: Նշված հանձնարարագիրն ընդամենը հանձնարարական է Նախարարության համապատասխան աշխատակիցներին՝ կատարելու քննիչի որոշման պահանջները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 07.10.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Ընկերության հայրը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ավագ քննիչի 13.12.2007 թվականի որոշմամբ Ընկերությունում նշանակվել է ստուգում, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

2) ՀՀ ֆինանսների նախարարի 27.05.2008 թվականի թիվ 147-Ա հանձնարարագրի համաձայն՝ նախարարը, հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության պահանջը, ՀԿԳՎ ավագ քննիչի առաջադրված հարցերի ստուգումը հանձնարարել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության իրավապահ մարմինների հետ համագործակցության բաժնի գլխավոր վերահսկիչ-վերստուգիչներին: Ստուգման ժամկետը սահմանվել է 30 օր: Որպես հանձնարարագրի արձակման հիմք նշվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳՎ վարչության 19.03.2008 թվականի թիվ 7/816 գրությունը և ավագ քննիչի 13.12.2007 թվականի որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ քննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն և գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, նույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է քննիչի լիազորությունները, որի 5-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ: Նույն հոդվածի 5.1-րդ մասի համաձայն՝ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից իր լիազորությունների սահմաններում քրեական գործով կայացված որոշումը ենթակա է պարտադիր կատարման բոլոր կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից:

Վիճարկվող հանձնարարագրի արձակման պահին գործող՝ «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1460-Ն որոշմամբ (ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Կառավարության 15.05.2008 թվականի թիվ 503-Ն որոշման հիմքով, որն ուժի մեջ է մտել 12.06.2008 թվականին) հաստատված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 8-րդ կետի «ժա» ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հսկողության իրականացման և ֆինանսական վերահսկողության ոլորտում Նախարարությունն իրականացնում է նախաքննության մարմինների ու դատարանի որոշումներով համապատասխան վերստուգումների կատարումը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ ստուգում նշանակելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի 27.05.2008 թվականի թիվ 147-Ա հանձնարարագրի արձակման հիմքը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ վարչության 19.03.2008 թվականի թիվ 7/816 գրությունը և ավագ քննիչի 13.12.2007 թվականի որոշումն է:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նշված օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի), իրավաբանական անձի մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի գործունեության ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները,

ինչպես նաև սահմանում է դրանց իրականացման միասնական կարգը: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նշված օրենքը չի կարգավորում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման և անցկացման հետ կապված հարաբերությունները:

Միաժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նշված օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները: Նույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նշված օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա:

Վերը նշված նորմերից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման և անցկացման հետ կապված հարաբերությունները դուրս են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից:

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարի 27.05.2008 թվականի թիվ 147-Ա հանձնարարագիրն անվավեր ճանաչելիս Վարչական դատարանը պատճառաբանել է, որ նշված հանձնարարագիրն արձակվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 55-րդ և 57-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով և վերը նշված պատճառաբանություններից ելնելով, վերոնշյալ հոդվածները սույն վեճի լուծման համար կիրառելի չեն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդ-

վածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 07.10.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ «Ձեներալ Տրանստորդ Սենյուֆեքչրինգ Քամփնի» ՓԲԸ-ի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
վարչական գործ թիվ ՎԴ-3/0294/05/08
Դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ-3/0294/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 17-ին,

դրնբաց դատական նիստում, քննելով ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 16.10.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ Տաթևիկ Մնացականյանի՝ 40.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և ըստ Տաթևիկ Մնացականյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության Արարատի մարզային կենտրոնի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Տաթևիկ Մնացականյանից Տեսչության Արարատի մարզային կենտրոնի պետի 06.05.2008 թվականի որոշմամբ նշանակված վարչական տույժի գումարը՝ 40.000 ՀՀ դրամ:

Դիմելով դատարան՝ Տաթևիկ Մնացականյանը պահանջել է առոչինչ ճանաչել վարչական տույժ նշանակելու մասին 06.05.2008 թվականի թիվ 1750 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 16.10.2008 թվականի վճռով Տեսչության հայցը մերժվել է, իսկ Տաթևիկ Մնացականյանի հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Տաթևիկ Մնացականյանը:

2.1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի սխալ մեկնաբանության արդյունքում Դատարանը հանգել է այն եզրակացության, որ Տեսչության պետի 02.04.2008 թվականի թիվ 0716/03 հանձնարարագրում նշված չէ ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը:

2) *Դատարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1 մասը, որը պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ սանիտարական կանոններով սահմանված պահանջները պահպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունը բխում է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներից, և ոչ թե՛ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված կանոններից:

Բացի այդ, Դատարանն անտեսել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1 մասը, որով թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում

սանիտարական նորմեր, կանոններ նախատեսել այլ իրավական ակտերով, սակայն պայմանով, որ չսահմանվեն իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ:

Հետևաբար, հիմնավոր չէ Դատարանի եզրահանգումն այն մասին, որ տվյալ դեպքում սանիտարական նորմերն ու կանոնները դրանց կիրառման պահին օրենքի ուժով չեն գործել, ինչպես նաև այն, որ ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանը հակասում է ՀՀ սահմանադրության 83.5 հոդվածին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասին, 94-րդ հոդվածի 3-րդ մասին:

3) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Տեսչությունը գործում է առողջապահության նախարարության կազմում, և այն կառավարում է ՀՀ առողջապահության նախարարը, հետևաբար, հիմնավոր չէ դատարանի այն հետևությունը, որ ՀՀ առողջապահության նախարարն իրավասու չէ հաստատելու սանիտարական կանոններ:

4) *Դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու վերաբերյալ իրավահարաբերությունների նկատմամբ պետք է կիրառեր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նորմերը, քանի որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն այդ օրենսգրքով նախատեսված առանձնահատուկ վարչական վարույթ է: Տվյալ դեպքում, Դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների սխալ կիրառումն ազդել է գործի ելքի վրա, քանի որ գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները տուգանք նշանակելու մասին 06.05.2008 թվականի որոշմամբ չեն խախտվել:

5) *Դատարանը չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ, 255-րդ, 281-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը և հանգել այն հետևության, որ ստուգում իրականացնող անձի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումն իրավաչափ չէ: Արդյունքում, Դատարանը չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, որը պետք է կիրառեր և կիրառել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 16.10.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.2. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Ստուգումներն իրականացվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Մասնավորապես, հանձնարարագրում նշված չեն ստուգման հարցերը, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման իրավական հիմքերը, ստուգման նպատակը, ժամկետը, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության պետի 02.04.2008 թվականի թիվ 0716/03 հանձնարարագրի համաձայն՝ 14.04.2008 թվականից մինչև 23.04.2008 թվականն ընկած ժամանակահատվածում անհատ ձեռներեց Տաթևիկ Մնացականյանի գեղեցկության սրահում անցկացվել է սանիտարական օրենսդրության, սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների, սանիտարահիգիենիկ և սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, հակահամաճարակային ռեժիմի պահանջների կատարման նկատմամբ թեմատիկ ստուգում (գ.թ. 4-6):

2) Տեսչության 23.04.2008 թվականի սանիտարահիգիենիկ և սանիտարահամաճարակային կանոնների խախտման մասին թիվ 2079 արձանագրության համաձայն՝ Տաթևիկ Մնացականյանի գեղեցկության սրահում հայտնաբերվել են ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանով սահմանված «Գեղեցկության սրահներին ներկայացվող սանիտարական կանոնների»

խախտումներ (գ.թ. 7):

3) Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 06.05.2008 թվականի թիվ 1750 որոշման համաձայն՝ Տաթևիկ Մնացականյանի նկատմամբ նշանակվել է տուգանք 40.000 ՀՀ դրամի չափով (գ.թ. 8):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ

1) Վճարելի բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները (հետագայում՝ սանիտարական կանոններ) սահմանում են բնակչության համար շրջակա միջավայրի անվտանգության և ոչ վնասակարության չափանիշներն ու մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման պահանջները:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ սանիտարական օրենսդրության, սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների, սանիտարահիգիենիկ և սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, հակահամաճարակային ռեժիմի պահանջների կատարման նկատմամբ թեմատիկ ստուգումն իրականացվում է բնակչության համար շրջակա միջավայրի անվտանգությունը և ոչ վնասակարության չափանիշներն ու մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմաններն ապահովելու համար:

ՀՀ առողջապահության նախարարի «Գեղեցկության սրահներին ներկայացվող N 2-III-2.2.3 սանիտարական կանոնները հաստատելու մասին» 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանի 3.1. կետի համաձայն՝ գեղեցկության սրահները պետք է ապահովված լինեն սառը և տաք ջրով, կոյուղով, ջեռուցմամբ, օդափոխիչ համակարգերով, էլեկտրականությամբ, իսկ նույն հրամանի 3.3 համաձայն՝ գեղեցկության սրահների լուսավորվածությունը պետք է համապատասխանի «Արհեստական և բնական լուսավորում» ՀՀ ՇՆ II-8.03-96 շինարարական նորմերի պահանջներին:

Սույն գործում առկա՝ Տեսչության 23.04.2008 թվականի սանիտարահիգիենիկ և սանիտարահամաճարակային կանոնների խախտման մասին թիվ 2079 արձանագրության համաձայն՝ Տաթևիկ Մնացականյանի գեղեցկության սրահն ապահովված չէ ջեռուցման, օդափոխման, օդի լավորակման համակարգերով ՀՀ ՇՆ II-8.03-96 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճարելի

դատարանը գտնում է, որ սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանոնների և նորմերի, հակահամաճարակային ռեժիմի պահանջների, այդ թվում ՀՀ առողջապահության նախարարի «Գեղեցկության սրահներին ներկայացվող N 2-III-2.2.3 սանիտարական կանոնները հաստատելու մասին» 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանի 3.1. կետի պահանջների կատարման ստուգումը կարող է իրականացվել **միայն ստուգման պահի դրությամբ**: Նման ստուգման նպատակն է արձանագրել վերոհիշյալ կանոնների ու նորմերի պահպանման վիճակը ստուգման պահին, հետևաբար, բողոք բերող անձի փաստարկն այն մասին, որ հանձնարարագրում օբյեկտիվորեն հնարավոր չէր նշել ստուգմամբ ընդգրկվող այլ ժամանակաշրջան, հիմնավոր է: Նման պայմաններում ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը համընկնում է ստուգման պահին:

Մինչդեռ, սույն գործով Դատարանը գտել է, որ 02.04.2008 թվականի թիվ 0716/03 հանձնարարագիրը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, մասնավորապես, այնտեղ նշված չէ ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը:

2) Վճուրթեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1 մասի համաձայն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոններ, կարգեր կամ տեխնիկական նորմեր (քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային, հաշվապահական հաշվառման, ստանդարտացման և այլն) օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում և սահմաններում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով, որոնք չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ:

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակա-

յին անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սանիտարական կանոնների կատարումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սանիտարական կանոնների մշակման, հաստատման, վերանայման և կիրարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են կատարել Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջները և արտադրական վերահսկողություն իրականացնել դրանց նկատմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, ինչպես նաև նրանց պարտականությունները սահմանվում են միայն օրենքով: Ընդ որում՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոնները, կարգերը կամ տեխնիկական նորմերն օրենքով ուղղակիորեն նախատեսված չլինելու դեպքում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով, որոնք իրենց հերթին չեն կարող պարունակել նոր պարտականություններ:

Միաժամանակ, սանիտարական կանոնների մշակման, հաստատման, վերանայման և կիրարկման կարգի սահմանումը վերապահելով Հայաստանի Հանրապետության կառավարությանը, օրենքը սահմանել է այդ կանոնների պարտադիր կատարումը բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից և սահմանել է այդ կանոնների պարտադիր կատարման պարտականությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության «Տուգանք սահմանելու մասին» 06.05.2008 թվականի թիվ 1750 որոշման համար հիմք ծառայած ՀՀ առողջապահության նախարարի «Գեղեցկության սրահներին ներկայացվող N 2-III-2.2.3 սանիտարական կանոնները հաստատելու մասին» 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանն, ըստ էության, սահմանում է Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջները պահպանելու պարտականությանն ուղղված կանոնակարգող կանոններ, իսկ սանիտարական նորմերի և կանոնների կատարման պարտականությունը, ինչպես նաև նման նորմերն ու կանոններն իրավական այլ ակտերով նախատեսելու հնարավորությունն ուղղակիորեն սահմանված են օրենքով:

Հետևաբար, հիմնավոր չէ Դատարանի այն հետևությունը, որ սանիտարական կանոնները հաստատվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ

հողվածի 6-րդ մասի և ՀՀ Սահմանադրության 83.5 հողվածի պահանջների խախտմամբ:

3) Վճռաբեկ բողոքն երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ.

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հողվածի համաձայն՝ սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը:

ՀՀ կառավարության 15.08.2002 թվականի թիվ 1316-Ն որոշման համաձայն՝ հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հողվածի և «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 16.03.2002 թվականի ՆՀ-1064 հրամանագրի 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը վերակազմակերպել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կազմում գործող Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության՝ առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:

Նույն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կանոնադրության 9-րդ կետի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը կառավարում է ՀՀ առողջապահության նախարարը:

Վերը նշված նորմերից հետևում է, որ սանիտարական կանոնները մշակում ու հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը: Տվյալ ծառայության իրավահաջորդն է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կազմում գործող Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը, ընդ որում՝ Տեսչությունը կառավարում է ՀՀ առողջապահության նախարարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ առողջապահության նախարարն ի պաշտոնե պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության ղեկավարն է և «Գեղեցկության սրահներին ներկայացվող N 2-III-2.2.3 սանիտարական կանոնները հաստատելու մասին» 29.11.2002 թվականի

թիվ 804 հրամանը տալու նրա իրավունքը բխում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15.08.2002 թվականի թիվ 1316-Ն որոշման պահանջներից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Դատարանի այն պատճառաբանությունը, որ թե ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002 թվականի թիվ 804 հրամանը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներից:

4) Վճռաբեկ բողոքը չորրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանի վճռի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ «Տուգանք սահմանելու մասին» Տեսչության պետի 06.05.2008 թվականի թիվ 1750 որոշումը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջներին, մասնավորապես, այն չի պարունակում ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս), ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

Վարչական պատասխանատվության ենթարկելու գործերի վարույթը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առանձին տեսակի վարչական վարույթ է, որը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության վարույթը կարգավորող նորմերով:

Մասնավորապես, վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի քննության ընթացքում ընդունված որոշման բովանդակության համար վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են այլ պահանջներ, քան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման գործը, մարմինը (պաշտոնատար անձը) գործի վերաբերյալ որոշում է ընդունում..., իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշումը պետք է պարունակի՝ այն ընդունած

մարմնի (պաշտոնատար անձի) անվանումը, գործի քննության ժամանակաթիվը, տեղեկություններ այն անձի մասին, որի վերաբերյալ քննվում է գործը, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը, տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի նշումը, գործի վերաբերյալ ընդունված որոշումը:

Սույն գործում առկա «Տուգանք սահմանելու մասին» Տեսչության 06.05.2008 թվականի թիվ 1750 որոշման ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն կազմվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

5) Վճռաբեկ բողոքը հինգերորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում է դրա համար լիազորված պաշտոնատար անձը:

Սույն վարչական գործով Դատարանը, վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, նշել է, որ ստուգում իրականացնող անձինք իրավագոր չեն կազմել արձանագրություն, քանի որ դա նախատեսված չէ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը նախատեսված չլինելու հիմքով Դատարանը ստուգում իրականացնողի կողմից 23.04.2008 թվականի թիվ 2079 արձանագրության կազմումը գնահատել է որպես ոչ իրավաչափ, որի արդյունքում իրավախախտման մասին արձանագրությունը դիտվել է որպես ապացուցողական ուժ չունեցող և անթույլատրելի ապացույց:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի՝ որպես վարչական վարույթի առանձին տեսակի, առանձնահատկությունները սահմանված են ոչ թե «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, այլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Անտեսվել է նաև այն հանգամանքը, որ Տեսչությունը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջներով, ստուգման կապակցությամբ իրականացրել է օրենքով նախատեսված բոլոր գործառնությունները և

կազմել թիվ 2364 ստուգման ակտը, սակայն, միևնույն ժամանակ հայտնաբերելով վարչական իրավախախտման հատկանիշներ, հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ, 255-րդ, 236-րդ, 42-րդ հոդվածները, կազմել է նաև վարչական իրավախախտման մասին արձանագրություն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին համապատասխան իրականացրել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն, 282-րդ հոդվածի հիման վրա կայացրել է որոշում՝ տուգանք սահմանելու մասին: Նշված որոշումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում չի բողոքարկվել, իսկ հակընդդեմ հայց ներկայացնելիս Ա/Չ Տաթևիկ Մնացականյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված կարգով որևէ դիմում չի ներկայացվել բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ Վարչական դատարանի 16.10.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հայցը բավարարել՝ Տաթևիկ Մնացականյանից բռնագանձել 40.000 ՀՀ դրամ վարչական տույժի գումարը: Տաթևիկ Մնացականյանի հակընդդեմ հայցը մերժել:

Տաթևիկ Մնացականյանից հօգուտ ՀՀ առողջապահության նախարարության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/0068/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0068/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի փետրվարի 5-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Կարեն և Նանա» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 23.07.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Կարեն և Նանա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ 09.12.2008 թվականի թիվ 1101518 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին և ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյան-1 հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 09.12.2008 թվականի թիվ 1101518 ստուգման ակտը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 3.733.500 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.07.2009 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ հոդվածները և 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 37-րդ, 55-57-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վարչական դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չհետազոտելով գործում առկա ապացույցները, ինչպես նաև չպարզելով գործի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, սխալ եզրահանգման է եկել խանութում առկա ապրանքի գրանցված չլինելու վերաբերյալ:

Մասնավորապես՝ Վարչական դատարանը հաշվի չի առել, որ ստուգման ակտի բովանդակությունից որևէ համեմատություն չի երևում, դրանում ընդամենը վերացական ձևով նշված է, որ 3.930.000 ՀՀ դրամի ապրանքներ չեն գրանցվել:

Ավելին, գույքագրման ցանկում ամրագրված է ընդամենը փաստացի առկա ապրանքը, և այն չի պարունակում որևէ համեմատություն, իսկ չգրանցված ապրանքի մասին հետևությունը հնարավոր է միայն պարզելով այս կամ այն կոնկրետ ապրանքը գրքում գրանցված չլինելու փաստով՝ ամրագրելով այդ ապրանքի քանակը և արժեքը:

Բացի այդ, ձեռնարկատիրական գործունեության առարկայի գրանցված չլինելու խախտման մասին հետևությունը չի կարող լինել վերացական միայն գումարի մատվ, առանց պարզելու այն փաստական հանգամանքը, թե որ ապրանքը չի գրանցվել: Այս կարևոր փաստական հանգամանքը ակտում բացակայում է, ինչն արդեն իսկ նշանակում է, որ բացակայում է ակտի հիմնավորումը:

Գործի քննության ընթացքում Ընկերության ներկայացուցչի կողմից փորձ է

արվել ճշտել նշված փաստական հանգամանքը, սակայն որևէ պատասխան չի տրվել այն հարցադրմանը, թե գույքագրման ցանկում նշված որ ապրանքն ինչ քանակով գրանցված չի եղել: Հետևաբար, վարչական մարմինը չէր կարող ապրանքը համարել չգրանցված, ուստի ապրանքը չգրանցելու վերաբերյալ հետևությունը հիմնավորված չէ:

Դատարանն անտեսել է, որ գործի քննության ընթացքում Տեսչությունը փորձել է ապրանքները չգրանցելու հետևությունը հիմնավորել խանութում առկա ապրանքանյութական արժեքների դրամային արտահայտությամբ ավելցուկով, սակայն այս փաստը նույնպես չի հաստատվել, քանի որ ապրանքի չգրանցման խախտումը չի կարող հիմնված լինել միայն ընդհանուր ապրանքի արժեքի համեմատության հիման վրա, առանց անդրադառնալու ապրանքների առանձին տեսակների գրանցված լինելու հանգամանքին: Բացի այդ, Տեսչությունը չի կարողացել հիմնավորել նաև արժեքային արտահայտությամբ ավելցուկը, որն, իբր, կատարվել է գրանցման գրքի հետ համեմատելով:

Դատարանը, չանդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի մի շարք պահանջների ակնհայտ խախտումների մասին Ընկերության նշած հիմքերին, վճռում նշել է, որ ««Կարեն և Նանա» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից նշված մյուս հանգամանքները, դատարանի կարծիքով, հիմք չեն կարող հանդիսանալ ըստ էության ճիշտ և իրական փաստերն արձանագրող ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար»:

Մինչդեռ, Դատարանը պարտավոր էր անդրադառնալ ակտն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված բոլոր հիմքերին ու հիմնավորումներին, տալ դրանց վերաբերյալ իր իրավական դիրքորոշումը: Այնինչ, վճռում ոչ միայն բացակայում է Ընկերության նշած հիմքերի և հիմնավորումների վերլուծությունը, համապատասխան համոզմունքի ձևավորման պատճառաբանությունը, այլև նշված չէ, թե որ «մյուս հանգամանքերը» Դատարանը հիմք չի համարում ակտն անվավեր ճանաչելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 23.07.2009 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Կոմիտեի նախագահի 10.11.2008 թվականի թիվ 1101518 հանձնարարագրով հանձնարարվել է Ընկերությունում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմիններին վերապահված իրավասության սահմաններում կատարել ձեռնարկատիրական գործունեության առարկաների (առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող) գրանցման ճշտության ստուգում (գ.թ. 14):

2. Ստուգման արդյունքներով 09.12.2008 թվականին կազմված թիվ 1101518

ակտով Ընկերությանը տուգանքի տեսքով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն 1.965.000 ՀՀ դրամի չափով: Ակտով արձանագրվել է, որ ընկերության կողմից արտադրանքի, ապրանքների և դրանց գների հաշվառման գրքում /գործունեության հասցե՝ Երևան, Նալբանդյան 98/ չի գրանցվել վաճառքի (իրացման) գներով 3932,0 հ. դրամի ապրանք, այսինքն՝ ընկերության կողմից չի կատարվել ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 315 որոշմամբ հաստատված կարգի պահանջները: Համաձայն ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 315 որոշմամբ հաստատված կարգի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու համար ընկերությունից ենթակա է գանձման չգրանցված ապրանքի 50 տոկոսի չափով կամ 1965.0 հ.դրամ: Ակտում նշված է, որ ակտին կցվում է հավելված՝ 30 էջից: Նշված հավելվածը վերնագրված է Ընկերությանը պատկանող ք. Երևան, Նալբանդյան 98 հասցեում գտնվող խանութ-սրահի փաստացի առկա ապրանքանյութական արժեքների գույքագրման ցանկ՝ սույն թվականի նոյեմբերի 26-ի և 27-ի դրությամբ (գ.թ. 15):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.

բ) վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության համաձայն՝ ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, խախտման կոնկրետ ժամանակը, **հղում՝ համապատասխան փաստաթղթերին**, պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Իսկ նույն օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վարչական ակտում համապատասխան փաստաթղթերին հղում կատարելու պարտավորությանը վերաբերող իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտում համապատասխան փաստաթղթերին հղում կատարելու պարտավորության սահմանումն օրենսդրի կողմից ինքնապատասխան չէ, քանի որ **օրենքի այդ պահանջը պահպանված լինելու պարագայում միայն հնարավոր կլինի պարզել, ստուգել և հաստատված համարել խախտումների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև դրանք բավարար հիմքերի առկայությանը արձանագրված լինելու հանգամանքը**, ինչը ստուգումն իրականացրած անձանց հնարավորություն կտա (ակտը վիճարկելու դեպքում) ապացուցելու, որ ուսումնասիրված փաստաթղթերում առկա տվյալները բավարար են եղել այս կամ այն եզրահանգման գալու և խախտում արձանագրելու համար, եթե նույնիսկ տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչները պնդեն, որ այդ փաստաթղթերը ստուգման պահին չեն ուսումնասիրվել (*տես՝ «Նիզ Շիննոնտաժ» ՄՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 24.09.2008 թվականի թիվ 1042697 ակտի 1-ին և 4-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին և Տեսչության հակընդդեմ հայցն ընդդեմ Ընկերության՝ 4.347.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի թիվ ՎԳ/6698/05/08 որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն

ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված նորմերից հետևում է, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածությանը (*տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը*): Ուստի, սույն որոշմամբ կրկին չի անդրադառնում տվյալ հարցին:

Սույն գործով Դատարանը, 30 էջանոց գույքագրման ցանկում արձանագրված ապրանքանյութական արժեքները համեմատելով Ընկերության՝ արտադրանքի, ապրանքների և դրանց գների /հասույթի/ գրանցման /հաշվառման/ գրքում առկա տյալների հետ, հանգել է այն հետևության, որ համեմատության արդյունքում տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա են 3.930.000 ՀՀ դրամի չգրանցված ապրանքներ:

Միաժամանակ, վերը նշվածը հիմք ընդունելով՝ Դատարանը պատճառաբանել է, որ Ընկերության ներկայացուցչի մյուս փաստարկները հիմք չեն ըստ էության ճիշտ և իրավական փաստերը արձանագրող ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

Մինչդեռ, սույն գործում առկա 09.12.2008 թվականի թիվ 1101518 վիճարկվող ակտում առկա չէ հղում համապատասխան փաստաթղթերին: Ակտից պարզ չէ, թե ստուգման ընթացքում կատարված գույքագրման արդյունքները որ փաստաթղթերի հետ են համեմատվել, որոնց արդյունքում հայտնաբերվել է 3.930.000 ՀՀ դրամ ապրանքային ավելցուկը:

Մասնավորապես, Դատարանը, գալով նման եզրահանգման, չի նշել թե հատկապես Ընկերությունում առկա որ ապրանքներն ինչ քանակությամբ և արժեքով չեն գրանցվել Ընկերության՝ արտադրանքի, ապրանքների և դրանց գների /հասույթի/ գրանցման /հաշվառման/ գրքում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտը հիմնավոր չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 23.07.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ

Վարչական գործ թիվ **ՎԴ-1/0069/05/09**

Վարչական գործ թիվ ՎԴ-1/0069/05/09

2010թ.

Նախագահող դատավոր՝ Հ. Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գարալե» ՍՊԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի
Գորիսի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ
բողոքները ՀՀ վարչական դատարանի 27.04.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ
Ընկերության հայցի ընդդեմ Տեսչության՝ 20.05.2009 թվականի թիվ 1000042 ստուգ-
ման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել 20.05.2009
թվականի թիվ 1000042 ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Գատարան) 27.04.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտն անվավեր ճանաչել ակտի 1-ին կետով առաջադրված 43.322.700 ՀՀ դրամ շահութահարկի և 2-րդ կետով առաջադրված 7.680.600 ՀՀ դրամ եկամտահարկի պարտավորությունների մասով: Մնացած մասով հայցը մերժվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերությունը և Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքներին պատասխաններ չեն ներկայացվել:

2. Ընկերության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքո-հիշյալ հիմնավորումներով.

1) Գատարանը սխալ է մեկնաբանել «Գրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը և 12-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկ-ներով.

Գատարանը հաշվի չի առել, որ «Գրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոցներ կարող են կիրառել բացառապես վերադաս հարկային մարմնի ղեկավարը կամ հարկային տեսչությունների ղեկավարները՝ իրենց կողմից ընդունված առանձին ակտով:

Մինչդեռ «Գրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոցներ են կիրառվել ստուգում իրականացնող հարկային տեսուչների կողմից՝ ստուգման ակտով:

Բացի այդ, Գատարանն անտեսել է, որ «Գրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջների խախտման համար կիրառվել է 5211,7 հազար դրամի չափով տուգանք, ինչն ավելի քան հինգ անգամ գերազանցում է օրենքով սահմանված թույլատրելի առավելագույն չափը, քանի որ տվյալ հոդվածի պահանջների խախտման համար կարող է տուգանք նշանակվել կանխիկ դրամով՝ վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) հինգ տոկոսի չափով, որը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից /50.000 ՀՀ դրամ/ և ավել լինել նվազագույն աշխատավարձի հազարապատիկից /1 միլիոն ՀՀ դրամ/:

2) Գատարանը չի կիրառել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկ-ներով.

Դատարանը հաշվի չի առել, որ վիճարկվող ակտի 1-ին, 2-րդ, 4-րդ և 17-րդ կետերում նկարագրված չեն արձանագրված խախտումների կոնկրետ ժամկետները, չկա հղում համապատասխան փաստաթղթերին: Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք չեն մանրամասնել, թե ինչ փաստաթղթերի հիման վրա են կատարվել համապատասխան եզրահանգումներն այն մասին, որ խախտվել են օրենսդրության պահանջները:

Դատարանը հաստատված է համարել, որ ստուգման ակտում առկա չէ նշում խախտման կոնկրետ ժամկետների մասին, հղումը համապատասխան փաստաթղթերին: Սակայն նշված փաստերը հաստատված համարելու հետ միաժամանակ Դատարանը որևէ հետևություն չի կատարել ակտի՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին չհամապատասխանելու իրավական հետևանքների մասին:

3) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ ստուգման ժամկետի երկարաձգման մասին պետք է տեղեկացվի նաև ստուգվող տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Օրենքի նշված դրույթի իմաստն այն է, որ ստուգվող տնտեսվարող սուբյեկտը տեղեկացված լինի, որ իրականացվող ստուգման ժամկետը երկարաձգվել է, և հնարավորություն ունենա այդ լրացուցիչ ժամանակահատվածում միջոցներ ձեռնարկել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ուղղությամբ: Ստուգման ժամկետի երկարաձգման մասին Ընկերության պաշտոնատար անձինք տեղյակ չեն պահվել, ուստի և զրկվել են ստուգման ընթացքում սեփական դիրքորոշումն արտահայտելու, ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները վիճարկելու և ՀՀ օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

4) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, չի կիրառել նույն օրենքի 38-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի են բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ օրենսդրությամբ առանձին տեսակի վարչական վարույթների համար սահմանված չեն որոշակի առանձնա-

հատկություններ: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ նախատեսված չէ «ստուգում» վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցներին արտահայտվելու հնարավորության և ձևի վերաբերյալ, ուստի այդ հարաբերություններում լիովին կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա Ընկերությունը պահանջել է բեկանել Գատարանի 27.04.2010 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1 Տեսչության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Գատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Գատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները: Գատարանը հաշվի չի առել, որ Ընկերության կողմից լրացուցիչ ներկայացված հաշվապահական փաստաթղթերը չեն ներկայացվել ստուգող մարմնին, ինչը հաստատվում է Ընկերության տնօրենի 04.05.2009 թվականի բացատրությամբ այն մասին, որ Ընկերությունը չունի ծախս հիմնավորող փաստաթղթեր: Հետևաբար, փորձաքննության եզրակացության հիմքում դրված փաստաթղթերը, որոնք վարչական վարույթի ընթացքում չեն հետազոտվել, չեն կարող հիմք հանդիսանալ այդ վարույթի ընթացքում ընդունված վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու համար: Մինչդեռ, Գատարանը ղեկավարվել է փորձաքննության եզրակացության իրավաչափության կանխավարկածով:

Վերոգրյալի հիման վրա Տեսչությունը պահանջել է բեկանել Գատարանի 27.04.2010 թվականի վճռի՝ հայցը բավարարելու մասը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 09.03.2009 թվականի թիվ 1000042 հանձնարարագրով Հարկային տեսչության վերահսկողության և գանձումների բաժնի գլխավոր հարկային տեսուչ Շմավոն Հայրապետյանին, հարկային տեսուչ Արտակ Մալինգյանին և սոցիալական

վճարների և եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ Նորայր Գրիգորյանին հանձնարարվել է Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման հանձնարարագրի օրինակը հանձնվել է 09.04.2009 թվականին, իսկ ստուգումը փաստացի սկսվել է 16.04.2009 թվականին: Հանձնարարագիրը ստանալու և ստուգումը սկսելու ամսաթվի մասին Ընկերության իրազեկվածությունը հաստատվել է Ընկերության տնօրենի ստորագրությամբ (1-ին հատոր, գ.թ. 5-6):

2) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1/512 հրամանով Նորայր Գրիգորյանն ազատվել է հարկային ծառայությունից (1-ին հատոր, գ.թ. 134):

3) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 29.04.2009 թվականի «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի թիվ 5 հանձնարարագրերով ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կազմում լրացում կատարելու մասին» թիվ 1-07/684-Ա հրամանով Ընկերությունում ստուգում իրականացնող անձանց կազմը լրացվել է: Որպես ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք ստուգմանը ներգրավվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչության 1-ին բաժնի օպերիվագորներ Պարույր Եպիսկոպոսյանը և Պարզև Գալոյանը (1-ին հատոր, գ.թ. 60):

4) Հարկային տեսչության պետի 29.04.2009 թվականի թիվ 428 զեկուցագրի հիման վրա՝ Ընկերությունում իրականացվող ստուգման ժամկետը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 30.04.2009 թվականի թիվ 1-07/698-Ա հրամանով երկարաձգվել է 10 անընդմեջ աշխատանքային օրով (1-ին հատոր, գ.թ. 58-59):

5) Ընկերության տնօրեն Գագիկ Բաբայանի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչությունում 04.05.2009 թվականին տված բացատրության համաձայն՝ «...սպրանքները ձեռք են բերել շուկաներից, անհատ անձանցից, առանց հիմնավորող փաստաթղթերի: ...2008 թվականի տարեկան հաշվետվություններում իրացումը ցույց են տվել փաստացի կատարված իրացմանը համաձայն, սակայն ծախսային մասը ցույց են տվել առանց հիմնավորող փաստաթղթերի» (2-րդ հատոր, գ.թ. 25):

6) Ստուգման արդյունքներով 20.05.2009 թվականին կազմված թիվ 1000042 ակտով Ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն 89.382.000 ՀՀ դրամ, այդ թվում՝ շահութահարկի գծով՝ 43.322.700 ՀՀ դրամ /ստուգման ակտի 1-ին կետ/, եկամտահարկի գծով՝ 7.860.600 ՀՀ դրամ /ստուգման ակտի 2-րդ կետ/, ավելացված արժեքի հարկի գծով՝ 33.167.000 ՀՀ դրամ /ստուգման ակտի 4-րդ կետ/ և «Գրամարկդային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի խախտման համար՝ 5.211.7000 ՀՀ դրամ /ստուգման ակտի 17-րդ կետ/՝ ներառյալ տույժերի և տուգանքների գումարները: Ստուգման ակտի 4-րդ կետով արձանա-

գրվել է, որ «2008 թվականի բոլոր չորս եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկների դեբետային շրջանառության տողերում ներկայացվել են ՀՀ տարածքում մատակարարներից ձեռք բերված ապրանքների համար վճարված հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներ, որոնց վերաբերյալ Ընկերությունը հարկային հաշիվներ չի ունեցել, բանկային փոխանցմամբ վճարումներ չի կատարել և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկություններ չի ներկայացրել հարկային տեսչություն, որի հետևանքով դրանք ենթակա չեն հաշվանցման» (1-ին հատոր, գ.թ. 7-19):

7) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.08.2009 թվականի ՀՆ 24910909 փորձագետի եզրակացության համաձայն՝ թիվ 1000042 ակտով արձանագրված խախտումների դրվագներով Ընկերության նկատմամբ առաջացող հարկային պարտավորությունները կազմում են 37.749.800 ՀՀ դրամ, այդ թվում՝ 17.436.200 ՀՀ դրամ հարկ (ավելացված արժեքի հարկ), 4.640.200 ՀՀ դրամ տույժ, 15.673.400 ՀՀ դրամ տուգանքներ: Ավելացված արժեքի հարկի գծով 17.436.200 ՀՀ դրամ հարկի գումարի գծով պարտավորությունն առաջացել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջի ոչ ճիշտ կիրառման հետևանքով, այլ ոչ թե հարկման համար հիմք համարվող փաստաթղթերում առանց ԱԱՀ-ի դեբետային շրջանառության իրականում չունենալու պայմաններում ԱԱՀ-ի դեբետի ցույց տրման պայմաններում: 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտով Ընկերությանն առաջադրված հարկային պարտավորությունները հաշվարկվել են փաստաթղթային ստուգման մեթոդով, սակայն ամբողջ ծավալով հաշվի չեն առնվել Ընկերության հետազոտվող ժամանակաշրջանի հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերը: Միաժամանակ եզրակացությունում նշվել է, որ ակտի 1-ին և 2-րդ կետերում նշված փաստերը չեն բխում սույն փորձաքննությանը տրամադրված Ընկերության հաշվապահական փաստաթղթերի տվյալներից և գործող օրենսդրության պահանջներից, հետևաբար շահութահարկի գծով և եկամտահարկի գծով հարկային պարտավորություններ չեն առաջանում (1-ին հատոր, գ.թ. 77-89):

8) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 26.08.2009 թվականի «նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման համաձայն՝ ընկերության 2008 թվականի գործունեության արդյունքում առաջացել է լրացուցիչ զանձման ենթակա 17.436.200 ՀՀ դրամ ԱԱՀ, որը փորձագետի եզրակացության համաձայն: Ընկերության տնօրեն Գագիկ Բաբայանի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջների ոչ ճիշտ կիրառման արդյունք է, այլ ոչ թե հարկեր վճարելուց չարամտորեն խուսափելու նպատակով հարկային հաշվետվություններում կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերում խեղաթյուրված տվյալներ մտցնելու արդյունք: Որոշման հիմքում դրվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.08.2009 թվականի ՀՆ 24910909 եզրակացությունը (1-ին հատոր, գ.թ. 90-91):

9) Ստուգումը փաստացի սկսելու մասին Ընկերության ստուգման մատյանում համապատասխան գրառում չի կատարվել (2-րդ հատոր, գ.թ. 14-17):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

4.1 Զննելով Ընկերության վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1. *վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

«Գրամարկդաշին գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ դրամարկդաշին գործառնությունների մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հարկային մարմինները: Նույն օրենքով սահմանված տուգանքները նշանակվում են հարկային մարմինների ղեկավարների որոշմամբ: Տուգանքի գումարը տասնօրյա ժամկետում չվճարելու դեպքում գումարները գանձվում են հարկային մարմինների հայցով՝ հօգուտ պետական բյուջեի:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դրամարկդաշին գործառնությունների մասին օրենսդրության խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման վարչական մարմնի լիազորությունը սահմանված է «Գրամարկդաշին գործառնությունների մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, օրենքը հստակ սահմանում է պատասխանատվության կիրառման ձևը /որոշում/, ինչպես նաև մատնանշում է պատասխանատվության ենթարկելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձին /հարկային մարմնի ղեկավար/: Այսինքն՝ դրամարկդաշին գործառնությունների մասին օրենսդրության պահանջների խախտման համար նույն օրենսդրությամբ նախատեսված տուգանքները նշանակվում են հարկային մարմինների ղեկավարների որոշումներով:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ «Գրամարկդաշին գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չպահպանելու համար 5.211.700 ՀՀ դրամի չափով տուգանքն առաջադրվել է վիճարկվող 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտի 17-րդ կետով: Գործում առկա չէ հարկային մարմնի ղեկավարի որոշումը դրամարկդաշին գործառնությունների

մասին օրենսդրության պահանջների խախտման համար Ընկերության նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության նկատմամբ «Գրամարկդային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չպահպանելու համար 5.211.700 ՀՀ դրամի չափով տուգանքը պետք է նշանակվեր ոչ թե 20.05.2009 թվականի թիվ 1000042 ստուգման ակտի 17-րդ կետով ստուգող տեսուչների կողմից, այլ հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրամարկդային գործառնությունների մասին օրենսդրության խախտումների համար 20.05.2009 թվականի թիվ 1000042 ստուգման ակտի 17-րդ կետով 5.211.700 ՀՀ դրամի չափով տուգանքի առաջադրումն իրավաչափ չէ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ նաև Գատարանի այն պատճառաբանությունը, որ տուգանքի կիրառման իրավասությունը՝ որպես հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացում, նույնպես փոխանցված է ստուգողներին:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ տուգանքի գումարն ավելի քան հինգ անգամ գերազանցում է օրենքով սահմանված թույլատրելի առավելագույն չափը, ապա 20.05.2009 թվականի թիվ 1000042 ստուգման ակտի 17-րդ կետի ոչ իրավաչափ լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում:

2.Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի

լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը):

Սույն գործով Դատարանը, հայցը՝ ստուգման ակտի 1-ին և 2-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջը, բավարարելով՝ նաև պատճառաբանել է, որ 20.05.2009 թվականի թիվ 1000042 ստուգման ակտը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խախտմամբ, և հանգել է այն հետևության, որ ստուգման ակտի 1-ին և 2-րդ կետերը չեն պարունակում հղում համապատասխան փաստաթղթերին, իսկ ստուգման ակտի 4-րդ և 17-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը մերժելիս նշել է, որ ստուգման ակտը նշված կետերով իրավաչափ է:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը ակտի 4-րդ կետի մասով հայցը մերժելիս չի պատճառաբանել, թե ինչ ապացույցների հիման վրա է հանգել այն հետևության, որ ստուգման ակտը 4-րդ կետով իրավաչափ է: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի վճիռն այդ մասով հիմնավորված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը նոր քննության ընթացքում պետք է պատշաճ գնահատման առարկա դարձնի վերոնշյալ ստուգման ակտը, ինչպես նաև այն համադրելով «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.08.2009 թվականի Հմ 24910909 փորձագետի եզրակացության հետ՝ հիմնավորի այդ ակտով արձանագրված խախտման իրավաչափության հարցը:

3. Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր՝ յուրաքանչյուր տարվա համար, ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց համար սահմանել է պարտավորություն, այն է՝ ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելը:

Սույն գործում առկա ստուգման հանձնարարագրում Ընկերության տնօրենի կողմից կատարված գրառումների համաձայն՝ ստուգման հանձնարարագրի օրինակը հանձնվել է 09.04.2009 թվականին, իսկ ստուգումը փաստացի սկսվել է 16.04.2009 թվականին: Հանձնարարագիրը ստանալու և ստուգումը սկսելու ամսաթվի մասին Ընկերության իրազեկվածությունը հաստատվել է Ընկերության տնօրենի ստորագրությամբ:

Բացի այդ, սույն գործի փաստերի համաձայն՝ ստուգումը փաստացի սկսելու մասին Ընկերության ստուգման մատյանում համապատասխան գրառում չի կատարվել:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում ստուգում իրականացրած պաշտոնատար անձանց կողմից համապատասխան գրառում չի կատարվել, սակայն հանձնարարագիրը ստանալու և ստուգումը սկսելու ամսաթվի մասին Ընկերության իրազեկվածության պայմաններում նման ընթացակարգային խախտումը չի կարող հիմք հանդիսանալ ստուգման արդյունքում կազմված ստուգման ակտն

անվավեր ճանաչելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Ընկերության այն պատճառաբանությունը, որ ստուգումը ոչ օրենքի իմաստով և ոչ էլ գործնականում փաստացի չի սկսվել:

Ինչ վերաբերում է Ընկերության պատճառաբանությանը, որ ստուգման ժամկետը երկարաձգելու մասին Ընկերության պաշտոնատար անձանց չտեղեկացնելը Ընկերությանը զրկել է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքներից օգտվելու հնարավորությունից, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն ստուգման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի մեկնաբանման տեսանկյունից հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն իրավական խնդրին՝ արդյո՞ք հարկային մարմինը պարտավոր է ստուգման ընթացքի երկարացման հրամանը տնտեսվարող սուբյեկտին հանձնել կամ այդ մասին նրան տեղյակ պահել, և որ՞ն է ստուգման ընթացքի երկարացման հրամանի մասին տնտեսվարող սուբյեկտին չծանուցելու իրավական հետևանքը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ վարչական մարմինը պարտավոր է ստուգման ժամկետը երկարաձգելու մասին հրամանի կամ հանձնարարագրի մասին տեղեկացնել տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածները, նշել է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ մասի իրավական վերլուծությանը, արձանագրել է, որ ստուգման ընթացքը երկարացնելու մասին որոշումը վարչական վարույթի ընթացքում ընդունվող ընթացակարգային և անհատական ակտ է, այլ ոչ թե վարչական ակտ և հանդիսանալով անհատական իրավական ակտ, վարքագծի կանոններ է սահմանում դրանում անհատապես նշված հարկային տեսուչների համար և ուժի մեջ է մտնում նրանց հանձնելու պահից (տես՝ «Կոտայքնախագիծ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Կոտայքի տարածքային հարկային տեսչության՝ 23.01.2008 թվականի թիվ 1031619 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի թիվ ՎՂ/1604/05/08 որոշումը):

Հիմք ընդունելով վերը նշվածը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման

մասին» ՀՀ օրենքի կանոնակարգումների լույսի ներքո ստուգման ժամկետը երկարաձգելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 30.04.2009 թվականի թիվ 1-07/698-Ա հրամանն օրենքով սահմանված ժամկետում Ընկերությանը չհանձնելու հանգամանքն ինքնին հիմք չէ ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

4.Վճռաբեկ բողոքը չորրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառարանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է ստուգումների իրականացման բնագավառում վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները, իսկ նման առանձնահատուկ կարգավորման բացակայության պայմաններում գործում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի գ) կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք իրավունք ունեն ներկայացնել բացատրություններ, պարզաբանումներ, հարուցել միջնորդություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները:

Այսինքն՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը ստուգվող տնտեսավարող սուբյեկտների համար նախատեսել է բացատրություններ և պարզաբանումներ տալու, միջնորդություններ հարուցելու, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստուգումն իրականացնող անձանց գործողությունները բողոքարկելու հնարավորություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի գ) կետի ուժով վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցներին արտահայտվելու հատուկ կարգավորում է տրվել քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում «Վարչարա-

րության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով նույն օրենքի 38-րդ հոդվածը սույն գործով կիրառելի չէ:

Այսպիսով, Ընկերության վճռաբեկ բողոքի 1-ին և 2-րդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 28.10.2010 թվականի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

4.2. Զննելով Տեսչության վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի մման համոզմունքի ձևավորումը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռի մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառա-

բանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական ակտի օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս՝ ըստ հայցի Ռ-ազմիկ Մարությանի ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարությանների հակ-ընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54 (ՎԳ) որոշումը):

Սույն գործով Գատարանը հայցի բավարարման հիմքում դրել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.08.2009 թվականի Հմ 24910909:

Մինչդեռ, սույն գործով Գատարանը քննարկման առարկա չի դարձրել Ընկերության տնօրեն Գազիկ Բաբայանի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչությունում 04.05.2009 թվականին տված բացատրությունը, ըստ որի՝ «ապրանքները ձեռք են բերել շուկաներից, անհատ անձանցից առանց հիմնավորող փաստաթղթերի: ... 2008 թվականի տարեկան հաշվետվություններում իրացումը ցույց են տվել փաստացի կատարված իրացմանը համաձայն, սակայն ծախսային մասը ցույց են տվել առանց հիմնավորող փաստաթղթերի» և չի պատճառաբանել, թե ինչու է այդ ապացույցը մերժում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գատարանը պետք է անդրադառնար գործում առկա ապացույցների հետազոտմանն ու գնահատմանը և պատճառաբաներ այս կամ այն ապացույցը մերժելու կամ ընդունելու հիմքերը:

Այսպիսով, Տեսչության վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար: «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 28.10.2010 թվականի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Գատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության և «Գարալե» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 27.04.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/2414/05/08
Նախագահող դատավոր՝ Ա.Միրզոյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2414/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի մարտի 13-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 08.10.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ
հայցի «Հոսք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն
առընթեր հարկային պետական ծառայության՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ ՕՀՎ Լոռու մարզային
բաժնի (այսուհետ՝ Ծառայություն) 14.02.2008 թվականի թիվ 1035652 ստուգման
ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է մասնակի անվավեր ճանա-

չել Ճառայության թիվ 1035652 ստուգման ակտը՝ 10.359.000 ՀՀ դրամ ԱԱՀ-ի մասով: Նկատի ունենալով, որ Ճառայության գանգատարկման հանձնաժողովի 04.04.2008 թվականի որոշմամբ ստուգման ակտի 4-րդ կետից մվագեցվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով առաջադրված տուգանքը՝ 3.453.200 ՀՀ դրամ գումարի չափով, Ընկերությունը նույն չափով պակասեցրել է հայցապահանջը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.10.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել Ճառայության 14.02.2008 թվականի թիվ 1035652 ստուգման ակտի «4. Ավելացված արժեքի հարկ» բաժինը՝ ստուգման ակտում որպես ավելացված արժեքի հարկի գծով կատարված հաշվանցումներ նշված 6.906.400 ՀՀ դրամ գումարի մասով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը չի կիրառել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ և 23-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը չի ունեցել հասույթ, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ չի կնքել, սակայն խախտելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ և 23-րդ հոդվածների պահանջները, 2004 թվականի 4-րդ եռամսյակից մինչև 2007 թվականի 3-րդ եռամսյակը ներառյալ, ԱԱՀ-ի գծով կատարել է 6.906.400 ՀՀ դրամի չափով հաշվանցումներ, որի համար էլ ակտով Ընկերությանն առաջադրվել է հարկային պարտավորություն՝ ԱԱՀ-ի գծով անհիմն հաշվանցված 6.906.400 ՀՀ դրամը:

2) Դատարանը կիրառել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վիճարկվող ակտում նշված է «ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների և ելակետային տվյալների ստուգման արդյունքում

(ըստ ներկայացված փաստաթղթերի) պարզվել է, որ 2004 թվականի 4-րդ եռամսյակից մինչև 2007 թվականի 3-րդ եռամսյակը ներառյալ, ԱԱՀ-ի գծով կատարվել են հաշվանցումներ՝ 6.906.400 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև Ընկերության կողմից չի ներկայացվել 2006 թվականի 4-րդ եռամսյակում և 2007 թվականի 2-րդ եռամսյակում մատակարարների կողմից ստացված երկու հաշիվ ապրանքագրերի վերաբերյալ տեղեկությունները»:

Դատարանը հաշվի չի առել, որ ակտում նշվել է թե ընկերության ներկայացրած որ փաստաթղթերի վրա են հիմնված արձանագրված խախտումները, հետևաբար, ստուգող պաշտոնատար անձանց կողմից վերոնշյալ օրենքի պահանջների խախտումներ թույլ չեն տրվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 08.10.2008 թվականի վճիռը և այն փոփոխել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները.

Ընկերության հաշվապահական փաստաթղթերով, վիճարկվող ստուգման ակտով և բողոքարկող վճռով ապացուցված է, որ Ընկերությունը 2004 թվականի 3-րդ եռամսյակից մինչև 2007 թվականի 3-րդ եռամսյակը ներառյալ չի ունեցել իրացման շրջանառություն, այլ ունեցել է ձեռքբերման շրջանառություն, որպիսի պայմաններում պարզ չէ, թե նույն ժամանակահատվածում Ընկերությունն ինչպես և ինչ կարգով պետք է կատարեր հաշվանցումներ:

Բացի այդ, վիճարկվող ակտի բացատրական մասում նշում չի կատարվել այն մասին, թե Ընկերության կողմից որ ժամանակահատվածում և ինչ հիմքով է կատարվել անհիմն հաշվանցման փաստը:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերությունը հարկային տեսչություն է ներկայացրել վիճարկվող ժամանակահատվածի վերաբերյալ ԱԱՀ-ի գծով եռամսյակային հաշվետվություններ:

2) Ծառայության պետի 12.12.2007 թվականի 1035652 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության պահանջների կատարման ճշտության ստուգում (գ.թ. 24):

3) 14.02.2008 թվականի թիվ 1035652 ստուգման ակտի համաձայն՝ Ընկերությանն առաջադրվել է պետական բյուջե մուծման ենթակա 10.849.800 ՀՀ դրամ հարկային պարտավորություն:

Ստուգման ակտի 4-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը խախտել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ և 23-րդ հոդվածների պահանջները և հասույթ չունենալու, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ չկնքելու պայմաններում, 2004 թվականի 4-րդ եռամսյակից մինչև 2007 թվականի 3-րդ եռամսյակը ներառյալ, ԱԱՀ-ի գծով կատարել է 6.906.400 ՀՀ դրամի չափով հաշվանցումներ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվետվություններով ավել հաշվանցված ԱԱՀ-ի գումարների նկատմամբ հաշվարկվել է տուգանք պարտավորության գումարի 50 տոկոսի չափով, ընդհանուր առմամբ՝ 3.453.200 ՀՀ դրամ (գ.թ. 26-31):

4) Ծառայության գանգատարկման հանձնաժողովի 04.04.2008 թվականի թիվ 10/1 որոշմամբ ստուգման ակտի 4-րդ կետից նվազեցվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով առաջադրված 3.453.200 ՀՀ դրամ տուգանքը (գ.թ. 84-85):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.

Արդյո՞ք ԱԱՀ-ով հարկվող գործարքներ չիրականացնելու և ԱԱՀ-ի գումար չհաշվարկելու պայմաններում Ընկերությունն իրավունք ունի ԱԱՀ-ի գումարից հաշվանցում կատարել:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործարքներ իրականացրած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը համարվում են ԱԱՀ վճարող՝

- եթե նրանք օրենքի համաձայն չեն համարվում պարզեցված հարկ վճարողներ (ներառյալ՝ այն դեպքերը, երբ անձինք չեն կարող կամ դադարում են համարվել այդպիսիք)

- այն գործարքների (գործունեության) մասով, որոնք ենթակա չեն պարզեցված հարկով կամ հաստատագրված վճարներով հարկման:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝

նույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ԱԱՀ վճարող համարվելու համար անձը պետք է իրականացրած լինի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործարքները:

Ընդ որում, ԱԱՀ վճարող անձինք ԱԱՀ-ի գումարից կարող են հաշվանցում (պակասեցում) կատարել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1/ հաշվետու ժամանակաշրջանում պետք է իրականացրած լինեն հարկվող գործարքներ (գործառնություններ),

2/ հարկվող շրջանառության նկատմամբ պետք է հաշվարկված լինեն ԱԱՀ-ի գումար:

Սույն գործի փաստերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունն ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) չի կատարել և ԱԱՀ-ի գումար չի հաշվարկել, հետևաբար՝ Ընկերությունն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի ուժով ԱԱՀ-ի գումարից հաշվանցում կատարելու իրավունք չի ունեցել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից ԱԱՀ-ի գումարից կատարված հաշվանցումներն իրավաչափ չեն:

Մինչդեռ, Դատարանը, հաստատված համարելով Ընկերության՝ հասույթ և ԱԱՀ-ով հարկվող գործարքներ չունենալու հանգամանքը, ստուգման ակտի վիճարկվող 4-րդ մասում առաջադրված հարկային պարտավորությունների առաջացման պարտադիր նախապայման է դիտել միայն այդ պարտավորությունների և Ընկերության՝ հասույթ ու ԱԱՀ-ով հարկվող գործարքներ ունենալու հանգամանքի միջև պատճառական կապի առկայությունը:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, խախտման կոնկրետ ժամանակը, հղում՝ համապատասխան փաստաթղթերին, պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը:

Սույն գործով Դատարանը եզրակացրել է, որ ստուգման ակտի վիճարկվող

մասում հղում չի կատարվել խախտումների համար հիմք հանդիսացած փաստաթղթերին:

Մինչդեռ, գործում առկա ստուգման ակտի ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանը պարզել է, որ ակտի վիճարկվող մասում ուղղակիորեն առկա է «ըստ ներկայացված փաստաթղթերի» արտահայտությունը, ավելին՝ արձանագրվել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել 2006 թվականի 4-րդ եռամսյակում և 2007 թվականի 2-րդ եռամսյակում մատակարարների կողմից ստացված երկու հաշիվ ապրանքագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման ակտի վիճարկվող բաժինը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմի պահանջների պահպանմամբ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքի այն պատճառաբանությունը, որ Դատարանը կիրառել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը, որը չպետք է կիրառեր:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն վարչական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն

որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 08.10.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. «Հոսք» ՍՊԸ-ի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0222/05/09
Նախագահող դատավոր՝ Բ. Սկոյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0222/05/09
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 02.07.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Օլիմպ» արտադրական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ Կոմիտեի նախագահի 06.10.2008 թվականի թիվ 1100432 հանձնարարագիրը, 05.11.2008 թվականի հրամանը և Տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1100432 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և ըստ Տեսչության հակընդդեմ հայցի ընդդեմ Կոոպերատիվի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կոոպերատիվը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի նախագահի 06.10.2008 թվականի թիվ 1100432 հանձնարարագիրը, 05.11.2008 թվականի թիվ 1-07/1461-Ա հրամանը և Տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1100432 ստուգման ակտը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Կոոպերատիվից 28.11.2008 թվականի թիվ 1100432 ստուգման ակտով առաջադրված 17.026.700 ՀՀ դրամ տուգանքի գումարը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 02.07.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. Տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1100432 ստուգման ակտը ճանաչվել է անվավեր, իսկ վարչական գործի վարույթը՝ Կոմիտեի նախագահի 06.10.2008 թվականի թիվ 1100432 հանձնարարագիրը և 05.11.2008 թվականի հրամանն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով: Տեսչության հակընդդեմ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոոպերատիվը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 315 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 6-րդ կետը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի և 24-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը վճռի հիմքում դրել է միայն այն հանգամանքը, որ ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք չեն պարզել ստուգման ակտին կցված ցուցակում նշված ապրանքները խանութում ստանալու ժամկետը: Մինչդեռ, այդ հանգամանքը պարտավոր է ապացուցել ոչ թե Տեսչությունը, այլ Կոոպերատիվը, քանի որ նշված ապրանքների ստացման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (հիմքերը)

գտնվում են Կոոպերատիվում, և վերջինս էլ պարտավոր էր այդ ապացույցները ներկայացնել ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց և Դատարան: Տվյալ դեպքում Դատարանը չի իրականացրել վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողություններ, միաժամանակ խախտելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությունը, ինչպես նաև անտեսելով և սխալ մեկնաբանելով Կարգի 6-րդ կետի դրույթները՝ հանգել է սխալ եզրահանգման:

Դատարանը Կոոպերատիվից չի պահանջել ապացույցներ՝ պարզելու համար, թե Տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1100432 ստուգման ակտին կից ցուցակում նշված ապրանքները խանութում ստանալուց հետո մինչև վաճառքի հանելը գրանցվել են գրանցման գրքում, թե՛ ոչ: Այսինքն՝ Դատարանը ստուգման ակտին գնահատական է տվել, առանց նրանում նշված փաստական հանգամանքների հիմնավորվածությունը ստուգելու և համապատասխան ապացույցներ ձեռք բերելու:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 02.07.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

ՀՀ գլխավոր դատախազությունն իրավասու չէ չարաշահելու իր լիազորությունը և վճռաբեկ բողոք ներկայացնել ձևական նկատառումով, այսինքն՝ հստակ նշել, թե որ դեպքերում, ինչպիսի պայմաններում, ինչպիսի հանգամանքների վրա հիմնվելով կարող են բերվել նմանատիպ վճռաբեկ բողոքներ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

Կոմիտեի նախագահի 06.10.2008 թվականի թիվ 1100432 հանձնարարագրի, 05.11.2008 թվականի թիվ 1-07/1491-Ա և 14.11.2008 թվականի թիվ 1-07/1563-Ա հրամանների հիմքով Կոոպերատիվում կատարված ձեռնարկատիրական գործունեության առարկաների (առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների) գրանցման ճշտության ստուգման արդյունքում 28.11.2008 թվականին կազմվել է թիվ 1100432 ակտը, որով Կոոպերատիվի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի հիմքով նշանակվել է 17.026.700 ՀՀ դրամի չափով տուգանք: Ակտով արձանագրվել է, որ «ընկերության կողմից օրենքով սահմանված կարգով ք. Երևան, Աբովյան 4 հասցեում գտնվող «Սիլանո» խանութ սրահում 03.11.2008 թվականից մինչև 05.11.2008 թվականն ապրանքանյութական արժեքների գույքագրման արդյունքները համադրելով արտադրանքի,

ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) թիվ 789 գրքում գրանցված տվյալների հետ՝ պարզվեց, որ սահմանված կարգով գրանցված չէին ապրանքներ ընդհանուր գումարով 59.427.500 դրամի (ցանկը կցվում է), ինչպես նաև արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) թիվ 789 գրքում գրանցված վաճառքի գներից թանկ վաճառվող ապրանքների մասով գների տարբերությունը ընդհանուր գումարով՝ 8.679.900 դրամի (ցանկը կցվում է), որով խախտվել են ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 315 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերի պահանջները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 315 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ և 14-րդ կետերի դրույթները, համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցվելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25 տոկոսի չափով՝ գումարով 14.856.800 դրամ (59.427.500 դրամx25 %), ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության առարկաները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից թանկ վաճառելիս (իրացնելիս) հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ տարբերության գումարի 25 տոկոսի չափով, այդ թվում նաև չվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների մնացորդների համար գումարով՝ 2.169.900 դրամ»: Նշված ակտին կցվել են թվով 4 հավելվածներ՝ «գույքագրման արդյունքները, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) թիվ 789 գրքի պատճենները, խախտումներ բնութագրող հաշվարկային ցանկերը, ՊԵԿ նախագահի հրամանները»:

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, այսինքն՝ առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքները, ինչպես նաև կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25 տոկոսի չափով, այդ թվում՝ վաճառված (իրացված) մասի համար:

ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 315 որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրակա-

նացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով) կազմակերպությունների, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված՝ առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ) վրա, որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր: Նույն կարգի 2-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 1-ին կետում նշված կազմակերպությունները հաշվապահական հաշվառման գործող կարգին զուգընթաց, առևտրի իրականացման վայրում վարում են արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գիրք: Նույն կարգի 6-րդ կետի համաձայն՝ գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են ձեռք բերված (սեփական արտադրության դեպքում՝ վաճառքի իրականացման վայրում (կետերում) ընդունված) բոլոր ապրանքները՝ ստանալուց (ընդունելուց) անմիջապես հետո, մինչև վաճառքի հանելը (բայց ոչ ուշ, քան մինչև ապրանքներն ստանալու օրվա ավարտը)՝ անկախ առևտրի իրականացման ձևից (մեծածախ կամ մանրածախ):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ վաճառող կազմակերպությունները, որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր, հաշվապահական հաշվառման գործող կարգին զուգընթաց, առևտրի իրականացման վայրում պարտավոր են վարել արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գիրք, որտեղ պարտավոր են գրանցել ձեռք բերված բոլոր ապրանքները՝ **դրանք ստանալուց կամ ընդունելուց անմիջապես հետո, մինչև վաճառքի հանելը**, բայց ոչ ուշ, քան մինչև ապրանքներն ստանալու օրվա ավարտը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ ստուգում իրականացրած անձանց կողմից Կոոպերատիվի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի հիմքով նշանակվել է տուգանք այն քանի համար, որ ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 315 որոշմամբ հաստատված կարգի սահմանած կարգով չեն գրանցվել ք. Երևան, Աբովյան 4 հասցեում գտնվող («Սիլանո») խանութ սրահում ստացված 59.427.500 ՀՀ դրամի ապրանքներ: Ընդ որում, ստուգումն իրականացրած տեսուչները նման եզրահանգման են եկել 03.11.2008 թվականից մինչև 05.11.2008 թվականն ապրանքանյութական արժեքների գույքագրման արդյունքները համադրելով արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) թիվ 789 գրքում գրանցված տվյալների հետ, և այդ փաստաթղթերի պատճեններն էլ կցվել են ստուգման ակտին:

Սույն գործով Տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1100432 ստուգման ակտն անվավեր ճանաչելիս Դատարանը գտել է, որ Կոոպերատիվի կողմից Կարգի 6-րդ կետի խախտման փաստը բացակայում է, քանի որ «ակտում որևէ նշում չկա այն մասին, թե այդ ապրանքները Կոոպերատիվը ե՞րբ է ստացել, ինչպիսի փաստի առկայությամբ միայն հնարավոր կլիներ պարզելու, թե մինչև ե՞րբ էր վերջինս պար-

տավոր գրանցել այդ ապրանքները գրանցման գրքում»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը չի իրականացրել վարչական գործում առկա ապացույցների, մասնավորապես՝ Տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1100432 ակտի անբաժանելի մաս հանդիսացող «գույքագրման արդյունքներ» հավելվածի և «արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) թիվ 789 գրքի պատճեններ» հավելվածի պատշաճ գնահատում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը, որպիսի բեռը կրում է նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով ապացույցներ ներկայացնելու պարտականություն կրող կողմը:

Միաժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին

(տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Սույն գործով Գատարանի վճռով կարևորվել էր այն փաստը, թե ապրանքները խանութ-սրահում ստացվելու կոնկրետ ժամանակն անհայտ է, որպիսի փաստն էլ նշված չէ ակտում և չի ապացուցվել վարչական մարմնի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված փաստի կարևորումը էական նշանակություն կարող էր ունենալ միայն այն պարագայում, եթե ապրանքները խանութ-սրահում ստացվել են հենց գույքագրման օրը և դեռևս վաճառքի չեն հանվել ու ապրանքներն ստանալու օրն էլ դեռևս չի ավարտվել: Մինչդեռ, սույն գործով Կոոպերատիվը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով՝ վարչական վարույթի ընթացքում, և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ վարչական գործի քննության ընթացքում, կրելով ապացուցման պարտականություն, չի ապացուցել իր համար բարենպաստ հանգամանքները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Գատարանի վճռի՝ հայցը բավարարելու և հակընդդեմ հայցը մերժելու մասը բեկանելու համար: Ընդ որում, Գատարանի վճիռը ենթակա է բեկանման մասնակիորեն, քանի որ վարչական գործի վարույթն ըստ Կոոպերատիվի հայցի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի նախագահի 06.10.2008 թվականի թիվ 1100432 հանձնարարագիրը և 05.11.2008 թվականի հրամանն անվավեր ճանաչելու պահանջների մատով, կարճվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, իսկ վճռաբեկ բողոքում առկա չէ նշված մասի վերաբերյալ որևէ փաստարկ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրա-

վունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 02.07.2009 թվականի վճռի՝ հայցը բավարարելու և հակընդդեմ հայցը մերժելու մասը, և այն փոփոխել՝ «Օլիմպ» արտադրական կոոպերատիվի հայցը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1100432 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչության հակընդդեմ հայցը բավարարել՝ «Օլիմպ» արտադրական կոոպերատիվից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 17.026.700 ՀՀ դրամ՝ ստուգման ակտով առաջադրված տուգանքի գումարը, և 340.534 ՀՀ դրամ՝ հայցադիմումի համար վճարված պետական տուրքի գումարը:

Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0567/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0567/05/09
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*ճախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի հոկտեմբերի 16-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետա-
կան եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական
դատարանի 05.06.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Կոմիտեի Արաբկիրի-1 հար-
կային տեսչության ընդդեմ անհատ ձեռնարկատեր Անուշ Գևորգյանի՝ 1.000.459 ՀՀ
դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական ճախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է բռնագանձել Անուշ Գրիգոր-
յանից 1.000.459 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 05.06.2009 թվականի
վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 148.375 ՀՀ դրամ տարեկան պետական
տուրքի և 150.000 ՀՀ դրամ՝ որպես «Հակիչ դրամակղային մեքենաների կիրառման

մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տուգանքի գումար բռնագանձելու մասով, իսկ 722.084 ՀՀ դրամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գումար բռնագանձելու պահանջի մասով հայցը մերժվել է:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Դատարանը խախտել է «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ հոդվածի 5-րդ կետերը:

Բողոք բերած անձը նշված հիմնավորումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով հայցապահանջը մերժելիս հիմք է ընդունել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, որոնք, սակայն, արտոնություն են սահմանում միայն գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատերերի համար: Տվյալ դեպքում Դատարանը հաշվի չի առել այն, որ Անուշ Գևորգյանը 2005, 2006, և 2007 թվականներին իրականացրել է գործունեություն: 07.02.2007 թվականին Անուշ Գևորգյանի մոտ կատարվել է վարձու աշխատողի աշխատանքի ընդունում, ՀՀ օրենդությանը սահմանված կարգով ձևակերպման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմված թիվ 1304934 ակտով արձանագրվել է թվով մեկ չձևակերպված աշխատող:

Վերոգրյալի հիման վրա վճարել բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 05.06.2009 թվականի վճռի՝ 702.084 ՀՀ դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների մերժման մասը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունի հետևյալ փաստը՝

2005 թվականի չորրորդ եռամսյակի, 2006 թվականի հունվար-ապրիլ, հունիս, օգոստոս-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների և 07.02.2007 թվականի թիվ 1304934 ակտի հիման վրա Անուշ Գևորգյանի մոտ առաջացել է պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 702.084 ՀՀ դրամ պարտավորություն (գ.թ. 7-8, 16-17):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2006 թվականի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում

ներկայացրած (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրերի հիման վրա) և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետաշին) հանձնած անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի վճարումից:

Նույն հոդվածում ով նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 01.01.2006 թվականից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ անհատ ձեռնարկատերերը ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի վճարումից այն դեպքում, եթե մինչև 2006 թվականի մայիսի 1-ը գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում են ներկայացնում և հանձնում են պետական գրանցման վկայականը:

Մինչդեռ, սույն գործով Անուշ Գևորգյանի պարտավորությունը առաջացել է 2005 թվականի չորրորդ եռամսյակի, 2006 թվականի հունվար-ապրիլ, հունիս, օգոստոս-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների և 07.02.2007 թվականի թիվ 1304934 ակտի հիման վրա, ինչպես նաև՝ Անուշ Գևորգյանի կողմից գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում չի ներկայացվել, հետևաբար, նա չի կարող ազատվել պարտադիր սոցիալական ապահովագրության գումարը վճարելու պարտավորությունից:

Վերոգրյալ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի 05.06.2009 թվականի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 05.06.2009 թվականի վճիռ՝ հայցապահանջը մերժելու մասը և այդ մասով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0291/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0291/05/10
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԴՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 03-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 24.05.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ
«Ձինո-Լենդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ ՀՀ կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տես-
չության (այսուհետ՝ Տեսչություն)՝ ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի
մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տես-
չության 25.01.2010 թվականի թիվ 1006060 ակտի 2-րդ կետը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.05.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1040-րդ հոդվածը, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը չի կիրառել «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, որով նախատեսված դեպքերում հարկային գործակալի վրա դրվել է ֆիզիկական անձին վճարվող եկամտից հարկը որոշակի չափերով պահելու պարտականություն, այն է՝ նշված օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանի Հանրապետությունում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքերում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար 11 տոկոս դրույքաչափով՝ վճարված եկամտի գումարի նկատմամբ:

Դատարանն անտեսել է նաև, որ օրենսդիրը, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում օգտագործելով «կամ» շաղկապը, որպես հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձին վճարվող եկամտից հարկը պահելու առանձին պայմաններ է դիտել մի դեպքում՝ ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հարկային գործակալի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր չկնքելը, իսկ մյուս դեպքում՝ ֆիզիկական անձի հետ գրավոր քաղաքացիաիրավական պայմանագիր չկնքելը՝ դրանով իսկ առանձնացնելով ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հարկային գործակալի հետ կնքված պայմանագիրը ֆիզիկական անձի հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրից, որի տեսակները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1040-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից հետևում է, որ վիճակախաղի, տոտալիզատորների և ռիսկի վրա հիմնված այլ խաղերի կազմակերպիչների և խաղերի մասնակիցների հարաբերությունները հիմնվում են պայմանագրի վրա, ինչից հետևում

է, որ օրենսդիրը նշված կողմերի իրավահարաբերությունները կանոնակարգելիս անհրաժեշտ է համարել նշված հոդվածի 2-րդ կետով նախատեսված որևէ գրավոր պայմանագրի առկայությունը, ինչը տվյալ դեպքում առկա չէ: Միաժամանակ, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «ե» ենթակետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1040-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը «ռիսկի վրա հիմնված այլ խաղեր» եզրույթի տակ նկատի է ունեցել խաղատներում շահումով խաղերի անցկացումը:

Այսպիսով, օրենսդիրը, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պահանջը, տարանջատել է հարկային գործակալի պարտականությունները և պայմանագրի առկայության պայմաններում ֆիզիկական անձին շահում վճարելիս վերջինիս ազատել է հարկ պահելու պարտականությունից, իսկ պայմանագրի բացակայության դեպքում նրա համար սահմանել է ֆիզիկական անձին վճարվող եկամտից հարկը պահելու տոկոսադրույք գանձելու պարտականություն, քանի որ պայմանագիր կնքելու պարտականության բացակայության և եկամտից պահում կատարելուց ազատված լինելու դեպքում օրենսդիրը խաղատներում և շահումով խաղերում ստացած եկամուտները (շահումները) «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով չէր համարի որպես եկամուտ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 24.05.2010 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայրը մերժել:

2.1. Վճարելի բողոքի պատասխանի փաստարկները.

Բողոք բերած անձն անտեսել է, որ եկամտահարկը պահելու և պետական բյուջե վճարելու հարկային գործակալի պարտավորությունը սահմանող «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետն այդ պարտավորությունը բացառում է նույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերի համար, և քանի որ այդ մասում նշված դեպքերից է նաև խաղատներում, շահումներով խաղերում ֆիզիկական անձին եկամուտ վճարելու դեպքը, ապա ակնհայտ է, որ այդ եկամուտները վճարելիս Ընկերությունը եկամտահարկը պահելու պարտավորություն չունի: Իսկ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետը, այդ թվում՝ «ա» ենթակետը, ընդամենը սահմանում է պահվող հարկի դրույքաչափը, այն չի սահմանում հարկը պահելու հարկային գործակալի պարտավորությունը և նշված օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետին չի վերաբերում, քանի որ այն հարկի պահումից հարկային գործակալին ազատելու առանձին հիմք է և բոլորովին կապ չունի գրավոր պայմանագիր կնքելու պայմանի հետ:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1040-րդ հոդվածով նախատեսված պայմանագիր կնքելու եղանակներին, ապա նշված նորմից բխողովին չի բխում հարկը պահելու հարկային գործակալի պարտավորությունը:

Բողոք բերած անձը նշել է, որ պայմանագիր կնքելու պարտավորության բացակայության և եկամտից պահում կատարելուց ազատված լինելու դեպքում օրենսդիրը խաղատներում և շահումով խաղերում ստացած եկամուտները (շահումները) չէր համարի որպես եկամուտ: Մինչդեռ, նշված ենթադրությունը չունի որևէ իրավական հիմք, քանի որ բոլորովին պարտադիր չէ, որպեսզի ցանկացած եկամտի մասով առկա լինի հարկային գործակալի պարտավորությունը:

3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 30.10.2009 թվականի թիվ 1006060 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում Տեսչությունը 25.01.2010 թվականին կազմել է թիվ 1006060 ակտը, որի 2-րդ կետով արձանագրվել է, որ ««Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «ե» ենթակետի համաձայն՝ խաղատներում, շահումով խաղերում ֆիզիկական անձանց ստացված շահումները համարվում են եկամուտ: «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հարկը պահում է հարկային գործակալը, նույն օրենքի (հոդվածի) 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ հարկային գործակալը պահում չի իրականացնում, եթե վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են, և հարկային գործակալի հետ կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, անձնագիրը և ՀՀ բնակության հասցեն, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման վկայականի համարը: «Ջինո-Լենդ» ՍՊԸ-ն ստուգվող ժամանակաշրջանում, առանց քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր կնքելու, խաղատներում և շահումով խաղերում ֆիզիկական անձանց վճարել է եկամուտ (շահում), որից եկամտահարկի պահում 2003-2008թթ.-ի համար 3% դրույքաչափով և 2009թ.-ի համար (մինչև հոկտեմբեր ամիսը) 11% դրույքաչափով չի կատարել: Խախտվել են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի պահանջները» (գ.թ. 10-15):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բացառությամբ նույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերի, ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը:

Նույն հոդվածի 2-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի համաձայն՝ հարկային գործակալը հարկի պահում (գանձում) չի իրականացնում, եթե՝

վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են, և հարկային գործակալի հետ կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), անձնագրի տվյալները և Հայաստանի Հանրապետությունում բնակության հասցեն, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման վկայականի համարը.

ֆիզիկական անձին վճարվում է նույն օրենքի 6 հոդվածի «ե» և «զ» ենթակետերով սահմանված եկամուտներ:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «ե» ենթակետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով եկամուտ են համարվում, մասնավորապես՝ խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1040-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վիճակախաղերի, տոտալիզատորների (փոխադարձ գրազների) և ռիսկի վրա հիմնված այլ խաղերի կազմակերպիչների՝ Հայաստանի Հանրապետության, համայնքների, լիազորված պետական մարմնի թույլտվություն (լիցենզիա) ստացած անձանց և խաղերի մասնակիցների հարաբերությունները հիմնվում են պայմանագրի վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ խաղեր կազմակերպելու կանոններով նախատեսված դեպքերում խաղերի կազմակերպչի և մասնակցի միջև պայմանագիրը ձևակերպվում է վիճակախաղի տոմս, անդորրագիր կամ այլ

փաստաթուղթ տալով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետում նախատեսված պայմանագիրը կնքելու մասին առաջարկը պետք է պայմաններ ներառի խաղերի անցկացման ժամկետի, շահումը որոշելու կարգի և դրա չափի մասին:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանադրական նորմի ուժով ոչ ոք չի կարող կրել օրենքով չսահմանված պարտականություններ, իսկ այդպիսի պարտականություններ առաջացնող վարչական ակտը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված, ինչը հանգեցնում է դրա անվավեր ճանաչմանը: Մասնավորապես՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով տրված ընդհանուր կանոնակարգման համաձայն՝ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Միաժամանակ, նշված կանոնակարգումից սահմանված են որոշակի բացառություններ, այդ թվում՝ այն դեպքի համար, երբ ֆիզիկական անձին վճարվում են խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները): Այսինքն՝ նման դեպքում հարկային գործակալը հարկի պահում (գանձում) չի իրականացնում, հետևաբար, վարչական ակտով նման պարտավորություն չի կարող դրվել:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ խաղատներում, շահումներով խաղերում ֆիզիկական անձին եկամուտ (շահում) վճարելու դեպքում բացակայում է եկամտահարկը պահելու հարկային գործակալի պարտավորությունը: Հետևաբար, տվյալ դեպքում բացակայում է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի պահանջների՝ Ընկերությանը վերագրվող խախտումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունը հիմնավոր է և բխում է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներից, քանի որ նշված օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի ուժով Ընկերությունն ազատված է ֆիզիկական անձին խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները) վճարելիս հարկի պահում (գանձում) իրականացնելու պարտավորությունից:

Նշված վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 25.01.2010 թվականի թիվ 1006060 ակտի 2-րդ կետը կազմվել է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի սխալ մեկնաբանմամբ, ինչի արդյունքում Տեսչությունը խախտել է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի պահանջը և Ընկերության նկատմամբ առաջադրել է օրենքով չսահմանված պարտականություն, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով սահմանված նշված կետի անվավերության հիմք է:

Ինչ վերաբերում է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի կիրառելիության վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկին, ապա այն նույնպես անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ բացառությամբ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների, հարկային գործակալը ֆիզիկական անձին վճարվող եկամտից հարկը պահում (գանձում) է հետևյալ չափերով. նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ 11 տոկոս դրույքաչափով՝ վճարված եկամտի գումարի նկատմամբ՝ առանց հաշվի առնելու նույն օրենքով սահմանված նվազեցումները (բացառությամբ նույն հոդվածով սահմանված դեպքերի):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ այն կիրառելի չէ ֆիզիկական անձին խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները) վճարելու դեպքի նկատմամբ, քանի որ նշված նորմը վերաբերում է բացառապես այն դեպքերին, երբ եկամտահարկը ենթակա է հաշվարկման և վճարման, իսկ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանվում են միայն դրա հաշվարկման և վճարման առանձնահատկությունները: Մինչդեռ, տվյալ դեպքում խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները) վճարելիս հարկային գործակալի համար եկամտահարկ պահելու և վճարելու պարտականությունն ընդհանրապես բացակայում է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված է, ապա Վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական դատարանի 24.05.2010 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչությունից հոգուտ «Ջինո-Լենդ» ՍՊԸ-ի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ` որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող` ստորագրություն
Դատավորներ` ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ

Վարչական գործ թիվ ՎԴ/3112/05/08

Վարչական գործ

2009թ.

թիվ ՎԴ/3112/05/08

Նախագահող դատավոր՝

Ռ. Հակոբյան

Դատավորներ՝

Ա. Ղազարյան

Հ. Բեդկյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի փետրվարի 13-ին

դրնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1 հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 20.08.2007 թվականի թիվ 1025265 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 20.08.2007 թվականի թիվ 1025265 ստուգման ակտը:

Տնտեսական դատարանի 28.11.2007 թվականի վճռով հայրը բավարարվել է:

Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-30 (ՏԳ) որոշմամբ վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է Վարչական դատարան՝ նոր քննության:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.08.2008 թվականի վճռով Ընկերության հայրը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր են ճանաչվել Տեսչության 20.08.2007 թվականի թիվ 1025265 ստուգման ակտի 1-ին և 4-րդ կետերը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վարչական դատարանը չի կիրառել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դ) կետը, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008թ. թիվ 3-30 (ՏԳ) որոշումը, որոնք պետք է կիրառեն, և կիրառել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք չպետք է կիրառեն, ինչպես նաև սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը վճռի հիմքում դրել է այն հանգամանքը, որ Տեսչության կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով ՀՀ կառավարության սահմանված կարգով հարկվող օբյեկտի հաշվարկումն անհիմն է, քանի որ օտարված գույքի արժեքի և կադաստրային արժեքի միջև եղած տարբերության առկայությունն ինքնին չի ենթադրում նշված հոդվածի կիրառումը: Նշված հիմնավորումն անհիմն է, քանի որ Ընկերության կողմից 2006 թվականի 3-րդ եռամսյակում ներկայացված հաշվետվությունների տվյալները եղել են ոչ ճիշտ: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դ) կետի և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներից հետևում է, որ հարկվող շահույթը որոշելիս, շինությունների օտարումից ստացված եկամուտը (շահույթը) պետք է հաշվարկվեր օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով՝ կադաստրային արժեքով, և հարկային տեսչություն ներկայացրած հաշվարկներում, հաշվետվություններում նշված գույքի վաճառքի գինը պետք է պակաս չլիներ գույքի կադաստ-

րային արժեքից, և հարկերը պետք է հաշվարկվեին այդ արժեքից ելնելով, ինչն Ընկերությունը չի արել:

Բացի այդ, դատարանն անտեսել է նաև սույն գործով կայացված Վճռաբեկ դատարանի 27.03.2008թ. թիվ 3-30 (ՏԳ) որոշումը, որի համաձայն՝ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ի հարկման հաշվարկը կատարվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետով, որն իր հերթին սահմանում է, որ շենքերի, շինությունների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է նույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի՝ հայցը մասնակիորեն բավարարելու մասը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

Վարչական դատարանը չէր կարող կիրառել իրավահարաբերության ծագման պահին գոյություն չունեցող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դ) կետը, դրա հետ կապված նաև «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն պնդմանը, թե Վարչական դատարանը սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, ապա Վարչական դատարանը նշված նորմը մեկնաբանել է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իր մեկնաբանությամբ չի փոփոխել նշված իրավա-նորմի իմաստը, ինչպես որ պահանջում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը:

Միաժամանակ, վիճարկվող վճիռը չի հակասում ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-30 (ՏԳ) որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերությունը 2006 թվականի 3-րդ եռամսյակում իրականացրել է սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Վարդանանց փակուղի թիվ 8 հասցեում գտնվող վարչական շենքի մասերի առուվաճառքի թվով 5 գործարք, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 95.717.600 դրամ:

2. Վերը նշված գործարքների գնի մեջ ներառվել են ավելացված արժեքի հարկի գումարները, որոնք Ընկերության կողմից արտացոլվել են հարկային տեսչություն ներկայացված ավելացված արժեքի հարկի 2006 թվականի 3-րդ եռամսյակի հաշ-

վարկում (ներկայացվել է հարկային տեսչություն 19.10.2006 թվականին) և շահութահարկի 2006 թվականի տարեկան հաշվարկում (ներկայացվել է հարկային տեսչություն 23.03.2007 թվականին):

3. ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 25.04.2007 թվականի թիվ 1025265 հանձնարարագրի հիման վրա Տեսչության աշխատակիցներն Ընկերությունում իրականացրել են ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

4. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 25.06.2007 թվականի թիվ ՄՎ-4/2604 գրությամբ կից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ Ընկերության կողմից 2006 թվականի հուլիս ամսվա ընթացքում օտարված շենքերի, շինությունների ընդհանուր կադաստրային արժեքը կազմել է 104.772.991 դրամ:

5. Ստուգման արդյունքում Տեսչության կողմից կազմված 20.08.2007 թվականի թիվ 1025265 ստուգման ակտի համաձայն՝ Ընկերությանն առաջադրվել է 25.590.200 դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն, որից շահութահարկի գծով ապառք՝ 6.723.000 դրամ, տույժ՝ 1.013.300 դրամ, տուգանք՝ 4.033.700 դրամ, ավելացված արժեքի հարկի գծով ապառք՝ 6.702.500 դրամ, տույժ՝ 3.001.600 դրամ, տուգանք՝ 4.046.500 դրամ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 34.800 դրամ և տուգանք՝ 34.800 դրամ: Ակտի կազմման հիմքում դրվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը և ««Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շուկայական (սովորաբար կիրառվող) գները որոշելու մասին» ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգը: Լրացուցիչ հարկային պարտավորությունների հաշվարկման հիմք են ծառայել գույքի գործարքային արժեքի և կադաստրային արժեքի տվյալների միջև առկա տարբերություններ:

4.Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ վճարելի բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում

հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, մասնավորապես, հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձանցից ստացված տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի, օրենքով իրականացված հսկիչ գումումների վրա:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից գանձվում է տուգանք այդ խախտումների հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հարկերի գումարի տաս տոկոսի չափով:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողներից նույն օրենքով սահմանված կարգով գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային տեսչության կողմից հաշվարկված) հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով, և հարկվող օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը՝ հարկային տեսչություն ներկայացված տվյալ հարկատեսակի հաշվարկներում հարկվող օբյեկտը ցույց չտալը, պակաս ցույց տալը կամ էլ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ իրականացնող իրավաբանական անձինք: Նույն օրենքի 5-6-րդ հոդվածների համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների ամբողջ արժեքը (շրջանառությունը), ընդ որում, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ են

համարվում նաև ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը՝ հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: Նույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ նույն օրենքին համապատասխան որոշվող մեծությունը (գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը), իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարքի իրական արժեքը):

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ անշարժ գույքի սեփականատեր հարկատուն կաշկանդված չէ գույքն իր հայեցողությամբ որոշված գնով օտարելու հարցում, այդ թվում նաև իրական արժեքից էականորեն ցածր գնով: Սակայն, հարկային պարտավորությունը հաշվարկելիս հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք առնվազն պետք է ընդունվի տվյալ շինության **կադաստրային արժեքը**: Զննարկվող հարաբերության նմանատիպ կարգավորում նախատեսված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետով (որպիսի նորմը նման բովանդակությամբ գործում է 01.01.2007 թվականից) և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Միաժամանակ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-7-րդ հոդվածների համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, որպիսի հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է, ընդ որում՝ եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը: Նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և գ) ենթակետերի համաձայն՝ եկամուտների թվին է դասվում նաև ապրանքների, արտադրանքի, հիմնական միջոցների և այլ

ակտիվների իրացումից ստացվող հասույթը: Նույն օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը որոշելիս, եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով, իսկ նույն օրենքի 43-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ շենքերի, շինությունների օտարման դեպքում հարկվող շահույթը որոշելիս, շենքերի, շինությունների օտարումից եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով, որոշվող արժեքից ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա նույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը, ընդ որում՝ շինությունների հարկման բազա է համարվում նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված **կադաստրային արժեքը**:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հարկվող շահույթը որոշելիս շենք-շինությունների օտարումից ստացված եկամուտը (շահույթը) պետք է հաշվարկվի օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով՝ կադաստրային արժեքով, և հարկային տեսչություն ներկայացրած հաշվարկներում, հաշվետվություններում նշված գույքի վաճառքի գինը պետք է պակաս չլինի գույքի կադաստրային արժեքից, և հարկերը պետք է հաշվարկվեն այդ արժեքից էլեմելով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչության 20.08.2007 թվականի թիվ 1025265 ակտի 1-ին և 4-րդ կետերը կազմվել են Ընկերության կողմից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման փաստով, այն է՝ 2006 թվականի հուլիս ամսին կնքված առուվաճառքի թիվ 5 գործարքներով Երևանի Վարդանանց փակուղի թիվ 8 հասցեում գտնվող վարչական շենքի մասերի իրացումից հետո հաշվապահական ձևակերպման ենթակա 104.772.991 դրամ հասույթը եկամուտների թվին չդասելու (եկամուտների թվին դասվել է միայն 95.717.600 դրամը), որի արդյունքում և շահութահարկը պակաս հաշվարկելու համար, ինչպես նաև վերը նշված պայմանագրերի հիմքով ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը պակաս հաշվարկելու համար: Նշված գույքի նկատմամբ իրական արժեքից էականորեն ցածր գին սահմանելու հանգամանքները հաստատվել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 25.06.2007 թվականի թիվ ՄՎ-4/2604 գրությամբ և դրան կից ներկայացված տեղեկանքով:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունը շահութահարկի 2006 թվականի տարեկան հաշվարկը հարկային տեսչություն ներկայացրել է 2007 թվականի հունվարի 1-ից գործող խմբագրությամբ՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջի խախտմամբ: Վերը նշված

հանգամանքները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է վճռաբեկ բողոքի պատասխանում վկայակոչված այն փաստարկը, որ սույն գործով կիրառելի չեն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դ) կետը և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գատարանի 01.08.2008 թվականի վճիռը հակասում է Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացված 27.03.2008 թվականի թիվ 3-30(ՏԳ) որոշմանը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանը, չկիրառելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դ) կետը, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. մարտի 27-ի թիվ 3-30 (ՏԳ) որոշման դրույթները, սխալ մեկնաբանելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, եկել է անհիմն եզրահանգման այն մասին, որ Տեսչության 20.08.2007 թվականի թիվ 1025265 ակտի 1-ին և 4-րդ կետերը հակասում են օրենքին:

Ընդ որում, նման եզրահանգման գալիս, ստորադաս դատարանը կիրառել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որոնք սույն գործով կիրառելի չեն, քանի որ սույն վեճը վերաբերում է սեփականատիրոջ կողմից իր հայեցողությամբ որոշված արժեքով գույքի իրացումից ծագող հարկային հարաբերություններին, և այն որևէ կերպ չի առնչվում սեփականատիրոջ կողմից իր հայեցողությամբ սեփական գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու հարաբերություններին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վարչական դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորա-

դաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի՝ հայցը բավարարելու մասը և այն փոփոխել. «Առմուննախագիծ» ՓԲԸ-ի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/5547/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Գազարյան

Վարչական գործ թիվ ՎԳ/5547/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի հուլիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 08.01.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Կասկադ Ինշուրան» ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության բանկերի և վարկային կազմակերպությունների հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ պետական մարմնի ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 19.06.2008 թվականի թիվ 1038594 ստուգման ակտի 1-ին կետի 1-ին և 2-րդ պարբերությունները:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.01.2009 թվականի վճռով Ընկերության հայցը բավարարվել է՝ անվավեր են ճանաչվել Տեսչության 19.06.2008 թվականի թիվ 1038594 ստուգման ակտի 1-ին կետի 1-ին և 2-րդ պարբերությունների հիմքով առաջադրված պարտավորությունները:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը չի կիրառել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեն, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեն, սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-29-րդ, 31-րդ հոդվածները:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանի՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 31-րդ հոդվածների չխախտման մասին պատճառաբանություններն անհիմն են, քանի որ ապահովագրողի ռիսկերի գնահատման ծախսերը ոչ թե եկամտի ստացման հետ կապված ծախսեր են, այլ հետագա ծախսերի գնահատման կամ կատարման հետ կապված ծախսեր, քանի որ ապահովագրողը եկամուտը ստանում է ապահովագրական պայմանագիրը կնքելիս և ապահովագրական վճարը հավաքագրելիս, այլ ոչ թե՝ հետագայում: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-29-րդ հոդվածներով սահմանված են հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվող ծախսերը: Միաժամանակ, հաշվի առնելով ապահովագրական գործունեության առանձնահատկությունները, օրենսդիրն, ի լրումն նշված հոդվածներով նախատեսված ծախսերի, նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանել է բացառապես ապահովագրական ընկերություններին վերաբերող հարկման նպատակով համախառն եկամտից կատարվող նվազեցումների տեսակները: Ընդ որում, այդ հոդվածով նախատեսված ծախսերի ցանկը սպառիչ է և հիմնականում կապված է ոչ թե եկամտի ստացման, այլ՝ ապահովագրական ընկերության գործունեության հետ: Նկատի ունենալով, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-29-րդ հոդվածներում նախատեսված ծախսերը պետք է կապված լինեն եկամտի ստացման հետ, իսկ նույն օրենքի 31-րդ հոդվածով բժշկական զննության գծով կատարված ծախսերը նախատեսված չեն, ուստի հարկվող շահույթը որոշելիս այդ ծախսերը համապատասխան եկամտից նվազեցման ենթակա չեն:

Բացի այդ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի

համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում միայն սույն օրենքով սահմանված պահուստների (պահուստաֆոնդերի) ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները: Ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորող «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերությունը պարտավոր է ապահովագրության պայմանագրերից ծագող պարտավորությունները կատարելու և հնարավոր ռիսկերը ծածկելու նպատակով ձևավորել տեխնիկական պահուստներ: Տեխնիկական պահուստների տեսակները սահմանված են նույն հոդվածի 2-րդ մասում, իսկ 3-րդ մասի համաձայն՝ բացի նույն հոդվածի 2-րդ մասում նշված պահուստներից, ընկերությունը կարող է կենտրոնական բանկի համաձայնությամբ ձևավորել նաև այլ պահուստներ:

Քննարկվող դեպքում, եթե անգամ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված տեխնիկական պահուստների կազմում բացակայում է առողջության ապահովագրման գծով կնքվող պայմանագրերից ծագող հնարավոր ռիսկերը ծածկելու համապատասխան տեխնիկական պահուստի տեսակը, ապա նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագրերից ծագող հնարավոր ռիսկերը ծածկելու համար ընկերությանն իրավունք է վերապահված ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ ձևավորել նաև այլ պահուստներ, հետևաբար՝ ընկերությանն իրավունք կվերապահվեր համախառն եկամուտը նվազեցնել տեխնիկական պահուստի չափով՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, ըստ որի՝ հարկման նպատակով ապահովագրական ընկերությունների համախառն եկամուտը, ի լրումն նույն օրենքի 10-29-րդ հոդվածներով սահմանված նվազեցումների, նվազեցվում է նաև ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների չափով:

2) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 27.11.1998 թվականի թիվ 753 որոշման 2-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը գտել է, որ վիճելի իրավահարաբերության համար կիրառելի չէ ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 753 որոշման 2-րդ կետի «դ» ենթակետը, և պատճառաբանել է, որ որոշման 2-րդ կետով սահմանափակումները տրված են միայն այդ որոշման կիրառման նպատակով, այսինքն՝ ծախսերի որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու նպատակով, իսկ որոշման 3-րդ կետի «գ» ենթակետից ակնհայտ է, որ այդ որոշումը՝ կադրերի պատրաստման ծախսերի մասով, վերաբերում է միայն Հայաստանի Հանրապետությունից դուրս կադրերի պատրաստման համար կատարված ծախսերին:

Գատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ «Կադրերի պատրաստման ծախսեր» հասկացությունը սահմանված է ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 27-ի թիվ 753 որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով, որի համաձայն՝ կադրերի պատրաստման ծախսեր են համարվում առկա արտադրական գործընթացներին և ընթացակարգերին, աշխատանքի կազմակերպման եղանակներին կամ մեթոդներին տիրապետելու համապատասխան որակավորում ապահովելու հատուկ դասընթացներին աշխատողների մասնակցության նպատակով հարկատուի կատարած ծախսերը՝ դասընթացի արժեքը: Իսկ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահութահարկը որոշելիս՝ հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե նույն օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկություններ:

Բացի այդ, քննարկվող դեպքում չկա Ընկերության և համապատասխան ուսումնական հաստատության միջև կնքված պայմանագիր, որի համաձայն՝ պետք է իրականացվեին կադրերի պատրաստման աշխատանքները, հետևաբար՝ փոխհատուցման վճարներն Ընկերության համար չէին կարող համարվել որպես եկամտի ստացման նպատակով կատարված անհրաժեշտ ծախսեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 08.01.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Ընկերության հայրը մերժել:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

Բողոք բերած անձի հիմնավորումն անընդունելի է, քանի որ տեխնիկական պահուստներ ձևավորված չլինելու հանգամանքը որևէ առնչություն չունի բժշկական զննության ծախսերն այդպիսին դիտելու համար: Որևէ կերպ հիմնավորված չէ, որ բժշկական զննության ծախսերի մասով պետք է ձևավորել տեխնիկական պահուստ: Բժշկական զննության ծախսը կատարելու նպատակը ոչ թե ապահովագրության պայմանագրից ծագող պարտավորության կատարումը և հնարավոր ռիսկերը ծածկելն է, այլ՝ նախատեսվող ապահովագրության պայմանագրի պայմանները որոշելը, ապահովագրական պատահարի կանխարգելումը, հնարավոր վնասների նվազեցումը: Հնարավոր ռիսկերը ծածկելու նպատակը չի կարող նույնացվել ռիսկերը գնահատելու, հնարավոր վնասները նվազեցնելու նպատակի հետ: Տվյալ դեպքում բացակայում են բժշկական զննության ծախսերի հաշվին տեխնիկական պահուստ ձևավորելու հիմքերը, քանի որ հիմնավորված չեն և այս դեպքով բացակայում են ապահովագրության պայմանագրից ծագող պարտավորության կատարման նպատակը և հնարավոր ռիսկերը ծածկելու նպատակը, իսկ դրանցից թեկուզ մեկի բացակայությունը բացառում է տեխնիկական պահուստ ձևավորելու

պարտականությունը: Տեխնիկական պահուստ ձևավորված չլինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ բժշկական զննության կամ այլ ծախսը շահութահարկի հաշվարկման համար համախառն եկամտից նվազեցնելու ապահովագրական ընկերության իրավունքը բացառելու համար:

Ինչ վերաբերում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի մասին բողոք բերած անձի պատճառաբանությանը, ապա այն անհիմն է, քանի որ ապահովագրական ընկերության ծախսերը չեն սահմանափակվում միայն դրանում թվարկվածով, և կան բազմաթիվ ծախսեր, որոնք համապատասխանում են նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված հատկանիշներին:

Բժշկական զննությամբ հնարավոր է դառնում ճշտել ապահովագրվող անձի առողջական վիճակը պայմանագիր կնքելիս, որպեսզի ճիշտ որոշվի ապահովագրության պայմանագրով վճարների չափը, որպեսզի մինչև պայմանագիր կնքելը եղած ապահովագրական պատահարի համար հատուցում չտրվի, որպեսզի գնահատվի ապահովագրական ռիսկը:

ՀՀ կառավարության 27.11.1998թ. թիվ 753 որոշման 2-րդ կետով սահմանումները տրված են միայն այդ որոշման կիրառման նպատակով, այսինքն՝ ծախսերի որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու նպատակով: Իսկ որոշման 3-րդ կետի «գ» ենթակետից ակնհայտ է, որ այդ որոշումը կադրերի պատրաստման ծախսերի մասով վերաբերում է միայն Հայաստանի Հանրապետությունից դուրս կադրերի պատրաստման համար կատարված ծախսերին: Զննարկվող դեպքում ՀՀ-ից դուրս այդպիսի ծախսեր չեն կատարվել, և վեճը վերաբերում է միայն ՀՀ-ում կատարված կադրերի պատրաստման ծախսերին, հետևաբար՝ ՀՀ կառավարության 27.11.1998 թվականի թիվ 753 որոշումը կիրառելի չէ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 06.05.2008 թվականի թիվ 1038594 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարված՝ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգման արդյունքում 19.06.2008 թվականին կազմվել է թիվ 1038594 ակտը, որի 1-ին և 2-րդ կետերով արձանագրված խախտումների հիմքով լրացուցիչ հարկային պարտավորություններ են առաջադրվել շահութահարկի և եկամտահարկի գծով՝ 21.272.300 դրամի չափով:

2) Ընկերության կողմից վիճարկվում է ստուգման ակտի 1-ին կետի (շահութահարկի գծով) 1-ին և 2-րդ պարբերությունները:

3) Ակտի 1-ին կետի 1-ին պարբերությամբ արձանագրվել է, որ «Ընկերությունը, խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը և 31-րդ

հողվածը, 2005, 2006, 2007 թվականների հարկվող շահույթը որոշելիս հարկային տեսչություն համապատասխանաբար 06.05.2006թ.-ին, 16.04.2007թ.-ին և 13.05.2008թ.-ին ներկայացրած շահութահարկի հաշվարկներում համախառն եկամուտն անհիմն նվազեցրել է եկամտի ստացման համար ոչ անհրաժեշտ 55.995.000 դրամ ապահովագրվող ֆիզ. անձանց փոխարեն կատարված բժշկական հետազոտման ծախսերի չափով, այդ թվում՝ 2005թ.-ին՝ 9.085.000 դրամ, 2006թ.-ին՝ 7.726.000 դրամ, 2007թ.-ին՝ 3.918.400 դրամ»:

4) Ակտի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ արձանագրվել է, որ «Ընկերությունը, խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, 2005, 2006, 2007 թվականների հարկվող շահույթը որոշելիս հարկային տեսչություն համապատասխանաբար ներկայացրած 06.05.2006թ.-ի, 16.04.2007թ.-ի, 13.05.2008թ.-ի շահութահարկի հաշվարկներում համախառն եկամուտը նվազեցրել է եկամտի ստացման համար ոչ անհրաժեշտ աշխատակիցների փոխարեն բուհերում ուսման դիմաց վճարված ուսման վարձերի չափով՝ 1.006.000 դրամ գումարով, այդ թվում՝ 2005թ.-ին՝ 145.000 դրամ, 2006թ.-ին՝ 290.000 դրամ, 2007թ.-ին՝ 571.000 դրամ»:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ՝

1) *Վճարելի բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, որը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում, հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից թույլատրվում է կատարել նույն օրենքով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս՝ համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

Նշված օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման: Իսկ անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նա-

խապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նախատեսել է բացառապես ապահովագրական ընկերություններին վերաբերող հարկման նպատակով համախառն եկամտից կատարվող նվազեցումները, որոնք սահմանվել են ի լրումն նույն օրենքի 10-29-րդ հոդվածներում նշված նվազեցումների:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ապահովագրական ընկերությունները հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը պետք է նվազեցնեն դրա ստացման հետ կապված, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-29-րդ և 31-րդ հոդվածներով նախատեսված ծախսերի չափով, ընդ որում՝ այնպիսի ծախսերի, որոնք՝ 1. կապված են եկամտի ստացման հետ, 2. անհրաժեշտ են եկամտի ստացման համար և 3. փաստաթղթերով հիմնավորված են:

Սույն գործի փաստերից բխում է, որ ստուգում իրականացրած անձանց կողմից Ընկերության գործունեությունում արձանագրվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և 31-րդ հոդվածի պահանջների խախտում այն հիմքով, որ 2005-2007 թվականների հարկվող շահույթը որոշելիս Տեսչություն ներկայացրած շահութահարկի հաշվարկներում Ընկերությունը համախառն եկամուտն անհիմն նվազեցրել է եկամտի ստացման համար ոչ անհրաժեշտ՝ ապահովագրվող ֆիզիկական անձանց փոխարեն կատարված բժշկական հետազոտման 55.995.000 դրամ ծախսերի չափով: Նշված բժշկական հետազոտման ծախսերը կատարվել են բժշկական ծառայություն մատուցող կազմակերպության և Ընկերության միջև կնքված պայմանագրի հիման վրա, որով ծառայություն պատվիրողը և դրա դիմաց վճարման պարտավորություն կրողը ապահովագրական ընկերությունն է, իսկ այդ գործողությունները կատարվել են մինչև ֆիզիկական անձանց հետ ապահովագրական պայմանագրերի կնքումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապահովագրական ընկերության գործունեությունն ուղղված է ապահովագրավճարների տեսքով եկամուտ ստանալուն, որն իրականացվում է ապահովագրության պայմանագրերի կնքմամբ և դրանց հիման վրա: Իսկ ապահովագրության պայմանագրերի կնքումն ու կատարումը ենթադրում է ապահովագրական ռիսկերի գնահատում, հնարավոր ապահովագրական պատահարների կանխարգելում, ապահովագրության պայմանագրի գործողության սահմանների ճշգրտում:

Նշվածից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առողջության ապահովագրության պայմանագրեր կնքելու և ապահովագրական ռիսկը կառավարելու համար ապահովագրման ենթակա անձանց նախնական բժշկական զննության հետ կապված ծախսերն անհրաժեշտ են, քանի որ դրանով ապահովագրական ընկերությունը հստակ պատկերացում է կազմում ստանձնած ապահովագրական ռիսկի էության մասին, և հիմնվելով բժշկական զննության արդյունքների վրա՝ տրամադրում համապատասխան ապահովագրական ծածկույթ և ապահովա-

գրական սակագին, կիրառում բացառություններ, ինչի արդյունքում էլ կնքվում է ապահովագրության պայմանագիրը: Ընդ որում, բժշկական զննությամբ հնարավոր է դառնում պայմանագիր կնքելիս ճշտել ապահովագրվող անձի առողջական վիճակը, առողջության հետագա վատթարացման հնարավորությունը, իսկ պարզելու միակ միջոցն էլ բժշկական զննությունն է, որն էլ քննարկվող դեպքում պատվիրվել է ապահովագրական ընկերության կողմից, և Ընկերությունն էլ վճարել է մատուցված ծառայությունների դիմաց՝ որպես իր պայմանագրային պարտավորությունների կատարում:

Այսպիսով, եթե տվյալ ծախսն անհրաժեշտ է պայմանագրի պայմանները որոշելու համար, այսինքն՝ պայմանագրի կնքելու համար, քանի որ անվիճելի է, որ պայմանագրի կնքմամբ է ապահովվում Ընկերության եկամուտը՝ ապահովագրական վճարը, ուստի պայմանագրի կնքմանը նախորդող՝ ապահովագրվող անձի բժշկական զննության հետ կապված ապահովագրողի կատարած ծախսերը համարվում են **եկամտի ստացման համար անհրաժեշտ ծախս:**

Ինչ վերաբերում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառման վերաբերյալ վճարել բողոքի հիմքին, ապա Վճարել դատարանն այն գնահատում է անհիմն, քանի որ նշված նորմը կանոնակարգում է տեխնիկական պահուստներ ձևավորելու հարաբերությունները և սույն վեճի (բժշկական զննության ծախսը եկամտի ստացման համար անհրաժեշտ համարելու կամ չհամարելու հարցի վերաբերյալ) նկատմամբ կիրառելի չէ:

2) Վճարել բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահութահարկը որոշելիս՝ հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե նույն օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկություններ:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության «բ» կետի համաձայն՝ եկամտի ստացման համար անհրաժեշտ ծախսերի թվին են դասվում նաև **կադրերի պատրաստման համար** հարկատուի ծախսերը: Նշված օրենքով տրված չէ «կադրերի պատրաստման համար հարկատուի ծախսեր» հասկացության սահմանումը:

«Կադրերի պատրաստման ծախսեր»-ի հասկացությունը սահմանված է ՀՀ կառավարության 27.11.1998 թվականի թիվ 753 որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով, որի համաձայն՝ կադրերի պատրաստման ծախսեր են համարվում առկա արտադրական գործընթացներին և ընթացակարգերին, աշխատանքի կազմակերպման եղանակներին կամ մեթոդներին տիրապետելու համապատասխան որակա-

վորում ապահովելու հատուկ դասընթացներին աշխատողների մասնակցության նպատակով հարկատուի կատարած ծախսերը (դասընթացի արժեքը):

Սույն գործի փաստերից բխում է, որ ստուգում իրականացրած անձանց կողմից Ընկերության գործունեությունում արձանագրվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում այն հիմքով, որ 2005-2007 թվականների հարկվող շահույթը որոշելիս, Տեսչություն ներկայացրած շահութահարկի հաշվարկներում Ընկերությունը համախառն եկամուտն անհիմն նվազեցրել է եկամտի ստացման համար ոչ անհրաժեշտ ծախսով, այն է՝ Ընկերության աշխատակիցների փոխարեն բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման դիմաց վճարված 1.006.000 ՀՀ դրամ ուսման վարձերի տեսքով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող դեպքում Ընկերության աշխատակիցների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման վարձի վճարումը չի կարող որակվել որպես կադրերի պատրաստման ծախս, որն իր էությանը կապված է Ընկերության եկամտի ստացման հետ և անհրաժեշտ է Ընկերության եկամտի ստացման համար, առավել ևս, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության միջև առկա չէ որևէ պայմանագիր, որի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից պետք է իրականացվեր Ընկերության կադրերի պատրաստման աշխատանքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ

դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 08.01.2009 թվականի վճռի՝ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության բանկերի և վարկային կազմակերպությունների հարկային տեսչության 19.06.2008 թվականի թիվ 1038594 ստուգման ակտի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ առաջադրված հարկային պարտավորությունների անվավեր ճանաչման մասը և այդ մասով վճիռը փոփոխել. «Կասկադ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ի հայրը՝ նշված պահանջի մասով, մերժել:

ՀՀ վարչական դատարանի 08.01.2009 թվականի վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/5004/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Գազարյան

Վարչական գործ թիվ ՎԳ/5004/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի հոկտեմբերի 16-ին

դրնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 22.04.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ
հայցի «Կնիք» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ
Լևոն Պետրոսյանի (այսուհետ՝ Կառավարիչ) ընդդեմ ՀՀ կառավարությանն առ-
ընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձ
ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Ծառայության
անգործությունը վիճարկելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կառավարիչը պահանջել է պարտավորեցնել Ծառա-
յությանն, Ընկերության ունեցած 2.902.345,6 ՀՀ դրամ գերավճարը փոխանցել
սնանկության հատուկ հաշվին:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Գատարան) 22.04.2009 թվականի վճռով Կառավարչի հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կառավարիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Գատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերությունները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածի 1.4-րդ կետի «բ» ենթակետը, 5.1-րդ, 5.4-րդ, 6-րդ, 6.1-րդ, 6.2-րդ, 6.3-րդ կետերը, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ պետական բյուջե որևէ հարկային պարտավորության համար ավել վճարված տնտեսվարող սուբյեկտի անձնական հաշվի քարտերում առկա գումարները միայն այն դեպքում կճանաչվեն գերավճար, և նրանց նկատմամբ կծազի տնտեսվարող սուբյեկտի՝ գերավճարի նկատմամբ գույքային իրավունքը, երբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան ուսումնասիրության (ստուգման) արդյունքում կազմվի եզրակացություն կամ ակտ, որը սույն գործի շրջանակներում բացակայում է: Ուստի, Ընկերության որևէ իրավունք, սույն վարչական գործի շրջանակներում քննության առարկա դարձած գումարի նկատմամբ, չի ծագել:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի նշված դրույթների միջև առկա հակասության պայմաններում, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ կետով և հաշվի առնելով, որ գերավճարը Ընկերության ակտիվ է և տվյալ դեպքում վերջինիս համար նախընտրելի նորմ կարող է դիտվել Ընկերության գերավճարի առկայության փաստի ճանաչումը, որը հնարավորություն կտա Կառավարչին տնօրինել Ընկերության ակտիվները և դրանք ուղղել պարտատերերի պահանջների բավարարմանը, ակնհայտ է, որ Ընկերության մոտ առկա գերավճարների և առկա հարկային պարտավորությունների հստակ տվյալներն ստանալու համար անհրաժեշտ է, որպեսզի Ծառայության կողմից անցկացվի ուսումնասիրություն կամ ստուգում՝ պարզելու, թե ինչքան է կազմում Ընկերության գերավճարի, ինչպես նաև հարկային պարտավորությունների չափը, որի արդյունքում միայն Կառավարչի մոտ կծազի գերավճարը պահանջելու իրավունքը, իսկ պետական մարմնի մոտ, համապատասխանաբար՝ գերավճարները վերադարձնելու պարտավորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 22.04.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Կառավարչի հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

Ընկերության կողմից կատարվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված հարկային պարտավորությունները և Ընկերության կողմից վճարված գերավճարները ենթակա են վերադարձման: Կառավարչի կողմից 14.04.2008 թվականին «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմում է ներկայացվել Ծառայության Մյասնիկյանի հարկային տեսչություն, որով խնդրվել է վերադարձնել Ընկերության կողմից վճարված 2.902.345 ՀՀ դրամ գերավճարն Ընկերության սնանկության հաշվին: Ներկայացված դիմումին Ծառայության Մյասնիկյանի հարկային տեսչությունը պարտավոր էր ընթացք տալ՝ այն ստանալուց հետո, 30-օրյա ժամկետում, ինչպես սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, սակայն դիմումին ոչ մի պատասխան չի տրվել, այսինքն՝ պետական մարմնի կամ նրա պաշտոնական անձի կողմից ցուցաբերվել է անգործություն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ տնտեսական դատարանի 10.12.2007 թվականի թիվ SU-1312 վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ: ՀՀ տնտեսական դատարանի 26.12.2007 թվականի որոշմամբ Լևոն Պետրոսյանը նշանակվել է Ընկերության՝ սնանկության գործով կառավարիչ (գ.թ. 6):

2) Երևանի քաղաքացիական դատարանի 21.02.2008 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության պահանջների վերջնական ցուցակը հետյալ կերպ. ՀՀ պետական բյուջե (դատական ծախս)՝ 500.000 ՀՀ դրամ, Ծառայության Մյասնիկյանի հարկային տեսչություն (այսուհետ՝ Տեսչություն)՝ 415.419 ՀՀ դրամ, Իրինա Քոչարյան՝ 36.168.000 ՀՀ դրամ (գ.թ. 7):

3) Կառավարչի լիազորությունների շրջանակներում կատարված՝ պարտապանի ֆինանսական գործունեության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ընկերությունը 30.01.2008 թվականի դրությամբ ունի գերավճար ԱԱՀ-ի գծով՝ 2.634.583,6 ՀՀ դրամ, շահութահարկի գծով՝ 258.600 ՀՀ դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ 9.162 ՀՀ դրամ, ինչպես նաև չկատարված հարկային պարտավորություններ, որից եկամտահարկի գծով ապառք՝ 349.260 ՀՀ դրամ, տույժ՝ 108.445 ՀՀ դրամ:

4) Տեսչությանը հասցեագրված՝ Կառավարչի 14.04.2008 թվականի դիմումի համաձայն՝ Կառավարիչը խնդրել է վերադարձնել Ընկերության 2.902.345,6 ՀՀ դրամ գերավճարը՝ գումարը փոխանցելով պարտապանի սնանկության հատուկ հաշվին (գ.թ. 9):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Գերավճարի հաշվանցման և (կամ) վերադարձման կապակցությամբ առաջացող հարաբերությունները կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին հավելվածով (այսուհետ՝ Հավելված), որոնցով սահմանվում է պետական բյուջե վճարվող հարկերի գումարներն օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի կամ հաշվանցման և (կամ) վերադարձի իրավունք ձեռք բերողի պետական բյուջեի հանդեպ այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման կարգը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հարկային տեսչության կողմից հաշվանցվում են հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում:

Հարկային պարտավորությունների սահմանված չափից ավել վճարված գումարները, ինչպես նաև հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա այլ գումարները հաշվանցվում են հարկ վճարողի հաշվարկված տույժերի, տուգանքների, ապա հարկերի գումարների հաշվին:

Հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, հաշվարկված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավել վճարված գումարները վերադարձվում են այն դեպքերում, եթե հարկ վճարողի կողմից կատարվել են նույն օրենքի 16-րդ հոդվածում նշված հարկային պարտավորությունները:

Օրենքով սահմանված դեպքերում, ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գերավճարից տարբերվող գումարները, շահութահարկի, եկամտահարկի գծով տարեկան կանխավճարային մուծումների, ինչպես նաև օրենքով սահմանված՝ հարկի նվազագույն չափի և վերջնական հարկային պարտավորության միջև առաջացող դրական տարբերությունը հաշվանցվում է նույն հոդվածով սահմանված կարգով, եթե այդ հարկատեսակների մասին օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Հարկատեսակների այն գումարները, որոնց վճարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հարկային մարմինը, հաշվանցվում և (կամ) վերադարձվում են նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող **1-ին հավելվածով սահմանված կարգով** և ժամկետներում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԱԱՀ-ի գումարների հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծու-

թյունը որոշվում է հարկային հաշվանցումների ուսումնասիրությամբ և (կամ) ստուգմամբ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկատեսակների այն գումարները, որոնց վճարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հարկային մարմինը, հաշվանցվում և (կամ) վերադարձվում են նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածի 1.4-րդ կետի համաձայն՝ նույն կարգին համապատասխան հաշվանցվում և (կամ) հարկ վճարողին վերադարձվում են նաև՝ ա) սահմանված չափից ավել վճարված շահութահարկը, եկամտահարկը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, հարկերին փոխարինող հաստատագրված վճարները, պարզեցված հարկը, հարկային մարմնի միջոցով պետական բյուջե հավաքագրվող գույքահարկը և հողի հարկը, բ) ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանման գործարքների) մասով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածի 5.1-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձը իրականացվում են գերավճարի և (կամ) գերավճարից տարբերվող գումարի մնացորդի այն մասով, որը, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, **սույն կարգին համապատասխան հարկային մարմնի կողմից համարվել է հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա:**

Նույն հավելվածի 5.4-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձը կարող են հիմնավորված համարվել **միայն ստուգման (վերստուգման) արդյունքներով:** Գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց փաստացի հաշվանցումը և (կամ) վերադարձը հաշվանցման և (կամ) վերադարձի հիմնավորվածության արձանագրում չէ:

Նույն հավելվածի 6.2-րդ կետի համաձայն՝ վճարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են հարկային մարմնի կողմից համապատասխան **եզրակացություն կազմելու միջոցով:** Կամերալ ուսումնասիրություն կամ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրություն անցկացվելու դեպքերում եզրակացությունը կազմվում է արձանագրության, իսկ համապատասխան ստուգում անցկացնելու դեպքում՝ ստուգման ակտի հիման վրա: Նույն մասում նշված եզրակացության ձևերը սահմանում է հարկային մարմինը՝ դրանք համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ:

Նույն հավելվածի 16.2-րդ կետի համաձայն՝ հաշվանցում կամ վերադարձ կատարելու մասին հարկային (տարածքային) մարմնի կազմած եզրակացությունը,

իսկ մեկից ավելի եզրակացությունների առկայության դեպքում՝ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքը, ոչ ուշ, քան որևէ եզրակացություն կազմելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրն ուղարկվում է վերադաս հարկային մարմին՝ եզրակացությունների հիման վրա հաշվանցումները և (կամ) վերադարձներն օրենքով սահմանված պահանջներին կատարելու հանգամանքներն ստուգելու և հաշվառում իրականացնելու համար: Կատարվող հաշվանցումները կամ վերադարձը վերադաս հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում եզրակացությունը կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքը, ոչ ուշ, քան այն ստանալու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

Նույն հավելվածի 16.6-րդ կետի համաձայն՝ եզրակացությունները կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքներն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը գումարների վերադարձման համար օրենքով սահմանված ժամկետներում (այդ ժամկետների ավարտից ոչ ուշ) իրականացնում է գումարների վերադարձը:

Սիաժամանակ, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գերավճարի հաշվանցման և (կամ) վերադարձման կապակցությամբ առաջացող հարաբերությունները կարգավորվում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին հավելվածով, որով սահմանվում է վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարներն օրենքով սահմանված դեպքերում ապահովադրի կամ հաշվանցման և (կամ) վերադարձի իրավունք ձեռք բերողի պետական բյուջեի հանդեպ այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման կարգը:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ապահովադրի սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց հաշվանցումը, սոցիալական վճարների գերավճարի հաշվին հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձն իրականացվում են նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 1-ով սահմանված կարգով և ժամկետներում:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածի 5.1-րդ կետի համաձայն՝ ապահովադրի հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են գերավճարի գումարի մնացորդի այն մասով, որը, օրենքով սահմանված պահանջներին և սույն կարգին համապատասխան, հարկային մարմնի կողմից համարվել է հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա:

Նույն հավելվածի 5.3-րդ կետի համաձայն՝ ապահովադրի հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձը կարող են հիմնա-

վորված համարվել միայն ստուգման (վերստուգման) արդյունքներով:

Նույն հավելվածի 6.2-րդ կետի համաձայն՝ ապահովադրի հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են հարկային մարմնի կողմից համապատասխան եզրակացություն կազմելու միջոցով: Կամերալ ուսումնասիրություն կամ սոցիալական վճարների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրություն անցկացվելու դեպքերում եզրակացությունը կազմվում է արձանագրության, իսկ համապատասխան ստուգում անցկացնելու դեպքում՝ ստուգման ակտի հիման վրա:

Նույն հավելվածի 15.2-րդ կետի համաձայն՝ հաշվանցում կամ վերադարձ կատարելու մասին հարկային (տարածքային) մարմնի կազմած եզրակացությունը (իսկ մեկից ավելի եզրակացությունների առկայության դեպքում՝ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքը) ոչ ուշ, քան որևէ եզրակացություն կազմելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրն ուղարկվում է վերադաս հարկային մարմին՝ եզրակացությունների հիման վրա հաշվանցումները և (կամ) վերադարձերն օրենքով սահմանված պահանջներին կատարելու հանգամանքներն ստուգելու և հաշվառում իրականացնելու համար: Կատարվող հաշվանցումները կամ վերադարձը վերադաս հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում եզրակացությունը կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքը ոչ ուշ, քան այն ստանալու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Նույն հավելվածի 15.6-րդ կետի համաձայն՝ եզրակացությունները կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքներն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը գումարների վերադարձման համար օրենքով սահմանված ժամկետներում (դրանց ավարտից ոչ ուշ) իրականացնում է գումարների վերադարձը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով գերավճարները հարկային մարմնի կողմից կարող են հաշվանցվել հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածով սահմանված ընթացակարգի իրականացման արդյունքում: Մասնավորապես՝ հարկ վճարողի հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձը կարող են հիմնավորված համարվել ստուգման արդյունքներով՝ հարկային մարմնի կողմից համապատասխան եզրակացություն կազմելու միջոցով, ընդ որում՝ գերավճարների վերադարձն էլ իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Նույնաբովանդակ սկզբունքներով իրականացվում է նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գերավճարների վերադարձը, որը կարգավորվում է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ պետական բյուջե որևէ հարկային պարտավորության համար ավել վճարված, տնտեսվարող սուբ-

յեկտի անճնական հաշվի քարտերում առկա գումարները միայն այն դեպքում կարող են ճանաչվել գերավճար և դրանց նկատմամբ ծագել տնտեսվարող սուբյեկտի՝ գերավճար ունենալով պայմանավորված գույքային իրավունքը, ինչպես նաև նրանց նկատմամբ տարածվել գերավճարների վերադարձմանը վերաբերող իրավական ռեժիմը, երբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան ուսումնասիրության արձանագրության կամ ստուգման ակտի հիման վրա կազմվել է եզրակացություն:

Մինչդեռ, սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերության գերավճարի վերադարձման՝ օրենքով սահմանված ընթացակարգը չի պահպանվել, ինչպես նաև առկա չէ հարկային մարմնի կողմից համապատասխան ուսումնասիրության կամ ստուգման արդյունքում կազմված եզրակացություն, հետևաբար՝ Ընկերության գերավճարը վերադարձնելու մասին Կառավարչի կողմից դիմում ներկայացնելը չէր կարող հանգեցնել օրենքով սահմանված հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գերավճարները վերադարձնելուն:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավել վճարված գումարները վերադարձվում են նույն օրենքի 16-րդ հոդվածում նշված հարկային պարտավորությունները հարկ վճարողի կողմից կատարվելու դեպքում, մինչդեռ սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությունն ունի չկատարված հարկային պարտավորություններ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ

դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 22.04.2009 թվականի վճիռը և այն փոփոխել. «Կնիք» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Լևոն Պետրոսյանի հայցը մերժել:

2. «Կնիք» ՓԲԸ-ից հօգուտ ՀՀ ֆինանսների նախարարության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարած պետական տուրքի գումարը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0123/05/09
Նախագահող դատավոր՝ Բ. Սկոյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/0123/05/09**
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 27.05.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի
հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) հայցի ընդդեմ «ՆԳՆ թիվ 1 ռազ-
մականացված ջոկատ» ՊՀ-ի (այսուհետ՝ Հիմնարկ)՝ 80.396.900 ՀՀ դրամ բռնա-
զանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնազանձել Հիմնարկից
80.396.900 ՀՀ դրամ, այդ թվում՝ եկամտահարկի գծով՝ 943.900 ՀՀ դրամ, որից

ապառք՝ 445.400 ՀՀ դրամ, տույժ՝ 498.500 ՀՀ դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ 79.453.000 ՀՀ դրամ, որից ապառք՝ 63.478.100 ՀՀ դրամ, տույժ՝ 15.974.900 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Գ-ատարան) 27.05.2009 թվականի վճռով վարչական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Գ-ատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասը, 429-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 02.02.1999 թվականի թիվ 42 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության պետական պահպանության ծառայության» կանոնադրության 1-ին կետը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Գ-ատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածը ենթադրում է քաղաքացիաիրավական պարտավորության դադարում այնպիսի իրավական փաստերի առկայության հետևանքով, որոնց ուժով վերանում են մասնակիցների միջև գոյություն ունեցող պարտավորաիրավական հարաբերություններից բխող կապերը: Մինչդեռ, սույն գործով Հիմնարկի և Տեսչության միջև պարտավորաիրավական հարաբերություն չի ծագել, հետևաբար՝ վիճելի իրավահարաբերության նկատմամբ նշված հոդվածը կիրառելի չէ:

Գ-ատարանն անտեսել է նաև, որ Հիմնարկը համարվում է հարկատու և պարտավոր է կատարել հարկային պարտավորությունները հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում, և գործող հարկային օրենսդրությամբ Հիմնարկի կազմակերպաիրավական տեսակը հարկ վճարելուց ազատելու որևէ արտոնություն չի ընձեռում: Հիմնարկը, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, համարվում է հարկային գործակալ, իսկ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ապահովադիր, և պարտավոր է ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հաշվարկել և պահել եկամտահարկ, ինչպես նաև սոցիալական վճար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 27.05.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության՝ պարտավորության առաջացման հաշվարկի համաձայն՝ 15.12.2008 թվականի դրությամբ Հիմնարկի պարտավորությունները կազմում են 80.396.900 ՀՀ դրամ, այդ թվում՝ եկամտահարկի գծով՝ 943.900 ՀՀ դրամ, որից ապառք՝ 445.400 ՀՀ դրամ, տույժ՝ 498.500 ՀՀ դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ 79.453.000 ՀՀ դրամ, որից ապառք՝ 63.478.100 ՀՀ դրամ, տույժ՝ 15.974.900 ՀՀ դրամ (գ.թ. 74-82):

2) ՀՀ կառավարության 02.02.1999 թվականի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության պետական պահպանության ծառայության մասին» թիվ 42 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության պետական պահպանության ծառայության» կանոնադրության 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության պետական պահպանության ծառայությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների համակարգ է՝ բյուջետային հիմնարկի կարգավիճակով:

3) ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության վարչության 23.12.1999 թվականի «Պետական գրանցամատյանում բյուջետային հիմնարկի (կազմակերպության) գրանցման (հաշվառման)» թիվ Բ 004746 վկայականի համաձայն՝ Հիմնարկի վերադաս մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարությունն է (ներկայումս՝ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն) (գ.թ. 89):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը,

ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ պետական մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հիմնարկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առանձին հարկատեսակների մասին օրենքներով սահմանված դեպքերում հարկի վճարման պարտավորությունը կարող է դրվել հարկային գործակալի վրա: Հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրվող) իրավաբանական անձն է (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկը, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը), անհատ ձեռնարկատերը, նոտարը, հիմնարկը, տեղական ինքնակառավարման մարմինը, որի վրա, օրենքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը (այդ թվում՝ անուղղակի) հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեներ վճարելու պարտավորություն:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ բացառությամբ նույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերի, ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով «Ապահովադիր» հասկացությունը բնորոշվում է որպես նույն օրենքով սահմանված կարգով ու չափերով սոցիալական վճարումներ կատարող և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցող (վճարող) իրավաբանական և ֆիզիկական անձ, պետական և համայնքային ենթակայության հիմնարկ:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սոցիալական վճարներն ապահովադիրների կողմից պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող միջոցներ են: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձինք, պետական և համայնքային ենթակայության հիմնարկները, օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկներն ու միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպությունները, ֆիզիկական անձինք՝ իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, ինչպես նաև վարձու աշխատողները պարտավոր են կատարել սոցիալական վճարումներ՝ նույն օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի

90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ պետական կառավարչական հիմնարկն ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը պետական մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն է և քաղաքացիական իրավահարաբերություններին վերջիններիս մասնակցության ապահովումը: Պետական կառավարչական հիմնարկի իրավական կարգավիճակից ելնելով՝ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ վերջինիս պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը: Միաժամանակ, ՀՀ հարկային և ՀՀ սոցիալական վճարների մասին օրենսդրություններով, պետական կառավարչական հիմնարկը համարվում է հարկային գործակալ ու ապահովադիր և վերջինիս համար այլ հարկային գործակալների կամ ապահովադիրների համեմատ որևէ առանձնահատկություն սահմանված չէ: Հետևաբար՝ պետական կառավարչական հիմնարկի վրա, այլ հարկային գործակալների և ապահովադիրների հետ համահավասար, դրված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս հարկի պահում (գանձում), ինչպես նաև սոցիալական վճարումներ կատարելու պարտավորություններ, որոնց չկատարման դեպքում նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն գործով Դատարանը գործի վարույթը կարճելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հիմնարկը պետական հիմնարկ է, իսկ պետական հիմնարկի պարտավորությունների համար, որպես հիմնադիր, պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածի համաձայն՝ պարտատիրոջ և պարտապանի համընկնման դեպքում պարտավորությունը դադարում է: Սույն գործով պարտատերը և պարտապանը համընկնում են, ուստի պարտավորության դադարման ուժով՝ սույն վարչական գործով կողմերի միջև առկա չէ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա վեճ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ Դատարանն անտեսել է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է քաղաքացիաիրավական պարտավորության դադարմանը, իսկ տվյալ դեպքում Տեսչության և Հիմնարկի միջև իրավահարաբերություններն առաջացել են վերջինիս կողմից «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով սահմանված կարգով ու չափով ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտահարկը չհաշվարկելու և չպահելու, ինչպես նաև «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարումներ չկատարելու հետևանքով, այսինքն՝ Տեսչության և Հիմնարկի միջև առաջացել են վարչաիրավական հարաբերություններ, որտեղ մի

կողմում վարչական մարմինն է՝ Տեսչությունը, իսկ մյուս կողմում՝ հարկատուն և ապահովադիրը՝ Հիմնարկը: Հետևաբար, պարտապանի և պարտատիրոջ համընկնմամբ պարտավորության դադարման վերաբերյալ Դատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթներից, բովանդակությունից և էությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 27.05.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/2575/05/05
Նախագահող դատավոր՝ Գ. Գարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2575/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սյասնիկյանի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 11.12.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ «Օթյակ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 22.454.300 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 22.454.300 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.12.2009 թվականի վճռով Տեսչության հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 5-րդ, 41-րդ, 43-րդ հոդվածները, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ Ընկերությունը 13.02.2009 թվականին ներկայացրել է 2008 թվականի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ, համաձայն որի՝ բյուջե վճարման ենթակա գումարը կազմել է 33.352.300 ՀՀ դրամ: Նշված պարտավորությունն Ընկերությունը կատարել է, իսկ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքն Ընկերության համար որևէ արտոնություն չի սահմանել:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է հարկ վճարողներին և հարկվող շահույթը, շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի արտոնությունները, հարկի հաշվարկման կարգը, վճարման ժամկետները: Նշված օրենքի 41-րդ հոդվածով սահմանվում են շահութահարկից ազատելու և ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ արտոնություններ: Ընկերության համար հարկային օրենսդրությամբ նախատեսված որևէ արտոնություն սահմանված չէ:

Այսինքն՝ Դատարանն անտեսել է այն իրավական նորմերը, որոնցով օրենսդիրը սահմանում է օտարված գույքի համար ավելացված արժեքի հարկ և շահութահարկ վճարելու տնտեսվարող սուբյեկտի պարտավորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 11.12.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 1607-Ն որոշմամբ սահմանվել է Երևանի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվող տարածքների ցանկը, որում ընդգրկվել են նաև Նալբանդյան 130 շենքի դիմաց գտնվող Ընկերության շինությունը և հողամասը (գ.թ. 57-59):

2. «Անշարժ գույքի պետության և հասարակության կարիքների համար վերց-

նելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» 05.05.2008 թվականի պայմանագրի համաձայն: Ընկերությունը Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Երևանի քաղաքապետի, որի անունից հանդես է եկել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը, փոխանցել է սեփականության իրավունքով իրեն պատկանող Նալբանդյան 130 շենքի դիմաց գտնվող շինությունները և վարձակալության իրավունքով հողատարածքը, որի շուկայական արժեքը կազմել է 200.113.800 ՀՀ դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (գ.թ. 54-56):

3. Տեսչության հայցապահանջի հիմքում ընկած և հաշվարկված շահութահարկի գումարն առաջացել է «Անշարժ գույքի պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» 05.05.2008 թվականի պայմանագրի հետևանքով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ Սինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի 23.06.2009 թվականի թիվ 22651/05 վճռի 67 կետով նշել է, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «օրենքով նախատեսված պայմաններով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է մատչելի և բավականաչափ հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն, և երկրորդ՝ Պետության կողմից այդ իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի առկա ներպետական իրավական նորմին համապատասխան:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից սույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի

համախառն եկամտի և սույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է, իսկ 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

ՀՀ հողային օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ պետության կամ համայնքների կարիքների համար քաղաքացիների և իրավաբանական անձանց հողամասերը կարող են վերցվել Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն՝ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը: Սեփականության օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականատիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հատուցում է ձեռք բերողը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կատարվում է միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործի փաստերի համաձայն սեփականատիրոջ գույքը ոչ թե վաճառվում է նրա ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում՝ անձնական շահերից ելնելով, այլ իրացվում է պետության և հասարակության կարիքների դիմաց, վճարվելով փոխհատուցում, որը ոչ թե սեփականատիրոջ եկամուտն է, այլ գույքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքի դադարեցման դիմաց տրվող համարժեք փոխարինում:

Բացի այդ, սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում իրավացիորեն դրել է այն հանգամանքը, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով հստակ սահմանված է, որ սեփականության օտարման հետ կապված առաջացող ֆինանսական պարտավորությունները, մասնավորապես՝ հարկերը, հատուցում է ձեռքբերողը, հետևաբար, «Օթյակ» ՓԲԸ-ն փոխհատուցման գումարից շահութահարկ չպետք է վճարի: Բացի այդ, նշված օրենքով սահմանված սկզբունքներից է նաև, որ գերակա հանրային շահից ելնելով սեփականության օտարումը չպետք է չիմնավորված

վնաս պատճառի սեփականատիրոջը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Անշարժ գույքի պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» 05.05.2008 թվականի պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ստացված 200.113.800 ՀՀ դրամ գումարը շահութահարկով հարկման ենթակա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական դատարանի 11.12.2009 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/4786/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4786/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արմֆրագազ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 01.04.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչության 22.09.2009 թվականի թիվ 1005093 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի՝ 38.127.000 ՀՀ դրամի վճարման պարտավորությունը կատարելուն Ընկերությանը պարտադրելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչության 22.09.2009 թվականի թիվ 1005093 ստուգման ակտը:

Գիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Ընկերությունից բռնագանձել Կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչության 22.09.2009 թվականի թիվ 1005093 ստուգման ակտով առաջադրված 38.127.000 ՀՀ դրամ պարտավորության գումարը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.04.2010 թվականի վճռով հայրը մերժվել է, իսկ հակընդդեմ հայրը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը կիրառել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» թիվ 2052-Ն որոշումը, որը պետք է կիրառեր, ինչպես նաև խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ հոդվածները, 86-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ստուգման ակտով նախատեսված շահութահարկի պարտավորությունը հարկային տեսուչների կողմից առաջադրվել է Ընկերության կրեդիտորական պարտքերը «դուրս գրված» ճանաչելու պատճառով: Այդ պարտքերը դուրս գրված են ճանաչվել հարկային մարմնի նախաձեռնությամբ՝ առանց ստուգելու պարտքերն այդպիսին ճանաչելու իրավական հիմքերի առկայությունը: Ավելին, ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» թիվ 2052-Ն որոշման 7-րդ կետը սահմանում է, որ անհուսալի ճանաչված դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի դուրսգրումը չի համարվում դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի ներում, հետևաբար՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված կարգով դուրսգրման փաստը (եթե նույնիսկ պարտքերը դուրսգրված լինեին) չի կարող ճանաչվել որպես ներված պարտավորություններ:

Դատարանը, դատաքննության ընթացքում արձանագրելով գործում զրոյական հաշվետվության բացակայությունը, որի ապացուցման պարտականությունը

կրում էր հարկային մարմինը, որևէ կերպ չի անդրադարձել այդ կարևորագույն ապացույցի բացակայությանը: Ընկերությունը բազմիցս արտահայտել է իր առարկությունը և հիմնավորումները կրեդիտորական պարտքը ներված չլինելու մասին, ավելին, Դատարանը, չունենալով կոնկրետ ապացույց՝ փաստական հանգամանք, կրեդիտորական պարտքերը ներված լինելու վերաբերյալ, և այդ հաշվետվության վերաբերյալ Ընկերության առարկությունների պայմաններում, այնուամենայնիվ, հաստատված է համարել կրեդիտորական պարտքերի ներված լինելը, ինչն էլ հանգեցրել է Դատարանի կողմից ոչ օբյեկտիվ և իրավական հիմնավորումից զուրկ վճիռ կայացնելուն:

Դատարանի վճիռն առերևույթ հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի թիվ 3-1462/ՏԳ և 21.12.2006 թվականի թիվ 3-2504/ՏԳ քաղաքացիական գործերով կայացված որոշումներին:

Վերոգրյալի հիման վրա Ընկերությունը պահանջել է բեկանել Դատարանի 01.04.2010 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչության կողմից Ընկերությունում կատարվել է ստուգում, որի արդյունքում 22.09.2009 թվականին կազմվել է թիվ 1005093 ստուգման ակտը: Ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ Ընկերությունը, 23.02.2009 թվականից գտնվելով լուծարման գործընթացում, 2009 թվականից մինչև լուծարման պահն ընկած ժամանակաշրջանի հարկվող շահույթը պակաս է ցույց տվել 190.635.000 ՀՀ դրամի չափով, ինչի համար նրան առաջադրվել է լրացուցիչ պարտավորություն վերը նշված գումարի 20 տոկոսի չափով՝ 38.127.000 ՀՀ դրամ: Ստուգող մարմինն այդ եզրահանգման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերությունը հարկվող շահույթը որոշելիս 10.06.2009 թվականի դրությամբ ներկայացված լուծարային հաշվեկշռում համախառն եկամտի մեջ չի ներառել 204.979.000 ՀՀ դրամի ներված պարտավորությունը՝ խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ժա» ենթակետի պահանջները (գ.թ. 12-14):

2) Գևորգ Չաքմիշյանի 10.07.2009 թվականի հայտարարության համաձայն՝ Գևորգ Չաքմիշյանը հայտնել է, որ «Գ-ազ դե Ֆրանս» ընկերությունը հրաժարվում է Ընկերության բոլոր կրեդիտորական պարտքերից: Նշված գրությունը ստորագրելիս Գևորգ Չաքմիշյանը հանդես է եկել որպես «Գ-ազ դե Ֆրանս» ընկերության ներկայացուցիչ (գ.թ. 27):

3) Գևորգ Չաքմիշյանի 25.06.2009 թվականի հայտարարության համաձայն՝ Գևորգ Չաքմիշյանը հայտնել է, որ Ընկերության հիմնադիրների ժողովի 27.01.2009 թվականի որոշման հիմքով ինքը Ընկերության լուծարող է ճանաչվել, և «Լաժմե-

տիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հայտարարություն է տվել Ընկերության լուծարման մասին և մեկամսյա ժամկետում որևէ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ պահանջ չի հայտնել Ընկերության կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (գ.թ. 46):

4) «Գազ դե Ֆրանս» ընկերության գլխավոր տնօրեն Մարկ Հատսիերի 03.02.2010 թվականի տեղեկանքի համաձայն՝ «Գազ դե Ֆրանս» ընկերությունը հայտնել է, որ «հաստատում է, որ որպես հայկական օրենսդրության համաձայն գործող «Արմֆրագազ» ընկերության բաժնետեր և պարտատեր, չի հրաժարվում Ընկերության 207.599.000 ՀՀ դրամ պարտքի պահանջից, որը հաշվառված է Ընկերության հաշվապահական հաշվեկշռում: Այդ պարտքն առաջացել է անտոկոս փոխառության պայմանագրերից» (գ.թ. 58):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, որը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում, հարկվող շահույթը որոշելիս, համախառն եկամտից թույլատրվում է կատարել նույն օրենքով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Նույն օրենքի իմաստով ա) եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը, բ) սեփական կապիտալ է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը, գ) ակտիվ է համարվում հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտաբժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույքը, դ) պարտավորություն է համարվում հարկատուի առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն):

Նույն հոդվածի 2-րդ կետի «ժա» ենթակետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով եկամուտների թվին են դասվում անհատույց ստացվող ակտիվները, պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները, բացառությամբ՝ օրենքով տրվող հարկային արտոնությունների գումարների:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորությունների ներումը, որը հանգեցնում է հաշվետու տարվա ընթացքում հարկատուի պարտավորությունների նվազմանը, որն էլ իր հերթին հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը, որակվում է որպես եկամուտ: Ընդ որում, նման բնույթի եկամտի առկայության համար անհրաժեշտ են հետևյալ հանգամանքները՝ 1. հարկատուի պարտավորության առկայությունը երրորդ անձի (պարտատիրոջ) հանդեպ, 2. հարկատուի կողմից պարտավորության կատարված չլինելը, 3. հարկատուի պարտավորության ներումը պարտատիրոջ կողմից:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչության կողմից Ընկերությունում կատարված ստուգման արդյունքում կազմված ակտի 1-ին կետով պարզվել է, որ Ընկերությունը, 23.02.2009 թվականից գտնվելով լուծարման գործընթացում, 2009 թվականից մինչև լուծարման պահն ընկած ժամանակաշրջանի հարկվող շահույթը պակաս է ցույց տվել 190.635.000 ՀՀ դրամի չափով, ինչի համար նրան առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն վերը նշված գումարի 20 տոկոսի չափով՝ 38.127.000 ՀՀ դրամ: Ընդ որում, վարչական մարմինն այդ եզրահանգման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերությունը, հարկվող շահույթը որոշելիս, 10.06.2009 թվականի դրությամբ ներկայացված լուծարային հաշվեկշռում համախառն եկամտի մեջ չի ներառել 204.979.000 ՀՀ դրամի ներված պարտավորությունը՝ խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ժա» ենթակետի պահանջները:

Սույն գործով հայրը մերժելիս, Դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ 01.01.2009 թվականի հաշվապահական հաշվեկշռում որպես ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ արտացոլվել է «Գազ դե Ֆրանս» ընկերության հանդեպ ունեցած 191.139.000 ՀՀ դրամ պարտքը, «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած 6.004.600 ՀՀ դրամ պարտքը, «Արմենտել» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած 210.400 ՀՀ դրամ պարտքը և Հայկ Բալասանյանի հանդեպ ունեցած 7.675.000 ՀՀ դրամ պարտքը: Իսկ 14.07.2009 թվականին հարկային տեսչություն ներկայացված՝ 01.01.2009-10.06.2009 թվականի ժամանակահատվածի համար ներկայացված լուծարային հաշվեկշռում Ընկերությունն արձանագրել է կրեդիտորական պարտքերի բացակայությունը, և քանի որ այդ պարտքերը փաստացի չէին մարվել, հետևաբար՝ ակնհայտ է, որ դրանք դուրս են գրվել հաշվեկշռից՝ որպես ներված պարտավորություններ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ

մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վարչական դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն այդ պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը «Գազ դե Ֆրանս» ընկերության հանդեպ ունեցած 191.139.000 ՀՀ դրամ պարտքը, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած 6.004.600 ՀՀ դրամ պարտքը, «Արմենտել» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած 210.400 ՀՀ դրամ պարտքը և Հայկ Բալասանյանի հանդեպ ունեցած 7.675.000 ՀՀ դրամ պարտքը պարտատերերի կողմից ներված լինելու հանգամանքները հաստատել է առանց բավարար ապացույցների առկայության: Մասնավորապես՝ Դատարանը նշված հանգամանքն ապացուցված է համարել Ընկերության կողմից 14.07.2009 թվականին հարկային տեսչություն ներկայացված լուծարային հաշվեկշռով, որը, սակայն, սույն գործի նյութերում առկա չէ:

Բացի այդ, Դատարանը «Գազ դե Ֆրանս» ընկերության հանդեպ ունեցած պարտքը ներված լինելու հանգամանքը հաստատված է համարել նաև Գևորգ Չաքմիշյանի 10.07.2009 թվականի հայտարարությամբ, այնինչ, սույն գործով Դատարանը որևէ գործողություն չի ձեռնարկել Գևորգ Չաքմիշյանի՝ «Գազ դե Ֆրանս» ընկերության անունից հանդես գալու լիազորությունների առկայությունը ճշտելու ուղղությամբ, ավելին, սույն գործում առկա՝ «Գազ դե Ֆրանս» ընկերության գլխավոր տնօրեն Մարկ Հանստիերի 03.02.2010 թվականի տեղեկանքով ուղղակիորեն հերքվում են Գևորգ Չաքմիշյանի 10.07.2009 թվականի հայտարարության մեջ նշված հանգամանքները:

Այսպիսով, Ընկերության վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ, 228-րդ հոդվածների ուժով Դատարանի 01.04.2010 թվականի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արմֆրագազ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 01.04.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Գործի նոր քննության արդյունքում անդրադառնալ դատական ծախսերի քաշխման հարցին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/0961/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0961/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի փետրվարի 5-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 30.06.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Բելազ կավկազ տրանս սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 25.12.2008 թվականի թիվ 1002954 ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է շահութահարկի և եկամտահարկի մասերով անվավեր ճանաչել Տեսչության 25.12.2008 թվականի թիվ 1002954 ակտը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.06.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Անվավեր է ճանաչվել Տեսչության 25.12.2008 թվականի թիվ 1002954 ստուգման ակտի՝ Ընկերությանը շահութահարկի գծով 2.584.800 ՀՀ դրամ և եկամտահարկի գծով 7.427.400 ՀՀ դրամ հարկային պարտավորություն առաջադրելու մասը:

Ընկերության հայցը՝ Տեսչության 25.12.2008 թվականի թիվ 1002954 ստուգման ակտը շահութահարկի գծով 1.567.000 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն առաջադրելու մասով անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, չի կիրառել վիճելի իրավահարաբերությունը կարգավորելու ժամանակ գործող «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր, կիրառել է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ պետական եկամուտների նախարարության 16.04.2001 թվականի թիվ 02/456 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի (այսուհետ՝ Հրահանգ) 12.2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, ղեկավարվելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և ՀՀ պետական եկամուտների նախարարության 2001 թվականի ապրիլի 16-ի թիվ 02/456 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 12.2-րդ կետով, պատճառաբանել է, որ «օրապահիկը չի համարվում եկամուտ, քանի որ այն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում նախատեսված չէ որպես եկամուտ համարվող միջոց: Բացի այդ, օրապահիկը, հանդիսանալով գործուղման հետ կապված անհրաժեշտ ծախսերի վճար, իր բնույթով առանձնահատուկ է և չի ընդգրկում եկամուտի իմաստային բովանդակությունը»:

Դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ նշված հրահանգի 12.2-րդ կետի 2-րդ պարբերության իմաստով օրապահիկը, լինելով գործուղման վճար, համարվում է նաև փոխհատուցման վճար:

Դատարանն անտեսել է, որ վիճելի իրավահարաբերությունը կարգավորելու ժամանակ գործող «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է հարկումը կատարել սուսկ վճարվող եկամտի ամբողջական գումարից՝ իրականացնելով միայն նույն օրենքի 9-րդ հոդվածի «ժգ» ենթակետով սահմանված նվազեցումները:

Բացի այդ, Դատարանն Ընկերությունում գրանցված վեց օտարերկրյա քաղաքացիներին 25.000-ական ՀՀ դրամ օրապահիկ վճարելու փաստը հաստատված լինելու հարցը որոշելիս բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել վիճարկվող ակտը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 30.06.2009 թվականի վճռի՝ ակտի 2-րդ կետն անվավեր ճանաչելու մասը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Հարկային գործակալի հարկի պահում իրականացնելու պարտականությունը ծագում է միայն եկամուտներ վճարելիս: Դատարանը, քննարկելով այս հանգամանքը և հաշվի առնելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջը, իրավացիորեն եզրահանգել է, որ օրապահիկը չի համարվում եկամուտ:

3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 30.10.2008 թվականի թիվ 1002954 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում (գ.թ. 85):

2) Ստուգման արդյունքներով 25.12.2008 թվականին կազմված թիվ 1002954 ակտի 2-րդ կետով եկամտահարկի գծով Ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 7.427.400 ՀՀ դրամի չափով: Ակտում արձանագրվել է, որ «Ներկայացված փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ ընկերությունը, հանդիսանալով որպես հարկային գործակալ, 2007 թվականի մարտ, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ընկերությունում գրանցված օտարերկրյա թվով 6 քաղաքացիների արտերկրներ գործուղելու ընթացքում վճարել է յուրաքանչյուր օրվա համար 25.0 հազ. դրամի չափով օրապահիկ, համապատասխանաբար 450.0 հազ. դրամ, 368.0 հազ. դրամ, 208.0 հազ. դրամ, 228.0 հազ. դրամ և 39725.0 հազ. դրամ: Վճարված օրապահիկի գումարներն ընկերությունում գրանց-

ված օտարերկրյա քաղաքացիների համար «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն համարվում են այլ եկամուտներ և ենթակա են հարկման հարկային գործակալի կողմից 10% դրույքաչափով, վճարված ամբողջական գումարից առանց անձնական նվազեցումներ կատարելու» (գ.թ. 7-12):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանը, պարզելով գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները և կիրառելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածները, ՀՀ պետական եկամուտների նախարարության 16.04.2001 թվականի թիվ 02/456 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 1.2.2 կետը, հայցը մասնակիորեն բավարարելիս պատճառաբանել է, որ օրապահիկը չի համարվում եկամուտ, քանի որ, նախ, այն նախատեսված չէ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում որպես եկամուտ համարվող միջոց, բացի այդ, օրապահիկը, հանդիսանալով գործուղման հետ կապված անհրաժեշտ ծախսերի վճար, իր բնույթով առանձնահատուկ է և չի ընդգրկում եկամտի իմաստային բովանդակությունը: Դատարանը միաժամանակ նշել է, որ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է: Այստեղից տրամաբանորեն հետևում է, որ օրապահիկը, հանդիսանալով համախառն եկամտից նվազեցման ենթակա գումար, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի իմաստով չի համարվում նաև հարկվող եկամուտ:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և սույն օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ հարկումը կատարվում է վճարվող եկամտի ամբողջական գումարից՝ իրականացնելով միայն նույն օրենքի 9-րդ հոդվածի «բ» և «ժգ» ենթակետերով սահմանված նվազեցումները:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում փոխհատուցման վճարները, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

Նույն ենթակետով նախատեսված փոխհատուցման վճարների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նվազեցման նորմաներ սահմանված չլինելու դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է փաստաթղթերով հիմնավորված ծախսերի համար որպես փոխհատուցում ողջ գումարի չափով:

ՀՀ պետական եկամուտների նախարարության 16.04.2001 թվականի թիվ

02/456 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 12.2 կետի համաձայն՝ փոխհատուցման վճարներ են համարվում աշխատանքային պարտականությունները կատարելու համար գործատուների կողմից իրենց աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և չափերով տրվող փոխհատուցումները (մասնավորապես՝ **գործուղման վճարները**, դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքների կատարման համար վճարները, հատուկ սնունդը):

Գործուղման վճարներ են համարվում աշխատողներին հիմնական աշխատանքի վայրից (քաղաք, գյուղ) դուրս որոշակի ժամկետով այլ վայրում աշխատանքային հանձնարարություն կատարելու հետ կապված ծախսերի համար տրվող գումարները (մասնավորապես՝ օրապահիկ, գիշերավարձ, աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայրեր մեկնելու և վերադառնալու ճանապարհաձախս, ճանապարհին հարկադրական կանգառի ժամանակ հյուրանոցներում և համանման օբյեկտներում տեղերն ամրագրելու վճար, ապահովագրական վճարներ, պետական տուրքեր, մուտքի արտոնագրի ձևակերպման հետ կապված ծախսեր, կապի (հեռախոս, ֆաքս, ինտերնետ ծառայություն) ծախսեր, փաստաթղթերի թարգմանության և վավերացման ծախսեր): Ընդ որում՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում օրապահիկը վճարվում է աշխատողի գործուղման մեջ գտնվելու օրացուցային օրերի (ներառյալ՝ գործուղում մեկնելու և վերադառնալու օրերը) համար:

Վերոնշյալից հետևում է, որ գործուղման վճարները, այդ թվում՝ օրապահիկը, գիշերավարձը, աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայրեր մեկնելու և վերադառնալու ճանապարհաձախսը (և այլն) փոխհատուցման վճար են և ենթակա են նվազեցման համախառն եկամտից:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ օտարերկրացիների համար գործուղման ծախսերը նվազեցվող փոխհատուցումներ են համարվել 26.12.2008 թվականին ընդունված ««Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու պահից, ապա Վճարել դատարանը գտնում է, որ տվյալ փաստարկն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և **ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող** իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Տվյալ դեպքում, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրա-

ցումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը դրանում սահմանվող դրույթների հետադարձ ուժն արգելման մասին որևէ դրույթ չի պարունակում: Հետևաբար, օրենքում կատարված փոփոխությունները տարածվում են նաև մինչև նշված փոփոխությունների ընդունումը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական դատարանի 30.06.2009 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/2521/05/08
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2521/05/08
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 11.12.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ 25.01.2008 թվականի թիվ 1033821 ակտը և ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովի 29.02.2008 թվականի թիվ 5/2 որոշումը՝ որպես օրենքի խախտմամբ ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտեր, վերացնելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել 25.01.2008 թվականի թիվ 1033821 ակտը և ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովի 29.02.2008 թվականի թիվ 5/2 որոշումը և պարտավորեցնել ընդունելու բարենպաստ վարչական ակտ, որով կհաստատվի ընկերության՝ որպես հարկային գործակալի, պետական բյուջե վճարած 23.234.500 ՀՀ դրամ շահութահարկը վճարման ենթակա չլինելու հանգամանքը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.12.2008 թվականի վճռով Ընկերության հայցը բավարարվել է: Վճռվել է վերացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ 25.01.2008 թվականի թիվ 1033821 ակտը և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովի 29.02.2008 թվականի թիվ 5/2 որոշումը, պարտավորեցվել է պատասխանողին ընդունելու բարենպաստ վարչական ակտ՝ հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի իրավական դիրքորոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Դատարանը չի կիրառել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 28.12.1996 թվականի «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետը, 10-րդ հոդվածի 2-րդ կետը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 07.01.2004 թվականի թիվ 1398-Ն որոշմամբ սահմանված կարգի 2-րդ և 5-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ակտի 1-ին կետի վերաբերյալ Դատարանը հանգել է սխալ հետևության, որ Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) գույքի կառավարման դեպարտամենտը հանդիսացել է ներկայացուցիչ, իսկ վճարված շահաբաժնի տնօրինման իրավունքը պատկանում է Ռուսաստանի Դաշնությանը:

Դատարանը հաշվի չի առել, որ պետությունը՝ ՌԴ-ն, գործում է ի դեմս իր պետական մարմինների, հետևաբար՝ վճարված շահաբաժնի տնօրինման իրավունքը պատկանում է ոչ թե ՌԴ-ին ընդհանրապես, այլ նրա լիազորված մարմիններից մե-

կին, տվյալ դեպքում՝ պետական գույքի կառավարման դեպարտամենտին:

Դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը, հիմք ընդունելով ՀՀ-ի և ՌԴ-ի կառավարությունների միջև 28.12.1996 թվականին կնքված «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ՌԴ-ի գույքի կառավարման դեպարտամենտին վճարված շահաբաժնից, որպես հարկային գործակալ, հաշվարկել, պահել և բյուջե է վճարել ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ 5 տոկոս դրույքաչափով, դրանով իսկ ՌԴ-ի գույքի կառավարման դեպարտամենտին արդեն իսկ ճանաչել է որպես ոչ ռեզիդենտ կազմակերպություն:

Բացի այդ, Դատարանն անտեսել է, որ Ընկերությունը չի պահպանել «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին ՀՀ գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին» ՀՀ կառավարության 07.10.2004 թվականի թիվ 1398-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և 2006 թվականին չի դիմել ու չի ստացել ծառայության պետի կողմից վավերացված սերտիֆիկատ-դիմումը, ուստի պարտավոր էր հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտին (օտար անձին) վճարված եկամուտներից (շահութաբաժնից) հարկի պահումը կատարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված 10 տոկոս դրույքաչափով, և ոչ թե 5 տոկոս դրույքաչափով:

3. Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, չի կիրառել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 23-րդ, 43-րդ և 43'-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 55-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ակտի 4-րդ կետն անվավեր ճանաչելով՝ Դատարանը պատճառաբանել է, որ վարչական մարմինը չի պարզել «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված 05.10.2005 թվականի թիվ 803 հաշիվ-ապրանքագրի վերաբերյալ տեղեկության արժանահավատությունը, ինչպես նաև չի ապահովել վարչական վարույթով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Տվյալ դեպքում Դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց չի ներկայացրել «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 05.10.2005 թվականին դուրս գրված թիվ 803 հաշիվ-ապրանքագիրը, որը պետք է ներառվեր հարկային մարմին ներկայացվող տեղեկություններում:

Դրա փոխարեն ներկայացրել է 30.09.2005 թվականի թիվ 803 հաշիվ-ապրանքագիրը, որը վերաբերում է արդեն իսկ ստուգված ժամանակաշրջանին:

Հետևաբար, Ընկերությունը չէր կարող 2005 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր

ամիսներին հաշվանցել 05.10.2005 թվականի հաշիվ-ապրանքագրում արտացոլված ԱԱՀ-ի գումարը: Արդյունքում՝ Ընկերությունը խախտել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 23-րդ և 43.1-րդ հոդվածների պահանջները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 11.12.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայրը մերժել:

2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները.

Բողոք բերած անձը չի հիմնավորել այն հանազամանքը, որ Ընկերության գրանցված սեփականատեր հիմնադիրը Ռուսաստանի Դաշնությունը չէ, կամ, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում է ոչ ռեզիդենտ, հետևաբար՝ նաև շահութահարկ վճարող:

Գործում առկա, Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված փաստաթղթի համաձայն՝ Ընկերության գրանցված սեփականատերը Ռուսաստանի Դաշնությունն է:

Իսկ վճարված շահաբաժնի տնօրինման իրավունքը պատկանում է Ընկերության սեփականատեր Ռուսաստանի Դաշնությանը:

Ինչ վերաբերում է բողոքում վկայակոչված ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 28.12.1996 թվականի կնքված «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 4-րդ հոդվածի 1-ին կետով տրվող «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» հասկացությանը, ապա Համաձայնագրի իմաստով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» է համարվում պետական իշխանության մարմինը, որը այդ պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման՝ բնակության վայրի, գրանցման վայրի կամ այլ համանման չափանիշի հիման վրա: Բողոք բերած անձը որևէ հիմնավորում չի ներկայացրել, որ Ռուսաստանի Դաշնությունը Ռուսաստանի Դաշնությունում ենթակա է հարկման, հետևաբար՝ անհիմն է:

Բացի այդ, անհիմն է նաև բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ Ընկերությունը ՌԴ-ի գույքի կառավարման դեպարտամենտին վճարված շահաբաժնից, որպես հարկային գործակալ, հաշվարկել, պահել և բյուջե է վճարել ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ 5 տոկոս դրույքաչափով, որով ՌԴ-ի գույքի կառավարման դեպարտամենտին արդեն իսկ ճանաչել է որպես ոչ ռեզիդենտ կազմակերպություն, քանի որ ՀՀ-ում ֆիզիկական և իրավաբանական անձինք հարկ վճարում են ոչ թե այն պատճառով, որ իրենք իրենց կամ իրենց հիմնադիրներին ճանաչում են որպես հարկ վճարող, այլ՝ օրենքով որպես հարկ վճարող ճանաչված լինելու հիմքով:

Բողոք բերած անձը հաշվի չի առել, որ Ընկերության կողմից ներկայացված 30.09.2005 թվականի թիվ 803 հաշիվ-ապրանքագիրը իր վավերապայմաններով, բացառությամբ ամսաթվի՝ համապատասխանում է հարկային հաշիվների վերաբերյալ 37-րդ տողում ներկայացրված տեղեկությանը:

Հիշատակված հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվել 30.09.2005 թվականին: Սակայն Ընկերությունն այն, օրերի տարբերությամբ, ուշ է ստացել, որի համար էլ ներառել է 2005 թվականի հոկտեմբեր ամսվա համար ներկայացվող տեղեկություններում:

Տվյալ դեպքում հարկային մարմիններին ներկայացվող տեղեկությունների 37-րդ տողում նշված հարկային հաշվի գոյություն չունենալու փաստը միայն ամիսամասքվի միջոցով հաստատված համարելով՝ ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք հաշվի չեն առել, որ առկա են բավարար տվյալներ 8.273.000 ՀՀ դրամ գումարի չափով թիվ 803 հաշիվ-ապրանքագրի գոյություն ունենալու փաստը հաստատելու համար:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 19.10.2007 թվականի թիվ 1033821 հանձնարարագրով հանձնարարվել է Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Նշված հանձնարարագիրը 23.10.2007 թվականին հանձնվել է Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Ալավերդյանին, իսկ ստուգումը փաստացի սկսվել է 09.11.2007 թվականին (գ.թ. 106):

2. Ստուգման արդյունքներով 25.01.2008 թվականին կազմված թիվ 1033821 ստուգման ակտի 1-ին կետում արձանագրվել է. «Ընկերությունը 2006թ. օգոստոս ամսին ընկերության միակ հիմնադրին, ի դեմս Ռ-Դ գույքի կառավարման դեպարտամենտի, վճարել է շահաբաժին 464.689.000 դրամ, որից որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ է հաշվարկել, պահել, վճարել 5 տոկոս դրույքաչափով պետբյուջե» 23.234.500 դրամ: Որպեսզի ընկերությունը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով նախատեսված ոչ ռեզիդենտին վճարված շահաբաժնից 10 տոկոս դրույքաչափից տարբերվող դրույքաչափով հարկում իրականացներ, պետք է կիրառեր ՀՀ կառավարության 07.10.2004թ. թիվ 1398-Ն որոշմամբ ընդունված՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսաձեղը կանխելու մասին ՀՀ գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթների մասին կարգը, համաձայն որի /5-րդ կետ/ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձվող հարկի դրույքաչափի նվազեցման կամ հարկումից ազատման մասին սերտիֆիկատ-դիմումի առկայության դեպքում միայն հարկային գործակալը ոչ ռեզիդենտին /օտարերկրյա անձին/ եկամուտներ վճարելիս հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներից գանձվող /պահվող/ հարկը պահում /գանձում/ է օրենքով սահմանված հարկի դրույքաչափից տարբերվող /նվազ/ դրույքաչափով կամ եկամուտները վճարում է առանց

հարկի պահման /գանձման/: Քանի որ ընկերությունը 2006թ. չի դիմել և չի ստացել ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի կողմից հաստատված սերտիֆիկատ-դիմում, ուստի պետք է կիրառեն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով նախատեսված շահութահարկի վճարելիս ոչ ռեզիդենտից 10 տոկոս դրույքաչափով հարկի պահում /գանձում/, ուստի ընկերությունը պակաս շահութահարկ է պահել /գանձել/ 23.234.500 դրամի չափով»: Նույն կետով, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածները, շահութահարկի գծով վճարման է առաջադրվել 49.896.200 ՀՀ դրամ:

Ակտի 4-րդ կետում արձանագրվել է. «Ստուգմամբ պարզվեց, որ Ընկերությունը «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 05.10.2005թ. թիվ 803 հաշիվ-ապրանքագրով գումարով 8.273.000 դրամ, քիմիկատների համար 2005թ. նոյեմբերին վճարել է բանկային փոխանցմամբ 4.000.000 դրամ, որից ԱԱՀ-ն՝ 666.800 դրամ և դեկտեմբերին՝ 4.273.000 դրամ, որից ԱԱՀ-ն՝ 712.000 դրամ, ԱԱՀ է հաշվանցել նշված ամիսներին, սակայն վերը նշված համարով և ամիս ամսաթվով հաշիվ-ապրանքագիր դուրս չի գրվել «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից, ուստի ընկերությունը 2005թ., նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ավել ԱԱՀ հաշվանցելու հետևանքով հարկը պակաս է հաշվարկել 1.378.800 դրամ»: Նույն կետով, հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածները, ԱԱՀ-ի գծով լրացուցիչ վճարման է առաջադրվել 2.188.600 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Ընկերության ունեցած գերավճարները (գ.թ. 31-36):

4. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովի 29.02.2008 թվականի թիվ 5/2 որոշմամբ 25.01.2008 թվականի թիվ 1033821 ստուգման ակտը թողնվել է անփոփոխ (գ.թ. 24-26):

5. Ընկերության բաժնետոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի համաձայն՝ Ընկերության բաժնետոմսերի միակ սեփականատերն է Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս Ռուսաստանի Դաշնության դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության (գ.թ. 22):

6. «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 30.09.2005 թվականին դուրս գրած թիվ 803 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Ընկերությունը վճարել է 8.273.000 ՀՀ դրամ, որից՝ հաշվարկվել է՝ 6.894.166,67 ՀՀ դրամ, այդ թվում՝ 1.378.833,33 ՀՀ դրամ որպես ավելացված արժեքի հարկի 20 %-ի գումար: Տվյալ հաշիվ-ապրանքագրով ՀՎՀՀ-ն է 02555635(գ.թ. 28):

7. Հարկ վճարող անձի կողմից հաշվետու ժամանակաշրջանում՝ 2005 թվականի հոկտեմբեր ամսում, դուրս գրված (գնորդին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հաշիվների վերաբերյալ տեղեկությունների 37-րդ տողի 5-րդ սյունակում լրացվել է. *Գործարքի մասնակից տնտեսվարող սուբյեկտի անվանումը՝ «Մեդիսար ՍՊԸ», ՀՎՀՀ-ն՝ 02555635, Համարը՝ 803, Ամսաթիվ՝ 05.10.2005 թվական, Ընդհանուր արժեքը՝ առանց ԱԱՀ-ի (հազ. դրամ)՝ 6.895, Հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (հազ. դրամ)՝ 1.379, (գ.թ. 29-30):*

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1. Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վարչական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ և սույն բողոքի հիմքում բարձրացված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով էական նշանակություն ունի հետևյալ իրավական հարցը՝ արդյո՞ք Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս Ռուսաստանի Դաշնության դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության, որպես շահաբաժին ստացող անձ ենթակա է հարկման, թե՛ ոչ:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: **Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:**

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու» համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն Համաձայնագիրը կիրառվում է **Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:**

Նույն համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն Համաձայնագիրը տարածվում է Պայմանավորվող Պետությունում եկամուտներից և գույքից գանձվող հարկերի վրա, անկախ դրանց գանձման եղանակից:

Նույն համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սույն համաձայնագիրը կիրառելիս «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» արտահայտությունը նշանակում է **այդ Պետության իշխանության մարմին, ինչպես նաև ցանկացած անձ, որն այդ Պետության օրենսդրությամբ այդտեղ ենթակա է հարկման քննության վայրի, գրանցման վայրի կամ այլ համանման չափանիշի հիման վրա:**

Նույն համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ սակայն նման շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժինները վճարող ձեռնարկությունը, և այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. **քայց եթե ստացողը ունի շահաբաժինների սեփականության իրավունք, ապա այդ ձևով վճարվող հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 5 %-ը, եթե մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ձեռնարկության հիմնադիր կա-**

սյխտալի մեջ ներդրել է առնվազն 40.000 ամերիկյան դոլար (կամ Պայմանավորվող Պետություններից որևէ մեկի ազգային արժույթով համարժեք գումար):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության բաժնետոմսերի միակ սեփականատերը **Ռուսաստանի Դաշնությունն է՝** ի դեմս Ռուսաստանի Դաշնության դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության, Ընկերությունը, լինելով ռեզիդենտ իրավաբանական անձ, շահաբաժին է վճարել **Ռուսաստանի Դաշնությանը:**

Սույն վարչական գործով Դատարանը ակտի 1-ին կետի անվավեր ճանաչման հիմքում դրել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը և հանգել այն հետևության, որ Ռուսաստանի Դաշնությունը տվյալ օրենքի ուժով ոչ ռեզիդենտ չէ, հետևաբար, շահութահարկ վճարող չէ:

Սինչդեռ՝ Համաձայնագրի նշված դրույթներից հետևում է, որ համաձայնագրի կիրառելիությունը **առաջին հերթին** պայմանավորված է այն վավերացված Պետություններից մեկի կամ երկուսի **ռեզիդենտ լինելու հանգամանքով:** Ընդ որում՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է այդ **պետության իշխանության մարմինը:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե („ex officio,“):

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով վարչական դատարանի կողմից գործի փաստերի ի պաշտոնե պարզման դատավարական իրավունքին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սիաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Դատարանի իրավունք է, սակայն Դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին

համոզման հանգելու Գատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (տես՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Աշտարակի տարածքային հարկային տեսչության հայցի ընդդեմ Ժորա Դանիելովի՝ 5.670.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին և Ժորա Դանիելովի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ 08.05.2008 թվականի թիվ 2326225 ակտը վերացնելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի թիվ ՎԳ-3/0207/05/08 (2008թ.) որոշումը):

Մինչդեռ, սույն վարչական գործով Գատարանը, չկիրառելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու» համաձայնագիրը, արդյունքում չի պարզել **սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, այն է՝** Ռուսաստանի Դաշնության դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում տեղ գտած «որն այդ Պետության օրենսդրությամբ այդտեղ ենթակա է հարկման» եզրույթին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այն վերաբերում է «այլ անձանց» և չի կարող վերաբերել պետական իշխանության մարմնին, քանի որ վերջինս նույն համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հարկեր վճարող չէ:

2. Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառարանությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալված փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման նպատակը տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսվարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական մարմինը վարչարարություն իրականացնելիս պարտավոր է օրենսդրության պահանջների պահպանմամբ իրականացնել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, բացահայտել գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Մույն գործում առկա 25.01.2008 թվականի ստուգման ակտի 4-րդ կետում նշվել է. «Ստուգմամբ պարզվեց, որ Ընկերությունը «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 05.10.2005 թվականի թիվ 803 հաշիվ-ապրանքագրով, գումարով՝ 8.273.000 ՀՀ դրամ, 2005 թվականի նոյեմբեր ամսին բանկային փոխանցմամբ վճարել է 4.000.000 ՀՀ դրամ, որից ԱԱՀ-ն՝ 666.800 ՀՀ դրամ և դեկտեմբեր ամսին՝ 4.273.000 ՀՀ դրամ, որից ԱԱՀ-ն՝ 712.000 ՀՀ դրամ, ԱԱՀ է հաշվանցել նշված ամիսներին, սակայն վերը նշված համարով և ամիս ամսաթվով հաշիվ-ապրանքագիր դուրս չի գրվել «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից»:

Մույն գործի փաստերի համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 30.09.2005 թվականին դուրս է գրվել թիվ 803 հաշիվ-ապրանքագիրը, համաձայն որի՝ Ընկերությունը վճարել է **8.273.000** ՀՀ դրամ, որից՝ հաշվարկվել է՝ **6.894.166,67** ՀՀ դրամ, այդ թվում՝ **1.378.833,33** ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի 20%-ի գումար: Տվյալ հաշիվ-ապրանքագրով ՀՎՀՀ-ն է **02555635**, հարկ վճարող անձի կողմից հաշվետու ժամանակաշրջանում՝ 2005 թվականի հոկտեմբեր ամսում, դուրս գրված (գնորդին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հաշիվների վերաբերյալ տեղեկությունների 37-րդ տողը լրացվել է. «Գործարքի մասնակից տնտեսվարող սուբյեկտի անվանումը՝ **«Մեդիսար ՍՊԸ»**, ՀՎՀՀ-ն՝ **02555635**, Համարը՝ **803**, Ամսաթիվ՝ **05.10.2005 թվական**, Ընդհանուր արժեքը՝ առանց ԱԱՀ-ի (հազ. դրամ)՝ **6.895**, Հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (հազ. դրամ)՝ **1.379**»:

Մույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից հաշվետու ժամանակաշրջանում՝ 2005 թվականի հոկտեմբեր ամսում, դուրս գրված (գնորդին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հաշիվների վերաբերյալ տեղեկությունների 37-րդ տողում լրացված 05.10.2005 թվականի թիվ 803 հարկային հաշիվը պարունակում է նույն վավերապայմանները, ինչը առկա է «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 30.09.2005 թվականին դուրս գրված թիվ 803 հաշիվ-ապրանքագրում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի խախտման փաստի բացակայության վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է:

Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկին, որ 2005 թվականի սեպտեմբերի

30-ի թիվ 803 հաշիվ-ապրանքագիրը վերաբերում է արդեն իսկ ստուգված ժամանակաշրջանին, հետևաբար, Ընկերությունը չէր կարող 2005 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին հաշվանցել 05.10.2005 թվականի հաշիվ-ապրանքագրում արտացոլված ԱԱՀ-ի գումարը, սպա Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում, քանի որ այն վերաբերում է հարկային մարմնին սխալ տեղեկությունների ներկայացմանը, մինչդեռ սույն գործով ակտի 4-րդ կետով Ընկերությանը հարկային պարտավորությունն առաջադրվել է հարկը պակաս հաշվարկելու համար, որով արձանագրվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 11.12.2008 թվականի վճռի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 25.01.2008 թվականի թիվ 1033821 ակտի 1-ին մասը, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովի 29.02.2008 թվականի թիվ 5/2 որոշման՝ շահութահարկին վերաբերող, ինչպես նաև բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու մասերը և այդ մասերով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/7505/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ ՎԳ/7505/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հայաստանի Հանրապետության կա-
ռավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 07.09.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Արմեն Բաղդասարյանի հայցի ընդդեմ Կոմիտեի՝ մաքսային ծառայության հետա-
քննության և իրավաբանական վարչության պետի 30.10.2008 թվականի «Քրեական
գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշման՝ 100
հատ «19” LG L1954SM LCD» տեսակի մոնիտորների մաքսային արժեքի՝ 8.269.530
ՀՀ դրամի չափով տուգանք նշանակելու մասն անվավեր ճանաչելու պահանջի
մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արմեն Բաղդասարյանը պահանջել է անվավեր ճանաչել մաքսային ծառայության հետաքննության և իրավաբանական վարչության պետի 30.10.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշման՝ 100 հատ «19՝ LG L1954SM LCD» տեսակի մոնիտորների մաքսային արժեքի՝ 8.269.530 ՀՀ դրամի չափով տուգանք նշանակելու մասը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 07.09.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Բաղդասարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 4-րդ, 9-րդ, 128-րդ, 131-րդ, 132-րդ, 164-րդ և 189-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը վճռում թեև նշել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունն օրենսդիրը չի պայմանավորում վրա հասած հետևանքներով, այնուհանդերձ՝ հոդվածի պահանջը մեկնաբանել է ոչ տառացի նշանակությամբ՝ գալով անհիմն եզրահանգման: ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ վերջինիս կիրառումն ինքնանպատակ չէ և այն կիրառելու համար պարտադիր չէ հոդվածում նշված՝ ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով հայտարարագրում կատարելուց հետո վրա հասած հետևանքների առաջացման կամ չառաջացման փաստը: Այսինքն՝ հետևանքը, օրինակ՝ խախտման հետևանքով ֆինանսական պարտավորություն չառաջացնելը, հսկողությունից խուսափելը, մաքսային վճարներ չվճարելը տվյալ պարագայում պարտադիր չէ, որպեսզի զանցանքն ավարտված համարվի:

Դատարանը գտել է, որ Կոմիտեի կողմից կիրառման ենթակա էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը, մինչդեռ նման եզրահանգումն անհիմն է, և Դատարանը պետք է հաշվի առներ ՀՀ մաքսային

օրենսգրքի 4-րդ և 9-րդ հոդվածների դրույթները, մասնավորապես, որ ապրանքի ծագման երկրի ճշգրիտ նշման անհրաժեշտությունն ունի կարևոր նշանակություն, և կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն չունի, քանի որ ապրանքի ծագման երկրի անվանումը սխալ նշելու կապակցությամբ իրականացված վարչարարությունն ուղղված է ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված որոշակի նպատակների իրագործմանը: Ծագման երկրի ճշգրիտ տվյալները թույլ են տալիս գնահատել մաքսային հսկողության առումով շինկայնության աստիճանը և կիրառել մաքսային հսկողության համապատասխան ընթացակարգ (կանաչ, դեղին, կարմիր): Վերոգրյալ պահանջը կարևոր նշանակություն ունի նաև այն առումով, որ ՀՀ մաքսային օրենսգրքի մի ողջ գլուխ է հատկացված ծագման երկրի որոշման կանոններին: Միաժամանակ, որևէ իրավանորմ իրավունք չի վերապահում կողմին ձևական համարելու օրենսդրի կողմից հստակ սահմանված պարտավորության կատարման պահանջը: Տվյալ պարագայում, անկախ զանցանքի կատարումից հետո վրա հասած հետևանքների առաջացումից, անձը ենթակա է պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված մաքսային կանոնների խախտման համար, եթե նույնիսկ ապրանքի ծագման երկրի նշման հետ կապված՝ կարող է չառաջանալ մաքսային վճարների պակաս կամ ավել վճարում:

Եթե նույնիսկ Արմեն Բաղդասարյանը չի կանխատեսել իր գործողության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով, մինչև նույն է, ենթակա է վարչական պատասխանատվության, որպես զանցանքն անգոյությունամբ կատարած անձ, իսկ ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածը, կանոնակարգելով հայտարարագրման փուլում հայտարարատուի իրավունքները և պարտականությունները, սահմանում է, որ մինչև հայտարարագրումը հայտարարատուն իրավունք ունի մաքսային հսկողության ներքո գննել և չափել ապրանքները և տրանսպորտային միջոցները: Տվյալ դեպքում հայցվորը զրկված չի եղել վերը նշված իրավունքից օգտվելու հնարավորությունից, որի արդյունքում կարող էր պարզել ապրանքի ծագման երկիրը և հայտարարագրում նշել ճշգրիտ տեղեկություններ դրա վերաբերյալ:

Դատարանը չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 164-րդ հոդվածը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով հայտարարագրման ենթակա ապրանքների տեղափոխման ժամանակ հայտարարատուն, այլ տեղեկությունների հետ մեկտեղ, հայտարարագրում է տեղափոխվող ապրանքների ծագման երկիրը, իսկ 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անգոյություն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Դատարանը գործում առկա ապացույցները չի գնահատել լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի, վճռի պատճառաբանական մասում չի նշել պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են Դատարանի հետևու-

թյունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչի հետևանքով հանգել է սխալ եզրահանգման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 07.09.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

Արմեն Բաղդասարյանը ծագման երկրի ոչ ճիշտ հայտարարագրմամբ արտոնություն ստանալու, որևէ պարտականության կամ որևէ պարտավորության կատարումից խուսափելու նպատակ չի հետապնդել: Մասնավորապես, եթե Կոմիտեն համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն քննել գործի հանգամանքները, ապա վերջինս անպայմանորեն կպարզեր, որ Արմեն Բաղդասարյանը բովանդակային առումով կատարել է իր վրա դրված հայտարարագրման պարտականությունը, ուստի Գատարանն էլ արդարացիորեն եզրահանգել է, որ Կոմիտեի իրականացրած վարչարարությունը և դրա արդյունքում ընդունված որոշումը չեն բխում համաչափության սկզբունքի պահանջներից:

Բացի այդ, հարկ է նշել, որ 100 հատ 19 դոլմանոց մոնիտորներն ի սկզբանե հայտարարագրվել են 8.269.530 ՀՀ դրամ մաքսային արժեքով: Վարչական վարույթի ընթացքում մաքսային մարմնի կողմից որոշված մաքսային արժեքը նույնն է եղել, և դրանք վերահայտարարագրվել ու մաքսային ձևակերպում են ստացել այդ նույն մաքսային արժեքով: Նշված մոնիտորները պետական հատվածի արդիականացման համար են ներմուծվել, ինչի հետևանքով ապրանքների 90 տոկոսն ԱԱՀ-ից ազատված են եղել: Ավելին, Արմեն Բաղդասարյանի կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ մաքսային վճարումները պետական բյուջե, և մաքսային բոլոր վճարումները որևէ փոփոխություն չեն կրում՝ կապված կոնկրետ ապրանքի արտադրության երկիրը նշելու հետ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Կոմպաս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 12.09.2008 թվականի թիվ 523298 փոխադրման ամփոփագրով Սիսացյալ Արաբական Էմիրություններից Հաստատանի Հանրապետություն է ներմուծել համակարգչային տեխնիկա:

2) Ընկերության լիազոր ներկայացուցիչ Արմեն Բաղդասարյանն Արարատյան տարածաշրջանային մաքսատանը 17.09.2008 թվականի թիվ C 27414 բեռնամաքսային հայտարարագրով հայտարարագրել է նշված համակարգչային տեխնիկան, մասնավորապես՝ հայտարարագրվել է 84 հատ «E-TECH ePRO UPS 1200 VA» տեսակի անխափան սնուցման սարք (այսուհետ՝ Սնուցման սարք), 420 հատ «17” BENQ G700A LCD» տեսակի մոնիտոր (այսուհետ՝ 17 դոլմանոց մոնիտոր), 100 հատ «19” LG L1954SM LCD» տեսակի մոնիտոր (այսուհետ՝ 19 դոլմանոց մոնիտոր):

3) Հայտարարագիրը կազմելուց հետո Արմեն Բաղդասարյանի կողմից կատարվել են մաքսային վճարումները:

4) 16.10.2008 թվականին Կոմիտեի նախարացթողումային հսկողության վարչության աշխատակից Կարեն Պետրոսյանի կողմից կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, որի համաձայն՝ պարզվել է, որ Արմեն Բաղդասարյանի կողմից հայտարարագրված 84 հատ Սնուցման սարքի փոխարեն առկա է 94 հատ, 420 հատ 17 դոյմանոց մոնիտորի փոխարեն՝ 421 հատ, իսկ 100 հատ 19 դոյմանոց մոնիտորը հայտարարագրված է որպես չինական արտադրանք, այնինչ՝ դրանք իրականում ինդոնեզիական արտադրության են:

5) ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և իրավաբանական վարչության պետի կողմից 30.10.2008 թվականին կայացվել է որոշում, որով Արմեն Բաղդասարյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ «ոչ ճշգրիտ տեղեկություններով՝ որպես չինական արտադրության հայտարարագրված, Ինդոնեզիայի արտադրության 100 հատ «19” LG L1954SM LCD» տեսակի մոնիտորի, չհայտարարագրված 10 հատ «E-TECH ePRO UPS 1200 VA» տեսակի անխափան սնուցման սարքի և 1 հատ «17” BENQ G700A LCD» տեսակի մոնիտորի մաքսային արժեքի չափով՝ 8.637.031 դրամ»:

Նշված տուգանքի գումարից 8.269.530 ՀՀ դրամն ապրանքի ծագման երկրի մասին ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված 100 հատ 19 դոյմանոց մոնիտորների մաքսային արժեքն է:

18.11.2008 թվականին մոնիտորները վերահայտարարագրվել են և մաքսային ձևակերպում են ստացել C 35641 բեռնամաքսային հայտարարագրով:

6) Սույն գործով վիճարկվում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և իրավաբանական վարչության պետի 30.10.2008 թվականի որոշման իրավաչափությունը ապրանքի ծագման երկրի մասին ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված 100 հատ 19 դոյմանոց մոնիտորների մաքսային արժեքի՝ 8.269.530 ՀՀ դրամ տուգանքի մասով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «Ժե» կետի համաձայն՝ մաքսային ձևակերպում է համարվում նույն օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողման համար սահմանված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝ մինչև որոշակի մաքսային ռեժիմով դրանց բացթողումը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքների և

տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումն իրականացվում է նույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Նույն օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով: Հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ գրավոր կամ բանավոր՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը, ընդ որում, հայտարարատուն նույն օրենսգրքի համաձայն կրում է պատասխանատվություն՝ հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում՝ նույն օրենսգրքով նախատեսված կարգով: Ընդ որում, հայտարարագրման ժամանակ մաքսային մարմիններ ներկայացվում են մաքսային նպատակների համար պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ՝ համաձայն նույն օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին կետի:

ՀՀ մաքսային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքի ծագման երկիր է համարվում այն երկիրը, որտեղ դա ամբողջությամբ արտադրվել է կամ վերջին անգամ ենթարկվել է բավարար վերամշակման՝ համաձայն նույն բաժնով սահմանված չափանիշների:

ՀՀ մաքսային օրենսգրքի 159-րդ հոդվածը սահմանում է ապրանքի ծագման երկրի որոշման նպատակները, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ծագման երկիրը որոշվում է դրանց նկատմամբ սակագնային և ոչ սակագնային կարգավորման, մաքսային վիճակագրության վարման և ծագման երկրի վկայականների և (կամ) հավաստագրերի տրամադրման նպատակով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 164-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով հայտարարագրման ենթակա ապրանքների տեղափոխման ժամանակ հայտարարատուն, այլ տեղեկությունների հետ մեկտեղ, հայտարարագրում է տեղափոխվող ապրանքների ծագման երկիրը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների և տրանսպորտային միջոցների **հայտարարագրումը հայտարարատուի պարտականությունն է**, և այդ հայտարարագրման

ընթացքում հայտարարատուն պարտավոր է ճշգրիտ տեղեկություններ նշել ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև ներկայացնել մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Ընդ որում, նշված տեղեկությունների շարքում, ՀՀ մաքսային օրենսգրքի ուժով, հայտարարատուն պարտավոր է հայտարարագրել նաև **տեղափոխվող ապրանքների ծագման երկրի մասին ճշգրիտ տեղեկությունը:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն: Ընդ որում, ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Նույն օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը, ինչպես նաև հայտարարագրումը ոչ իրենց անվանմամբ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

Վերը նշված նորմերից հետևում է, որ այն ֆիզիկական և պաշտոնատար անձինք, որոնք դիտավորյալ կամ անգուշորեն խախտել են մաքսային կանոնները, ենթակա են պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ՀՀ մաքսային օրենսգրքով նման արարքի համար նախատեսված է պատասխանատվություն: Ընդ որում, ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսային կանոնների խախտում է համարվում նաև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, որը կարող է դրսևորվել նաև դրանց մասին ճշգրիտ տեղեկություններ սահմանված ձևով չհայտարարագրելով, որի համար էլ նախատեսված է պատասխանատվություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և

օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է** ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությունը 12.09.2008 թվականի թիվ 523298 փոխադրման ամփոփագրով Միացյալ Արաբական Էմիրություններից Հայաստանի Հանրապետություն է ներմուծել համակարգչային տեխնիկա, և Ընկերության լիազոր ներկայացուցիչ Արմեն Բաղդասարյանն Արարատյան տարածաշրջանային մաքսատանը 17.09.2008 թվականի թիվ C 27414 բեռնամաքսային հայտարարագրով հայտարարագրել է նշված համակարգչային տեխնիկան, որպիսի տեխնիկայի մեջ եղել է նաև 100 հատ «19” LG L1954SM LCD» տեսակի ինդուստրիական արտադրության մոնիտոր, որը, սակայն, հայտարարատու Արմեն Բաղդասարյանի կողմից հայտարարագրվել է որպես չինական արտադրության ապրանք: Նշված ապրանքի մասով ծագման երկրի մասին ոչ ճշգրիտ տեղեկություն հայտարարագրելու կապակցությամբ Արմեն Բաղդասարյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով, և նրա նկատմամբ նշանակվել է 8.269.530 ՀՀ դրամ տուգանք՝ 100 հատ 19 դյույմանոց մոնիտորների մաքսային արժեքի չափով:

Սույն գործով հայցը բավարարելով՝ Դատարանը պատճառաբանել է, որ «Արմեն Բաղդասարյանը, ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պատասխանատու լինելով հայտարարագրով իր ներկայացրած տեղեկությունների հավաստիության համար, Ինդուստրիայի արտադրության 100 հատ 19 դյույմանոց մոնիտորները հայտարարագրել է որպես չինական արտադրության: Այսինքն՝ նրա գործողությունները հակասել են ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին», «100 հատ 19 դյույմանոց մոնիտորներն ի սկզբանե հայտարարագրվել են 8.269.530 ՀՀ դրամ մաքսային արժեքով: Վարչական վարույթի ընթացքում մաքսային մարմնի կողմից որոշված դրանց մաքսային արժեքը նույնն է եղել: Ի վերջո, դրանք վերահայտարարագրվել և մաքսային ձևակերպում են ստացել այդ նույն մաքսային արժեքով: Դրանից հետևում է, որ Արմեն Բաղդասարյանը ծագման երկրի ոչ ճիշտ հայտարարագրմամբ չի հետապնդել արտոնություն ստանալու, որևէ պարտականության կամ որևէ պարտավորության կատարումից խուսափելու նպատակ», և եկել է եզրահանգման, որ Արմեն Բաղդասարյանի նկատմամբ տուգանքի նշանակումը խախտում է «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված վարչարարության համաչափության սկզբունքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գատարանի՝ վերը նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ ապրանքի ծագման երկրի մասին տեղեկության ճշգրիտ նշումը ձևական պահանջ չէ, այլ այն որոշվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ սակագնային և ոչ սակագնային կարգավորման, մաքսային վիճակագրության վարման և ծագման երկրի վկայականների և (կամ) հավաստագրերի տրամադրման նպատակով: Հետևաբար՝ Արմեն Բաղդասարյանը, ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով պատասխանատու լինելով հայտարարագրով ներկայացված տեղեկությունների հավաստիության համար, ինդոնեզիական արտադրության 100 հատ 19 դյույմանոց մոնիտորները հայտարարագրել է որպես չինական արտադրության ապրանք, որը ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն՝ համարվում է մաքսային կանոնների խախտում և դրա համար ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված է պատասխանատվություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում ապրանքի ծագման երկիրը ոչ ճիշտ հայտարարագրելու համար ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հիմքով պատասխանատվության կիրառման իրավաչափության մասին (տե՛ս՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և որոշումը վերացնելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի թիվ 3-1702 (ՏԳ) որոշումը):

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ-228-րդ հոդվածների ուժով Գատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է,

որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 07.09.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Արմեն Բաղդասարյանի հայցը մերժել:

2. Արմեն Բաղդասարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ
թիվ ԵԿԴ/0710/02/10
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ **ԵԿԴ/0710/02/10**
2010թ.
Ա. Սկրտչյան
Ն. Բարսեղյան
Ն. Հովսեփյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 27-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Վահրամ Մարգարյանի վճռաբեկ
բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.09.2010 թվականի որոշման
դեմ՝ ըստ Վահրամ Մարգարյանի հայցի ընդդեմ ՀՀ ոստիկանության կազմա-
կերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության՝ որպես բարե-
խիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վահրամ Մարգարյանը պահանջել է ճանաչել

«SSANG-YONG MUSSO» մակնիշի KPTEOB19STP085492 նույնացման համարով ավտոմեքենայի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.09.2010 թվականի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 01.07.2010 թվականի վճիռը, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վահրամ Մարգարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոմիտեն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածը և 207-րդ հոդվածի 5-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի մեջբերմամբ փաստել է, որ բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը ճանաչելու մասին դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, նշված դատական ակտը Կոմիտե ներկայացնելու դեպքում Կոմիտեի համար ծագում է պարտականություն: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ավտոմեքենայի նկատմամբ բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը ճանաչելու մասին դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պայմաններում Կոմիտեի որևէ իրավունք չի խախտվել, և որևէ պարտավորություն չի կարող ծագել:

Դատարանի վճիռը կայացվել է օրենքների պահանջների պահպանմամբ, իսկ պատշաճ պատասխանողը մասնակցել է գործի քննությանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.09.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.07.2010 թվականի վճիռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գործել է ՀՀ քաղաքացիական դա-

տավարության օրենսգրքի 205-րդ և 207-րդ հոդվածների հիման վրա: Վերաքննիչ դատարանի որոշմամբ հստակորեն հիմնավորված է վճռի՝ Կոմիտեի իրավունքներին և պարտականություններին վերաբերելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանի 03.09.2010 թվականի որոշումը կայացվել է գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննության հիման վրա, և կայացված որոշման բեկանման կամ գործը նոր քննության ուղարկելու որևէ հիմք առկա չէ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 05.11.2007 թվականի ավտոմեքենայի վաճառքի վկայականի համաձայն՝ Ջիաննետոտ Ջիուզեպպե Եգորը վաճառել է Վահրամ Մարգարյանին «SSANG-YONG MUSSO» մակնիշի KPTEOB19STP085492 նույնացման համարով ավտոմեքենան (գ.թ.37):

2. 21.12.2007 թվականի թիվ 463704 փոխադրման ամփոփագրով Վահրամ Մարգարյանը «SSANG-YONG MUSSO» մակնիշի KPTEOB19STP085492 նույնացման համարով ավտոմեքենան տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն (գ.թ.7):

3. ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 15.01.2008 թվականի որոշմամբ Վահրամ Մարգարյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված «SSANG-YONG MUSSO» մակնիշի KPTEOB19STP085492 նույնացման համարով ամտոմեքենայի վրա դրվել է կալանք (գ.թ.9):

4. ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 23.02.2010 թվականի թիվ 29/3-4-Մ-10 գրությամբ հայտնվել է, որ Վահրամ Մարգարյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված «SSANG-YONG MUSSO» մակնիշի KPTEOB19STP085492 նույնացման համարով ավտոմեքենան 30.07.2007 թվականին առևանգվել է Իտալիայում և գտնվում է միջազգային հետախուզման մեջ: Ավտոմեքենայի հայտնաբերման վերաբերյալ 24.01.2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով հայտնվել է Իտալիայի իրավապահներին, սակայն մինչ օրս սեփականատիրոջ նկատառումների մասին տեղեկություններ չեն հայտնվել (գ.թ.8):

5. ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի 08.05.2010 թվականի գրության համաձայն՝ ըստ 27.02.2008 թվականին Իտալիայում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստացված տեղեկատվության «SSANG-YONG MUSSO» մակնիշի KPTEOB19STP085492 նույնացման համարով ավտոմեքենան 04.03.1998 թվականին թիվ AZ546MC պետհամարանիշով գրանցված էր Իտալիայում: 23.05.2001 թվականից ավտոմեքենայի սեփականատերն էր «BRIAN LEASING SPA» ընկերությունը, որը 30.07.2003 թվականին Միլանի ոստի-

կանության բաժնում հայտարարություն է տվել ավտոմեքենայի առևանգման մասին: Հայտնվել է նաև, որ իրենց կողմից ներկայացված ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը համապատասխանում է իսկությանը, քանի որ առևանգման պահին այն գտնվել է ավտոմեքենայի մեջ: Հետագայում, Իտալիայում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյին բազմիցս հարցումներ են կատարվել ավտոմեքենայի վերաբերյալ՝ Իտալիայի ոստիկանական տարածքային մարմնի կողմից տրված տեղեկանքի օրինականությունը ստուգելու նպատակով, սակայն մինչև օրս որևէ պատասխան չի ստացվել (գ.թ.24-25):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 04.09.2008 թվականի թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 14-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մաքսային հսկողության ու ձևակերպումների կազմակերպում և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացում:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «Ժե» կետի համաձայն՝ մաքսային ձևակերպում է համարվում նույն օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողման համար սահմանված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝ մինչև որոշակի մաքսային ռեժիմով դրանց բացթողումը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումն իրականացվում է նույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, հայտարարատուն պարտավոր է իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում՝ նույն օրենսգրքով նախատեսված կարգով: Ընդ որում, հայտարարագրման ժամանակ մաքսային մարմիններ ներկայացվում են մաքսային նպատակների համար պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ՝ համաձայն նույն օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին կետի:

ՀՀ մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտարարատուն մաքսային հայտարարագիրը ներկայացնում է մաքսային մարմին: Ներկա-

յացված մաքսային հայտարարագիրը գրանցվում է մաքսային մարմնում, ինչի կապակցությամբ մաքսային մարմինը մաքսային հայտարարագրի վրա նշում է գրանցման հերթական համարը և գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին: Ներկայացված մաքսային հայտարարագիրն ընդունում է մաքսային մարմինը, ինչի կապակցությամբ վերջինս մաքսային հայտարարագրի վրա նշում է ընդունման հերթական համարը, ամսաթիվը, ամիսը, տարին: Մաքսային հայտարարագրի ընդունման պահից այն համարվում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ՝ համաձայն նույն հոդվածի 3-րդ կետի:

ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ հետախուզման մեջ գտնվող, ինչպես նաև շարժիչի կամ նույնացման համարի վերադառված կամ ջնջված համարներով կամ հափշտակության այլ հատկանիշների առկայությամբ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704, 8705 ապրանքային դիրքերին դասվող ապրանքներ և (կամ) տրանսպորտային միջոցներ Հայաստանի Հանրապետություն ներմուծելու դեպքում տեղափոխողը կամ նրա լիազորած անձը ներմուծմանը հաջորդող տասնօրյա ժամկետում մաքսային մարմին է ներկայացնում ժամանակավոր հայտարարագիր՝ վճարելով մաքսային վճարները, ինչը հիմք է այդ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների ժամանակին շահարարագրման համար օրենքով սահմանված տույժերից և վարչական պատասխանատվությունից ազատելու համար: Նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների համար մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում նշված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների նկատմամբ բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀՀ կառավարության 13.12.2002 թվականի թիվ 2144-Ն որոշման 3-րդ կետի «գ» ենթակետի հիման վրա ընդունված, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության՝ «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության և ձևակերպումների իրականացման կարգը հաստատելու մասին» 24.03.2003 թվականի թիվ 3-Ն համատեղ հրամանի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետավտոտեսչության վարչության համապատասխան ստորաբաժանումներում ավտոտրանսպորտային միջոցները գրանցելու և հաշվառելու համար հիմք է հանդիսանում մաքսային մարմինների կողմից վավերացված մաքսային հայտարարագիրը՝ լրացված «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցն ազատ շրջանառության մեջ դնելու համար նախ և առաջ պետք է իրականացվի ապրանքի մաքսային ձևակերպում՝ համապատասխան հայտարարագրման տեսքով, որը և հիմք է Հայաստանի Հանրա-

պետության ոստիկանության պետավտոտեսչության վարչության համապատասխան ստորաբաժանումների համար ավտոտրանսպորտային միջոցները գրանցելու և հաշվառելու համար (տե՛ս նաև՝ Այսա Հարությունյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ավտոմեքենան հաշվառման վերցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 25.12.2009 թվականի թիվ ՎԳ/1433/05/09 որոշումը):

Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ կետը, հայցը բավարարել է և որպես բարեխիղճ ձեռքբերող ճանաչել է Վահրամ Մարգարյանի սեփականության իրավունքը SSANG-YONG MUSSO մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ բարեխիղճ ձեռքբերողի սեփականությունը ճանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Կոմիտե ներկայացվելու դեպքում Կոմիտեի համար ծագում է պարտավորություն: Կոմիտեն չի մասնակցել գործի քննությանը, ուստի հնարավորություն չի ունեցել նաև ծանոթանալ հայցվորի պահանջի հիմնավորման նպատակով ներկայացված ապացույցներին և իր դիրքորոշումն արտահայտել դրանց վերաբերյալ: Նշված փաստերն ինքնին բավարար են արձանագրելու համար, որ Դատարանի վճիռը վերաբերում է նաև բողոքաբերի իրավունքներին:

Մինչդեռ, հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեն մաքսային ձևակերպում իրականացնող մարմին է, որն իրականացնում է հայտարարագրի գրանցման եղանակով, իսկ սույն գործով քննվում է ավտոմեքենայի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու մասին հայցը, որի բավարարումը զուտ կարող է հիմք հանդիսանալ տվյալ անձի մոտ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հայտարարագիր ներկայացնելու իրավունքի ծագման համար: Այսինքն՝ սույն գործի քննությունը չի առնչվում Կոմիտեի իրավունքներին և պարտականություններին, այլև զուտ կարող է հիմք հանդիսանալ անձի կողմից հայտարարագիր ներկայացնելու համար, որի դեպքում առաջանում է Կոմիտեի՝ որպես մաքսային ձևակերպումների կազմակերպում իրականացնող հանրապետական գործադիր մարմնի, օրենքով և կանոնադրությամբ վերապահված գործառույթներն իրականացնելու պարտականություն:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի վճռով Կոմիտեի որևէ իրավունք չի խախտվել, և վերջինս չի ծանրաբեռնվել լրացուցիչ պարտականություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով սմբազրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, սույն գործով կայացված վճռի դեմ գործին մասնակցող անձանց կողմից վերաքննիչ բողոք չներկայացնելու հանգամանքը, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.09.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 01.07.2010 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-3/0385/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ-3/0385/05/09
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 30-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարի վճռաբեկ
բողոքը ՀՀ վարչական դատարանի 01.02.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ
ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ընդդեմ «Արտակ»
արտադրական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ)՝ 600.000 ՀՀ դրամ բռնա-
զանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Նախարարությունը պահանջել է Ընկերությունից բռնա-
զանձել 600.000 ՀՀ դրամ՝ որպես շահումով խաղի կազմակերպման լիցենզիայի
համար պետական տուրքի գծով տույժի գումար:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.02.2010 թվականի

վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոռպորատիվը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, 6.1-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի 2-րդ մասը, 6.1-րդ հոդվածի 2-րդ մասը, 19-րդ հոդվածի 14.2-րդ կետը, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը, 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ կառավարության 24.09.2001 թվականի ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 895 որոշման 1-ին մասը, ՀՀ կառավարության 24.12.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» թիվ 1522-Ն որոշման 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 11-րդ հոդվածի 1-ին մասի 13-14-րդ կետերը, ՀՀ կառավարության 29.11.1997 թվականի «Պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողության ուժեղացման միջոցառումների մասին» թիվ 547 որոշման 1-ին մասի «ա» և «բ» կետերը, ՀՀ կառավարության 04.09.2008 թվականի «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 13-րդ կետի 1-ին կետի «ե» ենթակետը, 14-րդ կետի 1-ին կետի «բ» ենթակետը, ինչպես նաև խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածները:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է, որ պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց վրա: Տվյալ դեպքում Նախարարությունը՝ որպես շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման ծառայություն մատուցող մարմին, պարտավոր է (ոչ թե իրավասու է) ապահովել նաև այդ ծառայությունների դիմաց գանձվող պետական տուրքի և դրա չվճարման արդյունքում հաշվարկված տույժի գումարների

զանձումը, քանի որ նշված պարտավորությունը չկատարելու հետևանքով պատասխանատվությունը կրում են Նախարարության պաշտոնատար անձինք, իսկ Դատարանի կողմից վկայակոչած իրավանորմերում ամրագրված տուրքի հաշվարկման, գանձման հսկողությունը վերաբերում է ոչ թե հարկային մարմնի կողմից պետական տուրքի ուղղակի՝ դատական կարգով գանձմանը, այլ՝ համապատասխան ծառայություններ մատուցող մարմինների կողմից տուրքի հաշվարկման և գանձման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացմանը:

Շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման բնագավառում պետական տուրքի գանձման՝ Նախարարության պատասխատանու լինելու հանգամանքը հիմնավորվում է նաև ՀՀ կառավարության 24.12.2009 թվականի «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» թիվ 1522-Ն որոշմամբ հաստատված եկամուտների առանձին տեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման եռամսյակային (աճողական) համամասնություններով (որոշման թիվ 6 հավելված), որով սահմանվում է, որ վիճակախաղերի, շահումով խաղերի բնագավառում պետական տուրքի մասով եկամտատեսակի գանձման համար պատասխանատու մարմին է հանդիսանում Նախարարությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 01.02.2010 թվականի վճիռը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերի, մաքսատուրքերի, պետական տուրքի և այլ պարտադիր վճարների հաշվարկման, գանձման և ժամանակին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման նկատմամբ հսկողությունն իրականացնում են հարկային մարմինները, մինչդեռ ՀՀ կառավարության 15.05.2008 թվականի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու» թիվ 503-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ սահմանված է, որ Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է վիճակախաղերի, խաղատների և շահումով խաղերի գործունեության կարգավորման ոլորտում շահումով խաղերի, վիճակախաղային, խաղատնային գործունեության կարգավորման վերաբերյալ իրավական ակտերի մշակումը, այդ գործունեությունների լիցենզավորումը և լիցենզիայի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը: Նախարարությունը որևէ իրավագործություն չունի պետական տուրքի գանձման վերաբերյալ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ, ուստի և անհիմն են Նախարարության բոլոր այն պնդումները, որ ինքը նույնպես ունի նման իրավունք:

ՀՀ կառավարության 24.12.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և

Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» թիվ 1522-Ն որոշումը որևէ կերպ չի կարող առնչվել վեճին, քանի որ այն ընդունվել է ավելի ուշ:

Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարի 26.05.2009 թվականի թիվ 474-Ա հրամանով Կոոպերատիվին 12.09.2008 թվականին տրված շահումով խաղի կազմակերպման թիվ ՇԽ-175 լիցենզիայի գործողությունը կասեցվել է, և կասեցման հիմք է դիտվել լիցենզավորման ենթակա գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց կողմից ստուգումների իրականացմանը խոչընդոտելը: ՀՀ վարչական դատարանի՝ 30.11.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 474-Ա հրամանը ճանաչվել է անվավեր, հետևաբար, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով պետական տուրքի վճարման ժամկետը երկարաձգվել է մինչև 10.02.2010 թվականը (մինչև ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ ՀՀ վարչական դատարանի 30.11.2009 թվականի վճռի դեմ բերած բողոքը վերադարձնելու մասին որոշման ընդունումը), հետևաբար, եթե օրենքի ուժով արդեն իսկ երկարաձգված է պետական տուրքի վճարման ժամկետը, ուստի Նախարարությունն իրավունք չունի Կոոպերատիվից պահանջել տույժի գումարներ այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում պետական տուրքի վճարումն օրենքի ուժով երկարաձգվել է:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ ֆինանսների նախարարի 12.09.2008 թվականի թիվ 787-Ա հրամանով Կոոպերատիվին թիվ ՇԽ-175 գրանցման համարով անժամկետ տրվել է շահումով խաղի կազմակերպման լիցենզիա:

2) Կոոպերատիվի նախագահը 06.10.2009 թվականին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարին՝ խնդրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված թիվ ՇԽ-175 լիցենզիայի գործողության ժամկետը դադարեցնել:

3) ՀՀ ֆինանսների նախարարի 29.10.2009 թվականի «Արտակ» ԱԿ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.09.2008 թվականին տրված թիվ ՇԽ-175 շահումով խաղի կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1005-Ա հրամանի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.09.2008 թվականին Կոոպերատիվին տրված թիվ ՇԽ-175 շահումով խաղի կազմակերպման լիցենզիան ճանաչվել է ուժը կորցրած:

4) Նախարարությունը դիմել է Դատարան՝ պահանջելով Կոոպերատիվից բռնագանձել 600.000 ՀՀ դրամ՝ որպես 12.09.2008 թվականի թիվ ՇԽ-175 լիցենզիայի համար պետական տուրքի գծով տույժի գումար:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դա-

տարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ լիցենզիաները տալիս են միայն նույն հոդվածով նախատեսված լիազորված պետական մարմինները: Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված նախարարությունների և գերատեսչությունների կողմից (այսուհետ՝ լիցենզավորող մարմիններ) լիցենզիաները տրվում են նույն օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված գործունեության համապատասխան տեսակներով զբաղվելու համար: Լիցենզավորող մարմինների կողմից լիցենզիաները ձևակերպվում են, համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշումներով, ինչպես նաև նախարարի կամ գերատեսչության ղեկավարի հրամանով:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվել են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները, որի 15-րդ բաժնով նախատեսվել են լիցենզավորման ենթակա գործունեության հետևյալ տեսակները՝ 1. վիճակախաղերի կազմակերպում, 2. շահումներով խաղերի կազմակերպում, 2.1. ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում, 3. խաղատների կազմակերպում:

ՀՀ կառավարության 24.09.2001 թվականի ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 895 որոշման 1-ին մասի «դ» կետով սահմանվել է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը լիցենզավորող ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ աղյուսակի 6-րդ բաժնի 2-րդ, 4-րդ, 6-րդ, 15-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ և 18-րդ բաժնի 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով:

Վերը նշված իրավական ակտերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լիցենզավորման ենթակա գործունեություն համարվող շահումով խաղերի կազմակերպման համար լիցենզավորող մարմին է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ որպես ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին, որպիսի լիցենզիան ձևակերպվում է նախարարի հրամանով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարը 12.09.2008 թվականի թիվ 787-Ա հրամանով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 43-րդ հոդվածներով և ՀՀ կառավարության 24.09.2001 թվականի ««Լիցենզավորման մա-

սին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 895 որոշմամբ, Նախարարությանը վերապահված լիազորությունների սահմաններում, Կոոպերատիվին թիվ ՇԽ-175 գրանցման համարով անժամկետ տվել է շահումով խաղի կազմակերպման լիցենզիա: Կոոպերատիվի կողմից տարեկան հերթական պետական տուրքը սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում հաշվարկված տույժերը բռնագանձելու պահանջով Նախարարությունը դիմել է Դատարան:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև պետական տուրքի հաշվարկման, գանձման և ժամանակին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման, վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ոչ թե Նախարարությունը, այլ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ուստի Նախարարությունն իրավագոր չէ քննարկվող հայցապահանջով դիմել դատական պաշտպանության:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ հարցադրումը. արդյո՞ք Նախարարությունը շահումով խաղերի կազմակերպման բնագավառում տրված լիցենզիաների համար պետական տուրք հաշվարկելու և գանձելու իրավասություն ունեցող մարմին է, թե՛ ոչ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ժբ» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է նույն օրենքի 19.1, 19.2 և 20 հոդվածներով սահմանված այլ ծառայությունների կամ գործողությունների համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 14.2-րդ կետի համաձայն՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ յուրաքանչյուր վայրում շահումներով խաղերի կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 5.000-ապատիկի չափով:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը յուրաքանչյուր վայրում շահումներով խաղերի կազմակերպման համար սահմանել է պետական տուրքի դրույքաչափ՝ տարեկան բազային տուրքի 5.000-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պետական տուրքը հաշվարկում և գանձում են նույն օրենքով սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար

անձինք: Պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց վրա, իսկ գումարները կանխիկ գանձված (ստացված) լինելու դեպքում՝ դրանք ժամանակին բյուջե փոխանցելու պատասխանատվությունը դրվում է պետական տուրք գանձող մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի վրա:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են նրանցից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ: Նույն օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը, ինչպես նաև նույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին: Պետական տուրքի չգանձված կամ չվճարված գումարների, ինչպես նաև դրանց համար նույն օրենքով սահմանված տույժերի գանձումը կատարվում է դատական կարգով:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ պետական տուրքը հաշվարկում և գանձում են համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք, որոնք պետական տուրքի չգանձված կամ չվճարված գումարների, դրանց համար սահմանված տույժերի գանձումը կատարում են դատական կարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախարարությունը, որպես ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին, լիցենզավորում է շահումներով խաղերի կազմակերպումը, իսկ Նախարարության պաշտոնատար անձինք հանդիսանում են համապատասխան ծառայություններ և գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք, որոնց վրա դրված է նաև պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվություն, Վճարելի դատարանը գտնում է, որ Նախարարությունն է կրում պետական տուրքը ճիշտ հաշվարկելու և ժամանակին գանձելու համար պատասխանատվությունը, ուստի՝ Նախարարությունը շահումով խաղերի բնագավառում պետական տուրք հաշվարկելու և գանձելու, այդ թվում նաև՝ դատական կարգով, իրավասություն ունեցող մարմին է:

Ավելին, Նախարարության համար նման պարտավորություն սահմանված լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետու-

թյան կառավարությունը Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքագրման եռամսյակային համամասնությունները սահմանելիս որոշակի եկամտատեսակների գանձման համար պատասխանատվություն է դրել Նախարարության վրա:

Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են պետական տուրքերը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ պետական բյուջեի կատարման կարգը սահմանում է կառավարությունը՝ նույն օրենքի հիման վրա: Պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 45 օրվա ընթացքում, կառավարությունը սահմանում է պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 24.12.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» թիվ 1522-Ն որոշման 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանել է «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների առանձին տեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման եռամսյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ դրանց գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների՝ համաձայն թիվ 6 հավելվածի:

Վերոգրյալ որոշման 6-րդ հավելվածով սահմանվել են Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված եկամուտների (բացառությամբ պաշտոնական դրամաշնորհների) առանձին տեսակների գծով մուտքերի հավաքագրման եռամսյակային համամասնություններն ըստ դրանց գանձման համար պատասխանատու և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական կառավարման մարմինների, որի 9.13-րդ կետով սահմանվել է, որ Նախարարությունը պատասխանատու է յուրաքանչյուր վայրում շահումներով խաղերի կազմակերպման համար լիցենզիաների համար պետական տուրքի տեսքով եկամուտների գանձման համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 01.02.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Գործի նոր քննության արդյունքում անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/4118/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Միրզոյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4118/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 29-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «Սիկա Էկիսերվինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 26.04.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ 2008 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 654Ա և 12.08.2009 թվականի թիվ 488Ա որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին և ըստ Հանձնաժողովի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ պետական տուրքը և տույժերը վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Հանձ-

նաժողովի 2008 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 654Ա և 12.08.2009 թվականի թիվ 488Ա որոշումները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հանձնաժողովը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը վճարել 114.750 ՀՀ դրամ պետական տուրքի և տույժերի գումարը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.04.2010 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել Հանձնաժողովի 31.03.2006 թվականի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգի 3.2 կետը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ Հանձնաժողովի 31.03.2006 թվականի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված լիցենզավորման կարգի համաձայն՝ լիցենզիան կարող էր տրամադրվել միայն պետական տուրքի՝ Հանձնաժողովի կողմից հաշվարկված գումարի ամբողջական վճարումից հետո միայն: Այսինքն՝ հնարավոր չէ դեպք, որ լիցենզիան տրամադրվի մինչև պետական տուրքի ամբողջական վճարումը:

Դատարանը հաշվի չի առել, որ 26.11.2008 թվականի թիվ 654Ա որոշումն Ընկերության համար առաջացրել է լրացուցիչ պարտավորություն և պատասխանավորություն չնախատեսված ծախսերի տեսքով: Մասնավորապես, 2009 թվականի մարտի 13-ի նամակով Հանձնաժողովն ըստ էության Ընկերությանը պարտադրել է պետական բյուջե վճարել իր կողմից սխալ հաշվարկման արդյունքում պետության նկատմամբ առաջացած պետական տուրքի և 26.11.2008 թվականի հաջորդող ժամանակաշրջանի համար հաշվարկված տույժերի գումարները:

Դատարանը, իր վճռում հղում կատարելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածին, անտեսել է այն հանգամանքը, որ Հանձնաժողովի աշխատակիցների կողմից է սխալ հաշվարկվել վճարման ենթակա պետական տուրքի գու-

մարը: Ընկերությունն իրեն ներկայացված չափով կատարել է պետական տուրքի ամբողջական վճարումը և պահանջված այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է Հանձնաժողով:

Բացի այդ, Գատարանը հաշվի չի առել, որ 26.11.2008 թվականի որոշումն իր բնույթով առաջին հայացքից նմանվելով բարենպաստ վարչական ակտի, կայացման արդյունքում առաջացրել է Ընկերության համար լրացուցիչ պարտավորություն և պատասխանատվություն, հետևաբար՝ այն զուգորդվող վարչական ակտ է և ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի ենթակա է բողոքարկման որպես Ընկերության համար ոչ բարենպաստ վարչական ակտ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 26.04.2010 թվականի վճիռը և այն փոփոխել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 19.11.2008 թվականին Հանձնաժողով մուտքագրված դիմումով Ընկերությունը խնդրել է տալ լիցենզիա՝ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն ծավալելու համար: Դիմումում նշվել է, որ դիմումին կից ներկայացվում է նաև պետական տուրքի վճարման անդորրագիրը (գ.թ. 69):

2) 24.10.2008 թվականի թիվ 016 վճարման հանձնարարագրով Ընկերությունը վճարել է 50.000 ՀՀ դրամ պետական տուրք՝ ձայնային ծառայությունների մատուցման լիցենզիայի համար (գ.թ. 72):

3) Հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետի 21.11.2008 թվականի եզրակացության համաձայն՝ Ընկերության կողմից 19.11.2008 թվականին ներկայացված հայտը համապատասխանում է Հանձնաժողովի 31.03.2006 թվականի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման կարգին, և վարչությունը դիտողություններ չունի (գ.թ. 68):

4) Հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետի 24.11.2008 թվականի զեկուցագրի համաձայն՝ Հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման վարչությունը հեռահաղորդակցության վարչության հետ համատեղ ուսումնասիրել է ներկայացված հայտը, առաջարկություններ և դիտողություններ չունի (գ.թ. 58):

5) Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի 24.11.2008 թվականի զեկուցագրի համաձայն՝ Հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման վարչությունը հեռահաղորդակցության վարչության հետ համատեղ ուսումնասիրել է ներկայացված հայտը, առաջարկություններ և դիտողություններ չկան: Նույն զեկուցագրով Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը, Հանձնաժողովի

նախագահին ներկայացնելով որոշման նախագիծ, խնդրել է այն 3-օրյա ժամկետում քննարկել Հանձնաժողովի նիստում (գ.թ. 57):

6) Հանձնաժողովի 26.11.2008 թվականի թիվ 654Ա որոշմամբ բավարարվել է Ընկերության ներկայացված հայտը, և Ընկերությանը տրվել է ձայնային ծառայությունների մատուցման թիվ 0484 անժամկետ լիցենզիան (գ.թ. 14, 102):

7) Հանձնաժողովի 13.03.2009 թվականի գրության համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 21-ին ընդունված և հոկտեմբերի 4-ին ուժի մեջ մտած ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-141-Ն օրենքի 3-րդ հոդվածով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 25-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի արդյունքում նշված կետով նախատեսված բացառությունների շարքը լրացվել է օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ կետի 9.1-9.6 ենթակետերով: Համաձայն այդ լրացման՝ ձայնային ծառայությունների մատուցման յուրաքանչյուր լիցենզիայի համար տարեկան պետական տուրքի չափը կազմում է 100.000 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է 2008 թվականի հոկտեմբերի 4-ից հետո Ձեզ տրամադրված երկրորդ լիցենզիայի համար վճարված պետական տուրքը լրավճարել 50 հազար դրամով, հակառակ դեպքում լիցենզիայի գործողությունը կկասեցվի (գ.թ. 13):

8) Հանձնաժողովի 12.08.2009 թվականի թիվ 488Ա որոշմամբ կասեցվել է Ընկերության ձայնային ծառայությունների մատուցման թիվ 0484 լիցենզիան՝ ձայնային ծառայությունների մատուցման լիցենզիայի համար սահմանված պետական տուրքի չվճարման, ինչպես նաև պետական տուրքի չվճարման համար հաշվարկված տույժի գծով պարտավորությունները չկատարելու հիմքով (գ.թ. 11-12):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի ժամկետի գործողության երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիաների գրանցամատյանից այլ անձանց տեղեկությունների տրամադրման, ինչպես նաև այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, որակավորման քննությանը մասնակցելու համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով: Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար օրենքով կարող են նախատեսվել տարեկան տուրքեր:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 9.2 կետի համաձայն՝ ձայնային ծառայությունների մատուցման համար գանձվում է տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրք:

04.10.2008 թվականին ուժի մեջ մտած ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-141-Ն օրենքի 3-րդ հոդ-

վածով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 25-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «բացառությամբ սույն հոդվածի 9.1-9.6-րդ, 14.2-րդ, 14.3-րդ, 17.1-17.6-րդ և 18.14-րդ կետերում նշված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների, մեկից ավելի յուրաքանչյուր վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեության տեսակով զբաղվելու լիցենզիայի տրման համար՝ տարեկան տվյալ լիցենզիայի տրման համար սահմանված պետական տուրքի դրույքաչափի հիսուն տոկոսի չափով»:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ լիցենզավորման ենթակա ձայնային ծառայությունների մատուցման համար մեկից ավելի յուրաքանչյուր վայրում նույն գործունեության տեսակով զբաղվելու համար տրվում է լիցենզիա, որի համար գանձվում է տարեկան պետական տուրք՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով: Այսինքն՝ լիցենզավորման ենթակա գործունեության ծավալման յուրաքանչյուր վայրի համար տրվող յուրաքանչյուր լիցենզիայի համար գանձվում է 100.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Հանձնաժողովի 31.03.2006 թվականի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 2.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիան տրվում է էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության հետևյալ տեսակներն իրականացնելու համար՝ ...«բ» ձայնային ծառայությունների մատուցում ...:

Կարգի 2.21-րդ կետի համաձայն՝ հայտատուն ձայնային ծառայությունների մատուցման գործունեության լիցենզավորման համար՝ ի լրումն սույն կարգի թիվ 2 հավելվածով նախատեսված փաստաթղթերի, պետք է ներկայացնի նաև գործունեության իրականացման վայրի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթերը:

Կարգի 2.6-րդ կետի համաձայն՝ լիցենզիա ստանալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու կամ լիցենզիայի կորստի դեպքերում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու կամ լիցենզիայի վերաձևակերպման համար վճարվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը համապատասխան հայտի (դիմումի) հետ մեկտեղ ներկայացվում է Հանձնաժողով:

Կարգի 3.2-րդ կետի համաձայն՝ հայտատուի ներկայացրած հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունն ու համապատասխանությունը սույն կարգի թիվ 1 և թիվ 2 հավելվածներին:

Կարգի 3.8-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սույն կարգի 2.1 կետի «բ», «գ» և «ե» ենթակետերով սահմանված գործունեությունների հայտերի ստուգման բացասական արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ հայտը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգ-

ման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովը սկսում է այն ուսումնասիրելու գործընթացը:

Իսկ Կարգի թիվ 2՝ «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» հավելվածի համաձայն՝ լիցենզիա ստանալու համար հայտին կցվում է պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ձայնային ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա ստանալու հայտը Հանձնաժողովի կողմից կարող է բավարարվել բացառապես Կարգի թիվ 2 հավելվածով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց՝ Կարգով սահմանված պահանջներին համապատասխանելու պայմաններում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ պետական տուրքը հաշվարկում և գանձում են սույն օրենքով սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք: Պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց վրա, իսկ գումարները կանխիկ գանձված (ստացված) լինելու դեպքում դրանք ժամանակին բյուջե փոխանցելու պատասխանատվությունը դրվում է պետական տուրք գանձող մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի վրա:

Նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են նրանցից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ: Պետական տուրք գանձող պաշտոնատար անձինք սահմանված ժամկետում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները, ինչպես նաև դրանց համար սույն հոդվածի առաջին մասին համապատասխան հաշվարկված տույժերը բյուջե են վճարում լիազորված մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 19.11.2008 թվականի դիմումով խնդրել է Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն ծավալելու համար տալ լիցենզիա, որում նշվել է, որ դիմումին կից ներկայացվում է նաև պետական տուրքի վճարման 24.10.2008 թվականի թիվ 016 անդորրագիրը, որով վճարվել է 50.000 ՀՀ դրամ պետական տուրք: Հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության 21.11.2008 թվականի եզրակացության համաձայն՝ Ընկերության կողմից 19.11.2008 թվականին ներկայացված հայտը համապատասխանում է Հանձնաժողովի 31.03.2006 թվականի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված՝ Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման կարգին, և վարչությունը դիտողություններ չի հայտնել: Հանձնաժողովի իրավա-

բանական և լիցենզավորման վարչության պետի 24.11.2008 թվականի զեկուցագրի համաձայն՝ Հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման վարչությունը հեռահաղորդակցության վարչության հետ համատեղ ուսումնասիրել է ներկայացված հայտը, առաջարկություններ և դիտողություններ չի հայտնել: Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի 24.11.2008 թվականի զեկուցագրի համաձայն՝ Հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման վարչությունը հեռահաղորդակցության վարչության հետ համատեղ ուսումնասիրել է ներկայացված հայտը, առաջարկություններ և դիտողություններ չի հայտնել: Նույն զեկուցագրով Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը, Հանձնաժողովի նախագահին ներկայացնելով որոշման նախագիծ, խնդրել է այն 3-օրյա ժամկետում քննարկել Հանձնաժողովի նիստում: Իսկ Հանձնաժողովի 26.11.2008 թվականի թիվ 654Ա որոշմամբ Ընկերությանը տրվել է ձայնային ծառայությունների մատուցման թիվ 0484 անժամկետ լիցենզիան: Մինչդեռ՝ Հանձնաժողովի 13.03.2009 թվականի գրությամբ հայտնվել է, որ «2008 թվականի օգոստոսի 21-ին ընդունված և հոկտեմբերի 4-ին ուժի մեջ մտած ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-141-Ն օրենքի 3-րդ հոդվածով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 25-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի արդյունքում նշված կետով նախատեսված բացառությունների շարքը լրացվել է օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ կետի 9.1-9.6 ենթակետերով: Համաձայն այդ լրացման՝ ձայնային ծառայությունների մատուցման յուրաքանչյուր լիցենզիայի համար տարեկան պետական տուրքի չափը կազմում է 100.000 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է 2008 թվականի հոկտեմբերի 4-ից հետո Ձեզ տրամադրված երկրորդ լիցենզիայի համար վճարված պետական տուրքը լրավճարել 50 հազար ՀՀ դրամով, հակառակ դեպքում լիցենզիայի գործողությունը կկասեցվի»: Հետագայում, Հանձնաժողովի 12.08.2009 թվականի թիվ 488Ա որոշմամբ Ընկերության ձայնային ծառայությունների մատուցման թիվ 0484 լիցենզիան կասեցվել է՝ Ընկերության կողմից ձայնային ծառայությունների մատուցման լիցենզիայի համար սահմանված պետական տուրքը չվճարելու, ինչպես նաև պետական տուրքի չվճարման համար հաշվարկված տույժի գծով պարտավորությունները չկատարելու հիմքով:

Սույն գործով Գատարանը հակընդդեմ հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերությունն է պատասխանատվություն կրում պետական տուրքի գումարն օրենսդրությամբ սահմանված ժամկետում չվճարելու համար:

Մինչդեռ՝ Գատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով արձանագրված իրավախախտման հիմքում ընկած է ոչ թե պետական տուրքի գումարն օրենսդրությամբ սահմանված ժամկետում չվճարելու փաստը, այլ լիազոր մարմնի ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պետական տուրքի գումարներն օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով չհաշվարկելու և չզանձելու փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ

դատարանն արձանագրում է, որ լիազոր մարմնի ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պետական տուրքի գումարներն օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով չհաշվարկելու և չգանձելու պայմաններում ծառայությունների մատուցումը պատասխանատվություն է առաջացնում պետական մարմնի պաշտոնատար անձի, այլ ոչ թե Ընկերության համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հանձնաժողովի 12.08.2009 թվականի թիվ 488Ա որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ, ուստի այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված այն փաստարկին, որ Հանձնաժողովի 26.11.2008 թվականի թիվ 654Ա որոշումը զուգորդվող վարչական ակտ է, քանի որ Ընկերության համար առաջացրել է լրացուցիչ պարտավորություն և պատասխանատվություն չնախատեսված ծախսերի տեսքով, ուստի առկա է նաև այն անվավեր ճանաչելու հիմքը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ.

1. խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ եթե՝ ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար. բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2. նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3. նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ բարենպաստ վարչական ակտն այն ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Նույն հոդվածի նույն մասի «բ» և «գ» կետերի համաձայն՝ միջամտող վարչական ակտն այն ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը, իսկ զուգորդվող վարչական ակտն այն վարչական ակտն է, որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ:

Վերը նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ զուգորդվող վարչական ակտն իր մեջ պարունակում է երկու պարտադիր տարրեր, բարենպաստ և միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ: Այսինքն՝ զուգորդվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ համար միաժամանակ սահմանվում են ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ:

Տվյալ դեպքում Հանձնաժողովի 26.11.2008 թվականի թիվ 654Ս որոշմամբ բավարարվել է Ընկերության ներկայացված հայտը, և Ընկերությանը տրամադրվել է ձայնային ծառայությունների մատուցման լիցենզիա, այսինքն՝ Ընկերությանը տրվել է հեռահաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնելու իրավունք, որը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի ուժով իր մեջ պարունակում է բարենպաստ վարչական ակտի դրույթներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հանձնաժողովի 26.11.2008 թվականի թիվ 654Ս որոշումն իր մեջ պարունակում է միայն բարենպաստ վարչական ակտի դրույթներ, հետևաբար՝ այն զուգորդվող վարչական ակտ չէ:

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-րդ հոդվածներով սահմանված են ՀՀ վարչական դատարան տրվող հայցերի տեսակները, որոնցով նախատեսված չէ բարենպաստ վարչական ակտը վիճարկելու հայցատեսակ:

Բացի այդ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզավորված անձի դիմումի համաձայն:

Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չի նախատեսում բարենպաստ վարչական ակտը վիճարկելու հնարավորություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ Վարչական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հանձնաժողովի 26.11.2008 թվականի թիվ 654Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով վարչական գործի վարույթը ենթակա է կարճման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի մասնակիորեն հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 26.04.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. «Միկա Էկիսերվինգ» ՍՊԸ-ի հայցը բավարարել մասնակիորեն. անվավեր ճանաչել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 12-ի թիվ 488Ա որոշումը: Ըստ հայցի «Միկա Էկիսերվինգ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 2008 թվականի նոյեմբերի 26-ի թիվ

654Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով վարչական գործի վարույթը կարճել:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հակընդդեմ հայցը մերժել:

2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից հոգուտ «Միկա Էկիսերվինգ» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/3464/05/09
Նախագահող դատավոր՝ Գ. Գևորգյան

Վարչական գործ թիվ ՎԳ/346405/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 10.04.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Անի Բարսեղյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ շինության և դրանով զբաղեցված, ենթավարձակալությամբ տրամադրված հողամասի դիմաց փոխհատուցում չտրամադրելու և դրա հետևանքով կրած վնասները Քաղաքապետարանի կողմից չփոխհատուցելու արդյունքում Քաղաքապետարանի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, ինչպես նաև Քաղաքապետարանի հետ 29.06.2007 թվականին կնքված պայմանագրով Քաղաքապետարանի կողմից ստանձնած պարտավորությունները և Երևանի Վարդանանց փողոցին հարող հատվածում, Գետառի մոտ գտնվող 30 քմ մակերեսով հողամաս տրամադրելու անհնա-

ըինության դեպքում Երևանի Խանջյան փողոցի 12/2 հասցեի 18,05 քմ շինության և դրանով զբաղեցված 20 քմ ենթավարձակալությամբ տրամադրված հողամասի դիմաց 18.305.000 ՀՀ դրամ կազմող շուկայական արժեքը, 2007 թվականի սեպտեմբեր ամսից մինչև հայրը ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածի համար 8.360.000 ՀՀ դրամ կազմող վնասը՝ բաց թողնված օգուտը, փոխհատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարական նախապատմությունը.

Գինելով դատարան՝ Անի Բարսեղյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Երևանի Խանջյան փողոցի 12/2 հասցեի 18,05 քմ շինության և դրանով զբաղեցված 20 քմ ենթավարձակալությամբ տրամադրված հողամասի դիմաց փոխհատուցում չտրամադրելու և դրա հետևանքով կրած վնասները չփոխհատուցելու Քաղաքապետարանի գործողությունները, ինչպես նաև պարտավորեցնել Քաղաքապետարանին՝ կատարելու 29.06.2007 թվականին կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները և Երևանի Վարդանանց փողոցին հարող հատվածում Գետառի մոտ գտնվող 30 քմ մակերեսով հողամաս տրամադրելու անհնարինության դեպքում Երևանի Խանջյան փողոցի 12/2 հասցեի 18,05 քմ շինության և դրանով զբաղեցված 20 քմ ենթավարձակալությամբ տրամադրված հողամասի դիմաց փոխհատուցել 18.305.000 ՀՀ դրամ շուկայական արժեքն ու 2007 թվականի սեպտեմբեր ամսից մինչև հայրը ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածի համար 8.360.000 ՀՀ դրամ վնասը՝ բաց թողնված օգուտը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.04.2010 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է ոչ իրավաչափ ճանաչել Անի Բարսեղյանին Երևանի Խանջյան փողոցի 12/2 հասցեի 18,05 քմ շինության և դրանով զբաղեցված 20 քմ ենթավարձակալությամբ տրամադրված հողամասի դիմաց փոխհատուցում չտրամադրելու և դրա հետևանքով կրած վնասները չփոխհատուցելու Քաղաքապետարանի գործողությունները, Հայաստանի Հանրապետությունից հօգուտ Անի Բարսեղյանի բռնագանձվել է 18.305.000 ՀՀ դրամ՝ որպես Երևանի Խանջյան փողոցի 12/2 հասցեի 18,05 քմ շինության և դրանով զբաղեցված 20 քմ ենթավարձակալությամբ տրամադրված հողամասի դիմաց շուկայական արժեքի փոխհատուցում: Հայրը մնացած մասով մերժվել է: Միաժամանակ, վճռվել է Քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 370.100 ՀՀ դրամ՝ որպես նախօրոք չվճարված պետական տուրքի գումար, իսկ Անի Բարսեղյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձվել է 167.200 ՀՀ դրամ՝ որպես նախօրոք չվճարված պետական տուրքի գումար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Անի Բարսեղյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Գատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Գատարանը, նշելով, որ իրավահարաբերության պահին գործող «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի 06.05.1997 թվականի ՆՀ-797 հրամանագրի համաձայն Երևանի քաղաքապետարանը պետական կառավարման մարմին է և հաստատված համարելով, որ այդ մարմնի գործողությունների համար հատուցում է Հայաստանի Հանրապետությունը, դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերը բաշխելիս վճռել է Քաղաքապետարանից բռնագանձել 370.100 ՀՀ դրամ՝ որպես նախօրոք չվճարված պետական տուրքի գումար:

Սինչդեռ՝ Գատարանը հաշվի չի առել, որ Քաղաքապետարանը որևէ իրավական հիմքով «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի ոչ իրավաչափ գործողությունների համար բավարարված հայցապահանջի մասով չի կարող կրել դատական ծախսեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 10.04.2010 թվականի վճռի՝ Քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի 370.100 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, բռնագանձելու մասը և այն փոփոխել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Գատարանը, կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածը, իրավացիորեն պետական տուրքի գումարը բռնագանձել է Քաղաքապետարանից, քանի որ տվյալ պարագայում պետական տուրքի գումարը որևէ կերպ չի առնչվում վնասի հատուցման հետ: Իսկ վնասն առաջացել է Քաղաքապետարանի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գատարանի 22.07.2009 որոշմամբ բավարարվել է Անի Բարսեղյանի միջնորդությունը պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ, և որոշվել է պետական տուրքի վճարումը տարաժամկետել և լուծել վճռով (գ.թ. 94):

2) Գատարանի 10.04.2010 թվականի վճռով որպես փոխհատուցում Հայաստանի Հանրապետությունից բռնագանձվել է 18.305.000 ՀՀ դրամ, իսկ Քաղաքապե-

տարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձվել է 370.100 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ՝ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է հանդիսացել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերը, այդ թվում՝ պետական տուրքը, որոնք կատարվել են դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, հատուցում է այն կողմը, որի դեմ կայացվել է վճիռ: Ընդ որում, օրենսդրի կողմից ամրագրվել է այն սկզբունքը, որ պատասխանող կողմում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի հանդես գալու դեպքում դատական ծախսը, այդ թվում՝ պետական տուրքը, դրվում է Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ սույն օրենսգրքին կամ այլ օրենքներին համապատասխան, վնասը հատուցվում է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից, նրանց

անունից հանդես են գալիս համապատասխան ֆինանսական մարմինները, եթե այդ պարտականությունը, սույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, դրված չէ այլ մարմնի, իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Սույն գործով, Դատարանը, հայցը բավարարելիս, հաստատված է համարել այն հանգամանքը, որ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող՝ «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի ՆՀ-797 հրամանագրով Երևանի քաղաքապետարանը ՀՀ պետական կառավարման մարմին էր, հետևաբար՝ վերջինիս գործողությունների համար վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը: Միաժամանակ, Դատարանը, Անի Բարսեղյանի հայցը բավարարելով մասնակիորեն, վճռել է Անի Բարսեղյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 167.200 ՀՀ դրամ՝ որպես նախօրոք չվճարված պետական տուրքի գումար, իսկ Քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել է 370.100 ՀՀ դրամ՝ որպես նախօրոք չվճարված պետական տուրքի գումար:

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով պատասխանող են Քաղաքապետարանը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, և ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ որպես պետական մարմին, և սույն գործով վիճարկվել է Քաղաքապետարանի՝ որպես պետական կառավարման մարմնի կողմից դրսևորած գործողությունը, հետևաբար՝ Քաղաքապետարանի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու հետևանքով Անի Բարսեղյանի օգտին 18.305.000 ՀՀ դրամ գումարը Հայաստանի Հանրապետությունից բռնագանձվելու պայմաններում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ուժով պետական տուրքը նույնպես ենթակա է բռնագանձման ՀՀ ֆինանսների նախարարությունից, որպես Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող համապատասխան ֆինանսական մարմին:

Այսինքն՝ ըստ էության, պետական տուրքը ենթակա է բռնագանձման Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության հօգուտ Հայաստանի Հանրապետության, հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանությամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 10.04.2010 թվականի վճռի՝ Երևանի քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի 370.100 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, բռնագանձելու մասը և այն փոփոխել. պետական տուրքի հարցը համարել լուծված: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/3608/05/08
Նախագահող դատավոր՝ Գ. Բարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/3608/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ա.ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2009 թվականի մարտի 13-ին,
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 01.12.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ
հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Նորք-
Մարաշ հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ «Թի-Էս-Էս-Սի
Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 6.199.900 ՀՀ դրամ բռնագանձելու
պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ընկերու-
թյունից 6.199.900 ՀՀ դրամ:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.12.2008 թվականի վճռով Տեսչության հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը կիրառել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, 35-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերությունները, որոնք չպետք է կիրառել, չի կիրառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը, որը պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը վճռի հիմքում դրել է այն հանգամանքը, որ Տեսչությունն է կրում պետական տուրքը ճիշտ հաշվարկելու և ժամանակին գանձելու նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտավորությունը: Բացի այդ, վերջինս է պարտավոր հարկատուին տեղեկացնել պետական տուրքի գծով պարտավորության կատարման ուշացումների և դրանց համար հաշվարկված տույժերի վերաբերյալ:

Մինչդեռ, հարկային մարմինը «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով հսկողություն է իրականացնում հարկային օրենսդրության, պետական տուրքի և պարտադիր այլ վճարների վերաբերյալ օրենքների և իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 01.12.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ մտավոր սեփականության գործակալության 09.01.2004 թվականի որոշմամբ գրանցվել է Ընկերության «Թի-Էս-Էս-սի Արմենիա» ֆիրմային անվանումը (գ.թ. 67):

2. Ընկերությունը պետական տուրքի առաջին վճարումը կատարել է 08.01.2004 թվականին:

3. Ընկերությունը պետական տուրքի վճարումները կատարել է ամբողջությամբ, հետևյալ ժամանակացույցով՝ 08.01.2004 թվականին՝ 600.000 ՀՀ դրամ, 26.11.2007 թվականին՝ 1.200.000 ՀՀ դրամ, 30.11.2007 թվականին՝ 600.000 ՀՀ դրամ

և 07.02.2008 թվականին՝ 600.000 ՀՀ դրամ:

4. 01.04.2008 թվականի դրությամբ Ընկերության կողմից հարկային պարտավորությունները ժամկետի խախտմամբ կատարելու հետևանքով հաշվարկված տույժը կազմել է 6.199.900 ՀՀ դրամ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է պարզել հետևյալ իրավական հարցադրումը. Արդյո՞ք լիազոր պետական մարմնի պաշտոնատար անձը պատասխանատվություն է կրում պետական տուրք վճարող անձի կողմից հերթական տարեկան պետական տուրքը օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պետական բյուջե չվճարելու համար:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք **վճարողները պարտավոր են՝ ժամանակին և լրիվ վճարել սույն օրենքով սահմանված պետական տուրքերը**, պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը, ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրենց վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը, սույն օրենքով սահմանված դեպքերում **պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 31-րդ կետի համաձայն՝ «Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար **գանձվում է** տարեկան պետական տուրք՝ 600.000 ՀՀ դրամ:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ պետական տուրքը **գանձվում է** մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե սույն օրենքով այլ բան սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ նույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի **վճարումը** յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման

օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) տրման ամսաթվից ոչ ուշ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ ..., ինչպես նաև սույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են **վճարողից բռնագանձման** պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին, իսկ նույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ պետական տուրքի չգանձված կամ չվճարված գումարների, ինչպես նաև դրանց համար նույն օրենքով սահմանված տույժերի գանձումը կատարվում է դատական կարգով:

Վերը նշվածից հետևում է, որ հարկեր, տուրքեր վճարելը յուրաքանչյուր անձի պարտականությունն է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Թի-Էս-Էս-սի Արմենիա» ֆիրմային անվանման համար սահմանված տարեկան պետական տուրքի առաջին վճարումը Ընկերությունը կատարել է 08.01.2004 թվականին, 09.01.2004 թվականի որոշմամբ գրանցվել է Ընկերության ֆիրմային անվանումը, Ընկերությունը **տարեկան պետական տուրքի** վճարումները կատարել է հետևյալ ժամանակացույցով՝ 08.01.2004 թվականին՝ 600.000 ՀՀ դրամ, 26.11.2007 թվականին՝ 1.200.000 ՀՀ դրամ, 30.11.2007 թվականին՝ 600.000 ՀՀ դրամ և 07.02.2008 թվականին՝ 600.000 ՀՀ դրամ, որի համար Ընկերության նկատմամբ 01.04.2008 թվականի դրությամբ հաշվարկվել է տույժ՝ 6.199.900 ՀՀ դրամ գումարի չափով:

Դատարանը, կիրառելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, հանգել է այն հետևության, որ լիազոր մարմնի պաշտոնատար անձինք են պատասխանատվություն կրում պետական տուրքի գումարներն օրենսդրությամբ սահմանված ժամկետում **չգանձելու** համար: Սինչդեռ, սույն գործով իրավախախտման հիմքում դրվել է ոչ թե **տարեկան պետական տուրքի գումարներն** օրենսդրությամբ սահմանված ժամկետում **չգանձելու** պարտավորության խախտման փաստը, այլ՝ **տարեկան պետական տուրքի գումարներն** օրենսդրությամբ սահմանված ժամկետում **չվճարելու** պարտավորության խախտման փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով տարեկան պետական տուրք վճարող անձն Ընկերությունն է, դրա վճարումների օրենքով սահմանված ժամկետների խախտման համար պատասխանատվությունը ծագում է **միայն Ընկերության**, այլ ոչ թե՝ լիազոր պետական մարմնի պաշտոնատար անձի համար:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության նկատմամբ հաշվարկված տույժը՝ տարեկան պետական տուրքը օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ **վճարելու** համար, իրավաչափ է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 01.12.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Նորք-Մարաշ հարկային տեսչության հայցը բավարարել՝ «Թի-Էս-Էս-Սի Արմենիա» ՍՊԸ-ից բռնագանձել 6.199.900 (վեց միլիոն հարյուր իննսուսիսը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ

Վարչական գործ թիվ ՎՂ4/0031/05/09

Վարչական գործ թիվ ՎՂ4/0031/05/09

2010թ.

Նախագահող դատավոր՝ Ա. Ծատուրյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի փետրվարի 5-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 26.06.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Նախարարության հայցի ընդդեմ «Վիվա-Գեյմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) խաղատան կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Նախարարությունը պահանջել է ուժը կորցրած ճանաչել Ընկերության 30.09.2008 թվականի թիվ ԽՏ-046 լիցենզիան:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.06.2009 թվականի

վճռով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, սխալ է մեկնաբանել «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, չի կիրառել «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «գ» կետի պահանջը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Գործի վարույթը կարճելու հիմքում Դատարանը դրել է այն հանգամանքը, որ ինչպես լիցենզիայի գործողության կասեցման, այնպես էլ դրա դադարեցման համար դատարանն իրավասու չէ, այդ իրավունքը վերապահված է համապատասխան լիազոր մարմնին:

Մինչդեռ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներից հետևում է, որ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել միայն դատական կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 26.06.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 30.09.2008 թվականին Նախարարության կողմից Ընկերությանը տրվել է խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-046 լիցենզիան (գ.թ. 8):

2. Վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման հանձնաժողովի 18.11.2008 թվականի թիվ 40 արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը, հաշվի առնելով, որ Ընկերությունը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ունի չկատարված պարտավորություններ, առաջարկել է արձանագրել 30.09.2008 թվականին տրված՝ խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-046 լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտման կատարում (գ.թ. 18-24):

3. ՀՀ ֆինանսների նախարարի 20.11.2008 թվականի թիվ 970-Ա հրամանով

արձանագրվել է 30.09.2008 թվականին Ընկերությանը տրված՝ խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-046 լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտում (գ.թ. 16):

4. Վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման հանձնաժողովի 08.01.2009 թվականի թիվ 01 արձանագրության 1-ին կետով, հանձնաժողովը, հաշվի առնելով, որ Ընկերությունն ունի չկատարված հարկային պարտավորություններ, ինչպես նաև հաշվի առնելով, որ Ընկերությունը թույլ է տվել խախտում, որը հիմք է լիցենզիայի գործողությունը կրկին կասեցնելու համար, առաջարկել է 30.09.2008 թվականին տրված՝ խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-046 լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու հայցով դիմել դատարան (գ.թ. 11-12):

5. ՀՀ ֆինանսների նախարարի 12.01.2009 թվականի թիվ 4-Ա հրամանով որոշվել է 30.09.2008 թվականին Ընկերությանը տրված՝ խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-046 լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու հայցով դիմել դատարան (գ.թ. 9):

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

Սույն վարչական գործով Դատարանը գործի վարույթի կարճման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ինչպես Ընկերությանը տրված լիցենզիայի գործողության կասեցման, այնպես էլ դրա դադարեցման համար դատարանն իրավասու չէ, և այդ իրավունքը վերապահված է լիազոր մարմնին:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահումով խաղերի և խաղատների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը՝ տեղում ստուգումների կամ փաստաթղթային վերահսկողության միջոցով և դրա արդյունքներով, սույն օրենքով սահմանված խախտումների բացահայտման դեպքում կիրառում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ սույն օրենքի խախտման դեպքում լիազոր մարմինը կազմակերպչի նկատմամբ կիրառում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝ **լիցենզիայի գործողության դադարեցման հայցով դիմում է դատարան:**

«Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին

մասի «գ» կետի համաձայն՝ լիազոր մարմինը լիցենզիայի գործողությունը դադարեցնում է, եթե կազմակերպիչը, սույն օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան, լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալուց հետո՝ երկու տարվա ընթացքում, թույլ է տվել խախտում, որը հիմք է լիցենզիայի գործողությունը կրկին կասեցնելու համար, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել՝ մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ սույն օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերի համաձայն **լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում: Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով:**

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերով **լիցենզիայի գործողությունը դադարեցվում է դատական կարգով՝ լիցենզավորող մարմնի դիմումի համաձայն:**

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ և 7-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ լիցենզիայի գործողությունը՝ լիազոր մարմնի դիմումի հիման վրա, դադարեցվում է դատական կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձը լուծարվել է,

դադարեցվել է անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը կամ մահացել է ֆիզիկական անձը,

լիցենզավորված անձը դիմել է այն դադարեցնելու խնդրանքով:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական և փաստական հիմնավորումները:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառա-

բանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը (տե՛ս, Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ԿԴ-03/0026/02/08):

Մինչդեռ, սույն գործով Գատարանը, կիրառելով «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, անտեսել է նույն հոդվածի 2-րդ մասի պահանջը: Հետևաբար, հիմնավոր չէ Գատարանի եզրահանգումն այն մասին, որ՝ ինչպես լիցենզիայի գործողության կասեցման, այնպես էլ դրա դադարեցման համար դատարանն իրավասու չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Գատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 26.06.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճի
Վարչական գործ թիվ ՎԴ/0054/05/09
Նախագահող դատավոր՝ Գ. Գարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0054/05/09
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

2009 թվականի հուլիսի 24-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Խոսրովյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վարչական դատարանի 04.03.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ անհատ ձեռնար-
կատեր Տիգրան Խոսրովյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության (այսուհետ՝
Տեսչություն)՝ Տեսչության 11.11.2008 թվականի թիվ 2303487 ակտի 4-րդ կետն ան-
վավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Տիգրան Խոսրովյանը պահան-
ջել է անվավեր ճանաչել Տեսչության 11.11.2008 թվականի թիվ 2303487 ակտի 4-րդ
կետը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.03.2009 թվականի

վճռով հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Խոսրովյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքո-հիշյալ հիմնավորումներով.

3) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի աղյուսակի 10-րդ բաժնի 5-րդ ենթակետը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

«Ռեալ Թայմ» ՍՊԸ-ի հետ կնքված 02.04.2007 թվականի «Ինտերնետ ծառայությունների մատուցման» պայմանագրով անհատ ձեռնարկատեր Տիգրան Խոսրովյանն ինտերնետ հասանելիության ծառայություններ ստացող է: Վերջինիս գործունեությունը կայանում է նրանում, որ ինտերնետ ցանցին միացած իր համակարգիչները ժամավճարով օգտագործման է տրամադրում հաճախորդներին, որոնք նշված համակարգիչներն օգտագործում են իրենց հայեցողությամբ: Այսինքն՝ Տիգրան Խոսրովյանն ինտերնետ հասանելիության ծառայություն ստանում է և ոչ թե մատուցում: Ինտերնետ ցանցին միացած լինելու հանգամանքը չի նշանակում, որ հաճախորդներին մատուցվում են ինտերնետ հասանելիության ծառայություններ:

4) *Դատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը, 26-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշումը, որոնք պետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը չի անդրադարձել հայցադիմումով ներկայացված հաջորդ հիմքին այն մասին, որ Տիգրան Խոսրովյանն ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցած լինելու դեպքում անգամ, որևէ ապացույց և հիմնավորում չկա, որ վերջինիս իրացման ամբողջ շրջանառությունը վերաբերում է բացառապես նշված գործունեությանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 04.03.2009 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության պետի 16.10.2008 թվականի թիվ 2303487 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Տիգրան Խոսրովյանի մոտ կատարվել է առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ճշտության ստուգում (գ.թ. 7):

2) Նշված ստուգման արդյունքում 11.11.2008 թվականին կազմվել է թիվ 2303487 ակտը, որի 4-րդ կետով արձանագրվել է, որ անհատ ձեռնարկատեր Տիգրան Խոսրովյանը 29.07.2006 թվականից մինչև 02.09.2008 թվականն առանց «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման» լիցենզիայի Կոմիտաս 27/1 հասցեում գտնվող «Իմպերիա» անվանումով ինտերնետ ակունքի միջոցով իրականացրել է ինտերնետ ծառայությունների մատուցման գործունեություն, ինչի արդյունքում համախառն եկամուտը (իրացման շրջանառությունը) կազմել է 2.404.000 ՀՀ դրամ (գ.թ. 38):

3) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի տեղակալի գրության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Տիգրան Խոսրովյանի ներկայացրած հայտի հիման վրա ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 03.09.2008 թվականի թիվ 484Ա որոշմամբ վերջինիս տրամադրել է Երևան քաղաքի տարածքում տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման N 0434 լիցենզիան (գ.թ. 36):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածի աղյուսակում:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված աղյուսակի 10-րդ բաժնի 5-րդ կետով որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է նախատեսված «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում» գործունեությունը:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն՝ ծառայություն, որը, որպես կանոն, մատուցվում է հատուցման դիմաց, և ամբողջությամբ կամ մասամբ բաղկացած է էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ազդակների հաղորդումից, իսկ համապատասխան դեպքերում՝ ազդակների ուղղորդումից, սակայն չի ներառում էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով հաղորդվող բովանդակության նկատմամբ խմբագրական հսկողություն տրամադրող կամ իրականացնող ծառայությունները.

ինտերնետ հասանելիություն՝ ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գրքավ համակարգի հասանելիությունը՝ ցանցերը միասին կապելու նպատակով՝ հաղորդակցության համար որպես հիմք օգտագործելով հաղորդման արձանագրություններ կամ ինտերնետային արձանագրություններ, կամ դրանք փոփոխող կամ փոխարինող ցանկացած այլ արձանագրություններ:

ինտերնետային ծառայություն մատուցող՝ անձ, որը մատուցում է ինտերնետ հասանելիության ծառայություն:

վերջնական օգտագործող՝ ցանկացած անձ, որն օգտագործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, սակայն, այդպիսիք չի առաջարկում երրորդ անձանց:

Մույն գործով, Գատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ բողոք քերած անձն առանց «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում» գործունեության լիցենզիայի ինտերնետ ակումբի գործունեության միջոցով իրականացրել է էլեկտրոնային հաղորդակցության մատուցման ծառայություն:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Գատարանի վերոնշյալ եզրահանգումը հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինտերնետը հազարավոր տարաբնույթ ցանցերի համակցություն է, որի գործունեությունն ապահովվում է ինտերնետ արձանագրությունների միջոցով: Իսկ լիցենզավորման ենթակա է ինտերնետային հասանելիության ծառայություն մատուցող ցանկացած անձի գործունեությունը: Ինչ վերաբերում է բողոք քերած անձի այն փաստարկին, որ նա միայն ինտերնետ հասանելիության ծառայություններ ստացող է, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում, քանի որ վերջինս ինտերնետային հասանելիության ծառայություններ է առաջարկում երրորդ անձանց, այն է՝ մատուցում է ինտերնետային հասանելիության ծառայություն:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված կամ առանց լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն)՝ գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով:

Նշված հոդվածի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված ապօրինի գործունեության իրականացման դեպքում իրացման շրջանառությունը (համախառն եկամուտը) և ակտիվների արժեքը որոշվում են հարկային մարմինների կողմից՝ կի-

բառերով նույն օրենքի 22-րդ հոդվածի դրույթները:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հակրային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հակրային տեսչություն ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հակրային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հակրային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հակրային պարտավորությունները հաշվարկում է հակրային տեսչությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մասնավորապես, հիմնվելով՝

հարկ վճարողի ակտիվների,

հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների,

հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի,

գույքագրման և չափագրման տվյալների,

օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների,

համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների

և այլ ցուցանիշների,

հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի, օրենքով իրականացված հսկիչ գումումների վրա:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելն ապօրինի գործունեություն է, որն առաջացնում է տուգանքի նշանակում: Նշված տուգանքի չափի հաշվարկումն իրականացվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանած կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անհնար է հակրային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հակրային պարտավորությունը, հակրային տեսչությունը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հակրային պարտավորությունները:

Մինչդեռ, սույն գործով, Դատարանը, հաստատված համարելով, որ բողոք բերած անձը մատուցում է ինտերնետ հասանելիության ծառայություն, որևէ կերպ չի անդրադարձել Տեսչության վիճարկվող ակտի կայացման ընթացքում վերը նշված պարտադիր պահանջների պահպանման խնդրին, քանի որ Տեսչության վիճարկվող ակտի կայացման համար հիմք են հանդիսացել բողոք բերած անձի ֆիսկալային հաշվետվությունները, սակայն, գործում բացակայում է որևէ հիմնավոր ապացույց այն մասին, որ բողոք բերած անձի համախառն եկամուտը (իրացման շրջանառությունը) առաջացել է միայն ինտերնետ հասանելիության ծառայության մատուց-

ման գործունեությունից, ինչի արդյունքում Դատարանը չի անդրադարձել բողոք բերած անձի հայցադիմումով ներկայացված վերը նշված հիմքին և անտեսել է վերջինիս պնդումն այն մասին, որ համակարգիչները հաճախորդներին օգտագործման են տրամադրվում տարբեր նպատակներով, իսկ համակարգչի օգտագործման դիմաց ստացվող հասույթը շատ հաճախ կապ չունի ինտերնետային ծառայություն մատուցելու հետ, որով չի կատարել ապացուցման բեռի բաշխման իր պարտականությունը՝ խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջն այն մասին, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգեյու համար պարտավոր էր հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու հարցը, ինչը Դատարանը չի կատարել:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 04.03.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/4439/05/09
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4439/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 04.02.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ անհատ ձեռնարկատեր Սվետլանա Օհանյանի հայցի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ պարտադիր սոցիալական ապահովագրական նպաստ հաշվարկելուն, նշանակելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմնելով դատարան՝ Սվետլանա Օհանյանը պահանջել է պարտավորեցնել

Ծառայությանը հաշվարկել, նշանակել և վճարել իրեն հասանելիք պարտադիր սոցիալական ապահովագրական նպաստը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.02.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սվետլանա Օհանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը, 6-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ Սվետլանա Օհանյանը ձեռք է բերել ապահովագրական նպաստի իրավունք, քանի որ վերջինս պարտադիր սոցիալական ապահովության ընթացիկ վճարները վճարել է, իսկ պարտք ունենալու հանգամանքը չի կարող նույնացվել վճարներ կատարած չլինելու հանգամանքի հետ: Մինչդեռ, Դատարանը սխալ է մեկնաբանել «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը՝ եզրակացնելով, որ օրենսդիրը նշված իրավանորմի ամրագրմամբ կարևորել է միայն պարտադիր սոցիալական ապահովության ընթացիկ վճարումները կատարած լինելու հանգամանքը:

Այսպես, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության և 6-րդ հոդվածի 3-րդ մասի

բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը պարտավորություն է սահմանել պետական բյուջե վճարել ինչպես նվազագույն, այնպես էլ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարները: Իսկ «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավանորմում «ընթացիկ» բառը նշված չէ: Հետևաբար, դրանում պարունակվող բառերի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ անձն ապահովագրական նպաստի իրավունք է ձեռք բերում միայն պարտադիր սոցիալական ապահովության վճարները, այսինքն՝ ինչպես նվազագույն, այնպես էլ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարները, կատարելու դեպքում, ինչը Սվետլանա Օհանյանը չի կատարել:

Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Ծառայությունը Սվետլանա Օհանյանի խնդրանքն անհիմն մերժելու արդյունքում վերջինիս գրկել է օրենքով իրեն հասանելիք նպաստի նկատմամբ սեփականության իրավունքից, անհիմն է, քանի որ Սվետլանա Օհանյանը, չկատարելով տարվա համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության գումարի վճարումը, ապահովագրական նպաստի իրավունք ձեռք չի բերել, և այն չէր կարող համարվել վերջինիս սեփականությունը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Սվետլանա Օհանյանը դատաբնության ընթացքում վճարել է 2008 թվականի սոցիալական ապահովության վճարը և այն ժամկետից ուշ կատարելու համար հաշվարկված տույժը, ապա նշված հանգամանքը չէր կարող հիմք հանդիսանալ Ծառայության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և հայցը բավարարելու համար:

Դատարանի մատնանշած՝ ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերով հաստատված փաստական հանգամանքները նույնական չեն սույն գործին, քանի որ այդ գործերով դատարաններն անդրադարձել են կենսաթոշակը որպես սեփականության օբյեկտ համարելու և դրա վճարումը դադարեցնելը որպես սեփականության իրավունքի խախտում գնահատելու իրավական հարցերին, իսկ սույն գործով վիճարկվել են ապահովագրական նպաստի իրավունք ունենալու և ոչ թե ձեռք բերված իրավունքը դադարեցնելու հարցերը:

Դատարանը, ուսումնասիրելով Ծառայության ներկայացրած 2009 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում հղիության և ծննդաբերության նպաստների գծով ֆինանսավորում ստացած 142 անհատ ձեռնարկատերերի գործերը, եզրակացրել է, որ դրանց մեծ մասի փաստական հանգամանքները նույնական են Սվետլանա Օհանյանի գործով հաստատված փաստական հանգամանքների հետ, և Ծառայությունը միատեսակ փաստական հանգամանքների առկայության պայմաններում ցուցաբերել է անհավասար մոտեցում: Մինչդեռ, նշված գործերի ուսումնա-

սիրությունից պարզվել է, որ 142 անհատ ձեռնարկատերերից միայն Էլմիրա Մանուկյանի գործն է նույնական Սվետլանա Օհանյանի գործի փաստական հանգամանքների հետ: Այսինքն՝ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել անհատ ձեռնարկատերերի նշված գործերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 04.02.2010 թվականի վճիռը բեկանել և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարած լինելու հանգամանքը բավարար է ապահովագրական նպաստի իրավունքի առաջացման համար, իսկ պարտք ունենալու հանգամանքն այդ իրավունքից զրկելու և դրա իրագործումը մերժելու հիմք հանդիսանալ չի կարող:

Վճռաբեկ բողոքում որևէ կերպ հերքված չէ «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման վերաբերյալ Դատարանի վերլուծությունն ու հետևությունն այն մասին, որ Սվետլանա Օհանյանի ապահովագրական նպաստի իրավունքն առաջացել է մինչև սոցիալական ապահովության վճարի գծով պարտքն առաջանալը:

Այսպես, տվյալ դեպքում ժամանակավոր անաշխատունակության դեպքն առկա էր 2009 թվականի հունվարին, իսկ սոցիալական ապահովության վճարի վճարման ժամկետը սահմանված էր մինչև նույն թվականի մարտի 1-ը: Այսինքն՝ Սվետլանա Օհանյանի ապահովագրական նպաստի իրավունքն առաջացել է նախքան 2008 թվականի արդյունքներով սոցիալական ապահովության վճարը վճարելու ժամկետը, ինչը նշանակում է, որ ապահովագրական նպաստի իրավունքի առաջացման պահին վերջինս սոցիալական վճարի գծով պարտք չի ունեցել և մինչև այդ պահն առաջացած սոցիալական ապահովության վճարները կատարել է: Իսկ հետագայում առաջացած պարտքը չի կարող վերացնել արդեն առաջացած նպաստի իրավունքը կամ սահմանափակել այդ իրավունքի իրագործումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սվետլանա Օհանյանը 14.02.2007 թվականին գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր և ստացել է «Անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման» թիվ 01 Ա 104866 վկայականը (գ.թ. 27):

2) Երևանի քաղաքապետարանի ««Քանաքեռ-Զեյթուն» Բժշկական Կենտ-

րոն» ՓԲԸ-ի «Զեյթուն» պոլիլիինիկայի կողմից 01.01.2009 թվականին Սվետլանա Օհանյանին տրվել է անաշխատունակության թիվ 203748 թերթիկը (գ.թ. 16):

3) Սվետլանա Օհանյանը 2009 թվականի փետրվարին դիմել է Ծառայություն՝ հղիության և ծննդաբերության նպաստ ստանալու համար:

4) Ծառայության 24.07.2009 թվականի թիվ 04/6965 գրությամբ Սվետլանա Օհանյանը տեղեկացվել է, որ Ծառայությունը 31.03.2009 թվականի թիվ 04/2928 գրությամբ դիմել էր ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ Սվետլանա Օհանյանի 2008 թվականի տարեկան եկամուտների կազմում սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտի հիմնավորվածությունը ճշտելու խնդրով:

Կոմիտեն 06.05.2009 թվականի թիվ 95552/5-3 գրությամբ տեղեկացրել է Ծառայությանն այն մասին, որ Սվետլանա Օհանյանի սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի հիմնավորվածությունը պարզելու նպատակով տնտեսվարող սուբյեկտի մոտ կատարվել են նախնական ուսումնասիրություններ, որոնց արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի ուսումնասիրության նյութերի ամփոփումից հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սվետլանա Օհանյանի նպաստի ֆինանսավորումը կկատարվի Կոմիտեից վերջնական տեղեկատվությունը ստանալուց անմիջապես հետո (գ.թ. 7):

5) Ծառայության 18.09.2009 թվականի թիվ 05/8909 գրությամբ Սվետլանա Օհանյանը տեղեկացվել է, որ Կոմիտեի 10.09.2009 թվականի թիվ 22478/5-3 գրության համաձայն՝ Սվետլանա Օհանյանի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, պարտավորությունը պետական բյուջեի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 10.09.2009 թվականի դրությամբ կազմում է 5.677.600 ՀՀ դրամ, իսկ «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի համաձայն՝ անձն ապահովագրական նպաստի իրավունք ունի «պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարած լինելու դեպքում»:

Սվետլանա Օհանյանի ապահովագրական նպաստի հայտը կարող է ֆինանսավորվել սոցիալական վճարների գծով նշված պարտավորությունների լիարժեք կատարման դեպքում (գ.թ. 8):

6) Սվետլանա Օհանյանը դատարան հայց է ներկայացրել 08.10.2009 թվականին (գ.թ. 3):

7) Սվետլանա Օհանյանը 04.11.2009 թվականին և 17.11.2009 թվականին 2008 թվականի համար սոցիալական վճարների գծով կատարել է համապատասխանաբար 4.340.015 ՀՀ դրամի և 1.550.000 ՀՀ դրամի վճարումներ (գ.թ. 46-47):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության իրականացմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության շրջանակներում ապահովագրական հատուցման (այսուհետ՝ ապահովագրական նպաստներ) իրավունք ձեռք բերելու պայմանները:

«Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, նույն օրենքով, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և այլ իրավական ակտերով:

«Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ անձն ապահովագրական նպաստի իրավունք ունի նույն օրենքով սահմանված պայմանների բավարարման և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, իսկ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ (այսուհետ՝ սոցիալական վճար) կատարած լինելու դեպքում:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սոցիալական վճարներն ապահովադիրների

կողմից պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող միջոցներն են:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարումներ կատարում են հետևյալ դրույքաչափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափը՝ մինչև 1.200.000 դրամ՝ սոցիալական վճարի չափը՝ 15 տոկոս, բայց ոչ պակաս 60 հազար դրամից,

1.200.000 դրամից ավելի՝ 180.000 դրամ գումարած 1.200.000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը:

Անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5.000 դրամ, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Վարձու աշխատանք օգտագործող անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարներ են կատարում նաև վարձու աշխատողների համար՝ գործատուների և վարձու աշխատողների համար սահմանված դրույքաչափերով:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված սոցիալական վճարները հաշվարկելու, դրանց պահումները կատարելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու (վճարելու) պարտականությունները դրվում են ապահովադիրների վրա:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և նույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ մասով (5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ) նախատեսված սոցիալական վճարների տարբերությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են փոխանցում (վճարում) հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ անձն ապահովագրական նպաստի իրավունք է ձեռք բերում «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանների բավարարման և սոցիալական վճարներ կատարած լինելու դեպքում: Իսկ սոցիալական վճարների հասկացությունը սահմանվում և դրանց վճարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով: Այսպես, նշված օրենքով սոցիալական վճարները բնորոշվում են որպես ապահովադիրների կողմից նույն օրենքով սահմանված պարբերականությամբ և դրույքաչափերով պարտադիր կարգով պետական բյուջե վճարվող միջոցներ: Մասնավորապես՝ անհատ

ձեռնարկատերերի՝ որպես ապահովադիրների, համար այդ օրենքով սահմանված է ինչպես յուրաքանչյուր ամսվա համար նվազագույն սոցիալական վճար, այնպես էլ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարներ վճարելու պարտավորություն: Այսինքն՝ սոցիալական վճարները, լինելով պարտադիր վճարումների մեկ ամբողջություն, այնուամենայնիվ, ունեն տարանջատման եզրեր՝ կապված դրանց վճարման պարբերականության և դրույքաչափերի հետ, քանի որ՝ եթե անհատ ձեռնարկատերը յուրաքանչյուր ամսվա համար պարտավոր է վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5.000 ՀՀ դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը, ապա՝ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների չափը կախված է դրանց հաշվարկման օբյեկտի տարեկան չափից, որոնց վճարումը պետք է կատարվի հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի ուժով սոցիալական վճարները սահմանված պարբերականությամբ և դրույքաչափերով վճարելու պարտականությունը դրված է ապահովադիրների վրա, և վերջիններս դրա չկատարման դեպքում կրում են բացասական հետևանքներ, որոնք արտահայտվում են նաև ապահովագրական նպաստի իրավունք ձեռք չբերելու ձևով, քանի որ «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված «պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, իսկ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ կատարած լինելու դեպքում» արտահայտության մեկնաբանումից պետք է ելնել այն կանխավարկածից, որ անձը սոցիալական վճարներ է կատարել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Նման մեկնաբանումը բխում է ՀՀ Սահմանադրության և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի իմաստից, որից հետևում է, որ անձը կարող է համարվել սոցիալական վճարների վճարման իր պարտավորությունը կատարած միայն նշված օրենքով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարներ վճարելու դեպքում: Այսինքն՝ անձը չի կարող վճարել միայն նվազագույն սոցիալական վճարները՝ չկատարելով տարվա համար հաշվարկված սոցիալական վճարները և նույն օրենքի իմաստով համարվել սոցիալական վճարներ կատարած:

Սույն գործով, Գատարանը, հայցը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Ծառայությունը սխալ է մեկնաբանել «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, ինչը հանգեցրել է Սվետլանա Օհանյանի խնդրանքի ոչ իրավաչափ մերժմանը, քանի որ տվյալ դեպքում նշված նորմի երկու պայմաններն էլ ապահովված էին, այն է՝ վերջինս պարտադիր սոցիալական

ապահովության ընթացիկ վճարները վճարել է, իսկ պարտք ունենալու հանգամանքը չի կարող նույնացվել վճարներ կատարած չլինելու հանգամանքի հետ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից ուղղակիորեն հետևում է, որ անձը կարող է համարվել սոցիալական վճարների վճարման իր պարտավորությունը կատարած միայն օրենքով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարներ վճարելու դեպքում, իսկ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով անհատ ձեռնարկատերերի համար սահմանված է ոչ միայն յուրաքանչյուր ամսվա համար նվազագույն սոցիալական վճար, այլ նաև տարվա համար հաշվարկված սոցիալական վճարներ վճարելու պարտավորություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 18.09.2009 թվականի թիվ 05/8909 գրությամբ Սվետլանա Օհանյանը տեղեկացվել է, որ Կոմիտեի 10.09.2009 թվականի թիվ 22478/5-3 գրության համաձայն՝ 10.09.2009 թվականի դրությամբ Սվետլանա Օհանյանի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, պարտավորությունը պետական բյուջեի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կազմում է 5.677.600 ՀՀ դրամ: Վերջինս տեղեկացվել է նաև, որ իր ապահովագրական նպաստի հայտը կարող է ֆինանսավորվել սոցիալական վճարների գծով նշված պարտավորությունների լիարժեք կատարման դեպքում:

Նույնիսկ՝ Դատարանի վճռով հաստատված է համարվել, որ Ծառայության նշած 5.677.600 ՀՀ դրամ պարտքն առաջացել է 2008 թվականի արդյունքներով հաշվարկված 4.340.015 ՀՀ դրամ սոցիալական վճարից և դրա նկատմամբ հաշվարկված տույժերից:

Այսինքն՝ սույն գործի փաստերից հետևում է, որ Սվետլանա Օհանյանը չի կատարել 2008 թվականի համար հաշվարկված 4.340.015 ՀՀ դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարները և դրանք չվճարելու հետևանքով հաշվարկված տույժերը վճարելու սահմանադրական պարտականությունը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության 18.09.2009 թվականի գրությամբ տրված պարզաբանման պահին Սվետլանա Օհանյանի մոտ ապահովագրական նպաստ ստանալու իրավունքը դեռևս չէր ծագել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը թույլ է տվել «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերության ակնհայտ և կոպիտ խախտում:

Բացի այդ, «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ

մասի համաձայն՝ ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց ապահովագրական նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է լիազոր մարմինը՝ իր տարածքային կենտրոնների միջոցով:

Տարածքային կենտրոնն ապահովագրական նպաստը վճարում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀՀ կառավարության 30.03.2006 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառումն ապահովելու մասին» թիվ 571-Ն որոշման 1.2-րդ կետով Ծառայությանը վերապահվել է մաս նշված օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավասությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ մույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ անհատ ձեռնարկատիրոջն ապահովագրական նպաստը պետք է հաշվարկի և նշանակի Ծառայությունը, իսկ դրա վճարումը Ծառայությունը պետք է կատարի անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Միաժամանակ, Ծառայության կողմից ապահովագրական նպաստի վճարումը մերժվելու դեպքում անձն իրավունք ունի դրա վճարմանը պարտավորեցնելու պահանջով դիմել ՀՀ վարչական դատարան, որի դեպքում այդ պահանջը կարող է բավարարվել, երբ հաստատվում է, որ Ծառայության վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել

են կամ անմիջականորեն կարող են խախտվել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Այսինքն՝ նման հայցի բավարարման դեպքում անձի իրավունքները պետք է լինեն խախտված, կամ առկա լինի դրանց անմիջականորեն խախտման վտանգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սվետլանա Օհանյանը Ծառայության 18.09.2009 թվականի թիվ 05/8909 գրությունում նշված, 2008 թվականի համար հաշվարկված 5.677.600 ՀՀ դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարումը կատարել է 04.11.2009 թվականին և 17.11.2009 թվականին, այսինքն՝ դատարան դիմելուց հետո: Նույն գրությամբ նշվել է նաև, որ Սվետլանա Օհանյանի ապահովագրական նպաստի հայտը կարող է ֆինանսավորվել սոցիալական վճարների գծով նշված պարտավորությունների լիարժեք կատարման դեպքում: Այսինքն՝ Ծառայությունը 18.09.2009 թվականի գրությամբ ոչ թե մերժել է Սվետլանա Օհանյանին ապահովագրական նպաստի վճարումը, այլ զուտ տեղեկացրել է, որ նպաստ ստանալու իրավունքը ծագում է նրա կողմից սոցիալական վճարների գծով առկա պարտավորությունների լիարժեք կատարման դեպքում:

Սվետլանա Օհանյանը սոցիալական վճարների գծով ունեցած պարտավորությունը կատարել է Ծառայության 18.09.2009 թվականի գրությունը ստանալուց հետո: Հետևաբար, բացակայում է Ծառայության ոչ իրավաչափ գործողությունը, ինչի արդյունքում Սվետլանա Օհանյանի ներկայացրած պահանջն անհիմն է:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի

գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքնության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 04.02.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. անհատ ձեռնարկատեր Սվետլանա Օհանյանի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ-7059/05/08
Նախագահող դատավոր՝ Հ. Բեդլյան

Վարչական գործ թիվ ՎԳ-7059/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 15.05.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կոտայքի տարած-
քային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) հայցի ընդդեմ ՀՀ ոստի-
կանության պետական պահպանության վարչության թիվ 2 ռազմականացված ջո-
կատի (այսուհետ՝ Հիմնարկ)՝ 2.998.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Հիմնարկից
2.998.100 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.05.2009 թվականի վճռով հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 3-րդ մասը, 6-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեն, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ անկախ նրանից, թե ապահովադիրն իրավաբանական անձ է, թե պետական ենթակայության հիմնարկ, պարտավոր է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով վճարել պարտադիր սոցիալական ապահովության վճարները, ինչպես նաև այդ պարտավորությունը ժամանակին չկատարելու արդյունքում հաշվարկված տույժերը:

Վերը նշվածից հետևում է, որ Հիմնարկը, անկախ իր հիմնադրի կարգավիճակից, համարվում է վարչական իրավահարաբերության սուբյեկտ, ունի այդ սուբյեկտին բնորոշ իրավունքներ և կրում է պարտականություններ:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքից բխում է, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարները հավաքագրելու լիազորություն ունեցող մարմնի և այդ վճարումներն իրականացնելու պարտականություն ունեցող անձանց միջև առկա են վարչական հարաբերություններ, հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածով նախատեսված պարտատիրոջ և պարտապանի համընկնմամբ վարչական իրավահարաբերության սուբյեկտների միջև առաջացած հարաբերությունը դադարել չի կարող, քանի որ որևէ իրավական ակտով նախատեսված չէ, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 15.05.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայրը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Պետական բյուջեի պարտավորությունների վերաբերյալ Տեսչության ակտի համաձայն՝ 15.10.2008 թվականի դրությամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով Հիմնարկի պարտավորությունները կազմում են 2.998.100 ՀՀ դրամ, որից ապառք՝ 767.400 ՀՀ դրամ, տույժ՝ 2.230.700 ՀՀ դրամ (գ.թ. 5):

2) ՀՀ կառավարության 02.02.1999 թվականի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության պետական պահպանության ծառայության մասին» թիվ 42 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության պետական պահպանության ծառայության» կանոնադրության 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության պետական պահպանության ծառայությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների համակարգ է՝ բյուջետային հիմնարկի կարգավիճակով:

3) ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության վարչության 23.12.1999 թվականի «Պետական գրանցամատյանում բյուջետային հիմնարկի (կազմակերպության) գրանցման (հաշվառման)» թիվ Բ 004748 վկայականի համաձայն՝ Հիմնարկի վերադաս մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարությունն է (ներկայումս՝ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն) (գ.թ. 109):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ պետական մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հիմնարկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի

1-ին հոդվածով «Ապահովադիր» հասկացությունը բնորոշվում է որպես նույն օրենքով սահմանված կարգով ու չափերով սոցիալական վճարումներ կատարող և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցող (վճարող) իրավաբանական և ֆիզիկական անձ, պետական և համայնքային ենթակայության հիմնարկ:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սոցիալական վճարներն ապահովադիրների կողմից պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող միջոցներ են: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձինք, պետական և համայնքային ենթակայության հիմնարկները, օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկներն ու միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպությունները, ֆիզիկական անձինք՝ իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, ինչպես նաև վարձու աշխատողները պարտավոր են կատարել սոցիալական վճարումներ՝ նույն օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ պետական կառավարչական հիմնարկն ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը պետական մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն է և քաղաքացիական իրավահարաբերություններին վերջիններիս մասնակցության ապահովումը: Պետական կառավարչական հիմնարկի իրավական կարգավիճակից ելնելով՝ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ վերջինիս պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը: Միաժամանակ, ՀՀ սոցիալական վճարների մասին օրենսդրությամբ պետական կառավարչական հիմնարկը համարվում է ապահովադիր, և վերջինիս համար, այլ ապահովադիրների համեմատ, որևէ առանձնահատկություն սահմանված չէ: Հետևաբար, պետական կառավարչական հիմնարկի վրա, այլ ապահովադիրների հետ համահավասար, դրված է նույն օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով սոցիալական վճարումներ կատարելու պարտավորություն, որի չկատարման հետևանքով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն գործով, Դատարանը, հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հիմնարկը պետական հիմնարկ է, իսկ պետական հիմնարկի պարտավորությունների համար, որպես հիմնադիր, պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածի համաձայն՝ պարտատիրոջ և պարտապանի համընկնման դեպքում պարտավորությունը դադարում է: Սույն գործով պարտատերը և պարտապանը համընկնում են, ուստի պարտավորության դադարման ուժով հայցը ենթակա է մերժման:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ Դատարանն անտեսել է, որ սույն գործով ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է քաղաքացիաիրավական պարտավորության դադարմանը, իսկ տվյալ դեպքում Տեսչության և Հիմնարկի միջև իրավահարաբերություններն առաջացել են վերջինիս կողմից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարումներ չկատարելու հետևանքով, այսինքն՝ Տեսչության և Հիմնարկի միջև առաջացել են վարչաիրավական հարաբերություններ, որտեղ մի կողմում վարչական մարմինն է՝ Տեսչությունը, իսկ մյուս կողմում՝ ապահովադիրը՝ Հիմնարկը: Հետևաբար, պարտապանի և պարտատիրոջ համընկնմամբ պարտավորության դադարման վերաբերյալ Գատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների բովանդակությունից և էությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Գատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 15.05.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/4892/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/4892/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հմայակ Ղարիբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 30.03.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Հմայակ Ղարիբյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության /Ոստիկանություն/ Ոստիկանության 11.08.2009 թվականի թիվ 5/40-2012 և 20.10.2009 թվականի թիվ 1508 վարչական ակտերը վերացնելու և երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվելու համար բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Հմայակ Ղարիբյանը պահանջել է վերացնել Ոստիկանության 11.08.2009 թվականի թիվ 5/40-2012 և 20.10.2009 թվականի թիվ 1508 վարչական ակտերը և պարտավորեցնել Ոստիկանությանն ընդունելու զինժառանգողի երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվելու բարենպաստ վարչական ակտ, այն է՝ 1994 թվականի ապրիլի 12-ից մինչև 2009 թվականի ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածի համար իր զինվորական ծառայության ստաժը հաշվառել արտոնյալ պայմանով՝ 1 ամսվա ծառայությունը 1,5 ամիս, և 24 տարի 5 ամիս 23 օր կազմող զինվորական ծառայության ստաժով իրեն նշանակել զինժառանգողի երկարամյա ծառայության կենսաթոշակ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.03.2010 թվականի վճռով հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հմայակ Ղարիբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել «Զինժառանգողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» կետը, չի կիրառել «Էրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշմամբ հաստատված «Երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում հաշվառվող, այդ թվում արտոնյալ պայմաններով ծառայողական կամ այլ բնույթի գործունեության տեսակների ցանկի, հաշվառման կարգի ու պայմանների» /այսուհետ՝ ՀՀ կառավարության 1993 թվականի թիվ 277 որոշման կարգ/ 2-րդ մասի 3-րդ կետի «դ» ենթակետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, խախտելով «Էրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածը, հետադարձ ուժ է տվել Հմայակ Ղարիբյանի իրավունքները սահմանափակող ակտին՝ ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշմամբ հաստատված «Զինժառանգողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում հաշվառվող, այդ թվում՝ արտոնյալ պայմաններով, ծառայողական կամ այլ բնույթի գործունեության տեսակների ցանկին, հաշվառման կարգին ու պայմաններին» /այսուհետ՝ ՀՀ կառավարության 2000 թվականի թիվ 778 որոշման կարգ/: Մինչդեռ, Դատարանը

պարտավոր էր Հնայակ Ղարիբջանի ստաժն արտոնյալ կարգով հաշվարկելու համար կիրառել 26.05.1993-25.12.2000 թվականներին գործողության մեջ եղած ՀՀ կառավարության թիվ 277 որոշումը, քանի որ այդ որոշումը վերջինիս համար ավելի բարենպաստ պայմաններ է նախատեսում:

Ելնելով վերոգրյալից՝ Հնայակ Ղարիբջանի՝ 1994 թվականի ապրիլի 12-ից մինչև 2009 թվականի ապրիլի 3-ն ընկած ամբողջ ժամանակահատվածի զինվորական ծառայության ստաժը պետք է հաշվառել արտոնյալ պայմանով՝ 1 ամսվա ծառայությունը 1,5 ամիս, որի արդյունքում զինծառայողի երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժը կկազմի 24 տարի 5 ամիս 23 օր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գ-ատարանի 30.03.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն» ՊՈԱԿ-ի 18.11.2009 թվականի գրության համաձայն՝ Գ-յունրի քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1505-1610 մետր բարձրության վրա (գ.թ. 37):

2) Հնայակ Ղարիբջանը 31.10.1985 թվականից մինչև 06.12.1987 թվականը ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Այնուհետև, 12.04.1994 թվականից մինչև 03.04.2009 թվականն աշխատել է Ոստիկանության կադրերի համակարգում որպես Շիրակի մարզի քննչական բաժնի քննիչ (գ.թ. 33, 36):

3) Ոստիկանության կադրերի վարչության պետի 11.08.2009 թվականի գրությամբ մերժվել է զինծառայողի երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ Հնայակ Ղարիբջանի դիմումը (գ.թ. 31):

4) Ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության պետի 20.10.2009 թվականի գրությամբ կրկին մերժվել է Հնայակ Ղարիբջանի, զինծառայողի երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու խնդրանքը՝ աշխատանքից ազատվելու պահին 20 տարվա զինվորական ծառայության ստաժ չունենալու պատճառաբանությամբ (գ.թ. 32):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

«Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքից օգտվում են այն զինձառայողները, որոնք ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին ունեն առնվազն 20 տարվա զինվորական ծառայության ընդհանուր ժամկետ (ստամ):

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ զինձառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետի (ստամի) օրացուցային և զինվորական ծառայության ժամկետի (ստամի) արտոնյալ հաշվարկի, ինչպես նաև այլ բնույթի գործունեության տեսակների ցանկը, հաշվառման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների նշանակման կարգի և նրանց ապահովության ու արտոնությունների մասին» ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգի (այսուհետ՝ ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգ) 2-րդ մասի 3-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ զինձառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար արտոնյալ պայմաններով մեկ ամսվա ծառայությունը հաշվվում է 1,5 ամիս՝ 1973 թ. ապրիլի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 1500 մետր և ավելի բարձրության բարձր լեռնային վայրերում զինձառայությունը: Նշված որոշումը գործել է 1993-2000 թվականներին և ուժը կորցրել է 25.12.2000 թվականին:

««Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման կարգի (այսուհետ՝ ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման կարգ) 2-րդ մասի 3-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ զինձառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար արտոնյալ պայմաններով մեկ ամսվա ծառայությունը հաշվվում է 1,5 ամիս՝ 1973 թ. ապրիլի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 1500 մետր և ավելի, իսկ 1998 թվականի նոյեմբերի 30-ից՝ 1700-2000 մետր բարձրության զինձառայությունը: Նշված որոշումն ուժի մեջ է մտել 25.12.2000 թվականին:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգն առավել բարենպաստ պայմաններ է նախատեսել՝ ամրա-

գրելով զինժառայողի իրավունքը երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար արտոնյալ պայմաններով ծովի մակերևութից 1500 մետր և ավելի բարձրության մեկ ամսվա ծառայությունը 1,5 ամիս հաշվելու հնարավորություն: Փոխարենը ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման կարգը, որը սկսել է գործել 25.12.2000 թվականից, նախատեսում է զինժառայողի իրավունքը սահմանափակող նորմ, այն է՝ արտոնյալ պայմաններով զինժառայության ստաժը նույն կարգով հաշվարկելով արդեն 30.11.1998 թվականից՝ 1700-2000 մետր բարձրության զինժառայության դեպքում, այն պայմաններում, երբ 30.11.1998 թվականի դրությամբ գործել է ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գ-յունրի քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1505-1610 մետր բարձրության վրա, Հմայակ Ղարիբջանը 1985 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 1987 թվականի դեկտեմբերի 6-ը ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Այնուհետև, 1994 թվականի ապրիլի 12-ից մինչև 2009 թվականի ապրիլի 3-ը աշխատել է Ոստիկանության կադրերի համակարգում որպես Շիրակի մարզի քննչական բաժնի քննիչ:

Դատարանը պատճառաբանել է, որ Հմայակ Ղարիբջանի իրավական վիճակը վատթարացնող չի կարելի դիտարկել ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման այն նորմը, ըստ որի՝ ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշումն ուժը կորցնելու կապակցությամբ սահմանվել է մեկ ամսվա ծառայությունը մեկ ու կես ամիս հաշվելու նոր պայման, այն է՝ ծովի մակերևութից 1500 մետր և ավելի լեռնային վայրերում կատարած զինժառայությունը, որպես այդպիսին կարող է հաշվարկվել սկսած 01.04.1973 թվականից մինչև 30.11.1998 թվականը: Արդյունքում, Դատարանը Հմայակ Ղարիբջանի աշխատանքային ստաժն արտոնյալ պայմաններով, այսինքն՝ 1 ամսվա ծառայության դիմաց 1,5 ամիս, հաշվարկել է 12.04.1994-30.11.1998 թվականներն ընկած ժամանակաշրջանի համար, որից ստացված արդյունքին գումարել է 30.11.1998-03.04.2009 թվականներն ընկած ժամանակահատվածի զինժառայությունը՝ հաշվարկելով օրացուցային կարգով, այնուհետև գումարել է զինված ուժերում ծառայության 2 տարի 1 ամիս 6 օր ժամկետը և ստացել է 19 տարի 4 ամիս 12 օր: Արդյունքում, Դատարանը հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ աշխատանքից ազատվելու օրվա դրությամբ Հմայակ Ղարիբջանի աշխատանքային ստաժը չի բավականացնում երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման կարգը, որը ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգի համեմատությամբ նախատեսում է զինժառայողի իրավունքը սահմանափակող նորմ, հետադարձ ուժով տարածվում է նաև այդ ակտի ընդունումից առաջ ծագած հարաբերությունների վրա, ինչը ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի տեսանկյունից անթույլատրելի է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ 12.04.1994 թվականից

Ոստիկանության կադրերի համակարգում որպես Շիրակի մարզի քննչական բաժնի քննիչ աշխատելով՝ Հմայակ Ղարիբյանը օրինական սպասելիք է ունեցել, որ կենսաթոշակի անցնելու դեպքում իր ստաժը հաշվարկվելու է արտոնյալ կարգով՝ այդ պահին գործող ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգին համապատասխան:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման կարգով 30.11.1998 թվականից հետո ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշմամբ սահմանված կարգով հաշվարկի փոխարինումը չի ապահովում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի իրացումը, քանի որ ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման կարգն առավել վատթարացնող բնույթ ունեցող նորմով կարգավորում է մինչ որոշման ուժի մեջ մտնելը բարենպաստ նորմով կարգավորված հարաբերությունները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հմայակ Ղարիբյանի զինվորական ծառայության ստաժը հաշվարկելիս պետք է հիմք ընդունել մինչև 25.12.2000 թվականը գործող, ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգով ամրագրված պայմանները, այն է՝ 12.04.1993 թվականից մինչև 25.12.2000 թվականը վերջինիս ստաժը պետք է հաշվառել արտոնյալ կարգով՝ մեկ ամսվա ծառայությունը հաշվելով 1,5 ամիս: Այնուհետև՝ ստացված արդյունքին պետք է օրացուցային, այսինքն՝ ոչ արտոնյալ կարգով հաշվառել և գումարել մնացած տարիների՝ 25.12.2000-03.04.2009 թվականներն ընկած ժամանակաշրջանի զինվորական ծառայությունը՝ համաձայն այդ ժամանակ գործող, ՀՀ օրենսդրության:

Վերոգրյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտը ենթակա է բեկանման, և գործը պետք է ուղարկել նոր քննության՝ վերոնշյալ ուղղությամբ Հմայակ Ղարիբյանի աշխատանքային ստաժի վերահաշվարկ կատարելու նպատակով:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ 12.04.1994 թվականից մինչև 03.04.2009 թվականն ընկած ամբողջ ժամանակահատվածի զինվորական ծառայության ստաժը պետք է հաշվառել արտոնյալ պայմանով՝ 1 ամսվա ծառայությունը 1,5 ամիս, ապա Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Վերոնշյալից հետևում է, որ այն դեպքերում, երբ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում, այդ ակտի գործողությունը տարածվում է միայն մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, չի տարածվում դրանից հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Այսպիսով՝ սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 30.03.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/1656/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Սիրգոյան

Վարչական գործ թիվ ՎԳ/1656/05/08
2008թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը
(այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Մարտիրոսյանի վճռաբեկ
բողոքը Վարչական դատարանի 23.07.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Ասիյա Մար-
կոսյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթի քաղապետա-
րանի, երրորդ անձինք Հասմիկ Մարտիրոսյանի, Հայկարամ Հակոբյանի՝ Երևանի
քաղաքապետի 10.11.1997 թվականի թիվ 1279 որոշումն անվավեր ճանաչելու պա-
հանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ասիյա Մարկոսյանը պահանջել է անվավեր ճանաչել
Երևանի քաղաքապետի 10.11.1997 թվականի թիվ 1279 որոշումը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.07.2008 թվականի վճռով
հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Մարտիրոսյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ասիյա Մարկոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքո-
հիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, ՀՀ բնակարանային օրենսգրքի 34-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը, ՀՀ բնակարանային օրենսգրքի 59-րդ, 60-րդ հոդվածները, «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկ-ներով.

Դատարանը հաշվի չի առել, որ Ասիյա Մարկոսյանը 1980 թվականին ընտանեկան անախորժությունների հետևանքով 11.12.1980 թ. թվագրմամբ «անհայտ հասցե» նշումի կատարմամբ, դուրս է եկել Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի թիվ 38 հասցեում գտնվող բնակարանի հաշվառումից և շուրջ 30 տարուց ավելի չի բնակվում վիճելի հասցեում:

Հետևաբար, Ասիյա Մարկոսյանը ոչ թե «ժամանակավոր բացակայող է» եղել, այլ այդ իրավունքը «կորցրած», քանի որ նա ամուսնացել է Արբակ Իսրաելյանի հետ և 1982 թվականին հաշվառվել և մշտական բնակության է տեղափոխվել Երևանի Շիրակի փողոցի 54 շենքի թիվ 1 հասցեում գտնվող բնակարան, դուրս գալով Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի թիվ 38 բնակարանի հաշվառումից: Այսպիսով, Ասիյա Մարկոսյանը չէր կարող միաժամանակ հաշվառված լինել երկու բնակարաններում:

Ասիյա Մարկոսյանը Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 14.07.1994 թվականի թիվ 20/173 որոշմամբ, որպես հաշվառված անձ, մասնակցել է Երևանի Շիրակի փողոցի 54 շենքի թիվ 1 բնակարանի սեփականաշնորհմանը և դարձել այդ բնակարանի 1/6 բաժնի սեփականատեր:

Բացի այդ, Դատարանը հաշվի չի առել, որ Երևանի քաղաքապետի 10.11.1997 թվականի թիվ 12/79 որոշմամբ վիճելի բնակարանը թույլատրվել է սեփականաշնորհել Գուրգեն Սարգսյանի և Վազգանուշ Անտոնյանի անվամբ՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն: Ուստի, Երևանի քաղաքապետի վիճարկվող որոշումն ընդունվել է ոչ թե օրենքի խախտմամբ, այլ տվյալ իրավահարաբերության ծագման պահին գործող «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի

դրույթներին համապատասխան:

Ավելին, Ասիյա Մարկոսյանը վիճելի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել Շենգավիթի թաղապետարանի կողմից՝ նվիրատվության պայմանագրի հիման վրա, որն էլ անվավեր է ճանաչվել Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 21.11.2007 թվականի վճռով (դրան օրինական ուժ է տրվել ՀՀ վճռաբեկ դատարանի 26.09.2008 թվականի թիվ 3-470 (ՎԳ) որոշմամբ):

2) Գատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186, 1225 և 1226 հոդվածները, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56 հոդվածը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Գատարանը հաշվի չի առել, որ Գուրգեն Սարգսյանի առաջին հերթի ժառանգ Հասմիկ Մարտիրոսյանը հոր մահից հետո վեցամսյա ժամկետում՝ 10.06.2005 թվականին, ընդունել է նրա ժառանգությունը՝ հայտարարություն տալով նոտարական գրասենյակում:

Ավելին, 10.06.2005 թվականի հայտարարությունը, 05.08.2005 թվականի համատիրության կողմից տրված տեղեկանքը և պետական կոմունալ վճարման անդորրագրերը հաստատում են այն հանգամանքը, որ Հասմիկ Մարտիրոսյանը, դեռևս 1994 թվականից սկսած, իր երեխաների հետ փաստացի ապրել է վիճելի բնակարանում, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսերը և վճարել ժառանգատուի պարտքերը, դրանով իսկ ընդունելով ժառանգությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 23.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Գատարանը ճիշտ է կիրառել ՀՀ բնակարանային օրենսգրքի 59-րդ հոդվածը՝ հաստատված համարելով Ասիյա Մարկոսյանի՝ վիճելի բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունքի պահպանման փաստը, քանի որ այն դատական կարգով կորցված չի ճանաչվել: Տվյալ դեպքում Ասիյա Մարկոսյանի վարձակալության իրավունքը ճանաչվել է 16.06.1977 թվականի վճռով և պահպանվել է բնակարանի սեփականաշնորհման պահին, իսկ բնակարանի հաշվառումից դուրս գրվելը կատարվել է ոչ օրինական հիմքերով:

Ինչ վերաբերում է Հասմիկ Մարտիրոսյանի կողմից ժառանգությունն ընդունելու փաստին, ապա այն սույն գործի քննության համար էական նշանակություն չունի, քանի որ Ասիյա Մարկոսյանի կողմից վիճարկվել է ոչ թե Երևանի քաղաքապետի նշված որոշման ուժով Գուրգեն Սարգսյանի սեփականության իրավունքի և Հասմիկ Մարտիրոսյանի ժառանգության իրավունքի առաջացման փաստը, այլ՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ Ասիյա Մարկոսյանի իրավունքների խախտման փաստը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի թիվ 38 հասցեում գտնվող բնակարանի հաշվառման քարտի համաձայն՝ Ասիյա Մարկոսյանը 11.12.1980 թվականին «անհայտ հասցե» նշումի կատարմամբ դուրս է գրվել նշված հասցեից (գ. թ. 10):

2) Ասիյա Մարկոսյանը 28.01.1982 թվականից հաշվառված է Երևանի Շիրակի փողոցի 54 շենքի թիվ 1 բնակարանում (գ. թ. 5):

3) Երևանի քաղաքապետի 10.11.1997 թվականի թիվ 1279 որոշմամբ թույլատրվել է Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի թիվ 38 բնակարանը սեփականաշնորհիել Գուրգեն Սարգսյանի և Վազգանուշ Անտոնյանի անվամբ, որպես ընդհանուր համատեղ սեփականություն (գ. թ. 8):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

29.06.1993 թվականին ընդունված և 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սեփականաշնորհման սուբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ բնակարանային ֆոնդի բնակարանների սեփականաշնորհումն, ընտանիքի չափահաս անդամների համաձայնության դեպքում, ձևակերպվում է տվյալ բնակարանի վարձակալի անունով, կամ նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի անունով՝ որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ, կամ ընդհանուր բաժնային սեփականություն: Վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսգրքի համաձայն՝ վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակտարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում բոլոր պարտականությունները, ինչ-

պես նաև օգտվում են բնակարանների սեփականաշնորհումից բխող իրավունքներից:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք երեք պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այդպիսիք են՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը, ինչպես նաև բնակարանի վարձակալի ընտանիքի անդամ լինելը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի թիվ 38 բնակարանը Երևանի քաղաքապետի 10.11.1997 թվականի թիվ 1279 որոշմամբ թույլատրվել է սեփականաշնորհել Գուրգեն Մարսգայանի և Վազգանուշ Անտոնյանի անվամբ՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն: Ասիյա Մարկոսյանը 11.12.1980 թվականին «անհայտ հասցե» նշումի կատարմամբ դուրս է գրվել Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի թիվ 38 հասցեից և 28.01.1982 թվականից հաշվառվել է Երևանի Շիրակի փողոցի 54 շենքի թիվ 1 բնակարանում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ասիյա Մարկոսյանը, 11.12.1980 թվականին դուրս գալով Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի թիվ 38 հասցեից և 28.01.1982 թվականին հաշվառվելով Երևանի Շիրակի փողոցի 54 շենքի թիվ 1 բնակարանում, սեփականաշնորհման պահին վեճի առարկա բնակտարածությունում գրանցում չուներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վեճի առարկա բնակարանի սեփականաշնորհման պահին Ասիյա Մարկոսյանի մոտ առկա չէր սեփականաշնորհման սուբյեկտ լինելու համար վերը նշված երեք պարտադիր վավերապայմաններից մեկը՝ բնակտարածությունում գրանցումը: Հետևաբար, Ասիյա Մարկոսյանը «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ուժով սեփականաշնորհման սուբյեկտ չէ:

Այսպիսով, վերը նշված հանգամանքները հաշվի առնելով, Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ Երևանի քաղաքապետի 10.11.1997 թվականի թիվ 1279 որոշումն ընդունվել է տվյալ իրավահարաբերության ժամանակ գործող օրենքներին համապատասխան:

2) Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին, ապա Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում, քանի որ Հասմիկ Մարտիրոսյանի ժառանգության իրավունքի առաջացման փաստը Ասիյա Մարկոսյանի կողմից սույն վարչական գործով չի վիճարկվել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դա-

տական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 23.07.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. Ասիյա Մարկոսյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0249/05/09
Նախագահող դատավոր՝ Բ. Սկոյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0249/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի հունիսի 25-ին
դմբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 06.10.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Գայանե Չաքարյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 08.05.2008 թվականի թիվ 2030-Ա որոշումն անվավեր ճանաչելու և Երևանի քաղաքապետարանին՝ ՀՀ կառավարության 20.03.2008 թվականի թիվ 294-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի «դ» ենթակետի 2-րդ մասի պահանջին համապատասխան բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գայանե Չաքարյանը պահանջել է անվավեր ճանաչել

Երևանի քաղաքապետի 08.05.2008 թվականի թիվ 2030-Ա որոշումը և պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին, ՀՀ կառավարության 20.03.2008 թվականի թիվ 294-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի «դ» ենթակետի 2-րդ մասի պահանջին համապատասխան բարենպաստ վարչական ակտ ընդունելու:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 06.10.2009 թվականի վճռով հայրը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գայանե Չաքարյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 25.10.2000 թվականի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին թիվ 682 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման կարգի (այսուհետ՝ Կառավարության որոշմամբ հաստատված կարգ) 3-րդ կետի «ա» և «գ» ենթակետերը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.

Դատարանի կողմից պատշաճ չի գնահատվել այն փաստը, որ համաձայն հաստատված Կարգի 3-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի՝ վարձակալներին և սեփականատերերին բնակարանի հատկացումը կամ շուկայից բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցության տրամադրումը կամ դրամական փոխհատուցումը տրվում է նախկինում զբաղեցրած բնակարանի (սենյակների թվով) չափին համապատասխան, ինչը և կատարվել է «Միսակյան փողոցի հ. 22 քանդման ենթակա չորրորդ կարգի վթարային շենքի հ. 11 բնակարանի բնակիչներին վերաբնակեցնելու և բնակարան հատկացնելու մասին» Երևանի քաղաքապետի 08.05.2008 թվականի թիվ 2030-Ա որոշմամբ (այսուհետ՝ Քաղաքապետի որոշում), քանի որ դրա հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Գայանե Չաքարյանի ընտանիքի կողմից նախկինում զբաղեցրած, Երևանի Միսակյան փողոցի 22 շենքի

թիվ 11 մեկսենյականոց բնակարանի ընդհանուր մակերեսը կազմել է 27.7քմ, իսկ Քաղաքապետի որոշմամբ հատկացված, Երևանի Ա.Բաբաջանյան փողոցի 26/6 շենքի թիվ 26 բնակարանը կազմում է 48.2քմ մակերես:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 06.10.2009 թվականի վճիռը և այն փոփոխել, Գայանե Չաքարյանի հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Քաղաքապետի որոշումը կայացվել է ՀՀ կառավարության 25.10.2000 թվականի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին թիվ 682 որոշման հիմքով, սակայն չի կիրառել Կառավարության որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի «դ» ենթակետի պահանջները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Լենինգրադյան 48/1» համատիրության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գայանե Չաքարյանի ընտանիքը 1990 թվականից **հաշվառվել և փաստացի** բնակվել է Երևանի Սիսակյան փողոցի 22 շենքի թիվ 11 մեկսենյականոց բնակարանում (գ.թ. 1-ին հատոր 82):

2) Գայանե Չաքարյանի ընտանիքի կողմից նախկինում զբաղեցրած, Երևանի Սիսակյան փողոցի 22 շենքի թիվ 11 մեկսենյականոց բնակարանի ընդհանուր մակերեսը կազմել է 27.7քմ (գ.թ. 2-րդ հատոր 13):

3) Քաղաքապետի որոշմամբ Սիսակյան փողոցի վթարային 22 շենքի թիվ 11 մեկսենյականոց բնակարանի անձնագրային հաշվառում ունեցող Գայանե Չաքարյանի ընտանիքին չորս անձով հատկացվել է Երևանի Ա.Բաբաջանյան փողոցի 26/6 շենքի թիվ 26 բնակարանը (գ.թ. 1-ին հատոր 77):

4) Գայանե Չաքարյանի ընտանիքին Քաղաքապետի որոշմամբ հատկացված, Երևանի Ա.Բաբաջանյան փողոցի 26/6 շենքի թիվ 26 բնակարանի մակերեսը 48.2քմ է (գ.թ. 2-րդ հատոր 41):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը** պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես՝ Կառավարության որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն, քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցումը կատարվում է հետևյալ կարգով՝

դ) վթարային բնակարաններում՝ նախկին գործադիր մարմինների, Երևանի քաղաքապետի, Երևանի թաղային համայնքների ղեկավարների որոշումների կամ դատարանի՝ սահմանված կարգով ուժի մեջ մտած վճիռների հիման վրա բնակվող, ինչպես նաև 2006 թվականի հոկտեմբերի 12-ը այդ բնակարաններում անձնագրային հաշվառում ունեցող և փաստացի բնակվող բնակիչներին՝ բնակարանի հատկացման կամ շուկայից բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 309-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով ֆինանսական աջակցության տրամադրում՝ նախկինում զբաղեցրած բնակարանի (սենյակների թվով) չափից մեկ սենյակ (1-սենյականոց բնակարանի դեպքում՝ 1-սենյականոց բնակարան) պակաս բնակարանի (սենյակների թվով) չափին համապատասխան, բայց ոչ ավելի, քան նրանց ընտանիքներին (անձերի թվով)՝ սույն ենթակետով սահմանված հասանելիք բնակարանի (սենյակների թվով) չափից:

Վերոնշյալից հետևում է, որ նոր հատկացվող բնակելի տարածությունների բնակարանի սենյակների թիվը (քանակը) չպետք է պակաս լինի նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվից (քանակից): Բացի այդ, նոր հատկացվող բնակելի տարածությունների չափը (մակերեսը) չպետք է պակաս լինի նախկինում զբաղեցրած բնակարանի չափից (մակերեսից):

Կառավարության որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ հաշվառված և փաստացի բնակվող վարձակալներին, փախստականներին, սեփականատերերին, անձնագրային հաշվառում ունեցող և փաստացի բնակվող բնակիչներին բնակելի

տարածության ապահովման հիմքում դրվել է **նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվի և չափի** համապատասխանության սկզբունքը: Սա նշանակում է, որ սենյակների թիվ ասելով պետք է հասկանալ նախկինում զբաղեցրած **սենյակների քանակը**, իսկ չափ ասելով պետք է հասկանալ նախկինում զբաղեցրած բնակարանի **փաստացի մակերեսը**: Ուստի, քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման հիմքով բնակարանների հատկացումը ելնում է **նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվի և չափի** սկզբունքից, այլ ոչ թե անձերի քանակից:

Սույն գործով Գատարանի եզրահանգումն այն մասին, որ Քաղաքապետի որոշմամբ ընդունվել է «միջամտող վարչական ակտ, քանի որ դրանով վատթարացել է հայցվորի և նրա ընտանիքի փաստացի դրությունը», անհիմն է, քանի որ քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Գայանե Չաքարյանի ընտանիքը վթարային շենքում նախկինում զբաղեցրել է **մեկսենյականոց** բնակարան, իսկ Քաղաքապետի որոշմամբ հատկացվել է **մեկսենյականոց** բնակարան, այսինքն՝ նախկինում զբաղեցրած բնակարանի **սենյակների քանակը** պահպանվել է, ավելին, Գայանե Չաքարյանի ընտանիքը վթարային շենքում նախկինում զբաղեցրել է **27.7քմ** ընդհանուր մակերեսով բնակարան, իսկ Քաղաքապետի որոշմամբ հատկացվել է **48.2քմ** ընդհանուր մակերեսով բնակարան, այսինքն՝ նախկինում զբաղեցրած բնակարանի **փաստացի մակերեսից** (չափից) ավել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինը ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետը սահմանում է. «**բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծվում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման**»:

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Գատարանի եզրահանգումը, որ ընդունվել է միջամտող վարչական ակտ, և արձանագրում է, որ Քաղաքապետի որոշումը բարենպաստ վարչական ակտ է, քանի որ դրանով Գայանե Չաքարյանի ընտանիքի անդամների համար բարելավվել են բնակարանային պայմանները:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դա-

տական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն վարչական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 06.10.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Գայանե Ջաքարյանի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/5525/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/5525/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի ապրիլի 17-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 29.10.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկա-
յին տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) հայցի ընդդեմ «Ձորջ ընդ Բրանդն» ՍՊԸ-
ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 131.200 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից
131.200 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.10.2008 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն՝ 83.000 ՀՀ դրամի չափով, իսկ եկամտահարկի գծով առաջադրված 34.000 ՀՀ դրամ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջադրված 14.200 ՀՀ դրամ տույժերի մասով հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 24-րդ և 26-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն տույժերը հաշվարկված լինելու փաստի ապացուցումը վեճի լուծման համար համարելով էական, չի պահանջել ներկայացնելու այդ փաստի ապացույցները և չի ձեռնարկել ողջամիտ միջոցներ՝ ապացույցներ ձեռք բերելու համար, այլ՝ փաստը վիճելի է դիտել՝ բավարարվելով գործում առկա գրավոր ապացույցների հետազոտմամբ:

Փաստորեն, Դատարանը, խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը և 26-րդ հոդվածը, փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատված լինելու մասին ներքին համոզմունք ձևավորելու նպատակով չի պահանջել լրացուցիչ ապացույցներ, ինչի արդյունքում գործի նյութերը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակի՝ հայրը մերժելու մասով, բեկանել Դատարանի 29.10.2008 թվականի վճիռը և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Դատարանը գործում առկա գրավոր ապացույցներով ապացուցված չի համարել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքն այն մասին, որ Ընկերությանը եկամտահարկի գծով առաջադրված 34.000 ՀՀ դրամ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջադրված 14.200 ՀՀ դրամ տույժերը հաշվարկվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ

հողվածի 1-ին պարբերության համաձայն՝ Տեսչությունից չպահանջելով նշված փաստը հավաստող ապացույցներ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով, Դատարանը, մերժելով հայցի՝ եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջադրված տույժերի մասը, պատճառաբանել է, որ գործում առկա գրավոր ապացույցներով չապացուցվեց, որ Ընկերությանը եկամտահարկի գծով առաջադրված 34.000 ՀՀ դրամ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջադրված 14.200 ՀՀ դրամ տույժերը հաշվարկվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, տվյալ փաստի ապացուցման բեռը դնելով Տեսչության վրա, պետք է վերջինիցս պահանջեր ներկայացնելու նշված փաստի ապացույցները:

Մինչդեռ, Դատարանը, առանց Տեսչությունից համապատասխան ապացույցներ պահանջելու, այդ փաստը հիմնավորված չի համարել՝ այդ հանգամանքը դնելով հայցը մասնակիորեն բավարարելու հիմքում:

ՀՀ վճռաբեկ դատարանն արդեն իսկ անդրադարձել է նշված իրավական խնդրին (Տե՛ս՝ օրինակ՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական

ծառայության Աշտարակի տարածքային հարկային տեսչության հայցի ընդդեմ Ժորա Դանիելովի՝ 5.670.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և Ժորա Դանիելովի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ 08.05.2008 թվականի թիվ 2326225 ակտը վերացնելու պահանջի մասին, թիվ ՎԳ-3/0207/05/08 (2008թ.) վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Դատարանի իրավունքն է, սակայն, Դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու Դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 29.10.2008 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը, և այդ մասով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-5/0316/05/08
Նախագահող դատավոր՝ Էդ. Նահապետյան

Վարչական գործ թիվ ՎԴ-5/0316/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Ուսումնասիրելով՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2009 թվականի դեկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 30.04.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ անհատ ձեռնարկատեր Արմեն Դարմոյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտուների կոմիտեի Արթիկի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ստուգման ակտը փոփոխելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական մախապատմությունը.

Գիմելով դատարան՝ Արմեն Դարմոյանը պահանջել է փոփոխել Տեսչության 28.10.2008 թվականի թիվ 1101377 ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.04.2009 թվականի վճռով հայրը բավարարվել է: Վճռվել է Տեսչությանը պարտավորեցնել Արմեն Գարմոյանի անձնական հաշվի քարտում կատարել վերահաշվարկ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 24-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործում որևէ ապացույց չկա այն մասին, որ ապրանքները պատկանում են այլ կազմակերպությանը կամ Արմեն Գարմոյանի առօրյա օգտագործման ապրանքներ են, և որքան է կազմում դրանց գումարը: Ընդհակառակը, գործում գտնվող ապացույցները հերքում են Արմեն Գարմոյանի բերած և Դատարանի հաստատած փաստարկներն այն մասին, որ արձանագրության 1, 2, 8, 11, 12, 16, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26 կետերում նշված ապրանքները գրանցված են գրանցման գրքում: Մասնավորապես, գրանցման գրքում առկա գրառումներից երևում է, որ արձանագրության 1-9, 13-15, 17-21, 23-28 կետերում նշված ապրանքները գրանցված չեն, իսկ 11, 12, 16, 22 կետերում նշված ապրանքների գների փոփոխությունը կատարվել է գույքագրումից հետո՝ 16.10.2008 թվականին, հետևաբար՝ նշված հանգամանքները ստուգման արդյունքների հետ կապ ունենալ չեն կարող:

Այսպիսով, Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չզննահատելով գործում եղած բոլոր ապացույցները, այն է՝ լիազորված անձի ստորագրած գույքագրման ակտերը, գրանցման գրքերը, չգրանցված ապրանքների մասին 15.10.2008 թվականի արձանագրությունը, 28.10.2008 թվականի թիվ 1101377 ակտը, 15.10.2008 թվականի՝ Սևակ Ղազարյանի հայտարարությունը՝ Արմեն Գարմոյանի լիազորված անձ համարվելու և լիազորագիրը ներկայացնելու վերաբերյալ, որոշում է կայացրել փաստի հաստատված լինելու մասին:

Դատարանը, կարևորելով Արմեն Գարմոյանի կողմից Սևակ Ղազարյանին լիազորելու փաստը, կողմերից չի պահանջել ներկայացնել այդ փաստը հաստատող ապացույցը՝ լիազորագիրը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 17.04.2009 թվականի թիվ ՎԳ-5525/05/08 որոշմամբ նշված իրավական խնդրի վերաբերյալ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 30.04.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 14.10.2008 թվականի թիվ 1101377 հանձնարարագրի հիման վրա Արմեն Գարմոյանի մոտ ՀՀ օրենսդրությամբ հարկային ծառայության մարմնին վերապահված իրավասության սահմաններում կատարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկաների (առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների) գրանցման ճշտության ստուգում (գ.թ. 22):

2) 15.10.2008 թվականին կազմվել է արձանագրություն, որում նշվել են արտադրանքի, ապրանքների և դրանց գների գրանցման (հաշվառման) գրքերում չգրանցված ապրանքների տեսակը, քանակը և գինը: Նշված արձանագրությունը ստորագրել է նաև որպես Արմեն Գարմոյանի լիազորած անձ հանդես եկող Սևակ Գազարյանը: Վերջինս Արմեն Գարմոյանի լիազորած անձը հանդիսանալու վերաբերյալ 15.10.2008 թվականին տվել է հայտարարություն, ինչպես նաև ստորագրել է 15.10.2008 թվականին կազմված գույքագրման ակտերը (գ.թ. 8, 27, 28-32):

3) Ստուգման արդյունքում 28.10.2008 թվականին կազմվել է թիվ 1101377 ակտը, որով արձանագրվել է, որ «Ա/Չ Արմեն Գարմոյանի մոտ 15.10.2008թ-ին կատարված գույքագրման արդյունքում պարզվեց, որ նրան պատկանող ք. Արթիկ, Անկախության 31 և Անկախության 42ա հասցեներում գտնվող առևտրի օբյեկտներում առկա ընդամենը ընդհանուր գումարով 5649,0 հազ. դրամի ապրանքներ գրանցված չէին արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) համապատասխանաբար N 3215 և N 3214 գրքերում: Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասը, զանձվում է տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25 տոկոսի չափով՝ գումարով 1412,3 (5649,0 X 25%) հազ. դրամ» (գ.թ. 7):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մաս-

նակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Դատարանի իրավունք է, սակայն Դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու Դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*տե՛ս, օրինակ՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության հայցի ընդդեմ «Ջորջ ընդ Բրանդն» ՍՊԸ-ի՝ 131.200 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, թիվ ՎԴ/5525/05/08 (2009թ.) վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ ստուգման ակտի հիմք հանդիսացող 15.10.2008 թվականին կազմված արձանագրությունը Արմեն Դարմոյանի անունից ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը:

Մինչդեռ, Դատարանը, կարևորելով 15.10.2008 թվականին կազմված արձանագրությունն Արմեն Դարմոյանի լիազորած անձի կողմից ստորագրված լինելու փաստը և նշված փաստի ապացուցման բեռը դնելով Տեսչության վրա, պարտավոր էր պահանջել ներկայացնել այդ փաստի ապացույցները, սակայն Դատարանը, առանց համապատասխան ապացույցներ պահանջելու, վերոգրյալ փաստը հիմնավորված չի համարել և այդ հանգամանքը դրել է հայցը բավարարելու հիմքում: Բացի այդ, սույն գործում առկա են հայտարարություններ՝ տրված Սևակ Ղազարյանի՝ որպես ներկայացուցչի կողմից այն մասին, որ կից ներկայացնում է Արմեն Դարմոյանի կողմից տրված լիազորագիրը: Հայտարարություններով Սևակ Ղազարյանը հայտնել է նաև, որ ծանոթացել է հանձնարարագրին և ստուգումը փաստացի սկսվել է, ինչպես նաև հայտնել է, որ փաստացի գների անհամապատասխանության պատճառով 5.649.000 ՀՀ դրամի ապրանք գրանցված չէր հաշվառման գրքերում, ինչը հաշվապահի կողմից գները հաշվառման գրքում սխալ գրանցելու արդյունքում է առաջացել: Սևակ Ղազարյանը՝ որպես ներկայացուցիչ, ստորագրել է նաև գույքագրման ակտերը: Նշված ապացույցները Դատարանը չի գնահատել և չի պահանջել նաև գույքագրման ակտերը Սևակ Ղազարյանի կողմից ստորագրելու լիազորու-

թյան վերաբերյալ հիմքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված նորմերից հետևում է, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Սույն գործով, Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է նաև այն հանգամանքները, որ ստուգողները չեն ճշտել Արմեն Դարմոյանին պատկանող գույքը, չեն ստուգել վերջինիս պատկանող փաստաթղթերը, որի արդյունքում արձանագրության մեջ հաշվառվել է այլ կազմակերպությանը պատկանող և առօրյա օգտագործվող գույք: Ստուգողների արձանագրած ապրանքների մեծ մասը գրանցված էր համապատասխան գրքում, չնայած դրան, տարբերություն կար վաճառքի և գրանցման գրքում նշված գների մեջ, որը վերաբերում է արձանագրության 1, 2, 8, 11, 12, 16, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26 համարներում նշված ապրանքներին:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ Դատարանը նշված փաստերը համարել է հաստատված, սակայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և չի գնահատել սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գույքագրման ակտերը, գրանցման գրքերը, չգրանցված ապրանքների մասին 15.10.2008 թվականի արձանագրությունը, 28.10.2008 թվականի թիվ 1101377 ակտը:

Այսպես, գործում առկա չէ որևէ ապացույց, որը թույլ կտար Դատարանին եզրահանգում անել այն մասին, որ արձանագրության մեջ նշված գույքը պատկանում է այլ կազմակերպությանը կամ Արմեն Դարմոյանի առօրյա օգտագործման գույք է:

Ավելին, գործում առկա ապացույցներով հերքվում է նաև Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ ստուգողների արձանագրած ապրանքների մեծ մասը գրանցված էր համապատասխան գրքում, քանի որ գործում առկա գրանցման գրքերում արված գրառումներից երևում է, որ արձանագրությամբ նշված որոշ ապրանքներ գրանցված չեն, իսկ որոշ ապրանքների գների փոփոխությունը կատարվել է 16.10.2008 թվականին, այսինքն՝ գույքագրման ակտերի կազմումից հետո, ինչը ևս չի հետազոտվել և գնահատվել Դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 30.04.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ԵԱԲԳ/1369/02/09
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ԵԱԲԳ/1369/02/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 03-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) և Հայկ Մարզարյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական դատարանի 29.04.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Դատախազության հայցի ընդդեմ Հայկ Մարզարյանի՝ կենսաթոշակի վճարումը 2008 թվականի սեպտեմբերի 1-ից դադարեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է 2008 թվականի սեպտեմբերի 1-ից դադարեցնել Հայկ Մարզարյանի կենսաթոշակի վճարումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 07.08.2009 թվականի որոշմամբ գործը հանձնվել է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.04.2010 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է վեճը Դատարանին ընդդատյա չլինելու հիմքով:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Դատախազությունը և Հայկ Մարգարյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Դատախազության վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը, չի կիրառել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի պահանջներով, գտել է, որ ՀՀ վարչական դատարանը կարող է քննել միայն այն գործերը, որոնք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան ընդդատյա են ՀՀ վարչական դատարանի քննությանը և մեկնաբանելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ պատճառաբանել է, որ «երկարամյա ծառայության կենսաթոշակի վճարումը դադարեցնելու պահանջը չի ներառված վերոնշյալ իրավական նորմի պահանջների մեջ»: Նշված իրավական դիրքորոշման համար հիմք է ընդունել նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածը՝ պատճառաբանելով, որ ինչպես նշված օրենքը, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածն ամրագրել է մոտեցում, ըստ որի՝ կենսաթոշակի իրավունքից անձը չի կարող զրկվել:

Դատարանը պատճառաբանել է նաև, որ «կենսաթոշակի դադարեցումը ոչ թե հանրային իրավահարաբերություններից ծագող գործ է, այլ տվյալ պարագայում առկա են սոցիալական ապահովության իրավահարաբերություններ: Նշված պահանջով պայմանավորված որևէ վարչարարություն չի իրականացվում, հետևաբար՝ ներկայացված պահանջն արդյունք չէ պատասխանողի նկատմամբ իրականացված վարչարարության»:

Մինչդեռ, Դատարանը հաշվի չի առել, որ Հայկ Մարգարյանին կենսաթոշակ նշանակելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ 299 հրամանը բարենպաստ վարչական ակտ է:

Այսինքն՝ այդ բարենպաստ վարչական ակտով կենսաթոշակ նշանակող մարմնի որոշման հիման վրա քաղաքացու և սոցիալական ապահովության մարմնի միջև ծագում են որոշակի հասարակական հարաբերություններ, որոնց համաձայն քաղաքացին իրավունք է ձեռք բերում պարբերաբար, օրենքով սահմանված ժամկետներում և չափով ստանալու կենսաթոշակ, իսկ սոցիալական ապահովության մարմինը պարտավորվում է վճարել այն: Վերջիններս, ի տարբերություն մասնավոր իրավական հարաբերությունների, խարսխված չեն հավասարության, կամքի ինքնավարության և դրանց մասնակիցների գույքային ինքնուրույնության սկզբունքների վրա, ընդհակառակը, հիմնվում են վարչական կամ այլ ենթակայության վրա, հետևաբար՝ ունեն ոչ թե քաղաքացիական, այլ վարչական բնույթ:

Հետևաբար, ինչպես բարենպաստ վարչական ակտերով անձանց տրամադրված իրավունքները կամ այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման (վարչական ակտ) բխում են հանրային իրավահարաբերություններից, այնպես էլ այդ ակտերի հասցեատերերին դրանցով տրամադրված իրավունքներից զրկումը /դադարեցումը/ բխում է հանրային իրավահարաբերություններից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 29.04.2010 թվականի վճիռը:

2.1. Հայկ Մարգարյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը պատճառաբանել է, որ կենսաթոշակի դադարեցումը ոչ թե հանրային իրավահարաբերություններից ծագող վեճ է, այլ՝ տվյալ պարագայում առկա են սոցիալական ապահովության իրավահարաբերություններ: Մինչդեռ, Դատարանը հաշվի չի առել, որ Դատախազությունը, ներկայացնելով կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հայցապահանջ, հանդես է եկել ոչ թե իր սեփական, այլ պետական շահերի պաշտպանությամբ: Այսինքն՝ ներկայացնելով կենսաթոշակի վճարումը դադարեցնելու պահանջ՝ պետական մարմինը հանդես է եկել ոչ թե իր սեփական, այլ ընդհանուր պետական շահերի պաշտպանությամբ, քանի որ կենսաթոշակը վճարվում է պետական բյուջեից, ուստի, եթե կենսաթոշակը վճարվի անօրինական ձևով, կվնասվի պետական շահը:

Բացի այդ, Դատարանը պատճառաբանել է նաև, որ «Նշված պահանջով պայմանավորված որևէ վարչարարություն չի իրականացվում, հետևաբար ներ-

կայացված պահանջն արդյունք չէ պատասխանողի նկատմամբ իրականացված վարչարարության»: Մինչդեռ, Գատարանն անտեսել է, որ Գատախագության կողմից վարչարարություն է իրականացվել, որը հաստատվել է թիվ ՎԳ/7019/05/08 վարչական գործի դատաքննությամբ:

Բացի այդ, Գատարանը հաշվի չի առել, որ նախևառաջ խնդիրը վերաբերում է ոչ թե անձին ընդհանրապես կենսաթոշակի իրավունքից զրկելուն, այլ որոշակի հիմքերի առկայությամբ նրան կենսաթոշակի տվյալ տեսակի իրավունքից զրկելուն, որը չի բացառում սոցիալական ապահովության մեկ այլ միջոցից օգտվելու նրա իրավունքը, և որ կենսաթոշակից զրկումը կենսաթոշակի վճարման դադարեցման հարկադրական եղանակ է: Կենսաթոշակից զրկման միակ հիմքը կենսաթոշակառուի ոչ իրավաչափ վարքագիծն է, որի համար կենսաթոշակառուն ենթարկվում է իրավաբանական պատասխանատվության, եթե կենսաթոշակառուն թույլ է տվել օրենքով դրա համար հիմք հանդիսացող իրավախախտում:

Միաժամանակ, Գատարանը, հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-րդ հոդվածներին, պատճառաբանել է, որ «բացակայում է վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը»: Մինչդեռ, Գատարանն անտեսել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչման հայց է դիտարկել որևէ իրավահարաբերության առկայության կամ բացակայության ճանաչմանն ուղղված հայցը և դիմելով դատարան: Գատախագությունը պահանջել է դադարեցնել նշված իրավահարաբերությունը, այսինքն՝ ճանաչել դրա բացակայությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 29.04.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գլխավոր դատախազին ուղղված 01.06.2007 թվականի դիմումով Հայկ Մարգարյանը խնդրել է հիվանդության պատճառով իրեն ազատել աշխատանքից և նշանակել երկարամյա ծառայության կենսաթոշակ՝ դատախագության համակարգից: Դիմումին կից ներկայացրել է հիվանդության վերաբերյալ փաստաթղթեր (հատոր 1-ին, գ.թ. 6-18):

2. ՀՀ գլխավոր դատախազի 01.06.2007 թվականի թիվ 299 հրամանով Հայկ Մարգարյանը, անձնական դիմումի համաձայն, առողջական վիճակի պատճառով, ազատվել է ՀՀ գլխավոր դատախագության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի պաշտոնից և ուղարկվել երկարամյա ծառայության կենսաթոշակի: Կենսաթոշակի անցնելու համար հիմք են հանդիսացել Հայկ Մարգարյանի առողջական վիճակի վերաբերյալ հետևյալ փաստաթղթերը՝ 2005 թվականի «Էրեբունի» բժշկական կենտրոնի էխոկարդիոգրաֆիան, բժշկի տված դեղատոմսը, սրտի աշխատանքի էլեկտրասրտագիրը:

3. ՀՀ գլխավոր դատախազի 21.08.2008 թվականի թիվ 166 հրամանով դադարեցվել է Հայկ Մարգարյանի կենսաթոշակի վճարումը: Նշված հրամանն ընդունելու համար հիմք է հանդիսացել ՀՀ գլխավոր դատախազության անձնակազմի բաժնի պետի 20.08.2008 թվականի գեկուցագիրը, որտեղ նշվում է, որ Հայկ Մարգարյանի կենսաթոշակի գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինիս կողմից հիվանդության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն, տրվել են դեռևս 2005 թվականին, իսկ աշխատանքից ազատվելիս՝ 2007 թվականի հունիսի 1-ի դրությամբ, նրա առողջական վիճակի վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել (հատոր 1-ին, գ.թ. 30-39):

4. ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 22.04.2009 թվականի թիվ ՎԴ/7019/05/08 վճռով առաջին է ճանաչվել ՀՀ գլխավոր դատախազի 21.08.2008 թվականի թիվ 166 հրամանը (հատոր 1-ին, գ.թ. 30-39):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքները վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բողոքների հիմքում բարձրացված հարցի քննության համար քննարկման առարկա պետք է դարձնել հետևյալ իրավական հարցը՝ արդյո՞ք կենսաթոշակի վճարումը դադարեցնելու պահանջը հանրային իրավահարաբերությունից ծագող վեճ է, թե՛ ոչ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ. բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ. գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում: Եթե վերը թվարկված մարմիններից բացի վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև այն գործո-

դությունը կամ անգործությունն է, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները և կամ պաշտոնատար անձինք՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում:

Մույն գործով, Դատարանը, գործի վարույթը կարճելիս, պատճառաբանել է, որ կենսաթոշակի դադարեցումը ոչ թե հանրային իրավահարաբերությունից ծագող գործ է, այլ՝ տվյալ պարագայում առկա են սոցիալական ապահովության իրավահարաբերություններ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կենսաթոշակի վճարումը դադարեցնելու պահանջը բխում է հանրային իրավահարաբերությունների բնույթից հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է կենսաթոշակային համակարգի կազմակերպմանը, կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է՝ պետական կենսաթոշակային ապահովագրության կազմակերպման և իրականաց-

ման սկզբունքները, կենսաթոշակային ապահովության իրավական երաշխիքները, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, պետական կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի նշանակման և վճարման կարգը:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ պետական կենսաթոշակային ապահովության և պետական կենսաթոշակային ապահովագրության կազմակերպման և իրականացման սկզբունքներն են՝ կենսաթոշակի իրավունքի ապահովումը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության պարտադիրությունը, կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության, հաշվեկշռվածության և զարգացման ապահովումը:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգն ընդգրկում է՝ պետական (պարտադիր) կենսաթոշակային ապահովագրությունը, որը պետական բյուջեի միջոցների հաշվին երաշխավորում է քաղաքացիների կենսաթոշակային սոցիալական ապահովության իրականացումը՝ տրամադրելով նույն օրենքի 11-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կենսաթոշակներ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակային ապահովության և կենսաթոշակային ապահովագրության բնագավառում իրականացվող պետական քաղաքականության նպատակը համապատասխան երաշխիքներ ստեղծելու միջոցով համակարգի բնականոն և արդյունավետ գործունեության, զարգացման սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումն է:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովում է կենսաթոշակային համակարգի պետական միասնական քաղաքականության իրականացումը, կենսաթոշակային ոլորտում կրթական և գիտական գործունեության զարգացումը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակները վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ այդ նպատակով առանձնացված միջոցներից:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սահմանադրորեն երաշխավորված յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը՝ որպես սոցիալական պետության բաղկացուցիչ տարր, իրականացվում է օրենքով սահմանված կենսաթոշակային ապահովության և կենսաթոշակային ապահովագրության բնագավառում պետական քաղաքականությամբ: Ընդ որում, կենսաթոշակային համակարգի պետական միասնական քաղաքականության իրականացումն ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ կենսաթոշակների վճարումը իրականացնելով ՀՀ պետական բյուջեի՝ այդ նպատակով առանձնացված միջոցներից:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր անձի կենսաթոշակի վճարման հարցն անմիջականորեն կապված է կենսաթոշակային

ապահովության բնագավառում պետական քաղաքականությամբ, այն ծագում է պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության արդյունքում:

Սույն գործով Դատախազության հայցի առարկան է ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ 299 հրամանի հիման վրա Հայկ Մարգարյանին վճարվող երկարամյա ծառայության կենսաթոշակի դադարեցումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և համադրելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայկ Մարգարյանի կենսաթոշակի վճարումը դադարեցնելու Դատախազության պահանջն անմիջականորեն բխում է հանրային իրավահարաբերություններից, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի և 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ուժով ընդդատյա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 29.04.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0277/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Գազարյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0277/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 03-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի վճռաբեկ բո-
ղոքը ՀՀ վարչական դատարանի 09.06.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ժորա
Սարգսյանի ընդդեմ Երևանի Քանաքեռ-Զեյթուն քաղապետարանի (այսուհետ՝
Թաղապետարան) իրավահաջորդ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քա-
ղաքապետարան), երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կա-
դաստրի պետական կոմիտեի «Զեյթուն» տարածքային ստորաբաժանման (այսու-
հետ՝ Կադաստր)՝ վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և վնասը հատուցելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատրավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ժորա Սարգսյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել

Թաղապետարանի պաշտոնատար անձանց գործողությունները և Քաղաքապետարանից բռնագանձել 25.228.000 ՀՀ դրամ՝ որպես ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.06.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ժորա Սարգսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ Թաղապետարանի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչված չէ, իսկ Ժորա Սարգսյանը ճանաչման հայցով չէր կարող դիմել դատարան, քանի որ վիճարկման հայց ներկայացնելու հնարավորություն է ունեցել:

Բացի այդ, Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ժորա Սարգսյանն իր գույքն այլ անձի անվամբ գրանցված լինելու մասին իմացել է դեռևս 29.09.2004 թվականին, այսինքն՝ բաց է թողել վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վարչական մարմնի գործողությունը վիճարկելու ժամկետը:

2) Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 95-97-րդ, 100-102-րդ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ, 90-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ վնասի հատուցման պահանջով դատարան դիմելու իրավական հիմքը պետք է լինի վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու, կամ դիմումը չքննարկելու, ինչպես նաև վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է պատճառվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչված լինելու փաստերի առկայությունը:

Սինչդեռ, Թաղապետարանի կողմից ընդունված ակտն այդ մարմնի կողմից

ոչ իրավաչափ ճանաչված չէ, իսկ վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել տեղական ինքնակառավարման մարմնի ակտն օրենքին չհամապատասխանող ճանաչելուց հետո, եթե տվյալ ակտն ընդունող մարմինը պատճառված վնասի հատուցման պահանջը մերժել է:

Դատարանը հաշվի չի առել, որ Ժորա Սարգսյանը չի պահպանել վնասի հատուցման պահանջ ներկայացնելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգը, այսինքն՝ բացակայել է վնասի հատուցման պահանջ դատարան ներկայացնելու իրավական հիմքը:

Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վիճելի անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցմանը նախորդել են երկու վարչական մարմնի՝ Թաղապետարանի և Կադաստրի գործողությունները (վարչական ակտերը): Ավելին, Թաղապետարանի կողմից Ժորա Սարգսյանին պատկանող անշարժ գույքը համայնքի սեփականություն հանդիսացող հաշվեկշռում ընդգրկելու գործողությունը (հաշվապահական ձևակերպումը) ինքնին չէր կարող առաջացնել փաստական իրավական հետևանքներ՝ սեփականության իրավունքի դադարում և վնաս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 09.06.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործի վարույթը կարճել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Տվյալ դեպքում Ժորա Սարգսյանը, ներկայացնելով վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ, արդարացիորեն շահագրգռված է այդ պահանջի բավարարման մեջ, քանի որ պահանջել է գույքային վնասի հատուցում:

Ժորա Սարգսյանն իր գույքի կորստի մասին իմացել է Կադաստրի 12.06.2006 թվականի թիվ 1083 գրությունից, որից հետո՝ 12.09.2007 թվականին, դիմել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի գրանցման նոր վկայական տալուն պարտավորեցնելու պահանջներով, հետևաբար, անհիմն է վճռաբեկ բողոքի այն պնդումը, որ բաց է թողնվել հայցային վաղեմության օրենքով սահմանված եռամյա ժամկետը:

Սույն գործի շրջանակներում Կադաստրը գուտ իրականացրել է իրավունքի պետական գրանցում՝ հիմքում դնելով վիճելի անշարժ գույքը Թաղապետարանի հաշվեկշռում լինելու վերաբերյալ տեղեկանքը և համայնքի ղեկավարի հաստատած ուրվագիծը:

Անհիմն է նաև բողոք բերած անձի այն փաստարկը, որ օրենքով սահմանված է վնասը հատուցելու պահանջով վարչական մարմնին դիմելու պարտադիր ընթացակարգ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 22.02.1995 թվականի առուծախի պայմանագրի համաձայն՝ ժորա Սարգսյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևանի Գաստելլոյի 6-րդ փողոցի թիվ 10 շենքի 2-րդ մուտքի արվեստանոցը /ներկայումս՝ Երևանի Լեփսիուսի 6-րդ փողոցի թիվ 10 շենքի թիվ 13ա բնակարանը/, որի հիման վրա 24.02.1995 թվականին գրանցվել է նրա սեփականության իրավունքը, և տրվել սեփականության վկայագիր (գ.թ. 13-14):

2) 07.11.2003 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1638097 վկայականի համաձայն՝ ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 42 և 20.06.2001 թվականի թիվ 550 որոշումների, ինչպես նաև անշարժ գույքը Թաղապետարանի հաշվեկշռում գտնվելու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա Երևանի Լեփսիուսի 6-րդ փողոցի թիվ 10 շենքի թիվ 13ա բնակարանի նկատմամբ գրանցվել է Թաղապետարանի սեփականության իրավունքը (գ.թ. 16, 19-21):

3) Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ավագանու 05.05.2002 թվականի թիվ 29 որոշման հիման վրա 25.12.2003 թվականի առուվաճառքի պայմանագրով Երևանի Լեփսիուսի 6-րդ փողոցի թիվ 10 շենքի թիվ 13ա բնակարանը վաճառվել է Վարդան Խաչատրյանին, և պայմանագրից ծագած սեփականության իրավունքը 29.12.2003 թվականին ստացել է պետական գրանցում (գ.թ. 22-28):

4) Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 30.10.2008 թվականի որոշման համաձայն՝ ժորա Սարգսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Անդրանիկ Գրիգորյանի արարքի պատժելիության վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ: Նշված որոշմամբ հաստատվել է, որ 2003 թվականի նոյեմբեր ամսին Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ունեցվածքի տնօրինման բաժնի նախկին պետ Անդրանիկ Գրիգորյանը, որը տվյալ ժամանակահատվածում ի պաշտոնե իրականացրել է վարչատնտեսական գործառույթներ, Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ղեկավարի 02.09.2003 թվականի թիվ 220 որոշմամբ իր վրա դրված պաշտոնեական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, այն է՝ խախտելով ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 42 որոշման 3-րդ կետի պահանջները և Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ղեկավարի 02.09.2003 թվականի թիվ 220 որոշման 2-րդ և 4-րդ կետերը՝ առանց Քաղաքապետարան, Կադաստր և արխիվալին մարմիններ հարցում կատարելու՝ ժորա Սարգսյանի սեփականությունը հանդիսացող Երևանի Լեփսիուսի փողոցի 6-րդ շենքի նկուղային հարկում գտնվող նախկին արվեստանոցի տարածքն անփութորեն ընդգրկել է համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվեկշռում՝ այն հաշվառելով Լեփսիուսի փողոց 10 շենք թիվ 13ա բնակարան նոր հասցեով (գ.թ. 56-57):

5) Գործում առկա չէ որևէ ապացույց վարչարարության հետևանքով պատ-

ճառված վնասը հատուցելու պահանջով Ժորա Սարգսյանի կողմից վնասը պատճառած վարչական մարմին դիմելու վերաբերյալ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝

1. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան:

2. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու վարչական ակտի առոչինչ լինելը:

3. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 22.02.1995 թվականի առուծախի պայմանագրի ուժով Երևանի Գաստեյլոյի 6-րդ փողոցի թիվ 10 շենքի 2-րդ մուտքի արվեստանոցը /ներկայումս՝ Երևանի Լեփսիուսի 6-րդ փողոցի թիվ 10 շենքի թիվ 13ա բնակարանը/ սեփականության իրավունքով պատկանել է Ժորա Սարգսյանին, իսկ 07.11.2003 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1638097 վկայականի համաձայն՝ ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 42 և 20.06.2001 թվականի թիվ 550 որոշումների, ինչպես նաև անշարժ գույքը Թադապետարանի հաշվեկշռում գտնվելու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա նշված բնակարանի նկատմամբ գրանցվել է Թադապետարանի սեփականության իրավունքը, հետագայում, 25.12.2003 թվականի առուվաճառքի պայմանագրով Թադապետարանը բնակարանը վաճառել է Վարդան Խաչատրյանին:

Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 30.10.2008 թվականի որոշման համաձայն՝ 2003 թվականի նոյեմբեր ամսին Երևանի Քննաքնն-Չեյքուն համայնքի ունեցվածքի տնօրինման բաժնի նախկին պետ Անդրանիկ Գրիգորյանը,

որը տվյալ ժամանակահատվածում ի պաշտոնե իրականացրել է վարչատնտեսական գործառույթներ, Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ղեկավարի 02.09.2003 թվականի թիվ 220 որոշմամբ իր վրա դրված պաշտոնեական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, այն է՝ խախտելով ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 42 որոշման 3-րդ կետի պահանջները և Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ղեկավարի 02.09.2003 թվականի թիվ 220 որոշման 2-րդ և 4-րդ կետերը՝ առանց Քաղաքապետարան, Կադաստր և արխիվային մարմիններ հարցում կատարելու՝ Ժորա Սարգսյանի սեփականությունը հանդիսացող Երևանի Լեփսիուսի փողոցի 6-րդ շենքի նկուղային հարկում գտնվող նախկին արվեստանոցի տարածքն անփութորեն ընդգրկել է համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվեկշռում՝ այն հաշվառելով Լեփսիուսի փողոց 10 շենք թիվ 13ա բնակարան նոր հասցեով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ Ժորա Սարգսյանը վիճարկման հայց ներկայացնելու հնարավորություն է ունեցել, քանի որ վիճարկման հայցով դատարան դիմել հնարավոր է միայն վարչական ակտի առկայության դեպքում, իսկ սույն գործով վիճարկվում է վարչական մարմնի գործողությունը:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Ժորա Սարգսյանը բաց է թողել վարչական մարմնի գործողությունը վիճարկելու ժամկետը, ապա Վճռաբեկ դատարանն այն հիմնավոր չի համարում, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն չի տարածվում սեփականատիրոջ՝ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտը, որով խախտվել են սեփականատիրոջ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, անվավեր ճանաչելու մասին պահանջների վրա, իսկ սույն գործով հաստատված է վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով սեփականատիրոջ իրավունքների խախտման փաստը:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ նույն բաժնի դրույթներին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության, իսկ նույն բաժնով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է համապատասխան համայնքը՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում նշված վարչական մարմինների դեպքում:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ տեղական

ինքնակառավարման մարմիններ են՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, քաղապետ՝ Երևան քաղաքում, քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ և 97-րդ հոդվածների համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ նույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա: Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով:

Սույն գործով, Դատարանն անհիմն է համարել Քաղաքապետարանի այն պատճառաբանությունը, որ Ժորա Սարգսյանի կողմից չի պահպանվել վնասի հատուցման պահանջ ներկայացնելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգը, քանի որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջով Ժորա Սարգսյանը դիմել է պետական մարմիններին /ՀՀ նախագահին, ՀՀ դատախազություն, ՀՀ ոստի-

կանություն/, սակայն նրանց միջոցով ընդամենը որոշվել է վնասի չափը, սակայն չի հատուցվել:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ժորա Սարգսյանը վիճարկում է վարչական մարմնի, այն է՝ Թաղապետարանի պաշտոնատար անձանց գործողությունների ոչ իրավաչափ լինելու հանգամանքը, իսկ սույն գործում առկա չէ որևէ ապացույց վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու պահանջով Ժորա Սարգսյանի կողմից վնասը պատճառած համապատասխան վարչական մարմին դիմելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ժորա Սարգսյանը չի պահպանել վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջ ներկայացնելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Դատարանի այն պատճառաբանությունը, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջով Ժորա Սարգսյանը դիմել է պետական մարմիններին /ՀՀ նախագահին, ՀՀ դատախազություն, ՀՀ ոստիկանություն/, հետևաբար, առկա են եղել բավարար հիմքեր դատարան դիմելու համար, քանի որ օրենսդիրը սահմանել է հատկապես վնաս պատճառած վարչական մարմին դիմելու անձի պարտականություն, մինչդեռ վնաս պատճառած վարչական մարմին Ժորա Սարգսյանը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջով չի դիմել:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձը վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացնի վնասը պատճառած պետական մարմնին, իսկ այն հատուցելու մերժում ստանալու կամ դիմումը չքննարկելու դեպքում համապատասխան վարչական ակտը կամ անգործությունը վիճարկելու պահանջով հայց ներկայացնի դատարան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժով վնասի հատուցման պահանջն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ Վարչական դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանից 25.228.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու՝ որպես ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասով

վարչական գործի վարույթը ենթակա է կարճման:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում սույն որոշման երկրորդ հիմքում նշված նյութական և դատավարական իրավունքի մյուս նորմերի խախտման վերաբերյալ փաստարկներին և դրանց հիմնավորումներին, ինչպես նաև այդ կապակցությամբ վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված առարկություններին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը:

Տվյալ դեպքում սույն գործով վնասի հատուցման պահանջի մասով հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության, հետևաբար, նույնիսկ հայցվորի կողմից պետական տուրքը վճարված լինելու դեպքում այն ենթակա է վերադարձման:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ Քաղաքապետարանը վճարել է վնասի հատուցման պահանջի մասով վճռաբեկ բողոքի համար սահմանված 756.840 ՀՀ դրամ պետական տուրքը, իսկ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական տուրքը վերադարձվում է ֆինանսական մարմնին վճարողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քաղաքապետարանը գրկված չէ իր դիմումի համաձայն համապատասխան ֆինանսական մարմնից վճարված պետական տուրքը հետ ստանալու հնարավորությունից:

Այսպիսով, սույն որոշման երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և

118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 09.06.2010 թվականի վճռի՝ վնասը հատուցելու պահանջը բավարարելու մասը և այդ մասով վարչական գործի վարույթը կարճել: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ-4/0074/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Ծատուրյան

Վարչական գործ թիվ ՎԳ-4/0074/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի ապրիլի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 13.08.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Ջարթոնքի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան)՝ Գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու և Ջարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին,

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ և լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ, պարտավորեցնել տրամադրել տեղեկատվություն և Ջարթոնքի գյուղապետին ենթարկել 50.000 ՀՀ դրամ վարչական պատասխանատվության:

Գործի դատաքննության ընթացքում Կազմակերպությունը հրաժարվել է տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու և Ջարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներից:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 13.08.2009 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին, 26-րդ, 65-րդ և 66-րդ հոդվածները, որի արդյունքում չի կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ Կազմակերպությունն անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար հարցում է ներկայացրել Գյուղապետարան, սակայն օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել այն՝ խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը:

Հետագայում Գյուղապետարանը տրամադրել է պահանջվող տեղեկատվությունը, որը հաշվի առնելով՝ Կազմակերպությունը հրաժարվել է տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու և Ջարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներից ու պնդել է միայն անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը:

Մինչդեռ, Դատարանը գտել է, որ հայցի չհրաժարված մասով նույնպես գործի վարույթը ենթակա է կարճման՝ պատճառաբանելով, որ «գործողությունը կամ անգործությունն անվավեր ճանաչելու հայցով վարչական դատարան դիմելու իրա-

վունք վերապահված չէ», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցատեսակ չի սահմանվում»:

Մինչդեռ, Գատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածը նախատեսում է վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողության կամ անգործության իրավաչափության բողոքարկումը ՀՀ վարչական դատարանում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 13.08.2009 թվականի վճռի՝ Գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասով գործի վարույթը կարճելու մասը և այն փոփոխել՝ Գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասով հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը:

1. Կազմակերպությունը 03.02.2009 թվականի հարցմամբ Գյուղապետարանից պահանջել է տրամադրել տեղեկություն՝ Ջարթոնք համայնքի 2008 թվականի բյուջեի պատճենը և Ջարթոնք համայնքի 2008 թվականի բյուջեի կատարման հաշվետվության պատճենը (գ.թ. 10):

2. Գյուղապետարանը պահանջված տեղեկատվությունն առաքել է Կազմակերպությանը 17.03.2009 թվականին (գ.թ. 43-44):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ դատարանի քննությանը:

Սույն վարչական գործով Գատարանը, Կազմակերպության՝ Գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով գործի վարույթի կարճման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասով վեճն ընդդատյա չէ Գատարանին, և եկել այն եզրահանգման, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցատեսակ չի սահմանում, հետևաբար, նման հայցով վարչական դատարան դիմելու իրավունք վերապահված չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ հարցադրումը.

Արդյո՞ք պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջներն ընդդատյա են վարչական դատարանին:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքը սահմանում է վարչական դատարանում և վճռաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը՝ սահմանելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը վարչական դատարանում, դրանով ամրագրել է նաև տվյալ դատարանում այդ իրավունքի իրականացման ձևը՝ հայց հարուցելը: Մասնավորապես, իրավունք է վերապահել յուրաքանչյուր իրավաբանական անձի՝ օրենքով սահմանված կարգով դիմելու վարչական դատարան, եթե նա գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելով այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է մնանատիպ իրավիճակում մնանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է հանդիսացել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե՝ պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ինչպես գործողությունները, այնպես էլ անգործությունը դատական կարգով վիճարկելու՝ ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորություն:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը:

Նույն օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ սույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Հիմք ընդունելով վերորոյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչարարության ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) վարչարարությունը դրսևորվում է ինչպես որոշակի գործողությունների կատարմամբ, այնպես էլ՝ անգործությամբ: Ընդ որում, վարչական մարմնի անգործության հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն գործողությունը կամ անգործությունը օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Դատարանի այն պատճառաբանությունը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածից հետևում է, որ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցով վարչական դատարան դիմելու իրավունք վերապահված չէ:

Ինչ վերաբերում է նյութական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոք բերած անձի փաստարկին, ապա գործի վարույթի կարճման և այդ փաստարկները վարչական դատարանում քննության առարկա դարձված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերորոյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 13.08.2009 թվականի վճռի՝ ՀՀ Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասով գործի վարույթը կարճելու մասը և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ-5/0176/05/10
Նախագահող դատավոր՝ Էդ. Նահապետյան

Վարչական գործ թիվ **ՎԳ-5/0176/05/10**
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԴՐՍԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 29-ին
դմբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 04.06.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ
հայցի Արթիկի «Ստեկլոմաշ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արթիկի տարած-
քային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ հարկային պարտավորու-
թյան բացակայության փաստը հաստատելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է հաստատել պարտադիր
սոցիալական ապահովագրության վճարի գծով 27.02.2010 թվականի դրությամբ

12.821.500 ՀՀ դրամ հարկային պարտավորության բացակայության փաստը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.06.2010 թվականի վճռով հայրը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ, 30-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-րդ հոդվածները, 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 114-րդ հոդվածը:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հարկային պարտավորությունների առաջադրման պայման է դիտել գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը՝ հաշվի չառնելով, որ հարկային պարտավորությունների առաջադրման համար անհրաժեշտ պայման է ակտի առկայությունը, իսկ նշված որոշումը վարչական ակտ չէ, այլ միայն կանոնակարգում է հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու հարաբերությունները:

Բացի այդ, Ընկերության կողմից որպես պարտավորությունների առաջադրման հիմք ներկայացված որոշման ուսումնասիրությունից երևում է, որ 12.821.500 ՀՀ դրամ հարկային պարտավորության մեջ ներառված են ոչ միայն պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունները, այլ մաս ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի գծով չկատարված 639.700 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները:

Դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթ նախատեսված չէ: Ընկերության ներկայացրած հայրը չի համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-րդ հոդվածների պահանջներին, իսկ 114-րդ հոդվածում սպառիչ կերպով թվարկված են վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները, որոնց թվում որպես դատական ակտի տեսակ նշված չէ հարկային պարտավորության առկայության կամ բացակայության փաստի հաստատումը: Հետևաբար, սույն գործի վարույթը ենթակա էր կարճման:

Վերոգրյալի հիման վրա բողոքը բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 04.06.2010 թվականի վճիռը և գործի վարույթը կարճել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Ընկերության ներկայացրած պահանջը հարկային պարտավորությունների բացակայության ճանաչումն է, որպիսի պահանջի քննությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վերապահված է վարչական դատարանին: Հետևաբար, Դատարանն իրավասու էր կայացնել իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու վերաբերյալ դատական ակտ:

Տեսչության «Հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ» 04.03.2010 թվականի թիվ 007250 որոշման՝ վարչական ակտ լինելու կամ չլինելու հարցը սույն գործի լուծման համար էական նշանակություն չունի, քանի որ Ընկերությունը խնդրել է հաստատել որոշակի պարտավորության բացակայության փաստը, և նշված որոշման հիմնավորվածության և օրինականության ստուգումը սույն գործով քննության առարկա չէ. այդ որոշումը կարևոր է միայն այն առումով, որ դրանում Ընկերության համար նշված է որոշակի պարտավորություն:

28.04.2009 թվականից մինչև 19.05.2009 թվականը Ընկերությունում կատարվել է ստուգում, որի արդյունքում Տեսչության 19.05.2009 թվականի ստուգման ակտով Ընկերությանը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով առաջադրվել է 75.100 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն, որն էլ վճարվել է: Այսինքն՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով ինչ-ինչ պարտավորությունների առկայության դեպքում այդ մասին նշում կկատարվեր ստուգման ակտում, այնինչ, այդ մասով Ընկերության մոտ որևէ խախտում չի հայտնաբերվել: Ավելին, Տեսչությունը 15.03.2007 թվականի, 12.12.2008 թվականի և 16.10.2009 թվականի տեղեկանքներով հաստատել է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով Ընկերության՝ պարտավորություն չունենալու հանգամանքը:

Այսպիսով, Դատարանն իրավացիորեն կայացրել է Ընկերության պահանջը բավարարելու մասին վճիռ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Տեսչության «Հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ» 04.03.2010 թվականի թիվ 007250 որոշման համաձայն՝ 27.02.2010 թվականի դրությամբ Ընկերությունն ունի 12.821.500 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով 545.500 ՀՀ դրամ ապառք, 81.220 ՀՀ դրամ տույժ, եկամտահարկի գծով 2.570 ՀՀ դրամ տույժ, 10.400 ՀՀ դրամ տուգանք, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով 4.681.500 ՀՀ դրամ ապառք, 7.338.300 ՀՀ դրամ տույժ, 162.000 ՀՀ դրամ տուգանք (գ.թ. 18):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝

1. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայցներկայացնել նույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան:

2. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու վարչական ակտի առոչինչ լինելը:

3. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում՝

1) վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին.

2) վարչական մարմնին այն վարչական ակտն ընդունելուն պարտավորեցնելու մասին, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է կամ չի ընդունել.

3) դատավարության մասնակիցներին և այլ անձանց որոշակի գործողություններ կատարելուն կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու մասին.

4) իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության կամ

վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն առոչինչ լինելու մասին.

5) այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու մասին.

6) նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին.

7) ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրավաչափ ճանաչելու մասին:

Սույն գործով հայցի առարկան է 27.02.2010 թվականի դրությամբ Տեսչության նկատմամբ Ընկերության՝ 12.821.500 ՀՀ դրամ հարկային պարտավորության բացակայության փաստը հաստատելու պահանջը, որպիսի հայցը Գ-ատարանը բավարարել է:

Վերոհիշյալ հոդվածների վերլուծությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սպառնիչ կերպով թվարկված են ՀՀ վարչական դատարանին ընդդատյա հայցի տեսակները, որոնց վերաբերյալ դատարանը կարող է կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Մինչդեռ, սույն գործով հայցի առարկայի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային պարտավորության բացակայության փաստի հաստատումը չի մտնում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի տեսակներից որևէ մեկի մեջ: Հետևաբար, նշված հայցը չի համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-րդ հոդվածների, իսկ գործով կայացված դատական ակտը՝ նույն օրենսգրքի 114-րդ հոդվածի պահանջներին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տեսչության «Հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ» 04.03.2010 թվականի թիվ 007250 որոշումից հետևում է, որ Ընկերության հարկային պարտավորությունը կազմել է միայն 639.670 ՀՀ դրամ՝ ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի գծով, իսկ 12.181.830 ՀՀ դրամը Ընկերության՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունն է:

Գ-ատարանը հարկային պարտավորության բացակայության փաստը հաստատելու պահանջի մասին հայցը բավարարելիս որպես հարկային պարտավորություն է դիտել նաև Ընկերության՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով ունեցած 12.181.830 ՀՀ դրամ պարտավորությունը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունը հարկային պարտավորություն չէ, քանի որ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը պարտադիր վճար է, այլ ոչ թե՝ հարկատեսակ:

Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հարկը պետական, հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական

անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են հարկերի հետևյալ տեսակները՝ շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, գույքահարկ, հողի հարկ: Օրենքով կարող են սահմանվել վերոհիշյալ հարկատեսակներին փոխարինող հաստատագրված վճարներ կամ արտոնագրային վճարներ:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սոցիալական վճարներն ապահովադիրների կողմից պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող միջոցներ են:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքում նշված նյութական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ փաստարկներին և դրանց հիմնավորումներին:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը:

Հիմք ընդունելով սույն որոշման պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային պարտավորության բացակայության փաստը հաստատելու պահանջով վեճն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 04.06.2010 թվականի վճիռը և վարչական գործի վարույթը կարճել:

2. Արթիկի «Ստեկլոմաշ» ԲԲԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/2514/05/09
Նախագահող դատավոր՝ Գ. Գարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2514/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի ապրիլի 02-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության ճանապարհային
ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական
դատարանի 11.12.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Մարտին Ջորոյանի հայցի ընդդեմ
Ոստիկանության՝ 26.03.2009 թվականի թիվ 857351 որոշումն առոչինչ ճանաչելու
պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով ՀՀ վարչական դատարան՝ Մարտին Ջորոյանը պահանջել է առ-
ոչինչ ճանաչել Ոստիկանության 26.03.2009 թվականի թիվ 857351 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.12.2009 թվականի

վճռով հայցը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել Ոստիկանության 26.03.2009 թվականի թիվ 857351 որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ոստիկանությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքո-հիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 65-րդ, 68-րդ, 71-րդ, 83-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկ-ներով.

Մարտին Չորոյանը հայցադիմումով խնդրել է իրեն հասցեագրված որոշումը ճանաչել առոչինչ: Մինչդեռ, Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ճանաչման հայցը քննել է որպես նույն օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայց այն դեպքում, երբ նույն օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետում Մարտին Չորոյանը չի դիմել դատարան և այլևս գրկված է մման պահանջ ներկայացնելու հնարավորու-թյունից:

Հայցադիմումի պատասխանը հայցադիմումով ներկայացված պահանջն ընդունելու կամ դրա դեմ առարկելու մասին պատասխանողի դիրքորոշումն է: Մինչդեռ, Դատարանը հաշվի չի առել, որ Ոստիկանությունը ստացել է ճանաչման հայցադիմումը և ներկայացել է ճանաչման հայցի քննության համար, հակառակ պարագայում Ոստիկանությունը որպես լրացուցիչ ապացույցներ կներկայացներ տեղեկանքներ, լուսանկարներ և ճանապարհահատվածի՝ ճանապարհային նշան-ներով կահավորվածության և կարգավորման վերաբերյալ այլ ապացույցներ: Դա-տարանը, գործի քննության ավարտին դուրս գալով ճանաչման հայցի սահմաննե-րից, Ոստիկանությանը գրկել է ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից՝ խախտելով մաս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի պա-հանջները, քանի որ եթե նույնիսկ Ոստիկանությունը որևէ հիմնավորում կամ առար-կություն չի ներկայացրել, միևնույնն է, Դատարանը պարտավոր էր ի պաշտոնե պարզել գործի փաստերը, կողմերից պահանջել ներկայացնել ապացույցներ և ձեռ-նարկել ողջամիտ այլ միջոցներ վեճի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության և լուծման համար, ինչը չի արել:

2) *Դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վա-րույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 8-րդ, 37-րդ, 43-րդ, 57-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, 26-րդ հոդվածի 3-րդ մասը, 153-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դա-տավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է Ոստիկանության տված բացատրություններն ու հարցադրումները, դրանց վերաբերյալ Մարտին Չորոյանի պատասխանները, չի գնահատել գործում առկա մյուս ապացույցները, մասնավորապես՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, ինչպես նաև դրա՝ «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» տողում Մարտին Չորոյանի ստորագրությունից բացի որևէ առարկության կամ նշումի բացակայությունը, դրանով իսկ առարկություն չունենալու և իրավախախտման փաստն ընդունելու հանգամանքը, առավել ևս, որ վերջինիս իրավախախտման տեղում բացատրվել են իր իրավունքներն ու պարտականությունները:

Բացի այդ, Դատարանի կիրառած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը տվյալ դեպքում չպետք է կիրառվեին, քանի որ տվյալ վարչական վարույթի ընթացքում կիրառելի են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նորմերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 11.12.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության կամ այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ոստիկանության 26.03.2009 թվականի թիվ 857351 որոշմամբ Մարտին Չորոյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը խախտելու համար ենթարկվել է 3.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (գ.թ. 4):

2) Դիմելով ՀՀ վարչական դատարան՝ Մարտին Չորոյանը պահանջել է առոչինչ ճանաչել նշված որոշումը (գ.թ. 2):

3) Դատարանի վճռով Մարտին Չորոյանի հայցը բավարարվել է, սակայն Ոստիկանության 26.03.2009 թվականի թիվ 857351 որոշումը ճանաչվել է անվավեր:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝

վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու վարչական ակտն առոչինչ լինելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության կամ վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն առոչինչ լինելու մասին:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վարչական դատարանը գործը հարուցում, քննում և լուծում է միայն հայցի հիման վրա և միմիայն հայցի շրջանակներում: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հստակ տարանջատում է վիճարկման և ճանաչման հայցերի տեսակները: Հետևաբար, այդ հայցերից որևէ մեկի ներկայացման դեպքում ՀՀ վարչական դատարանը պարտավոր է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը որոշել դրա շրջանակներում: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ ներկայացվում է վարչական ակտն առոչինչ ճանաչելու (ճանաչման հայց) վերաբերյալ հայցադիմում, ՀՀ վարչական դատարանն իրավասու է վճիռ կայացնել վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն առոչինչ լինելու մասին, կամ մերժել այդպիսի հայցադիմումը, և իրավասու չէ իր հայեցողությամբ փոփոխել հայցապահանջը՝ վարչական ակտը ճանաչելով անվավեր (վիճարկման հայց):

Սույն գործով դիմելով ՀՀ վարչական դատարան՝ Մարտին Ջորոյանը պահանջել է առոչինչ ճանաչել Ոստիկանության 26.03.2009 թվականի թիվ 857351 որոշումը: Այսինքն՝ Մարտին Ջորոյանը ներկայացրել է ճանաչման հայց, որի հիման վրա Դատարանը պարտավոր էր վճիռ կայացնել Ոստիկանության նշված որոշումն ամբողջությամբ կամ մասնակիորեն առոչինչ լինելու մասին կամ մերժել ներկայացված հայցադիմումը:

Մինչդեռ, Դատարանը Ոստիկանության 26.03.2009 թվականի թիվ 857351 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջի բացակայության պայմաններում այն ճանաչել է անվավեր, որով դուրս է եկել ներկայացված ճանաչման հայցի շրջանակներից: Այսինքն՝ Դատարանը սույն գործը քննել և լուծել է վիճարկման

հայցի շրջանակներում, որի իրավասությունը չուներ:

2) Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին չի անդրադառնում, քանի որ սույն գործով Դատարանն ըստ էության չի իրականացրել Մարտին Զորոյանի ներկայացրած ճանաչման հայցի քննություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 11.12.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/2568/05/08
Նախագահող դատավոր՝ Գ.Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2568/05/08
2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2009 թվականի հոկտեմբերի 16-ին
դմբաց դատական նիստում, քննելով Քրիստինե Դանիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 10.03.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Քրիստինե Դանիելյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) և երրորդ անձ Միքայել Չոհրաբյանի՝ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Քրիստինե Դանիելյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Շիրազի փողոցի 22 շենքի թիվ 6 բնակարանի 1/3 մասի նկատմամբ Ռաֆիկ Չոհրաբյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.03.2009 թվականի վճռով հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քրիստինե Դանիելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

06.02.2009 թվականին Դատարանն անցկացրել է ինչպես գործի նախնական դատական նիստ, այնպես էլ դատաքննություն՝ զրկելով հայցվորի ներկայացուցչին դատաքննությանը մասնակցելու իր դատավարական իրավունքից, ներկայացնելու հիմնավորումներ, ապացույցներ ու առարկություններ:

Միաժամանակ, հայցի հիմքում դրված այն պնդումը, թե Կադաստր ներկայացված 29.07.2005 թվականի և 01.08.2005 թվականի դիմումներում առկա ձեռագրերը չեն պատկանում Ռ-աֆիկ Ջոհրաբյանին, կարող էր ապացուցվել միայն դատաձեռագրաբանական փորձաքննությամբ, ինչի վերաբերյալ միջնորդությունը նույնպես մերժվել է:

Բացի դրանից, հայցն ուղղված է եղել Ռ-աֆիկ Ջոհրաբյանի սեփականության իրավունքն անվավեր ճանաչելուն, իսկ վճռի պատճառաբանական մասը վերաբերում է Միքայել Ջոհրաբյանի սեփականության իրավունքն անվավեր ճանաչելուն, ինչ հիմքով էլ մերժվել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 10.03.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 26.02.2009 թվականին նշանակվել է նախնական դատական նիստ (հատոր 2-րդ, գ.թ. 3, 14):

2) Սույն գործում առկա չէ գործը դատաքննության նշանակելու որոշում և այն կողմերին ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ **կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանն ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում՝ պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դատաքննությունն արդյունավետ իրականացնելու համար կարող է հրավիրել նախնական դատական նիստ: Կողմերը և դատավարության այլ մասնակիցներ պատշաճ ծանուցվում են նախնական դատական նիստի վայրի և ժամանակի մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը, համարելով գործը դատաքննությանը նախապատրաստված, որոշում է կայացնում գործը դատաքննության նշանակելու մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործը դատաքննության նշանակելու մասին որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, որում նշվում է գործի դատաքննության ժամանակի և վայրի մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը, 26.02.2009 թվականին նշանակելով նախնական դատական նիստ, նույն օրն իսկ ավարտել է գործի քննությունը և նշանակել է վճռի հրապարակման օրն ու ժամը: Սույն գործում առկա չէ գործը դատաքննության նշանակելու որոշում և այն կողմերին ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածը, չի իրականացրել սույն գործով ըստ էության քննություն՝ գրկելով կողմին իր դատական պաշտպանության իրավունքը լիարժեք իրականացնելու, հայցապահանջը հիմնավորող լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից՝ արդյունքում խախտելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ հայցվորի արդար դատաքննության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և նրբակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ բեկանել է դատական ակտը (իրավական հիմնավորումները տե՛ս՝ Շենգավիթի թաղապետարանն ընդդեմ Ալվինա և Լիանա Կազկոներ, Արամ, Ֆրունզ և Նարեկ Մարկոսյաններ, 21.12.2006թ., քաղաքացիական գործ թիվ 3-2236/Ա (քնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջի մասին) Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հատոր առաջին, էջ 473-476):

Վերը նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում կրկին անդրադառնալ նշված իրավական հարցի գնահատականին:

Վճռաբեկ բողոքի հիմքում ընկած մյուս պնդումներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործը չի քննել և վճիռ է կայացրել բողոք բերած անձի իրավունքների խախտմամբ, որի հետևանքով բողոք բերած անձի իրավական հիմնավորումները չեն հանդիսացել ստորադաս դատարանի քննության առարկա, հետևաբար դրանք չեն քննարկվում Վճռաբեկ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածների ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 10.03.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-3/0627/03/09
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-3/0627/03/09**
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի ապրիլի 02-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Մարինե Մալխասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 09.03.2009 թվականին արձակած և 02.07.2009 թվականին օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ ստացած վճարման կարգադրության դեմ՝ ըստ հայցի ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ անհատ ձեռնարկատեր Մարինե Մալխասյանի՝ վարչական տուգանքը բռնազանձելու վերաբերյալ վճարման կարգադրություն արձակելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է արձակել Տեսչության Արա-

րատի մարզային կենտրոնի պետի տեղակալի 28.11.2008 թվականի թիվ 3066 որոշմամբ նշանակված 80.000 ՀՀ դրամ վարչական տուգանքը բռնագանձելու վերաբերյալ վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը (այսուհետ՝ Դատարան) 09.03.2009 թվականին արձակել է վճարման կարգադրություն, որը 02.07.2009 թվականին ստացել է օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարինե Մալխասյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի, 62-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատական ակտով խախտվել են բողոք բերած անձի՝ վճարման կարգադրության դեմ հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքը, քանի որ բողոք բերած անձը պատշաճ չի տեղեկացվել Դատարանի կողմից արձակված վճարման կարգադրության մասին: Մարինե Մալխասյանը ծանուցված չի եղել նաև 24.10.2008 թվականի թիվ 2718/03 հանձնարարագրի հիման վրա գեղեցկության սրահում ստուգումներ անցկացնելու և արձանագրություն կազմելու մասին, ինքը չի ստացել որևէ ծանուցում, իսկ հայցադիմումում նշված այն փաստը, որ ինքը հրաժարվել է ծանուցումը ստանալուց, չի համապատասխանում իրականությանը: Տեսչության և Դատարանի նամակներն ուղարկվել են Վեդի քաղաքի Կասյան թիվ 26/4 հասցեի փոխարեն անհասկանալի՝ Կասյան թիվ 1 հասցեով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 09.03.2009 թվականին արձակած և 02.07.2009 թվականին օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ ստացած վճարման կարգադրությունը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տեսչության Արարատի մարզային կենտրոնի պետի տեղակալի 28.11.2008 թվականի թիվ 3066 որոշմամբ Մարինե Մալխասյանի նկատմամբ նշանակվել է 80.000 ՀՀ դրամի վարչական տուգանք՝ հիմք ընդունելով Տեսչության Արարատի մարզային կենտրոնի 14.11.2008 թվականի թիվ 02 արձանագրությունը (գ.թ. 3-4):

2) Տեսչությունը 23.02.2009 թվականին վճարման կարգադրություն արձակելու

վերաբերյալ հայցադիմում է ներկայացրել Դատարան (գ.թ. 1):

3) 09.03.2009 թվականին Դատարանը արձակել է վճարման կարգադրություն, որը 02.07.2009 թվականին ստացել է օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ (գ.թ. 15):

4) 09.03.2009 թվականին արձակված վճարման կարգադրության մասին Մարինե Մալխասյանին տեղեկացնելու վերաբերյալ գործում որևէ թույլատրելի ապացույց առկա չէ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագրով դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատավարության մասնակիցները: Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ առաքում է համարվում փոստով կամ առձեռն հանձնմամբ հատուկ առաքումը, ընդ որում հատուկ առաքումը փոստով տեղի է ունենում միայն փոստային ազգային օպերատորի միջոցով: Իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առձեռն հանձնմամբ հատուկ առաքումը համարվում է կատարված, եթե ուղարկողի մոտ առկա են առաքման փաթեթը կազմող փաստաթղթերի պատճենները, որոնց յուրաքանչյուր էջը պարունակում է առաքման փաթեթն ընդունող անձի նշումը փաթեթի ստացման փաստի և ամսաթվի վերաբերյալ և նրա ստորագրությունը, իսկ առաջին էջը՝ նաև առաքման փաթեթն ընդունող անձի անունը և ազգանունը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ հանձնվում է առձեռն (այսուհետ՝ պատշաճ ձևով): Սա ենթադրում է վարչական դատավարության մասնակիցների՝ դատական նիստի կամ դատավարական գործողությունների մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն վերը նշված նորմերով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել վարչական դատավարու-

թյան մասնակցին դատական նիստի կամ դատավարական գործողության մասին տեղեկացնելու փաստը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել դատավարության մասնակիցների պատշաճ ծանուցման դեպքերին, մասնավորապես, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ:

Այսպես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, բեկանել է դատական ակտը (իրավական հիմնավորումները տես՝ «Արմենմոտոր» ՓԲԸ ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարան, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն, 04.12.2009 թվական, վարչական գործ թիվ ՎԴ/1043/05/09 («Արմենմոտոր» ՓԲԸ-ի՝ Փարաքար-Թաիրով համայնքում գտնվող 2,430 հա հողատարածքի՝ ՀՀ կառավարության 30.12.2004 թվականի թիվ 879-Ն և 13.10.2005 թվականի թիվ 1809-Ն որոշումներով սեփականաշնորհման համար սահմանված գներով վճարման իրավունքը (վճարումը վերոհիշյալ որոշումներով սահմանված գներով իրականացնելու պայմանով) ճանաչելու պահանջի մասին)):

Վերը նշված դիրքորոշումից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում անդրադառնալ վճարման կարգադրության վերաբերյալ պատշաճ չծանուցվելու խնդրին և դրա իրավական հետևանքներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձից վարչական ակտի հիման վրա որոշակի դրամական գումարներ բռնագանձելու նպատակով վարչական մարմինը հայցով դիմում է դատարան՝ ստանալու վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ վճարման կարգադրությունը ներառում է նաև կարգադրություն՝ վճարման կարգադրությունը ստանալու կամ նույն օրենսգրքի համաձայն՝ պատշաճ ծանուցված համարվելու պահից երկու շաբաթվա ընթացքում ներկայացնել հակընդդեմ հայց՝ վարչական ակտը վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ, եթե պատասխանողը վարչական ակտը համարում է ապօրինի: Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճարման կարգադրությունը ներառում է նշում այն մասին, որ սահմանված ժամկետում հակընդդեմ հայց չներկայացնելու դեպքում վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի

ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը վճարման կարգադրության վարույթից անցում է կատարում հայցային վարույթի, եթե պատասխանողը հակընդդեմ հայց է ներկայացրել: Այս դեպքում վճարման կարգադրությունը վերանում է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ պատասխանողի կողմից վճարման կարգադրության ստացման մասին հետադարձ ծանուցումն ստանալու օրվանից կամ նույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ ծանուցումից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դատարանը հակընդդեմ հայց չի ստանում, ապա վճարման կարգադրությունն ստանում է օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

Վերոգրյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճարման կարգադրություն արձակելու վարույթը, գտնվելով ընդհանուր դատավարական ձևի շրջանակներից դուրս, միաժամանակ, դատավարական ինքնուրույն, հատուկ և պարզեցված տեսակ է, որը հարուցվում է հայցադիմումի հիման վրա: Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի ընթացակարգում միայն հակընդդեմ հայցն է, որ արգելակում է վճարման կարգադրության օրինական ուժ ստանալը և հարկադիր կատարումը, այն է՝ պատասխանողը վարչական ակտի վիճարկման իր իրավունքը կարող է իրականացնել միայն հակընդդեմ հայց ներկայացնելու եղանակով: Հետևաբար, վճարման կարգադրության արձակման մասին պատասխանողին ոչ պատշաճ ծանուցելը խոչընդոտում է պատասխանողի՝ վարչական ակտը վիճարկելու իրավունքի իրականացմանը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Մարինե Մալխասյանը պատշաճ ձևով չի տեղեկացվել Դատարանի 09.03.2009 թվականին արձակված վճարման կարգադրության մասին, քանի որ սույն վարչական գործում Մարինե Մալխասյանին ծանուցելու վերաբերյալ որևէ թույլատրելի ապացույց առկա չէ:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով ՀՀ վարչական դատարանի 09.03.2009 թվականին արձակված և 02.07.2009 թվականին օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ ստացած վճարման կարգադրությունը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 09.03.2009 թվականին արձակած և 02.07.2009 թվականին օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ ստացած վճարման կարգադրությունը և գործն ուղարկել նույն դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ գլխով սահմանված կանոններով նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ4/0104/05/09
Նախագահող դատավոր՝ Ա.Ծատուրյան

Վարչական գործ թիվ ՎԴ4/0104/05/09
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՍԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի ապրիլի 02-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 14.08.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Գյուղապետարանի հայցի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձ «Միավորված բանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) լուծարային կառավարիչ Ա. Աղայանի՝ Ծառայության ավագ հարկադիր կատարողի 02.04.2009 թվականի թիվ 04/01-431/09 կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գյուղապետարանը պահանջել է անվավեր ճանաչել

Ծառայության ավագ հարկադիր կատարողի 02.04.2009 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» թիվ 04/01-431/09 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.08.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գյուղապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության լուծարային կառավարիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, 41-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված է մեկամյա ժամկետ: Տվյալ դեպքում Ընկերության լուծարային կառավարիչն առաջին անգամ 01.03.2001 թվականի թիվ 2-88 կատարողական թերթը կատարման է ներկայացրել 03.04.2001 թվականին՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 08.02.2001 թվականի թիվ 2-88 վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց 1 ամիս 8 օր հետո: Կատարողական թերթը կատարման ներկայացնելով՝ ընդհատվել է դրա կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը: Հետագայում՝ 18.04.2005 թվականին, կատարողական թերթը ետ պահանջելուց հետո սկսել է հոսել այն կատարման ներկայացնելու նոր մեկամյա ժամկետ: Այսինքն՝ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար սահմանված են այնպիսի պահանջներ, ինչպիսիք են առաջին անգամ ներկայացնելու համար, և մեկամյա ժամկետի սկիզբը պետք է հաշվել կատարողական թերթը պահանջատիրոջը վերադարձնելու օրվանից՝ 20.04.2005 թվականից: Մինչդեռ, նշված մեկամյա ժամկետը լրացել է, և Ծառայությունը չէր կարող կատարողական վարույթ հարուցել:

Այսպիսով, Դատարանի այն պնդումը, որ օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացված կատարողական թերթի կատարման համար ժամկետային սահմանափակումներ նախատեսված չեն, անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 14.08.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Բողոք բերած անձը հայցի հիմքում ի սկզբանե դրել է այն հանգամանքը, որ Ընկերությունը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 08.02.2001 թվականի թիվ 2-88 օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական

թերթը հարկադիր կատարման է ներկայացրել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ: Այսինքն՝ կատարողական թերթը կատարման պետք է ներկայացվեր մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նշված վճիռը մտել էր օրինական ուժի մեջ: Սինչդեռ, գործի քննության ընթացքում Ընկերությունը Դատարանին է ներկայացրել բազմաթիվ ապացույցներ, որոնց գնահատման ուժով հիմնավորվել է այն հանգամանքը, որ Ընկերությունը 23.03.2009 թվականի թիվ 43 գրությամբ ոչ թե կատարման է ներկայացրել կատարողական թերթը, այլ՝ կրկին կատարման:

Վերոգրյալի հիման վրա Ընկերության լուծարային կառավարիչը խնդրել է Գյուղապետարանի բերած վճռաբեկ բողոքը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 08.02.2001 թվականի թիվ 2-88 վճռով Ընկերության հայցը բավարարվել է՝ վճռվել է Գյուղապետարանից հօգուտ Ընկերության բռնագանձել ընդհանուր 11.112.605 ՀՀ դրամ: Նշված վճռի հիման վրա 01.03.2001 թվականին տրվել է թիվ 2-88 կատարողական թերթը: Ծառայության հարկադիր կատարողի 03.04.2001 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշմամբ հարուցվել է թիվ 374 կատարողական վարույթը (գ.թ. 18-20, 43):

2) Ընկերության լուծարային կառավարիչը՝ Ծառայության պետին ուղղված 18.04.2005 թվականի թիվ 121 գրությամբ, հարկադիր կատարման անհրաժեշտությունը վերանալու կապակցությամբ խնդրել է ավարտել նշված կատարողական վարույթը և վերադարձնել կատարողական թերթը, որի արդյունքում Ծառայության հարկադիր կատարողի 20.04.2005 թվականի «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշմամբ 03.04.2001 թվականին հարուցված թիվ 374 կատարողական վարույթն ավարտվել է (գ.թ. 45, 47):

3) Ընկերության լուծարային կառավարիչը Ծառայության պետին ուղղված 23.03.2009 թվականի թիվ 43 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 08.02.2001 թվականի թիվ 2-88 վճռի հիման վրա 01.03.2001 թվականին տրված թիվ 2-88 կատարողական թերթը ներկայացրել է նոր կատարման: Նշված գրությամբ ներկայացված կատարողական թերթի հիման վրա Ծառայության ավագ հարկադիր կատարողի 02.04.2009 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշմամբ հարուցվել է թիվ 04/01-431/09 կատարողական վարույթը (գ.թ. 22, 40):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացու գույքի բացակայության կամ անբավարարության հետևանքով պահանջատերերի չբավարարված պահանջներով կատարողական թերթերը պահպանում են իրենց ուժը մինչև դրանց կատարումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եթե ստացված կատարողական թերթը չի համապատասխանում նույն օրենքի 21 հոդվածով նախատեսված պահանջներին, կամ եթե լրացել է այն կատարման ներկայացնելու ժամկետը, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը, հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է պահանջատիրոջը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթը վերադարձնելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված ընդհանուր ժամկետից բացի որևէ այլ ժամկետի բացակայության պայմաններում կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար նույնպես պետք է հիմք ընդունվի վերոհիշյալ մեկ տարվա ժամկետը, քանի որ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելը, ըստ էության, կատարողական թերթը կատարման ներկայացնելն է՝ առանց որևէ էական առանձնահատկության: Հետևաբար, տվյալ դեպքում նույնպես կատարողական թերթը պետք է կատարման ներկայացվի մեկ տարվա ընթացքում: Ուստի, նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ:

ընդունված, ինչն էլ հիմք է այն անվավեր ճանաչելու համար:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ կատարողական վարույթը վերսկսելու հետ կապված՝ Ծառայության և Ընկերության լուծարային կառավարչի գործողությունները բխում են օրենքից:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն անտեսել է, որ կատարողական թերթը նոր կատարման կարող է ներկայացվել օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետի ընթացքում, իսկ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության լուծարային կառավարիչը 01.03.2001 թվականին տրված թիվ 2-88 կատարողական թերթը նոր կատարման է ներկայացրել նշված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև չի ներկայացրել այդ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը: Նշվածի արդյունքում Դատարանն անտեսել է, որ Ծառայության ավագ հարկադիր կատարողը, խախտելով կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար օրենքով սահմանված մեկամյա ժամկետը, այն պահանջատիրոջը վերադարձնելու փոխարեն հարուցել է կատարողական վարույթ:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության ավագ հարկադիր կատարողի 02.04.2009 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 41-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության սխալ կիրառման հետևանքով: Հետևաբար, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիման վրա, նշված որոշումը ենթակա է անվավեր ճանաչման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատա-

քննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 118-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 14.08.2009 թվականի վճիռը և այն փոփոխել. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանի հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի ավագ հարկադիր կատարող Ս. Գևորգյանի 02.04.2009 թվականի թիվ 04/01-431/09 կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքից հօգուտ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքեր:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ
2009-2010

ՀԱՏՈՐ IV

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100^{1/16}:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 45,25 փպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000:



Տպագրվել է «Ամարաս» տպարանում:
Երևան, Տերյան 44:
Նեռ. 56 04 79, 56 74 64
E-mail: amaras-print@mail.ru